

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
(*հոդվածների ժողովածու*)

SCIENTIFIC READINGS
(*collection of articles*)

НАУЧНЫЕ ЧТЕНИЯ
(*сборник статей*)

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ 30-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ



Ստեփանակերտ
Արցախի պետական համալսարան
2018

ՀՏԴ 94(479.25):06
ԳՄԴ 63.3(5Հ)
Գ 602

**Ղարաբաղյան շարժման 30-րդ տարեդարձին
նվիրված ուսանողական գիտաժողովի նյութեր**

*Տպագրվում է Արցախի պետական համալսարանի
Գիտական խորհրդի որոշմամբ*

Գիտաժողովի խորհուրդ

ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ - ԱրՊՀ ռեկտոր
ՓՈԽՆԱԽԱԳԱՀ՝ Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ - ԱրՊՀ գիտական
աշխատանքների գծով պրոռեկտոր
ԱՆԴԱՄՆԵՐ՝
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ - ԱՀ ԿԳՍ փոխնախարար
Ա.ՄԻՄՈՆՅԱՆ – ԵՊՀ ռեկտոր
Կ.ԱԹՈՅԱՆ – ՀՊՏՀ ռեկտոր
Գ.ՍԱՀԱԿՅԱՆ - ԱրՊՀ ուսումնական աշխատանքների
գծով պրոռեկտոր
Վ.ՅԱՐԱՄԻՇՅԱՆ - ԱրՊՀ ուսանողների հետ տարվող
աշխատանքների գծով պրոռեկտոր
Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ – ԱրՊՀ պատմության և
իրավագիտության
ֆակուլտետի դեկան
Ռ. ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ – ԱրՊՀ տնտեսագիտության
ֆակուլտետի դեկան
Լ.ՄԱՐԳԱՐՅԱՆ – ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի
դեկան
Վ.ՄԻՐԶՈՅԱՆ – ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի
դեկան
Վ.ՍԱՖԱՐՅԱՆ - ԱրՊՀ պատմության ամբիոնի վարիչ
Ս.ԽԱՆՅԱՆ – Բ.Գ.Դ., պրոֆեսոր
Ա.ՄԱՆԱՍՅԱՆ – ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Գիտական ընթերցումներ: Ղարաբաղյան շարժման 30-րդ տարեդարձին նվիրված
Գ 602 ուսանողական գիտաժողովի նյութեր.- Ստեփանակերտ: ԱրՊՀ հրատ., 2018.-
338 էջ:

ՀՏԴ 94(479.25):06

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-1-0840-7 © ԱրՊՀ հրատ., 2018

ՀՏԴ 82.09:808.(479.243)

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՍՈՎՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Անուշ Աբգարյան
Մեսրոպ Մաշտոց Համալսարան
Հայոց լեզու և գրականություն բաժին, 1-ին կուրս

Բանալի բառեր՝ Հայրենիք, հայրենասիրություն, համախմբվածություն, պատիվ, սեր, ընտանիք, կյանքի շարունակություն, խաղաղություն:

Ключевые слова: Родина, патриотизм, сплоченность, честь, любовь, семья, продолжение жизни, мир.

Keywords: Homeland, patriotism, cohesion, honor, love, family, the continuation of life, peace.

Ամփոփում

Գիտաժողովի թեմայի մեջ դիտարկված և գնահատված են Ս.Խանյանի բանաստեղծական բազմերանգ հունձքը, նրա ստեղծագործական խառնվածքի յուրատիպությունը, տեղն ու դերը արդի հայ պոեզիայի, առանձնապես Արցախի գրական օջախի պատմության մեջ:

Ануш Абгарян
Университет Месропа Маштоца
Кафедра армянского языка и литературы, 1 курс

ОТРАЖЕНИЕ АРЦАХСКОГО ДВИЖЕНИЯ В ПРОИЗВЕДЕНИЯХ СОКРАТА ХАНЫЯНА

Резюме

Очерк, место и роль поэзии С. Ханьяна, его творческое кредо в истории современной армянской поэзии, особенно в истории литературного очага Арцаха, были отмечены и оценены в теме конференции.

Anush Abgaryan
Mesrop Mashtots University
Armenian Language and Literature, 1st year

THE REFLECTION OF THE ARTSAKH MOVEMENT IN SOCRAT KHANYAN'S WORKS

Summary

The essay, the place and role of S. Hanyan's poetry, his creative credo in the history of modern Armenian poetry, especially in the history of the literary focus of Artsakh, were noted and appreciated in the theme of the conference.

Հող ու թրի լուսե ոգին
Գիրն է ազգի և մարդու,
Ով դրանցով կամքը կոփի,
Ծնկի չի գա իր կյանքում:

Ս. Խանյան

Բոլորիս մեջ անխտիր տրոփում է հուզված մի սիրտ, հայրենասիրության ազնիվ ու նվիրական մի զգացում: Ես շնորհակալ ու երախտապարտ եմ մեր բոլոր մտավորականներին, ովքեր ոչ միայն սրով ու թրով են պաշտպանել Հայաստան աշխարհը, այլ նաև գործի են դրել՝ գրիչն ու թուղթը, մեզ թողնելով հսկայական գիտական ժառանգություն, անընդհատ հալածանքներ կրող, բայց միշտ ոտքի կանգնող Հայաստանի և հայ մարդու մասին: Հայ ազգը

պատմության տառապալից անցյալը կախ տված ճիտին, շարունակում է աշխարհին նայել պարզ ճակատով: Հպարտ եմ, որ հայի զավակ եմ, որ ապրում եմ Արցախում, որ քայլում եմ, զգում և տեսնում եմ այն հողը, որի համար հայ զինվորը չի խնայել իր պատիվն ու արյունը:

Ս. Խանյանը Արցախի սրտից ծնունդ առած և Արցախցու սրտի ցավը իր մեջ կրող, ժամանակների հետ համաչափ քայլող բանաստեղծ է, ով ապրել է բարդ, բազմակողմանի և ներդաշնակ կյանքով: Ժողովրդի ճակատագրի հետ կապված բոլոր մտահոգիչ հարցերին նա պատասխանել է և՛ որպես բանաստեղծ ու լրագրող, և՛ որպես գրականագետ, և՛ որպես հասարակական գործիչ: Ինչ արել է, համարել է քիչ, ձգտել է ավելին անել, և որ կարևորն է՝ բյուրեղանալ: Ղարաբաղյան պրոբլեմի լուծման հենց առաջին օրվանից բանաստեղծը պայքարի ելածների շարքերում էր: Նկատի չունենալով սահմոկեցուցիչ ռեժիմի սարսափելի հետևանքները, նա արդարացի իր խոսքն էր ասում՝ հանրահավաքներում, տարբեր երկրներից ժամանած պատվիրակների հետ հանդիպումներում, ելույթ էր ունենում ռադիոյով, հեռուստատեսությամբ, թերթերի և ամսագրերի էջերում: Ենթարկվելով բազմաթիվ հալածանքների նա շարունակում է իր գործունեությունը՝ ժողովրդին համախմբելու, նրա գոյամարտը գեղարվեստորեն արտացոլելու ուղղությամբ:

Ս. Խանյանի ստեղծագործությունների գլուխգործոցներն են՝ «Արցախի արծիվ», «Նահատակ լուսո» և «Մհեր» պոեմները, որոնք նոր երանգ ու նոր շունչ հաղորդեցին Արցախյան պոեզիային:

«Արցախյան արծիվ» պոեմի մեջ 9-րդ դարի դեպքերն են նկարագրված, երբ հայ ժողովուրդը հեծում էր պարսկական խալիֆայության ծանր լծի տակ: Ս.Խանյանը որպես թեմա ընտրելով պատմական այս իրադարձությունը, փաստորեն արձագանքել է Արցախյան արդի պատերազմին, որի ընթացքում հերոսացան Եսայի ապու Մուսեի թոռները՝ հանդիսացող բազում արցախցիներ: Պատմությունը լեզու առած խոսեց Ս.Խանյանի պոեմում հանուն այսօրվա հաղթանակի և ապագա խաղաղկյանքի:

Առաջին հերթին նա ընդգծել է ժողովրդական իմաստությունը՝ «Սրով եկող թշնամու դեմ պետք է մարտնչել՝ սրով, այլապես չես ապրի»:

Պոեմը բաղկացած է նախերգից, վերջերգից և երեք մասից: Սկզբից մինչև վերջ զգացվում է պոեմի հոլացման երակը, այն է՝ «Սրից եկողը սրով էլ կնկնի»:

Ս.Խանյանը պոեմի առաջին մասի առաջին գլխում նկարագրում է Տոդասարի զագաթին թառած Գոչավանքի մի բարեժպիտ առավոտ, լիքը աչքալուսանքով: Գավառապետ Հովսեփի տանը տղա է ծնվել: Ով հոր թիկունքը պիտի դառնա, գավառ պահի, պիտի նստի իր Դիզակ պապաի գահին: Տղային կնքում են Եսայի (Եսայ մարգարեի անունով), ով մեծանում էր Սասնա Շուրիին հատուկ ուժով: Եսայը մեծանալով դառնում է հմուտ գրիչ, տիրապետում՝ հունարենին, պարսկերենին, արաբերենին, բայց ամենից լավ սերտում է թրի լեզուն և դառնում է ռազմագետ:

Նա իշխանի մոտ իշխան էր, մշակի մոր՝ ռամիկ: Պատերազմի դաշտում էին մշակն ու դարբինը, ուսուցիչն ու հոգևորականը: Զորաբանակը ղեկավարում էր Հովսեփը, որի կողքին էր որդին՝ Եսայը:

Հատկանշականն այն է, որ միասնությունն է կոիվների մեջ ոսոխին գերում: Տեղի է ունենում ճակատամարտը: Երկու կողմերի անգիջում պայքարում Եսայի մահը դառնում է անխուսափելի, սակայն Հովսեփը կրծքով պաշտպանում է որդուն ինքը դառնալով թշնամական նիզակի գոհը: «Մայր Արաքսի գրկից բարձրանում է արևը նորից» ուսերի վրա գորքը տուն է բերում ընկած քաջերին: Հովսեփին հասցնում են Գոթիչ վանքը և հանձնում հողին: «Հանդիպում» գլխում նկարագրված են Քիրսա սարի լանջերին փռված անտառները, որ ժողովուրդն անվանում է Արևսար: Եսայը ամեն տարի ձմեռ թե աշուն, ընկերների հետ որս էր անում: Մի անգամ էլ որսի ժամանակ հանդիպում է Տումի գյուղի տանտեր Աղամի աղջկան՝ Շուշանիկին: Եսայը Սասնա Շուրիին հատուկ բնավորությամբ իր սերն է հայտնում Շուշանիկին, իսկ վերջինս էլ ասես Ծովինարի, Դեղձուն Ծամի, Խանդութի և Գոհարի ժառանգորդն է, նրանց ամոթխածությամբ և սիրո ազնվագույն ընկալմամբ պատասխանում է քաջին: Այս աչքալուսանքին մասնակցում է ամբողջ Արցախը՝ ծայրեծայր: Արծածվում է Դիզակի երիտասարդ իշխանի հանդեպ առաջացած համաժողովրդական մաքուր սերը: Շուշանիկը մի երագ է տեսնում, որը և պատմում է Եսային: Երագում իրեն թնում և հասնում է Վերին Միակին, որի մոտ Որդին էր, իսկ դեմը՝ Հոգին: Արարիչը ջրդեղում է Եսայի թուրը,

Քրիստոսը օծում է մեռնող, իսկ Հոգին զինում է Եսայի ոգին: Քիրսը Բուրվառը ձեռքին զույգին սրբության ծիրանի է հագցնում և մաղթում՝

Դուք դառնալու եք
Հարգված պապ ու տատ,
Օջախով ամուր
Ու պարսպապատ:
Արցախը ձեզնից դաս է առնելու
Ձեր սերը մի սուրբ թաս է դառնալու,
Ու ձեր պատկերի առաջ փառավոր,
Խոնարհվելու են սերունդները նոր...

Կարդալով այս տողերը աչքերիդ առջև հառնում է տաղանդավոր քանդակագործ Ս. Բաղդասարյանի «Մենք ենք մեր սարերը» քանդակը, որը խտացնում է Արցախցի պապի և տատի հավատարիմ սերը միմյանց նկատմամբ, և հայրենի օջախին ու լեռներին կապված լինելու նրանց երազն ու կյանքը:

Եսայի և Շուշանիկի հարսանիքը Արցախյան ավանդույթների ամբողջական ներկայացումն է: Մականները քննարկում են, թե որ գյուղերով պար ու նվագով «Հարս ու փեսային պիտի տանեն տուն», « Ով պիտի նստի օժիտի վրա...», իսկ աղջկա տանը՝ պատվասեր, հպարտ ու բարքերով խիստ մարդիկ են ներկայացված: Ս. Խանյանը տազնապալից այդ օրերի հարսանիքը նկարագրում է նաև հայրենասիրական մղումների տեսանկյունից: Այն ոչ միայն զվարճալի հարսանիք էր, այլև տոն էր զինավարժության:

Չէ որ ավելոծված էր Հայոց տան սիրտը, Բուդան չոքել էր Վասպուրականում, ամբողջ լեռներում արյուն էր ու մահ: Իսկ հարսանիքում երգիծական կենացներ էին հնչում՝

Մեր ոտքի տակ կչոքի Բուդան

Ոնց փղի վրա հաչող շան թուլան:

Թուրն իշխան, մշակ, սեր չի ճանաչում՝ ավելացնում էր Շուշանը:

Եսայը ամուսնանում է, անցնում է տարին, և նա տղա է ունենում: Ցնծություն է ապրում Եսայու տատը, մայրը, վերհիշում է Հովսեփի երազանքը՝ կապված հարազատ օջախի և Դիզակ տան ապագայի հետ: Հովսեփը երագում էր, որ արու թոռ ունենար, որ իր « Պողպատե թուրը առներ, Խաղացներ ոնց խաղալիք ու ծիծաղեր ալիք-ալիք», որպեսզի՝

Ձայնը հասներ Արաբստան,

Հաստատեր որ կա Հայաստան...

Եսայը սովորություն ուներ շրջելու գավառներում, ծանոթանալու մարդկանց հետ, նրանց խնդիրների ու ապրելակերպի հետ: Նրանք սեղան էին նստում, մաճառ վայելում և զրուցում...

Հաց է կտրել շատերի հետ,
Կերել խնջլոգ, ավլուկ, փիփերթ,
Ճաշակել է մի տեղ թանով,
Մի տեղ խաշիլ՝ չորաթանով,
Մի տեղ կուրկուտ ու լոբաճաշ,
Մի տեղ փլավ ու կճեխաշ,
Մի այգու մեջ հոնի կաթուկ,
Մի օջախում՝ մոշաթթու,
Մի տեղ որսի թարմ խորոված,
Կանաչ լոբի՝ լավ սխտորած,
Մի ավանում՝ ժանգյալով հաց,
Միշտ ժպտադեմ ու սրտաբաց...

Բուդան մտնում է Արցախ, և նրա նպատակների մեջ է լինում նաև գերի վերցնել Եսային: Իսկ Եսան ոգեկոչում է ժողովրդին, որ իրենց համար կարևորը Արցախի պաշտպանության շահերն են: Սկսվում է արյունալի պատերազմը, որտեղ Եսայը պարտության է մատնում Բուդայի զորքին: Եսան գերի է ընկնում: Հազարացիները նրան տանում են անտառի խորքը և նրանից ել ոչ մի լուր չի լինում:

Իսկ Գտչավանքում մեծ հաղթանակի շունչն էր թեաժում,
Երգասանները գովք էին անում արցախցիների,
Որ ութը հարյուր հիսուերեքին, սրերով հատու,

Հայոց պետության վերածննդի հիմքերը դրին:

<< Նահատակ լուսո>> -ն հերոսական պոեմ է՝ քնարական շաղափով: Պոեմի նյութը իրական է: Գլխավոր հերոսը զորապետ Մոնթեն է, ֆոնը՝ Արցախի զորագնդերի մահո և կենաց գոյամարտը ազերի զավթիչների դեմ: Բանաստեղծը փառաբանում է Ավոյի փառքն ու արտասովոր սիրանքը: Մոնթեն ներկայացնում է և՛ որպես զինվոր, և՛ որպես քաղաքագետ: Մոնթե Մելքոնյանը Արցախ է ժամանել 1991թ.-ի աշնանը: Նա հենց առաջին պահից աչքի է ընկնում ռազմավարական արվեստով, քաջությամբ, վճռականությամբ:

Ս. Խանյանը պոեմում չի սքողել դառը ճշմարտությունը: Նա բացահայտում է թշնամու դիմագիծը: Այսօրվա ազերի սպան ու զինվորը երեկվա Ալի-Ասլանի, Թալեթ փաշայի թոռներն են, որոնք ուրիշի հողերին և ստեղծածին տիրելու ծարավով կանգ չեն առնում ոչնչի առջև դիմում են նենգության, խաբեության, պատմության զեղծարարության, դաժանության, վերածվում արյունախում մարդակերների: Մարտունու շրջանի Ամիրանլար ազերական գյուղը հիբավի, դարձել էր չարիք շրջակա հայկական գյուղերի համար: Պատկերվում է հայ գյուղացիների ծանր ապրումները և նրանց անելանելի վիճակը: Հայտնի է որ պատերազմի առաջին ամիսներին արցախյան շատ ընտանիքներ որոշել էին հեռանալ Արցախից, մարտադաշտում թողնելով միայն կովոդ ազատամարտիկներին:

Ավոն դեմ էր այդ քայլին, երբ մի անգամ կանայք, ծերերը դիմում են Ավոյին, թե ինչպես վարվեն նման պահերին, ուր գնան: Ավոն պատասխանում է

-Ուր պիտի գնանք, - ասում է Ավոն,-

Ու՛մ պիտի թողնենք մեր լավ շենքերը,

Հին ու նորօրյա երազով, ցավով,

Մենք Արցախին ենք, Արցախը՝ մերը:

Բանաստեղծը ցույց է տալիս հայ զինվորի արյունակցական կապը իր պատմական անցյալի հետ: Նա գիտակցում է, որ թուրք մտավորականները դիմում են հերիքությանքի, որ սեփականեն Արցախի հողն ու մշակույթն: Ս. Խանյանին հաջողվել է Ավոյին ցույց տալ որպես ուժեղ անհատականություն: Հերոսը բազմակողմանի հատկությունների կրողն է: Նա հայրենասեր է, ժողովրդասեր, ընկերասեր, թշնամու հանդեպ ցասումնալից, օջախի պատիվն իմացող: Ավոն ցույց է տրված որպես կանթեղ, նրբագգաց, անգամ հողի լեզուն հասկացող իմաստուն այր:

Բայց չկա Ավոն՝ Աստվածը մարտի,

Քնել է խաղաղ, հավիտյան քնով,

Ծիածանվել է ասես շրթերին

-Արցախ իմ, քայլիր հաղթության հունով:

1941 թ.-ին հունիսի 22-ին սկսած պատմական իրադարձության կողքով Ս.Խանյանը աննկատ չի անցել, այլ հակառակը մեծ անրադարձ է կատարել Հայրենական Մեծ պատերազմին: Նրա եղբայրը, ով այդպես էլ չվերադարձավ՝ պատերազմի դաշտից, մնաց անմահ հերոս և ազնիվ հայ՝ Հայոց պատմության մեջ:

1960թ.-ին, երբ Ս.Խանյանը շրջագայում էր Հունգարիայում և Ավստրիայում, որպես լրագրող, հասնելով Դանուբ գետի ափին՝ ծնվում է «Սպասում ենք դեռ» կամ «Դանուբ» բանաստեղծությունը՝ նվիրված եղբորը՝

Իմ Արաքսի հեռավոր քույր

Քեզ շատ եմ երգել,

Խնդրում եմ քեզ պատասխան տուր,

Հեռվից եմ եկել:

Իմ եղբորը դու չե՞ս տեսել

Ջահել, գանգրահեր,

Մինչև հիմա տուն չի հասել,

Սպասում ենք դեռ....

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս. Խանյան, «Ընտիր երկեր», 5-րդ և 7-րդ հատորներ:
2. Ա. Աթայան, «Կարոտի և սիրո կրակներ» Ս. Խանյանի պոեզիան:

ՀՏԴ82.09:808.1

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ ԼԵՎՈՆ
ՇԱՆԹԻ «ՕՇԻՆ ՊԱՅԼ» ՊԱՏՄԱԿԱՆ ԴՐԱՄԱՅՈՒՄ

Անուշ Ասրյան
Արցախի պետական համալսարան
բանասիրական ֆակուլտետ,
Հայոց լեզու և հայ գրականություն 4-րդ կուրս,
Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., դոցենտ Նարինե Հովհաննիսյան
anush.asryan1997@mail.ru, +374-97-70-52-70

Բանալի բառեր՝ Արդիականություն, պատմականություն, պետականություն, դավադրություն, սեր, ճակատագիր, ողբերգական անկում, հոռետեսություն, ազգային ողբերգություն:

Ключевые слова: Современность, история, государственность, заговор, любовь, судьба, трагическое падение, пессимизм, национальная трагедия.

Keywords: Modernity, history, statehood, conspiracy, love, destiny, tragic fall, pessimism, national tragedy.

Ամփոփում

Շանթի դրաման խորապես արդիական է, որով յուրովի արտահայտում էր իր աղետավոր XX դարը թևակոխած պետականագուրկ հայ ժողովրդի ազատասիրական իդեալը: Շանթը իր ժողովրդին անուղղակիորեն, այլաբանորեն հասկանալ էր տալիս, որ ինչպես ազատությունն ու անկախությունը, այնպես էլ պարզապես ապրելու, անգամ ֆիզիկապես գոյատևելու իրավունքը կյանքում նվաճվում է միայն ու միայն դժվար ու դաժան, անգամ անհույս ու օրհասական պայքարով և առաջին հերթին ու զլխավորապես սեփական ուժերով:

Ануш Асрян
Арцахский государственный университет:
Факультет филологии, армянского языка и литературы 4-й курс,
Научный руководитель – к.ф.н., доцент Нарине Оганесян
anush.asryan1997@mail.ru, + 374-97-70-52-70

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОТКРЫТИЯ СОВРЕМЕННОСТИ В ИСТОРИЧЕСКОЙ ДРАМЕ
Л.ШАНТА «ОШИН ПАЙЛ»,
Резюме

Драма Шанта актуальна, в которой своеобразно вражаются либеральные устремления армянского народа, который вступил в XX век не имея государственности. Шант косвенно дает понять своему народу, как свобода и независимость так право на жизнь, даже физическое выживание завоевывается только в трудной и жестокой, а иногда и безнадежной борьбе, лишь операясь, в первую очередь на собственные силы.

Anoush Asryan
Artsakh State University
Faculty of Philology, Armenian Language and Literature 4th year,
Scientific supervisor - Candidate of Philology, docent Narine Hovhannisyan
anush.asryan1997@mail.ru, + 374-97-70-52-70

PSYCHOLOGICAL DISCOVERIES OF THE PRESENT IN THE HISTORICAL DRAMA "OSHIN
PAIL"
Summary

Shant's drama is dramatically up-to-date, in which she expresses the liberal aspirations of the state-free Armenian nation, who had entered the 20th century. Shant indirectly understood his people that, just as freedom and independence, just the right to live and even survive in physics is conquered

only in a difficult and cruel, even hopeless and fierce struggle, and first and foremost by their own efforts.

Համագգային կազմավորման շրջանի բարդ ու հակասական հանգամանքներում է, որ Լևոն Շանթը գրում է <<Օշին Պայլ>> պատմական դրաման: Շանթը այս շրջանում անուրջների աշխարհից վերադարձավ մարդկանց առօրյա աշխարհը, պատկերեց առաքինություններ ու ստորություններ, ոգևորվեց ազգային-ազատագրական գաղափարներով, բայց շուտով նահանջեց մեծ պայքարի մարտադաշտից՝ այնտեղ տեսնելով միայն անիմաստ անձնագոհություն: Լ. Շանթը հայ թատերգությունը նորացնում էր ոչ միայն թեմատիկայով ու բովանդակությամբ. առավել անսովորն այն էր, որ իր գաղափարական բովանդակությամբ հույժ արդիական շանթյան դրամատուրգիան հիմնականում և գլխավոր արժեքներով պատմական էր և ոչ թե նոր ժամանակների, այլ անցյալ դարերի կյանքն էր պատկերում: Նա իր դրամատուրգիական գլուխգործոցներում պատմությունը միջոց է դարձնում՝ խորապես արդիական և ազգային-հայրենասիրական խնդիրներ արծարծելու, իր որդիական փրկարար պատգամները մեծապես վտանգված հարազատ ժողովրդին հաղորդելու, դաժան գոյապայքարի բազմադեմ ու մռայլ ճանապարհին նրա համար հույսի ու լույսի փրկարար կանթեղ վառելու: Շանթը հրապարակ էր բերում ամբողջովին արևմտյան թատերագրության ոգով ու ոճով գրված ոչ թե սոցիալ-կենցաղային, այլ բարոյաբանական-մարդագիտական բնույթի համամարդկային, հավերժական թեմաներ (իշխանատենչություն, փառամոլություն, չարություն ու բռնակալական կիրք, նախանձ, հանցանք և պատիժ, վրեժի արդարացի կիրք և այլն) շոշափող, բայց թե՛ ուղղակիորեն, թե՛ անուղղակիորեն կամ այլաբանորեն մեր ազգային ճակատագրի մտահոգություններով տոգորված, հզոր ու տարողունակ և մեծ մասամբ ողբերգաշունչ դրամաներ:

Հուսահատված սոցիալական և ազգային ճնշումներից, իրականության մեջ չտեսնելով ազատագրական պայքարի իսկական ուժերին՝ Շանթը դիմեց դեպի հեռավոր անցյալը, ավելի ճիշտ, մենավոր հոգիների ազատության տենչանքը անձնավորեց պատմության խորքերում: Շանթը կերտեց հախուռն կրքերով համակված բնավորություններ, որոնց բողոքը ողբերգականորեն թույլ էր ու ապարդյուն: Այս անգամ ևս Շանթը դիմում է Կիլիկիայի պատմության դրվագներին՝ պարզ ցուցադրելով ներազգային այն հակասությունները, որոնք պետք է պատճառ հանդիսանային հայոց պետության ոչնչացմանը¹:

«Օշին Պայլը» (1929 թ.) առավել հայկական ու հայրենասիրական դրամա է, որում Կիլիկյան Հայաստանի գոյության ու հարատևության համար մղվող անձնուրաց պայքարի պատկերման միջոցով արտահայտվել են մեր ժողովրդին դարերով հուզած ազգային անկախ պետականության վերականգնման և ապա նրա ամրապնդման ու պահպանման գաղափարն ու անմեղ երազը: Այն խորապես արդիական դրամա էր, որը յուրովի արտահայտում էր իր համար աղետավոր XX դարը թեակոխած պետականագուրկ հայ ժողովրդի ազատասիրական իդեալը: Եվ խիստ հատկանշական է, որ պատմական դրամատուրգիայի ասպարեզ թեակոխած Լ. Շանթը մեր վաղնջական անցյալին նվիրված իր երկերում արդիական ու հրատապ գաղափարներ էր արտահայտում՝ հենց սկզբից ցույց տալով, որ իր համար անցյալի թեմատիկան լոկ միջոց է եղել՝ վերահաս բարդ ու ճակատագրական ժամանակի ազգակործան վտանգներին դիմագրավելու ուղիներ նշելու, նոր, չարագուշակ դարաշրջանում հայության գոյատևման հարցականները քննելու ու նրան դեպի փրկության իրատեսական ճանապարհ ուղղորդելու համար: Նա իր ժողովրդին անուղղակիորեն, այլաբանորեն հասկանալ էր տալիս, որ ինչպես ազատությունն ու անկախությունը, այնպես էլ պարզապես ապրելու, անգամ ֆիզիկապես գոյատևելու իրավունքը կյանքում նվաճվում է միայն ու միայն դժվար ու դաժան, անգամ անհույս ու օրհասական պայքարով և առաջին հերթին ու գլխավորապես սեփական ուժերով: Շանթը բարձրացնում է բոլոր ժամանակների և հատկապես իր ապրած դարաշրջանի համար հույժ կարևոր կենսափիլիսոփայական հարցեր: Նա գոյություն չունեցող, բայց ցանկալի իդեալական աշխարհի ու կատարյալ

¹ Ա. Հունանյան, Թատերգակ Լևոն Շանթը XIX դ. – XX դարասկզբի հայ դրամատուրգիայի համապատկերում, Ե., 2011, էջ 105-111:

բանական էակի մասին իր գեղեցիկ պատկերացումները պատմական նյութի վրա կառուցված դրամատիկական լարված սյուժեի միջոցով հակադրում է բոլոր ժամանակների համար առավել բնորոշ այլանդակ իրականությանը և իշխանամուլ ու բռնակալ հոգիներին:

Իր շոշափած հարցերով, կերպարների հոգեկան հարուստ աշխարհով և ճշմարտացիությամբ <<Օշին Պայլ>> Շանթի իսկական ստեղծագործական նվաճումն է: Հեղինակը խուսափեց պատմական դեպքերի և անձերի ստույգ նկարագրության հրապույրից: Գաղափարական-գեղագիտական բովանդակության հարստությամբ խորապես ազգային-հայրենասիրական թեմա է արծարծում Շանթը, երբ XX դարասկզբին՝ Հայոց ցեղասպանությունից հետո, այդպես սուր ձևով արծարծում է հանցանքի և պատժի հիմնախնդիրը, ոճրին հետևող արդար ու համարժեք հատուցման գաղափարը: Ռոմանտիկական և բանաստեղծական շնչի այս գողտրիկ թատերգությունը որքան էլ որ պատմական նյութի վրա է կառուցված և պատկերում է հայկական Կիլիկիայում XIV դարում տեղի ունեցող իրադարձությունները, ազգային պետականության, մեր ժողովրդի ազատության և անկախության համար մղվող պայքարի թեման շոշափող և իր գաղափարական-գեղագիտական բովանդակությամբ խորապես արդիական ստեղծագործություն է:

<<Օշին Պայլ>>-ում նկարագրվող պատմական ժամանակաշրջանը պատկերվում է իրական, բնորոշ գծերով, քաղաքական տարբեր հոսանքների անհաշտ պայքարով: Ողբերգության կերպարները բախվում են Կիլիկիայի հայկական պետության բախտի համար վճռական նշանակություն ունեցող գաղափարների շուրջ: Պետության գոյության հարցը թափանցում է մարդկանց անձնական փոխհարաբերությունների մեջ, փոխում նրանց ճակատագիրը: <<Օշին Պայլ>>-ի հաջողության գաղտնիքն այն է, որ հեղինակն այստեղ պատմությունը չդարձրեց արդիական գաղափարների զգեստ, այլ մարդկանց դիտեց ու պատկերեց հեռավոր ժամանակաշրջանի կյանքի, պատմական գիտակցության ու հոգեբանական մթնոլորտում:

Ըստ գրականագետ Ս. Սարինյանի՝ <<Ընդհանրացնելով պատմության փորձը՝ Շանթը դրամայի գաղափարը հանգեցնում է այն կետին, որ հայոց պատմության առեղծվածը սուբյեկտիվորեն մնաց չըմբնված, և միացնող ոգին մշտապես տրոհվեց կենտրոնախույս ու եսական մղումների ներհակությունից: Ահա հենց այս հանգույցում է, որ Օշին Պայլը գիտակցեց հանգամանքների ամբողջ ողբերգականությունը>>¹: Օշին Պայլը խորին հավատով կառուցում էր հայոց պետականության անառիկ բերդը, սակայն ներքին ու արտաքին ինչ-ինչ ուժեր հյուսում էին դավադրության նենգամիտ որոգայթները: Հայոց թագավորական գահի վրա կախվում է վերահաս աղետը, ու միայն Օշինն էր, որ գուշակում էր մոտալուստ ողբերգության անխուսափելիությունը:

Քննադատ Գրիգոր Շահինյանը Օշին Պայլի կերպարում տեսնում է <<իրատեսության և գաղափարապաշտության տարօրինակ խառնուրդ մը>>, որը նրան երբեմն տալիս է <<ազնիվ բարոյախոսի մը հանգամանքը, երբեմն ալ ցինիք քաղաքագետի մը չորությունը>>²: Այս երկվությունը նա հավասարում է այն փաստով, թե իբր կարելի էր Ջապել Ամորիին <<պարզապես վնասելու անկարող վիճակի մը մեջն դնել>> և ոչ թե դատապարտել մահվան>>³: Կարծում ենք, որ դիտողությունը բնավ էլ հիմնավոր չէ, և Շանթը ճիշտ է կռահել իրերի տրամաբանությունը պետական քաղաքականության անողոր օրենքներում: Հենց դրամայի ամբողջ կոնֆլիկտը և շահերի ներհակությունը պարզ ցուցադրում էին, որ տիրապետական գործողություններում պատմությունը ներողամտություն չի հանդուրժում: Այս իմաստով Օշին Պայլի կերպարը միանգամայն ամբողջական է և տրոհված չէ ինչ-որ հոգեբանական մեղանշումներով:

Այսպես դրամայի սյուժեն սկիզբ է առնում Օշինի և Ռիթայի սիրո ռոմանտիկական հեքիաթով, հանգում ողբերգական ավարտով: Վերջին տեսարանում առանձնապես ներազդող են Ռիթայի հոգեկան վերապրումները: Զգալով, որ Օշինը վերադարձ չունի դեպի

¹ Սարինյան Ս., Լևոն Շանթ, <<Նաիրի>> հրատ., Ե., 1991, էջ 209:

² Յ. Հովակնյան, Լևոն Շանթի կենսագիտությունը, Ե., 2004, էջ 45:

³ Լ. Շանթ, Ընտիր երկեր, Ե., 1968, էջ 456: Այսուհետ հղումների էջերը կնշվեն բնագրի մեջ:

կյանք, իսկ իր գոյությունը անիմաստ է առանց Օշինի, նա մահվան մի հետաքրքիր լեզուն է արարում՝ կապելով այն ռումանտիկական երագ օրերի հուշին. <<Օր մը այսպես դուն նոր էիր մեր տանեն հեռացեր, շուրջս այդ մեր առանձնոցը դեռ լեցուն էր քու ձայնովդ, քու շունչովդ, էությունդ, գգվանքովդ, և հոգիս ալ լեցուն քեզմով կիսայտար ու կողոպար... Մեջս պահանջ կար խնդալու, կատակելու, խենթություն մը ընելու... Վարը ծովն էր ետևես, ծով մըն ալ իմ մեջս, ծովը կալեկոծվեր, ալեկոծ էր և իմ միջիս ծովը, ուր դուն էիր, ուր քու փոթորիկդ էր... Իսկ ես գինով էի, գինով էի քեզմով, քու սիրովդ, գգվանքովդ ու կքաշվեի միշտ ետ, միշտ ետ, դեպի եզերքը, դեպի ժայռերի վերջը... դեպի վերջը... վերջը...>> (533):

Այսպիսով՝ Օշին իշխանը անավարտ է թողնում Գիլիկիայի պատմության մատյանը և հանձն առնում Գիլիկիայի պատմությունը ստեղծելու առաքելությունը: Մտահղացումը մնում է անավարտ, քանի որ անավարտ է մնում Գիլիկիայի պատմությունը: Օշինի անկումը Գիլիկիայի անկման նախերգանքն է, իսկ Գիլիկիայի անկումը հայոց պատմության ողբերգական խորհրդանիշը: Պատմության դասերից Շանթը պատմափիլիսոփայական այն հետևությունն է արտածում, թե առհասարակ բոլոր կողմնորոշումները՝ արևելյան, թե արևմտյան, պայմանական են ինքնին, և բացարձակ է միայն հայոց անկախ պետականությունը:

Ռիթայի և Օշին Պայլի խորտակված սիրո մեջ անդրադառնում են Գիլիկիայի քաղաքական կյանքի տարուբերումները և ողբերգական անկումը: Պետական գործերը վարելու դժվարին աշխատանքին Օշինը ձեռնամուխ է լինում հավատով ու նվիրվածությամբ: Զորավարի ու դիվանագետի ունակություններին նա գումարում է դաժան անձնագոհությունը, բայց տարիների անդուլ գործունեությունից հետո վաստակում է միայն թշնամանք, ու դավադիր ամբոխի դեմ Օշինը մնում է մենակ:

Այսպես՝ կյանքն ընթանում է իր օրենքներով՝ հակադիր բևեռների վրա դնելով մի կողմից պատմության մաքառումը, մյուս կողմից՝ մարդու անձնական երազանքը: Տեղի է ունենում իրականության ու իդեալի խզումը, և քանի որ պատմության օրենքները դաժան են ու անծախելի, ուստի և ողբերգական կործանման է դատապարտվում նա, ով ձգտում է անձնականը գոհաբերել հանուն գաղափարի: Եվ այս ողբերգությունից հառնում է հոռետեսության կույր ու ֆանտաստիկ ոգին, որ կարծես դրված է հենց մարդկություն կոչվող երևույթի բնությունը: Դրաման վերջանում է մի տեսարանով, ուր գաղափարի կործանումը այլաբանում է դեպի նպատակը ձգտող մարդկային գործողության անիմաստ շարժումը: Ուրեմն իրացիոնալ է աշխարհը, մարդիկ մատնված են եսականության կույր տարերքին, բարին անըմբռնելի է, չարը՝ ամենագոր:

Մի հանգամանք արժանի է բացատրության: Դիմելով անցյալի դրվագներին՝ դասական պատմավեպը եղելությունները դասավորում է իդեալի հաղթանակի տրամաբանությամբ, այսինքն՝ պատմության մեջ որոնում է գաղափարական ճշմարտություն: <<Օշին Պայլ>> դրաման ավարտվում է մոայլ հոռետեսությամբ և իդեալի կործանմամբ: Անշուշտ, սա անիմաստ չի դարձնում պատմության փորձը, այլ՝ գաղափարը հաստատում է հակադարձ նշանակությամբ: Նա ընդգծում է ողբերգականը՝ պարզ ցուցադրելով այն չարիքը, որ պատճառ է դառնում ազգային դժբախտության: Այս իմաստով <<Օշին Պայլ>> դրաման ուղղակիորեն առնչվում է Շանթի ազգային ծրագրի՝ միասնության ու անկախության գաղափարին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Լ. Շանթ, Ընտիր երկեր, Ե., 1968:
2. Հովականյան Յ., Լևոն Շանթի կենսափիլիսոփայությունը, Ե., 2004:
3. Հունանյան Ա., Թատերգակ Լևոն Շանթը XIX դ., – XX դարասկզբի հայ դրամատուրգիայի համապատկերում, Պատմա-բանասիրական հանդես, № 1, Ե., 2011:
4. Սարինյան Ս., Լևոն Շանթ, <<Նաիրի>> հրատ., Ե., 1991, 280 էջ:

82.09(479.243)

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ

Լուսինե Նազարեթյան
ՀՀ Պետական կառավարման ակադեմիա
Հանրային կառավարում

Բանալի բառեր՝ հայ գրականություն, Արցախյան հերոսամարտ, չափաձո ստեղծագործություն, վեպ:

Ключевые слова: Армянская литература, арцахская война, стихотворная композиция, роман.

Key words: Armenian literature, Artsakh war, poetic composition, novel.

Ամփոփում

Արցախյան հերոսամարտը, լինելով հայ ժողովրդի մեծագույն հաղթանակներից մեկը, բնականաբար չէր կարող անհիշատակ մնալ հայ գրականության մեջ: Պատերազմի տարիներին գերակշռող էր մոտեցումը արձակի տեսքով: Հետագայում՝ զինադադարից հետո, արդեն նկատվեց նյութի ու գեղարվեստական պատկերների կոնկրետացում, ու ի հայտ եկան նաև հերոսամարտին նվիրված չափաձո ստեղծագործությունները, որտեղ արտացոլվում էր հիմնականում կամավոր ազատամարտիկների հայրենանվեր ու ազատասիրական գործը:

Лусине Назаретян
Академия государственного управления РА
Государственное управление

Резюме

Арцахская война, являясь одной из величайших побед армянского народа, естественно, не могла остаться незамеченной в армянской литературе. Во время войны преобладал подход в стиле проза. Позже, после перемирия, специфика материальных и художественных образов уже была раскрыта, а также появились поэтические произведения, посвященные героической битве, где главным образом отразилась патриотическая и либеральная работа борцов за свободу.

Lusine Nazaretyan
Academy of Public Administration of RA
Public administration

Summary

Of course, the Artsakh war, being one of the greatest victories of the Armenian people, could not remain unnoticed in the Armenian literature. During the war, the prevailing approach in the style of the prose. Later, after the ceasefire, the specifics of material and artistic images have already been disclosed, as well as poetic works dedicated to the heroic battle, which mainly reflected the Patriotic and liberal work of freedom fighters.

Արցախյան հերոսամարտը, լինելով հայ ժողովրդի մեծագույն հաղթանակներից մեկը, բնականաբար չէր կարող անհիշատակ մնալ հայ գրականության մեջ: Պատերազմի տարիներին գերակշռող էր մոտեցումը արձակի տեսքով: Հետագայում՝ զինադադարից հետո, արդեն նկատվեց նյութի ու գեղարվեստական պատկերների կոնկրետացում, ու ի հայտ եկան նաև հերոսամարտին նվիրված չափաձո ստեղծագործությունները, որտեղ արտացոլվում էր հիմնականում կամավոր ազատամարտիկների հայրենանվեր ու ազատասիրական գործը:

Այս առումով նշանավոր է հետանկախության շրջանի հայ գրականության ամենաակնազարկ դեմքերից մեկի՝ Լեւոն Խեչոյանի «Մեւ գիրք, ծանր բզեզ» գործը: Վեպն այն եզակիներից է, որ լույս տեսավ Արցախյան ազատամարտի հարաբերական ավարտից կարճ ժամանակ անց՝ 1999 թվականին: Խեչոյանը՝ ինքը, մասնակցություն ունենալով գոյամարտին, յուրովի է մեկնաբանում այս թեման: Պատերազմը պատմական փաստի արժեք ունի: Այդ է պատճառը, որ գեղարվեստական մոտեցումը փոքր-ինչ բարդացնում է թեմայի

նկարագրությունը: Գիրքը նկարագրում է պատերազմը, պատերազմից հետո և առաջ կատարված դեպքերը: Օրագրային ոճը, որով շարադրվել է ստեղծագործությունը, իրականության արտացոլման առավելագույն ճշգրտություն է ապահովում:

«Արգելեցին զենքով եկեղեցի մտնել: Մեր հոգու փրկության համար անվճար մոմեր բաժանեցին եւ մենք զենքը դռանը թողած, ներսում մոմեր վառեցինք»:

Այս տողերում արտացոլվում է այն մեծ հավատքը, որը, անկախ գոյություն ունեցող արգելքների, շարունակում է մնալ զինվորի սրտում՝ որպես առաջ մղող առանձնահատուկ ուժ:

Վեպում զինվորը ներկայացված է որպես հերոս, ով պատրաստ է կյանքը զոհել հանուն հայրենիքի: Նրա կամքը չի թուլանում անգամ այն բոլոր հանգամանքներից, որ ծնել էր պատերազմը:

«Քնում էինք քնապարկերի մեջ՝ թացին, չորին, ցրտին ու տաքին, քնում ու արթնանում էինք, դեռ լույսը չձագած տանկերը առաջներս գցած, հողի դողը ոտքներիս տակ, մետաղե աստամանիվների ճռնչոցը ականջներիս մեջ»:

Կարևոր է նշել այն փաստը, որը գրքում հեղինակը, համեմատելով սահմանի այս ու այն կողմերում գտնվող զինվորներին, չի մոռանում, որ նրանք կռվում են իրենց հայրենիքի համար, նրանք ոչ բարի են, ոչ՝ չար, դաժան են, սպանում են գերիներին փոխանակելուց առաջ, երկուսն էլ մանկություն ու պատմություն են ունեցել ու արժանի են ապրելու: Հեղինակը թշնամուն նայում է օբյեկտիվորեն ու նրա մեջ տեսնում է մարդուն:

«Լուսանում էր, արդեն չորրորդ օրն էր՝ մենք հրկիզել էինք, մեր դիմացի կոմիսիոներ տունը, իսկ աղավինները չորս օր է երկնքից կախված, առանց վայրէջքի, շրջապտույտ ու շրջապտույտ պտտվում էին նրա վրա»:

Արցախյան հերոսամարտին անդրադարձել է նաև Հովհաննես Երանյանը իր «Զինադադար» վիպակով: Այստեղ հեղինակը պատմում է Կովսականի մասին, որը պատերազմից հետո վերաշենացող մի գյուղակ էր: Այստեղ շեշտը դրվում է այն ինքնակոչ ազատամարտիկների վրա, ովքեր պատերազմող հերոսի անունի տակ ստորաբար թալանում են հայրենիքը:

«Բսկական զինվորը պատերազմի դաշտում է մնում, նա կորցնում է ամեն ինչ՝ ընտանիք, անցյալ, մասնագիտություն, կյանք»:

Վիպակը վերնագրելով «Զինադադար»՝ հեղինակը ահագանգում է, որ կոիվը դեռ շարունակվում է ու կոչ է անում զգոն ու պատրաստ լինել ցանկացած պահի:

Անշուշտ, պատմական ոչ մի իրադարձություն, ինչքան էլ պսակված լինի հաղթանակներով, չի կարող գերծ մնալ անօրինական ու եսակենտրոն գործողություններից: Այս առումով անհրաժեշտ է նշել Սամվել Բեգլարյանի «Մայրամուտ արևածագին» փաստագրական վիպակը, որտեղ հեղինակը վեր է բարձրացնում այն սխալները, որոնք ինչ-ինչ պատճառներով գործվել են դեկլարության կողմից:

«ՀՀԾ-ական դեկլարությունը, զարմանալիորեն գրեթե ոչինչ չէր ձեռնարկում, ավելին, այդ օրհասական օրերին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներից մեկը, որ որպես լիազորված անձ էր ուղարկված, ճողոպրեց՝ ի լուր բոլորի հայտարարելով. «Հանուն Հայաստանի անկախության թող մի Նոյեմբերյան էլ չունենանք, ինչ կա որ...»»:

Այս տողերում հեղինակը դատափետում է պաշտոնյա այրերին, որոնք, հասկանալով Մոսկվայի վարած խորամանակ քաղաքականությունը, չէին փորձում ոչ մի կերպ կանխարգելել հայերի մեծ հոսքը դեպի Ռուսաստան:

Ակնհայտ է, որ Բեգլարյանը քննադատական վերաբերմունք ուներ պաշտոնյաների նկատմամբ, որոնք ոչ թե զոհվածների կորստով էին տառապում, այլ մտահոգվում էին միայն իրենց անունի, դիրքի ու սեփական շահի մասին:

«Զոհվածներին մայր հարենիքի հողին հանձնեցինք մայիսի 9-ին: Հարազատներն ու մտերիմները ցավի, տառապանքի մեջ էին և հլու, անկարող ու անհաղորդ ենթարկվում էին հուղարկավորության գրեթե թատերականացված արարողակարգին... Ամեն ինչ հավուր պատշաճի էր՝ շուք, մեծարանք և խոսքեր, բառեր, բառեր... Բոլորատես աչքն ու ուշադիր ունկը կարող էին ընկալել, որ որոշ պաշտոնյա այրեր ամենին էլ ցավի ու անդառնալի կորստի մասին չէին խոսում, այլ արդեն իսկ խուսափում էին պատասխանատվությունից, արդեն իսկ մասները տնկում էին այլոց վրա՝ փրկելով իրենց կաշին»:

Բեգլարյանը վախենում է նոր սերունդի համար, ով պիտի գա ու, հետադարձ հայացք ձգելով, ասի, որ չկարողացան, վախեցան խոսել ճշմարտության մասին: Նա ուզում էր, որ ժամանակը իր հետ չվանա այն փաստերը, որոնք վերաբերում են ազատամարտի տարիներին գործած սխալներին:

«...թող այլք, եթե ունեն ցանկություն և, կարևորը, իրավունք, ժխտեն կամ հաստատեն, կամ ասեն այն, ինչ իրենք են ճշմարիտ համարում... Թող ասեն, միայն թե ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՐՅԱԿԱՆՆԵՐ ՉՄՆԱՆ»:

Շատերն են իրենց արձակում անդրադարձել այս պատմական իրադարձությանը՝ նկարագրելով «մութ ու ցուրտ» տարիներին առաջացած դժվարությունները (Մուսաննա Հարությունյան, «Քարտեզ առանց ցամաքի և ջրերի»), տիրող իրավիճակը ներքաղաքական իրադրության պատկերներով, ու տանել զուգորդումներ պատերազմող Արցախի ու Հայաստանի միջև տարվող զուգորդումները (Վարդան Դերիկյան, «Զսկսված ու չավարտված պատերազմը»), տալ պատերազմի ահեղ բախումներում և սոցիալ-տնտեսական 47 ծանր պայմաններում թրծվող դարավերջի մարդու կամքն ու բնավորությունը (Մկրտիչ Սարգսյան, «Դարավերջի հայր»), ընթերցողին հասցնել «պատերազմի համն» ու ծավալով փոքր, բայց խոսուն պատումներով ամբողջացնել ռազմավար կյանքը (Արա Նազարեթյան, «Լազմավար պատմվածքներ»):

Զինադադարից հետո հերոսամարտին անդրադարձ կատարվեց նաև պոեզիայի տեսքով: Այս դեպքում ավելի շատ շեշտադրվում է ազատամարտիկի ներաշխարհը, այն ցավը, որ ծնվում է ամեն մի անուն կորցնելիս, ու այն գաղափարը, որ ամեն գնով անհրաժեշտ է ազատագրել ու պահպանել հայրենի հողը: Այս առումով աչքի են ընկնում Գ. Աղաջանյանի «Արցախյան կանչեր» (1992), Ն. Ավագյանի «Մատյան հառներգության» (1997), Ա. Թովմասյանի «Զգույշ քայլեր, մարդիկ» (1999), Դ. Միքայելյանի «Ցավից ու սիարց ծնված» (1994) և ուրիշների ստեղծագործությունները:

Շատ կարևոր է անդրադառնալ Ղարաբաղյան շարժման գործիչ Թաթուլ Կրպեյանի ստեղծագործություններին, ով հրաշալի կերպով նկարագրում է իր սերը հայրենիքի նկատմամբ:

ՊԱՆՂՈՒԽՏԻ ԵՐԳԸ

*Դու, իմ մոլոր ճամփի վրա,
Բնչպես գարուն, բուրբոկ, անուշ,
Դու ինձ նման, դու ինձ սիրող,
Դու հող անուշ, իմ հայրենի:*

*Դու՝ հող անուշ, իմ հայրենի:
Դառը վիշտս հեռու վանիր,
Դառը կյանքիս գեթ խինդդ տուր,
Գեթ մի ծաղիկ, բուրոդ, անուշ:*

Կրպեյանի հայրենասիրական բանաստեղծություններում նույնիսկ լեռներն են հպարտ: Նրանք հայի տունն են ու սուրը արհավիրքի դեմ:

*...լեռներն իմ հայոց միշտ էլ հպարտ են,
հպարտ լեռները արծվի բույն են,
բույն են դարերին,
տուն են հայերին,
սիրող սրտերին հույս են լեռները,
արհավիրքի դեմ սուր են լեռները:
հայերի համար տուն են լեռները,
տան տանիքն ու սյունն են լեռները,
արևի շող են լեռները,
մայրական սիրով բարուրած մանկան
անուշ ժպիտ են հայի լեռները:
մոր սիրող սրտի քնքշանքից հյուսված
անհուն կարոտով դեզ են լեռները,
միտքն են ու խոսքն են
հայոց լեռները....*

Շատ երգեր են գրվել ազատամարտի հերոսներին նվիրված: Այս առումով կարևոր է նշել աշուղ Գևորգի «Մոնթե՛ Մելքոնեան» երգը, որը փառաբանում է հերոսի կատարած գործը հայրենիքի համար:

*...Փա՛նք քեզ ծնող մօրը, Մոնթե՛ Մելքոնեան,
Հայոց լեռներն են քո քաջութեան վկան:*

*Պահն օրհասական էր, երբ եկար Արցախ,
Թշնամու սրտի մէջ դրիր ախ ու վախ:
Ազգը գտաւ իրեն գաւակին խիզախ,
Յաղթանակի նոր լոյս բերիր, քա՛ջ Մոնթե՛:*

*Մայր հողը քեզ գրկեց, իսկ դու՝ մայր հողին,
Բնչպէս պանդուխտ որդին հիւանդ ծնողին,
Փառքով անցար հերոսական քո ուղին,
Դեռ գալու ես մի նոր լոյսով, քա՛ջ Մոնթե՛:*

Հերոսամարտին է անդրադարձել ժամանակակից գրող Սամվել Մարտիրոսյանը: Գեղեցիկ շարադրված «Ազատամարտ» ստեղծագործությունում հեղինակը հերոսներին համեմատում է կարմիր ծաղիկների հետ, որոնք հանուն հողի մնացին դաշտում ու սարում:

ԱԶԱՏԱՄԱՐՏ

*Կռիվ գնացին, ով սիրել գիտեր,
Ով սիրել գիտեր, սովորեց ատել,
Պահապան կանգնիր նրանց սիրուն, տեր,
Ով սիրել գիտեր, սովորեց ատել:
Կռիվ գնացին, ով սիրել գիտեր,*

Ով իր արյունը նվիրել գիտեր,
Պահապան կանգնիր նրանց սիրուն, տեր,
Ով իր արյունը նվիրել գիտեր:
Կռիվ գնացին, կռիվ գնացին,
Կարմիր ծաղկի պես դաշտում մնացին,
Կարմիր ծաղկի պես սարում մնացին,
Պահապան կանգնիր նրանց սիրուն, տեր,
Ով սիրել գիտեր ատելուց բացի...

Համեմատական անցկացնելով հայ ժողովրդի պատմության այլ էջերի հետ՝ պետք է նշել, որ ամբողջության մեջ արդի հայ գրականությունը Ղարաբաղյան ազատագրական պատերազմի թեմայով դեռևս չի ստեղծել զլուխգործոցներ, որոնք իրենց մեջ կրեն խոր և հավերժական բովանդակություն՝ անարդարության դատապարտման և ազատության հաստատման գաղափարը: Գուցե ողջ խնդիրը կայանում է նրանում, որ մենք սովոր չենք փառաբանական գրականություն ստեղծելու, ինչպես նշում է գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանը:

Եվ որպես վերջաբան կուզենայի զեկույցիս մասնիկ դարձնել իմ հեղինակային ստեղծագործությունը՝ նվիրված Արցախյան հերոսամարտի երեսուն ամյակին:

ՆԱՄԱԿ ՈՐՊԵՆ

Բարև, տղե՛ս, քեզ գրում է մայրդ տրտում,
Ով կարոտից արցունքներն է մեկիկ-մեկիկ կամաց սրբում:
Չէ՛, մի՛ տխրիր, բալե՛ս, ժպտա,
Որ մամայի սրտում հանկարծ տրտունջների բույլ չհորդա...
Խոսի՛ր, ի՛մ քաջ, պատմի՛ր դու ինձ, թե ինչպես ես բիրտ ոտխին հեռու պահում հայրենիքից...
Ախր մայրդ քեզ սպասում է, որդի՛ս, կգաս,
Դու դեռ պիտի սերունդներ տաս, պիտի ցնծաս, երգես, խնդաս...
Նայի՛ր, որդի՛ս, մայրդ արդեն ճերմակ դարձել, մեծացել է,
Հայրդ էլ դարդից կռացել ու ծերացել է..
Բայց մի՛ տխրիր, ժպտա՛, հերո՛ս,
Իմ տան դու ծուխ, իմ տան փարոս...
Ժպտա՛՜ տունս լուսավորվի,
Քո անունը միշտ վառ պահվի...
Ու կանգնել է ժամանակը մի չաշխատող գնացքի պես,
Ախր հոգիս փափագում է ջերմ գրկել քեզ:
Տղե՛ս, հիշի՛ր, թե ինչպես էի քեզ խրատում, երբ դեռ փոքր էիր,
Լինեիր արդար, բարի լինեիր, չվախենայիր ու չընկրկեիր...
Բայց հավատա՛՜ հիմա միայն երագում եմ,
Որ ուր որ է ինչ-որ մեկը դուռս թակի, գիրկս կընկնի,
Բայց դռները լռում են, տե՛ս, դաժանաբար,
Ա՛խ երանի որդիս տուն գար...
Ու խնայի՛ր դու թշնամուդ, ի՛մ քաջ տղա,
Քո պատճառով թող ուրիշի տան ճրագը լուռ չմխա,
Նա էլ ունի իրեն սպասող մի ընտանիք,
Ուրիշներին ցավ նվիրած խիղճը միշտ է ապերջանիկ...
Գնա՛, տղե՛ս, ես քեզ հետ եմ,
Իմ աղոթքով ճանապարհդ ես կհարթեմ...
Գնա՛, տղե՛ս, լա՛վ նայիր քեզ,
Ի՛մ քաջ բալա, տե՛ս՝ չմրսես...(Հեղինակ՝ Լուսինե Նազարեթյան)

Օգտագործված գրականության ցանկ

1. Արզումանյան Ս., Արդի հայ վեպը, հատոր 5, Եր., ՀԳՄ հրատարակչություն, 2004թ
2. Երանյան Հ., «Զինադադար» Երևան, 2005
3. Խեչոյան Լ., «Զայներ և տեսիլքներ», Երևան 2006
4. <http://vardananq.ysu.am/%D5%A9%D5%A1%D5%A9%D5%B8%D6%82%D5%AC-%D5%AF%D6%80%D5%BA%D5%A5%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/>
5. https://hy.wikisource.org/wiki/%D4%B5%D6%80%D5%A3:_%D5%84%D5%B8%D5%B6%D5%A9%D5%A5_%D5%84%D5%A5%D5%AC%D6%84%D5%B8%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6
6. <https://gisher.org/samvel-martirosyan-t26940.html>

ՀՏՂ82.09:81`37(811.19)

ԵՂԲԱՅՐ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Շուշան Ներսեսյան
Վանաձորի պետական համալսարան
«Հայոց լեզու և գրականություն»
մասնագիտություն, 3-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոցենտ Լ. Պետրոսյան

Բանալի բառեր՝ Եղբայր, հասկացոյթ, ազգակցական կապ, առաջնային իմաստ, երկրորդական իմաստ, բազմաժանր գրականություն:

Ключевые слова: родственная связь, первичное значение, вторичное значение, диалекты, многожанровая литература.

Key words: kinship relationship, primary, meaning, meaning, dialects, multi-genre literature.

Шушан Нерсесян
Ванадзорский государственный университет
специальность «Армянский язык и литература», третий курс

ЗНАЧЕНИЕ ПОНЯТИЯ „БРАТ” НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Резюме

В этой статье мы исследовали показывающее родственное соотношение слово „брат”, касаясь его смыслового разнообразия в многожанровой армянской литературе, в том числе и в фольклёре. Слово „брат” в течение исторического развития языка использовалось не только в значении " кровный родственник", но и "близкий", даже "незнакомец". В современном армянском языке понятие „брат”, сохраняя все свои значения, часто применяется в разных семантических связях.

Shushan Nersesyan
Vanadzor state university
"Armenian Language and Literature" speciality, 3rd year

"THE MEANING OF THE CONCEPT OF BROTHER IN ARMENIAN"

Summary

In the following article, we have touched upon the word "brother" among the various words that express kinship relationships, while referring to its various perceptions in the Armenian multi-genre literature, including folklore. During the historcial development of the language, the word "brother" began to be used not only as a "relative" but also as "a close friend" and even "an unknown person". In modern Armenian, the notion of the word "brother", keeping all its meanings, is often used with different word combinations expressing various meanings.

Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկալի Եղբայր անուն
Մ. Պեշիկթաշլեան

Հայոց լեզվի բառապաշարն արտացոլում է այն կապերն ու հարաբերությունները, որ ունեցել է հայ ժողովուրդը այլ ժողովուրդների հետ՝ իր բազմադարյան կյանքի զարգացման ողջ ընթացքում: Սերելով հնդեվրոպական նախալեզվից և անցնելով շատ երկարատև բարդ ու դժվարին ճանապարհ՝ հայոց լեզուն անվերջ ու շարունակ հարստացրել ու ճոխացրել է բառապաշարը, որը ծագումնաբանական տեսակետից մի քանի խմբի է բաժանվում: Այդ խմբերից մեկը հայոց լեզվի բառապաշարի առանցքը կազմող մի խումբ բառեր են, որոնք ծագում են հնդեվրոպական նախալեզվից և կոչվում են բնիկ հայերեն բառեր: Բնիկ հայկական բառերը կազմում են հայոց լեզվի բառապաշարի հիմնական շերտը: Հայերենն

ունի նախամայր լեզվից ծագող շուրջ 930 բառ: Հ. Աճառյանը հնդեվրոպական ծագում ունեցող հայերեն բառերը բաժանում է «ըստ նշանակության և ըստ տեսակի» 22 խմբի մեջ, որոնցից մեկը ընտանիք, ազգակցություն ցույց տվող բառերի խումբն է¹:

Ազգակցական տարբեր հարաբերություններ ցույց տվող բառերը հայ իրականության մեջ շատ վաղուց դադարել են օգտագործվել միայն առաջնային իմաստով և ժամանակի ընթացքում ձեռք են բերել նոր՝ երկրորդական իմաստներ, որոնք, այնուամենայնիվ, սերտորեն կապված են առաջնային իմաստի հետ և բխում են նրա բովանդակությունից: Այս հոդվածում մեր նպատակն է քննության ենթարկել ազգակցական հարաբերություն ցույց տվող բառերից մեկը՝ **եղբայր**՝ անդրադառնալով վերջինիս իմաստային զարգացումներին և կիրառություններին հայերեն բազմաժանր գրականության մեջ:

Եղբայր բառի ստուգաբանության հետ կապված տարակարծություններ չկան: Հ. Աճառյանը «Հայերեն արմատական բառարան»-ում վկայում է, որ **եղբայրը** բնիկ հայկական բառ է², ինչպես ազգակցական կապեր ցույց տվող մնացած բառերը՝ **հայր, մայր, քույր** և այլն: Խոսքում հաճախակի կիրառություն ունենալով՝ **եղբայր** բառն սկսում է կիրառվել իմաստային տարբեր ընկալումներով՝ հիմնական իմաստին զուգահեռ ձեռք բերելով նաև երկրորդական իմաստներ, որոնք դառնում են բազմիմաստության հիմք:

Եղբայր բառի հիմնական իմաստն է. «Հարազատ արու, համահայր կամ համամայր զաւակ»³: Հետագա շրջանների բանասիրական բառարաններում այս բացատրությունը գրեթե նույնությամբ կրկնվում է: Ս. Մալխասյանցը «Հայերեն բացատրական բառարան»-ում որպես **եղբայր** բառի առաջին իմաստ՝ նշում է. «Միննոյն ծնողներից (կմ միննոյն հօրից կմ միննոյն մօրից) ծնած արու զաւակ՝ վերաբերութեամբ միւս զաւակների, հարազատ եղբայր - միննոյն ծնողներից, համահայր - նոյն հորից, համամայր - նոյն մօրից, խորթ եղբայրներ - կամ մի հօրից կամ մի մօրից»⁴: Է. Աղայանը «Արդի բացատրական բառարան»-ում **եղբայր** բառի առաջին իմաստը ներկայացնում է «Միննոյն ծնողների տղաներից յուրաքանչյուրը մյուսների նկատմամբ»⁵ բացատրությամբ:

Եղբայր բառն իր առաջնային իմաստով օգտագործվել է հայ հին մատենագրությունից մինչև արդի գեղարվեստական գրականություն:

Այսպես «Աստուածաշունչ» երկում **եղբայր** հասկացություն առաջին անգամ գործածվում է. «Եմուտ Ադամ առ Եւայ կին իւր եւ յղացաւ եւ ծնաւ զԿային. Եւ ասէ. Ստացայ մարդ Աստուծով: Եւ յաւել ծնանել զ**եղբայր** նորա զՀաբէլ»՝ նախադասության մեջ՝ իր առաջնային իմաստով: Նույն իմաստով կիրառություններ են հանդիպում նաև միջին հայերենի տարբեր հեղինակների երկերում:⁶ «Ոչ **եղբայր** ւ՝ ոչ զոք ունիմ, որ աւաղէ, ափսոսայ զիս. Ոչ՛ ծլիմ, ոչ՛ բուսանիմ, զերդ զաղընձած սերմ եմ գերիս» (Ֆ, 181): «Թէ ուզեմ, որ անանց բարոյն տիրանամ, Զտուն ու գտեղ ու **զեղբայր** ու զքոյր մոռանամ» (Ֆ, 190): «Ոչ ունիմ մարդ սիրելի ի յընտանեաց ինձ կամ օտար, Որ զըթայ սրբտովն ի յիս, կամ աղետայ զիս իր **եղբայր**» (ԿԵ, 249): «Սերմանեց նա ի Կայէն, զԱբել եսպան՝ **զեղբայր** արդար» (ԿԵ, 262): «Պապուս անունն ասեն մօլլայ, **Աղբօրս** ասեն քաղքին շահնայ, Ու զիմ անունս ասեն Այշալ, Մէկալ քուրջս Օղուդայ, Զիմ մօրս անունն ասեն Ֆաթմայ, Ու հօրս ասեն դատի մօլլայ» (ՅԹ, 320):

¹ Տե՛ս **Ա. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1993, «Երևանի համալսարանի» հրատարակություն, էջ 136-139:

² **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1971, «Երևանի համալսարանի» հրատարակություն, էջ 15: Այսուհետ՝ ՆԱԲ:

³ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Երևան, 1979, «Երևանի համալսարանի» հրատարակություն, էջ 652: Այսուհետ՝ ՆՀԲ:

⁴ **Ս. Մալխասեանց** Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1944, Հայկական ՍՍՌ պետական հրատարակչություն, էջ 556:

⁵ **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, «Հայաստան» հրատարակչություն, էջ 322:

⁶ Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Երևան, 1979, «Երևանի համալսարանի» հրատարակչություն,

Աշխարհաբարում նույնպես առավել հաճախադեպ է առաջնային իմաստը, ինչպես՝ «Բսկ այդ միջոցին մյուս փոքր «օղայում» նստած էր անդամալուծը և հանդարտ՝ աչքի տակով նայում էր իր **եղբորը**» (ԴԴ, 12)¹: «Որքան զանազանություն կա ձեր և ձեր **եղբոր** միջև» (ԱՇ, 436)²: «Առավելապես մեզ քանդում են բժիշկների վարձն ու դեղորայքը. Գոնե դրանից մի զգալի օգուտ լիներ հորս կամ **եղբորս**» (ՆԴ, 194)³: «Մյուս երկու եղբայրներս՝ Արշակն ու Գարեգինը՝ բավական չէ, որ անգործ են, այլ և մի ծանր բեռ են դարձել մեր վզին» (ՆԴ, 195):

Բարբառներում **եղբայր** բառը հանդես է գալիս **ախբար** (Ակն, Ասլ., Պլ., Մեբ.), **ախպար** (Ազլ., Ախգ., Կր., ՆՆխ.), **ախպեր** (Ալշ., Երև., Ղրբ., Մկ., Մշ. և այլն), **ախփեր** (Տիգ.), **ախպերեր** (Գոր., Մրդ.) տարբերակներով⁴, որոնցում ակնհայտ է երկբարբառների պարզեցումը (**եա, աբե**) և ձայնեղների խլացումը (**դ>խ, բ>պ**): Գավառական փառաբանական ձևերն են **աբար, աբարիկ, աբո, ապեր, ապի, ապին, բաբար, փաբար, փաբեր, փափ, փափու, փափո, փափուն, պապեր,** որոնք նախնական **եղբայր** նշանակությունից անցել են «մեծ եղբայր, հայր, հորեղբայր» նշանակություններին և դարձել են «մեծերին տալու պատուանուն»: (ՀԱԲ, 16)

Եղբայր հասկացության իր առաջնային իմաստով հատկապես հաճախադեպ է ժողովրդական բանահյուսության մեջ: Հայկական ժողովրդական հեքիաթներում եղբայրները՝ ըստ սերման, լինում են.

ա. թագավորի տղաներ, օրինակ՝ «Լինում է, չի լինում՝ մի թագավոր: Էդ թագավորը երեք տղա է ունենում, մի անգամ երեք եղբայրները գնում են ման գալու» (ՀԺՀ, էջ 52)⁵:

բ. գեղջուկի տղաներ, օրինակ՝ «Երկու **եղբայր** են լինում, մի շոգ օր սրանք հնձի են գնում» (ՀԺՀ, էջ 250):

Հեքիաթներում սովորաբար **եղբայր** հասկացությամբ բնութագրվում է **փոքր, մեծ, միջնեկ, խելոք, հնարամիտ և այլ** որոշիչներով, ինչպես՝ «**Փոքր եղբայրը** կարգադրում է, որ **մեծ եղբայրը** վերի ճամփով գնա, **միջնեկը**՝ միջին ճամփով, իսկ ինքը ներքին ճամփան է ընտրում» (ՀԺՀ, 33), «**Փոքր եղբայրը** բեզարած, հոգնած գալիս է հասնում նրանց» (ՀԺՀ, 36), «**Խելոք ախպերը** տեսնում է՝ **Խելառն առանց կովի ետ է գալիս**» (ՀԺՀ, 187):

Հայոց հին հավատալիքներում **եղբայր** հասկացության անմիջականորեն առնչվում է **քույր** հասկացության և բնության երևույթների՝ անձնավորում պատկերավորման միջոցով են ներկայացվում արևի ու լուսնի, կրակի ու ջրի ավանդազրույցները⁶: Օրինակ՝ «Արևն ու լուսինը **քույր** ու **եղբայր** են. արևը **եղբայրն** է, լուսինը՝ **քույրը**» (ՄՀ, 18): «Կրակը և ջուրը **քույր** ու **եղբայր** են. կրակը **քույրն** է, ջուրը՝ **եղբայրը**» (ՄՀ, 27): Որպես **եղբայրներ** են պատկերվում հայոց լեռները. «Հայոց լեռները հաղթանդամ ու հսկա **եղբայրներ** են եղել: Աստված տեսնում է այդ, պատժում է **եղբայրներին**» (ՄՀ, 28):

Առաջնային իմաստի ընդլայնման օրենքով՝ **եղբայր** հասկացությամբ կիրառվում է ևս ութ երկրորդական՝ ուղիղ կամ փոխաբերական իմաստներով:

1. ՆՀԲ-ն որպես երկրորդ իմաստ է նշում «Մերձաւոր արեան և ընտանի սիրելիք, ևս և ամենայն մարդ» (ՆՀԲ, 652) բացատրությունը՝ ըստ եբրայական ոճի: Մ. Մալխասյանցը այս իմաստն անվանում է «ընդարձակ»՝ ներկայացնելով «ամեն մի մարդ միսի վերաբերությամբ՝ իբրև նույն սեռի պատկանողներ» (ՄՄ, 556) բացատրությունը: «Հոգևոր **եղբարք**» արտահայտության մեջ **եղբայր** հասկացությամբ կիրառվում է «կրոնավորք» իմաստով հատկապես կրոնակեղեցական գրականության մեջ:

2. «Եղբայրատեսակ, որ ոք կամ որ ինչ է կցորդ և նման այլոց իւիք օրինակաւ» իմաստը հոմանիշ է **ընկեր, զուգահաւասար** բառերին և կիրառվում է հատկապես իրանիշ

¹ Դ. Դեմիրճյան, Երկեր, Երևան, 1983, «Լույս» հրատարակչություն:

² Ալ. Շիրվանզադե, Երկեր հինգ հատորով, հ. 3, Երևան, 1987, «Սովետական գրող» հրատարակչություն:

³ Նար-Դոս, Պատմվածքներ, վիպակներ, Երևան, 1978, «Լույս» հրատարակչություն:

⁴ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1971, «Երևանի համալսարանի» հրատարակչություն, էջ 16: Այսուհետ՝ ՀԱԲ:

⁵ Հայկական ժողովրդական հեքիաթներ, Երևան, 2004, «Արևիկ» հրատարակչություն: Այսուհետ՝ ՀԺՀ:

⁶ Ս. Հարությունյան, Հայ հին վիպաշխարհը, Երևան, 2004, «Արևիկ» հրատարակչություն: Այսուհետ՝ ՄՀ:

գոյականների մերձավորությունն արտահայտելիս. «Այբն եղբայր՝ միակին: Եղբայրք առաքինությունն և չարությունն, ըստ այնմ որով միոյ ոգւոյ ծնունդք են և թշնամիք» (ՆՀԲ, 1, 652): Հայ նոր գրականության մեջ այս իմաստը հարաբերվում է **շուկ** կենդանանիշ գոյականի հետ, ինչպես՝ *Շուն, կարոտի իմ եղբայր, դառնաթախի՛ճ իմ ընկեր* (ԵԶ, 188)¹: Հ. Սահյանի բանաստեղծություններում այն կիրառվում է «գրչակից ընկեր» իմաստով, ինչպես՝ *Անհնար է հավատալ, որ չկաս իրոք, Դու իմ եղբայր, դու իմ պապ, իմ գիժ, իմ խելոք* (ՀՍ):

3. Հայ նոր գրականության մեջ, **եղբայր** հասկացությո՞ւնը նշանակում է «Մի ազգի անդամները, իբրև նույն հայրենիքի զավակներ», (ՍՄ, 556): Ա՛յ, դժբախտաբար օրերին այս մութ, Ոչ թե յամբով եք դուք ինձ հարվածել, Այլ, վատ եղբայրներ, -էջի ոտներով (ԵԶ, 276)²:

4. Երկրորդական իմաստների ամփոփման եղանակով **եղբայր** բառը կիրառվում է նաև «Միմյով՝ բարեկամությամբ իրար հետ կապված անձեր, մտերիմ ընկերներ» իմաստով, օրինակ՝ *Նա ինձ համար աւելի լաւ եղբայր է, քան իմ հարազատ եղբայրներս* (ՍՄ, 557): Մասնավորապես հեքիաթներում այս իմաստով անձնավորվում են կենդանիները. *Գնում մտնում է գունը, իրեն տեղը կանգնում ու կանչում է օձին,- հե՛յ, օձ ախպեր, անցածն անցած է, էլի մենք ախպեր ենք. -Չէ՛, մարդ արարած, չէ՛, գնա քո բանին, քանի քո տղի մահվան ցավը սրտիդ մեջն է, իմ պոչիս ցավն էլ իմ սրտիս մեջ, մենք էլ իրար ախպեր չենք լինի* (ՀԺՀ, 219):

Գոյական > վերաբերական խոսքիմասային փոխանցման ճանապարհին, **եղբայր** հասկացությո՞ւնը կիրառվում է նաև իբրև կոչական «մի անձանթի դիմելիս» (ՍՄ, 557): Այս կիրառությունը հատկապես տարածվել է արդի հայերենում, և է. Աղայանը իր հեղինակած բառարանում վկայում է նաև «Մտերմաբար տղամարդու դիմելու կոչական բառ և զարմանք ու զայրույթ արտահայտող բացականչական բառ» (ԱՀԲԲ, 322) ենթաիմաստները, օրինակ՝ *Թագավորի ծառաները հարցնում են. -Ախպե՛ր, էս կողմերը ուխտ չե՛ս տեսել* (ՀԺՀ, 243): *Ա՛յ ախպեր, -ասում է էդ սագն իմն է, ինչի՞ եք բռնել, լծել:* (ՀԺՀ, 231): *Ա՛յ ախպեր, -հարցնում է չորանը, -ի՞նչ մարդ ես, ձմերուկի միջին ի՞նչ ես շինում* (ՀԺՀ, 232):

5. Աշխարհաբարի զարգացման առաջին շրջանում **եղբայր** բառը **դ** ստացական հոդով կիրառվում էր «ամուսին» նշանակությամբ կնոջ խոսքում. «Նստեցե՛ք, քիչ սպասեցե՛ք, **եղբայրդ** շուտով կգա» (ՍՄ, 557):

6. Վաղ աշխարհաբարում **եղբայր** բառով կայուն արտահայտություններ էին ձևավորվում՝ **Եղբայր ի Քրիստոս, գենքի եղբայր**, վերջիններս հետաքրքրական են հատկապես իրենց արտահայտած իմաստների հակադրությամբ: Եթե առաջինը նշանակում է «Կոչում, որ տալիս են իրար բարձր հոգևորականները պաշտօնական գրությունների մեջ՝ իբրև զաւակներ քրիստոնէական եկեղեցու», ապա երկրորդը՝ «Միասին կռուող զինուորներ» (ՍՄ, 557):

7. 6-րդ և 4-րդ իմաստների ամփոփումով են արտահայտվում այն կոչականները, որոնք վկայակոչվում են իբրև նույն ազգի ներկայացուցիչներ. «-Հայ **ախպերնե՛ր**, հայ քուրիկնե՛ր, Էրնե՛կ ձեզի, որ չեք տեսեր, Ինչ որ տեսա էս աչքերով» (ԱԲ, 113)³: «-Ձինվորնե՛ր, **եղբայրնե՛ր**, ժողովո՛ւրդ հայոց: Վաղը ազատության օրն է, վաղը պիտի կռվենք» (ԴԴ, 946)⁴:

8. Գոյական > ածական խոսքիմասային փոխանցումով **եղբայր** հասկացությո՞ւնը հատկապես ժողովրդախոսակցական ոճում կիրառվում է իբրև որոշիչ, ինչպես՝ «Ու էն հարսանքից թշնամի դարձան **Ախպեր** տղերքը էս դեպքի համար» (ՀԹ, 71)⁵:

Աշխատանքի ուսումնասիրության ժամանակ հետաքրքրական էր նաև **եղբայր** բառի որոշչառությունը: Ժողովրդախոսակցական լեզվով գրված գրականության մեջ **եղբայր** հասկացությո՞ւնը բնութագրվում է.

- **կանանչ, ճանանչ** ածականներով, ինչպես՝ *Է՛յ, կանանչ ախպեր, Է՛յ ճանանչ ախպեր, Արի՛, քեզ հետ բե՛ր Արնի շողեր* (ՀԹ, 224)¹:

¹ Ե. Չաբենց, Երկերի ժողովածու, հ 4, Երևան, 1986, «Սովետական գրող» հրատարակչություն:

² Ե. Չաբենց, Անտիպ և չհավաքված երկեր, Երևան, 1983, «Հայկական ՍՍՀ ԳԱ», հրատարակչություն:

³ Ավետիք Բաախակյան, Երկերի ժողովածու, հ 2, Երևան 1974, «Հայաստան» հրատարակչություն:

⁴ Դերենիկ Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1987 «Լույս» հրատարակչություն:

⁵ Հովհաննես Թումանյան, Երկեր, Երևան, 1980, «Լույս» հրատարակչություն:

- անձնանիշ գոյական որոշիչներով, ինչպես՝ -**Որսկան ախպեր**, սարեն կու գաս, Սարի մարալ կփնտրես, Ասա՛, յարա՛ք դու չտեսա՛ր իմ մարալս, իմ բալես (ԱԲ, 75) ²: *Ճանապարհին մի գայլ պատահեց.- առաջ բարի, մարդ-ախպեր, ու՛ր ես գնում,- հարցրեց գայլը* (ՀԹ, 97) ³:
- իրանիշ գոյական որոշիչներով, ինչպես՝ *Գյուղացիք սարսափած վազեցին տիրոջ ետևից թե՛ «Ե՛կ, աստծու սիրուն, կացին ախպորը բան հասկացրու»* (ՀԹ, 107) ⁴:
- կենդանանիշ գոյական որոշիչներով, ինչպես՝ -**Աղվես ախպեր**, - *ասում է այծը,- չե՞ս կարող մի քիչ սառը ջուր բերել* (ՀԺՀ, 218):

Բերված բոլոր օրինակներից պարզ է դառնում, որ **եղբայր** բառն ունի իմաստային ընկալման բազմազանություն, որը չի սահմանափակվում ժողովրդական և անհատական ստեղծագործություններում: **Եղբայր** բառը լայն կիրառություն ունի նաև գրականությունից դուրս՝ առօրյա խոսակցական ոճում՝ մասնավորապես դարձվածքներում, որոնք ստեղծվել են ժողովրդի կողմից՝ այս կամ այն երևույթը ավելի պատկերավոր ներկայացնելու համար: Այժմ անդրադարձ կկատարենք այն դարձվածքներին, որոնց կազմության մեջ որևէ կերպով օգտագործվում է **եղբայր** բառը: Դարձվածքների գերակշռող մասում **եղբայր** բառը փոխվել է՝ դառնալով **ախպեր**: Թեև Պ. Բեդիրյանի և Ա. Գալստյանի դարձվածաբանական բառարաններում բերված են և՛ **եղբայր** բառով, և՛ **ախպեր** բառով դարձվածքների օրինակներ, բայց ժողովրդի մեջ արմատացած է նույն դարձվածքների այն տարբերակները, որոնցում օգտագործվում է **ախպեր** բառը: Դարձվածքներում **եղբայր (ախպեր)** բառի կիրառումը միտված է ցույց տալու մարդկանց մտերմության աստիճանն այն ժամանակ, երբ նրանց միջև արյունակցական կապ գոյություն չունի: Պ. Բեդիրյանի և Ա. Գալստյանի բերած դարձվածքներում (**եղբայրական գերեզման, եղբայրը եղբոր դեմ, եղբորը եղբոր դեմ հանել, ախպերն ախպորը չի տա, ախպեր տղերք, ախպորս ասեմ, ախպերս, որ դու ես, մեծ ախպեր** և այլն) **եղբայր** բառն օգտագործվում է, որ ցույց տրվի մտերմության որոշակի աստիճան, այնպիսի մտերմություն, որ ունենում են **եղբայրները** միմյանց հանդեպ: Սակավաթիվ են այն դեպքերը, երբ **եղբայր** բառը դարձվածքներում օգտագործվում է իր հիմնական իմաստով՝ արտահայտելով արյունակցական կապ⁵:

Եղբայրը եղբոր դեմ (ելնել, զինվել) դարձվածքը մի իմաստով ցույց է տալիս արյունակցական կապ, մյուսով՝ մտերմություն: (ՄԲ, 419)

- Քաղաքացիական կռիվ, արյուն, կոտորած, **եղբայրը եղբոր դեմ** (ՄԶ): (մտերմություն):
- Այդտեղ էր, որ տեսա գայլի ախորժակով, վագրի ժանիքներով **զինված** բարեկամին բարեկամի դեմ, **եղբայրը եղբոր դեմ**, որդուն հոր դեմ (ԱՇ): (արյունակցական կապ)

Եղբոր նման (ախպոր պես) դարձվածքն նույնպես ունի մի քանի իմաստ, որոնցից մեկը արտահայտում է արյունակցական կապ, իսկ մանցածը՝ մտերմության աստիճան: (ՄԲ, 419)

- **Նա եղբոր նման ազնիվ ու արդար երիտասարդ է, երբևէ ոչ ոքի չի խաբել**: (ցույց է տալիս հարազատ եղբայրների նմանությունը):
- **Եղբոր նման, այսօր հանդիպիր նրա հետ և խոսիր հետը** (արտահայտության մեջ արտահայտում է խնդրանք):
- **Բոլորով մի հարկի տակ պիտի եղբոր մնան ապերք** (ցույց է տալիս մտերմություն, համերաշխություն) և այլն:

¹ **Հովհաննես Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ 1, Երևան, 1988, «Հայկական ՄՍՀ ԳԱ» հրատարակչություն:

² **Ավետիք Իսահակյան**, Երկեր, Երևան, 1980, «Լույս» հրատարակչություն:

³ **Հովհաննես Թումանյան**, Ընտիր երկեր, հ 2, Երևան, 1985, «Սովետական գրող», հրատարակչություն:

⁴ **Հովհաննես Թումանյան**, Ընտիր երկեր, հ 2, Երևան, 1985, «Սովետական գրող» հրատարակչություն:

⁵ **Սարգիս Բեդիրյան**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, 2011 ԵՊՀ հրատարակչություն

Բառակապակցություն – դարձված – բառաբարդում խոսքային միավորների փոխակերպման ճանապարհին բազմաթիվ են նաև **եղբայր** հասկացության արմատական կիրառությունները, ինչպես՝

ախպերափայ բառը կազմված է ախպեր(հավասար) և փայ(մաս) բառերից, որտեղ, ինչպես տեսնում ենք, **ախպեր** բառը ցույց է տալիս հավասարություն), **եղբայրասեր**, **եղբայրատյաց**, **եղբորորդի**, **մորեղբայր**, **արքայեղբայր**, **հարսնեղբայր** : Այն կիրառվում է մի քանի ածանցումներում, ինչպես՝ **եղբայրություն**, **եղբայրական**:

Ամփոփագիր

Այս հոդվածում քննել ենք ազգակցական հարաբերություն ցույց տվող բառերից եղբայրը՝ մասնավորապես անդրադառնալով նրա իմաստային տարատեսակ ընկալումներին հայ բազմաժանր գրականության մեջ: Ձեկուցման ավարտին հանգել ենք այն եզրակացության, որ հայերենի բառապաշարի հիմնական բառերից մեկը՝ եղբայրը, որը ժամանակի ընթացքում սկսվել է գործածվել ոչ միայն որպես արյունակից հարազատի ներկայացնելիս, այլև մտերիմ, երբեմն նույնիսկ անծանոթ մարդուն դիմելիս: Մեր օրերում **եղբայր** հասկացությամբ, պահպանելով իր բոլոր իմաստները, հաճախ է կիրառվում իմաստային տարբեր գույգորդումներով՝ երբեմն նույնիսկ անցնելով սահմաններն ու դառնալով ժարգոնային բառ:

Համառոտագրություններ

ԱՇ_Ալեքսանդր Շիրվանզադե

ԱԻ_Ավետիք Իսահակյան

ԴԴ_Դերենիկ Դեմիրճյան

ԵԶ_Եղիշե Չարենց

ՀԱԲ-Հայերեն արմատական բառարան

ՀԺՀ_հայկական ժողովրդական հեքիաթ

ՀՍ_Համո Սահյան

ՀԹ_Հովհաննես Թումանյան

ՆԴ_Նար-Դոս

ՆՀԲ- Նոր բառգիրք հայկագեան լեզուի

ՍԶ_Ստեփան Չոբյան

ՍՀ_Սարգիս Հարությունյան

ՄՄ- Ստեփանոս Մալխասյանց

ՎԱ_Վարդան Այգեկցի

Ֆ_Ֆրիկ

ԿԵ_Կոստանդին Երզնկացի

ՅԹ_Յոցհաննես Թլկուրանցի

ՀՏԴ82.09:808.1

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ «ԱՌԱՎՈՏ
ԼՈՒՍՈ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ

Անահիտ Հայրապետյան
ԱրՂՀ, բանասիրական ֆակուլտետ,
Հայոց լեզու և հայ գրականություն 4-րդ կուրս,
Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Դ.,
պրոֆեսոր Սոկրատ Խանյան
hayrapetyana97@mail.ru, +374-97-75-28-85

Բանալի բառեր: Խաչատուր Աբովյան, Սուրեն Այվազյան, պատմավեպ, կյանք, զեղարվեստ, պատկեր, կերպար, հայրենասիրություն, արդիականություն:

Ключевые слова: Хачатур Абовян, Сурен Айвазян, исторический роман, жизнь, искусство, художественное изображение, образ, патриотизм, современность.

Key words: Khachatur Abovyan, Suren Ayvazyan, historical novel, life, art, artistic image, character, patriotic, modernity.

Ամփոփում

Սույն հոդվածում քննարկվում է անվանի գրող Սուրեն Այվազյանի «Առավոտ լուսո» պատմավեպը, որի նյութը առնված է 19-րդ դարի առաջին տասնամյակների Հայաստանի քաղաքական, պատմական դեպքերից: Հոդվածում նշվում են այն անվանի հեղինակները, ովքեր Ս. Այվազյանից առաջ անդրադարձել են մեծ լուսավորչի կերպարին: Հոդվածի հիմնական առանցքը քննարկվող վեպի հայրենասիրության գաղափարն է՝ Խաչատուր Աբովյանի կերպարի բնութագրման սահմաններում:

Резюме

В данной статье рассматривается исторический роман известного писателя Сурена Айвазяна, который называется “Утренний свет”. В этом романе описываются политические, исторические события, которые произошли в Армении в первом десятилетии 19-го века. В статье упоминаются известные авторы, которые создали художественный образ великого просветителя до С. Айвазяна. Основная цель в обсуждаемом романе является патриотическая идея, которая описывается в пределах художественного образа Хачатур Абовяна.

Summary

In this article it is discussed the historical novel “Morning Light” by famous writer Suren Ayvazyan. The event described in this novel refers to the political, historical events taken place in Armenia in the first decades of the nineteenth century. Here are mention the names of well-known authors who made the artistic image of the great educator before Suren Ayvazyan. The main point of the article is the patriotic idea which is described according to the image of Khachatur Abovyan.

Հայ ժողովրդի մեծանուն գավակ, հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը ժամանակին գրել է. «Շո՛ւնչդ տուր, հոգի՛դ տուր, բայց հայրենիքդ մի՛ տուր ուրիշին¹»: Հայ անվանի գրողներից Ավ. Իսահակյանը գրել է. «Աբովյանը խտացումը եղավ հայ ժողովրդի երազանքների, ձգտումների, ցավերի ու տառապանքի, նրա հոգու և իմաստության, նա եղավ հայ ժողովրդի լեզուն, սրտագին լեզուն... Խաչատուր Աբովյանը մեր նոր գրականության միֆն է, մեր նոր Միերն է նա՝ ազատագրված, շղթայազերծ... մեր գրական ամեն տեսակների սկիզբն է նա»²: Եվ պատահական չէ, որ անմահ Աբովյանի կերպարին անդրադարձել են ականավոր հայ բանաստեղծներն ու արձակագիրները: Հայտնի է մեծանուն գրող Ակսել Բակունցի «Խաչատուր Աբովյան» վեպը, որտեղ նա ցանկացել է ցույց տալ հայ իրականության մեջ 19-րդ դարասկզբին Աբովյանի երևան գալու պատմական

¹ Խաչատուր Աբովյան, Երկեր, «Սովետական գրող» հրատ., Եր., 1984, էջ 119:

² Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, «Սովետական գրող» հրատ., Եր., 1947, էջ 178:

անհրաժեշտությունը: Նա աշխարհ եկավ շեփոթելու ժողովրդի արարող մտքի զարթոնքը: Ակսել Բակունցն Աբովյանի կերպարը ներկայացրել է ողբերգական հերոսի ասպեկտով՝ ընդգծելով այն խոր հակասությունը, որ դարասկզբի հին կարգերը ստեղծել էին իրենց գոյությունն արդարացնող հասարակական նորմերի և այդ կարգերի կաշկանդիչ շղթաները փշրել ցանկացող լուսավոր անհատների միջև: Բակունցին հաջողվել է ստեղծել Աբովյանի կերպարը՝ որպես մարտնչող նահատակ, հերոս, որն իր գիտելիքների պաշարով և աշխարհընկալմամբ շատ բարձր էր իր միջավայրից:

Խաչատուր Աբովյանի կերպարին անդրադարձել է նաև Մեծն Չարենցն իր «Դեպի լյառ Մասիս» պոեմով: Չարենցն իր տաղանդի հզոր ուժով կարողացել է ցույց տալ անմահ լուսավորչի հայրենասիրական վսեմ ձգտումները: Խ. Աբովյանի կենսագրության մեջ Չարենցը նույնություն է տեսնում հայ ժողովրդի պատմական ճակատագրի հետ: Ինչպես չարենցագետ Գարեգին Հովսեփյանն է գրում. «Չարենցի պատմագրական կոնցեպցիան պատահական դատողությունների ու տպավորությունների հիման վրա չի հյուսվում, այլ հետևանք է այն բանի, որ այդ տարիներին, երբ հայրենասիրություն բառն անգամ դժվար էր գործածել, Չարենցը բազմակողմանիորեն էր ընկալում Աբովյանի գրական վաստակը և՛ իբրև անցյալի, և՛ իբրև ապագայի հանճարեղ խորհուրդ: Դավատանքի արժանի է այն, որ թե՛ Չարենցը, թե՛ Բակունցը միաժամանակ բացահայտեցին Աբովյանի պատմական սիրագործության մեծագույն իմաստը»¹:

Ինչպես տեսնում ենք՝ արձակագիր Սուրեն Այվազյանն իրենից առաջ ունեցել է մեծ լուսավորչի կերպարի ստեղծման նշանակալից փորձեր:

Հայ գրողներն Աբովյանի կերպարն ստեղծելիս առաջին հերթին նկատի են ունեցել հենց Աբովյանի բնութագրումը և՛ իր վեպի, և՛ իր անձի նկատմամբ: «Վերք Հայաստանի» վեպը գրողն ինքն է բնութագրում՝ «Ողբ հայրենասիրի»:

Ս. Այվազյանի «Առավոտ լուսո» պատմավեպն իր «Ճակատագիրն հայոց» երկի տրամաբանական շարունակությունն է: Պատմական ժամանակաշրջանը 19-րդ դարի առաջին տասնամյակների քաղաքական, սոցիալական, ազգային-ազատագրական պայքարի բարդ հարաբերություններն են, որոնք ծավալվում են անդրկովկասյան ժողովուրդների միջև: Այվազյանն, ինչպես առաջին վեպում, այստեղ ևս արծարծում է հայ ժողովրդի ինքնության ձեռքբերման հիմնախնդիրը՝ վերջինիս լուծումը կրկին կապելով Ռուսաստանի հետ, այս անգամ իր գաղափարական ուղղվածությունն արտահայտելով Իսրայել Օրու հետքերով քայլող Խ. Աբովյանի կերպարով:

Ուսումնասիրելով «Առավոտ լուսո» պատմավեպը՝ եկել ենք այն եզրակացության, որ անվանի արձակագիրը գլխավոր կերպարի տեղումնը հետևում է սյուժեի սկզբից մինչև վերջ՝ ուշադրության կենտրոնում պահելով նրա հայրենասիրությունը:

Սյուժետային զարգացումն ընթանում է Էջմիածնի մայր տաճարի դպիր Աբովյան Խաչատուրի կյանքի նկարագրությունից մինչև մեծ լուսավորիչ-դեմոկրատ, ազատագրական պայքարի ջատագով հերոսի գործունեության դրվագներն ու նրա խորհրդավոր անհետացումը: Ինչպես գրականագետ Սևակ Արզումանյանն է նկատել, «Առավոտ լուսո» ստեղծագործությունը չի դառնում լոկ կենսապատում, այլ այն պատմականագրական վեպի շրջանակներից շատ լայն մի երկ է»²:

Վեպում նկարագրում է, թե ինչպես Աբովենց մեծատոհմ տնից ծնված Խաչատուրին, որն Ավետիքի և Թագուհու որդին էր, արդեն կարգել էին Էջմիածնի դպիր: Բայց նա հոգևորականի աստիճաններով բարձրանալու ցանկություն չուներ, որովհետև ժամանակը պահանջում էր նրանից լինել «ռազմի մարտիկ» և ոչ հավատի, որովհետև նա ծնված չէր վանական լինելու համար, այլ «տեսանելի ու շոշափելի գործերի համար»: Էջմիածնի վանքում արդեն նկատել էին Աբովյանի այս վարքագիծը և իրենց դժգոհություններն էին հայտնել Եզնիկ Եպիսկոպոսին: Նա փորձում էր աստվածավախությամբ ետ պահել Աբովյանին այդ մտորումներից, որոնք գնալով առարկայանում էին: Սակայն հայ ժողովրդի համար

¹Գ. Հովսեփյան, Չարենցի պոեզիան, «Հայաստան» հրատ., Եր., 1969, էջ 296:

²Ս. Արզումանյան, Սովետահայ վեպ, «Սովետական գրող» հրատ., Եր., 1986, էջ 211:

ճակատագրական այդ պահին Աբովյանը գերադասելի էր համարում զենքը և ոչ թե սքեմը՝ ավելացնելով, որ «երբ քեզ պիտի սպանեն, դու չպետք է չոքես ու աղոթք անես, այլ զենք բարձրացնելով դիմադիր լինես: Դե՛, որովհետև իմ հոգևոր կոչումն դա թույլ չի տալիս, ի՞նչ արած, կաղոթեմ և իմ բոլոր չաղոթած օրերիս համար ևս, միայն թե ռուսները նորից ետ չդառնան»¹:

Աբովյանի այս խոսքերից ակնհայտ են դառնում մի քանի կարևորագույն երևույթներ: Նախ, որ Աբովյանի աշխարհիկ հասունացումը կատարվում է քայլ առ քայլ և պատմավեպի սկզբում, իհարկե, հաղթանակողը հոգևորականի իր կոչումը պետք է լիներ, որովհետև «այն աստվածը, որ իրենք են ստեղծել, թույլ չի տալիս խաչի հետ զենք կրել»: Եվ նա, չդառնալով Երևանի բերդի գրավման անմիջական մասնակիցը, որպես ականատես կանգնել էր «*Ձանգվի աջ եզրին, մի դերբուկ տեղ, ուր քարն ու մամուռը խառնվել էին իրար: Կանգնել էր դերբուկի ամենաբարձր տեղը, լայն թեզանիքներով ձեռքերը ծալած կրծքին, մազերը քամուն տված և նայում էր, թե ինչպես է տնքում հայոց աշխարհի սիրտը բազմադարյան վերքի ցավից*»²: Գրականագետ Հ. Գրիգորյանը, միանգամայն ճիշտ գնահատելով Այվազյանի կողմից ներկայացված այս գրական հնարանքը, գրում է. «Ակսել Բակունցի նման Ս. Այվազյանն իր առջև նպատակ է դրել ցույց տալ հասարակական այն կոնկրետ միջավայրը, ուր ձևավորվում են Աբովյանի՝ մարդու և գործչի գծերը: Այվազյանը, սակայն, այդ ամենի համար գտնում է նոր գծեր, օգտագործում է նոր հնարանքներ, ստեղծում նոր կերպարներ, նրանց մեջ դնելով, խտացնելով այն ամենը, ինչը բնորոշ ու էական է տվյալ ժամանակաշրջանի ու միջավայրի համար: Ընթերցողը, այդպիսով, շոշոփելիության չափ ականատես է դառնում գլխավոր հերոսի՝ Խաչատուր Աբովյանի հոգևոր զարգացմանը, նրա հասունացմանը»³:

Վեպում ակնհայտորեն նկատում ենք Խ. Աբովյանի ռուսական կողմնորոշումը: Բազմիցս խոսելով հայրենիքի փրկության մասին՝ այն կապում է Ռուսաստանի հետ: Եվ բնական է, որ այդքան ոգևորված էր ռուսական զորքերի հաջողությամբ: Դեռևս այն ժամանակ, երբ ռուսական մահաբեր սվինների լույսով կենսանում էր հեռու Սարդարապատը, դպիրը տեսնում էր Երևանի բերդը՝ խաղաղության կարոտ, խավարի մեջ իր լուսաբացը փնտրող, հիշում՝ նախնիների պատգամն՝ ավելացնելով իրենը. «*Ռուսաստանի հետ մեր բախտը կապելով երազում ենք ունենալ մեր պետությունը, որովհետև հայր եթե պետություն չունի՝ իր երկրի ներսում կրկնակի ստրուկ է, իր երկրից դուրս՝ բազմապատիկ ստրուկ*»⁴: Ավելորդ չենք համարում բերել գրականագետ Ս. Արզումանյանի դիտարկումը. «Սուրեն Այվազյանը հետևողականորեն ընդգծել է ժողովրդի ճակատագրի նկատմամբ անհանգիստ և նվիրյալ մի բնավորություն, որը տառապագին որոնումներից հետո փրկության ճանապարհը կապում է Ռուսաստանի հետ»⁵: Այդ սքեմավոր պատանու արտաքինի մեջ թաքնված էր մի խորունկ անհանգստություն, որը ծնվել էր հայրենիքի նկատմամբ ունեցած սիրուց: Դա մտքի երկփեղկվածության արդյունք էր նաև: Այս հայացքը մի կողմից աշխարհիկ կյանքից պարսպապատերով կտրված վանքում լինելու արտահայտություն էր, մյուս կողմից՝ աշխարհիկ կյանքից եկող հոգսերի արձագանք: Պատահական չէ, որ վեպի հերոսներից մեկը՝ Գրիբոյեդովը, նկատում է. «*Այս պատանին ծնվել է հայոց դարավոր տառապանքից*»⁶: Մինևույն ժամանակ նկատենք, որ Աբովյանի համար ընկալելի էր «երկու Ռուսաստան» հասկացությունը: Նա ընթրստանում էր ցարիզմի դեմ, բայց ամբողջ ոգով սիրում էր այն ռուս ժողովրդին, որը կռիվովներ ու լոմոնոսովներ է ծնել:

Աբովյանի համար փրկություն էր Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը: «Բիբլիական հրաշքի» հետքերով նա հասավ Հայաստան: Իրեն ուղեկից ունենալով Աբովյանին՝ հաղթահարեց Մասիսի գագաթը և Աբովյանի համար դարձավ արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու միակ հնարավորությունը: Պարրոտի միջամտությամբ

¹Ս. Այվազյան, Առավոտ լուսո, «Սովետական գրող» հրատ., Եր., 1976, էջ 5:

²Նույն տեղում, էջ 38:

³Հ. Գրիգորյան, Սուրեն Այվազյան, «Հայաստան» («Գրական հայրենիք»), Եր., 2005, էջ 70:

⁴Ս. Այվազյան, Առավոտ լուսո, «Սովետական գրող» հրատ., Եր., 1976, էջ 31:

⁵Ս. Արզումանյան, Սովետահայ վեպ, «Սովետական գրող» հրատ., Եր., 1986, էջ 213:

⁶Ս. Այվազյան, Առավոտ լուսո, «Սովետական գրող» հրատ., Եր., 1976, էջ 23:

Աբովյանն, աչքի առաջ ունենալով իր առաքելությունը, մեկնում է Դորպատ՝ ուսումնառության: Ս. Այվազյանն առանձնակի խնամքով է նկարագրել գլխավոր հերոսի դորպատյան տարիները: Ամբողջ օրը Աբովյանն իրեն նվիրում էր նոր գիտելիքներ ձեռքբերելուն, մեծ հափշտակությամբ ընթերցում էր արտասահմանյան գրականություն՝ միաժամանակ սովորելով այդ լեզուները: Աբովյանի առաջ փռված էր ամբողջ եվրոպական առաջավոր մշակույթն ի դեմս արվեստաբան ու նկարիչ Աուգուստ Մարիսա Հագենի, պրոֆեսորներ Պարրոտի և Դավիդ Ֆրիդլենդերի, բժիշկ և բանահավաք Ֆելդմանի և այլոց: Գրական հավաքների ժամանակ Աբովյանն իր կեցվածքով ու իմացությամբ կարողանում էր արժանավույն ներկայացնել հայ ժողովրդին, նրա պատմությունը:

Ս. Այվազյանը համոզիչ պատկերներով ցույց է տալիս, թե ինչպես Խաչատուր Աբովյանը՝ զինված առաջավոր ու հիմնավոր գիտելիքներով, հայրենիք է վերադառնում նվիրվելու իր ժողովրդին լուսավորելու գործին, կյանքը կոծկելով առաջ շարժելու, կոնկրետ ուղղված էր խավարամտության և տգիտության դեմ: Ինչպես Աբովյանն՝ ինքն է որակում. «Կոնկլյուսավորության, հառաջադիմության համար և ինքնապաշտպանության»¹:

Աբովյանի ազատասիրությունը սերտորեն կապված էր հայրենասիրության հետ: Եղբորը՝ Վիրապին, Աբովյանն ասում է. «Հայրենիքն այդպիսի բան է, Վիրապ, ուր էլ գնում ես, նրա ճանապարհներով ես գնում, ինչ էլ տեսնում ես, նրա աչքերով ես տեսնում, ինչի մասին էլ խոսում ես՝ նրա լեզվով ես խոսում, նրա մասին ես խոսում: Հիմա մենք մի կտոր փրկված հայրենիք ունենք և մարդ ուզում է քայլել նրա բոլոր ճանապարհներով, սարերով, ձորերով և նրա ազատությունն զգալ անգամ քարերի, հողի, բույսերի մեջ: Զգալ և մի անգամ շնչել ազատ հայրենիք ունեցող մարդու խոր շնչով»²: Բայց Աբովյանին հիասթափություն էր սպասվում Հայաստանում, որովհետև նրա նախանշած ծրագրերը բավականին ուժեղ հարված կարող էին լինել ժամանակի անդրկովկասյան հասարակարգի համար: Եվ այդ ամենը նրան երբեմն հասցնում էր հուսահատության և նա ցավով խոստովանում էր. «Իմ ուժերը սպառվում են, տեսնում եմ հայրենիքի տարաբախտ վիճակը և հնար ու միջոց չունեմ որևէ բանով նրան օգնելու, որ իմ կյանքի առաջին և վերջին նպատակն է»³:

Կերպարի ամբողջացման համար, Այվազյանն այս ամենին զուգահեռ ներկայացնում է նաև Աբովյանի անձնական կյանքը: Աբովյանը սիրում էր... Բայց սերը նրա համար անհասանելի եղավ, որովհետև Դորպատում սովորելու տարիներին նա միայն իր առաքելության մասին էր մտածում և չէր կարող պատասխանել Ադելաիդայի սիրուն: Դեռևս վանական լինելու տարիներին նա իր սրտում ուներ Նազլուին:

Այս դեպքում ևս Աբովյանն ակնհայտորեն նկատում էր երկու աշխարհների բախումը: Ահա դիպուկ օրինակը. աստղադիտարանի բարձունքից Խաչատուրը նայում էր իր երևակայության թևերով կշռաքարի տարբեր կողմերում դրված երկու կանանց՝ Ադելաիդային և Նազլուին, և համեմատության զուգահեռներ տանում նրանց միջև: Մեկն ազատ ապրելակերպի, մտածողության տեր անձնավորություն էր, որն իր «հիմնավոր դերասանական խաղով» կարող էր հուզել բոլորին, իսկ մյուսը՝ չարսավի մեջ պարուրված, ասիական բարքերի կրողն էր: Այլ էին նաև պատկերացումները սիրո, ընտանիքի, ընտանեկան հարաբերությունների մասին: Եվրոպական նիստուկացն Ադելաիդային թույլ էր տալիս հեշտությամբ սիրային նոր արկածներ որոնելու, անգամ այն ժամանակ, երբ ինքը նշանված էր, մինչդեռ Նազլուն ամուսնու կողմից կարող էր թրատվել անձանոթին մի թաս ջուր տալու համար, իսկ հասարակությունը միայն կավելացներ. «Տեղն էր»: Աբովյանի համար այլ աշխարհ էր Էմիլյան: Նա իր համբերատարությամբ և անսահման նվիրվածությամբ մշտապես եղել է Աբովյանի կողքին:

Ամեն ինչի հանգուցալուծումը Ս. Այվազյանը տալիս է Հովհաննես Կարբեցու հետ ունեցած զրույցի ժամանակ: Աբովյանը հրաժարվում է հոգևորականի իր կոչումից, սկսվում են աշխարհիկ կյանքի հոգսառատ օրերը: Այդ ժամանակ Աբովյանն աշխատում էր «Վերք

¹Նույն տեղում, էջ 114:

²Նույն տեղում, էջ 414:

³Նույն տեղում, էջ 529:

Հայաստանի» վեպի վրա և արդեն գրել էր մի քանի հատվածներ: Իսկ դա անհանգստացնում էր ցարական կառավարությանը: Պահնորդական վեցերորդ բաժանմունքում գործ է բացվում Աբովյանի դեմ՝ սբ. Աստվածածին եկեղեցում թագավորի նկատմամբ անվատահույություն հայտնելու պատճառով: Վիպասանը պաշտպանում է Միքայել Նալբանդյանի տեսակետը Աբովյանի խորհրդավոր անհայտացման մասին: Ցարական սատրապները սև ծածկակառքով տանում են Աբովյանին. «Մլացավ կառք-անգորը, փոքրանալով դարձավ ուրուր, փոքրանալով դարձավ ճուռակ, փոքրանալով դարձավ սև մի կետ ու հանգչելով ծնվեց լույս, որ հորիզոնում սև երկիրը բաժանեց սև երկնքից: Փռչու այն գիծը, որ երկարել էր կառքի ետևից, մնացել ճանապարհի վրա՝ ողողվեց ցայգաբացի շողերով, որն և աստիճանաբար դարձավ արներանգ»¹:

Ինչպես տեսնում ենք՝ ի դեմս Աբովյանի՝ Այվազյանը կերտել է հայրենասեր հերոսի կերպար, որն ազգայինը վեր դասելով անձնականից՝ ամեն ինչ անում էր դորպատյան լույսով Հայաստանը ողողելու համար:

Վեպում ներկայացված են նաև հայրենասերների այլ կերպարներ, որոնք նույնպես աչքի են ընկնում համոզականությամբ: Տարագիր լինելով հանդերձ՝ հայրենիքի կյանքով են ապրում Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բաղրամյանը, որոնք մեծ դեր են ունեցել Հայաստան գենք փոխադրելու հարցում:

Պարսկական բանակում է ծառայում հայազգի Հակոբ Հարությունյանը, որը երկար տարիներ հավատարմությամբ կռվել է Աբբաս-Միրզայի համար: Բայց Օշականի ճակատամարտի ժամանակ նրա արձակած ռումբերից ոչ մեկն իր նպատակակետին չէր հասել, որովհետև նրա դեմ թշնամի չկար, պարզապես «իր հայրենակիցների այս արդար կռվում ինքն իր պարտքն է կատարել»²:

Վեպում ըստ արժանավույն է ներկայացված նաև Ներսես Աշտարակեցին: Բացի իր հոգևոր կոչմանը հավատարիմ մնալուց, նա նաև մասնակցում է Հայաստանի ազատագրմանը: Լինելով ռուսական կողմնորոշում ունեցողներից մեկը՝ Ներսես Աշտարակեցին ստեղծում է հայ աշխարհագորային գունդը, միացնում ռուսական զորքերին և նետվում մարտի:

Հայ ժողովրդի ճակատագիրը հուզում էր Ռուսաստանի Մեծ զավակներին՝ Պուշկինին, Պուշկինին, Բեստուժնին և այլոց: Նրանց մեջ տեսնելով իսկական նվիրյալների՝ Աբովյանն ասել է. «Իսկական հայրենասերները նրանք են, ովքեր հարգում են օտարի հայրենասիրությունը»³:

Հայ և ռուս գործիչներից բացի «Առավոտ լուսո» վեպում հանդես են գալիս նաև օտարազգի ներկայացուցիչներ՝ վրացիներ, դանիացիներ, պարսիկներ, էստոնացիներ, գերմանացիներ և այլք, որոնցից յուրաքանչյուրն իր հայրենիքի խտացումն է: Նրանց բոլորին կապում են մարդասիրությունը, նպատակների միասնությունը և որ ամենակարևորն է՝ անսահման հայրենասիրությունը: Այդ կերպարներից ոմանք պատմական դեմքեր են, ոմանք էլ գրողի երևակայության արդյունք: Այս առումով առանձնանում է հատկապես էստոնացի Կրեյցվալդը: Նա ևս Աբովյանի նման հեռու Դորպատում բոլորին պատմում է էստոնացիների մասին: Եվ ահա հավաքույթի ժամանակ նա ներկաների դատին է հանձնում էստոնական էպոսը: Բանահավաք Ֆելդմանը, լսելով նրա խոսքը և հիշելով Աբովյանի ներկայացրած հայկական էպոսը, շատ ընդհանրություններ նկատեց երկու ժողովուրդների միջև: Դա երկու ճնշված ժողովուրդների ազգային ազատասիրությունից ծնված ինքնապաշտպանական գենք էր, որն ապացույցն էր այն բանի, որ «մարդկային իրավունքները ոտնահարված ժողովուրդների մարդասիրությունը այնպիսի մի ուժ է առաջացնում, որ փոքր լինելով կարող են զնալ իրենցից շատ մեծերի դեմ և հաղթել»⁴:

Ս. Այվազյանի «Առավոտ լուսո» պատմավեպը մնայուն արժեք է ոչ միայն իր ստեղծագործության, այլև հայ վիպագրության պատմության մեջ:

¹ Նույն տեղում, էջ 570:

² Նույն տեղում, էջ 21:

³ Նույն տեղում, էջ 37:

⁴ Նույն տեղում, էջ 317:

ՀՏՂ81՝36(811.19)

**ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒՅԹԱՅԻՆ «ՈՐ» ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Վարդուհի Սահակյան
ԱրՊՀ, Բանասիրական ֆակուլտետ,
«Հայոց լեզվի պատմություն և գրաքննադատություն»
մագիստրատուրա 2-րդ կուրս,

Բանալի բառեր՝ բազմագործառույթ, շաղկապական բառ, բարդ նախադասություն, բարդություն, հարաբերական, հարաբերյալ, դերանուն, գերադաս նախադասություն, կախյալ նախադասություն:

Ключевые слова - многофункциональный, относительное слово, сложное предложение, усложнение, относительный, местоимение, превосходящее предложение, зависимое предложение.

Key words: multifunctional, relative word, compound sentence, complexity, relative, pronoun, superior sentence, dependent sentence.

Ամփոփում

Ժամանակակից հայերենի բազմագործառույթ շաղկապական բառերը մեծ դեր են կատարում բարդ նախադասության բաղադրիչների կապակցման, իմաստային փոխհարաբերությունների ձևավորման մեջ:

Իր իմաստային ու կիրառական յուրահատկություններով առանձնանում է որ հարաբերական դերանունը: Որ հարաբերականը կարող է կապակցել շարահյուսական տարբեր գործառույթներով բնորոշվող նախադասություններ: Նույն հարաբերականով կապակցված կախյալ բաղադրիչները իմաստային տարբեր հարաբերություններով կարող են կապվել գլխավոր նախադասության հետ, որը կանխորոշում է ամբողջ բարդության կառուցվածքը: Որ շաղկապական բառով կապակցվում են ենթակա, ստորոգելի, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, ուղիղ խնդիր, հանգման խնդիր կախյալ նախադասությունները:

Вардуи Саакян

Арцахский государственный университет

**МНОГОФУНКЦИОНАЛЬНОЕ ОТНОСИТЕЛЬНОЕ МЕСТОИМЕНИЕ КОТОРЫЙ В
СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

Резюме

В этой статье мы упомянули о многофункциональности союзного слова который в современном армянском языке. Относительное местоимение который может связать определенные предложение разными синтаксическими функциями. Союзным словом который соединяются подлежащее, сказуемое, определение, притяжательные местоимения, дополнение, обстоятельство, придаточные предложения.

Varduhi Sahakyan

Artsakh State University

MULTIFUNCTIONAL RELATIVE PRONOUN THAT IN MODERN ARMENIAN

Summary

In this article we mentioned the multifunctionality of the conjunction word that in modern Armenian language. The relative pronoun that can connect certain sentences with different syntactic functions. The conjunction word that is connected the Subject, the Predicate, the Attribute, the Object, the Adverbial Modifier, Possessive Pronouns, Subordinate Clauses.

1. Ենթակա կախյալ նախադասություններ: Իր կազմում ենթակայական կախյալ բաղադրիչ ունեցող նախադասության գլխավոր բաղադրիչում առկա է ձևական ենթակա՝ հարաբերյալ: Կախյալ նախադասությունը նյութականացնում է հարաբերյալի իմաստը՝ որոշակի բովանդակություն հաղորդելով նրան¹: Հարաբերյալի առկայությունը այստեղ ձևական նշանակություն ունի և ծառայում է գլխավոր ու երկրորդական նախադասությունների կապի ուժեղացմանը: Իբրև հարաբերյալ կիրառվում են անձնական երրորդ դեմքի և ցուցական երրորդ շարքի առարկայանիշ դերանունները (*նա, նրանք, ինքք, իրենք, այն*), որոնք որպես ենթակա օրինաչափորեն կիրառվում են ուղղական հոլովով: Օրինակ՝ *Խալդն ասում է, որ աշխարհում կռիվ կլինի և կենդանի կմնան բոլոր նրանք, որոնք ամուր պարիսպներ ունեցող քաղաքներում կլինեն* (9, 214): *Նրանք, որ պսակներ են տանում, քայլում են զգույշ, հանդիսավոր* (11, 123): *Նա, որ անհայտ է կորել աշխարհում, Իր կորուստների Սկիզբն է եղել* (6, 237): *Որոնք չեն ծնվել իրենք իրենց համար, ժողովրդի համար են ծնվել* (2, 102):

2. Ստորոգելի կախյալ նախադասություններ, որոնք ունեն հետևյալ կառուցվածքային հատկանիշները.

ա. Գերադաս բաղադրիչը չի ունենում պարզ ստորոգյալ, քանի որ վերջինս չի կարող փոխարինվել կախյալ նախադասությամբ: Օրինակ՝ *Երևի հայրենիքը հենց այն է, որ դու տեսնում ես, ուրիշը չի տեսնում* (11, 240): Գերադաս նախադասության մեջ առկա է լինում բաղադրյալ (անվանաբայական) ստորոգյալ, որի ստորոգելին հանդես է գալիս որպես հարաբերյալ: Սրա իմաստն էլ նյութա-կանացնում է կախյալ նախադասությունը: Օրինակ՝ *Մի խոսքով նա է, որ ծնվել է մարդուց, բայց և որին մարդը ձգտում է* (2, 146):

բ. Գլխավոր նախադասության մեջ նրանց պարտադիր կերպով համապատասխանում է դերանմամբ արտահայտված հարաբերյալ, որը ձևականորեն կատարում է գլխավոր նախադասության բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական վերադրի պաշտոնը, սակայն նյութական բովանդակություն է ստանում երկրորդական նախադասությունից: Իբրև հարաբերյալ կիրառվում են անձնական երրորդ դեմքի և ցուցական երրորդ շարքի դերանունները: Օրինակ՝ *Ես հանկարծ հայտնագործում եմ, որ հայրենիքն այն է, որ ուրիշին պատմել չի լինի* (11, 113): *Մարդը նա էր, որ սև ածուխով գրել էր եկեղեցու դռներին* (11, 175): *Նա է սուրբը, որ մի ժամանակ՝ քսանհինգ տարի առաջ, խաչի տեղ գնել է վերցրել, նշխարի փոխարեն սուր է բռնել* (1, 87): *Եվ նա է, որ իր սրտով ամենի // կորած աշխարհի ճիչերն է լսում* (6, 34):

3. Որոշիչ կախյալ նախադասություններ:

Որ հարաբերականը որոշիչ երկրորդական նախադասությունների կապակցության մեջ ամենագործածականն է: Թվով այն համաձայնում է գլխավոր նախադասության այն անդամին, որի լրացումն է հանդիսանում երկրորդական նախադասությունը (հարաբերական բառը հանդես է գալիս հենց այդ որոշյալի փոխարեն և նրանից է ստանում իր նյութական բովանդակությունը): Որ հարաբերականը հարաբերում է ամբողջ նախադասությանը կամ նրա մի մասին, նախադասության որևէ գոյական անդամին, որևէ գոյական անդամի ձևական որոշյին, որ, կիրառվելով իբրև որոշիչ, մատնացույց է անում որոշիչ երկրորդական նախադասությունը²: Որ հարաբերականով որոշիչ երկրորդական նախադասությունը կարող է վերաբերել նախադասության որևէ գոյական անդամի (ենթակա, խնդիրներ, գոյական պարագաներ, ստորոգելիական վերադիրներ) և վեր հանել նրա հատկանիշները տարբեր տեսանկյուններից՝ որակական, քանակական, ծավալային և այլն. օրինակ՝ *Նրա դեմքին փայլեց գոհունակության մի ժպիտ, որը սակայն զարմանք պատճառեց վիրաբույժին* (3, 55): *Ինձ հեռվից ցույց տվեցին Արմենակ անունով մի գյուղացու, որ իրենց ասելով ամենահայտնի ծխախոտ վաճառողն էր* (3, 39): Այս կարգի երկրորդական նախադասությունները գերազանցապես անվանական ստորոգյալով նախադասություններ են, որի անվանական

¹ Պապոյան Հ., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003, էջ 287:

² Առաքելյան Վ., Հայերենի շարահյուսություն, Կ. Բ, Եր., 1964, էջ 122:

մասը մեծ մասամբ ածական կամ հատկանիշ արտահայտող այլ անվանական բառ է, որով հենց բնութագրվում է գլխավոր նախադասության որոշյալը: Այսպիսի երկրորդական նախադասությունները հեշտությամբ դառնում են դերբայական դարձված որոշիչներ և տեղադրվում գլխավոր նախադասության մեջ գտնվող որոշյալից առաջ. օրինակ՝ *Թույլ տուր համբուրեմ ձեռքը այն մարդու, որ հայոց այբուբենի մշակն է եղել երեսուն տարի* (4, 14): *Թույլ տուր համբուրեմ երեսուն տարի հայոց այբուբենի մշակը եղած մարդու ձեռքը*:

Որոշիչ երկրորդական նախադասությունը որ հարաբերականով արտահայտում է գլխավոր նախադասության որևէ գոյականական անդամի այս կամ այն գործողությունն ու դրությունը, որոնցով էլ բնութագրվում է առարկան, այսինքն՝ առարկան բնորոշվում է իր որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու ունակությամբ, օրինակ՝ *Ափին, կամուրջի մոտ, ընկուզենիներ կան, որ լցվել են խավարով* (1, 11): *Եվս մի շաբաթ, և մենք կունենանք մի այնպիսի զենք, որը մի օրում կփոխի պատերազմի ընթացքը* (8, 666): Որոշիչ երկրորդական նախադասությունները գլխավորին միանում են որ հարաբերականով այն դեպքերում, երբ երկրորդական նախադասությունը պարունակում է առարկայի, երևույթի անմիջական բնութագրումը, ցույց տալիս նրա որակը որևէ էական հատկանիշի նկարագրման միջոցով, հատկանիշ, որով տվյալ առարկան (երևույթը) տարբերվում է իր տեսակի մյուս առարկաներից (երևույթներից): Երկրորդական նախադասությունը դրվում է որոշվող բառից՝ որոշյալից հետո, այդ պատճառով էլ լինում է վերջադաս կամ միջադաս: Օրինակ՝ *Այդ որ անանուն զինվորն էր, որ բքի ու հոգնության մեջ կարողացավ մտածել ստվարաթղթե այբուբենի այդ հրաշքը* (11, 92): *Եվ այդ բոլորը հավատն էր, որ հերքեց տրամաբանության ցուրտ հանրահաշիվը* (11, 165): *Ապրեց ոսկեղեն այն ծաղկի կյանքով, Որ հյուր է քաղում ապառաժ քարից* (5, 51): *Մի ժողովուրդ, որ չի ուզում մեռնել, չի մեռնի երբեք* (7, 99):

Որոշիչ երկրորդական նախադասությունը հաճախ ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ կատարվում է գլխավոր նախադասության մեջ գտնվող որևէ գոյականի նկատմամբ: Այդ գոյականը երկրորդական նախադասության մեջ կատարում է զանազան պաշտոններ, որով և բնութագրվում է նա: Օրինակ՝ *Իսկապես նա էր այն զինված մորուքավոր մարտիկը, որ տեսել էր ինձ վանքի փոքր դռան առջև քունգով փորելիս* (4, 149): *Երազանքը մարդուն տրված միակ երջանկությունն է, որ կախում չունի նույնիսկ աստվածներից* (9, 18): *Նույն ճանապարհն է, որ քառասունմեկ թվականին ավերել է գունդը* (8, 255): Այս դեպքում որպես հարաբերյալ կարող է հանդես գալ նաև *մի* անորոշ դերանունը, որն ունի ընդգծող նշանակություն և կենտրոնացնում է խոսողի ուշադրությունը երկրորդական նախադասության բովանդակության վրա: Օրինակ՝ *Դա մի հայացք էր, որ արտահայտում էր և՛ սեր, և՛ հարգանք* (9, 140): Երբ անհրաժեշտ է լինում առանձնապես շեշտել որոշվող առարկայի տեսակը, որակը, որպես հարաբերյալ գործառնում է *այնպիսի* ցուցական դերանունը: Օրինակ՝ *Կարո՞ղ եք ցույց տալ ինձ մի այնպիսի անգետի, որ իրեն ամենագետ չհամարեր* (7, 103): *Այնինչ այն պահին նա սրտի վրա զգացել էր մի այնպիսի ծանրություն, որ երբեք չէր զգացել* (9, 161): *Մի և այնպիսի* հարաբերյալների առկայության դեպքում որոշյալը միշտ դրվում է անորոշ առումով (տե՛ս վերևի օրինակները):

Երբեմն գլխավոր նախադասության կառուցվածքը թույլ չի տալիս, որ որոշիչ երկրորդական նախադասությունը դրվի որոշյալից անմիջապես հետո: Այս դեպքում որոշյալը գլխավոր նախադասության վերջում կրկնվում է, որին և անմիջաբար հաջորդում է երկրորդական նախադասությունը: Կրկնվող որոշյալը իր լրացումների հետ միասին բաժանվում, առանձնացվում է գլխավոր նախադասության մյուս անդամներից ստորակետով: Օրինակ՝ *...Եթե կա մի ժողովուրդ, ով ամենից ավելի մեծ ծառայություն է մատուցել Թուրքիային շնորհիվ իր պետական գործիչների ու տաղանդավոր պաշտոնյաների, շնորհիվ նրանց մտավոր կարողությունների, այն կարողությունների, որ ի հայտ են եկել բոլոր ասպարեզներում, հայն է...* (6, 101): Որոշիչ երկրորդական նախադասությանը մոտ դրվելու համար որոշյալը երբեմն փոխում է իր սովորական շարադասությունը: Հայտնի է, որ ըստ ժամանակակից հայերենի շարադասության կանոնների՝ հատկացուցիչը միշտ դրվում է հատկացյալից առաջ: Սակայն որոշիչ երկրորդական նախադասություն ունենալու դեպքում այն հաճախ փոխում է իր շարադասությունը և դրվում հատկացյալից հետո՝ երկրորդական

նախադասությանը մոտ լինելու համար: Օրինակ՝ *Անձը, պարոն նախագահ, անձը կոնկրետ մարդու, որն ունի հայացք, աչքերի գույն և անկրկնելի ճակատագիր*, պետք է եսամոլ չլինի (7,120): Ինչպես ասվեց, *ըն* հարաբերականը թվով համաձայնում է որոշյալի հետ, իսկ հոլով ստանում է ըստ երկրորդական նախադասության մեջ կատարած պաշտոնի (տե՛ս վերևի օրինակները):

4. Հատկացուցիչ կախյալ նախադասություններ: Սրանք ունեն սահմանափակ կիրառություն: Գերադաս նախադասության մեջ գործածվում է հարաբերյալ, որը ձևականորեն կատարում է հատկացուցչի դեր, և որի բովանդակությունն ըստ էության արտահայտվում է ստորադաս նախադասությամբ: Հարաբերյալի դերով սովորաբար հանդես է գալիս *նա* դերանվան սեռականը: Օրինակ՝ *Միաժամանակ զավակն եմ նրա, Որ դեր չի ծնվել աշխարհի վրա* (6, 101): *Հատուկ նշվեց նրա անունը, որ ճամբարում աչքի է ընկել կարգապահությամբ* (11, 104):

5. Բացահայտիչ կախյալ նախադասություններ: Սրանք իրենց բնույթով այնքան մոտ են որոշիչ երկրորդական նախադասություններին, որ հաճախ շատ դժվար է դրանք իրարից սահմանազատելը:

Որոշիչ և բացահայտիչ երկրորդական նախադասությունների տարբերությունը հետևյալն է: «Որոշիչ երկրորդական նախադասությունները նկարագրում են առարկայի կամ երևույթի որևէ հատկանիշը, նրա հետ տարածական կամ ժամանակային կապով կապված որևէ երևույթ, որը կարող է հատուկ լինել միայն տվյալ պահին և չհանդիսանալ նրա էական, մշտական հատկանիշը կամ խոստով կողմից չհամարվել այդպիսին: Իսկ բացահայտիչ երկրորդական նախադասությունները ցույց են տալիս առարկայի այնպիսի հատկանիշ, որը մշտական, էական է տվյալ առարկայի համար, կամ խոստով կողմից դիտվում է որպես այդպիսին»¹: Ի տարբերություն որոշիչ երկրորդական նախադասությունների, որոնք ունեն կիրառության շատ մեծ ոլորտ, բացահայտիչ երկրորդական նախադասությունները ունեն շատ սահմանափակ կիրառություն: *Որ* հարաբերականով կապակցվող բացահայտիչ երկրորդական նախադասություններն ունեն կառուցվածքային հետևյալ առանձնահատկությունները.

1. Նրանք միշտ դրվում են անմիջապես բացահայտյալից հետո և այդ պատճառով մեծ մասամբ լինում են միջադաս, երբեմն նաև՝ վերջադաս:

2. Նրանց, որպես կանոն, գլխավորի մեջ հարաբերյալ չի համապատասխանում:

3. Բուն բացահայտիչ երկրորդական նախադասությամբ կապակցության կառուցվածքի մեջ որոշիչ դեր են կատարում ստորադաս նախադասության ստորոգյալի կառուցվածքն ու լրացյալի բառաբերականական բնույթը: Բացահայտիչ երկրորդական նախադասության ստորոգյալը կամ լինում է բաղադրյալ՝ արտահայտված առարկա նշանակող բառերով (գոյականով, դերանունով), կամ արտահայտված է լինում սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակներով, իսկ ենթական սովորաբար զեղչված է լինում: *Որ* հարաբերականով կապակցվող բացահայտիչ երկրորդական նախադասությունները գործածվում են հետևյալ դեպքերում:

ա. Երբ գլխավոր նախադասության ենթական արտահայտված է լինում որևէ դերանունով (հիմնականում անորոշ և ցուցական) կամ թվականով: Երկրորդական նախադասությունը, որը դրվում է այդ դերանունից անմիջապես հետո, բացահայտում է այն՝ նրա որևէ էական հատկանիշը նկարագրելու միջոցով: Օրինակ՝ *Իսկ մեր ընկերներից մեկը, որ վանեցու թոռ էր և բանաստեղծ, իսկույն փիլիսոփայեց* (11, 72): *Իսկ երրորդը, որ ծխում էր, հենված մնաց գոմի պատին* (4, 150): *Գերիներից մեկը, որ շատ ջանել էր, գրեթե երեխա, վիրավորվել էր ոտքից* (8, 332): *Մեկը, որ ցածրահասակ էր, շատ ծանոթ թվաց իրեն* (8, 338): *Մեկ ուրիշը, որ երաժիշտ էր, ինքնասպան եղավ* (8, 504):

բ. Երբ գլխավոր նախադասության ենթական արտահայտված է լինում որևէ

¹ Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 645:

գոյականով (հատկապես հատուկ), երկրորդական նախադասությամբ բացահայտվում է նրա հիմնական հատկանիշը: Օրինակ՝ *-Նստեք ձեր տեղը,- գոռաց Կիրո Օսմանը, որ հին հայրուկ էր* (4, 143): *Բջանք Մեսրոպ անունով մի գյուղացու տուն, որ Մուլուխի հայտնի տներին էր* (4, 153): *Մարեն, որ իմ տատը չէ, իմ մայրը չէ, Մուշեղի մայրն է* (11, 91): *Ճանապարհը երկար էր, իսկ գնալ հարկավոր էր, մոտեցող հեռվում մեռնում էր Հայաստան աշխարհը, որ արջունից գնացողների հայրենիքն էր* (11, 91): *Քիչ անց մեզ միանում է նաև Մովսեսը, որ կարմիր, ուրախ դեմքով մի երիտասարդ է* (11, 93): *Հայաստա՛ն, քո յուրաքանչյուր զավակի դու հավասար բաժին ես հանում քո ունեցածից, որ նաև արցունքներ են, նաև կարոտ* (11, 114):

6. Ուղիղ խնդիր կախյալ նախադասությունները: Երբ գլխավոր նախադասության գործողության օբյեկտը, որը նկարագրվում է երկրորդական նախադասության մեջ, անձ է, որպես կապակցության միջոց գործածվում է *որ* հարաբերականը, որը երկրորդական նախադասությանը տալիս է ընդհանուր-անորոշ նշանակություն: Այս դեպքում գլխավոր նախադասության մեջ առկա է լինում հարաբերյալ: Որպես այդպիսին հանդես են գալիս *նրան, նրանց* դերանունները, օրինակ՝ *Քիչ հետո ես կտեսնեմ նաև Հովհաննես Աբելյանին, նրան, որ երեկ գիշեր ասում էր՝ «Չեմ կարող»* (11, 135): *Այստեղ, այս կամարի տակ ես ուզում եմ պատկերացնել բոլոր նրանց, որ հավատացին* (11, 165):

7. Հանգման խնդիր կախյալ նախադասությունները: Այս դեպքում ևս գլխավոր նախադասության գործողության հանգման առարկան անձ է: Որ հարաբերականին գլխավոր նախադասության մեջ անպայման համապատասխանում է *նրա (նրանց)* հարաբերյալը, ինչպես՝ *Երանի նրան, որ շուտ է ուղղում իր սխալ ճամփան* (4, 58): *Երանի նրան, որ սրա վերջը կտեսնի* (8, 95):

Այսպիսով՝ բազմագործառույթ հարաբերական բառերը հարստանում են իմաստային բազմապիսի նրբերանգներով՝ արտահայտելով շարահյուսական տարբեր հարաբերություններ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ս. Գ., *Հայոց լեզու. շարահյուսություն*, «Լույս» հրատ., Ե., 2004, 287 էջ:
2. Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ա., Բաղիկյան Խ. Գ., *Ժամանակակից հայոց լեզու, հ. 3*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1976, 360 էջ:
3. Առաքելյան Վ. Դ., *Հայերենի շարահյուսություն, հ. Բ*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1964, 466 էջ:
4. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., *Հայոց լեզու, (շարահյուսություն)*, «Զանգակ-97» հրատ., Ե., 2009, 348 էջ:
5. Պապոյան Ա. Ի., Բաղիկյան Խ. Գ., *Ժամանակակից հայոց լեզու, (շարահյուսություն)*, ԵՊՀ հրատ., Ե., 2003, 461 էջ:
6. Պետրոսյան Հ.Զ., *Հայերենագիտական բառարան*, «Հայաստան» հրատ., Ե., 1987, 686 էջ:

ՀՏԴ82.09:81՝36

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՉԻԿ ԴԱՇՏՈՆՑԻ «ՌԱՆՉՊԱՐՆԵՐԻ ԿԱՆՉԸ» ԵՐԿՈՒՄ

Լուսինե Գասպարյան
Արցախի պետական համալսարան,
Հայոց լեզու և հայ գրականություն 3-րդ կուրս

Բանալի բառեր՝ Համաձայնություն, գերադաս բառ, բառակապակցություն, ենթակա, ստորոգյալ, բացահայտիչ, բացահայտյալ:

Ключевые слова: Согласие, главное слово, фраза, подлежащее, сказуемое, существительное, определитель, определяющий

Key words: Consent, the main word, the phrase, the subject, the predicate noun, the determinant, the defining

Ամփոփում

Համաձայնությունը այն եղանակն է, որի դեպքում նախադասության (բառակապակցության) **գերադաս** բառը (անդամը) պահանջում է, որ **ստորադաս** բառը (անդամը) իրեն համապատասխանի երկուսի համար ընդհանուր քերականական կարգերով՝ դեմքով, թվով, հոլովով: Համաձայնությունը հայերենում սահմանապակ կիրառություն ունի: Ի տարբերություն գրաբարի, ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի և ուրիշ լեզուների՝ ժամանակակից հայերենի համաձայնության շրջանակները բավականին նեղ են: Այստեղ համաձայնում են միայն ենթական ու ստորոգյալը և բացահայտիչն ու բացահայտյալը:

Лусине Гаспарян
Арцахский государственный университет,
Армянский язык и армянская литература 3-й курс

СОГЛАСОВАНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ ХАЧИКА ДАШТОНЦА “РАНЧПАРНЕРИ КАНЧЫ”

Резюме

Согласие - это метод, в котором слово (словосочетание) предложения (члена) требует, чтобы нижнее слово (член) соответствовало двум из общих грамматических форм - лицу, числу, падежу. Соглашение имеет ограниченное применение в армянском языке. В отличии от старо-армянского, русского, английского, французского и других языков сфера современного армянского соглашения довольно узкая: здесь согласуются подлежащее и сказуемое, определитель и определяющий.

Lusine Gasparyan
Artsakh State University
Armenian Language and Armenian Literature 3rd year

COORDINATION IN THE WORK OF KHACHIK DASHTONT'S "RANCHPARNERI KANCHY"

Summary

Consent is a method in which the word (phrase) of a sentence (member) requires that the lower word (member) correspond to two of the common grammatical forms - person, number, case. The agreement has a limited application in the Armenian language. Unlike the Old Armenian, Russian, English, French and other languages, the sphere of the modern Armenian agreement is rather narrow: here the subject and the predicate, determinant and defining are agreed.

Համաձայնությունը այն եղանակն է, որի դեպքում նախադասության (բառակապակցության) **գերադաս** բառը (անդամը) պահանջում է, որ **ստորադաս** բառը (անդամը) իրեն համապատասխանի երկուսի համար ընդհանուր քերականական կարգերով՝ դեմքով, թվով, հոլովով: Համաձայնությունը հայերենում սահմանապակ կիրառություն ունի: Ի տարբերություն գրաբարի, ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի և ուրիշ լեզուների՝ ժամանակակից հայերենի համաձայնության շրջանակները բավականին նեղ են:

Այստեղ համաձայնում են միայն ենթական ու ստորոգյալը և բացահայտիչն ու բացահայտյալը:

Արդի հայերենում համաձայնությունը ամբողջությամբ դրսևորվում է բացահայտչի ու բացահայտյալի միջև. Այստեղ բացի թվային ու դիմային համաձայնությունից, առկա է նաև հոլովական համաձայնություն:

ԳԼՈՒԽ 1. Ենթակայի և ստորոգյալի համաձայնություն

Ստորոգյալը քերականական որոշակի փոփոխություն է կրում, երբ փոխվում է ենթակայի դեմքը կամ թիվը: Օրինակ՝

Վարժապետ Սենեքերիմը պատմում էր, որ երբ Մշո դաշտի հեթանոս տաճարները կործանվեցին, նրանց քրմերը դարձան ու թռան դեպի ապառաժոտ բլուրները:(1,29)

Ենթակայի և ստորոգյալի դիմային համաձայնությունը բավականին կայուն է և օրինաչափական, հետևաբար և շեղումներ գրեթե չեն նկատվում: **Ավելի շատ շեղումներ նկատվում են թվային համաձայնության մեջ:** Երբեմն բազմակի ենթակաները արտահայտվում են դերանուններով և գոյականներով կամ այլ բառերով: Այդ դեպքում ստորոգյալը համաձայնում է դերանվան հետ: Քանի որ գոյականները միշտ երրորդ դեմքով են կիրառվում, և նրանց հետ տարբեր դեմքերի անձնական դերանունների գործածությունը դիմային տարբերություն է առաջ բերում բազմակի ենթակաների մեջ, ուստի համաձայնության ժամանակ նախընտրվում է դերանվան առաջին դեմքը, որից հետո երկրորդը:

Բազմակի ենթակաների դեպքում ստորոգյալը ստանում է ամենափոքր դեմքը՝ 1-ին, իսկ 2-ի դեպքում՝ 1-ին դեմքը, 2-րդ և 3-րդի դեպքում՝ 2-րդ դեմքը և այլն: Մի ծանոթ նախապայան կար այդտեղ, որի հորթերից մեկը ես ու Չոլուն մի առիթով մորթել էինք ֆիդայիների համար:(236)

Ենթակայի և ստորոգյալի դիմային համաձայնության մեջ նկատվում է շեղում այն ժամանակ, երբ ստորոգելիական վերադիրը արտահայտված է առաջին կամ երկրորդ դեմքի անձնական դերանվամբ, իսկ ենթական՝ գոյականով կամ գոյականաբար կիրառված որևէ խոսքի մասով: Օրինակ՝

Ձորամասի երրորդ գումարտակի հրամանատարը և գլխավոր բժիշկը դու ես: (342):

Ենթակային ստորոգյալի թվային համաձայնության մեջ շեղումները ավելի շատ են նկատվում, քան դիմային համաձայնության մեջ, միաժամանակ գործում է և՛ քերականական, և՛ իմաստային համաձայնություն, որոնք տարբեր երևույթներ են: Քերականական համաձայնության օրինաչափությունը հաճախակի խախտվում է իմաստային համաձայնությամբ, որի հետևանքով էլ լեզվի մեջ միաժամանակ հանդես են գալիս համաձայնության զուգահեռ ձևեր:

Ստորոգյալը եզակի թվով է դրվում, եթե ենթական հոգնակերպ կամ հավաքական գոյական է: Օրինակ՝

Մարդակերի սառնասրտությամբ ամենուրեք ականատես եղաք, թե ինչպես **ժողովուրդը** սովից լռեցայն **մահանում է** Տաթևի վանքի և Գորիսի պատերի տակ:(485)

Եթե ենթական հատերով հաշվվող թանձրացական գայական է և ունի մի քանի անորոշ դերանուն լրացում, ապա ստորոգյալը հակվում է դեպի հոգնակին:

Օրինակ՝ Քարոզչին ձեռքակալելու հաջողությունից քաջալերված, Հյուսնի Էֆենդու ազդանշանով, **մի քանի** տաքարյուն **երիտասարդներ** Փորկանց աղբյուրի վրա հայ օրիորդների կթերը **կոտրեցին**: (417)

Բազմակի ենթակաների հետ սովորաբար դրվում է հոգնակի թվով ստորոգյալ, որովհետև գործողության կատարման դերով հանդես են գալիս մեկից ավելի առարկաներ:

Ստորոգյալը հակվում է դեպի եզակին, երբ բազմակի ենթակաները միավորվում են **ոչ միայն ...այլև, ինչպես...այնպես էլ** և այլ հավելում ցույց տվող միավորիչ շաղկապներով. Օրինակ՝

Ոչ միայն յուզն ու ձավարն էր վերջացել, **այլև** այդ գավառի մեջ անկողին և թաղիք գործածելու սովորություն չկա: (317)

Շեղինակի երկում հանդիպել ենք **ինչպես, այսպես**-ով կապված նախադասություններ, որում ստորոգյալը գործածվել է հոգնակի թվով:

Քարայր զինաթափ արեց Մակարի դաշնակիցներին: **Ինչպես** Մորուք Կարոն, **այնպես էլ** Ֆադեն չէին ուզում զինաթափվել: (331)

Երբ միավորվում են **կամ** տրոհական շաղկապով, ստորոգյալը մեծ մասամբ եզակի է դրվում, քանի որ այդ շաղկապով միավորված ենթակաները իրարից տրոհվում, բաժանվում են, ր նրանցից միայն մեկն է նկատի առնվում, որի հետ էլ հենց տեղի է ունենում ստորոգյալի համաձայնությունը: Բայց մենք այս երկուսն հանդիպել ենք հակառակ երևույթին : Օրինակ՝

Օսմանցին մի օրենք ուներ, եթե մեկը տարի օգտագործում էր մի արտավայր, այդ **արտավայրը կամ կալվածքը** այլևս դառնում էին նրա սեփականությունը:(18)

Եթե բազմակի ենթակաները ունեն **ամեն, ամեն մի, յուրաքանչյուր** և այլն որոշյալ դերանվամբ արտահայտված որոշիչներ, որոնք կրկնվում են կամ բոլոր ենթակաների, կամ նրանցից միայն մեկի մոտ, ստորոգյալը մեծ մասամբ եզակի է դրվում:

Օրինակ՝ Դա գիտեր ամեն մի կին, ամեն մի զավակ:(78)

Հայերենում համաձայնություն գոյություն ունի ենթակայի և ստորոգելիական վերադիրի միջև: Սակայն դա կայուն չէ: Նախ՝ համաձայնությունը տեղի է ունենում այն դեպքում, երբ վերադիրն արտահայտված է ուղղական հոլովով: Օրինաչափականը այն է , որ եզակի ենթակայի հետ գոյականական վերադիրը եզակի թվով է դրվում, հոգնակիի հետ՝ հոգնակի: Եզակի ենթակայի հետ վերադիրը հոգնակի թվով է դրվում, եթե ենթական ընդհանրական նշանակություն ունի: Օրինակ՝ Հայրենիքը մեր ժողովուրդն են:(478)

Եթե ենթակայի իմաստի մեջ ներառվում են մեկից ավելի առարկաներ, վերադիրը հոգնակի է կիրառվում: Օրինակ՝ Նրանց կեսը որսորդներ էին:(724)

Հոգնակի ենթակայի հետ վերադիրը կարող է դրվել թե հոգնակի, թե եզակի: Դա պայմանավորված է հետևյալ հանգամանքով. եթե ընդգծվում է, որ ենթակայի մեջ ներառված ամեն մի առարկա առանձին-առանձին կրում է վերադրով դրսևորված հատկանիշ, ստորոգյալը հոգնակի է կիրառվում: Օրինակ՝ Դուք գազաններ եք:(136)

Բազմակի ենթակայի հետ վերադիրը հոգնակի է դրվում, եթե նրանով արտահայտված հատկանիշը վերագրվում է ենթականերից յուրաքանչյուրին առանձին-առանձին: Օրինակ՝ Հայրն ու աղջիկը միևնույն միամիտ մարդիկն էին:(264)

Բազմակի ենթակաների հետ վերադիրը եզակի է դրվում, երբ չի շեշտվում միայն հատկանիշը կրող ենթականերից ամեն մեկը: Օրինակ՝ Նրա հացն ու ապրուստի այլուրը այդ երկուսն հավն էին:(239)

ԳԼՈՒԽ 2. Բացահայտչի և բացահայտյալի համաձայնություն

Բացահայտչի և բացահայտյալի միջև եղած համաձայնությունը լիակատար է. Այն ընդգրկում է հոլովի, թվի, դեմքի և որոշյալության կարգերը, ուստի հանդես է գալիս իր ողջ դրսևորումներով:

Թեև բացահայտչը և բացահայտյալը համաձայնում են թվով, դեմքով և հոլովով, և դա կայուն օրինաչափություն է ներկայացնում, սակայն նկատվում են բազմաթիվ շեղումներ այդ ընդհանուր օրինաչափությունից, պայմանավորված նրանց իմաստային պատկանելությամբ ու բնույթով, նախադասության կառուցվածքով ու իմաստով և այլ հանգամանքներով:

Ավելի կայուն է հոլովական համաձայնությունը: Բացահայտչի հոլովը պայմանավորված է բացահայտյալի հոլովով: Հոլովական անհամաձայնությունը լինում է բուն և պարագայական բացահայտիչների դեպքում, մասնական բացահայտչի ու բացահայտյալի միջև հոլովական անհամաձայնությունը համարվում է համաձայնության սխալ: Բացահայտչի և բացահայտյալի միջև համաձայնությունը կարող է խախտվել, եթե բացահայտիչը ի վիճակի չէ ընդունելու իր լրացյալի հոլովը: Այստեղ իհարկե, կա համաձայնություն, բայց ոչ քերականական, այլ իմաստային:

Քերականական անհամաձայնություն է առաջանում, երբ բացահայտվում է տեղի պարագան, հատկապես, երբ վերջինս արտահայտված է **այստեղ, այդտեղ, այնտեղ** ցուցական դերանուններով, որոնք նախադասության իմաստի ու կառուցվածքի պահանջով կարող են բացահայտվել, պարզաբանվել գոյականի տրական ու ներգոյական հոլովներով կամ էլ կապի ու նրա խնդրի միջոցով: Օրինակ՝ Այստեղ՝ լանջերին ջարդը սկսվել է ժամը հինգին:(95)

Անհամաձայնություն կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ ավելի ընդհանուր իմաստ արտահայտող ժամանակի պարագան պարզաբանվում, բացահայտվում է ժամանակային ավելի նեղ հասկացությամբ: Օրինակ՝

Այդ կրակոցի հաջորդ օրը՝ **ջրտուքի տոնին**, Մերոբ Աղբյուրն ինձ մի կոտրած հրացանի կոթ տվեց, որ տանեմ նորոգելու:(58)

Նկատվում են դիմային անհամաձայնության որոշ դեպքեր բացահայտյալի և բացահայտչի միջև հատկապես, երբ բացահայտյալը արտահայտված է անձնական դերանվան 1-ին դեմքով, ընդ որում բացահայտիչը կամ բոլորովին հոդ չի ստանում, կամ էլ ստանում է որոշիչ ը հոդը: Օրինակ՝

Եվ ես կընդհատեմ այն իմ հիշատակարանը շարունակելու համար, պատմելու այդ դեպքերին նախորդող և հաջորդող մի քանի անցքերի մասին, որոնց ականատես եղա և մասնակից, **ես**՝ Տարոն աշխարհի վերջին դժբախտ **հուշագիրը**: (317)

Բացահայտիչն ու բացահայտյալը համաձայնում են նաև հոդով: Ընդ որում, այդ համաձայնությունը տարածվում է միայն դիմորդ և որոշիչ հոդերի վրա և կայուն օրինաչափություն չի ներկայացնում: Այսեղ ևս բավական շատ են շեղումներն ու խախտումները: Պետք է նկատել, որ եթե բացահայտյալը որոշյալ առումով է կիրառված, ապա բացահայտիչը մեծ մասամբ որոշիչ հոդով է հանդես գալիս. Օրինակ՝

Խմբի բոլոր **հայդուկները**՝ Ֆադեյ, Սպաղանցի Մակարը, Իսրոն և Մշեցի Տիգրանը, չդիմանալով հայդուկային զենքի կարգապահությանը, դեռևս Խնուսում եղած ժամանակ առել են իրենց չախմախիկն և ընկել սարերը: (164)

Որոշյալ առումով բացահայտյալի հետ անհոդ կարող են կիրառվել նաև թվարկվող բազմակի բացահայտիչները, հատկապես, երբ առանձնակի ուշադրություն չի դարձվում նրանց որոշյալության վրա, և շեշտվում են թվարկվող անդամները:

Այս դեպքում որոշիչ հոդի գործածությունը կծանրացնեք ոճը և կթուլացնեք նախադասության մտքի նպատակասլացությունը:

Ահա թե ինչու նման դեպքերում անվայելուչ չէ բացահատիչների անհոդ կիրառությունը. Օրինակ՝

Մասնակցել էր բազմաթիվ կռիվների: Ուներ մեռած հին ու նոր ընկերներ՝ **Մակար, Գալե, Արտոնքա Ջնդո, Մեյդո Պողոս, Շենիքցի Մանուկ**: (295)

Մասնավորող պարագայական բացահայտիչը և բացահայտյալը կարող են համաձայնել թվով և հոլովով, եթե երկուսն էլ արտահայտված են գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ այլ բառով: Օրինակ՝

Նրանց գլխավերևում կանգնած էր պարոն Լևոնը, իսկ **ավելի վերևում՝ պատի մի ձեղքում**, Կթուն մայրիկի լուսանկարն էր: (480)

Գլուխ 3. Այլ անդամների համաձայնություն

Համաձայնությունը տարածվում է նաև որոշչի ու որոշյալի վրա: Այս համաձայնությունը արտահայտվում է նրանում, որ որոշ որոշիչներ պահանջում են որոշյալի ոգակի կամ հոգնակի թիվը: Որոշիչ-որոշյալ կապակցության մեջ ստորադասի պահանջով գերադասը դրվում է եզակի կամ հոգնակի թվով: Սակայն այս երևույթը հայերենում հանդես չի գալիս իր բոլոր դրսևորումներով: Այն կրում է չափազանց մասնակի բնույթ և ունի որոշակի սահմանափակություն: Մեր լեզվում գոյություն ունի որոշչի և որոշյալի միայն թվային որոշ համաձայնություն, բացակայում է ուրիշ լեզուների հատուկ սեռային և հոլովական համաձայնությունը:

Մեծ մասամբ հոգնակի որոշյալ են պահանջում՝

1. Շատության, բազմազանության և այլ իմաստ արտահայտող **շատ, բազում, անհամար, անթիվ, բազմաթիվ, բազմատեսակ, բազմաձև, զանազան, և տարբեր** ու այլ ածականներ, երբ դրվում է հատերով հաշվելի թանձրացական գոյականների վրա:

Օրինակ՝ **Բազում** փորձությունների ենթարկվեցի, մինչև որ ընդունվեցի նրա խումբ: (265)

2. Կրկնությամբ կազմված բազմազանության, այլև հոգնակիության նշանակություն ունեցող մի շարք ածականներ, երբ նրանք որոշիչ են դառնում միևնույն առարկաների տարբեր տեսակների համար:

Օրինակ՝ Տեր քաջի տանը շատ մարդ կար: **Մեծամեծ** իշխաններ, քահանա և ռամիկ: (56)

3. Մեծ մասամբ հոգնակի որոշյալ են պահանջում **մի խումբ, մի շարք** կապակցություններով արտահայտված որոշիչները, հատկապես երբ որոշյալները թանձրացական իմաստ ունեն և գործածական են նրանց հոգնակին. Օրինակ՝

Օրինակ՝ Եվ արդեն մի քանի ծանր մարտեր են մղվել ներսից դիմադրող **մի խումբ** հայդուկների և դրսից հարձակվող զորքերի միջև: (133)

Երբ իբրև որոշիչ են հանդես գալիս հատուկ անունները, որոնք վերաբերում են տարբեր առարկաների: Օրինակ՝

Նրանց մեջ ճանաչեցի գյուխապետ Մաքոյին, մի թև կտրած, կրծքի վրա դաշույնի մի քանի հարված: Ճանաչեցի նաև **Քերոք և Թարխու երեցների** դիակները: (315)

Մեծ մասամբ հոգնակի ստորոգյալ են պահանջում **ինչքան , որքան** դերանվամբ արտահայտված որոշիչները, որոնք կամ կրկնվում են բացականչականով, կամ էլ բացականչական երանգ են ստանում առանց կրկնության: Օրինակ՝ **Ինչքան** բնակիչներ մեծ ու փոքր, վազում էին ճանապարհի երկայնքով և օղը կեցցեններով թնդացնում: (401)

Մեկից բարձր թվական որոշիչների որոշյալները գերազանցապես եզակի են կիրառվում հետևյալ դեպքերում:

1. Երբ առանձնապես ընդգծվում, շեշտվում է թվական որոշիչի գաղափարը: Օրինակ՝ **Յոթ** եկեղեցի ուներ և մեկ նշանավոր շուկա: (200)

2. Երբ որոշիչը արտահայտված է բախշական թվականով: Խաչիկ Դաշտենցի մոտ հաբդիպել ենք այս օրինաչափության խախտում, երբ թվականի հետ գործածվում է հոգնակի որոշյալ: Օրինակ՝

Ինձ ու Մշեցի Տիգրանին **երկուական** զենքեր հանձնեց և մենք ճանապարհ ընկանք դեպի Վայոց Ձոր: (348)

Թվական որոշիչը գերազանցապես հոգնակի է պահանջում երբ՝

1. Երբ թվական որոշիչի և որոշյալի միջև հանդես է գալիս նախադասության մեկ այլ անդամ՝ որոշիչ, որի լրացնում է նույն որոշյալին: Օրինակ՝

Խնուս-Բերի ընդհանուր հրամանատարն է, մեկը ռուսյան այն **հինգ երիտասարդ գնդապետներից**, որոնց դու տեսել էիր Կարսի թամբագործի արհեստանոցում: (337)

2. Երբ իբրև որոշիչ կիրառվում է քանակական կամ դասական թվականների կապակցությամբ և վերջինիս 1-ին բաղադրիչը ունի բացառական հոլովի իմաստ: Մական հեղինակի մոտ նկատվում է այս օրինաչափության խախտումը հետևյալ օրինակում՝ Գլխին մոտավորապես **հինգից –յոթ** գմբեթ կար ծուռ խաչերով: (394)

Հատկացուցչի և հատկացյալի միջև կա մասնակի համաձայնություն՝ այստեղ գործում է միայն թվի համաձայնություն, այն էլ՝ ոչ իր ամբողջ դրսևորումներով: Եթե ռոբներենում հատկացյալն է իր թիվը պարտադրում հատկացուցչին, ապա հայերենում հակառակն է՝ հատկացյալը թվային այս կամ այն կիրառությունն է ստանում հատկացուցչի պահանջով:

Հոգնակի հատկացուցչի հետ հատկացյալը գերազանցապես հոգնակի է կիրառվում, եթե հատկացյալով դրսևորվող առարկաները պատկանում են հատկացուցիչներից յուրաքանչյուրին: Օրինակ՝

Լուսաբացին ես և Մշեցի Տիգրանը մարագի դուռը բաց անելով **մեր բեռները** ներս տարանք: (211)

Բազմակի հատկացուցիչների հետ հատկացյալը կարող է նաև եզակի դրվել հատկապես այն դեպքում, երբ սովորական չէ կամ էլ քիչ է գործածական նրա հոգնակին և երբ հատկացուցիչները միասին հանդիսանում են միևնույն առարկայի տերը, այսինքն՝ միևնույն հատկացյալը պատկանում է բոլոր հատկացուցիչներին միասին:

Օրինակ՝ Ապարանի և Արզականի կիրճերով բարձրացավ Թադենիսի լանջերը: (914)

Այսպիսով՝ Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարբերի կանչը» երկում հիմնականում պապանելով համաձայնության հետ կապված օրինաչափությունները, խախտել է այն եզակի ոճական նպատակներով:

ՀՏՂ37.02

ԼԵՁՎԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ՝ 2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Լիլիթ Բարսեղյան,
մանկավարժության
և հոգեբանության ամբիոնի ավագ լաբորանտ
E-mail- lilit-barseghyan-93@mail.ru
Հեռ. - (097) 22-58-82

Բանալի բառեր- լեզվական խաղեր, զննական պարագաներ, բառապաշարի հարստացում, խաղային իրավիճակ, բանավոր խոսք, գրավոր խոսք, խմբային աշխատանք:

Ключевые слова: языковые игры, наглядные пособия, обогащение словарного запаса, игровая ситуация, устная речь, письменная речь, групповая работа.

Key words: language games, visual aids, vocabulary enrichment, game situation, oral speech, written speech, group work.

Ամփոփում

Նկատի ունենալով ժամանակակից աշակերտների առջև դրված պահանջները և նրանց խիստ ծանրաբեռնված ռեժիմը՝ փորձ է արվել ներկայացնել մի շարք լեզվական խաղեր, որոնք ինչ-որ չափով կթելակացնեն աշակերտների հոգնածությունը դասի հատկապես վերջին րոպեներին: Մեր կողմից ներկայացված խաղերը նպատակ ունեն հարստացնելու կրտսեր դպրոցականների բառապաշարը, տրամաբանությունն ու հիշողությունը, համախմբելու դասարանական կոլեկտիվը, ամրապնդելու ստացված գիտելիքները և կրկնելու անցյալը:

Лилит Барсегян

Резюме

Принимая во внимание требования, стоящие перед современными школьниками, а также их чрезмерную загруженность, мы попытались ввести ряд языковых игр, которые каким-либо образом облегчили бы усталость учеников в классе, особенно в конце урока. Игры, которые у нас есть, направлены на обогащение словарного запаса, логики и памяти младших школьников, консолидацию команды в классе, закрепление полученных знаний и повторение прошлого.

Lilit Barseghyan

Summary

Taking into account the requirements before modern schoolchildren, as well as their excessive workload, we tried to introduce a number of language games that would somehow facilitate the weariness of students in the classroom, especially at the end of the lesson. The games that we presented have aims to enrich the vocabulary, logic and memory of junior schoolchildren, to unite the team in the classroom, consolidate of acquired knowledge and revise of the past.

«Առանց խաղի չկա և չի կարող լինել ամբողջական մտավոր զարգացում: Խաղը մի մեծ յուսավոր պատուհան է, որի միջոցով երեխայի հոգևոր աշխարհը, կյանքը լցվում է պնդումների, գաղափարների հոսքով: Խաղը կայծ է, հարցասիրության և հետաքրքրասիրության վառվող կրակ»:
Վ.Ա.Սուխոմլինսկի

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացումը կրտսեր դպրոցականների մոտ տեղի է ունենում հարազատների և հասակակիցների հետ շփվելիս, խաղալիս և ուսումնական գործընթացում: Բայց պատկերացնենք՝ ինչքա՞ն արդյունավետ կլինի ուսումնառությունը, եթե այս երեք գործոնները լինեն փոխներթափանցված: Չէ՞ որ ուսուցման հաջողությունը ապահովվում է ոչ միայն մեթոդական տարրերի հաջորդականությամբ, այլև նրանց մատուցման ստեղծագործական մոտեցմամբ, որը թույլ է տալիս աշակերտների մեջ ձևավորել սովորելու պահանջմունք, արդյունավետ աշխատելու հմտություն, մղել նրանց ստեղծագործական ակտիվության և ինքնուրույնության: Այս առումով մենք կարևորում ենք լեզվական խաղերի կիրառությունը կրտսեր դպրոցում՝ որպես նոր սերունդի կրթական մակարդակի բարձրացմանն ուղղված արդյունավետ միջոց: Նշված տարիքը բնորոշվում է սովորողի ընկալման անմիջականությամբ և

պայծառությամբ, ինչը երեխային հնարավորություն է տալիս հեշտությամբ ներգրավվել տարբեր իրադրությունների մեջ: Նրանք հեշտությամբ են կազմում խմբեր՝ ինքնուրույնաբար կազմակերպելով խաղի խմբային ձևեր՝ դեռ շարունակելով խաղալ խաղալիքներով ու զանազան առարկաներով:

Մենք ապրում ենք 21-րդ դարում, մի դարաշրջան, որը լի է կտրուկ ու առաջադիմական փոփոխություններով յուրաքանչյուր ասպարեզում, ամեն օր, ամեն վայրկյան նորարարական ամենաբազմազան նախաձեռնությունները ապշանք ու զարմանք են պատճառում: Այս նորարարությունների համապատկերում անթույլատրելի է ուսումնական գործընթացի միապաղաղ ու դարերով ամրագրված մեթոդների ու միջոցների լայնորեն կիրառությունը մեր դպրոցներում: 21-րդ դարի ուսուցիչների առջև, անշուշտ, դրված են նոր պահանջներ, քանի որ կրտսեր դպրոցականները նույնպես այն երեխաները չեն, ինչ եղել են թեկուզ մեկ տասնամյակ առաջ նույն նստարանին նստած աշակերտները: Այդ իսկ պատճառով ուսուցիչը իր յուրաքանչյուր մոտեցման մեջ պետք է լինի կառուցողական, ցուցաբերի ստեղծագործական մոտեցում:

Ժամանակակից ծնողները իրենց առջև գերխնդիր են դրել առավելագույնս զարգացնել իրենց երեխաներին, և ամենևին էլ պատահական չեն երեխաների՝ զարգացման կենտրոնների օրեցօր աճը և պահանջարկը, կենտրոններ, որոնց նշանաբանն է. «Սովորել խաղալով», ինչը հենց վառ ապացույցն է խաղերի օգնությամբ սովորեցնելու և ուսուցանելու արդյունավետության: «Նախադպրոցական մանկությունը, ուսումնառության առաջին տարիները դպրոցում, երբ երեխայի առաջատար գործունեությունը մնում է խաղը, բնորոշվում է երևակայության գործընթացների բուռն զարգացմամբ», - նշում է Ա. Վ. Պետրովսկին իր «Ընդհանուր հոգեբանություն» աշխատության մեջ (3, էջ 414): Սա ավելի բնորոշ է 1-ին և 2-րդ դասարանի աշակերտների համար. չէ՞ որ աշակերտական նստարանին նստած են երեխաներ, ովքեր ոչ վաղ անցյալում դեռևս մանկապարտեզի երեխաներ էին՝ տարված խաղերով, երգ ու պարով, ուստի անցումային այս փուլը պետք է կազմակերպել հնարավորինս մտածված, առանց կտրուկ վայրկյանների: Այս տեսակետից նպատակային է կրտսեր օղակի դասագրքերի կառուցվածքը, որտեղ լեզվական խաղերին մեծ տեղ է հատկացված, որոնք նպատակ ունեն զարգացնելու և կատարելագործելու աշակերտների ճանաչողական, գիտակցական ու ստեղծագործական ընդունակությունները: Չնայած դրան, մեր կարծիքով, խմբային խաղերի կազմակերպումը, զննական պարագաների օգտագործումը խաղերի ընթացքում, այնուամենայնիվ, ընդլայնման կարիք ունեն: Ուշագրավ են Ե. Ե. Սապոգովայի հետազոտությունները, որոնք հաստատում են այն իրողությունը, որ «Այն երեխաները, ովքեր 6-7 տարեկանում դեռևս պատրաստ չեն խաղային գործունեությունը ուսումնականով փոխարինելու (ինչը կազմում է հետազոտվողների մոտ 42 %-ը), դպրոց հաճախելով՝ ճգնաժամային ակտանիշներ են դրսևորում» (4, էջ 45): Ուսումնական նյութի նկատմամբ առաջ եկած հետաքրքրությունների հիման վրա կրտսեր դպրոցականների մոտ դրական վերաբերմունք է ձևավորվում ուսուցման նկատմամբ և հակառակը: Ուստի անչափ կարևոր է ուսուցչի մանկավարժական և հոգեբանական հմտությունը՝ աշակերտներին ուսումնական կյանքում ճիշտ ներգրավելու և հոգեբանական խնդիրներից հնարավորինս խուսափելու գործում:

Կրտսեր դպրոցում առավել, քան բարձր օղակում, նկատելի է աշակերտների հոգնածությունը դասի հատկապես վերջին թուղթներին, ինչը առաջ է բերում անհետաքրքրություն, անտարբերություն հաղորդվելիք տեղեկության նկատմամբ, շեղում աշակերտների ուշադրությունը ուսումնական գործընթացի նկատմամբ՝ դարձնելով հաղորդվելիք նյութը անարդյունավետ: Ինչքան էլ ուսուցիչը փորձում է շտկել ստեղծված իրավիճակը, միևնույն է, արդյունքը չի գոհացնում: Դրա ամենաարդյունավետ լուծումը հենց ուսուցումն է խաղերի միջոցով: «Եկեք հիմա մի խաղ խաղանք» արտահայտությունը տվյալ դեպքում հրաշքներ կգործի:

Կարևորելով խաղերը՝ որպես բառապաշարի հարստացման միջոց և ի նկատի ունենալով այն գերագույն պահանջը, որը դրված է տարրական դասարանների դասվարների առջև՝ հումանիշների, հականիշների, նոր բառերի օգտագործումով ու ամրապնդումով հարստացնել աշակերտների բառապաշարը, զարգացնել հարուստ ու ճոխ լեզու, անհրաժեշտ է համակողմանի զարգացնել աշակերտներին. չէ՞ որ կրտսեր դպրոցով է պայմանավորված աշակերտների հաջող ուսուցման մեկնարկը ուսումնառության ողջ ընթացքում: Սա առաջնային խնդիր է առավելապես բարբառախոս միջավայրում, ուստի լեզվական խաղերի կազմակերպման առաջնային պայման պետք է լինի բացառապես զրական խոսքը: 20-րդ դարի լավագույն մանկավարժ Ա. Տեր - Գրիգորյանը կարևորում էր լեզվական խաղերի կիրառությունը տարրական օղակում՝ նշելով, որ «Լեզվական խաղերը նպաստում են լեզվի և առանձնապես նրա քերականության ուսուցման դժվարությունները հաղթահարելու, որովհետև դրանք համապատասխանում են երեխաների տարիքային առանձնահատկություններին և մեծապես խթանում աշակերտների ինքնուրույնության զարգացմանը» և սրանց «Հիմնական առանձնահատկությունը և, ընդ որում, նաև հիմնական առավելությունն այն է, որ դրանք ուսուցողական նպատակ ունեն և միաժամանակ

են ուսումնական աշխատանքի մյուս ձևերին՝ յուրովի նպաստելով անցածի յուրացմանը և յուրացրածի գործնական կիրառությանը» (9, էջ 291): Բացի այդ՝ խաղային իրավիճակներում աշակերտները դառնում են ավելի գործուն և ուշադիր, հնարավորություն են ստանում կայանալու: Արդյունքում դառնում են ավելի ինքնավստահ ու գիտակից: Այսպիսի խաղերը ուսուցչի և աշակերտների միջև ստեղծում են նաև փոխադարձ վստահություն վստահություն, լուրջօրինակ կապ, իսկ այդ կապը ավելի է խորանում, երբ ուսուցիչը ինքն է հանդես գալիս խաղացողի դերում:

Մենք, ուսումնասիրելով «Մայրենի-2» դասագիրքը, կփորձենք ներկայացնել մի շարք խաղեր, որոնք, անշուշտ, օգտակար կլինեն հանրակրթական դպրոցների դասվարների և, ինչու չէ՞ նաև ծնողների համար՝ դասապատրաստումը տնային պայմաններում ավելի հաճելի ու նպատակային դարձնելու տեսակետից: Մեր կողմից կատարված հարցումները ցույց են տալիս, որ տարրական դպրոցի դասվարները հիմնականում առաջնորդվում են դասագրքերում տեղ գտած խաղերով (բառքանդի, հեքիաթի հորինում, փոխակերպում (բառի մի տառը փոխելով՝ նոր բառ ստանալ), խառնագիր և այլն), այդ պատճառով կցանկանայինք ներկայացնել դասագրքերում տեղ չգտած խաղեր, որոնք ավելի ընդհանրական բնույթ ունեն և նվազ արդյունավետ չեն ուսումնասիրության ընթացքում:

Անցածի յուրացմանը և յուրացրածի գործնական կիրառությանն ուղղված կարելի է կազմակերպել մի շարք հետաքրքրաշարժ խաղեր: Այսպես՝ 2-րդ դասարանի դասագրքում մեծ ուշադրություն է դարձվում աշակերտների բառապաշարի հարստացմանը՝ որպես հիմք ապագա դասարանների համար: Այս առումով կցանկանայինք ընդգծել այն առաջադրանքները, որոնք ուղղված են մի շարք գյուղատնտեսական առարկաների ու գործիքների (էջ 18), ծաղկանունների (էջ 37, էջ 64), մրգերի (էջ 42, 59), ընտանի ու վայրի կենդանիների (էջ 52), մեծ ու փոքր գյուղատնտեսական տնիսնիկայի (էջ 70, 135), փայտ մշակելու գործիքների (էջ 72), երաժշտական գործիքների (էջ 128), եկեղեցական ու հոգևոր - մշակութային կոթողների (էջ 134), թռչնատեսակների (էջ 71) և այլնի ճանաչությանը: Որպես այս գիտելիքների ամրապնդման և անցածի ստուգման արդյունավետ միջոց՝ կարելի է կիրառել դասարանական պայմանների ընձեռնած հնարավորությունների սահմաններում օգտագործվող ամենահեշտ ու ավելի հաճախ կազմակերպվող խաղերից մեկը. դասարանը բաժանել 2 կամ 3 խմբի և հանձնարարել յուրաքանչյուրին՝ գրել հնարավորինս շատ ծաղիկների անուններ: Կհաղթի ուսուցչի սահմանած ժամանակահատվածում ավելի շատ ճիշտ պատասխաններ տված խումբը: Կարելի է նույնիսկ գրատախտակը բաժանել համապատասխան խմբերի քանակի և յուրաքանչյուր խմբի հանձնարարել տարբեր առաջադրանքներ, դիցուք՝ ծաղկատեսակներ, թռչնատեսակներ և կենդանատեսակներ: Ամեն խմբից գրատախտակի մոտ կանգնում է մեկ աշակերտ: Դարձյալ հաղթում է ավելի շատ ճիշտ պատասխաններ տված խումբը: Սա նպատակահարմար է նրանով, որ ամբողջ դասարանը յուրացնում է այս կամ այն նյութը ընդհանրացված ու վերացական ձևով, իսկ հետո կիրառում է կոնկրետ պայմաններում՝ կրկնելով մի քանի թեմա միաժամանակ:

Սակայն պետք է նշել, որ խաղի կիրառությունը դեռևս բավարար չէ: Ուսուցչից ավելի նպատակային աշխատանք է պահանջվում խաղի վերլուծության ժամանակ, ինչը ավելի կարևոր է, քան բուն խաղի ընթացքը: Ուսուցչից պահանջվում է վերլուծել խաղի արդյունքները, ամփոփել խաղը, լրացնել աշակերտների գիտելիքների պակասը՝ ի հաշիվ դասարանի մնացած աշակերտների և հենց իր՝ ուսուցչի գիտելիքների, իսկ ստացված գիտելիքները ամրապնդելու համար պահանջել գրի առնել բոլոր բառերը և կազմել դրանցով նախադասություններ: Ահա բառապաշարի հարստացման հեշտ և հաճելի գործընթաց:

Խաղի այս տեսակը կարելի է կազմակերպել նշված ցանկացած թեմայի ուսումնասիրության ժամանակ: Ավելի նպատակային կլինի խաղից հետո կամ հենց խաղի ժամանակ ցուցադրել բնական ծաղիկներ կամ համապատասխան քարտեր, մակետներ և այլն՝ ապահովելով դասի զննականությունը: Կարևորելով զննական պարագաների դերը ուսումնական գործընթացում՝ Վաչագան Սարգսյանը նշում է. «Այդ տարիքում, ի տարբերություն խոսքատրամբանական հիշողության, համեմատաբար լավ է զարգացած զննական-պատկերային հիշողությունը, ապա կարևորություն է ստանում տեքստը համապատասխան պատկերներով ներկայացնելու եղանակը » (6, էջ 24): Վստահ ենք, որ զննական պարագաների օգտագործումը կծառայի իր նպատակին և կգերազանցի նույնիսկ ուսուցչի սպասելիքները:

Կարելի է նույն թեմաները կրկնել հետևյալ խաղի միջոցով. դասարանում դնել առանձին տարաներ՝ ըստ թեմաների՝ կենդանիների, ծաղիկների, գործիքների և այլն, օգտագործել քարտեր կամ թղթեր, որոնցից յուրաքանչյուրի վրա գրված է թռչնաների, ծաղիկների, կենդանիների և այլնի տեսակներ: Յուրաքանչյուր աշակերտ, վերցնելով քարտերից մեկը, այն տեղադրում է համապատասխան տարայի մեջ: Կարելի է նշված խաղը խաղալ թե՛ անհատական, թե՛ խմբային եղանակով. կհաղթի այն աշակերտը կամ այն խումբը, ով կտա ավելի շատ ճիշտ պատասխաններ:

Ներկայացնենք 2-րդ դասարանցու բառապաշարի հարստացմանը ուղղված մի շարք խաղեր լս: Այսպես, 2-րդ դասարանցին սովորում է ճանապարհի, աշխույժ, նրգել, արջ, չարածճի, հեքիաթ, մարդ, որդ, ուսուցչուհի, զգույշ, եղբայր, գույնզգույն, բույն, վարդ, որդի, որսորդ, վախկոտ, աղքատ, առողջ, հոգատար, անշնորհք, արձան և այլ բառերի ոչ միայն նշանակությունը, այլև ճիշտ գրությունը, ուստի կարելի է կազմակերպել այս բառերի ամրապնդման այնպիսի խաղեր, որոնք պահանջեն առաջին հերթին գրի առնել այս բառերը: Չէ՞ որ պետք է հաշվի առնել, որ գրավոր և բանավոր խոսքը փոխկապակցված են, և զարգացնելով գրավոր խոսքը, բնականաբար, զարգանում է նաև բանավորը: Այսպես, կարելի է այս բառերից յուրաքանչյուրը գրել կենտրոնում և դրանից ճառագայթներ տանելով՝ կազմել բառակապակցություններ: Շատ կարևոր է ապահովել աշակերտների ուշադրության կենտրոնացվածության բաշխումը խաղային օբյեկտների վրա:

Նշված խաղի կիրառությունից հետո կարելի է ամբողջ դասարանով կազմել ու գրել նոր բառակապակցություններ և կարդալ բարձրաձայն: Նոր բառերի ու բառակապակցությունների և դրանցով նախադասությունների կազմումը կամրապնդի ստացված գիտելիքները, կապահովի աշակերտների՝ իմաստային գույքորոշություններ ստեղծելու հմտությունը և հնարավորություն կտա զարգացնել երեխաների թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքը՝ միաժամանակ ապացուցելով ուսուցման և զարգացման փոխկապակցվածությունն ու միասնականությունը և դրանց անմիջական ազդեցությունը աշակերտների սոցիալականացմանը:

Նմանատիպ խաղերի կազմակերպման գործում շատ կարևոր է խմբային աշխատանքը, որն օգնում է համախմբել դասարանը: Փորձը ցույց է տալիս, որ երեխաները հեշտությամբ են ներգրավվում խաղային ոլորտին, աշխույժանում ու ոգևորվում են խաղերի ընթացքում, հատկապես, եթե խաղում առկա են մրցակցության տարրեր: Այսպիսի փոքրիկ ու նպատակային շեղումները հաճույք են պատճառում թե՛ աշակերտներին, թե՛ ուսուցիչներին, իսկ եթե դրանք պարբերական բնույթ կրեն, ապա յուրաքանչյուր դասաժամ հագնեցած կլինի դրական ու հաճելի պահերով և, անկասկած, կթողնի իր դրական ազդեցությունը նաև ուսուցիչ - աշակերտ հարաբերությունների վրա, մանավանդ որ այսօր, առավել քան երբևէ, նկատելի է աշակերտների խիստ ծանրաբեռնված օրվա ռեժիմ՝ հագնեցած բազմազան ու միմյանցից տարբեր խմբակներ հաճախելուց մինչև դասերի պատրաստում: Սա, իհարկե, այլ հարց է, սակայն հաշվի առնելով նաև վերը նշվածը՝ դասապրոցները պետք է կազմակերպել հնարավորինս ազատ ու թեթև, հնարավորություն տալ աշակերտներին դասը սերտելու այդ բարդ գործընթացում նաև լիցքաթափել, հաճելի ժամանակ անցկացնել:

Ահա լիցքաթափվելու և հաճելի ու օգտակար ժամանակ անցկացնելու մեկ այլ տարբերակ լս. առաջադրել աշակերտական խմբին թեմա, օրինակ՝ դպրոց, աշուն, բնություն և այլն, հանձնարարել նրանց գրել այդ թեմային առնչվող բառեր, ինչքան հնարավոր է շատ: Օրինակ՝ դպրոց - աշակերտ, ուսուցիչ, դասաժամ, աշակերտական նստարան, գիրք, տետր, առարկա և այլն, կամ ընդհակառակը՝ տալ բառեր, որոնք աշակերտները պետք է խմբավորեն ըստ թեմաների: Թեմաները պետք է ընտրել նախապես՝ համապատասխանեցնելով այն 2-րդ դասարանի թեմաներին: Այս խաղը հնարավորություն է տալիս ընդգրկել հիմնական դիմապատկերների լայն շրջանակ, ուստի արդյունավետ կլինի դրա կազմակերպումը տարբեր առարկաների շրջանակներում նույնպես: Այն զարգացնում է աշակերտների իմացական գործընթացները՝ երևակայությունը, մտածողությունը, հիշողությունը, տրամաբանությունն ու բառապաշարը, ընդլայնում աշխարհայացքը, արմատավորում ու ամրապնդում է աշակերտների հմտությունը, հնարավորություն է տալիս արտահայտել իրենց վերաբերմունքը, սովորեցնում է համեմատել, գլխավորը առանձնացնել երկրորդականից: Խաղի ժամանակ անմիջապես առանձնանում են մտքի ճկունությամբ ու խորությամբ օժտված աշակերտները:

Նույն խաղը կարելի է կազմակերպել նաև տարբեր մասնագիտությունների վերաբերյալ, օր.՝ ուսուցիչ, հացթուխ, վարորդ, նկարիչ և այլն, ինչպես նաև՝ տարվա եղանակների ամփոփման ժամանակ: Խաղի ընթացքում ուսուցիչը պետք է ունենա առաջնային նպատակ, աշակերտների գործողությունների միջոցով նպատակին հասնելու ճանապարհի վերաբերյալ հստակ պատկերացումներ, կարողանա աշակերտներին հրավերել հստակ ձևակերպված նպատակը, ինչը աշակերտների համար պետք է լինի ընկալելի ու հասանելի: Փորձը ցույց է տալիս, որ նյութը աշակերտներին պատրաստի վիճակում հաղորդելը նվազ արդյունավետ է, քան այն աստիճանաբար, կոնկրետ նյութի հետ գործողություններ կատարելու գործընթացում ձևավորել:

Շատ կարևոր է ուսուցչի պահվածքը և վերաբերմունքը նշված խաղերի կազմակերպման ու անցկացման ընթացքում: Պատահական չէ, որ արդի մանկավարժությունը կարևորում է մանկավարժական տեխնիկան ուսումնառության գործընթացում՝ ուսուցչի խոսքի կուլտուրան, ճիշտ առոգանությունը, կարգավորված ձայնը, դիմաշարժը և այլն: Նա պետք է լինի բարեհամբույր, կամեցող, կարողանա զսպել իր տրամադրությունը, խուսափի բացասական արտահայտություններից, ինչպիսիք են՝ սխալ է, թերի է, ճիշտ չէ և այլն, փորձի ոչ թե կարմիր գրիչով ուղղել սխալները, այլ կանաչ գրիչով նշել ճիշտ տարբերակները: Ուսուցիչը պարտավոր է

կարևորել յուրաքանչյուր աշակերտի ստեղծագործական ամեն մի գաղափար, խրախուսի նրանց ձգտումները, փորձի կազմակերպել խաղը աշակերտների հետ համատեղ: Չէ՞ որ խաղը ինքը ստեղծագործություն է, և չկան խաղի հստակ սահմաններ ու սահմանափակումներ, յուրաքանչյուր ստեղծագործական գաղափար խրախուսելի է, պետք է հնարավորություն տալ աշակերտներին ինքնարտահայտվելու, նույնիսկ փոխելու խաղի կանոնները:

Բառապաշարի հարստացման մեկ այլ միջոց է երեխաների կողմից սիրված խաղերից մեկը. փակել աշակերտներից մեկի աչքերը, մյուսին հանձնարարել նկարագրել դասարանի աշակերտներից մեկի արտաքին տեսքը՝ մանրամասն, բնավորության գծերը և այլն: Աշակերտը պետք է փորձի գուշակել, թե ում մասին է խոսքը՝ միաժամանակ հնարավորություն ունենալով հարցեր տալ բացառապես գրական լեզվով: Սա տալիս է հնարավորություն միաժամանակ զարգացնելու մի դեպքում բանավոր խոսքը, նկարագրական վերլուծությունը, մյուս դեպքում՝ ուշադրությունն ու տրամաբանությունը:

2-րդ դասարանի աշակերտը սովորում է կենդանիների անունները և յուրաքանչյուր կենդանու համապատասխան՝ նշում նրա ձագի անվանումը, ինչպես՝ առյուծ- կորյուն, արջ - քոթոթ, ոչխար - գառ, կով - հորթ, այծ - ուլ, խոզ - խոճկոր և այլն: Թեմայի շուրջ կարելի է կազմակերպել խաղ՝ համապատասխան քարտերով: Աշակերտների խնդիրն է համապատասխանեցնել կենդանիներին և ձագերին: Նույն խաղը կարելի է կազմակերպել նաև հոմանիշ (ընկեր բառեր) և հակահիշ (հակառակորդ բառեր) բառերի ուսուցման ժամանակ: Ճիշտ է, նույնը կարելի է կատարել նաև սովորական առաջադրանք տալով, սակայն արդյունքը միանշանակ նույնը լինել չի կարող: Փորձենք աշակերտներին ասել. «Եկեք կատարենք առաջադրանք 1-ը» և «Եկեք խմբային խաղ կազմակերպենք»: Չնայած նպատակը 2 դեպքում էլ նույնն է՝ սակայն 1-ին դեպքում մենք աշակերտների դեմքին տեսնում ենք չկամություն, լավագույն դեպքում անտարբերություն, իսկ 2-րդ դեպքում՝ աշխուժություն և հետաքրքրվածություն:

Իհարկե, այսպիսի խաղերը չեն կարող ամբողջովին փոխարինել դասաժամին, տալ ավելի շատ գիտելիքներ, քան սովորական առաջադրանքները, նույնիսկ ունեն իրենց բացասական կողմերը (մեր ուսուցիչները, որպես այդպիսին, նշում են աշակերտների աղմկելը և իրար չլսելը, կախվածությունը խաղերից, որոշ դեպքերում՝ խաղի՝ բուն նպատակին չծառայելը, նույնիսկ կան ուսուցիչներ, որոնք դեմ են հաճախակի խաղեր կազմակերպելուն), բայց, այնուամենայնիվ, խաղերի կիրառման դրական կողմերը ուսումնական գործընթացում անհամեմատ ավելի մեծ են (աշակերտների ակտիվության ապահովումը, նյութի ըմբռնմանը նպաստելը, դասարանի բոլոր աշակերտների ներգրավվածությունը խաղին, հետաքրքրությունը և դրական մոտիվացիան, գրավչությունը, նյութի հասանելիությունը և այլն): Խաղային իրավիճակներում աշակերտները լիարժեքորեն օգտագործում են իրենց բոլոր հմտություններն ու ունեցած տեղեկատվությունը՝ միաժամանակ դրանք փոխանցելով ընկերներին և յուրացնելով նրանցը: Ուսուցիչը պահանջվում է միայն օգտագործել աշակերտների ներուժն ու ոգևորությունը կոնկրետ նպատակի ծառայեցնելու համար:

Այսպիսով, խաղերը, ունենալով իրենց բացասական կողմերը, իրենց անգնահատելի դերն ունեն աշակերտների կյանքում: Ուսումնառության գործընթացում լեզվական խաղերը միավորում են աշակերտներին, կենդանություն են հաղորդում դասին, բարձրացնում են առարկան սովորելու հետաքրքրությունը, կրթում ու զարգացնում են աշակերտների միտքն ու զգացմունքը, մղում են նրանց ազատ ու անկաշկանդ ինքնադրսևորման, ինքնակազմակերպման, ստեղծագործելու և ինքնահաստատվելու:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Եր., 2005, 455 էջ:
2. Գյուլամիրյան Զ.Տ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկան, Եր., 2006, 326 էջ:
3. Ընդհանուր հոգեբանություն, Ա.Վ.Պետրովսկու խմբագրությամբ, Եր., 1974, 544 էջ:
4. Խոլոյան Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Եր., 2004, 248 էջ:
5. Կարապետյան Վ.Ս., Գևորգյան Ս.Ռ., Բերբերյան Ա.Ս., Պետրոսյան Ռ.Տ., Խաչատրյան Հ.Վ., Կրթության հոգեբանության դասախոսությունների ժողովածու, Եր., 2017, 528 էջ:
6. Սարգսյան Վ.Ա., Այբբենարան, Մեթոդական ձեռնարկ, Ե., 2006, 196 էջ:
7. Սարգսյան Վ.Ա., Թորոսյան Լ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., Մայրենի-2, Եր., 2007, 160 էջ:
8. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ա.Վ.Պետրովսկու խմբագրությամբ, Եր., 1977, 399 էջ:
9. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., 1980, 563 էջ :

ՀՏԴ.37,3.24

ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՄԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ

Կարինե Խաչատրյան
ԱրՊՀ
մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր-ճգնաժամ, երեք տարեկաններ, համախտանիշ, հաղթահարում, ինքնագիտակցություն, ինքնակամություն, արժեզրկում, կամակորություն, համառություն, նեգատիվիզմ:

Ключевые слова - кризис, трехлетние дети, симптом, преодоление, самосознание, своеволие, обесценивание, упрямство, настойчивость, негативизм.

Keywords - crisis, three-year-old children, symptom, overcoming, self-consciousness, self-will, depreciation, stubbornness, persistence, negativism.

Ամփոփում

Երեք տարեկանում երեխան շատ զգայուն է նոր առարկաների ու երևույթների հանդեպ. նոր մուլտֆիլմի կամ այլ հետաքրքիր բաներով զբաղվելու առաջարկի հանդեպ, որը հետ կպահի ավելորդ կոնֆլիկտներից: Երեխան զգում է ծնողների աջակցության և ոչ թե պասիվ դիտողական գործողությունների կարիք: <<Ճգնաժամային ախտանիշները որոշակի իրավիճակներում ի հայտ եկող հակազդումներն են, որոնք բացի իրենց արտաքին վարքային դրսևորումներից, ունեն նաև ներքին տրամաբանություն, որոշակի ապրումների, սեփական ես-ի և իրավիճակի յուրահատուկ ընկալման արդյունք են: Բնականաբար, երեխան հենց այնպես չի հայհոյում ծնողին, կամակորություն անում, նեգատիվիզմ դրսևորում, դրանց մոտիվացիոն ասպեկտն էլ հենց ճգնաժամի ներքին բնութագիրը, էությունն է արտացոլում>>¹:

Երեք տարեկանի ճգնաժամի բոլոր համախտանիշները արտացոլում են երեխայի ինքնությունությունը, ցույց են տալիս փոփոխությունները իր զգայական և սոցիալական հարաբերություններում: Ճգնաժամի ճիշտ հաղթահարումը կարևոր է ոչ միայն երեխայի անձնային որակների ձևավորման, այլև աշխարհը ճիշտ սոցիալականացնելու համար:

Карине Хачатрян
Аспирант кафедры педагогики и
психологии АРГУ

СИМПТОМЫ ТРЕХЛЕТНЕГО КРИЗИСА**Резюме**

В возрасте трех лет ребенок очень чувствителен к новым предметам и явлениям, к новому мультфильму или другой интересной вещи, которые избавит от ненужных конфликтов. Ребенок чувствует потребность в родительской поддержке, а не пассивное наблюдательное действие. «Кризисные симптомы – это ответы, которые появляются в определенных ситуациях, за исключением их внешних поведенческих проявлений, имеют внутреннюю логику, являются результатом определенного опыта, личного восприятия и уникального восприятия ситуации. Естественно, ребенок не просто проклинает родителя, упрям и проявляет негативное отношение, а их мотивационный аспект отражает внутренний характер и сущность кризиса.»

Все трехлетние кризисные симптомы отражают автономию ребенка, демонстрируют изменения в его чувственных и социальных отношениях. Правильное преодоление кризиса

¹Խուրդյան Ս. Ս. <<Անձի զարգացման ճգնաժամային տարիքը>>, Երևան <<Զանգակ-97>>, 2004թ. -248

важно не только для формирования личных качеств ребенка, но и для правильной социализации мира.

Karine Khachatryan
Postgraduate of Pedagogy
and Psychology Chair of ArSU

THE SYMPTOMS OF THREE-YEAR-CRISIS

Summary

At the age of three the child is very sensitive to new subjects and phenomena, to a new cartoon or other interesting thing to do with unnecessary conflicts. The feels the need for parental active support and not passive observational action. "Crisis symptoms are the responses that appear in certain situations, except for their external behavioral manifestations, as well as internal logic, as a result of a particular experiences, personality and situation. Naturally, the child does not just blame the parent, is stubborn and displays a negative attitude and their motivation aspect reflects the internal character and essence of the crisis."

All the symptoms of three-year-old-crisis reflect the child's autonomy, demonstrate changes in his sensual and social relationship. The correct overcoming of crisis is important not only for the child's personal qualities, but also for the child's right socialization of the world.

<<Երեք տարեկանի ճգնաժամը սոցիալական հարաբերությունների ճգնաժամ է, իսկ յուրաքանչյուր հարաբերությունների ճգնաժամ ունի սեփական <<ես>>-ի առանձնացման ճգնաժամ>>:

Դ. Բ. Էլկոնին

Տարիքային հոգեբանության մեջ առանձնահատուկ տեղ ունի երեք տարեկանի ճգնաժամի ուսումնասիրման հարցը: Այն չի կարելի համարել ամբողջապես ուսումնասիրված, քանի որ ժամանակի ու հասարակության փոխակերպումներին զուգահեռ փոխվում են նաև երեխայի սոցիալականացման պահանջներն ու պայմանները:

Երեք տարեկանի ճգնաժամը կապված է երեխայի առաջատար գործունեության, զարգացման սոցիալական նոր իրավիճակի, միջանձնային հարաբերությունների հետ: Երեք տարեկանի ճգնաժամը կապվում է նաև այն հանգամանքի հետ, որ երեխան սկսում է հասկանալ և ճանաչել սեփական ներաշխարհը: Նա զգայուն է դառնում իր ԵՄ-ի նկատմամբ, ձգտում է ինքնահաստատվել, ամեն կերպ փորձում է ուշադրության կենտրոնում լինել, մյուս կողմից ձգտում է նմանվել մեծերին:

Ճգնաժամը հիմնականում կապված է երեխայի ինքնագիտակցության հաստատման հետ: Երեխաների մոտ սկսվում են ձևավորվել կամքը, որն Էրիքսոնը անվանել է ավտոնոմիա¹ (ինքնավարություն, անկախություն, ինքնուրույնություն): Երեխաները դադարում են մեծերի կողմից տարվող հոգատարության կարիքը զգալուց և ձգտում են իրենք ընտրություն անեն: Ավտոնոմիայի փոխարեն ամոթի զգացումն ու անվճռականությունը, անվստահությունը, գոյանում են այն ժամանակ, երբ ծնողները սահմանափակում են երեխայի անկախության դրսևորումը, պատժում կամ ծաղրում են երեխայի ինքնուրույնության որոշակի փորձերը:

Երեխայի զարգացման գոտին բաղկացած է <<կարող եմ>> արտահայտության ձեռքբերման հետ, նա պետք է սովորի հարաբերակցել իր <<ես ուզում եմ>>-ը <<ես պետք է>> և <<չի կարելի>> և այս հիմքի վրա որոշի <<ես կարող եմ>>-ը:

Ճգնաժամը սրվում է այն ժամանակ, երբ ծնողը ամեն բան թույլ է տալիս կամ ընդհակառակը, երբ ամեն բան արգելում է: Գործողության այս ասպարեզը արտացոլվում է խաղի մեջ: Խաղը իր հատուկ կանոններով ու նորմերով, որն արտահայտում է սոցիալական

¹ Эриксон Э., Идентичность: юность, кризис. М., 1996, ст.14.

կապերը, երեխայի համար ծառայում է այն <<անվտանգ կղզին, որտեղ նա կարող է զարգացնել և փորձարկել իր անկախությունն ու ինքնուրույնությունը>>¹: <<Ճգնաժամի դրսևորման սրության վրա ազդում են մի շարք գործոններ՝ ընտանեկան լարված մթնոլորտը, երեխայի առանձնահատկությունները, սեռը, ընտանիքում երեխաների թիվը (տղաների և միակ երեխաների մոտ այս երևույթներն ավելի արտահայտված են լինում), սակայն որոշիչն այնուամենայնիվ դաստիարակությունն է>>²:

Առաջինը համախտանիշների վրա մեծ ուշադրություն է դարձրել Լ. Ս. Վիգոտսկին: Այժմ մանրամասն քննարկեք երեք տարեկանի ճգնաժամի համախտանիշները.

ա/ Նեգատիվիզմ. Սա մեծի յուրաքանչյուր պահանջի մերժումն ու հակադրումն է: Նեգատիվ հակադրումը կապված է ոչ թե մեծի կատարած որևէ առաջարկի կամ այն կատարելու և չկատարելու, այլ մեծերի կողմից տրվող բոլոր հրահանգների հետ: <<Երեխայի նեգատիվիզմը խիստ ընտրական է և ուղղված է նրանց դեմ, ովքեր ձգտում են ճնշել իր ազատությունը>>³:

Շատ կարևոր է նեգատիվիզմը անհնազանդությունից հստակ տարրորշելու հանգամանքը: Անհնազանդությունն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ երեխան անում է մի բան, որն իրեն շատ է դուր գալիս, բայց մեծերը նրան արգելում են, այսինքն երբ երեխան չի կատարում մեծի ցուցումը: Անհնազանդության դրդապատճառը երեխայի ուժեղ ցանկությունն է, որը հաճախ կարող է բխվել մեծերի հակադրեցությամբ:

Նեգատիվիզմը ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ երեխան չի ցանկանում անել ինչ-որ բան, որովհետև առաջադրանքը տրվել է որևէ մեծի կողմից: Երեխան ուշադրություն չի դարձնում առաջադրանքին կամ խնդրանքին, այլ ուշադրություն է դարձնում խնդրողին, ինչ էլ որ խնդրի ծնողը, ամեն ինչին <<ոչ>> է պատասխանում: Իսկ եթե երեխային ստիպում են, որ ինչ-որ բան անի, ապա նա անընդհատ հակառակվում է, վեճի մեջ է մտնում: Անհնազանդություն է, երբ, օրինակ, ծնողն ասում է, որ ուտելու ժամն է, բայց երեխան մոլտֆիլմ է նայում և չի ուզում ուտի, այլ ուզում է նայի: Եվ սա ոչ թե մեծին ուղղված բացասական հակադրում է, այլ այդ հակադրումն ուղղված է նրա խնդրանքին: Դրանից բացի, երեխան կարող է նեգատիվ պատասխաններ տալ իր առջև դրված առաջադրանքին, երբ խոսում են հրամայական կամ հեղինակավոր տոնով: Լայն իմաստով նեգատիվիզմ նշանակում է ժխտման ձգտում, անել հակառակը այն ամենին, ինչ նրան են ասում: Երեխան կարող է շատ սոված լինել, կամ էլ շատ ցանկանա հեքիաթ լսել, բայց նա մերժի լոկ այն պատճառով, որ մի որևէ մեծ է նրան ասել:

Նեգատիվիզմի ժամանակ ծնողը պետք է հասկանա, որ երեխայի բացասական կամ հակառակ պահվածքը իր դեմ չի ուղղված, այլ երեխան պարզապես հարմարվում է նոր կյանքի փոփոխ:

բ/ Կամակորություն- Կամակորությունն ուղղված է ոչ թե կոնկրետ մեծահասակի դեմ, այլ վաղ մանկության տարիներին հաստատված հարաբերությունների ողջ համակարգի և ընտանիքում ընդունված դաստիարակության նորմերի, կարգ ու կանոնի դեմ: Կամակորությունը պետք է տարբերել համառությունից: Համառությունը ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ երեխան ուզում է ինչ-որ բանով զբաղվի, օրինակ, նկարի, իսկ մայրը կանչում է նրան քնելու:

Կամակորությունը երևում է այն ժամանակ, երբ երեխան պնդում է ինչ-որ բան միայն այն պատճառով, որ նա դա արդեն իսկ պահանջել էր: Կամակորությունը պրակտիկորեն չի դիտարկվում հասակակիցների հետ հարաբերություններում: Այն դիտարկվում է միայն մեծերի հետ հարաբերություններում: Օրինակ, երեխան չի ուզում ապուր ուտի ոչ թե նրա համար, որ իրեն դուր չի գալիս, այլ պարզապես որովհետև նա մայրիկի խնդրանքին մի անգամ <<ոչ>> է ասել, և հիմա ուղղակի կրկնում է իր ժխտական պատասխանը: Կամ էլ

¹ Эриксон Э., Идентичность: юность, кризис. М., 1996, ст.14.

² Խուրդյան Ս., հ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյան, հոգեբան Սկզբնաղբյուր. Առողջապահություն 01.2009

³ Թովմասյան Ա. Վ., <<Մանկան հոգեբանության մի քանի հարցեր կամ ինչպես են <<փիլիսոփայում երեխաները>>, <<Դիզակ պլյուս>> հրատ., ք. Ստեփանակերտ 2011թ. -136 էջ

երբեմն երեխան սկսում է ինչ-որ բան պահանջել ոչ թե այն պատճառով, որ դա շատ է ուզում, այլ միայն ուզում է իմանալ, թե արդյոք հաշվի են առնում իր կարծիքը, այսինքն իրեն ընդունում են որպես ընտանիքի լիիրավ անդամ, թե ոչ:

Կան երկու պահեր, որտեղ կամակորությունը տարբերվում է համառությունից: Առաջին պահն ունի հարաբերության դրդապատճառ: Եթե երեխան պնդում է, որ կատարեն իր ուզածը, դա կամակորություն չէ: Օրինակ, նա սիրում է սահնակ քշել և դրա համար նա ամբողջ օրը ուզում է դրսում լինել:

Երկրորդ պահը. եթե նեգատիվիզմի համար բնորոշ է սոցիալական մղումը, այսինքն երեխան անում է ճիշտ հակառակն այն ամենին, ինչ մեծերն են ասում, ապա այստեղ կամակորության դեպքում բնորոշ է սեփական <<ես>>-ի հարաբերության մղումը: Չի կարելի ասել, որ երեխան աֆեկտիվ վիճակից անցնում է մյուսին, ոչ, նա դա անում է, որովհետև նա այդպես ասել է, նա դրա վրա էլ կանգնում է: Կամակորության դեպքում պետք չէ գոռալ կամ ամոթանք տալ երեխային, ավելի լավ է նրան շեղել խնդրից, իսկ երբ հանգստանա, բացատրեք նրա վատ արարքը կամ սխալը:

գ/ Ինքնակամություն և քմահաճությունն (չմահավանություն). «Ես» համակարգի ձևավորման հետ կապված դրսևորվում է ինքնուրույնության տենդենց: Ինքնակամությունը երևում է այն ժամանակ, երբ երեխան ցույց է տալիս իր ինքնությունությունը և ասում է. <<Ես ինքս>>: Այն երեխային ինքնուրույն և ինքնակամ է դարձնում:

Անցյալում այդպես չի եղել, իսկ հիմա երեխան ուզում է ամեն ինչ ինքն անի: Ինքնակամություն դրսևորվում է այն ժամանակ, երբ երեխան ուզում է ամեն ինչ ինքնուրույն անի, անգամ եթե նա ոչինչ չի կարողանում: Սկզբունքորեն դա դրական երևույթ է, սակայն երեխայի՝ ամեն ինչ ինքնուրույն անելու ձգտումը հաճախ աղեկվատ չէ նրա հնարավորություններին, որն էլ ավելորդ կոնֆլիկտների պատճառ կարող է դառնալ:

Երեք տարեկանը ինքնուրույնության զարգացման տարիք է, և նա առաջին անգամ հասկանում է, թե <<ինչ է նշանակում ինչ եմ ես ինձանից ներկայացնում և նշանակում այս աշխարհում>>: Պատահակն չէ, որ Դ. Բ. Էլկոնինը երեք տարեկանի ճգնաժամն անվանել է <<ինքնուրույնության և մեծերից ազատության ճգնաժամ>>¹: Իհարկե ազատության ճանապարհը բացթողման ճանապարհ չէ: Պետք է որոշվեն այն սահմանները, որտեղից երեխան չի կարող դուրս գալ: Օրինակ, չի կարելի խաղալ մեքենայի ճանապարհին, չի կարելի չքնել ցերեկը, չի կարելի զբոսնել առանց գլխարկի ցուրտ եղանակին, և այլն: Պետք է պահել այս սահմանները ամեն իրավիճակում, իսկ շատ բաներում թողեք երեխան ընտրի:

Այս համախոսանիշը շատ հազվադեպ է նկատվում այն ընտանիքներում, որտեղ կա մեկ երեխա, քանի որ նա պահանջում է ինքնուրույնություն խնամակալության նորմերի ու ձևերի շրջանակներում, որոնք եղել են վաղ հասակում: Այս բոլոր հատկությունները բացատրվում են նրանով, որ երեխան սկսում է գիտակցել իրեն որպես անձ:

դ/ Բողոք –կռիվ (բունտ). Այս համախոսանիշը երկրորդական նշանակություն ունի և դրսևորվում է այն ժամանակ, երբ երեխան մշտական կոնֆլիկտների մեջ է մտնում շրջապատողների և հատկապես իր ծնողների հետ տարբեր հարցերի շուրջ, նա ամեն ինչից բողոքում է, նրան ոչինչ չի գոհացնում, նրա ամբողջ վարքագիծը ձեռք է բերում նեգատիվ, բացասական գծեր, և ինչպես նշել է Լ. Ս. Վիգոտսկին. <<կարծես թե երեխան շատ հաճախ է գտնվում պատերազմական իրավիճակում իրեն շրջապատող մարդկանց հետ, նա մշտապես գտնվում է կոնֆլիկտների մեջ>>²: Ծնողների և շրջապատողների հետ հաճախակի կոնֆլիկտները դառնում են սովորական երևույթ:

ե/ Արժեզրկում. Այս տարիքի հետաքրքիր համախոսանիշ է արժեզրկումը, երեխան արժեզրկում է այն ամենը, ինչը նախկինում հետաքրքիր, հարազատ և թանկ էր իր համար, սիրելի խաղալիքները այս տարիքում ատելի են դառնում, ընտանիքի հոգատար անդամները՝ անտանելի ու չար:

¹ Эльконин Д. Б., “Детская психология” М.: Академия, 2007. — 384 с.

² Выготский Л.С., “Психология развития ребенка”, Издательство: СМЫСЛ, М. 2005, ст.284.

Երեխան կարող է վիճել, վատ խոսքեր ասել կամ պատռել գիրքը, նա կարող է կծել, ծեծել, նետել տարբեր առարկաներ և թերագնահատել մեծերին, նա կարող է շատ հանգիստ կերպով իր սիրելի խաղալիքը կոտրել, կամ էլ ընդհանրապես չուզենա գնդակով խաղալ, կամ լողանալ և այլն, այսինքն արժեզրկել այն ամենը, ինչը նրա համար թանկ էր կամ ինչի հետ նա կապված էր: Երեխան փորձում է արժեզրկել իր խաղալիքը, հրաժարվել դրանցից և իր բառապաշարում ի հայտ են գալիս շատ վատ և բացասական բառեր և բառակապակցություններ, և այս ամենը վերաբերում է այն ամենին, որոնք իրականում բոլորովին ոչ մի տիպաբանություն չեն ներկայացնում: Այս երևույթները կարող են պատահել անգամ համերաշխ ու հանգիստ ընտանիքներում, օրինակ ինչպես նկարագրել է գերմանացի հոգեբան Շ. Բյուլերը այն օրինակելի ընտանիքի մասին, երբ երեխան հերթական կոնֆլիկտի ժամանակ մորն ասել է <<հիմար>>¹, երբ նախկինում նման վարք չէր կարող դրսևորել:

զ/ Բռնակալություն. (դեսպոտիզմ). Այս համախտանիշը անվանում են երկակի ախտանիշ, քանի որ այն տարբեր ընտանիքներում տարբեր կերպ է ընթանում, եթե ընտանիքում կա մեկ երեխա, այն դրսևորվում է որպես դեսպոտիզմի իշխանության ձևով. ընտանիքի բոլոր անդամները պետք է անեն այն, ինչ ինքն է ցանկանում, նա ինքն է թելադրում տան նորմերը, կարգ ու կանոնները, ընտանիքի որ անդամը ինչ անի և երբ, օրինակ, երեխային դուր չի գալիս, որ մայրը նստած է բազկաթոռին, այլ ոչ թե բազմոցին: Նա պահանջում է, որ մայրը տեղափոխվի, դրա համար հիստերիկ լացում է, երբ իր ցանկությունը չի կատարվում: Այս դեպքում մենք տեսնում ենք, որ երեխան վաղ հասակում արտաքին աշխարհը ընկալում է իր ես-ի պրիզմայով: Կամ էլ մայրը չպետք է տնից դուրս գա, նա պետք է նստի տանը իր կողքին ու նկարի իր հետ: Նա ուտում է այն, ինչ ուզում է, այլ ոչ թե ինչ սեղանին է դրված: Երեխան փնտրում է տասնյակ միջոցներ, որպեսզի իշխանություն դրսևորի իր ընտանիքում: Նա փորձում է իրագործել իր բոլոր ցանկությունները և լինել իրավիճակի տերը:

Իսկ բազմազավակ ընտանիքներում այս համախտանիշը անվանում ենք խանդի համախտանիշ մեծ կամ փոքր երեխայի հանդեպ: Այստեղ ևս նույն մղումն է, նույն դեսպոտիկ իշխանությունն է խանդի դրսևորումներով ընտանիքի այլ երեխաների հանդեպ: Երեքամյա երեխայի դիտանկյունով նրա քույրն ու եղբայրը ընդհանրապես ոչ մի իրավունք չունեն իրենց ընտանիքում:

Է/ Համառություն. Սա երեխայի ինչ-որ բան պնդելու հակագղումն է, որով ավելի շատ ոչ թե պնդում է իր ցանկությունը, այլ պահանջում մեծահասակներից, որ իր կարծիքը հաշվի առնեն:

Համառությունը նեգատիվիզմից տարբերվում է նրանով, որ այն անհատական է: Նեգատիվիզմը միշտ ուղղված է ընդդեմ մեծի, որն այդ պահին երեխային դրդում է կատարելու այս կամ այն գործողությունը: Իսկ համառությունն ավելի շուտ ուղղված է ընդդեմ կենսակերպին, ընդդեմ դաստիարակության մեթոդներին, որոնք հաստատված են երեխայի համար: Այն արտահայտվում է մանկական յուրատեսակ դժգոհությամբ այն ամենին, ինչին երեխան արձագանքում է, ինչը նրան առաջարկում են կամ անում: Այստեղ դրսևորվում է համառ վարք ոչ թե ընդդեմ անձի, այլ ընդդեմ ամբողջ կենսակերպի, որոնք գումարվել էին մինչև երեք տարեկանը:

Համառությունը կամակորությունից տարբերվում է նրանով, որ այն ուղղված է ընդդեմ արտաքին աշխարհի և ձգտում է կատարել սեփական ցանկությունները: Մինչև երեք տարեկանը երեխան եղել է հնազանդ, քնքուշ, նրան տարել են զբոսանքի ձեռքից բռնած, և հանկարծ նա դարձել է մի համառ էակ, որն ամեն ինչից դժգոհում է: Այն քնքուշ, նուրբ, հնազանդ երեխայի հակառակ պատկերն է, նա անդադար հակառակվում է այն ամենին, ինչ իր հետ անում են:

¹ Шарлотта Бюлер (в соавторстве с Фредом Масариком издаёт книгу: Жизненный путь человека / The Course of Human Life: A Study of Goals in the Humanistic Perspective / ed. by C.Buhler, F.Massarik. N.Y., 1968.

Չպետք է վախենալ ճգնաժամից: Յուրաքանչյուր երեխա պետք է այն հաղթահարի, քանի որ տեղի է ունենում անձի ինքնահաստատում ու կայունացում: Ծնողները պետք է հասկանան, որ երեխայի անձն է ձևավորվում, այդ անձին չի կարելի կոտրել, նվաստացնել, հակառակ դեպքում կունենան անկենսունակ երեխա: Պետք է նրան վերաբերել որպես լիարժեք անձի, խրախուսել նրա լավ արարքները, իսկ վատերի համար չծեծել, այլ բացատրել և վստահություն հայտնել, որ էլ չի կրկնվի նրա սխալը:

Ըստ հոգեբաններ Ա. Լեոնտևի և Դ. Էլկոնինի, ճգնաժամերին բնորոշ են մեծահասակների հետ շփվելու ձևերի և երեխաների ունեցած հոգեկան հնարավորությունների միջև եղած հակասությունները:

Երեք տարեկանի ճգնաժամը կապված է այն հանգամանքի հետ, որ երեխան սկսում է հասկանալ և ճանաչել սեփական ներաշխարհը: Դա հենց այն տարիքն է, որի մասին հայտնի ամերիկացի հոգեբան Էրիքսոնն ասում է. <<սկսվում է ձևավորվել կամքը, և դրա հետ կապված հատկությունները անկախությունը, ինքնուրույնությունը>>¹:

Օգտագործված գրականության ցանկ

1. Թովմասյան Ա. Վ., <<Մանկան հոգեբանության մի քանի հարցեր կամ ինչպես են <<փիլիսոփայում>> երեխաները, <<Դիզակ պլյուս>> հրատ., ք. Ստեփանակերտ 2011թ. -136 էջ
2. Խուրդյան Ս. Ս., հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիրինա Առաքելյան <<Երեք տարեկանի ճգնաժամը>> հոգեբան Սկզբնաղբյուր. Առողջապահություն 01.2009
3. Խուրդյան Ս. Ս., <<Անձի զարգացման ճգնաժամային տարիքը>>, Երևան <<Զանգակ-97>>, 2004թ. -248
4. Выготский Л.С., “Психология развития ребенка”, Издательство: Смысл, М. 2005,ст.284.
5. Кулагина И.Ю., Колюцкий В.Н.Возрастная психология: Полный жизненный цикл развития человека. Учебное пособие для студентов высших учебных заведений. - М.: ТЦ «Сфера», 2001.-464с.
6. Шарлотта Б., (в соавторстве с Фредом Масариком издаёт книгу: Жизненный путь человека / The Course of Human Life: A Study of Goals in the Humanistic Perspective / ed. by C.Buhler, F.Massarik. N.Y., 1968.
7. Эльконин Д. Б., “Детская психология” М.: Академия, 2007. — 384 с.
8. Эриксон Э., Идентичность: юность, кризис. М., 1996,ст.14,233.

¹ Эриксон Э., Идентичность: юность, кризис. М., 1996,ст.233.

ՀՏՂ376(479.243)

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ

Մարսետա Խաչատրյան
ԱրՊՀ, Մանկավարժության և հոգեբանության ամբիոն,
Մանկավարժություն և մեթոդիկա 4-րդ կուրս
E-mail- marseta1996@gmail.com
Ղեկավար- Մ.գ.թ. դոցենտ Ա.Աբալյան

Բանալի բառեր - ներառական կրթություն, հիմնախնդիր, ուսուցում, առանձնահատուկ պայմաններ, հատուկ մանկավարժ, վերապատրաստում, արատ, ուսուցիչ, բազմամասնագիտական թիմ:

Ключевые слова - инклюзивное образование, знания, проблема, основная проблема, обучение, особые условия, специальный педагог, учебные курсы, дефект, учитель, многопрофильная, команда проблема инклюзивного образования.

Key words - inclusive education, problem, study, special education, special conditions, training, teacher, special teacher, blemishes, multidisciplinary group.

Ամփոփում

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք՝ անկախ առողջական և սցիալական խնդիրների պատճառով առաջացած խնդիրներից:

Ուսումնասիրության արդյունքում հանգեցինք այն եզրահանգմանը, որ կրթությունը բոլորի համար է: ԿԱՊԿՈՒ երեխաները կարող են անել ավելին, քան մենք պատկերացում ենք: Նրանք մեր հասարակության լիիրավ անդամ են:

Резюме

В статье рассматриваются вопросы инклюзивного образования в Арцахе. поскольку каждый человек имеет право на образование, независимо от его здоровья и социальных проблем. В результате исследования мы пришли к выводу, что все имеют право на образование. Дети имеющие особые потребности в образовании могут делать больше, чем мы можем себе представить. Они являются полноправными членами нашего общества.

Summary

Everyone has the right of education, regardless of health and social problems.

As a result of the study we came to the conclusion that education is for everyone. Children with special educational needs can do more than we imagine. They are full members of our society.

Ներառական կրթությունը մի համակարգ է, որը հենվում է բոլոր երեխաների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և սոցիալապես սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց կրթություն ստանալու իրավունքի վրա: Հասարակության մեջ ապրում և իրենց կենսագործունեությունն են ծավալում բազմաթիվ մարդիկ, ովքեր ունեն ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական ոլորտների երկարաժամկետ կամ կայուն սահմանափակումներ: Մեր հայրենակիցների լիարժեք կենսագործունեության ապահովման նպատակով ԼՂՀ-ն ստեղծել և անընդհատ փորձում է կատարելա-գործել մեր երկրի լիիրավ քաղաքացիների ազատ գործունեությունը կանոնակարգող ոչ միայն օրենսդրական փաստաթղթեր, այլև ազատ տեղաշարժվելու, հասարակական ծառայություններից օգտվելու, կրթություն ստանալու ժամանակակից պայմաններ և այլն: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում է առանձնահատուկ կարիքներով յուրաքանչյուր մարդու (երեխայի) կրթության իրավունքի իրացումը: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ հանրակրթական հաստատությունների բոլոր

աշխատակիցները, հատկապես ուսուցիչները, ծա-նոթ լինեն մտավոր և ֆիզիկական տարաբնույթ խնդիրներ ունեցող երեխաների ֆիզիոլոգիա-կան, հոգեբանական, մտավոր գործունեության և այլ առանձնահատկություններին: Նրանք պետք է կարողանան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի ուսումնառությունը կազմակերպելու գուցահեռ նաև իրականացնել համապատասխան շտկողական և զարգացնող աշխատանքներ:

Սահմանելով կարող ենք ասել, որ ներառական կրթությունը ԿԱՊԿՈՒ անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումը հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ: Կարևոր է նրանց ինտեգրումը հասարակական կյանքին: Ներկայումս ԼՂ Ներառումն՝ այսօրվա ըմբռնմամբ, ծագում է հատուկ կրթությունից: Հիմնախնդրի էությունն այն է, որ վերջին տարիներին կասկածի տակ է դրվել առանձնացված կրթական համակարգերի նպատակահարմարությունը՝ ինչպես մարդու

իրավունքների, այնպես էլ ուսումնական գործունեության արդյունավետության տեսանկյուններից:

Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում:

Ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ ուսումնառության տարբեր մակարդակներում երեխաների հետ աշխատելիս ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար:

Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուրն էլ գիտակցի ներառական կրթության կարևորությունն ու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համարի հասարակության կարևոր մասը: Ներառական կրթության հարցը արդի ժամանակների կրթության ամենակարևոր կետերից մեկն է, ուստի պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն երեխաներին, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման թեման շատ արդիական է, քանի որ մեր կողքին ապրում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, որոնք ունեն մեծ ուշադրության ու հետևողական խնամքի կարիք: Ինչպես մենք այնպես էլ նրանք ունեն կրթություն ստանալու իրավունք:

Մեր նպատակն է մարդկանց մեջ արմատավորել այն միտքը, որ պետք չէ խտրականություն դնել առողջ երեխայի և ԿԱՊԿՈՒ երեխայի միջև:

Նրանք կարող են անել ավելին, քան մենք կարծում ենք:

Ուսումնասիրության առարկան Արցախի դպրոցներում ուսուցման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության հիմնախնդիրների բացահայտումը և խնդիրների լուծման համար երաշխավորությունների մշակումն է:

Բոլոր երեխաներն էլ կարող են սովորել, պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար: Դպրոցում երեխաներին առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաներին պետք է կրթությունը, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել և պատրաստվել շփմանը հասարակության մեջ: Միայն ներառական մոտեցումը կարողն է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության հարգանքի և փոխըմբռնման հաստատմանը: Ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հատուկ կարիքներ ունեցողներին, այնպես էլ չունեցողներին: Այն նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ, որոնք անցյալում անհնար էին: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնավորված է:

Մենք պետք է կարողանանք մեր մեջ ամրապնդել այն միտքը, որ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները, ինչպես սովորական երեխաները ունեն կրթություն ստանալու հավասար իրավունքներ: Նրանք շատ կարևոր օղակ են մեր հասարակության համար: Պետք է շատ ուշադիր լինել նրանց նկատմամբ: Փոխելով դպրոցում, տանը, բակում և առհասարակ հասարակության մեջ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ ունեցած վերաբերմունքը մենք կկարողանանք նպաստել նրան, որ նման երեխաները կկարողանան դրսևորել իրենց անհատականությունը, ներկայանալ յուրովի:

Մասնագիտական կրթության նշանակությունը ներառական կրթության արդյունավետության բարձրացման համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության կազմակերպման բնագավառի մասնագետների պատրաստումն իրականացվում է միջին մասնագիտական, բարձրագույն կրթական ուսումնական հաստատություններում և լրացիչ կրթության դպրոցներում: Ուսուցիչներն օգտագործում են ուսումնական պլանը, որպես, գործիք, որի օգնությամբ նրանք փորձում են սովորեցնել աշակերտներին այնպիսի բաներ, որոնք կյանքում պետք են գալու: Ուսուցիչներն հաշվի են առնում այն փաստը, որ բոլոր աշակերտները չեն կարող միաժամանակ յուրացնել ծրագրի բոլոր բաղադրամասերը, աշակերտի անհատական առանձնահատկությունները, որպեսզի նյութն առավելագույն չափով հասկանալի դարձնել: Սահմանափակ հնարավորությունը ևս առանձնահատկություն է, և այն հարցը, թե ինչպես ինչպես ուսուցանել հենց արդ երեխաներին պետք է պահանջի շատ լուրջ մոտեցում: Կարևոր են հետևյալ խնդիրների ճիշտ հանգուցալուծումը.

1. Ուսուցիչների համագործակցություն: Ոչ մի մանկավարժ չի կարող լավ սովորեցնել իր ներառական աշակերտներին, եթե չստանա գործընկերների օգնությունն ու խորհուրդները:

2. Ծրագրերի հարմարեցում աշակերտների անհատական առանձնահատկություններով պայմանավորված կարողություններին: Ուսուցիչներն օգտագործում են տարբեր մոտեցումներ տարբեր պահանջմունքներով, նախասիրություններով երեխաներին ուսուցանելու համար:

3. Հավասար հնարավորությունների ընձեռում: Լավ մանկավարժը պետք է համոզի, որ բոլոր աշակերտներն ունեն տեղեկատվությունից, գիտելիքներից ու հմտությունից օգտվելու հավասար հնարավորություն:

4. Հավատ աշակերտների նկատմամբ: Մանկավարժը պետք է հավատա իր աշակերտների հաջողություններին՝ անկախ նրանց առանձնահատկություններից, պետք է բարձր ակնկալիքներ ունենալ:

Ներառական մոտեցման դեպքում շահում են բոլոր աշակերտները, քանի որ այն կրթությունը դարձնում է ավելի անհատականացված: Երբ մանկավարժը պլանավորում է դասը՝ օգտագործելով որևէ ռազմավարություն, նա չպետք է իջեցնի նշաձողը. նա պետք է հաշվի առնի իր բոլոր աշակերտների առանձնահատկությունները:

2. Ուսուցիչների նախապատրաստումը:

Վերապատրաստման դասընթացներում մասնակցող ուսուցիչները սոցիալական մանկավարժներ են, հոգեբաններ և հատուկ մանկավարժներ: Նրանք աշխատում են տվյալ դպրոցում այն մանկավարժների ու ղեկավարների հետ, որոնց մոտ սովորում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

Այդ թիմը (սոցիալական մանկավարժ, հատուկ մանկավարժ, հոգեբան և լոգոպետ): Նրանց շուրջ հավաքվում են դասավանդող ուսուցիչը, ծնողը, բուժաշխատողը և բոլոր այն մարդիկ, ովքեր աշխատում են նման երեխաների հետ: Հետազոտությունները ցույց են տվել, որ 9-րդ հիմնական դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գիտելիքների գնահատման, կարողությունների սահմանը և ճիշտ է կատարվում նրանց հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքը և երեխաները հաստատ ձեռք են բերում այնքան գիտելիք, որքան ունակ են: Դասարանում, որտեղ սովորում են դպրոցի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները չկան այն

պայմանները, որոնք անհրաժեշտ են նման երեխաներին: Ուսուցիչները ամեն ինչ պատրաստում են սեփական ձեռքերով՝ սկսած խաղային քարտերից մինչև ուսուցողական թերթիկները:

Ուսուցիչները պետք է իմանան գիտելիքներ ստանան հաշմանդամության ասպարեզից, որպեսզի նրանց վերաբերմունքը և աշխատանքի մեթոդները չխանգարեն հատուկ կարիքներով երեխաներին ուսումնական պլանի նկատմամբ հավասար մատչելիություն ապահովելուն: Նման ուսուցումը պետք է լինի մշտական կարճ դասընթացների ձևով և անցկացնի տեղական կրթական միջավայրում՝ ցանկալի է նրանց սեփական դպրոցում: Այն անհրաժեշտ է անցնել նախքան դպրոցում աշխատանք սկսելը, և արդեն մանկավարժական գործունեության ընթացքում:

Երեխաներն իրենցից ներկայացնում են կրթության մեջ արժեքավոր ռեսուրս: Նրանք հաճախ ավելի հանդուրժող են հաշմանդամության նկատմամբ, քան իրենց ուսուցիչներն ու ծնողները: Երեխային մոտեցումը շատ արդյունավետ միջոց է երեխաների մասնկացությունը համախմբվելու համար:

Արցախում ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կարևոր խնդիրներից է մասնագետների վերապատրաստման հարցը: Կան դպրոցներ, որտեղ աշխատում են ոչ մասնագետներ և չունեն համապատասխան կրթություն՝ չգիտակցելով, որ իրենցից է կախված երեխաների ճակատագիրը: Մասնագետները պետք է վերապատրաստվեն բարձրագույն ուսումնական հաստատություններում, բայց մենք չունենք այնպիսի մասնագիտական թիմ, որը զբաղվում է մասնագետների պատրաստման գործով, ինչից կախված է ԿԱՊԿՈՒ անձանց արդյունավետ կրթություն ստանալու հնարավորությունը: Ինչպես նշում է Գնահատման և թեստառման կենտրոնը շրջաններում չկան բազմամասնագիտական թիմեր այլ գործում են շրջիկ թիմեր, որոնք

պարբերաբար շրջում և գնահատում են շրջաններում ԿԱՊԿՈՒ անձանց քանակը, հիվանդության աստիճանն ու ներառումը հասարակական կյանքին:

Պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն տարրական պայմանների, որոնք նույնպես շատ կարևոր են: Փողոցային մայթերում անհրաժեշտ է ավելի շատ կառուցել հաշմանդամների

տեղաշարժման համար նախատեսված հատվածներից: Երթուղային տրանսպորտում նույնպես չկան այնպիսի հարմարություններ, որոնք թույլ կտան ԿԱՊԿՈՒ անձանց ազատ տեղաշարժվել:

Ստեղծելով նրանց համար թեկուզ չնչին բարենպաստ պայմաններ, մենք կկարողանաք ինչ-որ չափով մեղմացնել այն դժվարությունների քանակը, որոնց միջով նրանք անցնում են ամեն օր:

Պետք է նշել, որ հաշմանդամությունն ու աղքատությունը սերտերեն փոխկապակցված են: Աղքատ երեխաներից դժվար է ակնկալել ակտիվ միջամտություն և աջակցություն. նրանց մեջ առավել շատ են զարգացման խանգարումները: Հաշմանդամ երեխաներ ունեցող ընտանիքները տարբեր պատճառներով տեղաշարժման, աշխատանքի, երեխայի խնամքի հետ կապված խնդիրներ և այլն ավելի մեծ հավանաանությամբ կարող են հայտնվել աղքատության եզրին: Որքան աղքատ է ընտանիքը, այնքան մեծ է հասարակությունից նրա անդամների օտարման հավանականությունը: Կրթությունը տալիս է գործնական հմտություններ և գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են նաև աղքատության արատավոր շրջանը խզելու համար: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև աղքատ ընտանիքների երեխաներին ու մեծահասակներին, ներառական կրթությունը հնարավորություն է տալիս դիմակայել նախապաշարմունքներին, օգնում է նրանց դուրս գալուն սովորից, սեփական տեսակետն արտահայտելիս լինել ավելի ինքնավստահ, կառուցել սեփական ապագան և դառնալ հասարակությամբ և լիիրավ անդամ:

• Բոլորներն էլ կարող են սովորել, պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար: Դպրոցում երեխաներին առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից:

• Բոլոր երեխաներին պետք է կրթությունը, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատել և պատրաստվել շփմանը հասարակության մեջ: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության հարգանքի և փոխըմբռնման հաստատմանը: Ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ՝ սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հատուկ կարիքներ ունեցողներին, այնպես էլ չունեցողներին: Այն նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ, որոնք անցյալում անհնար էին:

• Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնավորված է:

• Վերագնահատման արդյունքում պարզվել է, որ տնային ուսուցում ստացող երեխաների հետ աշխատանքները չեն տարվում ըստ բժշկահոգեբանամանկավարժական եզրակացության և երեխաների կրթական կարիքի: Հետևաբար հիմնականում երեխաների զարգամացման

հետընթաց է արձանագրվել: Սա նույնպես շատ կարևոր խնդիր է համարվում տնային ուսուցում ստացող երեխաների համար

Ոսումնասիրության արդյունքում մենք մեր մեջ կարողացանք ամրապնդել այն միտքը, որ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները, ինչպես սովորական

երեխաները ունեն կրթություն ստանալու հավասար իրավունքներ: Նրանք շատ կարևոր օղակ են մեր հասարակության համար: Պետք է շատ ուշադիր լինել նրանց նկատմամբ: Փոխելով դպրոցում, տանը, բակում և առհասարակ հասարակության մեջ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ ունեցած վերաբերմունքը մենք կկարողանանք նպաստել նրան, որ նման երեխաները կկարողանան դրսևորել իրենց անհատականությունը, ներկայանալ յուրովի:

Նման երեխաները ճանաչում են շրջապատը լսելով այն, ինչ ասում են մարդիկ:

Խիստ կարևոր է հատուկ կարիքներով երեխաների, երիտասարդության և մեծահասակների ներգրավմանը քաղաքականության և գործնական հանձնարարականների մշակման համար:

Անհրաժեշտ է գործի դնել հատուկ կարիքներով երեխաների և երիտասարդ մարդկանց ոչ մեծ խմբեր և օգնել նրանց արտահայտելու իրենց գերակայությունն ու պահանջմունքները: Սա դեպի երեխան կոմնորոշված ու երեխաների առօրյա կյանքում առավել օգտակար կրթության ստեղծման ճանապարհին առաջին քայլն է: Նրանց մասնակցությունը հաճախ կարող է ներառական միջոցառումների մշակման արագացուցիչ ծառայել:

Նրանց գիտելիքներն ու իրավունքները պետք է հաշվի առնել բոլոր մակարդակներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. www.aniedu.am :
2. www.edu.am:
3. Հարությունյան Մ. Ռ., ՀՀ ներառական կրթություն իրականացնող դպրոցների փորձը, ուսուցչի դերը և համակարգում առկա խնդիրների ամփոփումը: Գիտամեթոդական հանդես <<Հատուկ կրթության հիմնախնդիրները>>, 2014թ. 192 էջ:
4. Ավագյան Ա. Վ. Ներառական կրթության արդի խնդիրները Հայաստանում, Գիտամեթոդական հանդես <<Հատուկ կրթության հիմնախնդիրները>>, 2010թ.:
5. Կրթության Հատուկ Կարիքների Գործունեության Կառուցվածք, ՅՈՒՆԵՍԿՕ :
6. Ռ. Ն. Ագարյանի, Ա. Վ. Ավագյան <<Հատուկ մանկավարժություն>> 436 էջ :
7. Թադևոսյան Ս., Բախշյան Ա., <<Ներառական կրթություն >> ուսումնա մեթոդական ուղեցույց, Երևան, <Զանգակ>> 2018թ. 210 է

ՀՏԴ37.02

**ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԼԳՈՐԻԹՄԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Եվա Հովհաննիսյան
ԱրՊՀ, Մանկավարժության և սպորտի ֆակուլտետի
Մանկավարժություն և մեթոդիկա բաժնի 3-րդ կուրս
E-mail: evahovhannisyan8@gmail.com, Tel. +374 97 199871
գիտական ղեկավար՝ Լիլիթ Ռաֆայելի Առաքելյան
ԱրՊՀ, Մաթեմատիկայի ամբիոնի ավագ դասախոս:
E-mail: lilit.rafael@yandex.com, Tel. +374 97 247492

Բանալի բառեր՝ ալգորիթմ, ալգորիթմական մտածողություն, կրտսեր դպրոցական, փակ համակարգ, բաց համակարգ, աղյուսակ, դիտողական նկարագրություն, համառոտ նկարագրություն:

Ключевые слова: алгоритм, алгоритмическое мышление, младший школьник, закрытая система, открытая система, таблица, наглядное описание, краткое описание.

Key words: algorithm, algorithmic thinking, junior school, closed system, open system, table, observational description, brief description.

Ամփոփում

Աշխատանքը նվիրված է մաթեմատիկայի դասերին ալգորիթմական մտածողության զարգացմանը կրտսեր դպրոցականների մոտ: Հիմնավորված է մտածողության այդ տեսակի զարգացման արդիականությունը և նպատակահարմարությունը: Աշխատանքում դիտարկվում են մի շարք տրամաբանական խնդիրների լուծման ալգորիթմներ: Այդ լուծումները հարմար է գրառել աղյուսակների օգնությամբ: Կիրառվել են խնդիրների աղյուսակային լուծման ինչպես համառոտ, այնպես էլ ընդարձակ գրառումները:

**РАЗВИТИЕ АЛГОРИТМИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ
МАТЕМАТИКИ В МЛАДШИХ КЛАССАХ**

Резюме

Работа посвящена развитию алгоритмического мышления младших школьников на уроках математики. Обоснована актуальность и целесообразность такого вида мышления. В работе рассмотрены алгоритмы решения ряда логических задач. Эти решения удобно записывать с помощью таблиц. Применена как краткая, так и расширенная запись табличных решений задач.

**DEVELOPMENT OF ALGORITHMIC THINKING FOR TEACHING MATHEMATICS AT
PRIMARY SCHOOL**

Summary

The work is dedicated to the development of algorithmic thinking in mathematic lessons with junior schoolchildren. The modernization and advisability of this type of thinking is based. A number of logical sums doing algorithms are observed in the work, the solutions of which are suitable for writing using tables. Both brief and wide-ranging records have been used for tabular doing of sums.

Հասարակության զարգացման ներկա փուլում, երբ նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ են ներդրում մարդու գործունեության բոլոր ոլորտներում, առավել

կարևորություն է ստանում սովորողների ալգորիթմական մտածողության զարգացումը: Որպեսզի ապագայում դպրոցականը կարողանա ոչ միայն ձեռք բերել գիտելիքներ, այլև լուծել կյանքում իր առջև ծագած մի շարք խնդիրներ, նա պետք է սովորի ալգորիթմորեն մտածել: Ալգորիթմորեն մտածելու ունակությունը, լայն իմաստով, տարբեր բնույթի խնդիրների լուծման համար քայլաշարային գործողությունների պլանի մշակման կարողության ձևավորումն է՝ խնդրի լուծման վերջնական և ցանկալի արդյունքին հասնելու նպատակով:

Բնական գիտությունների շրջանում ալգորիթմական մտածողության ձևավորման համար մեծ ներուժ է մաթեմատիկան: Ըստ հոգեբանների, տարրական դպրոցի աշակերտների տարիքը առավել բարենպաստ է ալգորիթմական մտածողության բաղադրիչների զարգացման համար, պայմանով, որ այդ գործընթացը կառուցված է դիտողապատկերային մտածողության հնարավորությունների հիման վրա, որը առաջնային է այդ ժամանակաշրջանում: Մաթեմատիկայի դասընթացում ալգորիթմների կիրառումը հնարավորություն է տալիս բարձրացնել ուսուցման արդյունավետությունը: Ալգորիթմների օգտագործումը հնարավոր է դարձնում աշակերտներին վերահսկողությունից տեղափոխել ինքնավերահսկողության դաշտ:

Մաթեմատիկայի տարրական դասընթացում ներառված խնդիրները, ըստ ալգորիթմների, պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ հաշվողական, երկրաչափական և տրամաբանական: Տրամաբանական խնդիրների լուծումների ալգորիթմների կառուցումը զարգացնում է աշակերտների տրամաբանական մտածողությունը և բացահայտում տրամաբանական ու ալգորիթմական մտածողության կապը:

Դիտարկենք երեք տեսակի խնդիրներ, որոնց լուծման ալգորիթմները հարմար է ներկայացնել աղյուսակի օգնությամբ:

1. Հեղուկը մի տարայից մյուսի մեջ լցնելու վերաբերյալ խնդիրներ

Մի տարայից մյուսի մեջ լցնելու վերաբերյալ խնդիրները օգնում են երեխաներին առանց իրական օբյեկտների վրա հենվելու, գործելու այնպիսի բարդ վերացական հասկացությունների հետ, ինչպիսիք են «տարայի տարողություն», «ծավալի չափման միավորներ», «մաս և ամբողջ», մի քանի տարաների օգնությամբ մոդելավորելու լուծումը: Այս տիպի խնդիրների լուծումը նպաստում է նաև բանավոր տրամաբանական մտածողության ավելի ինտենսիվ ձևավորմանը, որը կապված է հասկացությունների օգտագործման և ձևափոխման հետ:

Դիտարկվում են երկու տիպի խնդիրներ.

1. Փակ համակարգ: Հեղուկի քանակը սահմանափակ է:

Խնդիր 1: 14 և 5 տարողությամբ ամանը լցված է կաթով: Ինչպե՞ս կաթը բաժանել հավասար մասերի՝ ունենալով 8լ և 5լ տարողությամբ ամաններ:

Լուծում: Այս և հաջորդ խնդիրներում քայլերը համարակալված են հոռմեական թվերով:

	I	II	III	IV	V	VI	VII	VIII
14լ	14	9	9	4	4	12	7	7
8լ	0	0	5	5	8	2	2	7
5լ	0	5	0	5	2	0	5	0

2. Բաց համակարգ: Ջրի քանակը անսահմանափակ է:

Խնդիր 2: 3լ և 8լ տարողությամբ տարաներով աղբյուրից ինչպե՞ս լցնել 7լ ջուր:

Լուծում:


	I	II	III	IV	V	VI	VII	VIII
3լ	0	3	0	3	0	2	2	3
8լ	8	5	5	2	2	0	8	7

2. Տեղափոխման վերաբերյալ խնդիրներ

Տեղափոխման վերաբերյալ խնդիրների էությունը կայանում է նրանում, որ դրանց լուծումը ենթադրում է գործողությունների հստակ հաջորդականություն, որը սահմանափակվում է խիստ պայմաններով: Ալգորիթմի աստիճանական, քայլ առ քայլ կատարումը երեխաներին ուսուցանում է գործողությունների հաջորդականության ամբողջականությունը, կազմակերպում է մտավոր գործունեություն: Օբյեկտները աստիճանաբար տեղափոխելու «տաղտկալի», քրտնաջան աշխատանքը սովորեցնում է մտածել հետևողականորեն, վերլուծել յուրաքանչյուր գործողություն, կառուցել վարկածներ:

Խնդիր 3: Հատակին ամրացված են երեք ձողեր և կան տարբեր չափերի երեք օղակներ: Առաջին ձողի վրա օղակները հազգված են այնպես, որ ավելի մեծ օղակի վրա գտնվում է ավելի փոքր չափի օղակ: Օգտագործելով բոլոր երեք ձողերը, օղակները տեղափոխեք մեկ այլ ձող այնպես, որ դրանք դասավորվեն նույն կարգով: Պահպանել հետևյալ կանոնը. չի կարելի մեծ չափի օղակը դնել ավելի փոքր չափի օղակի վրա:

Լուծում:



Խնդրի լուծումը ներկայացված է երկու աղյուսակների միջոցով, որոնցից առաջինը ներկայացնում է խնդրի լուծման դիտողական նկարագրությունը (1, 2 և 3 թվերով նշված են համապատասխան համարի օղակները), իսկ երկրորդը՝ համառոտ նկարագրությունը:

		I	II	III	IV	V	VI	VII
ա	1	-	-	-	-	-	-	-
	2	2	-	-	-	-	-	-
	3	3	3	3	-	1	1	-
բ	-	-	-	-	-	-	-	1
	-	-	-	-	-	-	2	2
	-	1	1	-	3	3	3	3
գ	-	-	-	-	-	-	-	-
	-	-	-	1	1	-	-	-
	-	-	2	2	2	2	-	-

I	II	III	IV	V	VI	VII
ա-բ	ա-գ	բ-գ	ա-բ	գ-ա	գ-բ	ա-բ

Խնդիր 3': Լուծել խնդիր 3-ը՝ պայմանով, որ օղակները թվով չորսն են:

Լուծում: Խնդրի լուծման դիտողական նկարագրությունն է՝

		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	XIII	XIV	XV	XVI	XVII
ա	1	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	2	2	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	3	3	3	3	-	1	1	-	-	-	-	-	1	1	-	-	-	-
	4	4	4	4	4	4	4	4	-	1	1	-	2	2	2	2	-	-
բ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	-	-	-	-	-	-	-	1	1	-	-	-	-	-	-	-	-	-
	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-

	-	-	-	-	-	-	2	2	2	2	-	1	1	-	-	-	-	-
	-	1	1	-	3	3	3	3	3	3	3	3	3	3	-	1	1	-
q	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	2	2
	-	-	-	1	1	-	-	-	-	-	2	2	-	-	3	3	3	3
	-	-	2	2	2	2	-	-	4	4	4	4	4	4	4	4	4	4


Խնդրի լուծման համառոտ նկարագրությունն է՝

I	II	III	IV	V	VI	VII
ա-բ	ա-գ	բ-գ	ա-բ	գ-ա	գ-բ	ա-բ


VIII	IX	X	XI	XII	XIII	XIV	XV	XVI	XVII
ա-գ	բ-ա	բ-գ	ա-բ	գ-ա	բ-ա	բ-գ	ա-բ	ա-գ	բ-գ

Ինչպես տեսնում ենք, խնդրի լուծման առաջին յոթ քայլերը համընկնում են նախորդ խնդրի լուծման հետ:

Խնդիր 4: Կան երեք անոթներ և տարբեր գույնի ու չափի վեց գնդակներ: Դրանցից երեքը սև են՝ մեծ, միջին և փոքր չափերի, երեքը՝ սպիտակ՝ մեծ, միջին և փոքր չափերի: Դրանք լցված են առաջին անոթի մեջ այն հերթականությամբ, ինչպես ցույց է տրված նկար 2-ում: Օգտագործելով երկու դատարկ անոթները բաժանեք գնդակներն ըստ գույնի՝ տեղադրելով դրանք անոթներում ըստ աճման կարգի: Պահպանել հետևյալ կանոնը. չի կարելի մեծ չափի գնդակը դնել ավելի փոքր չափի գնդակի վրա:



նկար 2



նկար 3

Լուծում: Ներկայացնենք միայն խնդրի լուծման համառոտ նկարագրությունը

I	II	III	IV	V	VI	VII
ա-բ	ա-գ	ա-գ	ա-գ	ա-գ	բ-ա	գ-ա

Խնդիր 4': Լուծել խնդիր 4-ը՝ պայմանով, որ գնդակները լցված են անոթի մեջ այնպես, ինչպես ցույց է տրված նկար 3-ում:

Լուծում:

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI
ա-բ	ա-գ	ա-բ	բ-գ	ա-գ	բ-ա	բ-գ	ա-գ	ա-գ	բ-ա	գ-ա

3. Ասույթների և դրանց ժխտումների վերաբերյալ խնդիրներ

Ասույթների և դրանց ժխտումների վերաբերյալ խնդիրների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք պարունակում են բազմաթիվ օբյեկտներ և պայմաններ: Այդ ամենը պատկերելու համար նպատակահարմար է կազմել խնդրի օբյեկտները և պայմանները պարունակող աղյուսակը: Մեկնաբանելով պայմանները տարբեր տեսանկյուններից՝ առաջնորդվելով դեդուկտիվ մտահանգումների կանոններով, ստացվում են նոր տվյալներ, որոնք մտցնելով աղյուսակի մեջ՝ ստանում ենք խնդրի լուծումը: Այս տիպի խնդիրների

լուծումը նպաստում է աշակերտների բազմաթիվ տվյալները որպես մի ամբողջություն տեսնելու, դեղուկտիվ մտահանգումներ կատարելու կարողության ձևավորմանը:

Խնդիր 5: Երեք ընկերներ՝ Արամը, Դավիթը և Կարենը դասավանդում են տարբեր առարկաներ (Քիմիա, Կենսաբանություն և Ֆիզիկա) Ստեփանակերտի, Ասկերանի և Երևանի դպրոցներում: Ո՞ր քաղաքում է ապրում և ի՞նչ առարկա է դասավանդում ընկերներից յուրաքանչյուրը, եթե հայտնի է, որ.

- Արամը չի ապրում Ստեփանակերտում, իսկ Դավիթը՝ Ասկերանում,
- Ստեփանակերտում ապրողը չի դասավանդում «Ֆիզիկա» առարկան,
- Ասկերանում ապրողը դասավանդում է «Քիմիա» առարկան,
- Դավիթը չի դասավանդում «Կենսաբանություն» առարկան:

Լուծում: Խնդիրը լուծելու համար կազմենք խնդրի բոլոր օբյեկտները պարունակող աղյուսակը:

Ստեփանակերտ	Ասկերան	Երևան		Քիմիա	Կենսաբանություն	Ֆիզիկա
			Արամ			
			Դավիթ			
			Կարեն			

I քայլ) 1 և 4 պայմաններից հայտնի տվյալները մտցնենք համապատասխան վանդակները՝ ճիշտ (հնարավոր) տարբերակը նշելով «+»-ով, սխալ (անհնարին) տարբերակը՝ «-»-ով:

Ստեփանակերտ	Ասկերան	Երևան		Քիմիա	Կենսաբանություն	Ֆիզիկա
-			Արամ			
	-		Դավիթ		-	
			Կարեն			

Քանի որ տղաներից յուրաքանչյուրը դասավանդում է մի առարկա և ապրում է մի քաղաքում, ապա աղյուսակի աջ և ձախ մասերից յուրաքանչյուրում ամեն մի տողում և ամեն մի սյունակում պետք է լինի միայն մեկ <<+>> նշան:

II քայլ) 3-րդ պայմանից հետևում է, որ Դավիթը չի կարող դասավանդել «Քիմիա» առարկան, քանի որ նա չի ապրում Ասկերանում: Հետևաբար նա կարող է դասավանդել միայն «Ֆիզիկա» առարկան, ինչը չեն կարող Արամն ու Կարենը:

Ստեփանակերտ	Ասկերան	Երևան		Քիմիա	Կենսաբանություն	Ֆիզիկա
-			Արամ			-
	-		Դավիթ	-	-	+
			Կարեն			-

III քայլ) 2-րդ պայմանից հետևում է, որ Դավիթը չի կարող ապրել Ստեփանակերտում, նա կարող է ապրել միայն Երևանում:

Ստեփանակերտ	Ասկերան	Երևան		Քիմիա	Կենսաբանություն	Ֆիզիկա
-			Արամ			-
-	-	+	Դավիթ	-	-	+
			Կարեն			-

IV քայլ) ա) Կարենը ապրում է Ստեփանակերտում, հետևաբար նա չի կարող ապրել Ասկերանում և Երևանում,

բ) Դավիթը ապրում է Երևանում, հետևաբար Արամը չի կարող ապրել այդ քաղաքում, նա կարող է ապրել միայն Ասկերանում և ելնելով 3-րդ պայմանից դասավանդել «Քիմիա» առարկան, ինչը չի կարող Կարենը,

գ) քանի որ Կարենը չի կարող դասավանդել «Քիմիա» և «Ֆիզիկա» առարկաները, ապա նա դասավանդում է «Կենսաբանություն» առարկան:

Ստեփանակերտ	Ասկերան	Երևան		Քիմիա	Կենսաբանություն	Ֆիզիկա
-	+	-	Արամ	+		-
-	-	+	Դավիթ	-	-	+
+	-	-	Կարեն	-	+	-

Աղյուսակը լրացնելուց հետո պարզ է դառնում, որ Արամը ապրում է Ասկերանում և դասավանդում է «Քիմիա» առարկան, Դավիթը ապրում է Երևանում և դասավանդում է «Ֆիզիկա» առարկան, Կարենը ապրում է Ստեփանակերտում և դասավանդում է «Կենսաբանություն» առարկան:

Այսպիսով, մաթեմատիկա սովորելիս անխուսափելի է ալգորիթմների հետ առնչվելը: Շնորհիվ իր ամբողջ համակարգի բացառիկ պարզության և բարձր ճշգրտության, մաթեմատիկան տալիս է անհրաժեշտ նախադրյալներ ալգորիթմական մտածողության զարգացման համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հ.Վ. Գրիգորյան: Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի արդի խնդիրները: Ստեփանակերտ-2014:

2. А.В. Белошистая, В.В. Левитес. Развитие логического и алгоритмического мышления младшего школьника. Начальная школа плюс до и после М., 2014.

ՀՏԴ 479.243

ԱԶՈՒՆԵՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Մերի Սարգսյան

ԱրՊՀ, Պատմության և իրավագիտության ֆակուլտետ

Պատմության ամբիոն IV կուրսի

Գիտ. դեկավար՝ պ.գ.թ., դոց. Նունե Սարգսյան

Էլ. հասցե. merisardaryan1997@mail.ru

Բանալի բառեր՝ Արցախյան ազատագրական պատերազմ, Հադրութ, Ազոխ, Հայաստան, Ադրբեջան, Արթուր Աղաբեկյան, Իգոր Մուրադյան, Լյովա Ասրյան, Վյաչեսլավ Մելկումյան, Ծիածան, Տոգ, ինքնապաշտպանական ջոկատ, ինքնապաշտպանական շտաբ:

Ключевые слова: Арцахская освободительная война, Гадрут, Азох, Армения, Азербайджан, Артур Агабекян, Игорь Мурадян, Лева Асрян, Вячеслав Мелкумян, Цицан, Тог, самооборонные отряды, штаб самообороны

Keywords: Artsakh liberation war, Hadrout, Azokh, Armenia, Azerbaijan, Arthur Aghabekyan, Igor Muradyan, Lyova Asryan, Vyacheslav Melkumyan, Tsiatsan, Togh, self-defense detachment, self-defense headquarters

Ամփոփագիր

Հոդվածում քննության է ենթարկվել Ազոխ գյուղի հերոսական մասնակցությունը 1991-1994թթ. Արցախյան ազատագրական պատերազմին: Ռեզադրություն է դարձվել ազոխեցիների մասնակցությանը՝ պատերազմական գործողություններին: Ընդգծվել է այն հանգամանքը, որ պատմական այդ վճռորոշ պահին, արհամարհելով անելանելի փորձություններն ու դիմակայելով դաժան հարվածներին՝ ազոխեցիներն արցախցուն յուրահատուկ իր հաստատակամությամբ կարողացավ նվաճել իր հաղթանակը: Քննության առնված հիմնահարցում շեշտադրում է արվել այն հանգամանքին, թե ինչպես Ազոխի պաշտպանական ջոկատները պատերազմի ընթացքում կարողացան անվերապահորեն կատարել իրենց առջև դրված բոլոր մարտական խնդիրները:

Мери Сардарян

УЧАСТИЕ АЗОХЦЕВ В АРЦАХСКОЙ ОСВОБОДИТЕЛЬНОЙ ВОЙНЕ

Резюме

В статье рассматривается участие жителей села Азоха, в Арцахской освободительной войне 1991-1994гг. Особое внимание уделено участию азохцев, в военных операциях. Подчеркивалось то обстоятельство, что в этом важном историческом моменте игнорируя трудные испытания, сопротивляясь жестоким ударам, азохцы с особой настойчивостью, свойственные арцахцам, смогли одержать победу. В исследовании также акцентировалось внимание на то обстоятельство, что шла самооборона Азоха, во время войны смогли выполнить все возложенные на них боевые задачи.

Meri Sardaryan

THE PARTICIPATION OF THE AZOKH FOLK IN THE ARTSAKH LIBERATION WAR

Summary

The article discusses the heroic participation village of Azokh, in the 1991-1994 Artsakh liberation war. It discusses the participation of the Azokh folk in war actions. There is also highlighted the fact that at that very critical moment azokhian could take the victory with a persistence which is characteristic to a real artsakhian, ignoring the the difficulties and resisting cruel impacts. The issue also highlights how Azok's defense groups managed to deal with all the problems which were put before them during the war.

Ղարաբաղյան ազատագրական պատերազմը Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի Հանրապետության ագրեսիայի հետևանքով ծագած զինված հակամարտությունն է 1988-1994թթ-ին¹:

Ադրբեջանի կողմից տասնամյակներ ի վեր կիրառված հակահայկական քաղաքականությունը, հայ բնակչության մարդկային և ազգային արժանապատվության ոտնահարումը ստեղծեցին ծայրահեղ իրավիճակ: Արհեստականորեն երկատված ազգի արժանապատվության փրկությունը դարձավ ժամանակի անհետաձգելի խնդիր, քանզի շարունակել հապաղել, կնշանակեր արցախահայության դանդաղ մահ՝ ոչ հեռու ապագայում: Ամեն ինչ սկսվեց ժողովրդական ցույցերից: Ապա տեղի ունեցան հայկական ջարդեր Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում և այլուր: Փախստականների արտահոսք Ադրբեջանից: Օրըստօրե ահագնացող լարվածությունը մութ ամպեր էր խոստանում աշխարհատարածքին:

Արցախյան պատերազմը հայ ժողովրդի պատմության փառավոր էջերից է: Այն նոր էջ բացեց մեր նորօրյա պատմության համար, համախմբեց ողջ հայությանը: Ղարաբաղում չկա այնպիսի մի բնակավայր որ չզգար պատերազմի մահաբեր շունչը: Ազոխը ևս ստիպած էր անցնել այդ փոթորկալից ճանապարհով:

1991թ. հունիսին Իգոր Մուրադյանը Արթուր Մկրտչյանի հետ ժամանում է Ազոխ, հանդիպում է ունենում գյուղխորհրդի նախագահ՝ Լյովա Ասրյանի հետ: Նա պատմում է, որ Հայաստանից շատ երիտասարդներ ցանկանում են կամավոր կերպով լրացնել Արցախի ինքնապաշտպանական ջոկատների շարքերը, բայց քանի որ անձնագրերը հայաստանյան գրանցումով են, չեն կարող անցնել Սաֆոնով պարետի արհեստական սահմանագծով: Լյովա Ասրյանը գյուղխորհրդի անձնագրերի գրանցման դրոշմակնիքը տալիս է Իգոր Մուրադյանին: Վերջինս Ազոխ գյուղի գրանցումով հերթի կանգնած հարյուրավոր երիտասարդների անձնագրերում գրանցում է կատարում, ու սկսում է Հայաստանի տարբեր շրջաններից, երիտասարդների հոսքն Արցախ: Միայն Ազոխ են ժամանել 122 հայ տղաներ: Հետագայում մի առիթով Իգոր Մուրադյանը կատակով նշել է «Շնորհավորում եմ Լյովա Ազոխի բնակչության թիվը արդեն հասել է 1500-ի»²:

1991թ. հոկտեմբերի 7-ին Ազոխ են ժամանում գնդապետ Արկադի Տեր Թադևոսյանը, Էրիկ Աբրահամյանը, Արթուր Աղաբեկյանը, և բոլորին հայտնի Արմենչոն: Կարճ տևած խորհրդակցությունում որոշվում է Ազոխում ստեղծել պաշտպանության շտաբ, և նրա պետ նշանակել ազոխեցի Վյաչեսլավ Մելքումյանին: Պաշտպանության շտաբի աշխատանքները ղեկավարում էին Լյովա Ասրյանը, Արթուր Մինասյանը, և Վյաչեսլավ Մելքումյանը: Շտաբը տեղակայված էր փոստի գրասենյակում³:

Հոկտեմբերի 9-ին Վյաչեսլավ Մելքումյանը, շտաբում հավաքված գյուղացիներին հայտարարեց որ ցուցակագրվելու համար մնան միայն 18-ից 45 տարեկան առողջ տղամարդիկ, իսկ մնացածներին հանձնարարեց գնալ տուն՝ և սպասել նոր ցուցումների: Ազոխում գրանցվեցին 132 ազոխեցիներ: Ստեղծվեց 11 ջոկատ, յուրաքանչյուրում 11-ական մարտիկ, ջոկերի հրամանատարներ նշանակվեցին՝ Լյովա Ասրյանը, Յուրի Գրիգորյանը, Իլյաս Պողոսյանը, Գեորգի Ավանեսյանը, և այլք: Ընդհանուր վաշտի հրամատար նշանակվեց Կամո Պետրոսյանը, իսկ նրա տեղակալ՝ Դավիթ Ասրյանը:

1991թ. նոյեմբերի 10-ին Հաղորդի պաշտպանական ջոկատի առջև խնդիր է դրվում ազատագրել Տոդը թուրքերից: Ազոխի ջոկատայինները դասավորվում են Ծիլտի խաչի ուղղությամբ: Հարձակումը իրականացնելուց առաջ, հայկական կողմը միջանցք է թողնում տեղի թուրքերի համար, որ կարողանան հեռանալ: «Կոմանդոսի» հրամանով Տոդը պետք է ազատագրվեր առանց արյունահեղության⁴:

¹ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ., հանրագիտարան, 1988-1994 , Երևան, 2004, էջ 9:

² Նախկին գյուղխորհրդի նախագահ, պատերազմի ակտիվ մասնակից՝ Լյովա Ասրյանի հուշերից:

³ Պատերազմի ակտիվ մասնակից՝ Համլետ Պողոսյանի հուշերից:

⁴ «Հայրենյաց պաշտպան» 25 նոյեմբերի, 2001:

Ազոխեցի Վալերիկ Պետրոսյանի գլխավորությամբ կազմավորվում է 9 հոգուց բաղկացած ջոկատ, որը մասնակցում է Սարինշենի ազատագրական մարտերին Գյուլն ազատագրվում է նոյեմբերի 14-ին¹: Սարինշենի ազատագրման օպերացիան ևս գլխավորեց Արկադի Տեր Թադևոսյանը²:

Հաղորդի շրջանի պաշտպանության գործունեությունը ստանձնեց Մեծ Թադեր գյուղի բնակիչ Արթուր Ալեքսանդրի Աղաբեկյանը³: Նա խորհրդակցություն հրավիրեց նախկին սովխոզի Կարոնիկ կոչվող տեղամասում: Խորհրդակցության քննարկմանն էր դրված յուրաքանչյուր գյուղի համար մարտական պահակության տեղ ընտրելու հարցը: Ազոխեցիների համար այդպիսի տեղ որոշվեց Ձիաքար կոչվող լեռնալանջը, որտեղից զինված աչքով տեսանելի էր ադրբեջանաբնակ Գովշաթլու, Ջարգար, Հոդեր գյուղերն՝ իրենց տարածքներով, Կավաքի հյուսիսային և արևմտյան լանջը, ինչպես նաև Ֆիզուլուց Տոդ տանող ճանապարհի մոտ 6-7 կմ հատվածը: «Այս տեսակետից, իրոք որ, Ձիաքարի նշված տեղամասը լավ էր ու հարմար, բայց այն նկատելի ու գնդակոծելի էր հակառակորդի կողմից⁴»:

Ձիաքարի լանջին ազոխեցիներն սկսեցին կրակակետի կառուցումը, տեղադրվեց հեռախոս, որն ուղակի կապված էր շտաբի հետ: Դեկտեմբերի 31-ից կրակակետը ամբողջությամբ պատրաստ էր: Առաջին պահակախումբը եղավ Լյովա Ասրյանի առաջին ջոկը: «Կրակակետին որոշեցի տալ «Ծիածան» անվանումը, պատմում է Լյովա Ասրյանը, քանի որ թուրքերը իրենց այբուբենում չունենին «Ծ» տառը, առաջին իսկ կեղծիքի դեպքում կբռնվեին: Ու իսկապես այդպես էլ եղավ. Հենց որ մերոնք ռադիոյով լսում էին «արա ցիացա՛ն», տեղնուտեղը հետևում էր «արա, Ալի՛» պատասխանը⁵:

Պատերազմի տարիներին Ազոխը կրել է բազմաթիվ դառնություններ, այնուամենայնիվ ամենաեղերական դեպքը, որը ցնցեց բոլորին դա 1992թ. ապրիլի 22-ին տեղի ունեցած «ավտոբուսի դեպքն» էր: Ապրիլի 22-ին Կուբան մականիշի ավտոբուսը, վաղ առավոտյան մեկնեց Ստեփանակերտ: Եվ իրիկնադեմին, երբ ավտոբուսն իր 31 ուղևորներով քաղաքից վերադառնում էր Ազոխ, Շեխերից դեպի Կախան սրբավայրը բարձրանալիս Մոշկերակի ուղղության թփուտներից դուրս են նետվում մինչև ատամները զինված ազերիների մի խումբ, և ուժեղ կրակ բացում մեքենայի վրա: Ձոհվում են 13 հոգի, վիրավորվում 16-ը: Միայն մի տղամարդ, և 11 տարեկան մի երեխա են անվնաս մնացել: Այդ օրերին ամբողջ գյուղը սգի մեջ էր⁶:

1992թ. հուլիսի 27-ին Ջարգարից, Կավաքից, և Գովշաթլուից միաժամանակ հրետակոծեցին «Ծիածանը»: Այդ հրետակոծության հետևանքով Ծիածանում զոհվում է 21 տարեկան Գարիկ Ավագյանը, ծանր վիրավորում է ստանում Վլադիկ Ազատխանյանը և Մելվա Ավանեսյանը: Օգոստոսի 19-ին ևս մի հարձակում է տեղի ունենում, որի ժամանակ զոհվում է Անդրանիկ Սարգսյանը՝ ԱրՊՀ-ի քիմիա-կենսաբանության բաժնի գերագանցիկ ուսանող⁷:

1993թ. մարտի 20-ին Ազոխից Քելբաջար ուղարկվեց 7 հոգուց բաղկացած, պատերազմի փորձ ունեցող մի ջոկատ: Մարտի 27-ից մինչև մարտի 30-ը տեղի ունեցավ Չարեքթար, Աղդաբան, Նարեշտար, Թազաքենդ, գյուղերի ազատագրումը⁸, որին ակտիվ մասնակցություն ունեցան Ազոխի ջոկատայինները: Այնուհետև ազոխեցի սպաները հետ են կանչվում Ազոխ: Այստեղ կազմակերպչական մեծ աշխատանքներ էին տարվում Շահառուլի, Խազազի, Գովշաթլուի, և Կավաքի ուղղություններով խոշոր հարձակում կատարելու

¹ Հասրաթյան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները դարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Երևան 2009, էջ 57:

² Հասրաթյան Ս., «Ոսկե Արծիվ» շքանշանի ասպետները, Երևան, 2011, էջ 223:

³ Հասրաթյան Ս., նշվ., աշխ., էջ 50:

⁴ Ազոխի պաշտպանության շտաբի նախկին պետ՝ Վյաչեսլավ Մելքումյանի պատմածի:

⁵ Ըստ Լյովա Ասրյանի հուշերի:

⁶ Ազոխի գյուղապետարանի նախկին հաշվապահ՝ Արշալույս Սարգսյանի հուշերից:

⁷ Առստամյան Գ., ԼՂՀ ազգային ազատագրական պայքար 1988-2009, Ստեփանակերտ 2009, էջ 625:

⁸ Հասրաթյան Ս., Գոյամարտ, Երևան 1998, էջ 20:

նպատակով¹: Խագագ կոչվող կրակակետից Ղաջարի թուրքերը սիստեմատիկ գնդակոծում էին Կարմիր շուկա ավանը, և այնտեղով անցնող դեպի Ստեփանակերտ տանող միակ ճանապարհը²: Ապրիլի 4-ի լույս գիշերը Արթուր Աղաբեկյանի գլխավորությամբ սկսվում է հարձակումը: Ազոխեցի տղաներին բաժին էր ընկել Գովշաթյու գյուղի և Թփագեն խութը հողատարածքի ազատագրումը: Մարտունու գնդի մարտիկները Ավոյի գլխավորությամբ հարձակվում են Շահառլուի, Ղաջարի և Խագագի ուղղությամբ, իսկ Տողի գումարտակը՝ Կավաքի ուղղությամբ: 1-ին ՊԵ-ի ստորաբաժանումներն իրենց գործողությունները կատարում են համաձայնեցված, միասնական ուժերով, թշնամու համար անսպասելի ու հանկարծակի³: Թշնամին բազմաթիվ կորուստներ կրելով, սահմանից 12 կմ հետ է շարժվում: Նորից անցնելով հակահարձակման, Կավաքի և Գովշաթյուի ուղղությամբ տեղի ունեցան դաժան մարտեր: Կավաքի համար ընթացող այդ թեժ մարտերի ժամանակ Արթուր Աղաբեկյանը ստիպված օգնության է կանչում Ազոխից Լյովա Ասրյանի պահեստային ստորաբաժանմանը: Ինչպես նաև օգնության հեռահար կրակ խնդրում Վանեսի սարի Մանվել Գրիգորյանի՝ Էջմիածնի առանձին կամավորական ջոկատից⁴: Այսպիսով հայկական կողմին հաջողվում է վերականգնել թշնամու կողմից գրավված դիրքերն ու ապահովել նրանց ամուր պաշտպանությունը: Թուրքերն այդ մարտերի ժամանակ մեծ կորուստներ են կրում: Հայկական ստորաբաժանումներից զոհվում է 4, վիրավորվում 7 հոգի: Ազոխեցիներից վիրավորվում է Արմո Մնացականյանը՝ Շհառլի տեղամասում, և Մարտիկ Հայրապետյանը՝ Գովշաթյույում:

1993թ. հունիսի վերջերից, ադրբեջանական կողմը նորից դիմում է հարձակման: Հուլիսի 24-ին թեժ մարտեր են ընդանում Զարգարի ուղղությամբ⁵: Հուլիսի 29-ին թշնամու կողմից արձակված հրանոթի արկի բեկորից զոհվում է ազոխեցի Գուրգեն Առաքելյանը, Արկադի Ավագյանն էլ վիրավորվում է:

Օգոստոսի 15-ին ազոխի ջոկատայինները մասնակցում են Ցոր, Բանաձոր, Առաքյու, Գարամամեղլու գյուղերի ազատագրմանը⁶: Իսկ օգոստոսի 22-ին ԼՂՀ ՊԲ 1-ին և 2-րդ ստորաբաժանումների ճնշման տակ, ադրբեջանական զորամասերն ու բրիգադը հարկադրված էին թողնել Ֆիզուլի քաղաքը և շուրջ 1380 քառ.կմ տարածք ունեցող համանուն շրջանը⁷:

Արխալուի ուղղությամբ, գումարտակի հրամանատարի տեղակալ Վյաչեսլավ Մելքումյանի ղեկավարությամբ խրամատներ են փորվել դեռևս 1993թ. դեկտեմբերի կեսին: Այդ խրամատները վերջնական ամրապնդելու համար անհրաժեշտ եղավ ձեռքի աշխատանք: Ազոխի ամբողջ հասարակությունը՝ մեծ թվով կանայք, գյուղխորհրդի նախագահ Լյովա Ասրյանի ղեկավարությամբ 1993թ.-ի դեկտեմբերի 27-ից մինչև 1994թ. հունվարի 4-ը կատարեցին անհրաժեշտ աշխատանքները և հնարավորություն ստեղծեցին ուժեր կուտակել Հրամու ուղղությամբ⁸:

1994թ. հունվարի 7-ին վաղ առավոտյան Յուրիկ Զախարյանի վաշտը պաշտպանող 16-րդ կրակակետի Հրամու ուղղությամբ, մեծ թվով ադրբեջանցիներ են ներխուժում: Հայկական կողմը հերոսաբար հետ է մղում իրար հաջորդող գրոհները, բայց մեծ կորուստներ կրած թշնամին կարողանում է ճեղքել հայկական դիրքերը: Վերջիններս ստիպված էին նահանջել: Այդ սոսկալի մարտերի ժամանակ զոհվեցին Ալիկ Արզումանյանը, Գարիկ Զախարյանը, Վաչիկ Օհանջանյանը, վիրավորվեցին Յուրիկ Զախարյանը, Արարատ Օհանյանը, Տոլիկ Դալլաքյանը, Վալերիկ Ազատխանյանը և ուրիշներ: Հունվարի 19-ին վիրավորվեցին Գարիկ Գրիգորյանը, Ապրես Հայրապետյանը, Հրանտիկ Պողոսյանը: Հունվարի 23-ին զոհվեց Մասուն Ասրյանը:

¹ Նույն տեղում, էջ 21:

² Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ, գիրք գ., Ստեփանակերտ 2007, էջ 446:

³ Հասրաթյան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները դարաբաղյան պատերազմի ռազմագործողություններում, Ստեփանակերտ, 2009, էջ 80:

⁴ Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Երևան, 2013, էջ 133:

⁵ Հասրաթյան Ս., նշվ., աշխ., էջ 84:

⁶ Հասրաթյան Ս., Մարտանցում, Երևան, 2001, էջ 31

⁷ Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, Երևան, 2001, էջ 125:

⁸ Բաղդասարյան Ս., նշվ., աշխ., էջ 212:

Փետրվարի 26-ին, Ալիսալուի ուղղությամբ տեղի ունեցած մարտում զոհվեց Արմո Մնացականյանը¹: Այդ նույն մարտում վիրավորվեց Արտիկ Բաբայանը, որին ուղղաթիռով տեղափոխեցին Երևան, բայց բժիշկներին չհաջողվեց փրկել երիտասարդի կյանքը: Ապրիլի 1-ին, Ալիսալուի մարտական դիրքում, թշնամու դիպուկահարի կրակոցից զոհվեց ազդիսեցի Յուրիկ Գևորգյանը:

Պատերազմն ավարտվեց հայկական պաշտպանական ուժերի լիակատար հաղթանակով: Այնպիսի հաղթանակով, որ պարտված հակառակորդը, որ անգամ չէր ուզում հրադադարի մասին, գլխիկոր համաձայնեց ստորագրել այն: 1994թ.-ի մայիսի 16-ին Հայաստանի, ԼՂՀ-ի և Ադրբեջանի պաշտպանության նախարարները Մոսկվայում ստորագրեցին հրադադարի մասին համաձայնագիր: Այդ պայմանագրով պատերազմն առժամանակյա դադարեցվեց²:

Գործունեության լայն թափ, անձնագոհ քաջություն, վտանգալից խիզախության հակում, ինքնավստահություն, ինքնահատուկ համառություն, ուղղամիտ հաստատակամություն, ահա դարաբաղցու համակրելի գծերը: Հենց այս հատկանիշներն էին որ ընկան պատերազմի հաղթական ավարտի հիմքում: Դիզակ աշխարհից այդ պատերազմին զոհ գնաց 334 ազատամարտիկ և խաղաղ բնակիչ³: Ազդիսից պատերազմի ժամանակ զոհվեցին 17 քաջորդիներ:

Նրանցից յուրաքանչյուրը մի տան կանթեղ էր, մի գերդաստանի սյուն, մի ապագա, մի հույս, մի հավատ: Նրանց սնագգեստ մայրերը, սնասիրտ հայրերը նորից մղկտացին, նրանց մանուկները որբացան, ջահել հարսները այրիացան: Մենք՝ ապրողներս հավերժ պարտական ենք նրանց:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Աբրահամյան Հ. Մկրտչյան Շ.**, Արցախյան պայքարում զոհված դիզակցիները, Երևան, 2005:
2. **Աբրահամյան Հ.**, Մարտնչող Արցախ, գիրք գ., Ստեփանակերտ 2007:
3. **Առստամյան Գ.**, ԼՂՀ ազգային ազատագրական պայքար 1988-2009, Ստեփանակերտ 2009:
4. **Բաղդասարյան Ա.**, Հայրենի եզերք, Ստեփանակերտ, 2003:
5. **Հասրաթյան Ս.**, Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները դարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Երևան 2009:
6. **Հասրաթյան Ս.**, «Ոսկե Արծիվ» շքանշանի ասպետները, Երևան, 2011:
7. **Հասրաթյան Ս.**, Գոյամարտ, Երևան 1998:
8. **Հասրաթյան Ս.**, Ղարաբաղյան պատերազմ, Երևան, 2001:
9. **Հասրաթյան Ս.**, Մարտանցում, Երևան, 2001:
10. **Հասրաթյան Ս.**, Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները դարաբաղյան պատերազմի ռազմագործողություններում, Ստեփանակերտ,:
11. **Ղարաբաղյան ազատագրական պատերազմ.**, հանրագիտարան, 1988-1994 , Երևան, 2004:
12. **ՈՒԼՈՒԲԱՅԻԱՆ Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997:
13. **Օհանյան Ս.**, Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Երևան, 2013:
14. «Հայրենյաց պաշտպան» 25 նոյեմբերի, 2001:
15. Ազդիսի պաշտպանության շտաբի նախկին պետ՝ Վյաչեսլավ Մելքումյանի հուշերից:
16. Ազդիսի գյուղապետարանի նախկին հաշվապահ՝ Արշալույս Սարգսյանի հուշերից:
17. Պատերազմի ակտիվ մասնակից՝ Համլետ Պողոսյանի հուշերից:
18. Նախկին գյուղխորհրդի նախագահ, պատերազմի ակտիվ մասնակից՝ Լյովա Ասրյանի հուշերից:

¹ **Առստամյան Գ.**, նշվ., աշխ., էջ 508:

² **ՈՒԼՈՒԲԱՅԻԱՆ Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջ 801

³ **Աբրահամյան Հ. Մկրտչյան Շ.**, Արցախյան պայքարում զոհված դիզակցիները, Երևան, 2005, էջ 28:

ՀՏՂ47.25/243

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ և ԱՐՑԱԽԸ 1918-1920ԹԹ.

Նոնա Գյուրջյան
ԱրՊՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետ
Պատմություն 3-րդ կուրս
Ղեկավար՝ պրոֆ. Վարդանյան Ա.

Ամփոփում

Անդրկովկասի անկախ հանրապետությունների հռչակումից հետո Թուրքիան ստիպեց Հայաստանի Հանրապետությանը՝ նախկին Ելիզավետպոլի նահանգը, որի կազմի մեջ էին մտնում Արցախը, Զանգեզուրը և Գանձակի հայկական գավառը, ճանաչել Ադրբեջանի մաս: Որքան էլ ծանր էր Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակը, հանրապետության կառավարությունը անում էր հնարավորին ամեն ինչ տեր ու պաշտպան կանգնելու արցախահայության արդար դատին՝ Ղարաբաղը համարելով Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը:

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ И АРЦАХ В 1918-1920 ГГ.

Резюме

После провозглашения независимых республик Закавказья Турция вынудила Республику Армению, чтобы бывшая провинция Елизаветполь, в состав которой входили Арцах, Зангезур и армянская провинция Гандзак была признана частью Азербайджана. Как бы тяжелой ни была социально-экономическая и политическая ситуация в Армении, правительство республики делало все возможное для защиты правого дела народа Арцаха рассматривать Карабах как неотъемлемую часть Республики Армения.

THE REPUBLIC OF ARMENIA AND ARTSAKH IN 1918-1920

Summary

After the proclamation of the independent republics of Transcaucasia, Turkey forced the Republic of Armenia to recognize the former province of Elizavetpol, which included Artsakh, Zangezur and the Armenian province of Gandzak, as a part of Azerbaijan. No matter how hard the socio-economic and political situation in Armenia was, the government of the republic did everything possible to protect the right cause of the people of Artsakh to consider Karabakh as an integral part of the Republic of Armenia.

Հայաստանի Հանրապետությունը և Արցախը 1918-1920թթ.

Անդրկովկասի անկախ հանրապետությունների հռչակումից հետո Թուրքիան ստիպեց Հայաստանի Հանրապետությանը՝ նախկին Ելիզավետպոլի նահանգը, որի կազմի մեջ էին մտնում Արցախը, Զանգեզուրը և Գանձակի հայկական գավառները, ճանաչել Ադրբեջանի մաս:

1918թ. հուլիսի 22-26-ը Շուշիում գումարված արցախահայության առաջին համագումարը մերժեց Ադրբեջանին ենթարկվելու պահանջը, որոշեց Ղարաբաղը ճանաչել որպես Արարատյան հանրապետության մաս: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստեղծված իրավիճակում Ղարաբաղը կտրված է Հայաստանի Հանրապետությունից, որոշվեց ընտրել Ազգային խորհուրդ և յոթ հոգուց բաղկացած Ժողովրդական կառավարություն Եղիշե Իշխանյանի գլխավորությամբ:

1918թ. օգոստոսին Բաքվի վրա արշավող թուրքական բանակի հրամանատար Նուրի փաշան կոչով դիմում է Ղարաբաղի հայությանը խղճալ իրենց երեխաներին և ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը: Նույն պահանջով Ղարաբաղի Ժողովրդական կառավարությանն է դիմում Ադդամում գտնվող Կովկասյան մուսուլմանական առաջին

դիվիզիայի հրամանատար Ջամիլ Ջահիդ բեյը:¹ Սակայն սեպտեմբերին գումարված Ղարաբաղի հայության երկրորդ և երրորդ համագումարները մերժեցին այդ պահանջը:

Բաքվի կոմունայի անկումից հետո (սեպտեմբերի 15) Ղարաբաղի կացությունը ծանրացավ, այն կտրվեց Բաքվից և Ջանգեզուրից, հայտնվեց շրջափակման մեջ: Ղարաբաղի հայությունը ձեռնամուխ եղավ ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Սեպտեմբերի 22-ին թուրքական բանակը մտավ Լեռնային Ղարաբաղ՝ ավերելով մի շարք գյուղեր, շարժվեց դեպի Շուշի: Թուրքական զորամասերը Շուշի մտան սեպտեմբերի 25-ին: Բանակի հրամանատարությունը լուծարեց Ղարաբաղի կառավարությունը: Ավելի քան 60 մտավորականներ, այդ թվում և Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը, ձերբակալվեցին ու նետվեցին բանտ: Թեպետ Շուշին ընկավ, սակայն Արցախի գավառները մնացին անառիկ: Ամենուրեք կազմակերպվեցին ինքնապաշտպանական ջոկատներ: Մարտակերտի հայության հերոսական դիմադրության շնորհիվ կանխվեց թուրքերի մուտքը Ջրաբերդի շրջան: Այնուհետև ահեղ մարտեր ծավալվեցին Վարանդայի և Դիզակի շրջաններում: Հոկտեմբերի 18-ին Մամնա գյուղի մոտ Դիզակի և Վարանդայի զինված ուժերին հաջողվում է լիովին ջախջախել թշնամու զորամասը:² Դրանից հետո թուրքերը թողնում են Ղարաբաղը:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Անդրկովկասում թուրքերին փոխարինեցին անգլիացիները: Բաքվի գեներալ-նահանգապետ նշանակվեց գեներալ Թոմսոնը: Անգլիացիներն էլ թուրքերի օրինակով որոշեցին պահանջել Ղարաբաղի հայությունից ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: 1918թ. նոյեմբերին ղարաբաղցիների խնդրանքով զորավար Անդրանիկը ջոկատով շարժվում է դեպի Շուշի: Ջաբուխը գրավելուց հետո Անդրանիկը նպատակ ուներ շարժվել դեպի Շուշի: Սակայն Ավդալլար գյուղում նրան է հասնում Թոմսոնի հեռագիրը՝ կանգնեցնել զորաշարժը, և Անդրանիկը վճռում է սպասել:

Հաջորդ օրը բերում են Թոմսոնի նամակը, և նրա պահանջով Անդրանիկը վերադառնում է Գորիս: Թոմսոնը սպառնում էր Փարիզի կոնֆերանսով: Նամակում մասամբ գրված էր. «Իմ հրահանգը կատարելուց ձեր ամեն տեսակ խուսանավումը անպայման լրջորեն կանդրադառնա հայ ժողովրդի հարցի վրա, երբ այն կդրվի խաղաղության կոնֆերանսում»:³

Թոմսոնը, մի կողմից հայտարարելով, որ վիճելի տարածքների ճակատագիրը կորոշվի Փարիզի կոնֆերանսում, մյուս կողմից՝ 1919թ. հունվարի կեսերին մուսավաթական Խոսրով բեկ Սուլթանովին նշանակեց Արցախի գեներալ-նահանգապետ: Արցախահայության չորրորդ համագումարը հայտարարեց, որ չի ընդունում Ադրբեջանի իշխանությունը: ՀՀ կառավարությունը վճռական բողոքի ձայն է բարձրացնում Ղարաբաղում ադրբեջանական նահանգապետություն մտցնելու և Խոսրով բեկ Սուլթանովի նշանակման դեմ: ՀՀ արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանը կառավարության անունից հունվարի 26-ին բողոքի վերջնագիր է ուղարկում Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությանը՝ Ղարաբաղ-Ջանգեզուրի գեներալ նահանգապետություն հիմնադրելու մասին, որը բնորոշվում է որպես «Հայաստանի տարածքի նկատմամբ ոտնձգություն»: Ադրբեջանի կառավարության անունից արտաքին գործերի նախարար Աղիլխան Զիաթխանովը ՀՀ արտաքին գործերի նախարարությանը ուղարկած պատասխանում իր հերթին Հայաստանի կառավարության այդ քայլը որակավորում է որպես ադրբեջանական իշխանության դեմ ոտնձգություն և Ադրբեջանի ներքին գործերին խառնվելու փորձ:⁴

1919թ. փետրվարի 28-ին գնդապետ Թոմսոնին Հայաստանի արտգործնախարարի հղած բողոքում ասված էր, որ «Հայաստանը սպասում է հաշտության կոնֆերանսի որոշմանը

¹ Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007թթ), Ստեփանակերտ, 2012, էջ 87:

² Նույն տեղում, էջ 89:

³ Կարապետյան Մ., Գևորգյան Է., Խորհրդային Հայաստանը 1920-1991թվականներին: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար., Եր., 2007, էջ 91:

⁴ Աղաբաբյան Ա., Ղարիբյան Ա., Արցախ, Եր., 2014, էջ 45:

և հույս ունի, որ մինչև այդ որոշման ընդունումը կպահպանվի ստատուս քվոն և այն չի կարող միակողմանիորեն փոփոխվել ադրբեջանական կառավարության կողմից»:¹

Որքան էլ ծանր էր Հայաստանի սոցիալ - տնտեսական ու քաղաքական վիճակը, հանրապետության կառավարությունը անում էր հնարավորին ամեն ինչ տեր ու պաշտպան կանգնելու արցախահայության արդար դատին՝ Ղարաբաղը համարելով Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը: Նույն կերպ Արցախին իր համակողմանի աջակցությունն է ցույց տվել Հայաստանի խորհրդարանը: Նրա նիստերում պարբերաբար քննարկումների նյութ է դարձել Արցախի խնդիրը: Արցախին օգնելու նպատակով դեռ 1919թ. կեսերին հիմնվել էր դրամական ֆոնդ՝ 8 մլն ռուբլու չափով: Այդ գումարից 1.5 մլն-ը հատկացվում է «Ղարաբաղի զորամաս» կազմակերպելու համար: Նորակազմ զորամասը բաղկացած էր մեկ հեծյալ գումարտակից, 2 լեռնային հրանոթից և 54 հեծյալ հետախույզներից: Համանման օգնություն և այլ ծախսեր կազմակերպելու միջոցով շուտով Արցախի կարիքների համար հատկացված 8 մլն ռուբլու ֆոնդը սպառվում է, և կառավարությունը հարց է բարձրացնում կրկին 8 մլն ռուբլու վարկ բացելու մասին:²

Արցախին օգնություն էր ցույց տրվում ոչ միայն պետական-կառավարական մակարդակով, այլ նաև ՀՅԴ կուսակցական խողովակներով: Այսպես, օրինակ, 1919թ. ամռանը ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն Ղարաբաղի Ազգային խորհրդին էր տրամադրել 1.06 մլն ռուբլու օժանդակություն: Հայաստանի խորհրդարանը, ինչպես նաև ՀՅԴ-ն՝ որպես կառավարող կուսակցություն, Արցախյան խնդրի պասիվ դիտողի դերում չեն գտնվել, այլ հնարավոր բոլոր միջոցներով աշխատել են այն միավորված տեսնել ՀՀ կազմում:³

1919թ. օգոստոսի 5-ի խորհրդարանի երկրորդ նիստում վարչապետ Խատիսյանը արձանագրում է, որ «Հայաստանը Ղարաբաղը ոչ մի դեպքում չի զիջի Ադրբեջանին: Եզրակացությունը մնում է Փարիզի վերաժողովին, իսկ մինչև այդ կա երեք միջոցներ՝ զիջում կամ համաձայնություն, ուժով հետ իլել, սպասողական դրություն ու հարցերի անվճիռ թողնելը: Կառավարությունը ժողովրդի կամքի համաձայն՝ վերջինին է հետևել»:⁴

Սուլթանովը արցախահայության վճռականությունից գազազած, որոշեց բնակչությանը խեղդել սովի ճիրաններում: Այդ նպատակով դեպի Դաշտային Ղարաբաղ տանող բոլոր ճանապարհները փակվեցին: Հրի ու սրի մատնվեցին մի քանի հայկական գյուղեր: Առանձնակի դաժանությունների ենթարկվեցին Ղայբալիշենի հայերը:⁵ Բնկ անգլիացիները հանդես էին գալիս դիտորդի դերում:

Այդպիսի լարված իրավիճակում, 1919թ. օգոստոսին, Շոշ գյուղում հրավիրվեց արցախահայության յոթերորդ համագումարը: Ձգտելով խուսափել նոր արյունահեղությունից՝ ժամանակ շահել և կենտրոնացնել առկա ուժերը, համագումարը անգլիացիների ճնշմամբ գնաց փոխզիջման: Օգոստոսի 22-ին Սուլթանովի հետ ստորագրվեց 26 կետից բաղկացած համաձայնագիր:

Համաձայնագրում նշվում է, որ Լեռնային Ղարաբաղը, մինչև Փարիզի խաղաղության կոնֆերանսում հարցի վերջնական լուծումը, իրեն ժամանակավորապես համարում է Ադրբեջանի սահմաններում:⁶

1919թ. սեպտեմբերի 2-ի խորհրդարանի 10-րդ նիստում անցնելով Ղարաբաղի հարցին Վարչապետը հայտնում է. «Վերջերս Շուշքենդում տեղի ունեցավ Ղարաբաղի հայերի համագումարը, որն, ադրբեջանյան թնդանոթների և անխուսափելի կոտորածի սպառնալիքի

¹ Միքայելյան Վ., Հայաստանի Հանրապետությունը և Արցախյան հարցը 1918-1920թթ., «Լրաբեր հասարակական գիտությունների», թ. 1, 1998, էջ 6:

² Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920թթ.), Եր., 2005, էջ 268-269:

³ Նույն տեղում, էջ 269:

⁴ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920թթ (Խմբ. Վիրաբյան Ա.), Եր., 2009, էջ 237:

⁵ Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 91:

⁶ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 339:

տակ, ստիպված եղավ ընդունել ժամանակավորապես Ադրբեջանի իշխանությունը Ղարաբաղի վրա: Այսպես ուրեմն՝ մեր կառավարությունն իրեն կանգնած զգաց արդեն կատարված փաստի առջև, որը սակայն չի կարող փոխել բոլորովին մեր սկզբունքային հայեցակետը Ղարաբաղի հարցի վերաբերմամբ: Կառավարությունը հայտարարում է, որ չկա վճռականապես և ոչ մի հիմունք՝ փոխելու իր տեսակետը Ղարաբաղի հարցի վերաբերմամբ: Կառավարությունն այս հարցում շարունակում է պաշտպանել այն տեսակետն, ինչ որ ունեցել է մինչև այժմ»:¹

Դրանից հետո էլ չդադարեցին Ադրբեջանի ոտնձգությունները Ղարաբաղի նկատմամբ, չնայած այն բանին, որ 1919թ. նոյեմբերին Թիֆլիսում Հայաստանը և Ադրբեջանը ստորագրել էին ռազմական գործողությունները դադարեցնելու մասին համաձայնագիր: Ադրբեջանի պարտությունը Զանգեզուրում նրան ստիպեց ձեռնպահ մնալ Զանգեզուրի նվաճման պլանից և նա իր ողջ ուժերն ուղղեց Ղարաբաղի վրա: Սուլթանովը Ղարաբաղի Ազգային խորհրդից պահանջում է վերջնականապես ենթարկվել Ադրբեջանին:

1920թ. փետրվարի 28-ից մարտի 5-ը Վարանդայի Շոշ գյուղում տեղի ունեցավ արցախահայության ութերորդ համագումարը, որտեղ նորից մերժվեց Ադրբեջանին ենթարկվելու անարդար պահանջը և հարց դրվեց մայր Հայաստանի հետ վերամիավորվելու օգտին:²

1920թ. մարտին ադրբեջանական զորքերը լայնածավալ հարձակման անցան Ղարաբաղի վրա: Արցախահայությունը դիմեց ինքնապաշտպանության, սակայն ուժերը խիստ անհավասար էին:

Շուշիում Սուլթանովը պատրաստվում էր մեծ շուքով նշել 1920-ի Նովրուզ-Բայրամը՝ ամանորը: Նրանք հարձակվում են քաղաքի հայկական թաղամասի վրա, հրդեհում, կոտորում, թալանում են: Այդ սարսափելի օրը՝ մարտի 23-ին, սպանվում են հազարավոր տղամարդիկ, կանայք, երեխաներ: Գոտորվածների թիվը հասնում էր 10 հազարի:³

Ղարաբաղ-Զանգեզուրում ստեղծված իրավիճակը 1920թ. ապրիլի 3-ին հանգամանորեն քննության է առնվում Հայաստանի խորհրդարանի 78-րդ արտակարգ նիստում: Ալ. Խատիսյանը ներկայացնելով Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունները, նշում է. «Ադրբեջանի կառավարությունը, իր սովորության համաձայն, թաքցնելով եղելությունը, աշխատում է համոզել, որ այդ օրը Ղարաբաղը ապստամբեց իր իշխանության դեմ, բայց անհերքելի փաստերով ապացուցված է արդեն, որ այնտեղ ոչ մի ապստամբություն տեղի չի ունեցել, հարձակումն սկսված է Ադրբեջանի ձեռքով և կանխամտածված ծրագրով, իսկ տեղական ժողովուրդը միայն ինքնապաշտպանության կռիվ է մղում՝ իր գոյությունը փրկելու համար:» Նշում է նաև, որ «Ղարաբաղը չունի թնդանոթ, չունի զորք, և մենք չենք գնում նրան օգնության ոչ թե նրա համար, որ չենք կարող, այլ՝ որովհետև կանգնած ենք ազնիվ ճանապարհի վրա, մենք սպասում ենք անհամբեր հաշտության խորհրդածողովի վերջին խոսքին և եթե չեղավ այդ, այն ժամանակ կառավարությունը կունենա ուժ՝ օգնության հասնելու իր հայրենակիցներին»:⁴ Ապա շարունակում է. «Անմիջապես հեռագիր ուղարկեցինք դաշնակից պետությանց ներկայացուցիչներին, խնդրելով ձեռք առնել կտրուկ միջոցներ՝ արյունահեղությանը վերջ դնելու. պիտի հայտնեն, որ նրանցից ստացանք մի շարք հեռագիրներ, որով դիմում են մեզ, հանուն խաղաղության, դադարեցնել կռիվները: Այս հանգամանքը շատ է զարմանալի, որովհետև ի նչպես կարող ենք դադարեցնել մի կռիվ, որ մենք չենք սկսել, որին բոլորովին անմասն ենք և որից տուժում է անմիջապես մեր ժողովուրդը: Բնարկե, մենք պատասխանեցինք նրանց հենց այդ ոգով, ցույց տալով, թե ուր պիտի դիմեն նրանք՝ արյունահեղությանը իրոք վերջ դնելու համար: Ադրբեջանը խախտել է համաձայնությունը, հետևաբար նրա իշխանությունը Ղարաբաղում այլևս տեղի ունենալ չի

¹ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920թթ., էջ 258:

² Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920թվականներին: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար., Եր., 2003, էջ 265:

³ Կարապետյան Մ., Գևորգյան Է., նշվ. աշխ., էջ 92-93:

⁴ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920թթ., էջ 480:

կարող»:¹ Ղարաբաղի համար այդ ծայրահեղորեն բարդ և ճակատագրական պահին Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում ընդունեց օգնության հասնել նրան: Հայաստանի կառավարությունը Դրոյի և Նժդեհի գլխավորությամբ Լեռնային Ղարաբաղ ուղարկեց զորքեր, որոնք հարկադրեցին թշնամուն փախուստի դիմել: Գալով Շուշի Դրոն հետևյալ կոչն ուղղեց արցախահայությանը. «Ես մտա Ղարաբաղ ամսույս 14-ին, այն ժամանակ, երբ արդեն հրդեհը սկսված էր և երբ բավական հայ գյուղեր ավերի մատնված էին թշնամու կողմից և երբ Ղարաբաղի գյուղացիությունը, հերոսաբար դիմադրելուց հետո, նորից մնացել էր իր դիրքերում՝ կուրծքը դեմ տված թշնամու գնդակներին:

Դու պիտի ըմբռնես Ղարաբաղի հայ ժողովուրդ, որ Ադրբեջանի ծրագիրն է վերացնել հայ ազգաբնակչությունը, շարունակել իրականացնել տաճկական փաշաների որոշումը, տիրել Ղարաբաղին, ոտքի տակ տալ Զանգեզուրը և ոչնչացնել Հայաստանի Հանրապետությունն ու, այդպիսով վերացնել մահմեդական աշխարհի մեջ ընկած այդ քաղաքակրթված ժողովուրդը:

Ես եկել եմ ձեր մեջ այն խոր համոզումով և հաստատ որոշումով, որ հենված ձեր վճռականության վրա և միացած ձեր քաջարի զինվորների հետ, պետք է հաղթենք թշնամուն: Ես վճռել եմ մնալ ձեր մեջ, կովել ձեզ հետ միասին և ազատությունն ու հաղթանակը տոնել այստեղ: ... Այսօր մենք բոլորս, ձեզ հետ միասին ձեռք ձեռքի տված, պիտի շարունակենք կռիվը մինչև վերջնական հաղթանակ»:²

1920թ. ապրիլի 25-ին հրավիրված Ղարաբաղի բնակչության լիազոր ներկայացուցիչների 9-րդ համագումարը, ելնելով այն բանից, որ Ադրբեջանի կառավարության հետ կնքված համաձայնությունը խախտվել է Ադրբեջանի զորքերի կողմից Շուշիում և գյուղերում հայ բնակչության դեմ կազմակերպած հարձակմամբ, չեղյալ համարեց այն և հռչակեց Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը՝ որպես անբաժանելի մաս:³

Իրադրությունը փոխվեց ապրիլի 28-ին Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումով: Երկու օր անց Խորհրդային Ադրբեջանի արտաքին գործերի ժողովում Մ.Հուսեյնովը Հայաստանի կառավարությանը վերջնագիր է ներկայացնում Ղարաբաղը և Զանգեզուրը ճանաչելու Խորհրդային Ադրբեջանի մաս:⁴

1920թ. մայիսի 3-ի Հայաստանի Հանրապետության խորհրդարանի արտակարգ նիստը արձանագրեց. «Ադրբեջանի վերջնագրին մենք ունենք միայն մեկ պատասխան-Ղարաբաղը և Զանգեզուրը, ունենալով հոծ հայություն, պետք է միանան Հայաստանին: Հայաստանի կառավարությունը պետք է ձեռք առնի բոլոր միջոցները պահպանելու Հայաստանի անբաժան մասը կազմող Ղարաբաղն ու Զանգեզուրը»:⁵

Մայիսի 12-ին Շուշի մտավ 11-րդ կարմիր բանակը՝ Ղարաբաղը հայտարարելով խորհրդային: Ղարաբաղի կառավարությունն արյունահեղությունից խուսափելու համար, գնաց զիջման՝ իշխանությունը հանձնեց բոլշևիկներին: Ստեղծված հանգամանքներում Դրոյի զորամասերը ստիպված եղան թողնել Արցախը: Մայիսի 26-ին Թաղավարդ գյուղում տեղի ունեցած Արցախի հայության 10-րդ համագումարը Լեռնային Ղարաբաղը հայտարարեց խորհրդային:

Ղարաբաղի հարցը քննության է առնվել 1920թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրում, ըստ որի խորհրդային զորքերը գրավում են վիճելի տարածքներ Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը, մինչև դրանց ճակատագրի վերջնական լուծումը: Եվ «լուծումը» եղավ 1921թ. հուլիսի 5-ի ՌԿ(Բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի ապօրինի որոշումը. «Ելնելով մահմեդականների և հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և վերին ու ստորին Ղարաբաղի տնտեսական կապից, Լեռնային

¹ Նույն տեղում, էջ 481:

² Միմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը (1920-1921թթ.), Եր., 2000, էջ 43-44:

³ Աղաբաբյան Ա., Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 49:

⁴ Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Եր., 1991, էջ 41:

⁵ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920թթ., էջ 503:

Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում, նրան տալով մարզային լայն ինքնավարություն»:¹

Այդ անարդարացի որոշումից հետո, 1923թ. կազմվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: Ադրբեջանի կողմից տասնամյակների ընթացքում կիրառած հայահալած քաղաքականությունը, հայ բնակչության ազգային արժանապատվության ոտնահարումը, մարզում ստեղծել էր լարված վիճակ, որն կուտակվելով պոթեկաց 1988-ին՝ սկիզբ դնելով Արցախյան ազատագրական շարժմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Եր., 1991:
2. Աղաբաբյան Ա., Ղարիբյան Ա., Արցախ, Եր., 2014:
3. Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007թթ.), Ստեփանակերտ, 2012:
4. Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920թվականներին: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար., Եր., 2003:
5. Կարապետյան Մ., Գևորգյան Է., Խորհրդային Հայաստանը 1920-1991թվականներին: Ուսումնական ձեռնարկ բուհերի համար., Եր., 2007:
6. Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920թթ.), Եր., 2005:
7. Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920թթ. (Խմբ. Վիրաբյան Ա.), Եր., 2009
8. Միքայելյան Վ., Հայաստանի Հանրապետությունը և Արցախյան հարցը 1918-1920թթ., «Լրաբեր հասարակական գիտությունների», թ. 1, 1998:
9. Միմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը (1920-1921թթ.), Եր., 2000:
10. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:

¹ Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 56-57:

ՀՏԴ94(479.243)

ԱՍԱԼԱ-Ի ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Դավիթ Կոստանյան
ՎՊՀ պատմաշխարհագրական ֆակուլտետ
Պատմություն բաժին IV կուրս
Ղեկավար՝ պ.գ.դ. պրոֆեսոր Ֆ.Մովսիսյան

Բանալի բառեր՝ ԱՍԱԼԱ, Մոնթե Մելքոնյան, զենք, բանակ, զորաջոկատ, ազատագրում, պատերազմ

Ключевые слова: АСАЛА, Монте Мелконян, оружие, армия, вооруженные силы, освобождение, война

Keywords: ASALA, Monte Melkonian, weapons, army, armed forces, liberation, war

Ամփոփում

Արցախյան հաղթականը պատմական արդարության վերականգնման գաղափարով հայրենասիրական ուժերի համախմբման և անձնագոհ պայքարի արգասիք էր: Հստակորեն պետք է նշել, որ այդ փառահեղ հաղթանակի կայացման գործում մեծ և անուրանալի է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի անկոտրում մարտիկների մասնակցությունը:

Давид Костанян
ВГУ историкогеографический факультет
История 4-ый курс

Научный руководитель д.и.н., профессор Ф.Мовсисян
УЧАСТИЕ АСАЛА В АРЦАХСКОЙ ВОЙНЕ

Резюме

Победа Арцаха была результатом консолидации патриотических сил и самоотверженной борьбы через идею восстановления исторической справедливости. Очевидно, следует отметить, что формирование великой и славной победы неоспоримо связано с участием непобедимых воинов Армянской секретной армии освобождения.

David Kostanyan
VGU Historical and Geographic Faculty
History 4th course

Scientific adviser associate Professor of historical Sciences F.Movsisyan
PARTICIPATION OF THE ASALA IN ARTSAKH WAR

Summary

The victory of Artsakh was the result of the consolidation of patriotic forces and selfless struggle through the idea of restoring historical justice. Obviously, it should be noted that the formation of a great and glorious victory is unquestionably connected with the participation of invincible soldiers of the Armenian secret liberation army.

ԽՄԶՄ փնտրումից հետո Կասալից ծովի հարուստ նավթահանքերին տեր դառնալու համար սկսվել էր ուժեղ մրցակցություն աշխարհի հզոր երկրներին ներկայացնող ազդեցիկ նավթային ընկերությունների միջև: Այդ մրցակցությունից օգտվելու մեծ հույսեր էր փայփայում նաև Ադրբեջանը, որը իր հերթին դիմել էր որոշակի քայլերի: Հասկանալի էր, որ Ադրբեջանի ծրագրերի մեջ էր մտնում նաև Հայաստանին մեկուսացնելը և նրա վրա տնտեսական և քաղաքական ճնշում գործադրելը:¹

¹ Վլադիմիր Պետրոսյան, «Գաղտնի բանակ. Նրա գաղափարախոսությունը» Երևան 2015թ. էջ 243

Ղարաբաղյան Պատերազմի ընթացքում Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ՀԱՀԳԲ) հետախուզական օդակը կարողացել է բացահայտել Ադրբեջանի և Թուրքիայի գաղտնի ծառայությունների՝ Հայաստանին ամեն առումով մեկուսացնելու ծրագիրը: Հենց այս բացահայտման շնորհիվ էլ ձախողվել են Ադրբեջանի կողմից ձեռնարկված մի շարք միջոցառումներ:¹

Արդեն 1990 թվականից, երբ ՀԱՀԳԲ-ը այսպես ասած «սառեցրել» էր իր գործունեությունը, չկարողակալել աչք փակել Արցախյան պատերազմի վրա, սկսեց իր օժանդակությունը պատերազմին: ԱՄԱԼԱ-ի բազմաթիվ անդամներ, խմբեր, սկսեցին մասնակցել ինչպես ռազմական գործողություններին, այսպես էլ Արցախին ցույց տրվող նյութական և ֆինանսական աջակցությանը:²

Այդ գործին իրենց ամբողջ եռանդով լծվեցին այնպիսի անհատներ, ինչպիսիք էին՝ Մոնթե Մելքոնյանը, Մարտիրոս Ժամկոչյանը, Գևորգ Գյուլբեյանը, Հովսեփ Հովսեփյանը, Վազգեն Սիսիլյանը:

1957թ. նոյեմբերի 25-ին ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Ֆրեզնո քաղաքից 40 մղոն հեռու՝ Վայսելիա ավանում, Չարլզ և Զաբել Մելքոնյանների ընտանիքում ծնված **Մոնթե Մելքոնյանը** իր հայ արմատների մասին գիտակցել է դեռևս 1969-1970թթ., երբ այցելել է իր պապերի ծննդավայր Արևմտյան Հայաստան: 1978թ. Մոնթեն մեկնում է Լիբանան՝ մասնակցելու հայկական թաղամասերի պաշտպանությանը և նա տեղի մի քանի ուսանողների հետ հիմնում է «Հայ ուսանողների միությունը»՝ կազմակերպելով Մեծ եղեռնի ոգեկոչման միջոցառումներ: 1980թ. Մոնթեն անդամագրվում է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակին (ԱՄԱԼԱ), որի շարքերից գաղափարական տարաձայնությունների պատճառով հեռանում է 1983 թ: Նույն թվի օգոստոսին, համախոհների հետ ստեղծում է «ՀԱՀԳԲ-հեղափոխական շարժում» կազմակերպությունը: 1985թ. նոյեմբերին երկրորդ անգամ ձերբակալվում է Փարիզում՝ կեղծ անձնագիր կրելու մեղադրանքով, և մինչև 1989թ., հունվարը անցկացնում է Ֆրեն և Պուասի բանտերում:³

1989թ., հունվարին Մոնթեն ազատվում է ձերբակալությունից, իսկ 1990թ. հոկտեմբերին գալիս է Հայաստան: 1991թ. Մ.Մելքոնյանը, «Ավո» կեղծանվամբ, հայ ազատագրական պայքարի անկոտրուն գաղափարներով մեկնում է Հյուսիսային Արցախ, և սեպտեմբերի 14-18-ը մասնակցում է Էրբեջի, Բուզլուխի և Մանաշիդի ազատագրական մարտերին: Վերադառնալով Երևան՝ հավաքում է «Հայրենասիրական» ջոկատի մարտիկներին և միանալով «Կոռիձոր» ջոկատին՝ կրկին մեկնում է Շահումյանի շրջանի Ղարաչինար գյուղը: Մինչև դեկտեմբերի վերջերը մասնակցում է Շահումյանի շրջանի պաշտպանությանը:⁴

1992թ. փետրվարի 4-ին Վազգեն Սարգսյանը Մոնթեին նշանակում է Մարտունու պաշտպանության շտաբի պետ: Մոնթեի հրամանատարությամբ, ազատագրվում է Մարտունու բռնազավթված տարածքների 80%-ը, որի արդյունքում Մարտունին դառնում է անառիկ բերդ՝ Մոնթեբերդ անվանումով: 1992թ. վերջերին Արցախի պաշտպանական ուժերը հասնում են պետական սահման և 20կմ երկարությամբ պահակակետեր հիմնում հյուսիսային սահմանագծերում: 1993թ. մարտին Մոնթեն իր գորաջոկատով մասնակցում է Մարտակերտի շրջանի ազատագրմանը, իսկ մարտի վերջերին ու ապրիլի սկզբին՝ ղեկավարում Քարվաճառի ազատագրման գործողությունը: 1993թ. մարտի 27-ից ապրիլի 2-ը Մոնթեի ջոկատը ոչնչացնում է Քարվաճառում տեղակայված թշնամու ռազմակայանները:⁵

1993թ. հունիսի 12-ին Մոնթեն առաջին անգամ անձամբ չի մասնակցում մարտին, այլ Աշանից ներքև գտնվող Մոթ սարի «08» դիտակետից ղեկավարում է Ադդամի մատույցներում ադրբեջանական կրակակետերի ոչնչացման գործողությունը: Մարտերից հետո,

¹ Նույն տեղում, էջ 240

² <http://www.armtimes.com>

³ iravaban.net

⁴ www.historyofarmenia.am

⁵ www.hayzinvor.am

զինակիցների հետ դիքերից իջնելու ժամանակ, Մարգիլու գյուղի ծայրին ՊՄԲ-1 կայացած կարճատև, առճակատ մարտում զոհվում է արկի՝ աջ քունքը մտած բեկորից:¹

1993թ. հունիսի 19-ին Մոնթեի աճյունն ամփոփվել է Երևանի «Շոաբլուր» պանթեոնում: Մոնթեն իր վերաբերմունքով, գործելակերպով նոր իմաստ ու բովանդակություն հաղորդեց հայրենասիրություն, արդարություն, ազնվություն, նվիրվածություն արժեքներին, իր անձնական օրինակով ցույց տվեց դրանց իրականացումը:²

Հերոսական մեծ ուղի անցած **Մարտիրոս Ժամկոչյանի** նախնիները ցեղասպանության ժամանակ գաղթել էին Կիլիկիայից: Սկզբում տեղափոխվել են Սիրիա, ապա Լիբանան, այստեղ նա ծնվել է 1958թ.: 1991թ. միայնակ տեղափոխվում է Հայաստան:

ԱՄՍԼԱ-ին պաշտոնապես անդամագրվել է Մոնթեի հետ միասին: Մինչ այդ եղել է «Երիտասարդ հայ» շարժման անդամ: Մոնթեի հետ ծանոթացել է 1978թ.: Դա այն ժամանակն էր, երբ Մոնթեն Լիբանան էր ժամանել, որպեսզի հայկական միջավայրում կարողանար հայերեն սովորել: Լիբանանի հայկական թաղամասերը այդ ժամանակ զբաղվում էին ինքնապաշտպանությամբ, քանի որ երկրում քաղաքացիական պատերազմ էր: 1978 թվականի ապրիլի 24-ին Ժամկոչյանը, Ենիգոմյանի և մի քանի այլ ընկերների հետ Լիբանանում հավաքեցին հայ ուսանողությանը, ցեղասպանության տարելիցի կապակցությամբ: Այդ օրը Մոնթեն բազմության առաջ հանդես եկավ մի ճառով, որտեղ անդրադառնում էր ինքնապաշտպանության կազմակերպմանը և Հայկական հարցի լուծմանը: Ժամկոչյանը և Ենիգոմյանը հասկացան, որ Մոնթեն իրենց գաղափարապես շատ մոտ է: Ելույթից հետո շփվելով Մոնթեի հետ, սկսվեց այսպես կոչված «Կայծակնային ընկերությունը»: Կարճ ժամանակ անց Ժամկոչյանը ձեռքբերվեց, և մինչև 80-ական թթ. կեսերը կապ չի ունեցել իր հարազատների և ընկերների հետ: Մոնթեն 1989թ. նամակ է գրում Ժամկոչյանին, որտեղ ասում էր. «Մարտիրոս՝ սա ես գիտեմ, որ դու շուտով ազատ կլինես, ու եթե կազմակերպությունը քեզ արդեն իսկ առաջարկում է վերադարձ դեպի արաբական երկիր, չընդունե՛ս, մեր պայքարը արդեն սկսել է, պետք է գնանք Հայաստան, Արցախ»: Հետագայում Ժամկոչյանը դժբախտաբար այդ նամակը կորցրեց՝ բանտից բանտ տեղափոխվելու պատճառով: Ժամկոչյանի և Մոնթեի՝ Հայաստանում միմյանց միավորելու «կապող օղակը» հանդիսացավ Վազգեն Սարգսյանը: 1990թ. Ժամկոչյանը արդեն 9 տարուց ավելի էր ինչ ձեռքբերված էր: Այդ թվականի աշնանը Վազգեն Սարգսյանը եկել էր Ժնև: Գաղութի հոգևոր հովիվը Ժամկոչյանին տեղեկացնում է Վ. Սարգսյանի Ժնև ժամանման մասին, և թույլատրում է նրան տեսնել: Հանդիպման ժամանակ Վազգեն Սարգսյանի առաջին հարցը հետևյալն էր. «Ի՞նչ կարող ես ինձ ասել Մոնթեի մասին»: Ժամկոչյանը պատասխանեց, որ Մոնթեն գաղափարապես և հոգեպես նվիրված է հայրենիքին, լավ տիրապետում է սովետական յուրաքանչյուր զենքի և որ ամենակարևորն է՝ ինքն իր համար վստահելի մարդկանց երբեք չի դավաճանի:

Խոսակցության ժամանակ Ժամկոչյանը Վ. Սարգսյանին ասաց, որ ուզում է գալ Հայաստան, և միանալ Մոնթեին: Վազգեն Սարգսյանը խոստացավ, Երևան վերադառնալուն պես կապ հաստատի Մոնթեի հետ և միասին որոշեն, թե ինչպես կարելի է կարճ ժամանակում ազատ արձակել իրեն: Ժամկոչյանին գրության և մարդասիրության կոչումով վերադարձրին Հայաստան, որպեսզի մասնակցի երկրաշարժից փլված շենքերի վերականգնման շինարարական աշխատանքներին: Օդանավակայանում Մոնթեն, Զիվանը, Զավեն Պերոսը դիմավորեցին Ժամկոչյանին: Վազգեն Սարգսյանը տեսնելով նրան ասաց. «Վայելի՛ր հայրենիքդ», իսկ Ժամկոչյանը ասաց, որ չի եկել հայրենիքը վայելելու, այլ ուզում է ժամ առաջ գնալ Արցախ: Որոշ ժամանակ անց, Մոնթեի հետ միասին, Ժամկոչյանը ուղղաթիռով գնաց Արցախ՝ Շահումյանի շրջան: 1991թ. հունվարից Մոնթեի հետ կոփվեցին ես մղել Շահումյանի շրջանում, որոնց շուտով միանում է նաև Կոռիձորի Արայիկը:³

¹ Am.hayazg.info

² Iravaban.net նշվ. աշխ

³ Razm.info

Մեծ և անուրանալի է Մարտիրոս Ժամկոչյանի մասնակցությունը Արցախյան պատերազմին, ով այսօր էլ շարունակում է իր հայանպաստ գործունեությունը:¹

Գևորգ Գյուզեյանը ծնվել է 1960թ. Հունիսի 6-ին: Նրա ընտանիքը Կիլիկիայի դեպքերից հետո բոլոր հայերի հետ տարագրվել է Լիբանան: Գյուզեյանը Հայկական հարցով սկսել է հետաքրքրվել 1975թ. հետո, երբ դեռ պատանի էր: Անդամագրվելով ԱՄԱԼԱ-ի շարքերին, հիանալի ռազմական, քաղաքական դաստիարակություն է ստացել:²

Արցախյան պատերազմը սկսվելուն պես Գևորգ Գյուզեյանը մտածում է կամավորական ջոկատ ստեղծելու և Արցախ մեկնելու մասին: Նա մարտական ընկերներ ու համախոհներ ուներ, որոնք Բեյրութից սատարում էին Արցախի ազատագրական շարժմանը: Նրանք երագում էին կամավորական ջոկատ ստեղծել, որը Հնչակյան դրոշմը պարզած կռվեր հանուն Արցախի ազատագրման: Իվերջո, Գևորգին հաջողվում է մեկնել Արցախ: Գևորգի լիբանանահայ ընկերները մեկնելու կապակցությամբ ողջերթի խնջույք կազմակերպեցին, բաժակաճառեր ասացին, հնարավոր բոլոր խոստումները տվին: Օդանավակայանում, հրաժեշտի պահին, ընկերները նրան խնդրեցին, որ ջոկատը կոչվի Մեծն Մուրադի անունով:³

Գալով Հայաստան, Գյուզեյանը «Մեծն Մուրադ» ջոկատի մի կենտրոնատեղին հիմնեց Ոսկեհատ գյուղում, մյուսը՝ Երևանում: Գևորգը սրտի հիվանդության պատճառով զորավարություններին չէր մասնակցում, սակայն ջոկատին ապահովում էր զենքով, հագուստով, սնունդով: Գյուզեյանը արագորեն ծանոթացավ Հայաստանում կազմավորվող մյուս ջոկատների հրամանատարների հետ:⁴

Արցախ ուղևորվելու նախորդ գիշերը Գյուզեյանը ամբողջ ջոկատը շարեց, նախապատրասեց յուրաքանչյուր դժվարության և ջոկատի հրամանատարի տեղակալ նշանակեց վանաձորցի Ռազմիկ Մադարյանին: Մեկնելով Արցախ, «Մեծն Մուրադը» առաջադրանք ստացավ մտնել Մարտակերտ, միանալ Լեոնիդ Ազգալոյանի Ազատագրական բանակին: Մարտակերտում շահումյանցի գաղթականներ շատ կային, որոնք ոչ թե լսել, այլ իրենց աչքով էին տեսել, թե ինչեր է անում թշնամին, երբ զավթում է հայկական շենքեր: Մարտակերտի զորակայանում տեղակայված ջոկատը հրաման ստացավ ազատագրել Մոխրաթաղը: Հետախուզությունը պարզել էր, որ գյուղը թույլ է պաշտպանված:⁵

Մեծնմուրադականները մտնելով Մոխրաթաղ, տեսան դաժան իրականությունը: Բոլոր տները փլված էին, պայթեցված կամ էլ՝ հրդեհված: Կանգուն էր միայն նախկին դպրոցի, թե՛ գյուղխորհրդի շենքը, որի վրա ադրբեջանական դրոշ էր փոխադրվում: Գազիկ Ազիզյանի, Անդրանիկ Եղիազարյանի, Սերգեյ Հովհաննիսյանի ինքնաձիգները որոտացին ու փշրեցին լուսամուտները: Երկրորդ հարկի պատուհաններից ասկյարների կիսամերկ կերպարանքներ երևացին, հետո Գևորգի հրամանով իրար հետևից դուրս եկան պատշգամբ, դանդաղ բարձրացին ձեռքերը:⁶

Շուտով, հորիզոնում մի ամբողջ գումարտակ երևաց, որը տանկերով, հաղթական երթերով Մոխրաթաղին էր մոտենում: Գեղամ Հակոբյանը կրակահերթով ուզում էր ավետել նրանց մուտքը, սակայն շուտով հասկացավ, որ մոտեցող գումարտակը ադրբեջանական էր: Մեծնմուրադականներից Արթուրը, լավ գիտեր Մոխրաթաղից դուրս եկող բոլոր ճանապարհները, ուստի կարողանում է ջոկատն ապահով դուրս հանել շրջափակումից: Գերեվարվածները ջոկատի հետ նահանջում էին, առանց որևէ ձայն հանելու: Հավանաբար այդպես ուզում էին հետագայում փրկել իրենց կյանքը: Իվերջո, ջոկատը հասնում է լեռնալանջ, բոլորը փրկվել էին, սակայն նրանք բոլորն էլ տխուր էին, քանի որ առաջին անգամ էին զգում այդպիսի մորմոք՝ ազատագրած հողը նորից թշնամուն հանձնել:⁷

¹ Նույն տեղում

² Գրիգոր Զանիկյան «Ջոկատը, որ կոչվում էր Մեծն Մուրադ» Երևան 2005թ., էջ 14

³ Նույն տեղում, էջ 17

⁴ Նույն տեղում, էջ 22

⁵ Նույն տեղում, էջ 44

⁶ Նույն տեղում, էջ 45

⁷ Նույն տեղում, էջ 46

«Մեծն Մուրադը» շուտով հրաման ստացավ մասնակցելու Մարտակերտի հեռուստաբարձունքը ազատագրելուն: Ուշ գիշերին լեռ բարձրացան վանաձորցիներ Վալերը, Ռազմիկը, Ռոբերտը, Ֆրունզիկը, բժիշկ Գրիգորը, արթիկցի Կարենը և այլոք: Հեռուստաաշտարակի վրա հարձակումը հանկարծակի էր, թշնամին անակնկալի եկավ, դիրքերը զիջեց, սակայն չնահանջեց: Հաջորդ օրը, ուշ երեկոյան, Գարիկ Ազիզյանը երկար նշանառությունից հետո, նոնականետով ուղղաթիռ խփեց: Այստեղ մարտերը ևս 3 օր շարունակվեցին, և ի վերջո ազերիները ուժասպառ ստիպած եղան նահանջել: Հեռուստաաշտարակի բարձունքն ազատագրվեց:¹

1992թ. Գարնանը, ջոկատը Մոխրաթաղն ազատագրելու երկրորդ հրամանը ստացավ: Նրանք արդեն լավ ծանոթ էին գյուղին: Գրոհը սկսվեց վաղ առավոտյան: Այս անգամ, հակառակորդը իր հիմնական ուժերը կենտրոնացրել էր ոչ թե բուն գյուղում, այլ շրջակա բլուրներում: Գյուղեյանը դա շատ շուտ նկատեց, և իր ջոկատը մի քանի մասի բաժանեց: Ազերիները զգալով, որ կրակը միայն մի ուղղությամբ չի արձակվում, հետ քաշվեցին գյուղի կենտրոնը, ապա համալրված ուժերով շարունակեցին դիմադրել: Սակայն ջոկատն այս անգամ էլ չկարողացավ ազատագրել գյուղը:²

Նույն թվականի ամռանը, ջոկատը Մոխրաթաղն ազատագրելու 3-րդ հրամանը ստացավ: Խրամուղիներում գիշերային հանգստի ժամ էր՝ ոմանք թուղթ էին խաղում, ոմանք էլ քնել էին, երբ օգնական ուժերը մոտեցան դիրքերին: Լույսը չբացված, «Մեծն Մուրադը» վերջնականապես ազատագրեց Մոխրաթաղը, և 10 հոգու գերեվարեց: Ռազմավարն անհամեմատ մեծ էր միայն ինքնաձիգների թիվը 60-ը անցնում էր:³

Հետագայում ջոկատը աչքի ընկավ Ալաշանի մարտերում, ազատագրեց Կիչան և Սրխավենդ գյուղերը, ինչպես նաև Մեծ Շենը, Վերի Շենը, Հոռաթաղը, Վաղուհասը, Կճողուտը և մի շարք այլ տարածքներ:⁴

ՀԱՀԳԲ-ի անդամներից է նաև **Հովսեփ Հովսեփյանը**: 1985 թ. Ֆրանսիական ոստիկանությունը ձերբակալում է Հ. Հովսեփյանին, այն պատճառով, թե իբր նա մասնակցել էր օղակայանից դրամատուն խոշոր գումար փոխադրող գրահամեքենայի առևանգմանը: Բազմաթիվ հարցաքննություններից հետո միայն պարզ դարձավ, որ պարբերաբար գաղտնի տեղեկագրեր են ստացվել, որոնք վկայել են Հովսեփյանի առնչությունները Եվրոպայի տարբեր մայրաքաղաքներում իրագործվող թուրք դեսպանների սպանությունների հետ: Համոզված լինելով որ դատավարության ընթացքում չի կարողանալու իր շահերը պաշտպանել, Հովսեփյանը դիմում է փախուստի: Սկզբում թաքնվում է Ֆրանսիայում, հետո անցնում Հարավսլավիա, ապա Հունաստան, Կիպրոս: Իմանալով որ Մոնթեն էլ ազատվել է բանտից, որոշում են միասին Հայաստան գալ, իհարկե տարբեր ճանապարհներով:

Հովսեփյանն առաջին անգամ Արցախ գնաց 1990թ. Լեռնիդ Ազգալոյանի հետ: Նրանց նպատակը ազգային ազատագրական բանակ ստեղծելն էր, այդ այցելությունը կամավորներ հավաքագրելու խնդիր ուներ: Անշուշտ, մարտական փոքր խմբավորումներ արդեն կային, բայց հավատը վարչակարգի, գորբաչովյան վերակառուցման նկատմամբ դեռևս զորավոր էր: Դա էր պատճառը որ շատերն անվստահությամբ էին նրանց լսում, սեփական ուժերին, հաղթանակին չէին հավատում: Չնայած այդ ամենին՝ անտառում, ձմեռային դաժան պայմաններում Հովսեփյանն ու Ազգալոյանը հիմնեցին ռազմական ճամբար, մասնակցեցին Մարտունու, Հաղրութի, Մարտակերտի՝ Արցախի 27 բնակավայրերի ազատագրմանը: Մարտերից մեկում Հովսեփյանը ոտքից վիրավորվեց: Դաշտային հիվանդանոցում չկարողացան վերքը բուժել, ուղղաթիռով փոխադրեցին Հայաստան, և բոլորովին պատահաբար նա հանդիպեց իր հին փորձված մարտընկերոջը՝ Ասովաձատուր Պետրոսյանին, որին այն ժամանակ մտերմաբար Ալիկ էին կոչում: Պետրոսյանը բացատրեց, որ Արցախին գործնական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ է կամավորական

¹ Նույն տեղում, էջ 55

² Նույն տեղում, էջ 68

³ Նույն տեղում, էջ 85

⁴ Նույն տեղում, էջ 90

ջոկատները հենց Հայաստանում մարզել, մարտունակ դարձնել: Պետրոսյանը դժվարությամբ, սակայն համաձայնվեց այդ առաջարկին: Նախապատրաստական աշխատանքներին զուգահեռ, ամեն օր, ամեն ժամ Արցախից, մասնավորապես Մարտակերտից՝ Գանձասարի մատուցներից տագնապալի լուրեր էին հասնում: Ի վերջո, ջոկատը կազմավորվեց: 500 կամավորներից թույլատրվեց Արցախ մեկնել 375-ին: Ստեղծվեց հրաձգային 9 դասակ, ինչպես նաև սակրավորների, կապի, ակնանետային, հետախուզական, վերջապես՝ հատուկ առաջադրանքներ ունեցող «Իքս» ջոկատը: Վերջին գիշերը Ալիկ Պետրոսյանը, որին վստահել էին գումարտակի ընդհանուր ղեկավարի, համակարգողի պարտականությունները, Հովսեփյանին ասաց.

-Վաղն առավոտյան կընդունես գումարտակը, հրամանատարը դու ես լինելու:

Ու, առանց սպասելու, որ Հովսեփյանը մի բառ ասի, սեղմեց ձեռքն ու շնորհավորեց: Հովսեփյանը մոտեցավ Վազգեն Սարգսյանին և ասաց, որ հրամանատարությունը կստանձնի, եթե նախ Մարտակերտն ազատագրեն: Վազգեն Սարգսյանն ու Ալիկ Պետրոսյանը չպատասխանեցին, այլ բազմանշանակ հայացքով իրար նայեցին: Հետագայում Հովսեփյանն ասել է. «Ես այդ հայացքների իմաստը ընդամենը մեկ օր անց, Արցախում հասկացա:»¹

Այսպիսով, Արցախյան հաղթական կը պատմական արդարության վերականգնման գաղափարով հայրենասիրական ուժերի համախմբման և անձնագոհ պայքարի արգասիք էր: Հստակորեն պետք է նշել, որ այդ փառահեղ հաղթանակի կայացման գործում մեծ և անուրանալի է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի անկոտրում մարտիկների մասնակցությունը:

¹ Aramazd.livejournal.com

ՀՏԴ94(479.243)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՂԵՌՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ

Մարիաննա Ավանեսյան

ԱրՊՀ պատմության և

Իրավագիտության ֆակուլտետ

Պատմություն 3-րդ կուրս

Գիտական ղեկավար՝ պրոֆ. Ա.Վ.Վարդանյան

Բանալի բառեր՝ Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, ԼՂԻՄ-ի կազմավորում, հակահայկական քաղաքականություն, հայ բնակչության իրավունքների ոտնահարում, մշակույթ, հայկական հուշարձաններ, եկեղեցիներ, պատմություն, պատմական ժառանգություն:

Ключевые слова: Нагорный Карабах, Азербайджан, формирования НКАО, антиармянская политика, нарушение прав армянского населения, геноцид армянских памятников, культура, армянские памятники, церкви, история, историческое наследие.

Key words: Nagorno-Karabakh, Azerbaijan, anti-armenian policy, violation of the rights of the Armenian population, culture, armenian monuments, churches, history, historical heritage.

Ամփոփում

1921թ. հուլիսի 5-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն ընդունեց ապօրինի որոշում՝ Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում, ինքնավար մարզի կարգավիճակով: 1923թ. հուլիսի 7-ի դեկրետով կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: ԼՂԻՄ-ի կազմավորման հենց սկզբից իրականացվում էր մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն արհեստականորեն կասեցնելու, հայազգի բնակչության նկատմամբ խտրական կադրային քաղաքականություն վարելու, հայոց լեզուն և մշակույթը սահմանափակելու, հայկական հուշարձանները և մշակութային արժեքները ոչնչացնելու և դրանք յուրացնելու փորձեր: Արցախում իրականացված հակահայկական քաղաքականությունը Ադրբեջանում հետապնդում էր իշխանությունների կողմից առաջադրած գերխնդրին հասնելու հեռահար նպատակ՝ հայաթափել մարզը: Այսպիսի քաղաքականության արդյունքում՝ համաշխարհային քաղաքակրթության մաս կազմող, մարզի պատմամշակութային հուշարձանների մեծ մասը հողին հավասարեցվեց:

ГЕНОЦИД АРМЯНСКИХ ПАМЯТНИКОВ В НКАО

Резюме

В 1921 году 5 июля Кавказское бюро РКП (б) приняло незаконное решение оставить Нагорный Карабах в статусе автономной области Азербайджана. В 1923 году 7-ого июля была сформирована Нагорно-Карабахская автономная область. В самом начале формирования НКАО предпринимались попытки искусственно подавить социально-экономическое развитие региона, провести дискриминационную кадровую политику в отношении армянского населения, ограничить армянский язык и культуру, уничтожить или присвоить армянские памятники и культурные ценности. Антиармянская политика, проводимая в Арцахе азербайджанскими властями преследовала долгосрочную цель установленной властями для демонтажа региона. В результате этой политики большинство историко-культурных памятников региона, входящих в мировую цивилизацию, были уничтожены.

GENOCIDE OF ARMENIAN MONUMENTS IN NKAR

Summary

On 5th July, 1921 the Caucasian Bureau of the Central Committee passed an illegal decision to leave Nagorno-Karabakh in the status of an autonomous region of Azerbaijan. On 7th July, 1923, he

Nagorno-Karabakh Autonomous Region was formed. At the very beginning of the formation of the Nagorno-Karabakh Autonomous Region, attempts were made to artificially suppress the social-economic development of the region, to discriminate the personnel policy towards the armenian population, to limit the armenian language and culture, to destroy or master armenian monuments and cultural values. The anti-armenian policy pursued in Artsakh by the Azerbaijani authorities pursued the long-term goal set by the authorities to dismantle the region. As a result of this policy, most of the historical and cultural monuments of the region, included in the world civilization, were destroyed.

1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումից հետո, Բաքուն ձեռնամուխ է լինում հանրապետության ադրբեջանականացմանը: Ակնհայտ էր, որ իշխանության գլուխն անցած անդրկովկասյան թուրքերի համար հանրապետության ադրբեջանականացման գործընթացի գլխավոր խոչընդոտը հայերն էին, ովքեր առանձնանում էին իրենց կարգավիճակով, ազգային կայացած ինքնությամբ և դավանանքի մշակութային յուրատիպությամբ: Եթե հանրապետության տեղաբնիկ իսլամադավան ժողովուրդների ադրբեջանականացումն իրականացվում էր բռնի ձևով, քաղաքականության միջոցով, ապա հայերի պարագայում Ադրբեջանն այլ լուծում էր գտել: Բաքվի ղեկավարների կողմից գործի էր դրվել տնտեսական և քաղաքական հետապնդումների միջոցով Ադրբեջանին բռնակցված հայկական տարածքներից հայ ժողովրդին դուրս մղելու և հնարավոր բոլոր միջոցներով այդ տարածքները յուրացնելու քաղաքականությունը:¹

1918-1920թթ. Լեռնային Ղարաբաղը ինքնուրույն վարչաքաղաքական միավոր էր: Սակայն ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը բռնակցվում է Ադրբեջանի ԽՍՀ-ին: Որոշման մեջ ասված է. «Ելնելով մուսուլմանների և հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և վերին ու ստորին Ղարաբաղի տնտեսական կապից, Ադրբեջանի հետ ունեցած նրա մշտական կապից՝ Լեռնայի Ղարաբաղը թողնել Ադրբեջանի ՍՍՀ կազմում՝ նրան տրամադրելով լայն մարզային ինքնավարություն՝ վարչական կենտրոն Շուշիի հետ միասին, որը մտնում է ինքնավար մարզի մեջ»:² Չնայած այդ ամենին՝ արցախահայությունը շարունակում էր պայքարը մայր Հայաստանի հետ միավորվելու համար: Ադրբեջանի ղեկավարությունը ոչ միայն դեմ էր ինքնավարությանը, այլև ամեն կերպ պայքարում էր դրա դեմ, ձգձգում էր Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հռչակումը:³

Մոտ երկու տարի տևած ձգձգումներից հետո 1923թ. հուլիսի 7-ի ղեկրեստով Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը հարկադրաբար կազմավորում է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: Սակայն 11.5 հազար քառ. կմ տարածք և 12 գավառ ունեցող պատմական Արցախին թողնվեց միայն 4.4 հազարը, որտեղ գտնվում էր Շուշի քաղաքը և 248 բնակավայր:⁴ Ըստ 1921թ. որոշման ինքնավարությունը պետք է տրվեր ողջ Ղարաբաղին, այլ ոչ թե նրա մի մասին:

Չկարողանալով խուսափել իրեն բռնակցված հայկական տարածքներում խորհրդային տիպի առանձին ազգային-պետական միավորի ստեղծումից, ինչն անընդհատ պիտի բուրդին հիշեցներ ԼՂԻՄ-ի ոչ ադրբեջանական(թուրքական) լինելու փաստը, Ադրբեջանի իշխանությունները վճռում են երկրամասի յուրացումն, ադրբեջանականացումն իրականացնել այլ ճանապարհով: Խնդիր էր դրվում «աննկատ» հայաթափել մարզը և ժողովրդագրական, էթնիկական առումով այն դարձնել թուրքական տարածք, ինչի արդյունքում՝ ա) ինքնորոշման

¹ Աղաբաբյան Ա., ԼՂԻՄ-ի տարածքային յուրացման որոշ դրսևորումներ 1920-1930-ական թթ., <<Պատմություն և մշակույթ>>, հայագիտական հանդես, (գիտական հոդվածների ժողովածու), Եր., 2014, 193-194:

² Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 166:

³ Нагорный Карабах в 1918-1923 гг., (Сборник документов и материалов), Եր., 1992, ст. 669.

⁴ Բալայան Վ., Արցախի պատմություն, Եր., 2002, էջ 321:

սուբեկտ հանդիսացող Արցախի ժողովրդի բացակայության պարագայում կվերանար այդ տարածքներում ազգային-պետական կազմավորման՝ հայկական ինքնավարության գոյության անհրաժեշտությունը, այն կլուծարվեր՝ վերածվելով ԱդրԽՄՀ-ի մեկ կամ մի քանի շրջանների, քայլիս չէր հիշեցնի այդ տարածքների հայկական և հայաբնակ լինելու հանգամանքը, գ)կկասեցվեն հայերի հետագա հնարավոր «նկրտումները» և «ոտնձգությունները» երկրամասի նկատմամբ:Արցախի ժողովրդին իր իսկ սեփական պատմական հողերից «ինքնակամ» բռնագաղթեցնելու ծրագրերն իրականություն դարձնելու համար Բաքուն ԼՂԻՄ-ի նկատմամբ ի սկզբանե որդեգրում է ազգային խտրականության քաղաքականություն, որը դրսևորվում էր մարզի կենսագործունեության բոլոր ոլորտներում:¹ «ԼՂԻՄ-ի կազմավորման հենց սկզբից,-գրում է Վահրամ Բալայանը,-Ադրբեջանի ղեկավարությունը կոպտորեն ոտնահարել է ԼՂԻՄ-ի հայ բնակչության իրավունքներն ու շահերը:Դա արտահայտվել է մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն արհեստականորեն կասեցնելու, ԼՂԻՄ-ը Ադրբեջանի հումքային կցորդը դարձնելու, ԼՂԻՄ-ը Նախիջևանի օրինակով հայազրկելու նպատակով, ժողովրդագրական ակտիվ էքսպանսիա վարելու, հայազգի բնակչության նկատմամբ խտրական կադրային քաղաքականություն վարելու, հայոց լեզուն և մշակույթը սահմանափակելու, հայկական հուշարձանները և մշակութային արժեքները ոչնչացնելու և դրանք յուրացնելու փորձի մեջ»:²

Պատճառն ակնհայտ է՝ այդ հուշարձանները միանշանակ ապացուցում են, որ հայ ժողովուրդը բնիկ և դարեր շարունակ նույն տարածաշրջանում արարող, իր ապագան կերտող էթնոս է:

Սկզբնական շրջանում ադրբեջանական իշխանությունները որոշել էին պարզապես հեշտ տարբերակով մեկը մյուսի հետևից ոչնչացնել այն հուշարձանները որոնք հավաստում են հայերի դարավոր արվեստի, ճարտարապետության, վերջ ի վերջո նրանց տեղաբնիկ լինելու փաստը:Բայց նրանք հասկացան, որ Ղարաբաղում գտնվող հուշարձանները, եկեղեցիներն ու կոթողները հողին հավասարեցնել և ասել, որ դրանք գոյություն չեն ունեցել անհնարին է՝ որոշվեց ընտրել ավելի դյուրին ճանապարհ՝ այդ ամենը համարել իրենց սեփական արժեքները: Մարզում կար ավելի քան 1600 պատմաճարտարապետական հուշարձաններ. Մարտակերտում՝ 20, Հադրութում՝ 410, Մարտունիում՝ 327, Ասկերանում՝ 251, Շուշին իր գյուղերի հետ միասին՝ 103: Ադրբեջանի իշխանությունների թույլտվությամբ և նույնիսկ հրամանով բազմաթիվ հուշարձաններ Լեռնային Ղարաբաղում ոչնչացվեցին:Ադրբեջանի ղեկավարությունը 1968թ. ապրիլի 2-ին հրապարակեց պետության կողմից վերահսկվող հուշարձանների ցանկը մարզում՝ 1600 հուշարձաններից միայն 64 ընդգրկվեց այդ ցանկում:³

Մոսկվայում 1970թ. հրատարակվում է «Տուրիստական ճանապարհները Ադրբեջանի ԽՍՀ-ում», և ինչպես Վ.Բ. Հարությունյանն է նշում՝ այստեղ, ներկայացված էր մարզի միայն 14 հուշարձան, որից՝ Ջրաբերդի ամրոցն է հայկական:⁴ Այստեղ չէին ներկայացված հայկական ճարտարապետության բազմաթիվ նմուշներ այդ թվում Ամարասը՝ 5-րդ դար, Դադիվանքը՝ 5-րդ դար, «Օխտը դռնի»-ն՝ 4-6-րդ դարեր, Գոչավանքը, Խաթրավանքը, Գանձասարը՝ 13-րդ դար և այլն:⁵

Իշխանությունները մարզ այցելող զբոսաշրջիկներին ներկայացնում էին աղավաղված տարբերակ, պատմական դեպքեր ու իրադարձություններ՝ միաժամանակ նրանց հեռու պահելով հայկական հուշարձաններից, որպեսզի խուսափեն վերջիններիս կողմից առաջադրված հարցադրումներից, քանի որ տեսնողը անկասկած կհարցներ հուշարձանը կերտող ժողովրդի մասին, իսկ ադրբեջանցիները ի լուր աշխարհի հայտարարել էին, որ

¹ Աղաբաբյան Ա.,նշվ. հոդվածը,էջ195:

² Նույն տեղում,էջ340:

³ Арутюнян В.Б.,События в Нагорном Карабахе,Ер.,1990,стр.23.

⁴ Там же.,стр.27-28.

⁵ Սարումյան Ն.,Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը 1960-1988,Եր.,2008,էջ100:

մինչև 18-րդ դարը Արցախում հայեր չէին բնակվում: Իշխանության ներկայացուցիչները անգամ հնագույն հայկական գերեզմանոցներն էին համարում վտանգավոր, և այստեղ տեսնում էին հայի ինքնությունը անընդհատ հիշեցնող փաստեր:

Հայկական հուշարձանների ավերմանը մասնակցել են նաև աղբյուրների հնագետները, երկրաբանները, անասնապահները, գրողները: Այսպես, պայթուցիկ նյութեր են գործածվել Մեծ Թաղերի Ծծախաչ, Ագոխի Որվան քարանձավներում, Ամարասի սբ. Գրիգորիսի դամբարանում, Խաթրավանքում, Քաղաքատեղում: Հորաններ են փորվել Դադիվանքի հնագույն հուշարձանների հիմքերի տակ, ավտոդոլեր են վառել Շուշիի սբ. Ամենափրկիչ եկեղեցու որմնամուկներին անմիջապես մոտ՝ ստեղծելով հուշարձաններն ավերելու բարենպաստ պայմաններ: Հարյուրավոր եկեղեցիներ, վանքեր ձևափոխվել են, շահագործվել են որպես փարախներ, կացարաններ, պահեստներ: Հայկական հուշարձանների պեղումների ընթացքում հայտնաբերված արժեքները աղբյուրների հնագետները տեղափոխել են Բաքու, շատ դեպքերում էլ վերածել առուծախի առարկայի: Մինչդեռ, համաձայն գոյություն ունեցած կարգի, ինքնավար մարզի տարածքում պեղումների ընթացքում հայտնաբերված հնագիտական նյութերը պետք է հանձնվեին մարզային պետական պատմաերկրագիտական թանգարանին: Աղբյուրների թանգարաններում ցուցադրվում են հայ մշակույթի հազարավոր նմուշներ, որոնք այցելուներին ներկայացվում են որպես աղբյուրների արժեքները:¹

Շուշիի 7 հազար շինություններից ավերվեցին Ագուլեցոց Սբ. Աստվածածին, Մեղրեցոց Սբ. Աստվածածին եկեղեցիները, Կուսանաց վանքը, հունա-ռուսական եկեղեցին: Շ. Մկրտչյանը գրում է, որ « ում ճարտարապետ Սաիդով անունով հողված է տպագրել «Ստրոխտել» թերթում, (2.02.1966թ.) որտեղ նա կոչ էր անում Շուշիում իրագործել նոր բարբարոսություն, ավերել՝ հայկական գերեզմանոցները, հրաշքով փրկված հուշարձանները: Քանզի, ինչպես նա է գրել, մեռածները կերան ապրողներին»²: Բայց ինչու էին հայկական գերեզմանոցները աղբյուրանական բնակչությանը այդքան խանգարում, միանգամայն պարզ է դառնում, որ դրանք ոչ այնքան շատ խանգարում են մահմեդական բնակչությանը, որքան խանգարում են աղբյուրանական իշխանություններին: Քանի որ հայկական գերեզմանոցներում՝ տապանաքարերում, խաչքարերում կան կարևոր տեղեկություններ, արձանագրություններ, որոնք խանգարում են իշխանությանը առաջ քաշել իրենց կողմից առաջադրված այն տեսակետը, որ հայերն Արցախում հայտնվել են միայն 19-րդ դարում: Բազմիցս կրկնվել է աղբյուրանական իշխանությունների, մտավորականության, քաղաքական և այլ գործիչների կողմից, որ Շուշին 18-րդ դարում աղբյուրանական քաղաք էր, և իբր թե այնտեղ Աղբյուրանի հյուրընկալ հողում հայկական առաջին գաղթականները հայտնվել են 1828 թվականից հետո: «Միայն ԼՂՀ տարածքում, - գրում է Շ. Մկրտչյանը, - պահվում է մոտ 2000 հին գերեզմանատուն՝ հայկական արձանագրություններ կրող 100 հազարավոր մահարձաններով, խաչքարերով, որոնք ունեն 8-18-րդ դարերի թվագրություններով հայերեն տապանագրեր: Ակամա հարց է ծագում ինչպես կարող է Շուշին աղբյուրանական քաղաք հայտարարվել, երբ այնտեղ գտնվող 8 գերեզմանոցներից 7-ը հայկական է և միայն մեկը աղբյուրանական, որտեղ թաղումները սկսվել են 1920թ. եղերական մարտի 23-ից, այսինքն՝ քաղաքի հայերի ցեղասպանությունից հետո միայն: Որպեսզի այդ կարգի հարց այլևս չառաջանար, թուրք-ազերիները, քաղաքի հայկական ավերակները մաքրելուց հետո, սկսեցին ավերել 5 եկեղեցիները, 7 գերեզմանատները և հրաշքով պահպանված հայկական այլ հուշարձանները, որոնք ձևափոխվելով, չէին հարմարեցվել «իրենց» ճարտարապետության ոգուն»:³

Ոչ միայն հին մշակութային արժեքներն էին ոչնչացվում, որոնք վկայում են այդ վայրերի հնամենի ազգային պատկանելությունը, այլև նորերը, որոնք կարող էին հիմք ու օժանդակ

¹ Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղ, Աղբյուրանի իրականացրած ցեղասպանության անատոմիան, Ստեփանակերտ, 2003, էջ 199-200:

² Նույն տեղում, էջ 197:

³ Նույն տեղում, էջ 198:

լինել, որպեսզի հայ ժողովուրդը կարողանար նախադուր քացել դեպի իր անցյալի արժեքները:

Ուշագրավ է, որ պետական մակարդակով հայկական հուշարձանները քանդելու գործընթացը ոչ պատահականորեն զուգադիպեց միաժամանակ դրանք աղվանական հայտարարելու ճանապարհով յուրացնելու գործընթացին: Ակնհայտ է, որ թուրքերն իրենց իսկ ընդունած տեսությանը (այն է՝ հայկական հուշարձանները հայկական չեն, այլ՝ թուրքերի քրիստոնյա նախնիների՝ աղվանների մշակույթ) չէին հավատում, այլապես «աղվանական վանքերի ու խաչքարերի» մասին գրքեր հրատարակելու հետ մեկտեղ այդքան եռանդագին չէին զբաղվի ավերածությամբ: Պարզապես հայկական մշակույթի եղեռնը աշխարհի աչքից թաքցնելու համար էր միայն, որ հորինվեց «աղվանական» վարագույրը:¹

Միջանադարյան Խաչենի իշխանությունը համարեցին աղվանական, իսկ նրան պատկանող Գանձասարը՝ կովկասյան Աղվանքի մշակույթին պատկանող հուշարձան: 1950թ. ադրբեջանական հեղինակները հայ միջնադարյան պատմիչներին, գրողներին, ովքեր ապրել և գործել են Ղարաբաղում սկսեցին կոչել աղվան: Մովսես Կադանկատվացին դարձավ Մայիսեյ Կալանկատույսկի. Կիրակոս Գանձակեցուն, Վարդան Արևելցուն ևս համարեցին իրենց պատմիչները:²

Մարզը կողոպտվում էր, իշխանությունների թողություններ տեղի էր ունենում մշակութային սպանդ: Ադրբեջանը հայ ժողովրդի աչքի առջև գողանում էր նրա նախնիների տքնաջան աշխատանքի շնորհիվ ստեղծված պատմական հարստությունները. այն ամենը ինչ նա սրբություն էր համարում: Արցախի ճարտարապետության, նրա հարուստ մշակութային ժառանգության ոչնչացումը, մեկուսացումը արտաքին աշխարհից Ադրբեջանում հետապնդում էր իշխանությունների առաջադրած գերխնդրին հասնելու հեռահար նպատակներ, այն է՝ Արցախը համարել ադրբեջանցիների հայրենիքը, իսկ նրա կերտած նյութական ու մշակութային արժեքները վերագրել իր ժողովրդին:

1988թ. ապրիլի 27-ին Ադրբեջանի ԽՍՀ նախարարների խորհուրդն իր համար 145 որոշմամբ աղվանական-ադրբեջանական էր հայտարարում Արցախի, Նախիջևանի, Ուտիքի և այլ տարածքներում գտնվող բոլոր և ամեն տեսակ հուշարձանները՝ իսպառ մերժելով նրանցից որևէ մեկի այս կամ այն առնչությունը հայ ժողովրդի հետ: ԵՎ այդ քաղաքականության շնորհիվ «ներկայիս սերունդն արդեն հաստատապես համոզված է և այդպես էլ համարում է, որ Ղարաբաղը՝ Ադրբեջանի անբաժան մասն է, որ խաչքարը խաչդաշ է, հայերը եկվորներ են, անկոչ հյուրեր»:³

Այն ինչ կատարել է թուրքը ԼՂՀՄ-ում, ոճիր է ոչ միայն հայերիս, այլև ընդհանրապես մարդկության հանդեպ, քանի որ այն ամենը, ինչ այլևս ջնջված է հողի երեսից իրավամբ, համաշխարհային քաղաքակրթության մաս է կազմում:

¹ Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ), Եր., 2001, էջ 212:

² Сафарян В., К вопросу о методике присвоения истории и культуры Арцаха в современной Азербайджанской историографии, Տե՛ս Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն անցյալը, ներկան և ապագան, միջազգային գիտաժողով, զեկուցումների հմնադրույթներ, 21-24 հունիսի 2006, Ստեփանակերտ, Եր., 2007, էջ 199:

³ Բալայան Վ., Նշվ. աշխ., էջ 415-416:

ՀՏԴ94(479.243)

ԽԱՉՄԱՉԵՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ

Էլլադա Հայրապետյան
ԱրՊՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետ
«Պատմություն» 4-րդ կուրսի բակալավրիատի ուսանողուհի
Գիտ. դեկ. պ.գ.թ., դոցենտ Ն.Պ. Մարումյան
Էլ. հասցե՝ ellada-hayrapetyan@mail.ru

Բանալի բառեր. Վերակառուցման քաղաքականություն, Արցախյան պատերազմ, Խաչմաչ, Շուշիի ազատագրում, 35-րդ գումարտակ:

Ключевые слова. Политика перестройки, Арцахская война, Хачмач, освобождение Шуши, 35-й батальон.

Key words- reconstruction politiccy, Artsakh war, Khachmach, the liberation of Shushi, the 35th battalion.

Ամփոփում

Հոդվածում ներկայացվել է խաչմաչեցիների հերոսական մասնակցությունը արցախյան ազատագրական պայքարին: Փորձել ենք մեր ձեռքի տակ եղած նյութերի հիման վրա ներկայացնել Խաչմաչ գյուղի երիտասարդների մարտական ուղին, ովքեր պատվով մասնակցել են բոլոր ռազմագործողություններին: Ընդձվել է այն հանգամանքը, որ նրանք ցուցաբերել են մեծ կազմակերպվածություն, նվիրվածություն, հայրենասիրություն:

Հոդվածում հատուկ ուշադրություն ենք դարձրել հայրենիքի համար նահատակված խաչմաչեցիներին և ցույց ենք տվել, որ արցախյան պատերազմը համախմբել է ողջ հայությանը:

УЧАСТИЕ ХАЧМАЧЦЕВ В АРЦАХСКОЙ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ

Резюме

В статье представлено героическое участие хачмачцев в арцахской освободительной борьбе. Основываясь на имевших материалах мы попытались представить боевой путь молодых людей с. Хачмач, которые с честью участвовали во всех военных действиях. Подчеркнут тот факт, что они проявили большую организованность, самоотверженность, патриотизм.

В статье мы особое внимание уделили погибшим односельчанам и показали, что арцахская война объединила всех армян.

THE PARTICIPATION OF THE KHACHMACH FOLK IN THE ARTSAKH LIBERATION WAR

Summary

In the article is presented the heroic participation of the Khachmach folks in the Artsakh liberation war. We tried to introduce the way of fight of the youngsters of Khachmach with the help of the materials we have, those, that heroically participated in the military actions. The fact of their showed organized actions, devotion and patriotism is underlined. A special attention is paid to the martyrdom Khachmach folk, who died for their homeland, and showed that the Artsakh war combined and gather whole Armenian nation.

Արցախը միշտ իր ուրույն տեղն է ունեցել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում: Դարեր շարունակ այն Արևելյան Հայաստանում ծավալված ազատագրական շարժումների հիմնական կենտրոնն է եղել: Մեր ժողովրդի պատմության բախտորոշ պահերին արցախցիները թշնամու դեմ պայքարի առաջին շարքերում՝ իրենց հայրենասիրությամբ ու արիությամբ նորանոր սխրանքների են կոչել սերունդներին:

Դեռևս անցած դարի 20-ական թթ. սկզբներին, խորհրդային իշխանության ջանքերով Արցախի լեռնային մասը, առանց նրա հիմնական բնակչության՝ հայության կամքը հաշվի

առնելու, կուսակցության Կովկասյան բյուրոյի 1921թ.հուլիսի 5-ի անօրինական որոշմամբ, բռնակցվել էր Խորհրդային Ադրբեջանին:

ԽՍՀՄ Կենտկոմի 1985թ.ապրիլյան պլենումից հետո ԽՍՀՄ-ում սկսված գորբաչովյան վերակառուցումն դարաբաղյան հիմնահարցի ժողովրդավարական ու արդարացի լուծման հույս էր ներշնչում արցախցիներին: «Վերակառուցման» տարիները շրջադարձային եղան մեր պատմության մեջ: Այդ ժամանակաշրջանը առաջին հերթին նշանավորվեց արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նոր փուլով: Այն ԽՍՀՄ քաղաքական կյանքում կատարվող փոփոխությունների անխուսափելի հետևանք էր, և ի տարբերություն նախորդ տարիների պայքարի, բացահայտ էր ու հստակ առաջադրում էր ազգային ու քաղաքական նպատակներ, հանդես էր բերում ինքնորոշման սեփական իրավունքը մինչև վերջ պաշտպանելու վճռականություն: Այդ պայքարի հիմնական առանձնահատկությունը նրա աննախադեպ համաժողովրդական բնույթն էր ու միջազգային լայն արձագանքը: Այն, ըստ էության, դարձավ խորհրդային կայսրության փլուզումն արագացնող գործոններից մեկը: ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովը գրում է. «... Միության փլուզումն աստիճանաբար սկսվեց, երբ կենտրոնը չցանկացավ կամ այնուամենայնիվ չկարողացավ լսել Ղարաբաղյան «գանգը»¹:

1988թ.փետրվարի 20-ին հրավիրվեց մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Պատմական նիստը քննարկեց «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մարզային խորհրդի միջնորդությունը՝ մարզը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից հանելու և Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ մտցնելու հարցը»²: Սակայն այս ամենը սվիններով ընդունվեց թե՛ կենտրոնական իշխանությունների, և թե՛ ադրբեջանական իշխանությունների կողմից: Ավելին, Արցախի ժողովրդին պարտադրվեց անհավասար պատերազմ:

Արցախյան պատերազմը հայ ժողովրդի պատմության փառավոր էջերից է: Այն նոր էջ բացեց մեր նորօրյա պատմության համար, համախմբեց ողջ հայությանը: Արցախում չկա այնպիսի մի բնակավայր, որ չզգար պատերազմի մահաբեր շունչը, լինե՞ր դա ադրբեջանական սահմանին մոտ, թե երկրամասի կենտրոնում: Ճիշտ է, պայքարի սկզբից Շոշի ենթաշրջանի ձորակի երիտասարդությունը այն ծանրությունը չէր կրում իր ուսերին, ինչպես, ասենք, Քարին տակի երիտասարդները, սակայն այստեղ առաջիններից մեկը կազմակերպվեցին կամավորական ջոկատներ: Դա ուղղակի անհրաժեշտություն էր, քանի որ թշնամին իր հզոր հենակետերն էր ստեղծել նաև Քիրսի բարձունքներին, որտեղից ամբողջ տարածքը ափի մեջ էր: Լարված էր դրությունը նաև Ամարասի ձորակում, որտեղ, ի դեպ գտնվում են ենթաշրջանի տարածքում գործող տնտեսությունների հիմնական հողահանդակները³:

Խաչմաչ գյուղի տղաները իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել Արցախյան պատերազմին և նրանցից հինգ քաջեր իրենց մատաղ կյանքն են դրել հայրենիքի զոհասեղանին:

Խաչմաչի երիտասարդներից 1990թ.ձևավորվում է ինքնապաշտպանական ջոկատ: Ջոկատի տղաները հավաքվում էին Շոշ գյուղում և կատարում տրված հանձնարարությունները: Քարին տակ գյուղի հերոսամարտի ժամանակ Խաչմաչ գյուղի երիտասարդները գտնվում էին Մխիթարաշեն գյուղի բարձունքներում, որպեսզի կասեցնեին ադրբեջանցիների առաջխաղացումը: Հետագայում գյուղի երիտասարդները երեք հերթափոխով հսկում էին Շոշ գյուղի բարձունքները⁴:

Թշնամին Շոշիի բարձունքներից անընդհատ կրակի տակ էր պահում շրջակա հայկական բնակավայրերը, այդ թվում նաև մայրաքաղաք Ստեփանակերտը: Հարազատ Շոշին վերածվել էր հայկական բնակավայրերի ահաբեկող ավազակաորջի, չարիքի և մահվան խորհրդանիշի, որի համար դեռ մոտ 150 տարի առաջ Կովկասը նվաճած ռուս

¹ Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, 2013, էջ 66-67:

² Պատմական նստաշրջան փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ստեփանակերտ, 2008, էջ 12:

³ Աթայան Բ., Ընդմիջտ մեզ հետ, Ստեփանակերտ, 1995, էջ 4:

⁴ Ըստ Արցախյան պատերազմի մասնակից Էդվարդ Հայրապետյանի հաղորդած տվյալների:

գեներալ Երմոլովն էր ասել. «Ով տիրում է Շուշիին, տիրում է ամբողջ Ղարաբաղին»¹: Արդեն հասունացել էր քաղաքն ազատագրելու և տեղում բնավորված օտար զավթիչների հենակետը ոչնչացնելու համոզվածությունը: Եվ չհապաղեց: Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը որոշում կայացրեց Շուշիում տեղակայված թշնամու կրակակետերը ոչնչացնելու մասին: Համաձայն «Հարսանիք լեռներում» պայմանական անվանումը կրող գործողության ծրագրի, հայոց ինքնապաշտպանության ուժերը մայիսի 8-ի երեկոյան անցան հարձակման, որը ղեկավարում էր փառաբանված զորավար Արկադի Տեր-Թադևոսյանը («Կոմանդոս»): Շուշիի ազատագրման ռազմագործողությանը մասնակցում է նաև խաչմաչեցի Շահեն Արշավիրի Սարգսյանը: Նա S-72 տանկի անձնակազմով (հրամանատար՝ Գ.Ավշարյան) մայիսի 8-ին դեպի Շուշի տանող ճանապարհի շրջադարձին ոչնչացրել է հակառակորդի երկու տանկ, որից հետո հակառակորդը ռմբահարել է տանկը: Անձնակազմից զոհվել են նշանառու Շահեն Սարգսյանը և տանկի մեխանիկ-վարորդ Աշոտ Ավանեսյանը²:

Հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած ակնառու խիզախության և անձնական արիության համար ԼՂՀ նախագահի թիվ 88 հրամանագրով 1996 թվականին Շահենը հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով, իսկ ԼՂՀ նախագահի կողմից 2000 թվականին թիվ 162 հրամանագրով՝ «Շուշիի ազատագրման համար» մեդալով³: Շուշին ապացույցն էր նորօրյա կենաց-մահու ազատամարտում հայության ոգեղեն կամքի և բաղձալի միասնականության իրագործած հրաշքների:

Շուշիի ազատագրումից հետո հունիսի սկզբներին Խաչմաչի երիտասարդներից 8 կամավորներ գնում են Մաճկալաշեն, որպեսզի հսկեն Ամարասի ձորակը: Այստեղից էլ հենց սկիզբ է առնում գյուղի տղաների մարտական ուղին: Հետագայում նրանք պատվով մասնակցում են բոլոր ռազմագործողություններին⁴:

1992թ. հունիսի 1-ին Խաչմաչ և Սարուշեն գյուղերի դասակները միավորվում են և ձևավորվում է ընդհանուր վաշտ՝ Կարմեն Ավետիսյանի հրամանատարությամբ: Իսկ արդեն 1992թ-ի սեպտեմբերի վերջին Ակնաղբյուր, Խաչմաչ, Սարուշեն, Սղնախ, Ջրաղացներ, Մադաթաշեն և Մոշխմատ գյուղերի վաշտերն են միավորվում և կազմավորվում է 35-րդ գումարտակը՝ հրամանատար Արշավիր Ղարամյանի գլխավորությամբ. գումարտակ, որը փայլում է ամբողջ պատերազմի ընթացքում:

1992թ. գումարտակը մասնակցել է Լաչինի՝ «մարդասիրական միջանցքի», Մաֆյան, Փարաջան, Շուլան, Ֆինգա, Սարիբաբ գյուղերի ուղղությամբ տեղակայված թշնամական հենակետերի ոչնչացմանը: Ցավոք, 1992թ. նոյեմբերի 20-ին Շուշիում թշնամու հեռահար հրետանու պայթյունից զոհվել է համագյուղացի Վանյա Մնացականյանը, իսկ 1992թ. դեկտեմբերի 28-ին՝ Շուլանի բարձունքների պաշտպանության ժամանակ՝ Աշոտ Հայրապետյանը: Սակայն պատերազմական գործողությունները շարունակվում էին, իսկ գումարտակը կերտում է նորանոր հաղթանակներ:

1993թ. փետրվարի սկզբին գումարտակը Լաչինի միջանցքից տեղափոխվում է արևելյան (Ասկերան) ուղղություն, իսկ մարտի 5-ին՝ Մարտակերտի ռազմաճակատ: Մեկ օր անց, ինքնապաշտպանության ուժերի մյուս ստորաբաժանումների հետ համագործակցած գումարտակն անցնում է հակահարձակման Դրմբոն-Կուսապատ ուղղությամբ և զբաղեցնում նախ Կուսապատի, ապա Դամիրլվի մերձակա ռազմավարական կարևոր նշանակության բարձունքները⁵:

1993թ. հունիսի կեսերից մինչև հուլիսի 23-ը 35-րդ գումարտակը Արշավիր Ղարամյանի հրամանատարությամբ առաջ է շարժվում Շահբուլաղ-Թարնայուտ գծով, որի

¹ <http://armenian-community.ge/News/2452>

² Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ. հանրագիտարան, Երևան, 2004, էջ 582:

³ Խաչմաչ գյուղի դպրոցի արխիվ:

⁴ Հստ Արցախյան պատերազմի մասնակից Էմիլ Հայրապետյանի հաղորդած տվյալների:

⁵ Հասարթյան Ս. «Ոսկե Արծիվ» շքանշանի ասպետները, Երևան, 2015, էջ 186:

հետ փոխգործակցում էին Կարեն Բաբայանի 71-րդ առանձին գումարտակը և Ալբերտ Եղիազարյանի առանձին վաշտը¹: Այնուհետև Խաչմաչի տղաները գումարտակի կազմում մասնակցում են Ադդամի շրջանում տեղակայված Ջինլի, Շահբուլաղ, Գիյասլի, Քենգեղլի, Գյուլիջա, Սումա, Շիլար թշանամական ռազմահենակետերի ոչնչացմանը: 1993թ. դեկտեմբերի 29-ին Ադդամի շրջանի Սալախլի-Քենգեղլի բնակավայրում թշնամու կրակակետերը ոչնչացնելու ռազմագործողության ժամանակ ականանետից զոհվել է համագյուղացի Գառնիկ Հարությունյանը, իսկ Ադդամի շրջանի Թալիշլար գյուղի մոտակայքում ականանետից զոհվել է Կամո Մնացականյանը: Գումարտակը իր մասնակցությունն ունեցավ նաև Օմարի մարտերին: Մինչև վերջ պատվով կատարեց հայրենիքին տված խոստումը:

Վերջապես 1994թ. մայիս՝ հաղթանակ: Հաղթանակ կերտողներից շատերն ընկան: «Խաչմաչի տղաները ցուցաբերել են մեծ կազմակերպվածություն, նվիրվածություն և բոլոր իրավիճակներում չկորցնելով ոգու ուժը, լիարժեք կատարել են իրենց՝ հայ ազատամարտիկի սուրբ պարտականությունը»²:

Խաչմաչի երիտասարդները շարունակելով իրենց նախորդների հայրենանվեր գործունեությունը, զինակցելով հայրենիքի անվտանգության գաղափարը, ակտիվ մասնակցություն են ունեցել նաև 2016թ. Ապրիլյան պատերազմին: Թշնամու ոտնձգությունները կասեցնելու նպատակով առաջնագիծ են մեկնել 22 խաչմաչեցիներ: Նրանցից 5-ը արժանացել են մեդալների:

¹ Հարությունյան Մ. Հայաստան-Արցախ Պատմության և արդիականության զուգահեռներում, հոդվածների ժողովածու, Գիրք առաջին, Ստեփանակերտ, 2009, էջ 100:

² Վաշտի հրամանատար Կարմեն Ավետիսյան:

ՀՏԴ94(479.243)

ՃԱՐՏԱՐԳԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ

Գայանե Բաբաջանյան
Պատմության և իրավագիտության ֆակուլտետի
Պատմության
4-րդ կուրսի ուսանողուհի
Ղեկավար՝ Սարումյան Ն.Պ., պատմ.գիտ.թեկ. դոցենտ

Բանալի բառեր: Վերակառուցման քաղաքականություն, Լեռնային Ղարաբաղ, Ճարտար, «Արայիկ» ջոկատ, Վահրամ Ղահրամանյան, 1992թ. հունիսի 28, 23-րդ գումարտակ, 24-րդ գումարտակ:

Ключевые слова: Политика перестройки, Нагорный Карабах, Чартар, команда, «Араика», Ваграм Каграманян, 28 июня 1992 г., 23-й и 24-й батальоны.

Key Words: Deconstructing Policy, Nagorno Karabakh, Chartar, "Arayik" detachment, Vahram Ghahramanyan, 1992 Jun. 28, 23th battalion, 24th battalion.

Ամփոփում

Հոդվածում ներկայացվել է ճարտարացիների հերոսական մասնակցությունը Արցախյան ազատագրական պայքարին և Արցախի քաղաքական կյանքին: Փորձենք կատարել մեր ձեռքի տակ եղած նյութերի հիման վրա ներկայացնել ճարտարացիների հերոսական սխրագործությունները: Խոսվում է ֆիդայական ջոկատների, հետագայում գումարտակների ստեղծման մասին:

Ճարտարացիները 1988թ. սկսված ազատագրական պայքարում ոչ միայն ադրբեջանական զավթիչներից պաշտպանեցին հայրենի գյուղն ու շրջանը, այլև ստիպեցին իրենց հողում բուն դրած թշնամուն հեռանալ Արցախից: Հատուկ ուշադրություն է դարձվել հայրենիքի համար իրենց կյանքը զոհած ճարտարացիներին:

Արցախի ու Ճարտարի՝ հայ ժողովրդի համար ճակատագրական այդ օրերին նորոքյա մեր հերոսների սխրագործություններն անմոռանալի են, նրանց անունները՝ անմահ: Հոդվածում ցույց է տրվել, որ Արցախյան պատերազմը համախմբեց ողջ հայությանը ու բոլորը մեկ մարդու նման ոտքի կանգնեցին պաշտպանելու Արցախ աշխարհը:

Резюме

В статье представлены героическое участие Чартарцев в освободительной борьбе Арцаха и политическая жизнь республики. Исходя из материала, которые оказалась под рукой, мы попытались показать героические поступки Чартарцев. Отряды самообороны, которые потом превратились в батальоны, такжестали предметом нашего исследования. Начиная с 1988г., Чартарцы не только защитили родную деревню и регион от азербайджанских захватчиков, но и заставили своих врагов отступить от Арцаха. Особое внимание было уделено тем Чартарцам, которые пожертвовали своей жизнью во имя родины.

Поступки героев в эти роковые дни для Арцаха, Чартара и всех армян незабываемы, их имена бессмертны. В статье мы показали, что Арцахская война объединила всех армян и все как один человек восстали на защиту Арцаха.

Summary

The article is about the heroic involvement of people of Chartar in the Artsakh liberation struggle and in the political life of Artsakh. It is an attempt to showcase the heroic deeds of the people of Chartar based on the materials we had. It is also spoken about the formation of self-defence detachments and afterwards battalions. In the liberation struggle starting from 1988, the people of Chartar not only defended their home villages and region, but also made the Azerbaijani people to

free their homeland and leave peacefully. A special regard is given to the patriots who gave their lives to liberate Artsakh. Their heroic deeds in this historical period of Armenian history will never be forgotten or overlooked. Artsakh Liberation War united Armenian all over the world who stood up to protect their homeland.

1985թ. գորբաշույվյան վերակառուցման քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի հայությանը հնարավորություն տվեց հանդես գալու իրենց ոտնահարված իրավունքները պաշտպանելու, և ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորվելու համար:

Ստավորականության և ուսանողության շրջանում սկսեցին բարձրաձայն քննարկվել ԼՂԻՄ-ում տասնամյակներ շարունակ կուտակված քաղաքական, տնտեսական, մշակութային հիմնահարցերը՝ մատնանշվելով հայկական երկրամասը մայր Հայաստանին վերամիավորելու՝ վաղեմի փափագած իդաերի իրագործման ուղիները:¹

1987թ. վերջին և 1988թ. սկզբներին կենտրոնական կուսակցական ու պետական մարմիններում ընդունվել են ԼՂԻՄ-ի հայության ներկայացուցիչների չորս պատվիրակություններ, որոնց հավաստիացրին, թե մոտ ապագայում Արցախի հիմնահարցը արդարացի լուծում կստանա: Մոսկվա մեկնած պատվիրակություններից մեկի անդամ էր նաև Ճարտարի կոլտնեսության նախագահ Լեոնարդ Մայիլյանը:

Սկսված ազատագրական պայքարի ալիքն ընդգրկեց ամբողջ Արցախը: Արցախյան շարժման առաջին իսկ օրվանից ազատամարտիկների առաջին շարքերում հանդես էին գալիս նաև Ճարտարցիները:

1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու հարցով Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առջև միջնորդելու մասին, որն անտեսվեց ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի կողմից: Ադրբեջանը Մոսկվայի հովանավորությամբ նախընտրեց հարցի կարգավորման բռնի մեթոդներ, իսկ հայ ժողովուրդը միահամուռ ոտքի կանգնեց՝ պաշտպանելու իր հողն ու հայրենիքը:²

Արցախյան պատերազմը հայ ժողովրդի պատմության փառավոր էջերից է: Այն նոր էջ բացեց մեր նորօրյա պատմության համար, համախմբեց ողջ հայությանը: Ղարաբաղում չկա այնպիսի մի բնակավայր, որ չզգար պատերազմի մահաբեր շունչը:

1988-1994 թվականներին տեղի ունեցած ազատագրական այդ պատերազմում Արցախը փրկելու համար ոտքի էր կանգնել նաև ամբողջ Ճարտարի բնակչությունը:

Ճարտարում գործում էր ինքնապաշտպանական ջոկատներ: Նման ջոկատ կազմավորվեց 1988 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին Ղուզե Ճարտարում «Թևան» կամավորական ջոկատը, որի հրամանատարն էր Կամո Սաֆարյանը:³ Այս ջոկատի կազմում էին Էդիկ Ղուկասյանը, Կամո Հարությունյանը և այլք:⁴ Գյուլնե Ճարտարում նույնպես գործում էր ինքնապաշտպանական ջոկատ: Այդ ջոկատների տղաները կատարում էին տարբեր առաքելություններ: Սկզբնական շրջանում չկար զենք ու զինամթերք և նրանց հիմնական խնդիրն էր պահպանել տնտեսական օբյեկտները և թույլ չտալ որպեսզի ոտնձգություններ կատարեն հարևանությամբ գտնվող ազերի բնակավայրերի հրոսակները: ⁵

1991թ. վերջերին և 1992թ. սկզբներին Լեռնային Ղարաբաղի տարածքում կազմավորվեցին 10-ից ավելի վաշտեր ու դասակներ, որոնց մեջ ընդգրկվեցին շուրջ հազար

¹Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականության պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 278:

²Հակոբյան Ս., ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ.), Երևան, 2011, էջ 4-5:

³Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994թթ., Երևան, 2004, էջ 455:

⁴Ըստ Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից Վահրամ Ղահրամանյանի հուշերի:

⁵Ըստ Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից Կարեն Թովմասյանի հուշերի:

մարտիկներ: Ինքնապաշտպանության վաշտ ստեղծվեց նաև Ճարտարում, որը ղեկավարում էր Կառլեն Սադյանը:

Ճարտարացիների առաջին հարձակողական գործողությունը եղավ 1991թ. դեկտեմբերի 7-ին հարևան Վերին Դիվանլար գյուղի ագատագրումը: 1992թ. փետրվարի 17-ին ինքնապաշտպանական ջոկատները մարտական գործողություններ ծավալեցին Ղարադաղլու գյուղի թշնամական հենակետի ուղղությամբ: Մասնակցելու պատրաստակամություն հանդես բերեցին շրջակա գրեթե բոլոր գյուղերի ինքնապաշտպանական ջոկատները, այդ թվում նաև Մարտունու ու Ճարտարի ջոկատները: Համառ մարտերից հետո հայ ազատամարտիկներին հաջողվեց ազատագրել չարյաց բույն դարձած Ղարադաղլուն: 1992թ. փետրվարի 22-ին Մարտունու ինքնապաշտպանական ջոկատների առջև խնդիր դրվեց՝ վերացնել Մարտունու տարածք խցկված, բայց Ֆիզուլու վարչական ենթակայության տակ գտնվող Վերին Վեյսալուի կրակակետը¹, որը փակելով Մարտունու շրջանի խոշոր բնակավայրերից մեկի՝ Ճարտարի հաղորդակցության ճանապարհը շրջկենտրոնի հետ, հարաճուն վտանգ էր ներկայացնում Ճարտարացիների համար: Շուտով այդ վտանգը նույնպես չեզոքացվեց:

Ղարադաղլուի և Վերին Վեյսալուի ռազմագործողությունները կարևոր հաղթանակներ էին Մարտունու շրջանում միասնական ճակատ ու ապահով թիկունք ստեղծելու, ինչպես նաև Մարտունին ու հարակից գյուղերը անառիկ դարձնելու գործում:

Հաջորդ կարևոր ռազմագործողությունը Շուշիի ազատագրումն էր, որտեղ իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին նաև Ճարտարացիները:

Կարճ ժամանակահատվածում իրականացվեց ինքնապաշտպանական ջոկատների միավորման, նրանց նյութատեխնիկական բազայի՝ սպառազինության և տեխնիկայի վերաբախշման գործընթացը: Շրջաններում, վաշտերի փոխարեն, խմբերը միավորվելով՝ կազմեցին խոշոր ջոկատներ: Նման ջոկատ կազմավորվեց նաև Ճարտարում:

1992թ. մայիսի 14-ին ստեղծվեց «Արայիկ» հատուկ ջոկատը, հրամանատար ընտրվեց Վահրամ Ղահրամանյանը: Ջոկատը անվանվեց գյուղի առաջին զոհ Արայիկ Ավանեսյանի անունով, ով Երևանի Պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող էր:²

1992թ. մայիսյան հաղթանակներին հաջորդած կարճատև դադարից հետո՝ ամառվա սկզբներին, ադրբեջանական զինուժը՝ նախկին խորհրդային 4-րդ բանակի դեսանտագրոհային ստորաբաժանումների անմիջական մասնակցությամբ, հարձակողական գործողություններ ծավալեց հակամարտության գոտու ողջ երկարությամբ: Ծանր իրավիճակ էր ստեղծվել նաև մարտագծի արևելյան և հարավարևելյան հատվածում:

1992թ. հունիսի 28-ի վաղ առավոտյան ադրբեջանական բազմաքանակ հետևակը, հրետանային հզոր նախապատրաստությունից հետո զրահակիր տեխնիկայի աջակցությամբ հարձակման անցավ Մարտունու շրջանի Ճարտար, Մաճկալաշեն գյուղերի, Կարմիր Շուկա ավանի և հարակից բնակավայրերի ուղղություններով:³ Հակառակորդը Ճարտար-Մաճկալաշեն ուղղությամբ, որտեղ գործողությունները ղեկավարում էին Ճարտարի գումարտակի հրամանատար Մովսես Հակոբյանը, Մաճկալաշենի գումարտակի հրամանատար Արմեն Մելքումյանը, Ակնաղբյուրի վաշտի հրամանատար Արշավիր Ղարամյանը և ուրիշներ,⁴ գործողության մեջ էր դրել 18 միավոր զրահատեխնիկա և բազմաքանակ կենդանի ուժ:

Հունիսի 28-ին Ճարտարը լուսադեմին ենթարկվեց ահավոր հրետանակոծության՝ արձակվեց մոտ 1000 գրադի արկ, ընդ որում բլուրների վրա: Թշնամին համոզված էր, որ

¹Հասրաթյան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, 2009, էջ 102:

²Ըստ Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից Վահրամ Ղահրամանյանի հուշերի:

³Հասրաթյան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, էջ 96:

⁴Հասրաթյան Ս., Վարանդայի հովտի պաշտպանները, Ստեփանակերտ, 2014, էջ 30:

գյուղացիները խուճապի կենթարկվեն, զրահատեխնիկայի օգնությամբ էլ գյուղը հանգիստ կվերցնեն և կօգտագործեն ըստ նպատակի:¹ Նրանց նպատակն էր կոտրել հայկական ուժերի դիմադրությունը, հյուսիսից մտնել Ճարտար, իսկ հարավից՝ Ամարասի հովտով հասնել Մաճկալաշեն-Սոս բնագիծն և այստեղից շեշտակի հարվածով առաջանալ ու միանալ Կարմիր շուկայի ուղղությամբ գործող ստորաբաժանումներին:² Ճարտարի վրա ձեռնարկված գրոհը անհաջող ավարտ ունեցավ:

Օրվա մարտական գործողությունները հաջող ավարտ ունեցան նաև Կարմիր շուկայի և Բերդաշենի տարածքում: Ադրբեջանական ուժերի գրոհը կասեցված էր, իսկ դարաբաղյան ստորաբաժանումների պաշտպանական գիծն՝ անառիկ:

Հունիսի 28-ին տեղի ունեցած ճակատամարտից անմիջապես հետո, ինչպես Մարտունու ողջ տարածքում, այնպես էլ Ճարտարի տարածքում սկսեցին ձևավորվել գումարտակային կազմավորումներ:

Հունիսի սկզբին Ճարտարում ստեղծվեց 23-րդ գումարտակը, որտեղ ներգրավված էին Վերին և Ներքին Ճարտարի ջոկատները և Կառլեն Սադյանը հրամանատարի տեղը զիջեց Մովսես Հակոբյանին: Մերձակա ինքնապաշտպանական ջոկատներից Ճարտարի գումարտակի շարքերն էին մտնում հարյուրավոր կամավորներ ու մարտիկներ: Գումարտակն արդեն 800-ից ավելի մարտիկ ուներ և հրամանատարությունը որոշում ընդունեց բաժանել այն երկու գումարտակների:³

23-րդ գումարտակի հրամանատարը դարձավ Յուրի Բաբաջանյանը, իսկ մի քանի ամիս անց նրան փոխարինեց Վահրամ Ղահրամանյանը,⁴ իսկ 24-րդ գումարտակի հրամանատար՝ Կարեն Թովմասյանը:

1992թ. ամառվա վերջին և աշնան սկզբներին հանրապետության հյուսիսային հատվածում ունեցած մի շարք հաջողություններից ոգեպնդված, սեպտեմբերի 4-ին հակառակորդը ակտիվ հարձակողական մարտեր սկսեց ծավալել հանրապետության արևելյան և հարավարևելյան հատվածում: Ազատագրվեցին Ավդալ և Գյուլափլու գյուղերը, Դավաբեկ բարձունքը: Ավդալ-Գյուլափլու օպերացիայից հետո թշնամին նոր գրոհ ձեռնարկեց Ճարտար-Մաճկալաշեն ուղղություններով: Մարտագծի ողջ երկարությամբ հայկական ուժերի կողմից ստեղծված ամուր պաշտպանության շնորհիվ հակառակորդը ստիպված էր հրաժարվել իր հետագա հարձակողական գործողություններից: Այդ մարտում աչքի են ընկել Մաճկալաշենի ու Սոսի ջոկատների և Մարտունու, Ճարտարի գումարտակների ստորաբաժանումները:

Աշնան սկզբներին տեղի ունեցած հաջող մարտերից հետո պաշտպանական շրջանի հրամանատարը, խորհրդակցելով իր շտաբի բարձրաստիճան սպայակազմի հետ որոշում ընդունեց պաշտպանությունից անցնել հարձակողական գործողությունների:

Հոկտեմբերի 2-ին հայ ազատամարտիկները լեցրին Ամիրանլարի, Մուղանլուի և Կուրապատկինոյի կրակակետերը, որտեղից անընդհատ հրետանակոծվում էր Մարտունի քաղաքը:⁵ Այս կրակակետերի լեցման գործում մեծ էր Ճարտարի տանկիստների դերը: Զինտեխնիկական համարվեց Ճարտարի գումարտակից այստեղ բերված երկու տանկերով «Ճուտոներ» և «Ճուտիկներ» անձնակազմով:

Հոկտեմբերի 2-ի հաջող օպերացիայից հետո պաշտպանական շրջանի հրամանատարությունն ուշադրությունը սևեռեց մարտագծի հարավային ուղղության վրա: Անհրաժեշտ էր հակառակորդին դուրս շարժել Ուրյան և Խազազ բարձունքներում տեղակայված հենակետերից և սեփական զինուժի համար ապահովել գերիշխող դիրքեր: Որոշվեց ռազմագործողությունն սկսել հոկտեմբերի 8-ին: Հոկտեմբերի 8-ի առավոտյան

¹Ստեփանակերտ, 30 Մայիսի, 2017:

²Հասարայան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, էջ 98:

³Ըստ Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից **Բարմիկ Գաբրիելյանի** հուշերի:

⁴Ըստ Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից **Վահրամ Ղահրամանյանի** հուշերի:

⁵Արքահամյան Հ., Մատնչող Արցախ, գիրք Գ, էջ 433:

պաշտպանական շրջանի ստորաբաժանումները Ուրյան սարի և Խազազ բարձունքի ուղղությամբ սկսեցին հարձակումը: Մեր ստորաբաժանումների փայլուն գործողությունների շնորհիվ Ուրյանի բարձունքը մաքրվեց հակառակորդից:¹ Սակայն Խազազի ուղղությամբ հաջողությունը չուղեկցեց հայ ազատամարտիկներին:

Նոր տարվա մեկնարկը շրջանի համար նշանավորվեց պաշտպանողական բնույթի մարտերով: Հունվարի 3-ին Ճարտարին մերձակա Ուրյան լեռան ուղղությամբ թշնամին ձեռնարկեց խոշորածավալ հարձակում: Բոլորի համար պարզ էր, որ վերագրավելով Ուրյան սարը, հակառակորդը կրկին հնարավորություն կստանա իշխել ինչպես Մարտունի քաղաքի, այնպես էլ հարակից բոլոր գյուղերի վրա: Պաշտպանական շրջանի հրամանատարությունը բնագիծը պաշտպանող Ճարտարի գումարտակի առջև խնդիր դրեց ցանկացած գնով դիմակայել թշնամուն: Այդպես էլ արվեց: Թշնամու բոլոր փորձերը ավարտվեցին անարդյունք:²

Ճարտարացիների հաջորդ նշանավոր ռազմագործողությունը Գրզըլ Գայա բարձունքի ազատագրումն է: 1993թ. ապրիլի 1-ին Ճարտարի թիվ 24 գումարտակը Կարեն Թովմասյանի հրամանատարությամբ շեշտակի հարվածով ընդամենը 10 րոպեի ընթացքում տիրեց Գրզըլ Գայա բարձունքին և դրա շրջակա տարածքին:

Ճարտարի գումարտակները իրենց փայլուն դրսևորեցին Աղդամի, Ֆիզուլու, Ջեբրայիլի, Կուբաթլուի, Հորադիզի, Մարտակերտի ազատագրական մարտերին: Պատերազմական գործողությունների ծավալման ժամանակ հայրենի երկրի ինքնության ու ինքնուրույնության պաշտպանության վեհ գործին բազմաթիվ հայորդիների հետ նահատակվել են նաև 119 Ճարտարացիներ: Զոհված ազատամարտիկներից հետմահու առաջին աստիճանի «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրվել են Անդրանիկ Ղահրամանյանը, Հովիկ Հարությունյանը, իսկ երկրորդ աստիճանի «Մարտական խաչ» շքանշանով՝ Բորիկ Ղազարյանը, Սերժ Հայրապետյանը, Սեյրան Ամիրյանը, Հովիկ Առուստամյանը, Արամայիս Հայրապետյանը, Հրայր Պողոսյանը, Յուրի Բաբաջանյանը, Գարիկ Պետրոսյանը:³

Ճարտարացիների հոգու պարտքն էր կառուցել մի հուշարձան՝ 1988-1994թթ. Արցախը թուրք-ադրեիներից ազատագրելու համար զոհված համազրուդացիների հիշատակին: 2007-2008թթ. Մշակույթի պալատի մոտ կառուցվեց զոհված ազատամարտիկների հիշատակի խորհրդանշական հուշարձան, որի բացումը տեղի ունեցավ 2008թ. մայիսի 2-ին: Բացմանը ներկա է գտնվել Պարզև Արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, վարչապետ Արա Հարությունյանը, ՀՀ Գլխավոր շտաբի պետ Մովսես Հակոբյանը, Ազգային ժողովի պատագամավորներ, ինչպես նաև համազրուդացիներ:

Հազարամյա մաքառումների փորձով իմաստնացած արցախահայությունը կանգնեց անկախ պետականության կերտման շեմին:

¹Հասարայան Ս., «Ոսկեարծիվ» շքանշանի ասպետները, Երևան, 2011, էջ 153:

²Նույնի, էջ 127:

³Մելքումյան Ս., Ճարտար, էջ 79:

ՀՏՂ94(479.243:327.7)

**ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՍՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԽՆԴԻՐ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ**

Աննա Դեմիրխանյան
Վանաձորի պետական համալսարան
Պատմաաշխարհագրական ֆակուլտետ 3-րդ կուրս
anna.demirxanyan@ mail.ru

Բանալի բառեր. ԵԱՀԿ, Մինսկի խումբ, հակամարտություն, կարգավորում, տարածքային ամբողջականություն, Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, հիմնախնդիր, համանախագահներ, բանակցային գործընթաց, ուժի չկիրառում, մադրիդյան սկզբունքներ, փոխզիջում, դարաբաղյան հիմնախնդիր:

Ключевые слова: ОБСЕ, Минская группа, конфликт, урегулирование, территориальная целостность, Нагорный Карабах, Азербайджан, сопредседатели, переговорный процесс, неприменение силы, Мадридские принципы, компромисс, карабахский вопрос.

Key words: OSCE, Minsk Group, Conflict, Conflict, Territorial Integrity, Nagorny Karabakh, Azerbaijan, Co - Rapporteurs, Transparent Process, Implementation of the Madrid Principles, Compromise, Karabakh Question.

Ամփոփում

Այսպիսով կարելի է նշել, որ մինչև օրս էլ դարաբաղյան հիմնախնդիրը մնում է չլուծված, չնայած որ բանակցային գործընթացը շարունակվում է: Գլխավոր խնդիրը կայանում է նրանում, որ այս հիմնախնդիրը պետք է լուծվի որքան հնարավոր է շուտ և խաղաղ ճանապարհով և այս գործընթացի իրականացումը պետք է տեղի ունենա ԵԱՀԿ Մինսկի միջնորդությամբ, որի հիմքում պետք է դրվի <<Մադրիդյան սկզբունքները>>(ուժի և ուժի սպառնալիքի չկիրառում): Հարկ է նշել, որ այս հիմնախնդիրը դեռևս շարունակում է մնալ չկարգավորված, քանի որ կողմերից ոչ մեկն էլ հստակ փոխզիջման չեն գնացել:

Анна Демирханян
Ванадзорский государственный университет
Факультет истории и географии 3-ий курс
anna.demirxanyan@ mail.ru

Резюме

Основная проблема Карабаха остается неурегулированной, хотя переговорный процесс продолжается. И вопрос заключается в том, что она должна быть решена как можно скорее и мирно, а осуществление этого процесса должно произойти через посредничество ОБСЕ, который должен основываться на Мадридских принципах. Можно отметить, что эта проблема все еще остается нерешенной, поскольку ни одна из сторон не достигла четкого компромисса.

Anna Demirkhanyan
Vanadzor State University
Faculty of History and Geography, 3rd year
anna.demirxanyan@ mail.ru

Summary

Thus, it can also be mentioned that the main problem of Karabakh remains unsettled, although the negotiation process continues. The main problem is that this problem must be resolved as soon as possible and peacefully, and the implementation of this process must take place through the mediation of the OSCE, which must be based on the Madrid principle. It can be noted that this problem is still unresolved, as none side has reached a clear compromise.

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը՝ ԵԱՀԿ-ն հիմնվել է 1973թ: Այն անվտանգության հարցերով զբաղվող աշխարհի ամենահզոր

տարածաշրջանային քաղաքական կազմակերպություններից է: Կազմակերպության գործունեության գերակայություններից են հակամարտությունների կանխարգելումը, ճգնաժամերի կառավարումը և հետկոնֆլիկտային վերականգնումը: Խմբի ձևավորման մասին որոշումն ընդունել է անդամ պետությունների նախարարների խորհուրդը 1992թ. մարտի 24-ին: Հայաստանը ԵԱՀԿ-ին անդամակցում է 1992թ. հունվարի 30-ից: ԵԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության ղեկավարը ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արման Կիրակոսյանն է: Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման շուրջ բանակցություններն ընթանում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների (Ռուսաստան Իգոր Պոպով, Ֆրանսիա Ժակ Ֆոր, ԱՄՆ՝ Ջեյմս Ուորլիք) միջնորդությամբ: ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամներ են նաև Բելառուսը, Գերմանիան, Իտալիան, Շվեդիան, Ֆինլանդիան, Թուրքիան, Հայաստանը և Ադրբեյջանը:

1995թ. մարտի 31-ին ԵԱՀԿ-ի ավագների խորհրդի փաստաթղթում առաջին անգամ ԼՂ-ին տրվել է որպես հակամարտության կարգավորման 2 մոտեցում՝ փուլային և փաթեթային: Փուլային լուծման տրամաբանությունը ենթադրում է համաձայնության ձեռքբերում ԼՂ կարգավիճակին չառնչվող հարցերում: Մինչև 1995թ. -ի վերջը գործընթացում գերիշխել է այս մոտեցումը և հակամարտության կողմերը բանակցել են զինված հակամարտության դադարեցման մասին քաղաքական մեծ համաձայնագրի կնքման շուրջ: 1995թ. վերջին բանակցային գործընթացը մտավ փակուղի : 1996թ. դեկտեմբերին ԵԱՀԿ Լիսաբոնի գագաթնաժողովում փորձ է արվել բանակցությունները դուրս բերել ստեղծված փակուղուց: Սակայն գագաթնաժողովի գործող նախագահի հայտարարությունը , որով վերահաստատվում էր Ադրբեյջանի տարածքային ամբողջականությունը և նախատեսում ԼՂ-ին ամենաբարձր կարգավիճակի շնորհում Ադրբեյջանի սահմաններում, որն ավելի խորացրեց փակուղային իրավիճակը: Դրանից հետո բանակցությունները հետընթաց են ունեցել: Ստեղծված իրավիճակը հանգեցրել է ԼՂ-ի կողմից փուլային կարգավորման գաղափարի բացարձակ մերժմանը¹:

Այնուհետև ՀՀ նոր ղեկավարությունը որդեգրել է հակամարտության կարգավորման փաթեթային կամ համապարփակ մոտեցումը և առանց նախապայմանի բանակցությունները վերսկսելու դիրքորոշումը:

Մինսկի խմբի համանախագահներ 1998թ. սեպտեմբերյան այցի ժամանակ ներկայացրել են <<ընդհանուր պետության>>գաղափարը, որը վերջնական ձևակերպվել է նոյեմբերին ներկայացված պաշտոնական առաջարկում:

Տարածքների վերադարձի հարցը պետք է քննարկվեր միայն Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հստակեցումից հետո: Սակայն Բաքու վերադառնալուց և նեքին քննարկումներ անցկացնելուց հետո Հեյդար Ալիևը հրաժարվեց այդ ամենից:

2004-2006թթ-ին Մինսկի խմբի եռանախագահների միջնորդությամբ տեղի է ունեցել Հայաստանի և Ադրբեյջանի արտգործնախարարների մոտ 10 հանդիպում, որոնք ստացել են <<Պրահյան գործընթաց>> անվանումը: Դրանց ընթացքում ամրագրվեցին .

ա) ժողովուրդների ինքնորոշման իրավունքը՝ որպես հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքներից մեկը,

բ) ԼՂՀ ապագայի հարցով հանարաքվեի անցկացման վերաբերյալ դրույթը: Նշեմ նաև, որ մինչ այդ հակամարտության լիիրավ կողմ հանդիսացող Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դուրս է մղվել կարգավորման գործընթացից, ինչը օրս քննադատվում է հայ հասարակության կողմից²:

2005թ. հունվարի 30-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Յուրի Մերզլյակովը, Սթիվեն Մաննը և Բեռնար Ֆասիեն փաստառաջարկ խմբի հետ ժամանել են Ստեփանակերտ: Նրանց նախ ընդունել է ԼՂՀ արտգործնախարար Արման Մելիքյանը ,միաժամանակ ընդգծել է , որ տեղում իրավիճակի ուսումնասիրումը միջազգային հանրությանը հնարավորություն կտա իրական պատկերացում կազմել փախստականների և բռնատեղահանված անձանց դրության մասին: Նույն օրը երեկոյան խմբին ընդունել է ԼՂՀ նախագահ Արկաղի

¹ Հ.Մ.Այվազյան <<Ղարաբաղյան ազատագրական պատերազմ1988-1994>>, Երևան, 2004թ., էջ 188

² Հ.Մ.Այվազյան <<Ղարաբաղյան ազատագրական պատերազմ1988-1994>>, Երևան, 2004թ., էջ 189

Ղուկասյանը: Հանրապետության ղեկավարը կարևորել է ԵԱՀԿ նախաձեռնությունը, նշելով, որ նախկինում պաշտոնական Ստեփանակերտը բազմիցս դիմել է Մինսկի խմբի համանախագահներին՝ առաջարկելով նման դիտարկում անկացնել, որպեսզի բացառվեն Ադրբեյջանի ամեն տեսակ զրպարտությունը¹:

ԵԱՀԿ Մինսկի համանախագահները և նրանց ուղեկցող ԵԱՀԿ փաստահավաք առաքելությունը Ստեփանակերտից շարժվեցին Քարվաճառի շրջան: Այս շրջանը նախկինում պատկանել է նախկին Խորհրդային Ադրբեյջանին, այժմ գտնվում է ղարաբաղյան ուժերի վերահսկողության տակ, դա նախկին Քելբաջարն է: Խումբը ղեկավարում էր գերմանացի դեսպան տիկին Էմիլի Հաբերը (Գերմանիայի արտգործնախարարության ԵԱՀԿ հարցերի հետ բաժանմունքի ղեկավար): Գերմանիայի Էմիլի Հաբերը պատասխանելով <<Ազգի>> թերթի այն հարցին, թե ի վերջո ո՞րն է այդ առաքելության նպատակը, պատասխանեց, որ շրջելու են ԼՂ վարչական սահմաններից դուրս գտնվող հայկական վերահսկողության տակ գտնվող տարածքներում զբաղվելու փաստահավաք առաքելությամբ: Փաստահավաք խումբը անցնում էր հիմնականում այն տարածքներով, որոնք 1992թ. գտնվել են ադրբեյջանական զինուժի վերահսկողության տակ, դրանք հիմնականում ավերված բնակավայրեր էին որոնց մի մասն արդեն վերականգնվել էր: Նրանք տեսան բավականաչափ բնակավայրեր ուր գազանություններ էին թույլ տվել ադրբեյջանցիները, երբ նրանք գրավել էին Ղարաբաղի 40%-ը: Քարվաճառի շրջանի վարչակազմի ղեկավար Վասիլի Նալբանդյանը համանախագահներին և փաստահավաք առաքելությանն ասում էր, որ կորցրել են իրենց տները Մոավ սարի մյուս կողմում գտնվող: Նրանք չունենալով բնակության այլ վայր եկել և հաստատվել են այս բնակավայրերում: Մի շատ կարևոր նկատառում ևս. փաստահավաք խումբը զինված էր Ադրբեյջանի տված փաստաթղթերով, այսինքն ադրբեյջանական խումբը փաստահավաք առաքելության ներկայացուցիչներին տվել է հստակ բնակավայրերի անուններ և պնդում է, որ այդ բնակավայրերում Հայաստանը պաշտոնապես իրականացնում է վերաբնակեցում: Վերաբնակիչների 99%-ը Շահումյանից, Գետաշենից, Ադրբեյջանի մնացած շրջաններից բռնագաղթվածներ էին: Նշենք նաև, որ փաստահավաք առաքելությունը այս տարածքներ էր ժամանել Ադրբեյջանի նախաձեռնությամբ²:

2005թ. մարտի 29-ին Ղարաբաղի հարցով խորհրդարանական լսումներում ելույթով հանդես եկավ ԵԱՀԿ Մինսկի խմբում Ռուսաստանը ներկայացնող նախկին համանախագահ Վլադիմիր Կազիմիրովը³: Ամենից առաջ նա համամիտ չէ, որ հայկական քաղաքական շրջանակներն ու մամուլը Ղարաբաղի շուրջ ստեղծված անվտանգության գոտու հետ կապված օգտագործում են << ազատագրված տարածքներ>> արտահայտությունը: Կազիմիրովի պնդմամբ թեպետ հայկական ուժերը դրանց գրավումը պայմանավորել են պատերազմական անհրաժեշտությամբ, սակայն խաղաղության ժամանակ նման ձևակերպումներով հանդես գալը միայն վնասում է հայկական կողմին: Նրա կարծիքով հակամատության կարգավորման փուլային կամ փաթեթային մեխանիզմի շուրջ բանավեճերը նույնպես արդարացված չեն, որովհետև անարդյուավետ են: <<Իհարկե փաթեթայինը իդեալական լուծում կլիներ, եթե միայն լիներ իրագործելի: Անշուշտ շատ լավ է, երբ կողմերից ամեն մեկը նախօրոք գիտի ինչ է տալի և ինչ է ստանում: Բայց կյանքը այդքան պարզունակ չէ: Ընդունեք, որ 2 հայկական կողմերը ևս չեն համաձայնի այնպիսի փաթեթային լուծման, որ Ղարաբաղը լինի Ադրբեյջանի կազմում: Իսկ հակառակը բնականաբար չի ստորոգրի Ադրբեյջանի որևէ ղեկավար: Այդ պատճառով հարկ կլինի կողմնորոշվել դեպի փուլային լուծում>>: Իհարկե ոչ այն փուլայինը ինչ առաջարկում է Ադրբեյջանը. փաստացի տվեք այն ինչ իմն է, իսկ հետո կվորոշեք: << Բանաձևը՝ տարածքներ կարգավիճակի դիմաց>>, ուժային ծագում ունի: Կազիմիրովը նշեց այն, որ 50 հանդիպում են ունեցել Հեյդար Ալիևի հետ և նա երբեք չի ասել, որ չի կատարելու ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի որոշումները:

¹ <<Ազգ>> թերթ, 1 փետրվարի 2005թ., էջ 1,:

² <<Ազգ>> թերթ, 1 փետրվարի 2005թ., էջ 3, << Մինսկի խումբը և ԵԱՀԿ առաքելությունը Քարվաճառում>>:

³ << Հանգ աշխարհ>> օրաթերթ, մարտի 30 2005թ., էջ 4, <<Բացառել ռազմական ճանապարհը>>:

Կազմիմիտի կարծիքով <<Տարածքներ՝ անվտանգության դիմաց>> սկզբունքը ավելի կենսական է:<<Այստեղ պետք է կենտրոնացնել ուժերը , որ բոլոր հարցերը լուծվեն խաղաղ ճանապարհով>>: Կազմիմիտի գնահատմամբ Ադրբեջանից հնչող պաշտոնական սպառնալիքները անտեսել պետք չէ, և հայկական կողմերը ինչպես Մինսկի խմբի այնպես էլ միջազգային հանրության ուշադրությունը պիտի հրավիրեն այդ իրողության վրա¹:

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում Մինսկի խմբի համանախագահների համատեղ հայտարարությունից և Մեթյու Բրայդի մեկնաբանությունից հետո Հայաստանի քաղաքագետների միության նախագահ Հմայակ Հովհաննիսյանը նշելով, որ համանախագահները հայտարարում են, որ կողմերին չի հաջողվել համաձայնության գալ հանրաքվեի անցկացման հարցում: Այդ պնդումը հակասում է, ի պատասխան Բրայդի բացահայտումների Հայաստանի արտգործնախարարության հրապարակված հայտարարության այն կետին, համաձայն որի հանրաքվեի անցկացման հարցում կողմերը հանգել են ընդհանուր հայտարարի ինչն էլ ամրագրված է շրջանային համաձայնության տեքստում²: Եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ հայկական կողմը հանրաքվեի անցկացումը դիտում է որպես միջազգային հանրության կողմից Արցախի ինքնորոշման իրավունքի դե յուրե ճանաչում նույնքան կարևորում է այն, որքան Ադրբեջանն է կարևորում հայկական ուժերի դուրսբերումը անվտանգության գոտուց և այնտեղ խաղաղարար ուժերի տեղակայումը, և ըստ Հմայակ Հովհաննիսյանի ամենամեծ թերացումը, որ ունեցել ենք, դա ԼՂ որոշակի մեկուսացումն է բանակցային գործընթացից³:

Որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկյան համանախագահ Մեթյու Բրայդի առաջին այցը Հայաստան և ԼՂ տեղի է ունեցել 2006թ. հուլիսի 29-30-ը: Վերջինս հանդիպումներ է ունեցել Ռոբերտ Քոչարյանի, արտգործնախարար Վարդան Օսկանյանի, ԼՂ նախագահ Արկադի Ղուկասյանի հետ , որի ընթացքում քննարկվել է, որ ղարաբաղյան հակամարտության հարցն առանց ԼՂ մասնակցության կարգավորել հնարավոր չէ⁴:

Չնայած այն փաստին, որ որևէ մեկի համար այլևս գաղտնիք չէ <<շրջանակային համաձայնագրում>> ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքը ճանաչող կետի առկայությունը, Ադրբեջանի բոլոր պաշտոնյաները , խոսքները մեկ արած շարունակում են կրկնել, թե երբեք թույլ չեն տա իրենց տարածքում երկրորդական հայկական պետության ձևավորումը: Երևանում բազմիցս են հայտարարել, որ բանակցություններում խոսքը ազատագրված տարածքների վերադարձի դիմաց ԼՂՀ ինքնորոշման հստակ երաշխիքներ ու մեխանիզմներ ձեռք բերելու մասին է, և հարց է առաջանում թե ով կտուժի բանակցային գործընթացի ձգձգման արդյունքում: Պատասխանը պարզ է .<<ոչ խաղաղություն , ոչ պատերազմ>> վիճակի պահպանումը, որն արտացոլում է նաև տարածաշրջանային ուժերի ընդհանուր հաշվեկշիռը, Հայաստան համար ընդամենը մեկ չլուծված խնդիր է թողնելու՝ ներքին տնտեսական բարեփոխումների արագացում: Մնացած առումներով մեր երկիրը որևէ խնդիր չունի , ուստի եթե «իրականության հետ հաշտվելու» համար Ադրբեջանը կցանկանա «մտածել» ևս 2 տարի, ապա 2009թ կանգնելու է նոր իրողության շեմին⁵:

Միացյալ Նահանգները ու նրա դաշնակիցները իրենց ուշադրությունը սևեռելով Ղարաբաղի հարցի վրա փորձում են գործել 2 մակարդակով, այսինքն՝ միաժամանակ և՛ Ռուսաստանի միջոցով, և՛ ուղղակիորեն: ԱՄՆ-ի դիվանագիտական , փորձագիտական ու քարոզչական ջանքերի ներկա հստակ կենտրոնացումը «ադրբեջանական ճակատում» թելադրված է 3 հիմնական նկատառումներով: Առաջին բանակցային սեղանին դրված շրջանակային համաձայնագրի հնարավոր ընդունումը Ադրբեջանի համար շատ ավելի ցավոտ է լինելու, երկրորդ՝ ԱՄՆ-ն Ադրբեջանի վրա ներազդելու ավելի մեծ լծակներ ունի,

¹ Նույն տեղում:

² <<Համանախագահները հրահրում են քննարկումներ>>, <<Հայոց աշխարհ>>օրաթերթ, 04 հուլիսի 2006թ., էջ 3:

³ Նույն տեղում:

⁴ <<Հերթը Մեթյու Բրայդինն է>>, Հայոց աշխարհ, 29 հուլիսի 2006թ., էջ 2:

⁵ <<Պատասխանը կախված է Ադրբեջանից>>, Հայոց աշխարհ, 23 նոյեմբեր 2006թ., էջ 2:

քան Ռուսաստանը և վերջապես երրորդ՝ ԱՄՆ-ն Հայաստանի վրա ներագդելու ամենաբարդունավետ ուղի է համարում «ռուսական խողովակը»: Ստացվում է որ Միացյալ Նահանգները շարունակում է ապակառուցողական կողմի՝ Ադրբեջանի համառությունը կոտրելու գործը և միաժամանակ փորձում է Ռուսաստանին շահագրգռել և ավելի ակտիվորեն ներգրավել բանակցարին գործընթացի մեջ: Դրանց իրական արդյունավետությունը կախված է լինելու նրանից թե ինչպե՞ս կարձագանքի Ռուսաստանը ԱՄՆ-ի կողմից կատարվող «Ղարաբաղյան քայլերգին», քանզի վերջնական հանգուցալուծումը ի վերջո ձեռք է բերվելու միաժամանակ 2՝ Ռուսաստան-ԱՄՆ և Հայաստան- Ադրբեջան պայմանավորվածությունների միջոցով¹:

2007թ. նոյեմբերին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից Ղարաբաղի խնդրի կարգավորման համար ներկայացվել են մադրիդյան առաջարկները, որոնց հիմքում ընկած էր 3 սկզբունք՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունք, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառում, և տարածքային ամբողջականություն: Ադրբեջանը, որը նախապես համաձայնել էր որպես հիմք ընդունել մադրիդյան սկզբունքները, մեկ տարուց ավելի ժխտում էր նույնիսկ դրանց գոյությունը: Մադրիդյան սկզբունքները գաղտնի էին պահվում, սակայն հետագայում գաղտնագրեծվեցին դրանց 6 կետերը: Մինսկի խմբի համանախագահները դրանք ներկայացրեցին 2009թ. հուլիսի 10-ին՝ Աքվիլայում արված հայտարարությունում: Դրանք են՝

- 1.ԼՂ շրջապատող տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողության տակ,
- 2.ԼՂ ժամանակավոր կարգավիճակ, որը կտրամադրի անվտանգության և ինքնակառավարման երաշխիքներ,
3. Հայաստանը և ԼՂ կապող միջանցք,
- 4.ԼՂ վերջնական իրական կարգավիճակի հետագա որոշում՝ իրավականորեն պարտադիր բնույթ կրող կամ արտահայտման միջոցով,
- 5.Ներքին տեղահանված և փախստական հանդիսացող բոլոր անձանց՝ իրենց բնակության նախկին վայրեր վերադառնալու իրավունք,
- 6.Անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն նաև խաղաղարար գործունեություն:

Մադրիդյան առաջարկների հրապարակումից հետո բանակցություններն ակտիվացան:

2008-2011թթ. Հայաստանի և Ադրբեջանի նախագահները Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևի հրավերով մի շարք հանդիպումներ ունեցան Ռուսաստանում և հրապարակեցին հռչակագրեր:ՌԴ Պետդոմայի պատգամավոր, քաղաքագետ Կոստանդին Ջատուլինը նշում էր.<<Չեմ կարծում, թե ԼՂ-ի հիմնախնդրի կարգավորումը շուտ կլինի, թեև Հելսինկիում նախարարները ևս չեն ասել, որ դա շուտ տեղի կունենա>>: Ջատուլինը համոզված է, որ <<առանց ԼՂ-ի և առանց ԼՂ-ի բնակչության կամարտահայտության, ոչ ոք ԼՂ-ի ձակատագիրը չի կարող որոշել²:

Ուշագրավ է նաև այն , որ ԵԱՀԿ ողջ տարածքում հակամարտությունների կարգավորման սկզբունքների թվարկման ընթացքում ՌԴ նախագահը առաջինը նշեց ուժի չկիրառումը, իսկ երկրորդը՝ <<համաձայնության ձեռքբերումը հենց իրենց կողմերի միջև>>: <<Հայաստանի և Ադրբեջանի համաձայնության գալու դեպքում ՌԴ-ն կդառնա դրա իրականացման երաշխավորը>>: Սա նշանակում է, որ Ռուսաստանը ԵԱՀԿ գազաթնաժողովի բարձր ամբիոնից հայտարարեց, որ ինքը թույլ չի տալու ուժի կիրառում և միաժամանակ կողմերից մեկին կարգավորման սկզբունքներ պարտադրելու տարբերակները³:

Արևմտյան առաջնորդների ելույթները ավելի ընդհանուր բնույթ ունեին, սակայն դրանցում էլ Ադրբեջանին ոչ մի հուսադրող կետ չկար: Այսպես պետքարտուղար Քլինթոնն ընդգծեց, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմքում պետք է դրվեն ուժի

¹ <<Մինսկը շարունակություն կունենա>>,Հայոց աշխարհ օրաթերթ,30 նոյեմբերի 2006թ., էջ 2:

² <<Առանց Ղարաբաղի չի ստացվի>>, Հայոց աշխարհ օրաթերթ, 6 դեկտեմբերի 2008թ., էջ 3:

³ <<Սատանան խոսում է Ղարաբաղի լեզվով>>, Հայոց աշխարհ օրաթերթ, 2 դեկտեմբերի 2010թ., էջ 3:

կիրառման սպառնալիքի բացառումը, տարածքային ամբողջականությունը, ազգերի ինքնորոշման իրավունքը և Ռուսաստանի, Ֆրանսիայի ու ԱՄՆ նախագահների կողմից Աքվիլայում հռչակված 6 տարրերը: Այսպիսով, ԵԱՀԿ Աստանայի գազաթնաժողովի առաջին օրվա ելույթներն ու ընդունված հայտարարությունը ի դերն հանեցին վերջին ամիսներին Ադրբեջանի կողմից ձեռնարկվող քաղաքական շանտաժի փորձերը¹:

2012թ. հունիսի 25-ին Ստրասբուրգում մեկնարկեց Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի(ԵԽՄԿ) ամառային նստաշրջանը: Այստեղ ամենաուշագրավն այն էր, որ ԵԽՄԿ նախագահ Ժան Կլոդ Մինյոնը հայտարարեց, որ հանդիպումներ է ունենալու Հայաստանի և Ադրբեջանի պատվիրակությունների ղեկավարների հետ, որոնց ժամանակ կարծիքների փոխանակություն է տեղի ունենալու ԼՂ հարցով ենթահանձնաժողովի ստեղծման կապակցությամբ. «Համատեղ ընդունված որոշումն ուղարկվելու է ԵԱՀԿ Բյուրո՝ հաստատման»: Այնուհետև Ժան Կլոդ Մինյոնը նշեց, որ չի ցանկանում խոսել Բյուրոյի անունից, սակայն իր կարծիքով նման ենթահանձնաժողովի գործունեությունը անիմաստ է, քանի որ դարաբաշխման խնդրի կարգավորման հարցով զբաղվում է ԵԱՀԿ Մինսկի խումբը: Վերջինս նշում էր, որ մի շարք կառույցների գործունեությունը հարցի նույն կարգավորման գործում կարող է խառնաշփոթ առաջացնել²:

2018թ. փետրվարի 17-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Մյունխենի անվտանգության համաժողովում՝ «Նե՛րս, թե դո՛ւրս, Ռուսաստանի և Եվրոպայի միջև ընկած երկրները» խորագրով քննարկման ժամանակ հանդես եկավ ելույթով՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ ԼՂ հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի և դրա առջնղման իր ապակառուցողական քաղաքականությամբ խոչընդոտող Ադրբեջանի իշխանությունների քայլերի մասին: ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությանն անդրադառնալով Սերժ Սարգսյանն ասաց, որ ԼՂ խնդիրը պետք է լուծվի որքան հնարավոր է շուտ՝ խաղաղ ճանապարհով. «Այդ հարցում մեզ աջակցում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները՝ ՌԴ, Ֆրանսիան և ԱՄՆ-ն: Նրանց միջնորդությամբ խաղաղ գործընթացի հիմքում դրվել են միջազգային իրավունքի երեք սկզբունքներ: ԼՂ հիմնահարցի հանգուցալուծմանն ուղղված ջանքերը կարող են օրինակ ծառայել, թե ինչպես Ռուսաստանը, ԵՄ-ն և ԱՄՆ-ն կարող են դրականորեն համադրել իրենց դիրքորոշումները, հանուն միջազգային իրադրության ու անվտանգության»: Նա շեշտեց, որ Հայաստանը պատրաստ է ԼՂ-ի հարցի խաղաղ կարգավորմանը՝ դիմելով Գերմանիայում Ադրբեջանի դեսպանության առաջին քարտուղարին, Սադի Ջաֆարովին նշեց. «Եթե դուք ցուցաբերեք ողջախոհություն, խոսքս Ադրբեջանի ժողովրդի մասին չէ, խոսքս Ադրբեջանի ղեկավարության մասին է, և իրականում նստեք բանակցային սեղանի շուրջ ու հասկանաք, որ այս խնդիրը կարող է լուծվել միայն ու միայն փոխզիջումների հիման վրա: Ցանկանում եմ նշել, որ ժամանակն է սթափվելու: Երևանն ունի 2800 տարվա պատմություն, հայ ժողովուրդը առնվազն 5000 տարի է ապրում է իր պատմական տարածքում և Ադրբեջանը կամ այլ ժողովուրդներ, ովքեր, Աստված գիտի, երբ են սկսել իրենց ինքնաճանաչել, չեն կարող կոտրել հայ ժողովրդի կամքը»³:

Այսպիսով, կարելի է նշել, որ այսօր ևս բանակցությունների հիմքում ընկած է «Մադրիդյան սկզբունքները», սակայն Ադրբեջանը շարունակում է գործել խնդրի կարգավորման ռազմական ճանապարհով: Ադրբեջանը բանակցային գործընթացը խոչընդոտելու նպատակով շարունակ փորձեր է կատարում հարցի քննարկումը Մինսկի խմբի համանախագահների ձևաչափից դուրս բերելու ուղղությամբ: Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաները պարբերաբար հայտարարում են Մինսկի խմբի համանախագահության անարդյունավետության մասին: Հակառակ խնդիրը բացառապես խաղաղ ճանապարհով լուծելու վերաբերյալ միջազգային հանրության կոչերին, 2003-2015թթ.

¹ Նույն տեղում:

² <<ԵԽՄԿ նախագահը դեմ է ԼՂ հարցով ենթահանձնաժողովի ստեղծմանը>>, Հայոց աշխարհ օրաթերթ, 26 հունիսի 2012թ., էջ 31:

³ <<Սերժ Սարգսյանի մյունխենյան ահազանգը>>, << Առավոտ>> թերթ, 21 փետրվարի 2018թ., էջ 3:

ընթացքում Ադրբեջանը 30 անգամ ավելացրել է իր ռազմական ծախսերը՝ հասցնելով 24.8 միլիարդ: 2016թ. ապրիլին Ադրբեջանի կողմից Ղարաբաղի Հանրապետության դեմ սանձազերծված քառօրյա պատերազմը հարված էր ոչ միայն հայկական կողմին, այլև միջազգային հանրությանը:

ՀՏԴ950

НЕЗАВИСИМОСТЬ КУРДОВ

Լ.Է.Աթայան

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԼՄԱՐՆ

Բանալի բառեր՝ Քրդեր, քրդերի անկախությունը, միջազգային սկզբունքներ, ազգերի ինքնորոշման միջազգային սկզբունքը:

Ключевые слова: Курды, независимость курдов, международные принципы, принцип самоопределения наций.

Keywords: Kurds, independence of Kurds, international principles, principle of self-determination of nations.

Резюме

В данной статье рассматривается вопрос независимости курдов. Возможность осуществления международного принципа самоопределения народов. Затронут вопрос создания государственности, также действия государств, на которых проживают курды.

Ամփոփում

Այս հոդվածում դիտարկվում է քրդերի անկախության հիմնահարգը ազգերի ինքնորոշման միջազգային սկզբունքի շրջանակներում: Քննարկվում է պետականության ստեղծման առաջնահերթությունը, ինչպես նաև առանձին պետությունների գործողությունները քրդաբնակաշրջաններում:

Summary

In this article are represented the main issues of the Kurds' independence in the framework of the international principle of self-determination of peoples. Is carried out the problem of creating statehood, as well as the actions of the countries on which Kurds live.

Курды - разделенная нация без своего государства. Почти сорок миллионов курдов проживают в таких странах — как Ирак, Иран, Турция, Сирия. Большинство курдов исповедует ислам, меньшинство — езидизм, христианство и иудаизм.

Ближний Восток, простирающийся от Черного моря до Аденинского залива и от Каспийского моря до Персидского залива, является континентальным перекрестком экономической и стратегической важности и, как результат, всегда был предметом многочисленных столкновений интересов между различными субъектами международных отношений. Нефть, торговые пути, географическое положение, особенности местности - все это способствует стратегическому значению и роли Ближнего Востока. Коллективные нефтяные месторождения Ближнего Востока, являющиеся одними из крупнейших, приближаются к двум третьим нефтяного резерва в мире. Учитывая растущий дефицит природных ресурсов, многие крупные игроки мировой политики просто не могут игнорировать важность этого региона. Он (регион) имеет богатую и несколько противоречивую историю, которая сформировала современную конъюнктуру. Одним из самых интересных явлений этого региона является Курдистан, историческое плато, населенное курдами. Тем не менее, формирование курдской этнической народности, а позднее - нации, не сопровождалось, как и в большинстве других случаев, образованием государственности, а также стремлением объединиться в единое централизованное государство.

Этому мешали прежде всего чрезвычайно сложные внешние условия, в которых курды находились во время и после арабского завоевания, а также насильная исламизация. Курдистан благодаря своей центральной геостратегической позиции на ближневосточной арене стал территорией постоянных войн, хищнических грабежей кочевников, восстаний. Ближний Восток как место рождения печально известных негосударственных вооруженных групп салафистских/джихадистских мусульманских образований суннитов, таких как «Исламское государство» (ISIS) и ответвление аль-Каиды, аль-Нусра, уже находится в действительно опасной ситуации. Курдское население примерно 40 миллионов человек, в основном проживающих в 4 основных государствах, а именно в Турции, Ираке, Иране и Сирии, всегда считались в первую очередь угрозой территориальной целостности этих государств и, следовательно, нестабильностью Ближнего Востока.

На данный момент курды считаются самым крупным этническим меньшинством не только в тех государствах, в которых проживают, но и во всем мире и не смотря на это они лишены возможности реализовать свои права, предусмотренные международным правом и лишены возможности национального самоопределения.

Принадлежность к племени и по сей день является важным фактором для формирования социальных отношений в традиционном курдском обществе.

Исследователи отмечают, что в раннем средневековье имя курдов означало термин, который мог применяться по отношению любого ираноязычного племени, живущих на западе иранской равнины в шатрах горцев. И поэтому очень долгое время под словом «курды» объединяли разные народности Ирана, говорящих на различных языках. Проблема курдов отображает, как фактор

расселения негативно влияет на национальное движение при условии межрегиональных конфликтов и борьбы за власть.

В Турции

Максимальное число курдов сосредоточено на юге и востоке страны, недалеко от озера Ван, также курдский этнос сосредоточен и на западе Турции. Общее число их достигает 16-20 млн человек. С 2009-го года в стране разрешены телепередачи на курдском языке, хотя ранее использование курдского языка было запрещено даже в СМИ. Курды, постоянно проживая под непосредственной угрозой уничтожения, в течении многих десятилетий требуют от стран, в которых проживают, и от международной общественности самоопределения и возможности создания собственного государства. Национально-освободительное движение народа курдов не имеет ничего общего с терроризмом и сепаратизмом, хотя турецкое правительство настаивает на обратном. Своими действиями Турция лишь создает иллюзию демократического государства, что позволяет избежать недовольства западных стран и России в процессе уничтожения курдов.

В Иране

5.5 млн курдов населяют всю территорию Ирана в разных регионах страны. Реакция Исламской Республики на независимое курдское государство будет зависеть от состояния отношений с собственным курдским населением, а также от восприятия намерений внешних держав. Вопрос о независимом Курдистане очень чувствителен к Исламской Республике из-за опасений, что она будет поощрять собственное население репрессированных курдов. В то время как иранские курды приветствовали бы появление независимого Курдистана в северном Ираке, степень связи, которую они испытывали к нему, вероятно, будет варьироваться в зависимости от множества факторов, от племенной, языковой и религиозной принадлежности до географического положения в Иране и его политического вектора касаясь данного вопроса.

То, что Иран увеличил свои экономические связи с Курдистаном, несмотря на сильные возражения Багдада, указывает на то, что финансовые выгоды могут в конечном итоге перевешивать иранские опасения по поводу курдского национализма.

В Сирии

На территории Сирии проживает около 4 млн курдов и составляют 15% населения всей страны.

В России и странах СНГ

Отдельные группы курдов оказались под эгидой Российской империи после того, как в состав империи вошла Грузия, Шекинское, Карабахское ханства, а также после русско-персидских войн (1804-1813, 1826-1828 годов). В основном это были курды, проживающие на территориях, которые по Гюлистанскому (1813г) и Туркменчайскому (1828г) договорам перешли России.

В Ираке

На севере Ирака есть автономное образование, Иракский Курдистан, со столицей Эрбиль и с населением примерно 5.6 млн человек.

Курды в северном Ираке пытались обрести независимость на протяжении почти столетия. С точки зрения центрального правительства Ирака отделение курдов будет представлять собой прямой вызов авторитету Багдада. Эти конфликтующие интересы являются постоянным подтекстом в отношениях между Багдадом и Эрбилем и являются причиной нескольких продолжающихся политических споров: статуса спорных территорий Ирака, обмена федерального бюджета и добычи курдской нефти. В настоящее время курдский регион состоит из провинций Дохук, Эрбиль и Сулеймания, а также крупных участков земли, известных как «спорные территории»: этнически смешанная территория, на которую претендуют Эрбиль и Багдад. Курды получили контроль над значительной частью спорных территорий, в том числе богатой нефтью мухафазы Киркук, в 2014 году.

В соответствии с конституцией Ирака центральное правительство характеризует иракский Курдистан как протогосударство.

Курдские вооруженные силы (Пешмерга) помогли федеральному правительству в сдерживании исламистских сил из Мосула. Референдум по независимости был проведен 25 сентября 2017 года.¹ По данным 1 избирательной комиссии Курдистана, 92,73% принявших участие в референдуме, отдали свои голоса за независимость этой автономной территории. 7,27% выступили против. Всего в референдуме приняли участие около 3,3 миллиона человек, это примерно 72% избирателей. Референдум вызвал жесткую критику иракского правительства и соседних с Ираком стран. Багдад до последнего момента требовал его отмены.²

Первоначально планировалось провести его в 2014 году на фоне споров и споров между региональными и федеральными правительствами. Призывы к курдской независимости продолжались годами, с неофициальным референдумом 2005 года, в результате чего 98% проголосовали в пользу независимости. Эти длительные призывы получили импульс после наступления Северного Ирака во время Гражданской войны, в результате которой силы, контролируемые Багдадом, покинули некоторые районы, которые затем были захвачены Пешмергой и фактически контролировались курдами. Сообщалось, что референдум 2017 года не

¹ Желтов М.В.-Референду о независимости иракского государства Курдистана-куда приводят мечты

² BBC-Иракские курды проголосовали за независимость (<http://www.bbc.com/russian/news-41420267>)

имеет обязательной силы. Федеральное правительство Ирака отклонило законность референдума, так как он не был согласован с правительством Ирака. Президент Курдистана Масуд Базани провел встречу с представителями некоторых партий: Демократической партии Курдистана, Коммунистической партии Курдистана, партии трудящихся и т. д. Впоследствии дипломатический кризис между Багдадом и Курдистаном перерос в вооруженный конфликт, развернутый 15 октября, и продолжался до тех пор, пока иракские силы не восстановили контроль над Киркуком, несколькими городами и нефтяными месторождениями, которые были основным источником нефти для Иракского Курдистана.

Население курдов со смелыми политическими действиями создают конъюнктуру регионов и тщательно учитываются всеми затронутыми государствами. Каждое государство в регионе не может не учитывать фактор наличия курдов в определении своей политики. В то время как курдская политика в регионе характеризуется глубокими переломами и соперничеством, признание курдских политических фракций возрастает. В частности, курдские движения более активно сотрудничают в борьбе с ИГИЛ. Тем не менее, это вряд ли приведет к панкурдской мобилизации по всему региону. Но оказав содействие курдам в достижении независимости и обеспечив им возможность применения принципа самоопределения, субъекты международного права смогут вернуть веру в основные права и свободы человека, что начнет способствовать ликвидации угрозы мира и безопасности на Ближнем Востоке и во всем мире. Данный принцип является одним из основных принципов в международном праве. В Уставе ООН закреплён данный принцип и считается, что принцип самоопределения не противоречит иным принципам, а в частности принципу территориальной целостности государства, на на практике принцип самоопределения народов подчинен принципу территориальной целостности.

В Декларации о принципах международного права (1970 г.) значится: “В силу принципа равноправия и самоопределения народов, закреплённого в Уставе ООН, все народы имеют право свободно определять без вмешательства извне свой политический статус и осуществлять свое экономическое, социальное и культурное развитие, и каждое государство обязано уважать это право в соответствии с положениями Устава”.¹ Рассматриваемый принцип тесно связан с понятием сепаратизма. Точного отграничения сепаратизма от принципа самоопределения нет. Сепаратизм представляет собой политику для отделения части государства с целью создания нового государства или получения автономии.

На территории Ирака осуществляется в большей степени этнический сепаратизм, т.е. против этнического меньшинства за отделение. В наше время право на самоопределение осуществляется как мирным путем, так и с оружием в руках. Это приводит к большому количеству жертв, что нарушает не один принцип международного права. Права высшей ценности, т.е. человека нарушаются на международном уровне.

Каждое государство, ратифицировавшее международные договоры и другие соглашения по правам человека, в силу взятых на себя обязательств, предусмотренных в вышеуказанных международно-правовых актах, должно способствовать устранению нарушений прав человека, в данном случае, прав курдского народа в Курдистане, принять меры к тому, чтобы обеспечить полное осуществление этих прав всеми надлежащими способами, включая, в частности, принятие международных санкций. Исходя из Устава ООН, Всеобщей декларации прав человека, Международных пактов о правах человека и других международно-правовых норм, курдский народ имеет полное право требовать от международного сообщества избавления от многовековой войны, страданий и лишений, принятия радикальных мер для своей защиты.²

Библиография:

1. Курдский вопрос в региональной и мировой политике-кни Дасни, Юрий Романович
2. За независимость Иракского Курдистана проголосовали более 90 % избирателей - РИА Новости, 26 сен 2017
3. Референдум о независимости Иракского Курдистана-куда приводят мечты - Желтов М.В.
4. История курдов - В.Ф. Минорский
5. Конфиденциально. Ближний восток на сцене и за кулисами – Евгений Примаков
6. Устав ООН

¹ Декларация о принципах международного права от 24 октября 1970 года.

² Дасни Юрий Романович-Курдский вопрос в региональной и мировой политике.

ՀՏԴ(323.1/479.243)

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Մարիամ Միմոնյան
Վանաձորի պետական համալսարան,
Պատմաաշխարհագրական ֆակուլտետ,
Պատմություն 3-րդ կուրս
098278189; mar-simon@mail.ru

Բանալի բառեր՝ Լեռնային Ղարաբաղ, Խորհրդային Ադրբեջան, ԽՍՀՄ, Վ.Ի.Լենին, ազգերի ինքնորոշման իրավունք, ԽՍՀՄ սահմանադրություն, ՄԱԿ, տարածքային ամբողջականություն, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, պետություն, ժողովուրդներ, միջազգային իրավունք, զավթողական քաղաքականություն, տարածքային վեճ:

Ключевые слова: Нагорный Карабах, Советский Азербайджан, СССР, В. И. Ленин, Право наций на самоопределение, Конституция СССР, ООН, Территориальная целостность, Генеральная Ассамблея ООН, Государство, народы, Международное право, агрессивная политика, территориальный спор.

Key words: Nagorno-Karabakh, Soviet Azerbaijan, USSR, Lenin, The right of nations to self-determination, USSR Constitution, UN, Territorial integrity, UN General Assembly, State, peoples, International law, aggressive policy, territorial dispute.

Ամփոփում

Այսպիսով պետք է նշել, որ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին բռնակցվեց անարդար պայմաններում: Ներկայումս ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքը չի լուծվում այն պատճառով, քանի որ ԽՍՀՄ սահմանադրության 70 և 78 հոդվածներն են մատնանշվում՝ մեջ բերելով դրանցում առկա հակասությունները: Դեռևս չկան այնպիսի հրապարակումներ, որոնք կվերականգնեն իրավաբանական ճշմարտությունը Խորհրդային սահմանադրության 70 և 78 հոդվածների միջև՝ հարաբերակցության ու փոխգործողության մասին: Սակայն պետք է նշել, որ, թեև այդ սկզբունքները սահմանակցվում են, բայց իրավաբանորեն հակադրելի չեն, քանի որ պետության տարածքային ամբողջության գործողությունն ամենից առաջ ուղղված է պաշտպանելու պետության տարածքն արտաքին ոտնձգությունից: Մարդկության ամբողջ փորձը խոսում է այն մասին, որ ինքնորոշման իրավունքի իրականացումը չի կարող և չպետք է դիտվի որպես ժողովուրդների և պետությունների միջև խաղաղության ու բարեկամական հարաբերությունների արգելք:

Мариам Симонян
Ванадзорский государственный университет
Историко-географический факультет, 3-ий курс
098278189; mar-simon@mail.ru

КАРАБАХСКОЕ ДВИЖЕНИЕ И ПРАВО НАЦИЙ НА САМООПРЕДЕЛЕНИЕ

Резюме

Следует отметить, что Нагорный Карабах вошел в состав Советского Азербайджана в несправедливых условиях. В настоящее время право армян Нагорного Карабаха на самоопределение не реализовано, потому что противоречия, существующие в конституции СССР в статьях 70 и 78, где право наций на самоопределение торпедировалось территориальной целостностью проявляются и в современном международном праве. Весь опыт человечества говорит о том, что осуществление права на самоопределение не может и не должно рассматриваться как барьер для мира и дружбы между народами и государствами.

Mariam Simonyan
Vanadzor State University
The Faculty of History and Geography, 3rd year
098278189; mar-simon@mail.ru

Summary

Thus, it should be noted that Nagorno Karabakh was forced to Soviet Azerbaijan in unfair conditions. At present, the right of the people of Nagorno-Karabakh to self-determination has not been decided, because articles 70 and 78 of the Constitution of the USSR are mentioned. The entire experience of mankind shows that the exercise of the right to self-determination can not and should not be viewed as a barrier to peace and friendship between nations and states.

1918-1920թթ., նախքան Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատումը, Լեռնային Ղարաբաղն անկախ էր: Լեռնային Ղարաբաղը զավթելու Ադրբեջանի բոլոր փորձերն ապարդյուն անցան: 1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվեց խորհրդային իշխանություն, որը չհրաժարվեց Հայաստանի նկատմամբ ունեցած տարածքային նկրտումներից: ՌԿ(Բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն, գիտենալով ադրբեջանական նացիոնալիստների ագրեսիվ նպատակների մասին, 1920թ. հուլիսի 7-ի նիստում Լենինի նախագահությամբ որոշեց ժամանակավորապես գրավել այդ տարածքները, հետագայում դրանց ճակատագիրը որոշել Ռուսաստանի ներկայացուցչի նախագահությամբ խառը հանձնաժողովի միջոցով:

1920թ. նոյեմբերի 29-ին խորհրդային իշխանություն հաստատվեց նաև Հայաստանում: Ադրբեջանի հեղկումը նոյեմբերի 30-ին Նարիմանովի և Հուսեյնովի ստորագրությամբ ողջույնի հեռագիր ուղարկեց Հայաստանի հեղկոմին, որում նշվում էր . <<...Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը ճանաչվում են Հայկական Սոցիալիստական Հանրապետության բաղկացուցիչ մասը:

Կեցցե՛ խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի բանվորների և գյուղացիների եղբայրությունն ու դաշինքը>>¹:

Սակայն շուտով խորհրդային Ադրբեջանի ղեկավարության դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ արմատական փոփոխությունների ենթարկվեց: Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման համար 1921թ. հունիսի 4-5-ին հրավիրվեց ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենում, որն սկզբում որոշեց Լեռնային Ղարաբաղը թողնել Հայկական ԽՍՀ հագմում ,իսկ ապա, Նարիմանովի կրկնական բողոքից ու սպառնալիքներից հետո ազգությունների ժողկոմ Ստալինի մասնակցությամբ որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական ԽՍՀ-ի մեջ մտնելու մասին՝ նրան վերապահելով մարզային ինքնավարություն:

Լեռնային Ղարաբաղի հայերը չէին հաշտվում նման դրության հետ ,ովքեր բազմիցս դիմել են երկրի ղեկավար մարմիններին մարզը հայրենիքի՝ Հայաստանի գիրկը վերադարձնելու խնդրանքով:

1988թ.փետրվարի 20-ին ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի նստաշրջանը որոշում ընդունեց խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին հանդես բերել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության սպասումների խոր ըմբռնում և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմին հանձնելու հարցը: Ղարաբաղի հայ բնակչության այդ շարժումը չէր հակասում խորհրդային սահմանադրությանը , հիմնվում էր իրենց տարածքում ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքների վրա: 1988թ. հունիսի 15-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը պաշտպանեց ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի արդարացի որոշումը: Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ԼՂԻՄ-ի ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի խնդրանքը համարեց անընդունելի և այն մերժեց:

Նման պայմաններում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1989թ. հունվարի 12-ին հրամանագիր ընդունեց ԼՂԻՄ-ում կառավարման հատուկ ձև մտցնելու մասին, որի համաձայն ստեղծվեց ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտե Ա.Բ. Վոլսկու

գլխավորությամբ¹: Այնուհետև դադարեցվեցին մարզի ժողովրդական դեպուտատների խորհրդի և նրա գործադիր կոմիտեի լիազորությունները մինչև խորհրդի նոր կազմի ընտրությունների անցկացումը : Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծման ժամանակից հետո անցած ամիսները ցույց տվեցին, որ այդ ժամանակավոր արտակարգ միջոցառման իրականացումը քիչ է նպաստում իրադրության նորմալացմանը, առավել ևս՝ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի ճիշտ լուծմանը:

Ազգամիջյան հարաբերությունների և ազգատարածքային սահմանազատումների պրոբլեմները խաղաղ, դեմոկրատական լուծման ուղիների որոնումները հանգեցրին ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքի ընդունման անհրաժեշտությանը: Թեև այսօր ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը անխտիր բոլոր պետությունների համար պարտադիր միջազգային և պետական իրավունքի հիմնարար հանրաճանաչ նորմա է, դրա իրականացումը, ինչպես և առաջ, հանդիպում է այն բոլոր ուժերի դիմադրությանը, որոնք այս կամ այն պատճառով պաշտպանում են իրենց համար ձեռնտու քաղաքական ու տարածքային ամբողջականության գաղափարը:

Ինքնորոշման լենինյան սկզբունքի աղավաղումները հատկապես ցնիկ բնույթ կրեցին ԽՍՀՄ սահմաններում Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման մասին հարցադրման հետ կապված²: Ազգերի ինքնորոշման իրավունքին հակադրեցին պետությունների տարածքային ամբողջության սկզբունքը: ԽՍՀՄ պատմության մեջ անօրինակ քաղաքական և իրավական իրադրություն ստեղծվել է, երբ միութենական մի հանրապետությունը, հենվելով ինքնորոշման սահմանադրական սկզբունքի վար(հոդ.70), պաշտպանել է իր ժողովրդի բռնությամբ անջատված մասի վերամիավորման իրավունքը, իսկ մյուս հանրապետությունը, վկայակոչելով նույն այդ սահմանադրության մյուս հոդվածը (հոդ.78), սահմանների փոփոխման համաձայնություն չի տվել և դրանով իսկ հրաժարվել է օտար ազգային մարզի բուն բնակչության ինքնորոշման իրավունքի ընդունումից³: Իրականում ինքնորոշման սկզբունքի նկատմամբ կա երկու ուղղակի հակադիր մոտեցում: Հստ առաջին մեկնաբանության՝ ինքնորոշման իրավունքը ենթադրում է ժողովրդի իրավունք՝ լուծելով իր ճակատագրի հարցը, դրանով իսկ նաև իր բնակեցրած տարածքի կարգավիճակի հարցը, և, հետևաբար, որոշել պետության սահմանները ըստ իր ազատ արտահայտված կամքի: Մյուս մեկնաբանությանը ժխտում է բնակեցված մարզի ժողովրդի սեփական ճակատագիրը, դրանով իսկ նաև իր բնակեցրած տարածքի ճակատագիրը վճռելու իրավունքը, եթե դրան համաձայն չէ այն հանրապետությունը, որից նա ուզում է անջատվել:

ԽՍՀՄ սահմանադրության այսպիսի մեկնաբանությունը հեռանում է ժողովուրդների ինքնորոշման լենինյան հայեցակարգից, անհամատեղելի է ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագրի հետ:

Ինքնորոշման իրավունքը, որը Վ.Ի.Լենինի համոզմամբ, պետք է ընկած լինի ազգամիջյան հրաբերությունների հարցերի լուծման հիմքում, ունի 2 տեսակետ՝ միջպետական և ներպետական: Ներքին տեսակետը զարգացման իր ուղու, իր քաղաքական ու սոցիալ-տնտեսական համակարգի ազատ ընտրության իրավունքն է, իսկ արտաքին տեսակետը յուրաքանչյուր ժողովրդի իրավունքն է որոշելու իր միջազգային կարգավիճակը: Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը որպես միջազգային իրավունքի հրամայական նորմա ամրապնդված է ՄԱԿ-ի կանոնադրությունում, բազմաթիվ այլ պայմանագրերում ու կոնվենցիաներում, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ընդունած մի շարք հռչակագրերում, որոնք վերաշարադրում են միջազգային իրավունքի գործող սկզբունքներն ու նորմաները:

Պետությունների բարեկամական հարաբերություններին ու համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիրը, որ ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1970թ. հոկտեմբերի 24-ին, ԽՍՀՄ-ի նախաձեռնությամբ ու

¹ Յու.Գ. Բարսեղով << Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է >>, Երևան, <<Հայաստան>>, 1990թ., էջ 12-13:

² Նույն տեղում էջ 17:

³ Նույն տեղում էջ 18:

մասնակցությամբ, հաստատում է, որ ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրապնդված ինքնորոշման իրավունքի հիման վրա բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատորեն որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը՝ առանց դրսի միջամտության: Այս սկզբունքը հաստատված է նաև Եվրոպայի անվտանգության ու համագործակցության վերաբերյալ խորհրդակցության եզրափակիչ ակտում: Ինքնորոշման սկզբունքը շոշափում է ոչ միայն ժողովուրդների իրավունքները, այլև պետության ու անձի հարաբերությունները: Մարդու իրավունքներն ու ազատությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը փոխադարձաբար կապված են և փոխադարձաբար պայմանավորված: Չի կարող խոսք լինել մարդու իրավունքների ու ազատությունների մասին, եթե չի ճանաչվում ժողովրդի ինքնորոշման իրավունքը և ընդհակառակը՝ անհանար է իրականացնել ինքնորոշման իրավունքը, եթե խախտվում են մարդու իրավունքները: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1952թ. դեկտեմբերի 16-ի 637 բանաձևում նշվում է, որ <<ժողովուրդների և ազգերի ինքնորոշման իրավունքը նախադրյալ է մարդու հիմնական բոլոր իրավունքներից օգտվելու համար>>¹:

Հետևելով միջազգային պրակտիկային, միջազգային իրավունքի խորհրդային դոկտրինայում նշվում է, որ ինքնորոշման իրավունքը հանդիսանում է <<յուրաքանչյուր մարդու և յուրաքանչյուր ժողովրդի հիմնական ու անկապտելի իրավունքներից մեկը>>²: Ելնելով այս ամենից միջազգային համապատասխան ակտերը սահմանում կամ ընդունում են, որ ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի խախտումը կամ սահմանափակումն իրենից ներկայացնում է մարդու գլխավոր իրավունքների և հիմնական ազատությունների ուղղակի և անմիջական խախտում: Միջազգային իրավունքի և իրավական համապատասխան ակտերի համաձայն պետությունը ոչ միայն չպետք է խոչընդոտի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ազատ իրականացմանը, այլև ակտիվորեն նպաստի այդ իրավունքի իրացմանը³: Միջազգային համագործակցության անդամ բոլոր պետություններն առանց բացառության պարտավոր են հարգել ժողովրդի ինքնորոշման իրավունքը և նպաստել նրա պահպանմանը նույնիսկ այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է կողմնակի ժողովրդին: Խոսելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ապահովման միջոցների մասին անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն միջազգային իրավունքի առանձնահատկությունն ընդհանրապես, այլև ինքնորոշման իրավունքի սուբյեկտը: Այդ իրավունքի կրողը ոչ թե պետությունն է, այլ ժողովուրդը կամ ազգը, իսկ նրանց ինքնորոշման մասին հարցը սովորաբար ծագում է կապված նրանց ստրկացման, կախվածության կամ օտարազգի գերիշխանության ու շահագործման մյուս ձևերի հետ: Եթե պետությունները, որոնք իրականացնում են մյուս ժողովուրդների ազգային ճնշման զանազան ձևեր, բարեխղճորեն կատարեին ազատ ինքնորոշման միջազգային իրավունքի կարգադրագրերը, ապա, ակներև է, որ այդ իրավունքի հարկադիր ապահովման միջոցների դիմելու անհրաժեշտություն չէր լինի: Ուստի ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան պետություններին կոչ է անում ձեռնպահ մնալ որևէ բռնի կամ այլ գործողությունից, որը զրկում է ժողովուրդներին նրանց <<ինքնորոշման անկապտելի իրավունքից>>: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1970թ. դեկտեմբերի 12-ին ընդունեց << Գաղութային և օտարերկրյա տիրապետության ու ռասիստական վարչակարգերի դեմ մարտնչել կոմբատանտների իրավական ռեժիմների հիմնական սկզբունքները>>(բանաձև 3103), որում նշվում է, որ <<գաղութային ու օտարերկրյա տիրապետության և ռասիստական վարչակարգերի լծի տակ գտնվող ժողովուրդների պայքարը հանուն իրենց ինքնորոշման իրավունքի և անկախության հանդիսանում է օրինական և ամբողջովին համապատասխանում է միջազգային իրավունքի սկզբունքներին>>: Իսկ 1981թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից

¹ Յու.Գ. Բարսեղով << Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է >>, Երևան, <<Հայաստան>>, 1990թ., էջ 35:

² Мовчан А. П. Права человека в международных отношениях, М., 1977, с. 43:

³ Յու.Գ. Բարսեղով << Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է >>, Երևան, <<Հայաստան>>, 1990թ., էջ 37:

ընդունված հռչակագիրը հաստագրում է, որ պետության ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը չի կարող հակադրվել ժողովուրդների ինքնորոշման իրավունքին:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի պահպանման իրավական երաշխիքներից մեկը դառնում է նրանց խախտումները քրեական կարգով պատժելի միջազգային հանցագործություններին դասելը: Ինքնորոշման իրավունքի խախտմամբ հանցագործությունների հանցակազմերի կապը հստակորեն երևում է բռնակցման դեպքում: Ժողովուրդների ինքնորոշման խախտումները միջազգային իրավունքով ճանաչվող հանցագործություններին վերագրումը նշանակում է, որ վարքի նորման խախտող պետությունը միջազգային պատասխանատվություն է կրում, իսկ մյուս բոլոր պետությունները պարտավոր են արձագանքել համապատասխան ձևով, այսինքն՝ իրենցից կախված ամեն ինչ անել, որպեսզի թույլ չտան կամ կանխեն այդպիսի խախտումը:

1988թ. դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 43-րդ նստաշրջանում Գորբաչովը նշեց. <<Մենք գտնում ենք, որ մարդու իրավունքների բնագավառում համաձայնագրերի մեկնաբանության և կիրառության վերաբերյալ Հաագայի միջազգային դատարանի իրավասությունը պետք է պարտադիր լինի բոլոր պետությունների համար>>¹:

Այսպիսով պետք է նշել, որ չի կարելի վկայակոչել միութենական հանրապետությունների անկախությունը տարածքային ամբողջականության ու ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը և միևնույն ժամանակ բանն այնպես ներկայացնել, թե իբր նրանք իրենց պետական սահմանների շրջանակներում ազատ են ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքը պահպանելու անհրաժեշտությունից: Եզրակացությունը մեկն է. չի կարելի թույլ տալ, որ ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը զոհաբերվի այս կամ այն միութենական հանրապետության եսամոլական նկատառումներին:

Պետությունների կողմից փորձեր են արվում իրենց զավթողական քաղաքականությունը արդարացնել և ժխտել բռնակցված մարզի ժողովուրդների ինքնորոշման իրավունքը պատճառաբանելով, որ այն կարող է խախտել պետության միասնությունն ու տարածքային ամբողջականությունը: Սա իրականում ծառայում է բռնակցման քաղաքականության արդարացմանը:

Ինքնորոշման լենինյան սկզբունքում նշվում է. <<Եթե որևէ ազգ բռնությամբ է պահվում տվյալ պետության սահմանների մեջ, եթե նրան, հակառակ իր արտահայտած ցանկության, միևնույն է, արտահայտված է այդ ցանկությունը մամուլում, թե ժողովրդական ժողովներում, կուսակցությունների որոշումների մեջ կամ ազգային ճնշման դեմ հուզումների և ապստամբությունների ձևով, իրավունք չի տրվում ազատ քվեարկությամբ, միացնող կամ առհասարակ ավելի ուժեղ ազգի գործերն այդ երկրից ամբողջովին հանելով, առանց որևէ հարկադրանքի որոշելու այդ ազգի պետական գոյության ձևերի հարցը, ապա նրա միացումը հանդիսանում է անեքսիա, այսինքն՝ զավթում ու բռնություն>>²: Այսպիսով իր ժողովրդից կտրված Արցախի հայերի ինքնորոշման անկապտելի իրավունքի ճանաչման մերժումը նշանակում է ԽՍՀՄ սահմանադրության 70 հոդվածում ամրագրված սահմանադրական սկզբունքի խախտում: Սակայն բռնակցումը հավերժացնելու համար սկսել են վկայակոչել ԽՍՀՄ սահմանադրության 78 հոդվածը և հանրապետական սահմանադրության համապատասխան հոդվածը, որոնցում ասվում է այն մասին, որ <<միութենական հանրապետության տարախքը չի կարող փոփոխվել առանց նրա համաձայնության>> և որ <<միութենական հանրապետությունների միջև սահմանները կարող են փոփոխվել միայն համապատասխան հանրապետությունների փոխադարձ համաձայնությամբ>>³:

Դեռևս չկան այնպիսի հրապարակումներ, որոնք համամիութենական մակարդակով վերականգնեն իրավաբանական ճշմարտությունը խորհրդային սահմանադրության 70 և 78 հոդվածների միջև հարաբերակցության ու փոխգործողության մասին: Մեր երկրի, ինչ-որ չափով նաև համաշխարհային հասարակությանը, առաջվա պես ներշնչում է այն միտքը, որ Արցախի հիմնախնդրի լուծմանը խանգարում են բուն սահմանադրության մեջ եղած

¹ <<Խորհրդային Հայաստան>>, 1988թ., դեկտեմբերի 8:

² Վ.Ի.Լենին, ԵԼԺ, հ.35, էջ 14:

³ Յու.Գ. Բարսեղով << Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է >>, Երևան, <<Հայաստան>>, 1990թ., էջ 54:

հակասությունները: Բայց ԽՍՀՄ սահմանադրության 78 հոդվածը, ինչպես նաև միջազգային իրավունքում տարածքային ամբողջության սկզբունքը, ապահովում է խորհրդային հանրապետությունների կողմից միակողմանի ունեցվածություններից, բայց ոչ մի դեպքում չի կարող բացառել սահմանների փոփոխության հնարավորությունը բուն բնակչության կամքի արտահայտությամբ ազատ ինքնորոշման իրավունքի ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ խորհրդային սահմանադրական իրավունքի հիմնական սկզբունքի հիման վրա: Իրավունքի տեսանկյունից պետության տարածքային ամբողջության և նրա սահմանների անխախտելիության սկզբունքի հակադրումն ինքնորոշման իրավունքի սկզբունքին պարզապես անբարեգապություն է, որովհետև այդ սկզբունքները, թեև սահմանակցվում են, իրավաբանորեն հակադրելի չեն¹: Պետության տարածքային ամբողջության գործողությունն ամենից առաջ ուղղված է պաշտպանելու պետության տարածքն արտաքին ունեցվածություններից: Տարածքային վեճի տակ կասկածվում է <<վեճի պարզորոշ արտահայտված և օբյեկտիվորեն գոյություն ունեցող առարկայի վերաբերյալ կայուն ձև ստացած և ձևավորված տարածքայինությունների գոյությունը սահմանի կամ որոշակի տարածքի նկատմամբ գերիշխանության հարցի մասին նորմայի գոյությունն ու կիրառումը>>²: Տարածքային վեճերում ինքնորոշման իրավունքը կամ չի շոշափվում, կամ չի հանդիսանում տարածքային իրավունքների վիճարկման համար գլխավոր ու միակ հիմքը:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքն ամենից առաջ կարգավորում է հարաբերությունները ժողովրդի, որպես տարածքային իրավունքների սկզբնական կրողի, և պետության միջև, որին նա պատգամում է իր իրավունքների իրականացումը:

Մարդկության ամբողջ փորձը խոսում է այն մասին, որ ինքնորոշման իրավունքի իրականացումը չի կարող և չպետք է դիտվի որպես ժողովուրդների միջև և պետություններ միջև խաղաղության ու բարեկամական հարաբերությունների արգելք: Ընդհակառակը, հենց ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ժխտումը, այն օտար մարզերը պահելու ձգտումը, որոնք բնակեցված են մյուս ազգության ժողովրդով, միշտ հասցրել է ընդհարումների³:

Ինքնորոշման իրավունքի սկզբունքի և ժողովուրդների ու պետությունների բարեկամական հարաբերությունների միջև ներքին, օբյեկտիվ կապն արտացոլված է ՄԱԿ-ի կանոնադրությունում. ինքնորոշման իրավունքը <<հանդիսանում է համընդհանուր խաղաղության ամրապնդման միջոցներից մեկը>>: Միջազգային այս կարգադրագիրը համահնչյուն է լենինյան այն ցուցումին, որ զանգվածների ինտերնացիոնալ դաստիարակությունը հնարավոր չէ առանց օտար սահմաններում բռնությամբ պահվող ազգերի ազատ անջատման քարոզի⁴:

Ազգերի ինքնորոշման իրավունքը, որպես միջազգային իրավունքի հրամայական նորմա, պետք է ճանաչվի միշտ և բոլոր դեպքերում, անկախ այն բանից, թե երբ, ինչ հանգամանքներում և ինչի հիման վրա է տեղի ունեցել այն տարածքի միավորումը, որի ժողովուրդը դնում է ինքնորոշման հարցը: Այդ իրավունքն ամբողջովին պետք է տարածվի նաև արցախահայության սահմանադրական ճանապարհով ազատ կամքի դրսևորման և հանրաքվեի ճանապարհով իր անկախությանը միջազգային իրավունքի նորմերով հռչակելու իրողության վրա: Միջազգային հանրությունը վաղ թե ուշ պետք է հաշտվի Արցախի ինքնորոշման և ազատ ու անկախ պետության հռչակման փաստի հետ, ինչպես դա մեր օրերում արել են Միացյալ Նահանգների թվով 6 նահանգային օրենսդիր մարմիններ:

ՀՏՂ347.4

¹ Նույն տեղում էջ 58:

² Клименко П. М., Порк А.А. Территория и граница СССР.-М.,Международные отношения, 1985,с.231.

³ Յու.Գ. Բարսեղով << Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է >>, Երևան,<<Հայաստան>>, 1990թ., էջ 90-91:

⁴ Վ.Ի. Լենին,ԵԼԺ, հ.30, էջ 59-60:

ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ռ. Ամիրովա

Հայ-Ռուսական համալսարան

Իրավունքի և քաղաքագիտության ինստիտուտ

rozaamirova@mail.ru

Բանալի բառեր՝ պայմանագրի մեկնաբանում, պայմանագրի մեկնաբանման սուբյեկտիվ և օբյեկտիվ նախադրյալներ, պայմանագրի տառացի մեկնաբանում:

Ключевые слова: толкование договора, субъективные и объективные предпосылки к толкованию договора, буквальное толкование договора.

Keywords: contract interpretation, subjective and objective preconditions for interpretation dispute, literal contract interpretation.

Ամփոփում

Սույն հոդվածում տեսականորեն վերլուծվում են պայմանագրի մեկնաբանման հետ կապված որոշ տեսական հիմնահարցեր: Տվյալ աշխատանքի նպատակն է "մեկնաբանում" հասկացության բացատրությունը, վիճահարույց հարցերի նախադրյալների նկարագրումը՝ կապված մեկնաբանման հետ, ինչպես նաև՝ մեկնաբանման կանոնների կիրառումը գործնականում:

A.P. Амирова

Российско-Армянский университет

Институт права и политики

rozaamirova@mail.ru

ПРОБЛЕМЫ ТОЛКОВАНИЯ ГРАЖДАНСКО-ПРАВОВОГО ДОГОВОРА

Резюме

Статья содержит теоретический анализ некоторых вопросов, связанных с толкованием договора. Цель настоящей работы состоит в определении понятия толкования, описании предпосылок к возникновению спора о толковании, а также применении правил толкования на практике.

R. Amirova

Russian-Armenian University

Institute of Law and Politics

rozaamirova@mail.ru

PROBLEMS OF CONTRACT INTERPRETATION

Summary

This article presents theoretical analysis of contract interpretation issues. The main objective of this paper is to describe preconditions for interpretation dispute and the principles of contract interpretation. The article deals with the problem of definition «contract interpretation».

По мнению В. И. Леушина *толкование - юридически значимая деятельность, ибо оно имеет цель - реализацию или совершенствование толкуемых актов*. Толкование представляет интеллектуально-волевою организационную деятельность, которая предполагает уяснение и разъяснение соответствующих актов. Толкование, как юридически значимая деятельность, включает в себя практику толкования и применения норм права к конкретным обстоятельствам, представляет собой деятельность по организации общественных отношений, их изменению, прекращению, исполнению и т.д.

Необходимость в толковании договора появляется при неполноте или недостаточной ясности отдельных его условий, оспаривании его наличия, а также смысла используемых в нем понятий либо его правовой природы. Суд использует толкование, когда между сторонами возникает спор относительно сущности договора и отдельных его элементов.

В учебнике по германскому гражданскому праву проф. К. Larenz приводит следующий пример: при бронировании гостиницы заказчик просит зарезервировать "два номера с тремя кроватями". Заказчик рассчитывает занять два номера, в каждом из которых будут по три кровати, в то время как

хозяин гостиницы забронировал два номера: односпальный и двухспальный соответственно.¹

Одного взгляда на данную ситуацию достаточно, чтобы прийти к заключению, что сама формулировка заказа является неопределенной, позволяющей допустить два в равной мере вероятных его значения.

В английском праве общепринято говорить об **очевидной (patent)** и **скрытой (latent)** неопределенности. В американской литературе они классифицируются соответственно как **внутренняя (intrinsic)** и **внешняя (extrinsic)**.

При очевидной неопределенности в английской литературе в качестве примеров обычно приводятся споры, когда в договоре различались цены, указанные в цифрах и прописью, либо когда сроки, обозначенные в договоре количеством дней и календарной датой, не совпадали. Такого рода неопределенности содержатся в самом тексте договора и легко устраняются путем толкования, в том числе в практике российских судов.

В одном деле судом было установлено, что в результате ошибки был неверно указан срок действия договора страхования - с 19 по 18 апреля 2008 г. Отклоняя доводы страховой компании о невозможности применить данное условие к страховому случаю, суд указал, что договор заключен сроком на один год, что, в частности, подтверждается сроком страхования для данного вида ответственности, предусмотренным законом². При рассмотрении вопроса о компетенции суда было установлено, что стороны согласовали, что споры по договору подлежат разрешению арбитражным судом г. Кызыла, хотя арбитражного суда с таким названием не существует и поскольку в г. Кызыле расположен и действует только один арбитражный суд, а именно Арбитражный суд Республики Тыва, компетенция данного суда была признана соответствующей условиям договора³.

Проблемы толкования гражданско-правового договора известны и правовой системе РА. В одном из дел истец приводил жалобу в связи с тем, что Кассационный суд РА не дал толкование к понятию "Товар", сопоставляя его с иными положениями договора и с договором в целом, также не учел, что имели в виду стороны договора.⁴

Главная задача толкования договора состоит в **определении содержания прав и обязанностей сторон, заключивших его**.

Установление того, какими правами обладают и какие обязанности несут стороны договора, подразумевает исследование судом воли сторон, положенной в основу каждого договорного обязательства. Потребность в установлении значения спорного условия не может выступать в качестве самостоятельной цели обращения в суд, а требование об истолковании договора судом - самостоятельным способом защиты прав. Хотя не все авторы согласны с этой точкой зрения.

В своей работе Н.В. Степанюк предлагает обоснование возможности обращения в суд исключительно с требованием о толковании содержания сделки. Он считает, что толкование не только возможно, но и необходимо даже в отсутствие спора о праве, ибо "суд должен осуществлять толкование договора при каждом рассмотрении дела, независимо от того, заявляют ли стороны ходатайство о необходимости проведения его толкования и независимо от наличия между ними разногласий относительно того или иного условия или договора в целом". В. Степанюк утверждает, что "толкование является процессом, который осуществляется независимо от наличия каких-либо расхождений: когда судья определяет содержание договора, он тем самым уже осуществляет одну из первоначальных стадий толкования (уяснение)".⁵

Толкование договора есть, в первую очередь, функция суда, которая предполагает разрешение спора по существу. По мнению С. Mitchell: "...стороны желают разрешения спора о толковании не потому, что им необходимо знать, что договор значит, а потому что толкование является инструментом возложения правовой ответственности".

Итак, под толкованием договора следует понимать деятельность суда по установлению значения условий договора с целью определения прав и обязанностей сторон.

В доктрине договорного права существуют представления как **объективной**, так и **субъективной** теории толкования. Согласно *субъективному* подходу при толковании следует

¹ Larenz K., Wolf M. Allgemeiner Teil des Bürgerlichen Rechts. 9, neubearb. und erweitt. Aufl. München, 2004. S. 39

² [Постановление](#) Девятого арбитражного апелляционного суда от 24 февраля 2010 г. N 09АП-1924/2010-ГК по делу N А40-92252/09-135-695.

³ [Постановление](#) ФАС Восточно-Сибирского округа от 1 декабря 2009 г. по делу N А69-1184/2009.

⁴ Քաղաքացիական գործ թիվ ՇՂ1/0303/02/10 2011 թ

⁵ Степанюк Н.В. Толкование гражданско-правового договора: Дис. ... канд. юрид. наук. М., 2008.

определить подлинную волю сторон, даже если она находится в противоречии с тем, как она выражена. Согласно *объективному* подходу, толкуя договор, приоритет отдается тому, как выражена воля сторон, т.е. волеизъявлению.

Истоки субъективных и объективных критериев толкования исходят из римского частного права. Изначально в римском праве преобладал объективный подход, нашедший отражение в Дигестах Юстиниана: "Кто говорит одно, а хочет другого, тот не говорит того, что означают его слова, потому что он этого не хочет, но и не говорит того, что хочет, потому что он не те слова говорит"¹.

В известном наследственном деле **Causa Curiana** на примере толкования завещания столкнулись две позиции, которые в нынешней терминологии могли бы быть восприняты как объективная и субъективная.

Наследодатель оставил завещание, в котором содержалось следующее распоряжение: "Если у меня родится сын и он умрет, не достигнув совершеннолетия, то я желаю, чтобы Курий был моим наследником". Случилось так, что сын не родился, и встал вопрос о том, имеет ли Курий право на наследство. Известный римский оратор Квинт Муций Сцевола отстаивал буквальный смысл завещания: если сын не родился, значит, и Курий не может стать наследником. Его оппонент Луций Лициний Красс возражал, ссылаясь на справедливость и подлинную волю завещателя, которая была направлена на передачу Курию наследства, если им не сможет воспользоваться сын наследодателя.²

Ст. 1156 ФГК указывает, что при рассмотрении соглашений нужно в первую очередь исследовать, каково было взаимное намерение договаривающихся сторон, а не останавливаться на буквальном смысле выражений. Согласно **§ 133 ГГУ** при толковании волеизъявлений необходимо руководствоваться действительной волей, не придерживаясь буквального смысла выражений.

Ст. 431 ГК РФ также говорит о потребности выяснения подлинной общей воли сторон, хотя и после буквального толкования.

Еще наиболее явной данная проблема становится при рассмотрении структуры гражданско-правового договора, в котором принимают участие как минимум две стороны. Возникает вопрос: о воле какой из сторон говорится в приведенных выше нормах об "обоюдном намерении договаривающихся сторон", "общем намерении сторон"?

В большинстве ситуаций обе стороны не могут одновременно быть авторами спорного условия: неопределенная формулировка, как правило, исходит от одной из сторон, которая предложила данное условие либо проект договора, следовательно, можно говорить об **авторстве спорного условия**.

Однако следование лишь воле той из сторон, которая считается автором спорного условия, связано с риском ущемления интересов другой стороны, которой было адресовано спорное условие.

При использовании субъективного подхода важное значение имеет то, что другая сторона знала или не могла не знать о намерении заявителя. Сообразно этому в немецкой литературе постулируется тезис о том, что решающее значение должно быть придано распознаваемости волеизъявления для другой стороны³. Сущность этого учения состоит в том, что правовые последствия сделки связываются не столько с внутренним решением лица совершить сделку, сколько с проявлением данной воли вовне.

В то же время не следует абсолютизировать позицию стороны-адресата в ущерб интересам стороны-заявителя, которая могла не проявить должной степени заботливости и осмотрительности для понимания волеизъявления, исходящего от стороны-заявителя.

В практике более интересным является вопрос о том, как распределяется между сторонами бремя доказывания обстоятельств, связанных с пониманием спорного волеизъявления сторонами. Согласно **п. 1 ст. 8 Венской конвенции** для того, чтобы значение, которое вкладывала сторона-заявитель в собственное волеизъявление, стало обязывающим, ей необходимо доказать, что сторона-адресат поняла или должна была понять такое значение. Однако неправильно утверждать, что существует презумпция правильности понимания спорного условия стороной-адресатом, поскольку такой стороне также необходимо представить доказательства того, что она не знала и не могла знать о значении спорного условия, на котором настаивает сторона-заявитель.

На практике возникает также множество вопросов, связанных с принятием стороной-заявителем достаточных мер для формулирования доступного для другой стороны условия, а стороной-адресатом - для уяснения смысла этого условия.

В немецкой литературе существует аспект автономии воли. Если сторона - автор спорного условия обладает возможностью сформулировать свою волю в тексте договора, то логично предположить, что именно она должна нести соответствующие риски. Это выражается в широко

¹ D. 29.5.3

² Римское частное право: Учебник. С. 316.

³ Vogenauer S. Op. cit. P. 4.

известном в западных правовых системах правиле о том, что формулировки спорного условия следует толковать против того, кто включил такое условие в договор. В примере с заказом гостиничного номера, который мы уже рассматривали ранее, заказчик обязан был бы нести ответственность за неопределенность формулировки своего заказа, которая допускала два равно возможных значения.

Если учитывать только понимание стороны-адресата, то это может быть крайне несправедливо для стороны-заявителя, поскольку сторона-адресат также может понять договор неправильно. В примере с заказом номера от хозяина гостиницы следовало бы ожидать принятия мер по уточнению того, какие именно номера собирается заказать гость.

Мы пришли к выводу о том, что там, где может быть применен субъективный подход к толкованию договора, объективный подход не подлежит применению.

Однако применение субъективного критерия толкования условий договора сталкивается со следующими сложностями:

- Имеются обоснованные возражения против применения субъективного подхода в тех случаях, когда от результата толкования зависят права и обязанности третьего лица, которое не является стороной договора. Очевидно, что третье лицо не может быть связано тем пониманием договора, которое имели стороны и о котором третьему лицу не было известно.
- Очень сложно представить доказательства того, что другая сторона знала или должна была знать о значении предложенного спорного условия, равно как и обосновать обратное.
- Применение субъективного критерия может быть значительно затруднено, если невозможно установить, какая из сторон готовила проект договора либо участвовала в разработке спорного условия, так как при его применении предполагается установление судом автора и адресата спорного условия договора. В отсутствие доказательств авторства спорного условия возможность распределения бремени доказывания также ограничена.
- В современном обороте в формулировании условий сложных коммерческих сделок участвуют не сами стороны, а их юристы. Говорить в такой ситуации о действительной воле стороны, а также представлять доказательства такой воли на практике также проблематично.

На наш взгляд, использование данных подходов в российском праве могло бы служить целям достижения единообразия судебной практики по спорам о толковании договора, а также гармонизации такой практики с основными тенденциями развития современного иностранного договорного права. Российские суды при разрешении споров о толковании должны учитывать оба подхода, поскольку они помогают найти правильное решение при сохранении баланса интересов сторон (субъективный критерий) и интересов оборота (объективный критерий).

Как правило, первый способ толкования называют буквальным. Под **буквальным** способом мы в большей степени понимаем лингвистический анализ речи, при этом, в отличие от других способов толкования, контекст никак не имеет значения.

В практике английских судов сложилось так называемое "**золотое правило**" толкования (golden rule), согласно которому "слова договора должны быть истолкованы в их буквальном и обычном смысле, исключая случаи, когда отклонение необходимо для того, чтобы избежать абсурда, противоречия либо непоследовательности".¹

В 1835 г. Эдвард и Джеймс Маллан согласились консультировать Леона Мэйя по вопросам организации врачебного бизнеса с условием, что Мэй не будет без их согласия практиковать в качестве дантиста в пределах Лондона. После истечения срока договора Мэй начал работать зубным врачом на Грейт Рассел Стрит (во время заключения договора данный район находился в миле от исторического центра Лондона и входил в его ближайшие окрестности). Разрешая дела по иску о взыскании убытков к Мэю, суд, применяя рассматриваемое правило, в частности, указал на то, что слово "Лондон" надо понимать в буквальном смысле, т.е. как исторический центр города (the City of London), а не в широком смысле, который включает также его окрестности.²

Используя "золотое правило", суд не учел, что на Грейт Рассел Стрит располагались сами истцы. Несомненно, что включение такой оговорки в договор было направлено на то, чтобы избежать конкуренции в месте, где истцы уже ведут аналогичный бизнес, поэтому имеются обоснованные сомнения в том, что буквальное значение слова "Лондон" отражало волю сторон.

В американских судах аналогичное значение имеет **правило очевидного значения (plain meaning rule)**. Данное правило представляет собой запрет сторонам ссылаться в подтверждение значения, отклоняющегося от буквального, на обстоятельства, которые прямо не следуют из текста

¹ Lewison K. Op. cit. P. 202

² Cases, Materials and Text on Contract Law: Ius Commune Casebooks for the Common Law of Europe. Oxford, 2010. P. 678.

договора. Как отмечается в литературе, "в случае отсутствия неопределенности суды делают вывод о том, что документ является "ясным" и буквальное значение становится значением договора".¹

В английской доктрине сложилось целое научное направление - **литерализм** (от англ. - **literal**, буквальный). Когда язык договора является однозначным и ясным, суд должен придерживаться буквального значения, несмотря на утверждения стороны о том, что она понимала договор как-то иначе². В противовес литерализму в Англии и США сформировалась доктрина приоритета контекстуального значения, основной задачей которой стал отказ от ограничения толкования в буквальном значении. В результате потребность применения рассматриваемых правил при разрешении договорных споров была пересмотрена.

В судебной практике Франции было разработано **правило ясных и точных условий**, сущность которого состоит в том, что "ясные и точные" условия договора не нуждаются в толковании, поскольку если их смысл очевиден, то необходимость в установлении общей воли сторон в соответствии со ст. 1156 ФГК не требуется.

Немецкие суды используют также **правило однозначности (Eindeutigkeitsregel)**, которое было сформулировано Верховным судом Германии для того, чтобы при толковании договора не допустить искажения его смысла путем исключения не относящихся к разрешению спора интерпретаций. В немецком праве данное правило имеет цель **распределить между сторонами бремя доказывания**. Согласно позиции Верховного суда Германии тот, кто ссылается на значение, отклоняющееся от буквального, несет бремя доказывания. Стороне договора, опирающейся на однозначный смысл слова, достаточно сослаться на текст, в то время как от стороны, настаивающей на особом значении, требуется доказывание дополнительных фактов, которые его обуславливают³.

В российской судебной практике очевидно наблюдается тенденция к ограничению толкования спорных условий в пользу установления буквального значения слов и выражений.

Согласно **ч. 1 ст. 431 ГК РФ** при толковании условий договора судом принимается во внимание буквальное значение содержащихся в нем слов и выражений. Буквальное значение условия договора в случае его неясности устанавливается путем сопоставления с другими условиями и смыслом договора в целом. В соответствии с ч. 2 этой же статьи если правила, содержащиеся в ч. 1 настоящей статьи, не позволяют определить содержание договора, должна быть выяснена действительная общая воля сторон с учетом цели договора и всех иных обстоятельств. Получается, что приоритет отдается буквальному толкованию, а действительная воля выясняется лишь при невозможности буквального и систематического толкования. Российское законодательство не содержит каких-либо правил буквального толкования. Источником таких правил в РФ являются доктрина и судебная практика.

Ограничение права сторон представлять доказательства в процессе толкования для подтверждения обосновываемого ими значения спорного условия должно быть подвергнуто критике, так как во всех рассматриваемых правовых порядках, за исключением немецкого права, основанием для применения указанных правил является вывод суда о том, что язык договора является ясным, не вызывает сомнений и поэтому не требует толкования, поскольку спорное условие может иметь лишь одно допустимое значение, которое является буквальным. Между тем вывод суда об определенности и ясности условий договора также является результатом толкования. Суд, формулируя вывод о ясности условий договора на основе его буквального значения, одновременно констатирует отсутствие в спорном условии неопределенности в смысле объективной предпосылки для обращения к правилам толкования. В то же время, как мы указывали ранее, на практике неопределенность договора обнаруживается только после применения его условий к конкретным отношениям сторон, т.е. неопределенность в большинстве случаев является скрытой. По этой причине суд может отказать в толковании условий договора, неопределенность которых может проявиться только в процессе толкования.

Если ограничить возможность сторон ссылаться на внешние обстоятельства, то огромна вероятность того, что значение спорного условия, которое отображает подлинную волю сторон, будет опровергнуто судом без исследования всех необходимых фактов, составляющих контекст данного значения (переговоры, переписка, практика, установившаяся во взаимоотношениях сторон, и т.д.).

В этой связи основная претензия к применению рассматриваемых правил сводится к тому, что при установлении в процессе толкования данного значения суд не принимает во внимание все обстоятельства спора, которые важны для правильного разрешения такового.

¹ Burton S.J. Op. cit. P. 105.

² Burton S.J. Op. cit. P. 123.

³ L'deritz A. Op. cit. S. 329.

Также значительным недостатком является то обстоятельство, что для понятия "ясность условий договора" с практической точки зрения невозможно предложить универсальное определение с целью его последующего использования в качестве ограничения толкования.

Представление о ясности договора в результате простого прочтения тоже нельзя признать полезным для практики, так как это связано с объективной многозначностью слов и их сочетаний. При учете различия в понимании условия сторонами, грань между ясностью и неясностью условий договора во многом обусловлена не столько самим языком условия, сколько горизонтом понимания языка стороной договора.

При всех недостатках рассматриваемые нами правила о приоритете буквального значения спорного условия позволяют предотвратить искажение договора, обеспечив необходимый уровень защиты правовой определенности в отношениях сторон. Это особенно актуально в деле защиты прав третьих лиц, которые могут обоснованно полагаться на буквальное значение договора. Приоритет буквального толкования позволяет также сократить литигационные издержки, связанные, прежде всего, с оплатой услуг судебных юристов в случае возникновения спора о толковании. Преимущество буквального толкования состоит также в том, что посредством такого толкования ограничивается сфера злоупотребления со стороны недобросовестных контрагентов, которые не могут ссылаться на явно необоснованное значение условия с целью избежать ответственности по договору.

Предлагаемый нами подход направлен не столько против установления буквального значения, сколько против бездумного применения буквализма, при котором суд даже не пытается исследовать волю сторон. Предлагаемое нами разъяснение судебной практики возможно сформулировать следующим образом:

"При толковании договора согласно **ст. 431 ГК РФ** судам следует учитывать, что буквальное значение содержащихся в договоре слов и выражений предполагается соответствующим действительной воле сторон, пока обратное не будет доказано заинтересованной стороной".

С учетом вышеприведенных доводов данное решение представляется более логичным, так как буквальное значение слов и выражений при толковании договора не может оставаться без внимания при разрешении спора, поскольку на него опирается не только суд, но и стороны самого договора. И если сторона, настаивающая на другом значении договорного условия, представит убедительные доказательства того, что иная сторона знала или не могла не знать о таком значении, то суд должен принять его. В таком случае буквальное значение договора перестает быть ограничением для толкования и рассматривается в качестве одной из составляющих, влияющих на распределение бремени доказывания между сторонами спора. Однако если бы суды действительно ограничивались буквальным толкованием договора, то они не смогли бы осуществлять юридическую квалификацию договора, более того, в этом случае вообще отпала бы необходимость в толковании договора: суды должны были бы просто исходить из названия договора, не анализируя фактически сложившиеся правоотношения сторон. Тот факт, что суды не связаны таким ограничением, а напротив, обязаны произвести юридическую квалификацию договора, говорит о том, что они уже изначально не могут быть ограничены буквальным смыслом.

ЛИТЕРАТУРА

- [1.] Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. М., 2005. Кн. 1: Общие положения.
- [2.] Венская конвенция о договорах международной купли-продажи товаров: Комментарий. М., 1994.
- [3.] Степанюк Н.В. Толкование гражданско-правового договора: Дис. ... канд. юрид. наук. М., 2008.
- [4.] Larenz K., Wolf M. Allgemeiner Teil des Bürgerlichen Rechts. 9, neubearb. und erweit. Aufl. München, 2004. S. 39
- [5.] Cases, Materials and Text on Contract Law: Ius Commune Casebooks for the Common Law of Europe. Oxford, 2010. P. 678.
- [6.] Mitchell C. Interpretation of Contracts (Current Controversies in Law). L.; N.Y., 2007.
- [7.] Постановление Девятого арбитражного апелляционного суда от 24 февраля 2010 г. N 09АП-1924/2010-ГК по делу N А40-92252/09-135-695.
- [8.] Постановление ФАС Восточно-Сибирского округа от 1 декабря 2009 г. по делу N А69-1184/2009.
- [9.] Քաղաքացիական գործ թիվ ՇԴ1/0303/02/10 2011 թ
- [10.] Римское частное право: Учебник. С. 316.

ՀՏՂ325(479.243)

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ ՀՀ/ԼՂՀ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

(Կամ պատերազմի նոր ռազմադաշտը)

Կարապետ Գևորգյան

ՀՀ ՊԿԱ քաղաքական կառավարման և
հանրային քաղաքականության ամբիոնի մագիստրանտ

Տեղեկատվական հասարակության գոյաբանական որոշիչները* նոր մարտահրավերներ են նետում հասարակական զարգացման ընթացքին թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ մշակութային, թե՛ սոցիալական չափումներում: Հետարդյունաբերական հասարակություններում** տեղեկատվական ոլորտը հետզհետե դառնում է տնտեսության շարժիչը, իսկ գիտելիքը՝ ամենապահանջված «ապրանքը»:¹ Փ. Դրաքերը դեռևս նախորդ դարակեսին նշում է, որ «...համակարգչային, գիտելիքահենք ու ցանցային նոր իրականությունը պահանջում է քաղաքականության, տնտեսության, մշակույթի, պատերազմի վարման տեխնիկայի, ազգային անվտանգության կողմորոշիչների ընկալման արժեքաբանական կերպափոխում»:² Խոսելով տեղեկատվական հասարակության մասին հարկ ենք համարում անրադառնալ վերջինիս կարևորագույն բնութագրիչներին, որոնք էլ սահմանում են հասարակության գոյաբանական որոշիչների համակարգը: Դ. Բելլը դրանք ներկայացնում է հետևյալ կերպ:³

- Հետարդյունաբերական հասարակություններում առևտրատնտեսական հարաբերությունների տեղեկույթը հանդես է գալիս որպես ապրանք, որը ենթակա է վաճառքի, մշակման, տարածման, ձեռնաձուլման:
- Տեխնոլոգիական գործիքակազմը գլխավորապես հիմնված է թվային տեխնոլոգիաների օգտագործման վրա:
- Տեղեկատվական ոլորտը, ինտերակտիվ է. Տեղեկատվական ելքերն ու մուտքերը բազմազան են, հաճախ անկառավարելի:

Այս համատեքստում քաղաքական զարգացման, ժողովրդավարացման և արդիականացման գործընթացներում գտնվող հասարակություններում, որոնք նաև շատ հաճախ ներքաշված են աշխարհաքաղաքական, էթնոքաղաքական հակամարտություններում, կարևորվում է տեղեկատվական տեխնոլոգիաների, հեռահաղորդակցային ոլորտի և մասնավորապես համացանցի դերի արժևորումը քաղաքականության ինչպես լոկալ, այնպես էլ տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում՝ համարժեք պատասխանելու համար գլոբալացվող աշխարհի մարտահրավերներին, և, միաժամանակ, ապահովելու համար ազգային անվտանգության հրամայականի իրացումը:

*Գոյաբանական որոշիչ բառերը աշխատանքում օգտագործվել է արտահայտելու համար հասարակության տվյալ տիպին բնորոշ քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային հարաբերությունների առանձնահատկությունների համակարգը:

**Հետարդյունաբերական հասարակություն, Տեղեկատվական հասարակություն, արտահայտությունները աշխատանքում օգտագործվում են որպես հոմանիշներ:

¹ Hilbert, M. (2015). Digital Technology and Social Change [Open Online Course at the University of California]

տես: <https://canvas.instructure.com/courses/949415/pages/1st-week-introduction-to-the-digital-age>

² Drucker, Peter F.. *The Age of Discontinuity. Guidelines to Our Changing Society*. New York:

Harper, 1968, էջ 40

³ Bell D. Notes on the Post industrial Society. *The public Interest*, 1967, no. 7, էջ 102

Քաղաքական գործընթացները դեռևս դարասկզբից միտում ունեն տեղափոխվելու վիրտուալ հարթակ՝ պայմանավորված տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացմամբ, իսկ համացանցային իրականությունը կերպափոխման է ենթարկում այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են պետական սուվերենությունը, քաղաքական սոցիալականացման և մասնակցության ձևերը, բոլոր տեսակի հիերարխիկ ինստիտուտները, և, վերջապես, հակամարտությունների ծագման, զարգացման և պատերազմների վարման սոցիալատարածական հարթակը:¹ Ժամանակակից աշխարհում տեղեկատվական պատերազմների դերը կարևորվում է ոչ միայն տեղեկույթի՝ որպես ռազմավարական կարևորագույն ռեսուրսի կերպափոխման համատեքստում, այլ նաև տեղեկատվական թվային տեխնոլոգիաների, հեռահաղորդակցական ոլորտի գործիքների ընձեռած հնարավորությունների՝ տեղեկույթի հավաքագրման, մշակման, տարածման, ձեռնաձուլման մանիպուլյացիա արագությամբ գույժնալից: Մյուս կողմից, արդի պայմաններում ավանդական ռազմական գործողությունների վարման համեմատական սահմանափակությունը և ծախսատարությունը, ինչպես նաև զինատեսակների օգտագործման սահմանափակումները (միջազգային համաձայնագրերի շրջանակներում), միջազգային իրավունքի կայացած նորմատիվ համակարգերի առկայությունը և ինստիտուցիոնալացվածությունը, փոքրացնում են իրական պատերազմի վարման հնարավորություններն ու դրդում պետություններին ու զորքալ քաղաքականության այլ սուբյեկտներին վերաբաշխել ավանդական զինանոցը հոգուտ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և տեղեկատվական պատերազմի տեխնոլոգիաների խթանման և կիրառման:²

Համաձայն արդի պատկերացումների, ազգային անվտանգություն (ԱԱ) հասկացությունը ներառում է երեք չափում՝ ռազմաքաղաքական անվտանգություն, սոցիալ-տնտեսական անվտանգություն և տեղեկատվական անվտանգություն:³ Կախված տվյալ հասարակության գոյաբանական որոշիչների համակարգից, ինչպես նաև զորքալ անվտանգային միջավայրի որպիսությունից, ԱԱ առաջնահերթությունները կարող են տարբեր դրսևորումներ ունենալ: Դեռևս նախորդ դարավերջին ԱՄՆ ուսումնասիրողները հստակեցրել են ԱԱ տեսության՝ որպես քաղաքագիտության առանձին ուղղության հետևյալ ոլորտները:⁴

- Ռազմավարական տեսականի հայեցակարգային հիմքեր,
- Միջազգային հարաբերությունների կան խստեսում,
- ԱԱ ազգային դոկտրինները և ռազմավարությունները (հայեցակարգերը),
- Դիվանագիտական ռազմավարություն,
- Տնտեսական ռազմավարություն,
- Աշխարհառազմավարական պլանավորում,
- Ռազմական ռազմավարություն և ռազմական շինարարության պլանավորում,
- Ռազմական կանխատեսում,
- տեղեկատվական անվտանգություն և հիգիենա:

Տեղեկատվական անվտանգության էությունը հասկանալու համար, որպես ելակետ կարող ենք ընդունել հետևյալ սահմանումը .

«Տեղեկատվական անվտանգությունը տեղեկույթի և տեղեկատվական համակարգերի՝ չարտոնված մուտքից, օգտագործումից, հրապարակումից, փոփոխակումից կամ ոչնչացումից

¹Hilbert, M. (2015). Digital Technology and Social Change [Open Online Course at the University of California] տես: <https://canvas.instructure.com/courses/949415/pages/4th-week-social-evolution>

² Атанесян, А.В., Актуальные проблемы современных политических и кон- фликтных коммуникаций. Е.: Изд-во ЕГУ, 2008, էջ 174

³ Экономическая и национальная безопасность /под ред. Е.А. Олейникова/. М., 2005. С. 18.

⁴ Логунов А. Б. Региональная и национальная безопасность: Учеб- ное пособие. 2-е изд. перераб. и доп.– М.: Вузовский учебник. ИНФРА-М, 2011. էջ 89.

պաշտպանությունն է, որպեսզի ապահովված լինեն գաղտնիությունը, ամբողջականությունը և մատչելիությունը»:¹ Ընդ որում տեղեկատվական անվտանգության ոլորտը ներառում է երեք չափում՝ լուրջ, տարածաշրջանային և գլոբալ, որոնք անհնար է դիտարկել միմյանցից անջատ:² Փաստորեն, տեղեկատվական անվտանգության բազմաշերտ համակարգը մի կողմից ուղղված է ներքին քաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական ոլորտներում ազգային անվտանգությանը սպառնացող վտանգների վերահսկմանն ու չեզոքացմանը, մյուս կողմից ապահովում է պետության՝ տարածաշրջանային և գլոբալ քաղաքական տարածության մեջ անվտանգային միջավայրի ստեղծմանը:

Դեռևս 1998թ. ԱՄՆ Պաշտպանության նախարարությունը շրջանառության մեջ դրեց «Տեղեկատվական գործողությունների միացյալ դոկտրինը», որում «տեղեկատվական գործողություն» և «տեղեկատվական պատերազմ» հասկացություններին տրվել են հետևյալ սահմանումները³.

- Տեղեկատվական գործողությունը ձեռնարկվում է հակառակորդի տեղեկատվական համակարգերի կողմից տեղեկատվության հավաքման, մշակման, փոխանցման և պահպանման գործընթացը խաթարելու նպատակով՝ միևնույն ժամանակ պահպանելով սեփական տեղեկատվությունը և տեղեկատվական համակարգերը:

- Տեղեկատվական պատերազմը համալիր ներգործություն է (տեղեկատվական գործողությունների համախմբի միջոցով) հակառակորդի պետական համակարգի և նրա ռազմական, քաղաքական ղեկավարության վրա, որն արդեն խաղաղ ժամանակ կարող է հանգեցնել տեղեկատվական պատերազմ իրագործողի համար հակառակորդի կողմից նպաստավոր որոշումներ ընդունելուն, իսկ հակամարտության ընթացքում լիովին կարող է կաթվածահարել հակառակորդի կառավարման ենթակառուցվածքների գործունեությունը:

Ինչպես տեսնում ենք տեղեկատվական պատերազմները մեծապես կապված են հոգեբանական գործոնների ձեռնածության հետ: Այսպես, Վ.Գ. Կրիսկոն իր «Հոգեբանական պատերազմի գաղտնիքները, նպատակները, խնդիրները, մեթոդները, ձևերը, փորձը» մենագրության մեջ համակարգել է չին փիլիսոփա Սուն Յզիի (մ.թ.ա. VI դար) առաջարկաց հետևյալ հիմնադրույթները:⁴

1. Քայքայել այն ամենը, ինչ կա հակառակորդի երկրում:
2. Հակառակորդի ականավոր գործիչներին ներգրավել հանցավոր նախաձեռնություններում:
3. Սովեր գցել հակառակորդի ղեկավարության հեղինակության վրա և անհրաժեշտ պահին հանրայնորեն խայտառակել նրան:
4. Այդ նպատակով օգտագործել համագործակցությունն ամենաստոր և նողկալի անձանց հետ:
5. Թշնամի երկրի քաղաքացիների շրջանում հրահրել վեճեր նբախումներ:
6. Երիտասարդներին սադրել տարեցների դեմ:
7. Բոլոր միջոցներով միջամտել կառավարության աշխատանքներին:
8. Խոչընդոտել թշնամու զինված ուժերի բնակա-
նոն մատակարարմանը և դրանցում կարգուկանոնի պահպանմանը:
10. Անել հնարավորը թշնամիների ավանդույթներն արժեզրկելու և սե-
11. Առատաձեռն լինել տեղեկատվություն ու մեղսակիցներ գնելու
նպատակով խոստումներ և ընծաներ տրամադրելու գործում:

¹ «Glossary of Key Information Security Terms». Ed. by Richard Kissel. National Institute of Standards and Technology, May 2013, p. 94

² Աթանեսյան Ա. Վ., Սպառնալիքներ ՀՀ տեղեկատվական անվտանգությանը.
Եռամակարդակ վերլուծություն, 21-րդ ԴԱԸ, 2010, N6: էջ 26 -33

³ Ադրբեջանի հակառակորդի տեղեկատվական համակարգը, խավոր խմբագիր Գազիկ շարությունյան,
Նորավանք՝ գիտակրթական հիմնադրամ, Երևան 2009, էջ 10-11

⁴ Крысько В.Г., Секреты психологической войны, Минск, 1999, էջ 30-32

Իսկ ահա երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների վարման արդյունավետության չափորոշիչները արտահայտված են ԱՄՆ RAND «ուղեղային կենտրոնի» մշակած դրույթներում.¹

1. Բարոյագուրկ, ոչ հոգևոր մթնոլորտի և հակառակորդի մշակութային ժառանգության նկատմամբ բացասական վերաբերմունքի ստեղծում,

2. Քաղաքական լարվածության ու քառսի ստեղծման նպատակով երկրի բնակչության սոցիալական խմբերի քաղաքական կողմնորոշման և հասարակական գիտակցության մանիպուլյացիա,

3. Առճակատումների հրահրման, անվստահության, կասկածամտության սերմանման, քաղաքական պայքարի սրման նպատակով կուսակցությունների միջև քաղաքական հարաբերությունների ապակայունացում, ընդդիմության դեմ բռնությունների սադրում, փոխոչնչացման դրդում,

4. Իշխանության և կառավարման մարմինների լրատվական ապահովվածության մակարդակի իջեցում, կառավարման սխալ որոշումների ներշնչում,

5. Սոցիալական, քաղաքական, ազգային և կրոնական բախումների հրահրում,

6. Պետության միջազգային հեղինակազրկում, այլ երկրների հետևրա համագործակցության, քաղաքական, տնտեսական, պաշտպանական և այլ ոլորտներում պետության կենսականորեն կարևոր շահերի վնասում:²

Փաստորեն, ինֆորմացիոն հասարակության բերած տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաները միանշանակորեն ապահովում են դեռևս մոտ երեք հազար տարի առաջ Յան Յզիի կողմից մշակված սկզբունքների առավել հստակ, արագ, մշակված ու հաշվարկված կենսագործումը: Հաշվի առնելով ՀՀ ինչպես նաև ԼՂՀ ԱԱ հրամայականները, օրակարգային է տեղեկատվական անվտանգության, տեղեկատվական պատերազմների դերի արժևորումը, առավել ևս, որ Ադրբեյջանի կողմից արդեն երկար ժամանակ, փոխհատուցելու համար ռազմադաշտում կրած պարտությունը, հայ հասարակության վրա կիրառվում են վերոհիշյալ գործիքները, թե՛ սոցիալական ցանցերի տարածությունում և թե՛ արբանյակային հեռուստաալիքների միջոցով հոգեբանական ձեռնածության ենթարկելով հասարակության լայն շերտերի(այս փաստը մեկ անգամ ևս հաստատվեց 2016 թվականի ապրիլին Ադրբեյջանի կողմից սանձազերծված ռազմական գործողությունների ընթացքում): Ուստի առաջնային է նախ և առաջ վերանայել և արդիականացնել ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգության ռազմավարության հրամայականները՝ որպես ուղենիշ ունենալով տեղեկատվական հասարակության նոր գոյաբանությունը: Առաջարկում ենք իրականացնել հետևյալ գործնական քայլերը:

- Զարգացնել հայկական երկու պետականությունների տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը՝ նպաստելով կայացած համացանցային հանրույթի ձևավորմանը: Միայն պետական գերատեսչությունների կազմում գործող տեղեկատվական քարոզչության ստորաբաժանումների առկայությունը բավարար չէ համարժեք պատասխանելու համար ադրբեյջանական քարոզչամեքենայի կողմից կիրառվող գործիքակազմին, անհրաժեշտ է հասարակական լայն շերտերի ներգրավում այս գործընթացին, վերջինիս իրականացումը մեծապես պայմանավորված է տեղեկատվական հասարակության ձևավորմամբ:
- Բնակչության լայն շերտերի համար ապահովել համացանցային գործիքներից օգտվելու հնարավորություն. ԼՂՀ բնակչությունը առավել ընդգրկուն պատկերացում ունենալով ադրբեյջանական լեզվամտածողական

¹ Бедрицкий А., Информационная война: концепции и их реализация в США, М., 2008

² Ադրբեյջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, խավորխմբագիր Գագիկ չարությունյան, Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան 2009, էջ 12

առանձնահատկությունների մասին, ունի հսկայական ներուժ սոցիալական ցանցերի հարթակներում առավել համաչափ և հասցեական պատասխանելու Ադրբեյջանի հակահայ քարոզչությանը:

- Բարձրացնել համացանցային գրագիտության և հիգիենայի մակարդակը:
- Տեղեկատվական պատերազմը իրականացնել ոչ միայն պաշտպանողական, այլ նաև հարձակողական ռազմավարությունների շրջանակներում, համացանցային գործիքների միջոցով թիրախավորելով ԱՀ հասարակության լայն շերտերին՝ որպես ելակետ ունենալով ԱՄՆ RAND «ուղեղային կենտրոնի» մշակած դրույթները:

Օգտագործված գրականության ցանկ

- *Ադրբեյջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, խավոր խմբագիր Գազիկ Հարությունյան, Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան 2009*
- *Աթանեսյան Ա. Վ., Սպառնալիքներ ՀՀ տեղեկատվական անվտանգությանը. եռամսկարդակ վերլուծություն, 21-րդ ԴԱԸ, 2010, N6:*
- *Атанесян, А.В., Актуальные проблемы современных политических и кон- фликтных коммуникаций. Е.: Изд-во ЕГУ, 2008*
- *Бедрицкий А., Информационная война: концепции и их реализация в США, М., 2008.*
- *Крысько В.Г., Секреты психологической войны, Минск, 1999*
- *Экономическая и национальная безопасность /под ред. Е.А. Олейникова/. М., 2005.*
- *Логунов А. Б. Региональная и национальная безопасность: Учеб- ное пособие. 2-е изд. перераб. и доп.– М.: Вузовский учебник. ИНФРА-М, 2011*
- *Bell D. Notes on the Post industrial Society. The public Interest, 1967, no. 7*
- *Drucker, Peter F.. The Age of Discontinuity. Guidelines to Our Changing Society. New York:Harper, 1968*
- *«Glossary of Key Information Security Terms». Ed. by Richard Kissel. National Institute of Standards and Technology, May 2013*

Աղբյուր սղբյուրներ

Hilbert, M. (2015). Digital Technology and Social Change [Open Online Course at the University of California]

տեւ: <https://canvas.instructure.com/courses/949415/pages/1st-week-introduction-to-the-digital-age>

ՀՏՂ340(479.25)

ԲԱՐՈՑԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Նուշիկ Տեր-Մովսիսյան
Վանաձորի պետական համալսարան
Պատմաաշխարհագրական ֆակուլտետի
«Դրավագիտություն» բաժին 3-րդ կուրս
Գիտական ղեկավար պ.գ. թ. Արամայիս Կոխլիկյան

Բանալի բառեր՝ Բարոյական վնաս, իրավունք, օրենք, իրավակարգավորում, տուժող, փոխհատուցում, օրենսդրություն, պատասխանատվություն:

Ամփոփում

Սույն թեմայի շրջանակներում անդրադառնալու ենք.

1. ՀՀ-ի իրավական համակարգում բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտի ամրագրման նախապատմությանը:
2. Վնասի չափերի հաշվարկմանը:
3. Տարբեր երկրներում ինստիտուտի գործունեությանը:
4. Ոլորտում գործող օրենսդրական բացերին:

«ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ КОМПЕНСАЦИИ МОРАЛЬНОГО УЩЕРБА В РА»

Ключевые слова: моральный урон, право, закон, легализация, жертва, компенсация, законодательство, ответственность.

Резюме

В рамках этой темы мы рассмотрим:

1. Предыстория установления института компенсации морального ущерба в правовой системе РА.
2. Расчет размеров ущерба.
3. Деятельность Института в разных странах.
4. Законодательные пробелы в данной сфере.

"LEGAL REGULATION OF COMPENSATION FOR MORAL DAMAGE IN THE RA"

Keywords: moral damage, law, legalization, victim, compensation, legislation, responsibility.

Summary

In the framework of this topic, we will consider:

1. Background of establishment of the institution of compensation for moral damage in the RA legal system.
2. The spread of damage.
3. The Institute's activities in different countries.
4. Legislative gaps in this area.

ՀՀ Քաղ. օրենսգրքի 14-րդ հոդվածով քաղ. իրավունքների պաշտպանության եղանակների թվին է դասվում նաև ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ:

Համապատասխանաբար, 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է վնասների հասկացությունը.

«Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև **ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԸ**: Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն օրենքով նախատեսված դեպքերում»:

ՀՀ Քաղ. օրենսգրքի 162.1 հոդվածը սահմանում է Բարոյական կամ Ոչ նյութական վնասի հասկացությունը:

Ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

Քանի դեռ, արդեն իսկ վկայակոչված 17-րդ հոդվածի 2-րդ մասով Ոչ նյութական վնասը ամրագրված չէր վնասների շարքում, ՀՀ իրավակիրառ պրակտիկայում մի շարք դժվարություններ և խնդիրներ էին առաջանում: Համառոտ ներկայացնենք մի քանի աղմկահարույց դատական գործեր:

1. «Արարատ» ռազմավարագիտական կենտրոն հի-ի հայցն ընդդեմ «Կովկաս ինստիտուտ» հիմնադրամի, որով բարոյական վնասի հատուցման պահանջ էր ներկայացված՝ այն գնահատելով խորհրդանշական 1 դրամ:

Դատական ատյանները կարճեցին գործի վարույթը՝ պատճառաբանելով. «Բարոյական վնասը ՀՀ օրենսդրությունում չունի իր օրենսդրական կարգավորումը»:

2. Բարոյական վնասի պահանջի լավագույն օրինակներից մեկը շատերին հայտնի Արմեն Պողոսյանի գործն է:

Հիշեցնենք, որ Ա. Պողոսյանը մանկահասակ աղջկան բռնաբարելու մեղադրանքով դատապարտվել էր 15 տարվա ազատազրկման: Նրանից ցուցմունքները կորզել էին խոշտանգումների միջոցով եւ ապացուցված համարել մեղադրանքը: Սակայն մոտ 5,5 տարի անց հայտնաբերվել էր իրական հանցագործը, որից հետո 2004 թ. Ա. Պողոսյանի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվեց:

Արդարացնելուց հետո հանրապետության գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանը նրա կրած տառապանքները «փոխհատուցեց» «Կոմա Մոնտե Քրիստո»-ի հատորները նվիրելով: Արդարացման դատավճիռից հետո նա դատարանից պահանջեց փոխհատուցել իր կրած նյութական ու բարոյական վնասները: Դատարանը նյութական վնասը գնահատեց մոտ 6 մլն դրամ, որը նրա փաստաբանի ասելով՝ իր պաշտպանյալի կրած նյութական վնասի ողջամիտ գնահատում չէր: Բարոյական վնասի հատուցման պահանջը դատարանը մերժեց՝ Հայաստանում այդ ինստիտուտի բացակայության պատճառով:

3. Արդեն հասկանալի է, որ բարոյական վնասի ամրագրման բացակայությունը օրենսդրական բաց էր: Հիմա կոնկրետ խոսենք այն գործի մասին, որն այդ բացի լրացման «պատճառ» հանդիսացավ:

2013 թվականի նոյեմբերի 5-ին ՀՀ Սահմանադրական դատարանը դռնբաց նիստում քննեց «Քաղաքացի Արթուր Խաչատրյանի դիմումի հիման վրա ՀՀ Քաղ. Օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը: Դիմումի հիմքում ընկած էր հետևյալ պահանջը, որ 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվող վնասների հասկացության մեջ ավելանա նաև Ոչ նյութական կամ Բարոյական վնաս հասկացությունը:

Գործի համառոտ դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. 2010թ. Վարդան Խաչատրյանը «Վնասը փոխհատուցելու պահանջի մասին» հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, որով պահանջել է հատուցել իր կրած նյութական վնասը, այն է՝ իր ներկայացուցիչներին վճարած գումարը՝ իրեն դատական ատյաններում և ՀՀ սահմանադրական դատարանում ներկայացնելու համար, ինչպես նաև իր կրած ոչ նյութական (բարոյական) վնասը՝ այն հիմնավորմամբ, որ «Վարդան Խաչատրյանը բացի իրական վնասից, որ կրել է, այլ ապրումներ է ունեցել՝ սպասելով դատական կարգով իր գործի լուծմանը: Այդ անորոշությունը, որ տևել է ընդհանուր իրավասության դատարան դիմելուց մինչև Սահմանադրական դատարանի դատական ակտի կայացումը, իր նկատմամբ դատարանների կողմից ՀՀ Սահմանադրությանը հակասող օրենքի դրույթների կիրառումը, իր արդար դատաքննության իրավունքի խախտումը, հոգևոր տագնապ և անհանգստություն է պատճառել նրան: Վարդան Խաչատրյանը այդ հոգևոր տագնապը և անհանգստությունը չէր

կրի (հետևանք), եթե նրա իրավունքը չխախտվեր (պատճառ). Առկա է պատճառահետևանքային կապ:

Վարդան Խաչատրյանի մահից հետո Արթուր Խաչատրյանը ճանաչվել է Վարդան Խաչատրյանի իրավահաջորդ:

02.05.2012թ. վճռով հայցը բավարարել է մասնակի՝ վճռելով Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, հոգուտ Վարդան Խաչատրյանի իրավահաջորդ Արթուր Խաչատրյանի բռնագանձել է 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ՝ որպես Վարդան Խաչատրյանին պատճառված նյութական վնասի հատուցման գումար: Ոչ գույքային (բարոյական) վնասի հատուցման պահանջի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճել է այն պատճառաբանությամբ, որ «ի տարբերություն նյութական վնասի՝ բարոյական վնասը ՀՀ օրենսդրությունում չունի իր կարգավորումը, ուստի այս հիմքով վեճը ենթակա չէ դատարանում քննության»:

Գործը հասավ Սահմանադրական դատարան: Դիմումի հիմքում ընկած էր հետևյալ գաղախարար, որ, եթե չի սահմանվում ոչ նյութական կամ բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտը, դրանով խախտվում են մարդու ինչպես մի շարք սահմանադրական, այնպես էլ ՀՀ-ի կողմից վավերացրած միջազգային կոնվենցիաներով ամրագրված իրավունքներ:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը վկայակոչեց նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի», «Խաչատրյանն ու այլոք ընդդեմ Հայաստանի» գործերով վճիռները՝ նշելով, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ «վճռով փոխհատուցման հարցը լուծելիս պետք է հաշվի առնվի ինչպես գույքային վնասը, որը հայտարարված խախտման ուղղակի հետևանքն է, այնպես նաև բարոյական վնասը, այսինքն՝ տագնապի, անհանգստության և անվստահության վիճակը, որը վրա է հասել այդ խախտման արդյունքում»:

Վերը նշված հարցադրումների առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ համարեց արձանագրել, որ եթե ՀՀ Սահմ. 3-րդ հոդվածով «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է», ապա արժանապատվության առանցքային բաղադրատարրերից մեկը բարոյական տառապանքներից զերծ մնալն է:

Կամ, եթե Սահմ. 26-րդ հոդվածը սահմանում է, որ «Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի», Սահմ.դատարանը գտավ, որ վերջիններս պարզապես չեն կարող չուղեկցվել հոգեկան և բարոյական տառապանքների պատճառմամբ, որոնք կարող են նույնիսկ ավելին լինել, քան դրանց հետևանքով պատճառված հնարավոր ֆիզիկական (մարմնական) կամ նյութական վնասը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ անձի արժանապատվությանը, պատվին կամ գործարար համբավին պատճառված վնասի դրամական հատուցման կանոնակարգումները վերաբերում են հենց բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտին (նման ինստիտուտ նախատեսված է, մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության, Խորվաթիայի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Սլովենիայի, Իսպանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների օրենսդրությամբ):

Այսպիսով, Սահմ. դատարանը հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված են բարոյական վնասի նյութական փոխհատուցման բազմաթիվ դեպքեր, սակայն նշված ինստիտուտն ամբողջական կանոնակարգման դեռևս ենթարկված չէ (օրինակ 1087-րդ հոդվածը)

2. Ինստիտուտի բացակայությունը անմիջականորեն խախտում է մարդու սահմանադրական իրավունքները

3. Ինստիտուտի բացակայությունը անմիջականորեն խոչընդոտում է ՀՀ կողմից վավերացված միջազգային կոնվենցիաներով ձեռք բերված պարտավորությունների կատարմանը.(պարտավորություններ, որոնք առաջանում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (կից

արձանագրություններով) դրույթներից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայից):

ՈՐՈՇԵՑ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել հակասահմանադրական, համապատասխանաբար նաև անվավեր: (5 նոյեմբերի 2013 թվականի, ՄԴՈ-1121)

Հետագայում, 2014 թվականի հունիսի 5-ին հոդվածը խմբագրվեց և հոդվածում տեղ գտավ Ոչ նյութական կամ բարոյական վնաս հասկացությունը:

Բացի այս ամենը, եթե Հայկական ԽՍՀ 1964 թվականի քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածը նախատեսում էր բարոյական վնաս հասկացությունն ու դրա փոխհատուցումը, իսկ 1998 թ-ի քաղաքացիական օրենսգիրքը բարոյական վնասի փոխհատուցում չէր ամրագրում, երևույթը իրավունքի մի շարք տեսաբաններ արդարացիորեն որակում էին որպես «նահանջ կամ լուրջ հետընթաց ժամանակակից իրավագիտության շրջանակներում»:

Այսպիսով, 2014 թվականի ապրիլի 19-ին ընդունվեց ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ, և համապատասխանաբար օրենքում ավելացվեց.

Հոդված 162.1. Ոչ նյութական վնասի հասկացությունը եւ դրա հատուցումը.

2. Անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները.

1. կյանքի իրավունքը

2. խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը

3. անձնական ազատությանն անձեռնմխելիության իրավունքը

4. արդար դատաքնության իրավունքը

5. անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը

6. մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը

7. հավաքների և միավորման ազատության իրավունքը

8. իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը

9. սեփականության իրավունքը

3. Եթե դատապարտյալը արդարացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված կարգով, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում (հատուցում անարդարացի դատապարտման համար):

4. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասը հատուցվում է սույն օրենսգրքի 1087.1 հոդվածով, հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը՝ 1087.2 հոդվածով, իսկ խոշտանգման հետևանքով պատճառված վնասը 1087.3 հոդվածով:

5. Ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ նյութական վնասի փոխհատուցումը նոր է իր ամրագրումը ստացել, դեռևս հարուստ դատական պրակտիկա չունենք: Սակայն կան բարոյական վնասի փոխհատուցման պահանջով մի շարք գործեր, որոնք գտնվում են Հայաստանի տարբեր դատական ատյանների վարույթներում և տարիներ հետո արդեն

կունենանք ստույգ վիճակագրություն: Օրինակ, թիվ ԵԿԴ/3296/02/14 քաղաքացիական գործով կողմը Վերաքննիչ դատարանում մյուս պահանջներին կից ներկայացրել է 102.000.000 ՀՀ դրամի պահանջ՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում: Վերաքննիչ դատարանը այս մասով մերժել է հայցը, սակայն 2017 թվականին գործը ուղարկվել է Վճռաբեկ դատարան, որը բեկանել է Վերաքննիչ դատարանի որոշումն ու այս մասով գործը ուղարկել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության համար: (Ի տարբերություն անցյալի, երբ ՀՀ-ն ինստիտուտի բացակայության պատճառով ուղղակի մերժում էր հայցապահանջը և անձի միակ ելքը մնում էր Եվրոպական դատարանը): Որպեսզի կարողանանք խոսել բարոյական վնասի փոխհատուցման մասին, պետք է լինի այդ փոխհատուցման հիմքը. մասնավորապես՝ հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը

- բարոյական վնասի առկայություն,
 - վնաս պատճառողի արարքի հակաիրավական բնույթ,
 - հակաիրավական արարքի և բարոյական վնասի միջև պատճառական կապ.
- Բարոյական վնասի դրամական փոխհատուցման ինստիտուտի առանցքային հայեցակետերից է նաև վնասի փոխհատուցման չափի որոշման հիմնախնդիրը: Վնասի փոխհատուցման չափը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ հիմքերը. (*հաշվարկի տարբեր բանաձևեր գոյություն ունեն, ընտրել ենք դասական և շարք երկրներում կիրառելի տարբերակը)
- տուժողի տառապանքների բնույթ
 - տուժողի տառապանքների աստիճանը՝ կապված անձի անձնական առանձնահատկությունների հետ
 - վնաս պատճառողի մեղքի աստիճան
 - բանականության և արդարության պահանջներ
 - ուշադրության արժանի այլ հանգամանքներ
 - Վնասների հատուցման ինստիտուտի տրամաբանությունից է բխում որպես բարոյական վնասի դրամական փոխհատուցման չափի որոշման չափանիշներ հաշվի առնել նաև.
 - տուժողի մեղքի աստիճանը
 - վնաս պատճառողի գույքային դրությունը.

Կան երկրներ, որոնք բարոյական վնասի դրամական փոխհատուցման չափի հարցը կարգավորվում են սանդղակների (աղյուսակների) միջոցով: Օրինակ՝ մի շարք երկրներում վնասի փոխհատուցման չափերը հաշվարկվում են հետևյալ աղյուսակով.

1. Թեթև հոգեբանական խանգարման դեպքում նախատեսվում է մինչև 1.000 ֆունտ
2. Միջին ծանրության խանգարման դեպքում՝ 4.000 ֆունտ
3. Ծանր խանգարման դեպքում՝ 8.000 ֆունտ
4. Շատ ծանրի դեպքում մինչև 20.000 ֆունտ

Նախքան վերջնական վերլուծություն կատարելը, մի փոքր էլ անդրադառնանք տարբեր պետություններում ինստիտուտի գործունեության բնույթին:

Ոչ նյութական վնասի՝ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք լինելու ձևակերպումը գրեթե նույնությամբ արտացոլվում է աշխարհի մի շարք երկրների օրենսդրություններում, մասնավորապես թե՛ անգլո-սաքսոնական և թե՛ ռոմանո-գերմանական իրավական համակարգ ունեցող երկրներում:

Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Քաղ. օրենսգրքում բարոյական վնասի հասկացությունը սահմանելուց հետո, նշվում է, որ Բարոյական վնաս հանդիսացող ֆիզիկական տառապանքը չպետք է շփոթել ֆիզիկական վնասի հետ, քանի որ վերջինս նյութական և շոշափելի երևույթ է:

Մի շարք իրավագետներ, օրինակ Ալեքսանդր Էդելսկին, Անատոլի Բեյակովը իրենց տեսություններում նշում են, որ ֆիզիկական կամ հոգեկան տառապանքը անձին կարող է պատճառվել հենց այդ նույն ֆիզիկական կամ առողջական վնասի հետևանքով: Օրինակ՝ վերջույթների խեղման, զգայարանների կորստի արդյունքում մարդը կրում է ոչ միայն նյութական, այլ նաև բարոյական վնաս:

1) Անգլիայում, Ամն-ում (անգլո-սաքսոնական) բարոյական վնասի փոխհատուցման իրավակիրառ պրակտիկան բավական տարածված և զարգացած է, իսկ վնասի փոխհատուցման համար սահմանված չափերը խիստ մեծ են: Վերոնշյալ երկրներում բարոյական վնաս տերմինի փոխարեն գործածվում է «Հոգեբանական վնաս» տերմինը: Այս երկրներում բարոյական կամ ինչպես իրենք են օգտագործում՝ հոգեբանական վնասի փոխհատուցումը ունի նախադեպային բնույթ: Ընդ որում, որպեսզի վնասը համարվի պատճառված, այն պետք է հոգեկան խանգարման ախտանիշներ պարունակի, այլ ոչ թե լինի սովորական նյարդային շոկի, վախի, թախիծի, տխրության արդյունք:

2) Իսկ օրինակ Ֆրանսիայում, Գերմանիայում (ռոմանո-գերմանական) բարոյական վնասի փոխհատուցման չափերը համեմատաբար ավելի փոքր և սիմվոլիկ բնույթ են կրում: Ռոմանո-գերմանական երկրներում բարոյական վնասի փոխհատուցումը անվանում են «դրամական փոխհատուցում տառապանքի դիմաց», իսկ ֆիզիկական կամ հոգեկան տառապանքին շատ հաճախ անվանում են «վնաս զգացմունքներին»:

Այս դատարաններում էլ գործում է "minima non curat praeto-" «դատարանը հոգ չի տանում մանրությունների մասին» սկզբունքը, ըստ որի թեթև վնասները դատարանի քննությանը ենթակա չեն, համապատասխանաբար նաև փոխհատուցման չեն ենթարկվում: Ըստ վիճակագրության, այս երկրներում ավելի շատ ոտնձգություններ իրականացվում են անձնական անձեռնմխելիության և սեռական ազատության իրավունքների դեմ: Ընդ որում, երբ անձը վնասի փոխհատուցման պահանջ է ներկայացնում, պարտավոր չէ սահմանազատել, թե կոնկրետ ինչքան է պահանջում նյութական, և ինչքան բարոյական վնասի հատուցման համար:

Այս երկու իրավական համակարգերն էլ իրենց զգալի ազդեցությունն են ունեցել Ռուսաստանի Դաշնության, համապատասխանաբար նաև ՀՀ օրենսդրական համակարգերի վրա:

Այսպիսով, փորձենք ամփոփել բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտը: Արդեն հասկացանք, որ այս ինստիտուտը համարվում է քաղաքացիական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկը, որն իր արտահայտությունն է գտել բազմաթիվ զարգացած երկրների օրենսդրություններում: Այս ինստիտուտի կարևորությունը կայանում է նրանում, որ ***քաղաքակիրթ հասարակությունում պետք է պաշտպանված լինեն ոչ միայն նյութական բարիքները, այլ նաև քաղաքացու ներքին հավասարակշռվածությունը՝ հոգեկան կայունությունը և ֆիզիկական բնականոն վիճակը:***

Ընդ որում, Բարոյական վնասի դրամական փոխհատուցման անհրաժեշտության վերաբերյալ տեսության մեջ գոյություն ունեն հակասական մոտեցումներ: Գիտնականների մի խումբ նշում է, որ բարոյական վնասը զուրկ է տնտեսական բովանդակությունից, փոխհատուցումը պետք է համասեռ լինի փոխհատուցվող վնասին: Քանի որ կյանքի, առողջության կամ այլ ոչ գույքային իրավունքների խախտումը չունի գույքային բովանդակություն, հետևաբար այն չի կարող փոխհատուցվել դրամական ճանապարհով:

Մյուս տեսակետի կողմնակիցները նշում են, որ թեպետ, օրինակ, հարազատի կորուստը հնարավոր չէ փոխհատուցել փողով, սակայն բարոյական վնասի դրամական փոխհատուցումը հնարավորություն է տալիս մեղմացնելու տուժողի տառապանքները: Բարոյական վնասի հատուցումը հնարավորություն է տալիս ինչ-որ չափով հարթել իրավախախտման անշահավետ հետևանքները, բարերար ազդեցություն է ունենում տուժողի հոգեկան վիճակի վրա:

Խոսքի նախաբանում էլ նշվեց, թե որքան մեծ ջանքերի գնով ՀՀ-ի իրավական համակարգում ամրագրվեց բարոյական վնասի հասկացությունը: Ամրագրողների կարծիքով, հասկացությունը սահմանելով միաժամանակ ձևավորվում է ամբողջ բարոյական համակարգի փոխհատուցման ինստիտուտը, իսկ ինստիտուտը, ինչպես գիտենք, տվյալ կոնկրետ ոլորտը կարգավորող իրավանորմերի ամբողջությունն է:

ՀՀ իրավական համակարգի, մասնավորապես քաղաքացիական իրավունքի համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ չնայած ՀՀ-ն մի քանի տարի առաջվա

համեմատությամբ բավական մեծ առաջընթաց է արձանագրել բարոյական վնասին և դրա փոխհատուցման երևույթին իրավական ամրագրում տալով, այնուամենայնիվ, դեռևս խիստ վաղ է բարոյական վնասի փոխհատուցման ամբողջական ինստիտուտի առկայության մասին խոսելը:

Ամբողջական ինստիտուտի բացակայության մասին է վկայում օրինակ այն հանգամանքը, որ 162-րդ հոդվածով սահմանվում են այն բոլոր իրավունքների ցանկը, որոնց դեմ ոտնձգելու պարագայում կառաջանա բարոյական վնասի փոխհատուցման պահանջի հնարավորություն, սակայն այդ իրավունքներից ընդամենը մի քանիսի դեմ ոտնձգելու դեպքերն են կարգավորվում: (Օրինակ 1087 հոդվածի պրիմ 1, 2, 3, մասերը կոնկրետ սահմանում են պատվի, արժանապատվության, գործարար համբավի դեմ կատարված իրավախախտումների, անարդարացի դատապարտման և խոշտանգման հետևանքով պատճառված բարոյական վնասի փոխհատուցման կարգը:)

Մնացած իրավունքների դեպքում կոնկրետ իրավակարգավորում չի տրվում:

Բաց է խնդիրը նաև փոխհատուցման չափերի առումով:

Այս բոլոր օրենսդրական բացերն էլ բնականաբար իրենց անբարենպաստ ազդեցությունն են թողնում դատական պրակտիկայի վրա:

Այնուամենայնիվ բարոյական վնասի հասկացության ամրագրումը համարենք ինստիտուտի ձևավորմանն ուղղված մեծ քայլ, հուսանք որ ժամանակի ընթացքում կլրացվեն իրավունքի իրացմանը խոչընդոտող բոլոր բացերը, կպակասեն Եվրոպական դատարան ներկայացվող գործերը և Հայաստանը իր բոլոր ինստիտուտներով և իրավակարգավորումներով հանդերձ կդառնա իմ և քո երագած Իրավական պետությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն (ընդունված՝ 05.07.1995, փոփոխությունները՝ 06.12.2015-ի)
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունված՝ 05.05.1998)
3. Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգիրք.
4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: (Դասագիրք իրավաբանական բուհերի համար / Հեղ., խմբ.՝ Տ.Կ. Բարսեղյան, Գ.Հ. Ղարախանյան; Հեղ.՝ Գ.Հ. Բեքմեզյան, Ա.Ա. Հովհաննիսյան, Ա.Մ. Հայկյան; ԵՊՀ, Քաղաքացիական իրավունքի ամբիոն.)
5. ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներ
6. ՀՀ Փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնի խորհրդի որոշումներ
7. "Компенсация морального вреда"- (анализ и комментарий законодательства и судебной практики) - А.М Эрделевский
8. Гражданское право. Учебник. Том 2. (1997)
9. Ռուսաստանի Դաշնության արբիտրաժային դատարանի որոշումներ
10. arlis.am, iravaban.net

ՀՏԴ94(327)

МЕЖДУНАРОДНЫЙ ТЕРРОРИЗМ

Анаит Манвелян
Российско – Армянский Университет

Բանալի բառեր՝ միջազգային ահաբեկչություն, զենք, տեղեկատվական ահաբեկչություն, պատերազմ, ռազմական գործողություններ, ահաբեկչական գործողություններ
Ключевые слова: международный терроризм, оружие, информационный терроризм, война, военные действия, террористический акт.

Keywords: international terrorism, weapons, information terrorism, war, military actions, terrorist act.

Резюме

В современных реалиях терроризм трансформировался в сложное социально-политическое и правовое явление, приобретшее повсеместный и транснациональный характер. Будучи доступным и эффективным способом достижения самых различных целей, он имеет тенденцию ко все более широкому распространению, тем более при процессе глобализации и высоком профессионализме лиц, занимающихся такой деятельностью.

Հայ – Ռուսական Համալսարան
Անահիտ Մանվելյան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

Ամփոփում

Ժամանակակից իրողություններում ահաբեկչությունը վերափոխվել է բարդ սոցիալ-քաղաքական և իրավական երևույթի, որը դարձել է համընդհանուր և անդրազգային: Լինելով մատչելի եւ արդյունավետ միջոց, լայն նպատակներ հասնելու համար այն ձգտում է ավելի տարածվել հատկապես գլոբալիզացման գործընթացում և նման գործունեությամբ զբաղվող անձանց բարձր պրոֆեսիոնալիզում:

Russian-Armenian University
Anahit Manvelyan

INTERNATIONAL TERRORISM

Summary

In modern realities, terrorism has been transformed into a complex socio-political and legal phenomenon that has become ubiquitous and transnational in nature. Being an accessible and effective way to achieve a variety of goals, it tends to spread more and more, especially with the process of globalization and the high professionalism of individuals engaged in such activities.

В современных реалиях терроризм трансформировался в сложное социально-политическое и правовое явление, приобретшее повсеместный и транснациональный характер. Будучи доступным и эффективным способом достижения самых различных целей, он имеет тенденцию ко все более широкому распространению, тем более при процессе глобализации и высоком профессионализме лиц, занимающихся такой деятельностью. Политические экстремисты по всему миру совершают атаки в местах массового скопления людей, закладывают разного рода взрывные устройства в общественных местах, совершают угоны воздушного и водного транспорта, держа в страхе сотни находящихся в них пассажиров, похищают политических деятелей, должностных лиц, дипломатов и т.д. Формируется множество террористических организаций, имеющих новейшее оружие, наблюдается рост технической оснащенности террористов и даже негласная поддержка таких преступных организаций со стороны некоторых государств. Особо важную роль играет так называемый “информационный терроризм”, ибо информация в современном мире предстает мощнейшим

“оружием”, способным привести к тотальной дестабилизации стабильности в мире. На данном моменте можно говорить о терроризме как о новом элементе международных отношений.

Что же подразумевается под термином “терроризм”? Понятие не имеет точного и широко применимого определения и обычно имеет пейоративную окраску. В настоящее время насчитывается более ста определений терроризма, практически в каждом из которых необходимо указывается элемент насилия, обычно направленного на гражданские объекты, с приданием данным актам максимальной огласки, а также экстремистская террористическая идеология, наличие определенных требований, комплекса организационных структур для осуществления терроризма в различных его формах и т.д. Но о едином устойчивом определении понятия “терроризм” можно говорить лишь условно, имея в виду собирательное определение, объединяющее в себе признаки, присущие ряду преступлений, которые мировое сообщество относит к таковым посредством международных договоров. В ряде существующих международных конвенций под терроризмом, как правило, понимается весь комплекс деяний, запрещенных соответствующими договорами антитеррористической направленности.

Международный терроризм представляет собой вид террористической деятельности, совершаемой в нарушение общепринятых правил и процедур международной дипломатии и ведения войн. Именно поэтому международный терроризм все чаще называют новым видом ведения войны, без определения конкретной территории, на которой будут вестись “военные действия”, так как такого рода деятельность может одновременно осуществляться в различных точках мира, и без армии в классическом ее понимании. Также нужно иметь в виду, что терроризм является не самоцелью, а всего лишь средством достижения определенных целей путем создания атмосферы страха и тревоги в обществе и путем привлечения всеобщего внимания к создавшейся ситуации посредством СМИ.

Являясь одной из наиболее глобальных угроз международной безопасности и фактором, серьезно дестабилизирующим нормальное развитие международных отношений, деяния террористического характера и содержания требуют от мирового сообщества выработки эффективных способов борьбы с терроризмом в целом как явлением правовым, политическим и социальным. В связи с этим достигнут ощутимый прогресс в международном конвенционном праве антитеррористической направленности, деяния такого характера получили специальную криминализацию на национальном уровне в уголовном законодательстве большинства стран мира, было создано множество специальных национальных и международных координационных органов и структур, деятельность которых направлена на профилактику, предупреждение и противодействие терроризму.

Таким образом, на данном этапе можно уже говорить о самостоятельной отрасли международного права - антитеррористическом праве как совокупности норм национального и международного права, направленных на предупреждение, пресечение и борьбу с терроризмом и лежащих в основе создания и деятельности национальных международных контртеррористических систем, обеспечивающих неизбежность ответственности субъектов терроризма и террористического акта.

Проектом Кодекса преступлений против мира и безопасности человечества, принятого в результате работы Комиссии международного права ООН в Нью-Йорке в 1982 г., или поощрение властями какого-либо государства террористической деятельности в другом государстве или допущение властями какого-либо государства организованной деятельности, рассчитанной на совершение террористических актов в другом государстве, а равно заговор, направленный на совершение таковых, подстрекательство к их совершению, соучастие в таких деяниях и покушение на них, а уже редакцией Кодекса 1991 года был непосредственно предусмотрен международный терроризм как международное преступление.

В современных условиях мы сталкиваемся с различными видами терроризма (индивидуальный и коллективный, государственный и международный, националистический, религиозный, социальный, бомбовый, ядерный, информационный, технологический, кибертерроризм и др.), каждый из которых обладает определенными, присущими только им особенностями. Разница дефиниций создает препятствия для международного сотрудничества в сфере уголовного судопроизводства по уголовным делам о терроризме. Преодолеть эти трудности возможно в результате выработки единого общепризнанного определения понятия “международный терроризм” и придания ему юридически обязательной силы

международным договором универсального характера. Многие ученые-правоведы также указывают необходимость криминализации международного терроризма в национальном уголовном законодательстве отдельных государств.

Начиная с 1960-х гг. и по настоящее время под эгидой ООН и ее специализированных учреждений были разработаны, приняты и вступили в силу 13 универсальных международных договоров антитеррористической направленности, предусматривающих возможность участия в них любого государства-члена ООН:

1. Конвенция о преступлениях и некоторых других актах, совершаемых на борту воздушных судов;
2. Конвенция о борьбе с незаконным захватом воздушных судов;
3. Конвенция о борьбе с незаконными актами, направленными против безопасности гражданской авиации;
4. Конвенция о предотвращении и наказании преступлений
5. против лиц, пользующихся международной защитой, в том числе дипломатических агентов;
6. Международная конвенция о борьбе с захватом заложников;
7. Конвенция о физической защите ядерного материала;
8. Протокол о борьбе с незаконными актами насилия в аэропортах, обслуживающих международную гражданскую авиацию;
9. Конвенция о борьбе с незаконными актами, направленными против безопасности морского судоходства;
10. Протокол о борьбе с незаконными актами, направленными против безопасности стационарных платформ, расположенных на континентальном шельфе;
11. Конвенция о маркировке пластических взрывчатых веществ в целях их обнаружения;
12. Международная конвенция о борьбе с бомбовым терроризмом;
13. Международная конвенция о борьбе с финансированием терроризма;
14. Международная конвенция о борьбе с актами ядерного терроризма.

Среди стандартов ООН в области борьбы с терроризмом внедоговорного происхождения особо следует выделить ряд актов, принятых Генеральной Ассамблеей ООН, в том числе Декларация о мерах по ликвидации международного терроризма, Декларация, дополняющая Декларацию о мерах по ликвидации международного терроризма, Итоговый документ Всемирного саммита 2005 г., а также Глобальная контртеррористическая стратегия Организации Объединенных Наций.

Основная задача всех международных документов антитеррористической направленности заключается в оказании государствами друг другу взаимопомощи уголовно-процессуальными действиями в случае, например, коллизии национального законодательства различных государств, так как основная ответственность за борьбу с этими преступлениями лежит на самих государствах, которые принимают меры по их пресечению и предупреждению на национальном уровне и в пределах своей юрисдикции. А установление международных стандартов способствует унификации подходов государств к борьбе с преступностью, делая ее системной, скоординированной в универсальном масштабе, упрощая для государств разработку международных соглашений в области противодействия преступности.

Огромный вклад в развитие международных норм антитеррористического содержания внесла Организация Объединенных Наций. В соответствии с резолюцией Совета Безопасности 1373 (2001) был учрежден Контртеррористический комитет в составе всех членов Совета. Одновременно резолюция обязывает государства-члены ООН к принятию целого ряда мер по предотвращению террористической деятельности и объявлению противозаконными различных форм террористической деятельности, а также сотрудничеству, особенно в рамках двусторонних и многосторонних механизмов и соглашений, в целях предотвращения и пресечения террористических нападений. Также предусматривается обязанность государств-членов ООН регулярно представлять отчеты Контртеррористическому комитету о принятых ими мерах по выполнению данной резолюции.

Резолюция Совета Безопасности 1624 (2005) осудила любые террористические акты независимо от их мотивов и побуждений, призвала государства-члены ООН юридически запретить террористические акты и подстрекательство к их совершению, а также отказывать в убежище виновным в совершении таких преступлений.

В 1987 г. Генеральная Ассамблея приняла резолюцию 42/159, в которой содержались конкретные предложения-рекомендации по борьбе с международным терроризмом:

- предотвращать на своих территориях подготовительную и организационную деятельность, имеющую цель совершения на территориях или за их пределами террористических и подрывных актов, направленных против других государств и их граждан;
- стремиться к заключению специальных соглашений в этой области на двусторонней, региональной и международной основе;
- сотрудничать друг с другом в обмене соответствующей информацией относительно предотвращения терроризма и борьбы с ним;
- государствам привести свое внутреннее законодательство в соответствие с существующими международными конвенциями по этому вопросу, участниками которых они являются.

Таким образом, для эффективности деятельности международного сообщества по борьбе с международным терроризмом от каждого его члена требуется активизировать борьбу против международной преступности путем соблюдения и укрепления правопорядка и законности в международных отношениях и с этой целью дополнить и далее развивать международное уголовное право в полном объеме обязательств, вытекающих из международных договоров в этой области, и пересматривать свое национальное законодательство с тем, чтобы обеспечивать его соответствие требованиям международного уголовного права. Важное значение приобретает деятельность, осуществляемая в рамках ООН и направленная на разработку проекта всеобъемлющей конвенции по международному терроризму, в которой, как предполагается, будет содержаться столь необходимое для повышения эффективности практического противодействия терроризму определение последнего.

ՀՏԴ94(479)

ԵՄ-Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Անուշ Միրզոյան

ԱրՊՀ, Պատմության և իրավագիտության

Ֆակուլտետ, 4-րդ կուրս

Էլ. հասցե՝ mirzoyananushik64@gmail.com

Բանալի բառեր՝ ռազմավարական շահեր, Եվրոպական Միություն, համագործակցություն, էներգետիկայի մատակարար, էներգետիկ շահեր, հակամարտություն:

Ключевые слова: стратегические интересы; ЕС; сотрудничество; поставщик энергетических ресурсов; энергетические интересы; конфликт.

Key words: strategic interests, the European Union, cooperation, energy supply, energy interests, conflict.

Ամփոփում

Հարավային Կովկասը եզակի տարածաշրջան է այն իմաստով, որ այստեղ Եվրոպական նոր քաղաքականության արժեքային մոտեցումները և հումանիտար իդեալներն ամենաինքնատիպ ձևով միահյուսվում են ինչպես աշխարհաքաղաքականության և աշխարհատնտեսության պրագմատիկ նկատառումներին, այնպես էլ Ռուսաստանի և իսլամական աշխարհի հետ Եվրոպայի փոխհարաբերությունների կարծրատիպերին: Սա հատկապես դրսևորվում է նաև նրանում, որ հարավկովկասյան տարածաշրջանային էնոքաղաքական հակամարտությունների կարգավորման գործում Եվրամիության դերն աճում է: Ինչպես և աճում է ԵՄ-ի հետաքրքրությունը այս տարածաշրջանի նկատմամբ՝ հաշվի առնելով վերջինիս էներգետիկ մատակարար լինելու հնարավորությունը:

Ануш Мирзоян

АрГУ, Факультет истории и права, 4-ый курс,

Эл. Адрес: mirzoyananushik64@gmail.com

СТРАТЕГИЧЕСКИЕ ИНТЕРЕСЫ ЕС НА ЮЖНОМ КАВКАЗЕ

Резюме

Южный Кавказ является уникальным регионом в том смысле, что ценности и гуманистические идеалы новой европейской политики переплетаются с прагматическими взглядами на геополитику и геоэкономику, а также стереотипами отношений Европы с Россией и исламским миром. Это особенно заметно в роли Европейского Союза в урегулировании региональных этнополитических конфликтов на Южном Кавказе. Поскольку ЕС все больше интересуется этим регионом, учитывая его возможность быть потенциальным поставщиком энергии.

Anush Mirzoyan

Artsakh State University, Faculty of History and Law, 4th year

Email: mirzoyananushik64@gmail.com

EU'S STRATEGIC INTERESTS IN SOUTH CAUCASUS

Summary

The South Caucasus is a unique region in the sense that the values and humanistic ideals of the new European policy here are intertwined with the pragmatic views of geopolitics and geo-economics, as well as the stereotypes of Europe's relationship with Russia and the Islamic world. This is particularly evident in the role of the European Union in the settlement of the South Caucasus regional ethno-political conflicts. As the EU is increasingly interested in this region, considering its potential energy supplier.

Եվրոպական միությունը (ԵՄ) համաշխարհային քաղաքականության առանցքային դերակատարներից մեկն է, որը ներկայումս միավորում է 28 եվրոպական պետություններ և

ընդգրկում է Ատլանտյան օվկիանոսից մինչև Մև ծով ընկած տարածքը: Այն իր նյութական, տնտեսական, քաղաքական, քաղաքակրթական, հոգևոր, մշակութային, մարդկային, գիտական ներուժով (ավելի քան կես միլիարդ մարդ, աշխարհի համախառն ներքին արդյունքի 30%) մեծ դեր ունի ժամանակակից աշխարհում կայունության, խաղաղության ապահովման համընդհանուր գործում: Եվրոպական Միությունը Եվրոպական ժողովրդավարական պետությունների ընտանիք է, որոնք պարտավորվել են պայքարել միասին հանուն խաղաղության և բարգավաճման: Երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորված ԵՄ-ն խորհրդանշում էր երկու համաշխարհային պատերազմների թատերաբեմ դարձած Եվրոպայի վերածնունդը, որը գործընկերության հարթակ է՝ հիմնված համընդհանուր արժեքների վրա. մարդու իրավունքներ, ժողովրդավարություն, օրենքի գերակայություն, ազատ շուկայական հարաբերությունների ձևավորում և այլն: Բնագրման գործընթացի նախնական փուլում բանակցություններին ներգրավված էին Արևմտյան Եվրոպայի միայն վեց պետություններ, որոնք համաձայնության եկան համատեղ գործողություններ ձեռնարկել հիմնականում տնտեսության և առևտրի ոլորտներում:

Ի սկզբանե ԵՄ-ն հիմնված է եղել մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարական ինստիտուտների, օրենքի և իրավունքի գերակայության վրա: Այս արժեքները սահմանված են <<Հիմնարար իրավունքների Եվրոպական Խարտիայում>>, որը մեկ միասնական փաստաթղթում միավորում է բոլոր անձնական, քաղաքացիական, քաղաքական, տնտեսական և սոցիալական իրավունքները, որոնցից օգտվում են ԵՄ քաղաքացիները:¹ ԵՄ-ի դերակատարությունը մեծացավ 1980-1990-ական թվականներին՝ «սոցիալիստական ճամբարի», այնուհետև ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: ԽՍՀՄ նախկին, այդ թվում՝ հարավկովկասյան հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեյջանի արտաքին քաղաքականության օրակարգում առանցքային տեղ գրավեց Եվրոպական ուղղությունը՝ պայմանավորված աշխարհամասի երկրների, ինչպես նաև տարածաշրջանային կառույցների հետ երկկողմանի հարաբերությունների հաստատման և խորացման, սերտ և բազմակողմ համագործակցություն հաստատելու անհրաժեշտությամբ:

Խորհրդային Միության կազմալուծումը հանգեցրեց երկբևեռ համակարգի փլուզմանը, որից հետո Հարավային Կովկասում նկատվեց աշխարհաքաղաքական իրավիճակի արմատական փոփոխություն, դրա հետևանքով՝ նոր ազդեցիկ դերակատարների ներգրավվածություն, ինչպես նաև՝ այդ դերակատարների և հարավկովկասյան երկրների միջև նոր հարաբերությունների ձևավորում: Այդուհանդերձ, ԽՍՀՄ փլուզումից հետո էլ՝ տասնամյակներ շարունակ Հարավային Կովկասը կարևոր տեղ չէր զբաղեցնում ԵՄ-ի քաղաքական շահերի շրջանակում: Հարավային Կովկասի ակնհայտ անտեսումը կարելի է կապել տարածաշրջանի հեռավոր աշխարհագրական դիրքի հետ: Ինչպես անվտանգության, այնպես էլ հարևանության ծրագրերում մինչ ԵՄ-ի վերջին ընդլայնումները տարածաշրջանը չէր դիտարկվում որպես Եվրոպայի մաս, այլ որպես Եվրոպական նախաձեռնությունների աշխարհագրական շրջանակներից դուրս գտնվող տարածաշրջան:² Միաժամանակ, ԵՄ-ի ներսում ներքին ինստիտուցիոնալ էական բարեփոխումները և տնտեսական դժվարությունները՝ կապված Մասթրիխտի դաշնագրի հետ, ինչպես նաև Եվրոպական ընդհանուր արտաքին և անվտանգության հստակ քաղաքականության բացակայությունը զգալիորեն խոչընդոտում էին տարածաշրջանում ԵՄ-ի ավելի ակտիվ քաղաքականության իրականացմանը: ³ Մինչև 1999 թվականը, երբ սահմանվեց Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության հարցերով ԵՄ բարձրագույն ներկայացուցչի

¹ <<Եվրոպան այսօր>> տեղեկատվական պարբերական (հանդես 1)

² Lynch D., The EU: Toward A Strategy, The South Caucasus: A Challenge for the EU, Chaillot Paper no. 65, EU Institute for Security Studies (Ed. by D. Lynch), Paris, 2003, pp. 171-192.

³ Sierra O., Life is a dream: EU governance in the Southern Caucasus, Dynamiques internationales. Numero 6, Fevrier 2012, available at <http://dynamiquesinternationales.com/wp-content/uploads/2012/02/D16-Sierra11.pdf>

պաշտոնը, ԵՄ-ը չունի արտաքին քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ կապակցված ինստիտուտներ :¹ Այդ ժամանակաշրջանում հարավկովկասյան երկրների հետ ԵՄ-ի քաղաքական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտում էին նաև ԵՄ-ի՝ «նախ՝ Ռուսաստանը» ռազմավարությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հետխորհրդային տարածքում արտաքին քաղաքականության ձևավորման ժամանակ Մոսկվան շարունակում էր լինել արտոնյալ գործընկեր եվրոպական առաջնորդների համար:² Տարածաշրջանում ԵՄ-ի ներգրավվածությանը խոչընդոտող արտաքին գործոնների շարքում հարկ է նաև նշել Բալկաններում առկա հակամարտությունների, ինչպես նաև լուրջ ճգնաժամերի կարգավորման գործում անդամ երկրների արագ և միասնաբար արձագանքելու վերաբերյալ համաձայնության բացակայությունը :³ Այդուհանդերձ, 2003 թվականից սկսած Հարավային Կովկասը հայտնվեց ԵՄ-ի ուշադրության կենտրոնում: ԵՄ քաղաքականության մեջ արձանագրված փոփոխությունը՝ սեփական շահերի հստակեցում, տարածաշրջանի ռազմավարության մշակում, մեկնաբանվում է ԵՄ արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած զգալի փոփոխությամբ (ինչը նախկինում պայմանավորվում էր ԵՄ-ին անդամակցելու/չանդամակցելու սխեմայով) և աշխարհում, մասնավորապես՝ Հարավային Կովկասում, ավելի ակտիվ քաղաքական դերակատարություն ունենալու նկրտումներով :Այլ տեսության համաձայն՝ Հարավային Կովկասի նկատմամբ ԵՄ-ի դիրքորոշման փոփոխությունը կապված էր նաև համաշխարհային զարգացումներում Կովկասի աճող աշխարհաքաղաքական կարևորության հետ: Դրան հաջորդեցին արևելյան ուղղությամբ ԵՄ-ի ընդլայնումը, ինչպես նաև Կովկասում ԵՄ-ի փոխկապակցված հետաքրքրությունների ի հայտ գալը կառավարման, էներգետիկայի և անվտանգության ոլորտներում :

Ինչպես նշվեց, Հարավային Կովկասի տարածաշրջանը աստիճանաբար հայտնվեց ԵՄ հետաքրքրությունների շրջանակում,որի հիմնական պատճառներից կարելի է համարել Հարավային Կովկասի դիտարկումը որպես էներգառեսուրսների մատակարարի ու տարանցիկ երթուղու, և այդ տարածաշրջանում նախատեսվող էներգետիկ ռազմավարությունը: 2014 թվականի մայիսին Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակվեց՝ «Էներգետիկ անվտանգության ռազմավարություն» անունը կրող փաստաթուղթը՝ արդի հիմնախնդիրներին և երկարաժամկետ էներգետիկ անվտանգության մարտահրավերներին դիմակայելու, ինչպես նաև կայուն ու մեծածավալ էներգապաշարների մատակարարում ապահովելու համար: Այնուհետև, 2015 թվականի փետրվարին Հանձնաժողովը մշակեց Եվրոպական միության նոր էներգետիկ ռազմավարություն, որը նպատակ էր հետապնդում Եվրոպական սպառողների համար ապահովել «անվտանգ, կայուն, մրցունակ և մատչելի էներգիայի» մատակարարում և ձևավորել ԵՄ անդամ պետությունների միասնական մոտեցում արտաքին էներգետիկ քաղաքականության խնդիրների վերաբերյալ:⁴ Հիմնական նպատակներն էին ԵՄ-ի ներսում էներգետիկ արտադրության արդիականացումն ու ընդլայնումը, կոնկրետ հանածո վառելիքներից, էներգապաշարների մատակարարներից և երթուղիներից ԵՄ-ի կախվածության նվազեցումը՝ մատակարար երկրների ու երթուղիների բազմազանեցման ճանապարհով: Նոր ռազմավարության մեջ ընդգծվում էր նաև զգալի կշիռ ունեցող արտադրող և տարանցիկ

¹ Popescu N., ENP and EaP: relevant for the South Caucasus? South Caucasus –20 Years of Independence. Friedrich-Ebert-Stiftung,, pp. 316-335.

² Simão L., EU-South Caucasus Relations: Do Good Governance and Security Go Together?, Political Perspective, 5 (2), 2011, 33-57.

³ Cornell S. and Starr F., The Caucasus: A challenge for Europe. Central AsiaCaucasus Institute. Silk Road Program, 2006, p. 11.

⁴ Energy Union Package. Communication from the Commission to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee, the Committee of the Regions and the European Investment Bank. Brussels, 25.2.2015 COM(2015)

երկրների ու տարածաշրջանների հետ նոր էներգետիկ փոխհարաբերությունների և ռազմավարական համագործակցությունների հաստատման անհրաժեշտությունը: Ըստ Եվրոպական հանձնաժողովի, «Գազի մատակարարման երթուղիների բազմազանեցումն ապահովելու համար անհրաժեշտ է ակտիվացնել «Հարավային գազային միջանցքի» կառուցման ուղղությամբ կատարվող աշխատանքները: Դա Կենտրոնական Ասիայի երկրներին հնարավորություն կտա իրենց գազն արտահանել Եվրոպա»:¹ Այդ տեսանկյունից ԵՄ-ի Նոր էներգետիկ ռազմավարությունն էապես մեծացնում է Հարավային Կովկասի՝ որպես կասպիական էներգառեսուրսների տեղափոխման միջանցքի, կարևորությունը, և, մասնավորապես, Ադրբեյջանի՝ որպես տարածաշրջանում էներգետիկ պաշարների հիմնական արտադրողի և առանցքային մասնակցի, դերը մի շարք ընթացիկ ծրագրերում: Դրանք հիմնականում ուղղված են Եվրոպան իր արևելյան հարևանների հետ կապող գազատարների կառուցմանը, մասնավորապես՝ «Հարավային գազային միջանցք» ծրագրի շրջանակներում:

«Հարավային գազային միջանցքի» նշանակությունը Հարավային Կովկասի համար: Հարավային Կովկասը որպես էներգառեսուրսների մատակարարի և տարանցիկ երթուղի դիտարկելը հին հայեցակարգ է: Տարածաշրջանը ներառվել է արևմտյան էներգետիկ հետաքրքրությունների շրջանակներում սկսած 1883 թվականից, երբ Ռոթշիլդ ընտանիքի հովանավորությամբ կառուցվեց Բաքու-Փոթի երկաթգիծը՝ կասպիական նավթը միջազգային շուկա արտահանելու համար: ¹ Խորհրդային ժամանակաշրջանում Արևմուտքը չունեւ տարածաշրջանում գործելու հնարավորություն: ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասի նկատմամբ մեծացավ տարածաշրջանային և արտատարածաշրջանային դերակատարների ուշադրությունը ջրային և էներգետիկ հասանելի ռեսուրսների առկայության և տարանցիկ երթուղի դառնալու ներուժի շնորհիվ: 1990-ական թվականների կեսերին Բրյուսելը նախաձեռնեց «Տասիս»-ի (Տեխնիկական աջակցություն Անկախ պետությունների համագործակցությանը) հիմնական բաղկացուցիչ հանդիսացող «ՏՐԱՍԵԿԱ» և «ԻՆՈԳԵՅԺ» (Եվրոպա միջպետական նավթի և գազի տեղափոխում) փոխադրման միջանցքի (Եվրոպա-Կովկաս-Ասիա) ծրագրերը: Նպատակն էր «ավանդական կենտրոնացված առևտրի և տեղափոխման հոսքերի բազմազանեցումը, դեպի արևմտյան երկրներ նոր (այլընտրանքային) առևտրային երթուղիների բացումը», ² ինչպես նաև աջակցությունը շահագրգիռ երկրների էներգետիկ ենթակառուցվածքի զարգացմանը: Ունենալով տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրավիճակը փոխելու և Եվրոպական էներգետիկ անվտանգության շահերն ապահովելու զգալի ներուժ, երկու նախագծերն էլ նախատեսված էին հիմնականում տեխնիկական աջակցություն տրամադրելու համար, ինչը զգալիորեն նվազեցրեց դրանց ազդեցությունը: Միայն 1994 թվականին ադրբեյջական կառավարության և նավթային ընկերությունների միջազգային կոնսորցիումի միջև առաջին միջազգային նավթային համաձայնագրի ստորագրումից և ԱՄՆ-ի վերահսկողության ներքո երկու խոշոր փոխադրման նախագծերի՝ «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նավթամուղի և «Բաքու-Թբիլիսի-Էրզրում» գազամուղի, իրականացումից հետո Եվրոպան սկսեց Հարավային Կովկասը դիտարկել որպես կասպյան ավազանի էներգառեսուրսների տեղափոխման իրատեսական էներգետիկ միջանցք՝ որը կշրջանցի ոչ միայն Ռուսաստանը, այլև Իրանը: «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նավթամուղի և հարավկովկասյան խողովակաշարերի կառուցումը կարևոր հիմնասյուն է Եվրոպական էներգետիկ անվտանգության համար՝ նպաստելով մատակարարման երթուղիների բազմազանեցմանը և, միաժամանակ, ԵՄ-ի հարաբերությունների ամրապնդմանը էներգետիկ անվտանգության ոլորտում նոր գործընկեր

¹ Wisniewski J., EU Energy Diversification Policy and the Case of South Caucasus, Political Perspectives, 5 (2), 2011, 58-79.

² «ՏՐԱՍԵԿԱ» ծրագրի պաշտոնական կայքէջ, մատչելի է <http://www.tracecaorg/ru/traseka/istorija-traseka>

տարածաշրջանի հետ»։ Վերոնշյալ երկու նախագծերի հաջող ավարտն, անկասկած, ԵՄ-ի առաջնորդներին խրախուսեց 2000-ականների սկզբին նախաձեռնելու «Նաբուկկո» նախագծի իրականացումը։ Վերջինս կարող էր էներգետիկ պաշարների Եվրոպական սպառողներին ուղղակիորեն կապել այլընտրանքային մատակարարների հետ՝ լիովին բացառելով Ռուսաստանի ներգրավման անհրաժեշտությունը։

«Նաբուկկո» նախագծի հիմքը դրվել է 2002 թվականի հունիսին ստորագրված արձանագրությամբ, որով ավստրիական «OMV»-ը, հունգարական «MOL»-ը, բուլղարական «Բուլղարգազը»-ը, ռումինական «Տրանսգազը» և թուրքական «Բոթաշը»-ը համաձայնության եկան ստեղծել Էրզրումից (Թուրքիա) Ավստրիա ձգվող խողովակաշար։ Առանց մանրամասնելու ծրագրի ծագման և զարգացման ընթացքը, հարկ է նշել, որ գազատարի հաջող ավարտի դեպքում լիարժեք թողունակություն՝ տարեկան 31 մլրդ խմ գազ, նախատեսվում է ապահովել 2020 թվականից ոչ շուտ։ Ադրբեջանը «Նաբուկկո» գազատարի նախագծի առանցքային մասնակիցներից էր, քանզի միակ երկիրն էր, որը նախագծի շրջանակներում պաշտոնապես պարտավորվել էր տրամադրել գազ։ Այդ լույսի ներքո 2008 թվականի հուլիսին Եվրոպական միության և Ադրբեջանի միջև ստորագրվեց էներգետիկ ոլորտում Ռազմավարական համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր Ադրբեջանից և կասպյան ավազանից դեպի ԵՄ էներգամատակարարման ու տեղափոխման համակարգերի հուսալիությունն ու անվտանգությունը մեծացնելու նպատակով։¹ Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ այդ հավակնոտ նախագծի իրականացումը կապված է մի շարք տնտեսական, աշխարհաքաղաքական և աշխարհագրական բնույթի խնդիրների հետ։ «Նաբուկկո» նախագծի գլխավոր թերություններից մեկը երաշխավորված հումքային բազայի բացակայությունն էր։ Քաղաքական անկայունության պատճառով Մերձավոր Արևելքը դարձել էր անհասանելի, միջազգային պատժամիջոցների պատճառով կասեցվել էին Իրանից գազամատակարարումները։ Միաժամանակ, մուտքը դեպի Կենտրոնական Ասիայի գազային պաշարներ շարունակում էր մնալ փակ կապված Կասպից ծովի անորոշ իրավական կարգավիճակի, ինչպես նաև Կասպից ծովի հատակով անցնող ցանկացած խողովակաշարի կառուցման ուղղությամբ Ռուսաստանի և Իրանի շարունակական դիմադրության հետ։ Չնայած նախատեսված էր, որ «Շահ Դենիզ» հանքավայրի երկրորդ հերթի շահագործման արդյունքում «Նաբուկկոյին» կմատակարարվի 8 մլրդ խմ գազ, այդուհանդերձ, Ադրբեջանի գազային պաշարներն ակնհայտորեն բավարար չէին նախագծի արդյունավետությունն ապահովելու համար, քանզի գազատարը պահանջում էր տարեկան մոտ 30 մլրդ խմ գազ՝ տնտեսապես կենսունակ լինելու համար։ Ավելին, Ադրբեջանը ոչ միայն միացել էր էներգետիկ ոլորտի մի շարք միջազգային նախաձեռնությունների («Բաբու-Թբիլիսի-Էրզրում» գազատար, Ռումինիայի հետ առանձին համաձայնագրեր հեղուկ բնական գազի տեղափոխման (AGRI) և «Նաբուկկոյի» վերաբերյալ), այլև համաձայնագիր էր կնքել «Գազպրոմի» հետ «Շահ Դենիզ-2»-ի գազի վերաբերյալ՝ լուրջ կասկածի տակ դնելով անգամ խոստացված 8 մլրդ խմ գազը «Նաբուկկոյին» մատակարարելու հարցը։ «Նաբուկկո» նախագիծը նաև քննադատվում էր ոչ շահութաբեր լինելու համար, մասնավորապես, հաշվի առնելով դրա բարձր գինը (շուրջ 13 մլրդ դոլար) և Հարավարևելյան ու Կենտրոնական Եվրոպայի միայն սահմանափակ թվով երկրների գազ մատակարարելու հնարավորությունը։ Հավանական մատակարարներից գազի ներկրման հասանելիության հարցն ավելի անորոշ դարձավ Կենտրոնական Ասիա-Չինաստան գազամուղի բացման և Ադրբեջանի ու Կենտրոնական Ասիայի երկրների՝ «Հարավային հոսք» նախագծում ներգրավման լույսի ներքո։ Վերջինս Մոսկվայի նախաձեռնած մեկ այլ գազատարի կառուցման նախագիծ էր, որը

¹ Memorandum of Understanding on a strategic partnership between the European Union and the Republic of Azerbaijan in the Field of Energy, available at http://ec.europa.eu/energy/international/doc/mou_azerbaijan_en.pdf

Սև ծովի հատակով հասնելու էր Բուլղարիա, այնուհետև՝ այլ եվրոպական երկրներ: ¹Բացի «Հարավային հոսք» նախագծից, որոշ այլ ռուսական նախաձեռնություններ ևս նպաստեցին «Նաբուկկոյի»՝ չեղարկմանը և բազմազանեցման ուղղությամբ եվրոպական փորձերի արգելակմանը: Այդ նախաձեռնությունների թվում էին Մոսկվայի ջանքերն՝ ուղղված Ադրբեյջանի և Կենտրոնական Ասիայի երկրների՝ մասնավորապես Ղազախստանի և Թուրքմենստանի հետ երկարաժամկետ գազային գործարքներ կնքելուն, ինչը կարգելափակեր դեպի ԵՄ մատակարարումներն, ինչպես նաև այլ առաջատար արտադրող երկրների հետ, ինչպիսիք են Քաթարը և Իրանը, բնական գազի արտահանման համակարգված քաղաքականություն վարելու մտադրությունը: ² Ի վերջո, 2013 թվականի դեկտեմբերի սկզբին Եվրոպական հանձնաժողովը հայտարարեց, որ Ռուսաստանի և ԵՄ շահագրգիռ անդամ երկրների միջև կնքված բոլոր երկկողմ համաձայնագրերը «Հարավային հոսք» գազատարի կառուցման վերաբերյալ հակասում են ԵՄ օրենքներին և վերանայման կարիք ունեն: ³ Արդյունքում «2014 թվականի հունիսին Բուլղարիան (որի տարածքով պետք է անցնեն «Հարավային հոսքի» եվրոպական հատվածի սկզբնամասը) հայտարարեց, որ դուրս է գալիս ծրագրից: Թվում էր, թե Ռուսաստանը հայտնվել է անելանելի իրավիճակում: Սակայն տարեվերջին Ռուսաստանի նախագահն Անկարա կատարած այցի ժամանակ հայտարարեց, որ Մոսկվան դադարեցնում է «Հարավային հոսք» ծրագիրը և սկսում է իրագործել մեկ այլ՝ «Թուրքական հոսք» ծրագիր: Իհարկե, դա պարզապես «Հարավային հոսքի» ձևափոխված տարբերակն էր, քանի որ նախատեսվում էր այդ ծրագրի երթուղու սկզբնական հատվածով՝ Սև ծովի հատակով կառուցվող գազատարով (շուրջ 3.3 միլիարդ եվրո արժողությամբ)⁴, տեղափոխել նույն ծավալի գազ և այն վաճառել Թուրքիային: Անկարան նախատեսում էր այն վաճառել Եվրոպային՝ տեղափոխելով մի գազատարով, որը պետք է անցնի Հունաստանի, Մակեդոնիայի, Սերբիայի և Հունգարիայի տարածքներով: Պատասխանը շատ չուշացավ»:⁵ Ըստ Հունաստանի էներգետիկայի նախարար Պ. Լաֆազանիսի, ԱՄՆ Պետդեպարտամենտի հատուկ բանագնաց Ա. Հոքստայնն իր հետ բանակցություններում հայտարարել է, որ Միացյալ Նահանգների համար «Թուրքական հոսքի» իրագործումը ցանկալի չէ և խորհուրդ է տվել հրաժարվել այդ ծրագրից ու կենտրոնանալ Անդրադրիատիկ գազատարի (TAP) վրա: ⁶ Հունաստանի կառավարությունն, ի տարբերություն Բուլղարիայի, հայտարարել է, որ «Թուրքական հոսքն» իր երկրի համար շահավետ է և ջանքեր է գործադրելու դրա իրագործման համար:⁷ Այդ համատեքստում Հունաստանի կառավարության ռազմավարությունը՝ «Թուրքական հոսքն» օգտագործելու որպես լծակ Հունաստանի միջազգային վարկատուների հետ բանակցություններում, ինչպես նաև Մոսկվայի և Աթենքի քաղաքականությունների նմանությունը, անկասկած, թեժացրեց

¹ Ramsay W., Doubts about Nabucco Don't Originate in China - Look to Europe, available at <http://www.ifri.org/? page = detail-contribution&id=5779>

² Пашковская И., Европейский Союз: энергетическая политика в отношении новых независимых государств. МГИМО, Центр евро-атлантической безопасности. Выпуск 1 (22), Июль 2009, сс. 51-52.

³ South Stream bilateral deals breach EU law, Commission says. 04.12.2013, available at <http://www.euractive.com/energy/ commission-south-stream-agreementnews-532120>

⁴ Transadriatic Pipeline and Turkish Stream repeating History <http://www.naturalgaseurope.com/trans-adriatic-pipeline-and-turkish-streamrepeating-history-24524>

⁵ Թորոսյան Տ., Արշակյան Գ., Թուրքիայի արդի քաղաքականության նախադրյալները, մարտահրավերներն ու հեռանկարները, Հայկական քաղաքագիտական հանդես, 2, 2014թ., 139-160:

⁶ US urges Athens to focus on TAP, not Turkish Stream, available at <http://www.infobalkans.com/2015/05/08/us-urges-athens-focus-tap-not-turkishstream>, 14.05.2015 40 США прямо заявили,

⁷ США прямо заявили, что не хотят участия Греции в «Турецком потоке», www.regnum.ru/news/1923051.html

Էներգետիկ անվտանգության շուրջ ծագած ԵՄ-Ռուսաստան վեճը:¹ Ուստի, զարմանալի չէ, որ «Նաբուկկո» նախագիծն աստիճանաբար կորցրեց իր հուսալիությունը: Արդյունքում, Բրյուսելը նախընտրեց ավելի փոքր նախագծերի իրականացում՝ ապահովելով մուտք կասպիական գազի հանքավայրեր (մասնավորապես՝ Ադրբեջանի «Շահ Դենիզ» հանքավայրի երկրորդ հերթը): Սկզբում «Նաբուկկոն» բաժանվեց երկու մասի՝ Անդրանատոլիական գազատար (TANAP)՝ Ադրբեջանից Հունաստանի և Բուլղարիայի սահմաններ գազի տեղափոխման նախագիծ, և ձևափոխված «Նաբուկկո-Արևմուտք»՝ Թուրքիայի սահմաններից դեպի Բուլղարիա և Ավստրիա ձգվող գազատար: Արդյունքում շահագրգիռ ընկերությունները հրաժարվեցին «Նաբուկկո-Արևմուտք» նախագծից, երբ 2013 թվականի հունիսի 28-ին «Շահ Դենիզի» շահագործման երկրորդ հերթի համար ադրբեջանական կոնսորցիումը ընտրեց պակաս հավակնոտ TANAP-TAP համակարգը (տարեկան 10-20 մլրդ խմ գազ)՝ որպես եվրոպական շուկաներ իր գազի արտահանման երթուղի: Դա հարավային ուղղությամբ ԵՄ-ի էներգետիկ քաղաքականության նոր, անխուսափելի զարգացումների պատճառ դարձավ: Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ «Հարավային գազային միջանցքը» կարևոր քայլ էր հարավկովկասյան երկրները ԵՄ-ի էներգետիկ շահերի ոլորտ ներգրավելու, եվրոպական էներգետիկ շահերն արևելյան ուղղությամբ ընդլայնելու, ինչպես նաև ԵՄ-ի և իր արևելյան գործընկերների միջև էներգետիկ ոլորտի համագործակցությունը խթանելու ուղղությամբ: Այդուհանդերձ, «Հարավային գազային միջանցքի» մաս կազմող TANAP-TAP համակարգը՝ որպես ԵՄ-ի գազի ներկրման երթուղիների բազմազանեցման մեխանիզմ, կլինի ի սկզբանե նախատեսվածից պակաս կարևոր: Չնայած վերջին զարգացումները, կապված Իրանի Իսլամական Հանրապետության և մի շարք ազդեցիկ պետությունների միջև Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ համաձայնության ձեռքբերմանը, ենթադրվում է, որ «Հարավային գազային միջանցքը» դեռ երկար ճանապարհ ունի անցնելու: Միաժամանակ, տրամաբանական է ենթադրել, որ Հարավային Կովկասում ԵՄ-ի էներգետիկ նախագծերը սուկ շահույթ հետապնդող նախագծեր չեն: Ըստ փորձագետների, «2014 թվականի դրությամբ Ադրբեջանի գազային պաշարները միջազգային մարմինների կողմից գնահատվում են շուրջ 1 տրիլիոն խմ, որից 9 մլրդ խմ գազը սպառում է տեղական շուկան՝ երկու տոկոս աճի հնարավորությամբ կայուն երկարաժամկետ հեռանկարում: Հաշվի առնելով Թուրքիայի տարեկան մոտ 50 մլրդ խմ գազի պահանջը, ինչպես նաև հավելյալ 70 մլրդ խմ Իտալիայի և ևս 45 մլրդ խմ Հունաստանի, Բուլղարիայի, Սերբիայի, Խորվաթիայի, Հունգարիայի և Ավստրիայի համար, ակնհայտ է, որ ադրբեջանական հանքավայրերը նույնիսկ միջնաժամկետ հեռանկարում՝ առաջիկա 10- 20 տարում, չեն կարող բազմազանեցման ուղղությամբ էական փոփոխության հիմք դառնալ»: ²Թերևս, դա է պատճառը, որ եվրոպացիները չեն շտապում մեծ ներդրումներ կատարել այդ նախագծերում և մտադիր են իրականացնել միայն նրանք, որոնց հովանավորում է Ադրբեջանի կառավարությունը: Ուստի, «Հարավային գազային միջանցք» նախագծի կարևորությունը գլխավորապես պայմանավորված է ոչ թե Եվրոպա ներկրվող բնական գազի ծավալների աճով, այլ Եվրոպայի համար գազի այլընտրանքային միջանցք բացելու հնարավորությամբ: Ակնկալվում է, որ դա կարող է լինել ուղերձ Կրեմլին, որ Ռուսաստանը Կասպիական ավազանի էներգակիրների համար ընթացող մեծ խաղում միակ խաղացողը չէ:

Այսպիսով՝ չնայած իր ծայրամասային տեղադրությանը, Հարավային Կովկասը, որպես Մեծովյան-Կասպյան էներգետիկ տարածաշրջանի բաղադրիչ և Կենտրոնական Ասիայի հետ կապող բնական միջանցք, ԵՄ-ի համար աստիճանաբար ձեռք է բերում ռազմավարական նշանակություն:

¹ Pourzitakis S., The Energy Security Dilemma of Turkish Stream, <http://carnegieeurope.eu/strategieurope/?fa=60861>

² Nabucco Redux?, available at <http://www.naturalgaseurope.com/southern-gas corridor-iran-nabucco>

Օգտագործված գրականության ցանկ

1. Թորոսյան Տ., Արշակյան Գ., Թուրքիայի արդի քաղաքականության նախադրյալները, մարտահրավերներն ու հեռանկարները, Հայկական քաղաքագիտական հանդես, 2, 2014թ., 139-160:
2. <<Եվրոպան այսօր>> տեղեկատվական պարբերական (հանդես 1)
3. «ՏՐԱՍԵԿԱ» ծրագրի պաշտոնական կայքէջ, մատչելի է <http://www.tracecaorg/ru/traseka/istorija-traseka>
4. Пашковская И., Европейский Союз: энергетическая политика в отношении новых независимых государств. МГИМО, Центр евро-атлантической безопасности. Выпуск 1 (22), Июль 2009, сс. 51-52.
5. США прямо заявили, что не хотят участия Греции в «Турецком потоке», www.regnum.ru/news/1923051.html
6. Lynch D., The EU: Toward A Strategy, The South Caucasus: A Challenge for the EU, Chaillot Paper no. 65, EU Institute for Security Studies (Ed. by D. Lynch), Paris, 2003, pp. 171-192.
7. Sierra O., Life is a dream: EU governance in the Southern Caucasus, Dynamiques internationales. Numero 6, Fevrier 2012, available at <http://dynamiquesinternationales.com/wp-content/uploads/2012/02/D16-Sierra11.pdf>
8. Popescu N., ENP and EaP: relevant for the South Caucasus? South Caucasus –20 Years of Independence. Friedrich-Ebert-Stiftung,, pp. 316-335.
9. Simão L., EU-South Caucasus Relations: Do Good Governance and Security Go Together?, Political Perspective, 5 (2), 2011, 33-57.
10. Cornell S. and Starr F., The Caucasus: A challenge for Europe. Central AsiaCaucasus Institute. Silk Road Program, 2006, p. 11.
11. Energy Union Package. Communication from the Commission to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee, the Committee of the Regions and the European Investment Bank. Brussels, 25.2.2015 COM(2015) 80 final, available at http://eur-lex.europa.eu/resource.html?uri=cellar:1bd46c90-bdd4-11e4-bbe1-01aa75ed71a1.0001.03/DOC_1&format=PDF
12. Wisniewski J., EU Energy Diversification Policy and the Case of South Caucasus, Political Perspectives, 5 (2), 2011, 58-79.
13. Memorandum of Understanding on a strategic partnership between the European Union and the Republic of Azerbaijan in the Field of Energy, available at http://ec.europa.eu/energy/international/doc/mou_azerbaijan_en.pdf
14. Ramsay W., Doubts about Nabucco Don't Originate in China - Look to Europe, available at <http://www.ifri.org/?page=detail-contribution&id=5779>
15. South Stream bilateral deals breach EU law, Commission says. 04.12.2013, available at <http://www.euractive.com/energy/commission-south-stream-agreementnews-532120>
16. Transadriatic Pipeline and Turkish Stream repeating History <http://www.naturalgaseurope.com/trans-adriatic-pipeline-and-turkish-streamrepeating-history-24524>
17. US urges Athens to focus on TAP, not Turkish Stream, available at <http://www.infobalkans.com/2015/05/08/us-urges-athens-focus-tap-not-turkishstream>, 14.05.2015 40 США прямо заявили,
18. Pourzitakis S., The Energy Security Dilemma of Turkish Stream, <http://carnegieeurope.eu/strategieurope/?fa=60861>
19. Nabucco Redux?, available at <http://www.naturalgaseurope.com/southern-gascorridor-iran-nabucco>

ՀՏԴ94(34)

LEGAL REGULATION OF BETTING ACTIVITY

Y. V. Airapetyan, E. S. Mnatsakanyan
Russian-Armenian University
Institute of Law and Politics
yuriy-ayrapetyan@mail.ru,
emma.mnatsakanyan13@gmail.com

Բանալի բառեր՝ բուքմեյքերյան գործունեություն, շահումով խաղերի կազմակերպում և իրականացում, լիցենզիա, խաղադրույք, խաղատուն:

Key words: betting activity, organization and conducting the process gambling, license, rates, gambling facility.

Ключевые слова: букмекерская деятельность, организация и проведение азартных игр, лицензия, ставки, игорная зона.

Յու. Վ. Հայրապետյան, Է. Ս. Մնացականյան
Հայ-Ռուսական համալսարան
Իրավունքի և քաղաքագիտության ինստիտուտ
yuriy-ayrapetyan@mail.ru, emma.mnatsakanyan13@gmail.com

ԲՈՒՔՄԵՅԷՐՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ամփոփում

Տվյալ հոդվածում ուսումնասիրվել է բուքմեյքերյան գործունեության իրավական կարգավորման կարգը, շահումով խաղերի կազմակերպմանն ու իրականացմանը առնչվող հարցերը, կատարվել է համեմատական վերլուծություն հայրենական և արտասահմանյան օրենսդրությունների միջև, ինչպես նաև վեր են հանվել դրա կատարելագործման համար անհրաժեշտ ուղղությունները:

Ю. В. Айрапетян, Э. С. Мнацаканян
Российско-Армянский университет
Институт права и политики
yuriy-ayrapetyan@mail.ru, emma.mnatsakanyan13@gmail.com

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ БУКМЕКЕРСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Резюме

В данной статье исследован порядок правовой регламентации букмекерской деятельности, изучены вопросы организации и проведения азартных игр, проведен сравнительный анализ отечественного и зарубежного законодательства, а также выявлены необходимые направления для его совершенствования.

Summary

The given article discusses the rules regarding betting activity, the organization and conducting gambling, comparative analysis of domestic and foreign legislation and also the required steps taken for its improvement

Законодательство, как правило, отрицательно относится к азартным играм путем установления ограничений и отказывая их участникам в принудительной правовой защите их интересов. Действующий Гражданский Кодекс РА и РФ не предусматривает в качестве основание возникновения гражданских прав и обязанностей лиц с участием в играх и пари, отказывая их в судебной защите, за исключением случаев когда лица приняли участие в играх, пари под влиянием обмана, угрозы или злонамеренного соглашения их представителя с организатором игр, пари. В научных статьях часто обсуждается вопрос о соотношении **понятий азартной игры и пари.**

Общепринятым мнением среди юристов является разграничения их в зависимости от возможности участников **влиять на наступление условий выигрыша и проигрыша**. Азартная игра, несмотря на ее случайный характер, свойственно воздействию ее участников на результат, тем временем как в пари исключается какое-либо влияние участников на его исход. **“Игра,-** пишет французский юрист Л. Жюллио де ла Морандьер,- *это договор, в силу которого участники обещают одному из них получение им определенного выигрыша, зависящего от большей или меньшей степени сноровки или ловкости участников игры, их комбинационных способностей и в той или иной мере от случая. Пари - это соглашение двух лиц, из которых одно утверждает, а другое отрицает наличие определенного обстоятельства, о том, что определенный выигрыш получит то из этих лиц, которое по проверке окажется правым”*[1]. Согласно Федеральному закону РФ “О государственном регулировании по организации и проведению азартных игр и о внесении изменений в некоторые законодательные акты РФ” азартная игра - это основанное на риске соглашение о выигрыше, заключенное двумя или несколькими участниками такого соглашения между собой либо с организатором азартной игры по правилам, установленным организатором азартной игры, а пари - это азартная игра, при которой исход основанного на риске соглашения о выигрыше, заключаемого двумя или несколькими участниками пари между собой либо с организатором данного вида азартной игры, зависит от события, относительно которого неизвестно, наступит оно или нет[2]. Следовательно по смыслу ФЗ данные понятие соотносится как род и вид.

Различия во взглядах об играх и пари, возникшие в результате отсутствием прямых указаний в Кодексе на этот счет, обнаруживаются и в законодательстве других стран, как например возникшая сразу же после принятия Германского гражданского уложения дискуссия. Речь шла о том, что одна группа авторов признавала необходимым для игры признаком деятельность участников, с тем что при ее отсутствии имеет место пари. Уголовный Кодекс Канады определяет игру как основанное на риске или сочетании случая и мастерства игры. В англосаксонской системе права азартные игры определяются как способ зарабатывания денег, при помощи игр. Считается, что азартные игры - это добропорядочный способ зарабатывания денег. Отныне термин "игра" по судебному делу Bailey v. McDuffee 1875 г. было признано синонимом понятия "азартной игры" .

Азартные игры состоят из 3 элементов: ставка, приз и риск. При отсутствии одного из элементов, игра не считается азартным. **Ставка** как юридический термин в значительной степени используется в договорном праве США. Как правило, ставка предполагает внесение определенной денежной суммы. Однако, в случае не азартных договоров, ставка может означать любые расходы одной стороны такого договора или как любое благо, предоставляемое другой стороне. Немногие штаты следуют этому правилу при заключении азартных контрактов. **Второй элемент - это выигрыш**, который определяется как сумма выигранная игроком. Когда в результате игры игроки не получают денег или товар, такая деятельность является игрой-развлечением. Для наличие **третьего элемента** игра предполагает не только стоимостный выигрыш и ставки, но и результат игры должен определяться случаем, в противном случае это не считается азартной игрой, а является игрой-мастерством (game of skill). Это означает, что игрок не имеет контроля над результатом игры и не может предвидеть каким будет результат игры. Аналогичным образом, лицо не может стать опытным в данной игре, т. к. результат непредвиденный.

Федеральное законодательство США всецело не регламентирует порядок организации и проведение азартных игр, за исключением тех случаев, когда проблема является настолько сложной, что штаты самостоятельно не справляются. Как гласит Свод законов: вопросы определения порядка организации и проведения азартных игр находятся в ведении штатов. При отсутствии единого федерального закона, регламентирующих деятельность игроков, вступает в действие право штатов. Игровой бизнес всегда подвергался контролю со стороны штатов. Доказательством такового является установление многочисленных ограничений при осуществлении букмекерской деятельности. Хотя игровой бизнес допускается в 50 штатах, однако только в штатах Невада и Нью-Джерси деятельность казино полностью легализована. [3]

На уровне Европейского Союза в настоящее время нет единого законодательства ЕС об игорном бизнесе. Каждое государство-член имеет законодательство об азартных играх. В качестве примера приводится Австрия - на федеральном уровне которого регулируются казино, лотереи, карточные игры и покер, а на уровне каждого субъекта федерации (земли) - спортивное букмекерство и игровые автоматы вне казино. В Испании сфера азартных игр регулируется как на центральном (действует общенациональный закон), так и местном уровнях. Каждая из 17 автономных областей страны приняла свое законодательство на основании полномочий,

делегированных центральной властью. В Италии на местном уровне продолжает регулироваться казино. В Германии на общегосударственном уровне заключен и периодически обновляется Межземельный договор об азартных играх, а каждая земля принимает свое законодательство с соблюдением условий, установленных в настоящем договоре. Однако отдельные виды азартных игр и некоторые аспекты деятельности игорного бизнеса регулируются федеральными законами Германии.

В сфере регулирования организации и проведения азартных игр возникает многочисленные проблемы, которые рассмотреть в рамках одной статьи невозможно. Анализ норм современного российского права, сконцентрированных в гл. 58 ГК РФ «Проведение игр и пари», показывает, что российский законодатель, несмотря на то, что напрямую категорию натуральных обязательств не упоминает, раскрывает сущность игр, опираясь на признак непредоставления судебной защиты. В Российской Федерации моделируют правовое регулирование игр и пари, делая акцент на натуральной природе обязательств, вытекающих из них. В доктрине и судебной практике устоялось мнение о том, что игры и пари являются сделками и порождают для сторон определенные обязательства – «натуральные обязательства», т. е. обязательства, не пользующиеся исковой защитой. По нашему мнению, непредоставление подобным требованиям правовой защиты обусловлено прежде всего неодобрительным отношением государства к подобного рода сделкам. В частности, до введения в действие части второй ГК РФ азартные игры с точки зрения гражданского права являлись сделками ничтожными, а также образовывали состав административного правонарушения. Не следует обходить вниманием и п. 2 ст. 1062 ГК РФ, который появился в указанной статье в 2007 г. и ввел регулирование отношений из расчетных форвардных контрактов и сделок под отлагательным условием. **Форвардный договор** - договор, при котором продукция, подлежащие поставке в оговоренный период, оплачиваются в момент заключения договора. При таком договоре цена на продукцию в период действия срока договора остается неизменной. Такие сделки позволяют вести игру на разнице цен на товар при заключении сделки и ко времени поставки, когда цена может измениться. Дело в том, что в ст. 1062 ГК РФ не указаны признаки, по которым пари можно отличить от иных рискованных предпринимательских сделок. Суды в каждом конкретном случае выясняли цель заключения расчетного форвардного контракта и решали, стоял за ним некий хозяйственный интерес, который подлежит защите, или это было чистой воды пари. В п. 2 ст. 1062 ГК РФ прямо указано, что правила главы 58 ГК РФ не распространяются на требования из этих видов сделок. Дело в том, что достаточно долгое время суды отождествляли данные обязательства с обязательствами из проведения игр и пари и, как следствие, отказывали в защите гражданских прав. Новым витком в данном вопросе стало рассмотрение Конституционным Судом РФ жалобы коммерческого акционерного банка «Банк Сосьете Женераль Восток» на нарушение конституционных прав и свобод ст. 1062 ГК РФ[4]. Интерес представляет особое мнение судьи Г. А. Гаджиева, который полагает, что срочные сделки, заключаемые на биржах и внебиржевом рынке, не являются теми играми и пари, о которых идет речь в этой статье. Он, со ссылкой на решение Гражданского кассационного департамента Правительствующего сената № 57 за 1883 г., определяет пари как «соглашение, которое имея все внешние признаки договора, вызывается недействительными и серьезными потребностями жизни, а прихотью или страстью, и в котором стремление достигнуть известного результата лишь путем риска составляет единственный мотив соглашения». Проводя параллель между сделками пари и договором страхования, Г. А. Гаджиев указывает, что законодатель не исключает судебную защиту требований, вытекающих из договоров страхования, поскольку они основаны на хозяйственном (или предпринимательском) риске. По мнению Г. А. Гаджиева, чтобы квалифицировать расчетные форвардные контракты как сделки пари, необходимо установить, что эти контракты заключаются не в целях защиты от инфляции или оптимизации распределения хозяйственных рисков, а в целях удовлетворения личных неимущественных потребностей, что маловероятно, поскольку в большинстве своем расчетные форварды основываются на свободе предпринимательской деятельности. В настоящее время все срочные сделки, заключенные на бирже, пользуются судебной защитой, если одной из ее сторон является юридическое лицо, получившее лицензию, на основании которой возможно заключение сделок на бирже. в Государственную Думу внесен проект поправки в ст. 1062 ГК, разработчики которых рассматривают срочные сделки на финансовом рынке как пари, но в порядке исключения предлагают обеспечить их судебной защитой.

В соответствии с Постановлением Конституционного Суда РФ от 16 декабря 2002 г. п 282-о “О прекращении производства по делу о проверке конституционности статьи 1062 ГК РФ в связи с жалобой коммерческого акционерного банка "Банк Сосьете Женераль Восток" от 16

декабря 2002 г. N 282-О по буквальному смыслу статьи 1062 ГК Российской Федерации, требования граждан и юридических лиц, связанные с организацией игр или пари или с участием в них, не подлежат судебной защите, т.е. не только требования, прямо вытекающие из сделок игр или пари, но и все требования, связанные с ними, не подлежат судебной защите. У проигравшего в игре или пари может не оказаться наличных денежных средств для выплаты причитающейся выигравшей стороне суммы. Даже в том случае, если в результате новации обязательства между сторонами возникнет новое обязательство в силу выдачи векселя или долговой расписки, требования из этих обязательств как "связанные с организацией игр и пари" также лишаются исковой защиты. Следовательно, введенное законодателем в статье 1062 ГК Российской Федерации ограничение приводит к лишению судебной защиты не только требований, вытекающих из сделок игр и пари, но и иных договоров, предусмотренных, в частности, статьями 807 (договор займа) и 815 (вексель) ГК Российской Федерации. Такое чрезмерное ограничение конституционного права, закрепленного в статье ч. 1 ст. 34 Конституции Российской Федерации, согласно которому каждый имеет право на свободное использование своих способностей и имущества для предпринимательской и иной не запрещенной законом экономической деятельности, приводит к умалению ущемляющие права и свободы человека и гражданина[5].

Что касается РА, то Кассационный Суд РА дал свое заключение по поводу судебной защиты прав лиц, участвующих в азартных играх. Так, согласно ст. 1039 ГК Республики Армения требования граждан и юридических лиц, связанные с организацией игр и пари, основанных на риске (азартных игр), или с участием в них, не подлежат судебной защите, за исключением требований лиц, принявших участие в играх или пари под влиянием обмана, насилия, угрозы или злонамеренного соглашения их представителя с организатором игр или пари, а также требований, указанных в пункте 5 статьи 1040 настоящего Кодекса. Согласно п. 5 ст. 1040 ГК Республики Армения организатор игры в соответствии с правилами проведения лотереи, тотализатора или иных игр должен выплатить выигравшим лицам их выигрыш в предусмотренных правилами проведения игр размере, форме (денежной или в натуре) и срок, а если срок в этих правилах не указан, не позднее десяти дней с момента определения результатов игр. Сравнивая вышеуказанные статьи Кассационный Суд РА по делу "Ара Хачатрян против Арментел ЗАО" пришел к выводу, что требования связанные с организацией игр и пари, основанных на риске (азартных игр), или с участием в них, не подлежат рассмотрению в суде и только в исключительных случаях суд может рассмотреть споры, возникающие в данной сфере. Следовательно, споры связанные с признанием лица выигравшим, в том числе рассмотрение вопросов, связанные с организацией азартных игр, в соответствии с установленными правилами ст. 1039 и 1040 ГК РА не входит в компетенцию суда. Основываясь на вышеуказанном, суд учитывая то обстоятельство, что данным гражданским делом оспаривается именно вопрос о признании А. Хачатряна выигравшим, заключил, что требование А. Хачатряна не вытекает из вышеуказанных статей ГК РА и не подлежит судебной защите. [6]

Заключение

1. Исходя из вышеизложенного, можно сделать вывод о том, что на сегодняшний день в теории гражданского права нет ясного определения в соотношении таких категорий, как азартные игры и пари. В связи с чем, мы предлагаем установить конкретные объективные критерии разграничения указанных понятий. Так, целесообразным следует полагать, что пари представляет собой разновидность азартной игры, причем, различные азартные игры выделяются в качестве таковых по определенным критериям (намерению сторон, влиянию случайности и др.). Проведенный анализ категорий «азартная игра» и «пари» позволил выявить их следующие основные признаки:
 - непредсказуемость и случайный характер результата, на наступление которого стороны либо могут, либо не могут оказывать определенное влияние;
 - рискованный (алеаторный) характер;
 - имущественный характер выигрыша и риска проигрыша;
 - публичный характер, за исключением случаев, когда соглашения заключаются между двумя или несколькими участниками игры или пари без участия профессионального организатора;
 - основанием участия в игре или пари является возложение одинакового с собственным риском неблагоприятного исхода игры (разрешения пари) на контрагента.
- Принятые в современной литературе критерии классификации азартных игр и пари (степень влияния случая на исход игры и возможность игроков участвовать в процессе

определения победителя) целесообразно дополнить еще одним критерием - «юридического (гражданско-правового) значения». В зависимости от данного критерия следует различать три вида азартных игр и пари:

- 1) игры и пари, порождающие обязательства по выплате выигрыша, но не подлежащие судебной защите;
- 2) игры и пари, порождающие обязательства по выплате выигрыша, подлежащие судебной защите;
- 3) игры и пари, не порождающие обязательства по выплате выигрыша, но подлежащие судебной защите.

2. Восполнение пробелов как в Гражданском Кодексе, также в отдельных законах. В ГК РФ должно быть зафиксировано, что положения ст. 1062, касающиеся игр и пари, не распространяются на срочные сделки или их специальную категорию. цель изменения в ГК - наиболее точно указать критерии тех сделок пари, которые нужно защитить. Непредоставление судебной защиты требованиям граждан и юридических лиц основанным на натуральных обязательствах из игр и пари, рассматривается как противоречащее общим началам гражданского законодательства. В связи с этим, предлагается закрепить в качестве общего правила возможность судебной защиты прав и законных интересов участников игр и пари, за исключением тех обязательств, которые были признаны недействительными сделками по иску заинтересованного участника, а также тех обязательств из игр и пари, что прямо запрещены законом.

Список использованной литературы

- [1.] Морандьер де ла Л. Жюллио - Гражданское право Франции: пер. с франц. М., Т. 3. С. 331
- [2.] Федеральный Закон от 29.12.2006 N 244-ФЗ (ред. от 28.03.2017) “О государственном регулировании по организации и проведению азартных игр и о внесении изменений в некоторые законодательные акты РФ”
- [3.] Law Master. Игра и закон. Особенности игорного бизнеса в США//Casino Games. №10. 2010.
- [4.] Постановление Конституционного Суда РФ от 16 декабря 2002 г. n 282-о “О прекращении производства по делу о проверке конституционности статьи 1062 ГК РФ в связи с жалобой коммерческого акционерного банка "Банк Сосьете Женераль Восток" от 16 декабря 2002 г. N 282-О
- [5.] Конституция РФ от 12 декабря 1993 года.
Гражданский Кодекс РА от 05.05.1998 г.
- [6.] Решение Кассационного Суда РА “О применении ст. 1039 и 1040 Гражданского Кодекса РА”, от 20.06.2008, N 3-377 КС

ՀՏԴ37(479.243)
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վաչագան Դադայան
ԱրՊՀ, Իրավագիտություն, 4-րդ կուրս
գիտ. դեկավար՝ իր.գ.թ., դոցենտ Ռիտա Առուստամյան

Բանալի բառեր՝ տեղական ինքնակառավարում, սահմանադրություն, իրավական հիմնախնդիր, օրենսդրական առաջարկներ

Ключевые слова: местное самоуправление, конституция, правовые вопросы, определенные решения

Keywords: local-government, constitution, result of the research

Ամփոփում

Հոդվածում դիտարկվում է տեղական ինքնակառավարումը որպես սահմանադրական ինստիտուտ, նրա դերը ԱՀ օրենսդրությունում: Հետազոտության ժամանակ ծագող իրավական խնդիրներին տրվում են համապատասխան լուծումներ:

Вачаган Дадаян
АрГУ, Юриспруденция, 4-ый курс
Науч.рук.:к.ю.н., доцент Рита Арустамян

МЕСТНОЕ САМОУПРАВЛЕНИЕ В АР, ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ

Резюме

В статье рассматривается местное самоуправление, как конституционный институт, её место в законодательстве АР. Правовым вопросам возникшим во время исследования, даются определенные решения.

Vachagan Dadayan
ASU, Jurisprudence, 4th course
Research advisor c.j.s.: Rita Arustamyan

Local self-government bodies in the Artsakh Republic. Legal regulations issues

Summary

The article deals with the local-governance as a constitutional institution and its place in the legislation of the Artsakh Republic. Relevant solutions are provided to the legal issues that arise as a result of the research.

Ուսումնասիրվող թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ տեղական ինքնակառավարման համակարգի կայացումը ժողովրդավարության կայացման նախադրյալներից մեկն է: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի համաձայն՝ «տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է կանոնակարգելու և կառավարելու պետական գործերի զգալի մասը՝ սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից էլնելով»:

Պետության և հասարակության սոցիալ-տնտեսական զարգացումը նոր պահանջներ է ներկայացնում տեղական ինքնակառավարմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2017 թ. փետրվարի 20-ին հանրաքվեի միջոցով ընդունվել է նոր Սահմանադրություն, ուստի այն թույլ է տալիս նոր մոտեցում ցուցաբերել տեղական ինքնակառավարման խնդիրների նկատմամբ: Ցանկանում ենք ընդգծել, որ տեղական ինքնակառավարման իրավական կարգավորման հիմնախնդիրների ուսումնասիրությունը ԱՀ իրավական բարեփոխումների առաջնային խնդիրներից մեկն է: Այդ պարագայում էլ ավելի անհրաժեշտ ու արդիական է տեղական ինքնակառավարման երաշխավորման, կազմակերպման ու գործունեության առավել կարևոր ու հիմնարար նշանակության հարաբերությունների սահմանադրական կարգավորումների գործընթացի և հիմնախնդիրների համալիր գիտական

ուսումնասիրությունը՝ այդ ինստիտուտի զարգացման հեռանկարները, համայնքի ավագանու և ղեկավարի իրավական կարգավիճակի հետզոտությունը, առկա խնդիրների վերահանումը և դրանց լուծման համար առաջարկությունների ներկայացումը:

Ելնելով վերոգրյալից՝ հետևում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական կարգավիճակի հիմնական տարրերի վերլուծությունը կարևոր ու գործնական նշանակություն ունի, ինչը հենց բնորոշում է աշխատանքի թեմայի ընտրությունը, դրա արդիականությունը և նշանակությունը:

Քանի որ, Արցախի Հանրապետությունը միջազգայնորեն չճանաչված երկիր է, ուստի կարևոր նախապայման է, որպեսզի այն շարժվի բոլոր ճանաչված երկրներին համընթաց, որն էլ արտաքին աշխարհին պետք է ապացուցի, որ Արցախը ձգտում է ճանաչման և ընդունում է ինչպես միջազգային պայմանագրերը, այնպես էլ փորձում է կարգավորել սեփական օրենսդրությունը:

Տվյալ պարագայում տեղական ինքնակառավարումը անմասն չմնաց ինչպես Սահմանադրությամբ կարգավորմանը, այնպես էլ՝ օրենքով: Սակայն, փորձը ցույց տվեց, որ անկախ նրանից, որ տեղական ինքնակառավարումը անցել է զարգացման բավականին երկար ուղի, բայցևայնպես, այդ ոլորտը դեռևս կարգավորման կարիք ունի:

Իրավական **հիմնախնդիրների** որոնողական աշխատանքները սկսեցինք ինչպես տեսական գրականության մեջ, ներկայիս գործող օրենքում, այնպես էլ, որ ամենակարևորն է՝ սոցիալարցման միջոցով որոշեցինք վեր հանել ժողովրդի կողմից բարձրացված և նրանց հուզող որոշակի խնդիրներ:

Հարցման շրջանակը այսպիսին էր՝ հարյուր քաղաքացու տարբեր համայնքներից, տարբեր տարիքային խմբերից ստացանք նույն հարցերին պատասխաններ, որոնք էլ, ի մի բերելով, կազմեցինք գրաֆիկներ: Նշեմ, որ կային հարցեր, որոնք բացառապես վերաբերում էին հարցվողների նեղ շրջանակի, ինչի մասին կխոսեմ շուտով:

Այժմ կցանկանայի ներկայացնել սոցիալարցման վերլուծությունը: Հարցերը հետևյալն էին՝

1. Կո՞ղմ եք համայնքների խոշորացմանը, այսինքն մի քանի համայնքներ միանան և դառնան մեկ ընդհանուր համայնք:
 - 1)այո
 - 2)ոչ
 - 3) ինձ համար միևնույն է
2. Կո՞ղմ եք համայնքների միավորմանը, այսինքն որոշակի խումբ խնդիրները կատարվեն մի քանի համայնքի համատեղ ուժերով:
 - 1)այո
 - 2)ոչ
 - 3) ինձ համար միևնույն է
3. Գո՞հ եք համայնքի ղեկավար և ավագանի փոխհարաբերությունից, որը պետք է ունենա ծառայողական բնույթ:
 - 1)այո
 - 2)ոչ
 - 3) ինձ համար միևնույն է
4. Տեղա՞կ եք, թե համայնքի բյուջեն որտեղ է ծախսվում, այսինքն այդ գործողությունը թափանցի՞կ է:
 - 1)այո
 - 2)ոչ
 - 3) ինձ համար միևնույն է

5. Մի՞շտ են պետության կողմից սահմանված պարտադիր լիազորությունների իրականացման համար տրամադրված գումարը ծախսվում նպատակի համար:(համայնքի ավագանի)

1)այո

2)ոչ

3) ինձ համար միևնույն է

6. Երբևէ ներկա եղե՞լ եք ավագանու նիստի կամ ԶԼՄ կամ այլ միջոցներով տեղեկացե՞լ եք համայնքային բյուջեի հաստատման մասին:

1)այո

2)ոչ

3) ինձ համար միևնույն է

7. Գո՞հ եք բնակարանային-կոմունալ ծառայություններից:

1)այո

2)ոչ

3) ինձ համար միևնույն է

8. Կցանկանայի՞ք ընտրվել համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ:(պատասխանեն միայն իգական սեռի ներկայացուցիչները)

1)այո

2)ոչ

3) ինձ համար միևնույն է

9. Գո՞հ եք ներկայիս համայնքի ընտրական համակարգից, թե՞ համայնքի ղեկավարը լինել նշանակովի մարմին:

1)այո

2)ոչ

3) ինձ համար միևնույն է

Այսպես, ըստ կատարած սոցիալաբան, փորձենք առանձնացնել տեղական ինքնակառավարման հիմնախնդիրները և, ըստ մեզ, տալ դրանց լուծումները.

1. Տեղական ինքնակառավարման համակարգի մասնատվածությունը (փոքրաթիվ բնակչությամբ գյուղական համայնքների գերակշռող թիվը),
2. համայնքի կառավարման ռացիոնալ ու արդյունավետ համակարգի կայացումը,
3. համայնքի ֆինանսների կառավարման թափանցիկությունը,
4. օրենքով սահմանված պարտադիր լիազորությունների իրականացման վերահսկողությունը,
5. համայնքի բյուջեի ձևավորման հրապարակայնությունը,
6. ներքին առդիտի ինստիտուտի կայացումը,
7. բնակարանային-կոմունալ տնտեսության ծառայությունների բավարար մակարդակով իրականացումը
8. ՔԿԱԳ կողմից գանձվող պետական տուրքերի տեղայնացումը
9. կանանց ինտեգրումը քաղաքական ակտիվությանը
10. ավագանու ինստիտուտի կայացումը
11. համայնքի ղեկավարի ընտրության կարգի որոշումը

Այժմ հերթականությամբ փորձենք ներկայացնել թվարկած հիմնախնդիրների լուծումները:

Տեղական ինքնակառավարման համակարգի մասնատվածությունը լուծելու համար առաջարկում ենք որոշակի համայնքների միավորման, իսկ որոշակի համայնքների խոշորացման ծրագիրը, ըստ որի, համայնքները կմիավորվեն որոշակի խումբ խնդիրներ համատեղ ուժերով կատարելու համար, որից հետո նրանք կառանձնանան: Համայնքների միավորումից բացի, կարող է իրականացվել նաև համայնքների խոշորացում, որով համայնքները կմիանան իրար՝ դառնալով մեկ ընդհանուր խոշորացված համայնք:

Համայնքի կառավարման ռացիոնալ ու արդյունավետ համակարգի կայացումը իրենից ենթադրում է համայնքի ղեկավարի և ավագանու գործունեության կարգավորում՝ ծառայողական տեսանկյունից: Այսինքն, բացառել համայնքում իրականացվող համայնքի ավագանու ձևական ընտրությունները, ինչպես նաև ավագանու ձևական նիստերը՝ ի օգուտ համայնքի ավագանու անձնական շահերի:

Համայնքի ֆինանսների կառավարման թափանցիկությունը և համայնքի բյուջեի ձևավորման հրապարակայնությունը պետք է լուծել նույն ճանապարհով. համայնքի բնակիչներին ավագանու նիստերի մասնակցությանը առանց խոչընդոտման թույլտվության, ինչպես նաև բոլոր համայնքների բյուջեների ձևավորման գործընթացի տպագրում շրջանային թերթերում կամ համայնքի կազմով ժողովների հրավիրում:

Օրենքով սահմանված պարտադիր լիազորությունների իրականացման վերահսկողությունը պետք է հստակեցվի և դրվի տարածքային կառավարման համապատասխան ստորաբաժանման վերահսկողության վրա, որոնք էլ իրենց հերթին պետական բյուջեի քննարկման ընթացքում հաշվետվություն ներկայացնեն տվյալ համայնքին տրամադրված միջոցների և այդ միջոցների ծախսման մասին:

Ներքին առևտրի ինստիտուտի կայացումը իրենից ենթադրում է համայնքային բյուջեի կառավարման վերաբերյալ հաշվետվություններ և այդ հաշվետվությունների ներկայացումը համայնքի ավագանու քննարկմանը:

Բնակարանային-կոմունալ տնտեսության ծառայությունների բավարար մակարդակով իրականացումը ենթադրում է այդ գործունեությունն իրականացնող մարմինների լիազորությունների հստակեցում, ինչպես նաև լիազոր մարմնի կողմից վերահսկողություն, որն էլ կստիպի կանոնակարգված աշխատանք և պատասխանատվության զգացում՝ աշխատանքի չկատարման պարագայում վրա հասնելու դեպքում:

ՔԿԱԳ կողմից գանձվող պետական տուրքերի տեղայնացում: Այդ ծառայության համար պետական տուրքը գանձվում է հոգուտ այն համայնքի (քաղաքային), որտեղ գտնվում է ՔԿԱԳ մարմինը: Ուստի նպատակահարմար կլինի, որ պետական տուրքի գանձման գումարը մտցնվի այն համայնքի բյուջեն, որ համայնքում գրանցում ունեն տվյալ տուրքը վճարողները, իսկ տարբեր համայնքներում գրանցման դեպքում՝ հաշվի առնել նրանց նախօրոք համաձայնությունը:

Կանանց ինտեգրումը քաղաքական գործունեությանը: Կարևոր է տեղական ինքնակառավարման համակարգում ընտրվելուն ցանկություն ունեցող կանանց սակավության հարցն: Այսպես, 2015թ. սեպտեմբերի 13-ին կայացած ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընտրված համայնքի ղեկավարներից կին-տղամարդ հարաբերակցությունն հետևյալն էր՝ 144 համայնքում կայացած ՏԻՄ ընտրությունների միայն 6 համայնքում է ընտրվել իգական սեռի ներկայացուցիչ:

Կանանց քաղաքական մասնակցության խթանման համար պետք է կատարվեն որոշակի խումբ գործողություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալ կարևոր առաջարկները.

1. Կնոջ և տղամարդու իրավահավասարության մասին իրազեկում,
2. Կնոջ քաղաքական մասնակցության վերաբերյալ կարծրատիպերի հաղթահարում, մասնավորապես, ՏԻՄ մականդակում, ՏԻՄ աշխատող կին գործիչների նկատմամբ
3. Կին առաջնորդի դրական կերպարի ստեղծում, մասնավորապես, համայնքի կին ղեկավարների, ավագանու կին անդամների դրական կերպարի ձևավորում:

Համայնքի ղեկավարի ընտրության կարգի որոշումը: Այս հիմնախնդիրը, մեր կարծիքով, համայնքի կարևորագույն հիմնախնդիրն է և դրա համար ունեմ համայնքի ղեկավարի ձևավորման որոշակի տարբերակներ.

1. Համայնքի ղեկավարի ընտրության ներկայիս ձևը, սակայն մեկ տարբերությամբ՝ բացառելով անընդհատությունը, որպեսզի չստեղծվի համայնքի ղեկավարի պաշտոնի լճացում,
2. Համայնքի ղեկավարի անուղղակի ընտրություն, այսինքն համայնքի ղեկավար ընտրվի համայնքի ավագանու կողմից առավել ձայն հավաքած անձը
3. Համայնքների խոշորացման դեպքում համայնքի ղեկավար ընտրվի հատուկ կարգով, այսինքն եթե խոշորացման արդյունքում 3 համայնք (Ա, Բ, Գ) միացել են, ապա առաջին ընտրություններին թեկնածուները լինեն միայն կոնկրետ «Ա» համայնքից և այդպես շարունակ՝ «Բ» և «Գ» համայնքներից, որպեսզի մեկ համայնքի ղեկավարը միայն ուշադրություն չդարձնի այն համայնքին, որի բնակիչն է եղել նախքան համայնքների խոշորացումը: Այդ հերթականության պահպանումը կարող է ավարտվել այն ժամանակ, երբ խոշորացման արդյունքում միացած բոլոր համայնքներից առաջադրված լինեն թեկնածուներ:

ՀՏԴ343.6

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑՆԵԼ ԵՎ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԵԼ

*Լիանա Սահակյան
Հովհ. Թումանյանի անվան
Վանաձորի պետական համալսարան
պատմաաշխարհագրական ֆակուլտետ
«Իրավագիտություն» բաժին 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Էդուարդ Գյունաշյան
Էլ. հասցե. - sahakyanliana1998@mail.ru*

Բանալի բառեր՝ Ինքնասպանության հասցնել, ինքնասպանության հակել, քրեական օրենսգիրք, հորդորել, խաբել, սպառնալիք, դաժան վերաբերմունք:

Ключевые слова: доведение до самоубийства, склонение к самоубийству, уголовный кодекс, уговаривать, обманывать, угрожать, жестоко обращаться.

Key words: bringing to suicide, declination to suicide, criminal code, persuading, deceiving, threatening, cruel treatment.

Ամփոփում

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություն ասելով՝ հասկանում ենք հանրության համար վտանգավոր այն արարքները, որոնք ուղղված են մարդուն կյանքից զրկելուն կամ նրա առողջությանը վնաս պատճառելուն: Սույն հոդվածում կդիտարկվեն ինքնասպանության հասցնելու և ինքնասպանության հակելու հասկացությունները:

*Лиана Саакян
Ванадзорский государственный университет
Факультет истории и географии
Юриспруденция 3-ий курс
Научный руководитель – Эдуард Гюнашян
sahakyanliana1998@mail.ru*

ДОВЕДЕНИЕ ДО САМОУБИЙСТВА И СКЛОНЕНИЕ К САМОУБИЙСТВУ

Резюме

Говоря о преступлении против жизни и здоровья в соответствии с конкретной частью Уголовного кодекса Республики Армения, мы понимаем опасные для общества действия, которые направлены на гибель людей или вред его здоровью. В этой статье будет рассмотрена взаимосвязь между доведением до самоубийства и склонением к самоубийству.

*Liana Sahakyan
Vanadzor State University
Faculty of History and Geography
Jurisprudence 3rd year
Supervisor - Eduard Gunashyan
sahakyanliana1998@mail.ru*

BRINGING TO SUICIDE AND INCITING SUICIDE

Summary

Speaking about the crime against life and health in accordance with the specific part of the Criminal Code of the Republic of Armenia, we mean actions that are dangerous to society, which are aimed at the death of people or harm to their health. This article will examine the relationship between bringing to suicide and declension to suicide.

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունն ասելով՝ հասկանում ենք հանրության համար վտանգավոր այն արարքները , որոնք ուղղված են մարդուն կյանքից զրկելուն կամ նրա առողջությանը վնաս պատճառելուն: Մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունն առավել նպատակահարմար է բաժանել երեք խմբի . 1.կյանքի դեմ ուղղված հանցագործություններ 2. առողջության դեմ ուղղված հանցագործություններ 3. հանցագործություններ , որոնք վտանգի տակ են դնում կյանքը և առողջությունը :

Կյանքի դեմ ուղղված հանցագործությունների հետևանքները ենթական չեն վերականգնման կամ հատուցման : Մարդու կյանքը գերագույն արժեք է , իսկ դրա կորուստը՝ անդառնալի : Այդ իսկ պատճառով է , որ ՀՀ քրեական օրենսգրքում բոլոր հանցագործություններից օրենսդիրը հատուկ մասի 1-ին գլխում ամրագրել է հենց կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները : Վերջինիս թվին են պատկանում 1. Սպանություն 104-րդ , 2. Անզգուշությամբ մահ պատճառելը 109-րդ 3.ինքնասպանության հասցնելը 110-րդ 4. Ինքնասպանության հակել 111-րդ հոդվածները:

Բնարկե, գոյություն ունեն սպանության տարբեր ենթատեսակներ ինչպես օրինակ՝ սպանություն ծանրացուցիչ և մեղմացուցիչ հանգամանքներում այսինքն որպես <<հասարակ սպանություն>> 104-րդ հոդվածի 1-ին մաս , սպանություն ծանրացուցիչ հանգամանքներում 104-րդ հոդվածի 2-րդ մաս , սպանություն մեղմացուցիչ հանգամանքներում 105-108 –րդ հոդվածներ : Անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի 110 և 111 –րդ հոդվածներին՝ ինքնասպանության հասցնելուն և ինքնասպանության հակելուն :

Ներկայումս բավականին հաճախ ենք լսում ինքնասպանների և նման կերպով կյանքին վերջ տալու դեպքերի մասին : Սա մի խնդիր է , որը պետական սահմաններ , ազգության և նույնիսկ տարիք չի հարցնում : 20-րդ դարի սկզբին ինքնասպանությունը համարվեց <<դարի հիվանդություն>> , << համաճարակ>> և կարելի է ասել ինքնասպանությունը գոյություն ունի այնքան ժամանակ , որքան մարդն է ապրում երկրի վրա և ինչպես ասել է ֆրանսիացի էքզիստենցիալիստ փիլիսոփա և քննադատ Ժան Պոլը . << Մարդը կենդանիներից տարբերվում է նրանով,որ կարող է ընդհատել իր կյանքն ինքնասպանությամբ: >> , և եթե ինքնասպանություն ասելով հասկանանք գիտակցված և հոժարակամ կյանքից հրաժարվել , այլ կերպ ասած մահվան ցանկություն , ինչպես նպատակ այլ ոչ թե , ինչ-որ նպատակին հասնելու միջոց , ապա մենք իզուր կփորձենք կենդանիների մեջ ինքնասպանություն փնտրել : Կենդանական աշխարհը այդպիսի երևույթ չգիտի , քանի որ նրանց հայտնի է <<գոհ>> ասվածը , բայց ոչ ինքնասպանությունը :

Ինքնասպանությունների հարցում հոգեբույժները բաժանվում են երկու խմբի : Առաջինները՝ ընդունելի են համարում այն կարծիքը , թե ինքնասպանություն կարող է կատարել միայն ու միայն հոգեկան խաթարման վիճակում հայտնված մարդը ,ընդ որում խանգարման արդյունքը կարող է լինել դանդաղ և աննկատ , իսկ 2-րդ խումբը գտնում է , որ ինքնասպանություն կարող է կատարել միանգամայն առողջ մարդը , եթե նա հայտնվում է հոգեկան ծանր իրավիճակում , որը , հոգեպես առողջ անձանց համար՝ ինքնասպանությունը ,սահմանում է որպես շարունակական դեզադապտացիայի կամ աֆֆեկտի արդյունքում այնպիսի գործողություն , որի դեպքում դիտարկվում է որպես իրավիճակից դուրս գալու ելք , դիմացինին պատճառելու միջոց , ուշադրություն գրավելու եղանակ , սակայն ոչ անգիտակից և անվերապահ ձգտելու դեպի մահը : Հենց կլինիկական հոգեբանները ապացուցեցին , որ սուիցիդը չի համարվում հոգեկան հիվանդություն և այն կարող է կատարել ինչպես հոգեկան հիվանդը , այնպես էլ հոգեպես լիովին առողջ անձը : Եթե նայենք հենց ինքնասպանության բառի արմատական տարբերությունը սպանությունից , ապա կտեսնենք , որ ի տարբերություն ինքնասպանությանը , սպանության բառի մեջ բացակայում է ինքնուրույնությունը կամ ասենք դժբախտ պատահարը , որտեղ գերիշխում է պատահականությունը , ուստի ինքնասպանությունը՝ որպես այդպիսին , քրեաիրավական խնդիր չէ , քանի որ այն ավելի շատ վերաբերում է հոգեբանության կամ բժշկության ոլորտներին , և , եթե ինքնասպանությունը , ինքնին , հանդես գար քրեաիրավական դաշտում , ապա այն , նախ և առաջ , կհակասեր ՀՀ քր. Օրենսգրքի անձնական պատասխանատվության սկզբունքին , որ

անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն անձամբ իր կատարած հանցանքի համար և քանի որ թե՛ տուժողը , թե՛ սուբյեկտը՝ այսինքն կատարողը, համարվում է հենց ինքնասպանը , ուստի խոսք անգամ չի կարող գնալ այդ հարցի շուրջ: Այլ հարց է , երբ անձը գնում է ինքնասպանության՝ մեկ այլ անձի քրեական օրենսգրքով արգելված որոշակի վարքագծի արդյունքի հետևանքով , ապա այս դեպքում հարցն անմիջապես տեղափոխվում է քրեաիրավական հարթություն . խոսքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հատուկ մասի 110-րդ հոդվածի՝ ինքնասպանության հասցնելուն և 111-րդ հոդվածի՝ ինքնասպանության հակելուն :

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հատուկ մասի 110-րդ հոդվածի համաձայն՝ ինքնասպանության հասցնելը

1. սպառնալիքի , դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությանը պարբերաբար նվաստանելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով :
2. Նույն արարքը , որը կատարվել է հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ՝ պատժվում է հինգ տարի ժամկետով :

Այս սահմանումից պարզ է դառնում , որ ինքնասպանության հասցնելը այնքանով է հանրորեն վտանգավոր , որ նախ՝ 1 . ոտնձգում է մարդու կյանքը և 2. բնութագրվում է որպես այլ մարդկանց արժանապատվությանը և հոգեկան վիճակի նկատմամբ ցինիկ վերաբերմունքով ու կարելի է հետևություն անել ,որ անմիջական օբյեկտը հենց մարդու կյանքի անվտանգությունն ապահովվող հասարակական հարաբերություններն են , իսկ լրացուցիչ օբյեկտը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի կատարողի՝ տուժողի պատիվն ու արժանապատվությունը :

Օրենսդիրը օբյեկտիվ կողմը նկարագրելիս հոդվածի դիսպոզիցիայում նշում է հետևյալ երեք եղանակները՝

1. սպառնալիք
 2. դաժան վերաբերմունք
 3. անձնական արժանապատվության պարբերաբար նվաստացումը:
- Հասկանալի այս հասկացություններից յուրաքանչյուրը :

Առաջին եղանակը , որի հետևանքով հնարավոր է , որ տուժողը գնա ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի դա սպառնալիքն է : Սպառնալիքը՝ մարդուն վախեցնելն է , ընդ որում օրենսդիրը չի նշում այն արարքները , որոնց հնարավոր է համարել սպառնալիքի միջոց , ուստի չկա այնպիսի մի կոնկրետ արարք կամ չկա մի այնպիսի սպառնիչ ցանկ , որով կարելի է ավելի քան համոզված լինել , որ տվյալ արարքը ոչ այլ ինչ է , քան վնաս պատճառելու հնարավորությամբ տուժողին վախեցնելը : Ուստի , եթե արարքը որակվի որպես ինքնասպանություն հասցնել , կարևոր չէ , թե ինչպիսի գործողություններով է սպառնում տուժողին : Եթե նայենք իրավ , գիտ , դոցենտ Սերգեյ Առաքելյանի կողմից տրված մեկնաբանություններին , ապա ինքնասպանության հասցնելու օրինակ կհանդիսանա՝ առողջությանը վնաս հասցնելը , տեղեկատվության նյութերի բացահայտումը (ասենք գոհր ցանկացել է գաղտնի պահել) , աշխատանքի հեռացումը , ամուսնալուծությունը , տնից վտարումը , ապրուստից զրկելը , տան հրդեհը կամ այլ գույքի ոչնչացումը և այլն : Արարքը կվորակվի 110-րդ հոդվածով նույնիսկ այն դեպքում , եթե գործադրվող սպառնալիքը ոչ թե տուժողին է ուղղված , այլ նրա մերձավորների բարեկեցության , բարի համբավի հետ և առաջ է բերում ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի , որին կարող է վառ օրինակ հանդիսանալ ասենք , երբ զավակին սպանում են նրա մոր մասին անվանարկո տեղեկությունների հրապարակմամբ և նա դիմում է ինքնասպանության : Սպառնալիքը միշտ

պետք է կոնկրետ բնույթ կրի և տուժողի կողմից էլ ընկալվի որպես իրական , հնարավոր, իրեն որոշակի պատճառելու ունակ :

2.Դաժան վերաբերմունք հասկացությունը բավականին լայն , կարևոր և լուրջ հասկացություն է : Այն իր մեջ ներառում է և՛ ֆիզիկական , և՛ հոգեկան տառապանքներ պատճառող բազմաթիվ արարքներ , որը կարող է արտահայտված լինել ինչպես ակտիվ գործողություններով օրինակ՝ ծեծը , խոշտանգումը , ազատությունից ապօրինի զրկելը , հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի պահելը , այնպես էլ անգործությամբ օրինակ՝ հագուստից կամ աշխատանքից զրկելը , սննդամթերքից տևականորեն զրկելը և այլն : Դաժան վերաբերմունքի դեպքում օրենքը չի նախատեսում այս արարքների սխտեմատիկությունը՝ պարբերականությունը , բայց շատ կարևոր է , որ հենց այդ դաժան վերաբերմունքի պատճառով է ,որ տուժողը գնացել նման քայլի՝ այսինքն՝ պետք է առկա լինի պատճառահետևանքային կապը արարքի և հետևանքի միջև :

Այս հանցագործության հետ հնարավոր է նաև հողվածների համակցություն Օրինակ՝ եթե ինքնասպանության կամ ինքնասպանության փորձ հասցվող տուժողի նկատմամբ դաժան վերաբերվումը դրսևորելու ընթացքում նրա առողջությանը դիտավորությամբ կամ անզգուշությամբ վնաս է պատճառվում , ապա արարքը ենթակա է որակման համապատասխան հողվածներով նախատեսված հանցագործությունների համակցությամբ :

3.Եվ վերջին եղանակը , որի միջոցով հնարավոր է ինքնասպանությունը կամ ինքնասպանության փորձը դա անձնական արժանապատվության պարբերաբար նվաստացումն է : Օրենսդիր հենց հողվածի մեջ նշելով <<պարբերաբար>> բառը նկատի է ունեցել , որ կարևոր է ոչ միայն արարքում պարտադիր լինի անձնական արժանապատվության նվաստացումը , այլև այն լինի պարբերաբար կատարված գործողություն այսինքն մարդուն նվաստացնելուն ուղղված երեք և ավելի կատարումը : Անձնական արժանապատվության պարբերաբար նվաստացնելը կարող է լինել օրինակ՝ վիրավորանքներով , զրպարտություններով , տուժողի ֆիզիկական թերությունների ցինիկ ծաղրանքով , անարդար քննադատություններով , նույնիսկ աշխատանքային հարաբերությունների ոլորտում ավելորդ բժախնդրության ցուցադրումով : Այն դեպքում անձը ինքնասպանության նախապատրաստական բնույթի գործողություններ է ձեռնարկել և սահմանափակվել է միայն դրանով նշված հողվածով պատասխանատվություն չի կարող առաջանալ: Այս դեպքում այն անձը, ով սպառնացել է , դաժան վերաբերմունք կամ անձնական արժանապատվությանը պարբերաբար նվաստացրել է ապա վերջինս քրեական պատասխանատվության ենթարկվում միայն այդ արարքների համար :

Ասպիտով այս երեք հատկանիշների համար շատ կարևոր են պատճառահետևանքային կապը և դրա համար պետք է հատուկ ուշադրություն դարձնել հացագործության առանձնահատկություններին , քանի որ մեկի համար այն կարող է հասցնել ինքնասպանության , մյուսի համար անտարբերության ,մյուսի համար վրեժխնդրության , իսկ մյուսի համար էլ ըմբոստության : Ու այս առումով հատկապես վճռորոշ նշանակություն ունի ինքնասպանության ուղղված գործողությունների նպատակաուղղված գիտակցումը տուժողի կողմից օրինակ՝ եթե սպառնալիքը , դաժան վերաբերմունքը ,

անձնական արժանապատվության պարբերաբար նվաստացումը կատարվել է երեխայի կամ անգործունակ մարդու , ապա հանցանք կատարած անձը կենթարկվի քրեական պատասխանատվության , ոչ թե 110-րդ հողվածով՝ ինքնասպանության հսցնելը , այլ 104-րդ հողվածով՝ սպանությամբ :

Այս հողվածի սուբյեկտիվ կողմի վերաբերյալ կան որոշակի հակասություններ . ՀՀ քր. Օրեսգիրքի 110-րդ հողվածում սուբյեկտիվ կողմ է դրսևորվում է անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ դրա փորձի հասցնելու վերաբերյալ : Մեղքի այս տեսակներից պարզ է դառնում , որ եթե անձը գիտակցում է համապատասխան եղանակով տուժողին ինքնասպանության հասցնելու հանգամանքը , նախատեսում դրա իրական հնարավորությունը կամ անխուսափելիությունը և ցանկանում է այդ հետևանքի առաջացումը արարքը պետք է որակվի ոչ թե որպես 110-րդ հողվածով , այլ 104-րդ հողվածով , անկախ այն հանգամանքից , որ անմիջականորեն չի մասնակցել

տուժողին կյանքից զրկելու գործընթացին , այսինքն առկա է սպանության միջնորդավորված կատարում , եթե հղում կատարել ՌԴ քրեական օրենսգրքի մեկնաբանություններին , որը լույս է տեսել 2003 թվականին մեկնաբանվում է նույն կերպ , բայց հղում կատարելով 2017 թվականի ՌԴ քրեական օրենսգրքի մեկնաբանություններին ճիշտ հակառակը . <<եթե արարքը կատարվել է ուղղակի դիտավորությամբ, ապա այն պետք է որակվի 104-րդ հոդվածով՝ այսինքն սպանություն>>, այդ տեսակետը սխալ է , քանի որ այն անձինք , ովքեր հակված են այս մտքին հաշվի չեն առնում սպանությունների և ինքնասպանության հասցնելու օբյեկտիվ կողմի տարբերությունները , քանի որ սպանությունը՝ ի տարբերություն ինքնասպանության հասցնելուն կա նրբություն՝ օբյեկտիվ կողմի մեջ . հանցագործը չի կատարում **անմիջականորեն** այնպիսի գործողություն , որը տուժողի մահանալու դեպքում կհամարվի սպանություն , որովհետև հենց տուժողն է իր կյանքին վերջ տալիս և ինքն է դեկավարում այն կատարման մեջ առաջնորդվելով իր գիտակցությամբ և կամքով :

Քննարկվող 110-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է , որ նույն արարքը , որը կատարվել է հացավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ : Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս , որ նյութական կախյալ վիճակը հիմնականում ստեղծվում է ամուսինների , ծնողների և զավակների , որդեգրողների և որդեգրվողների միջև:Կախվածության առկայության վերաբերյալ հարցը լուծելիս միշտ պետք է հիմնվել հանցավորի և տուժողի միջև գոյություն ունեցող փաստական հարաբերությունների բնույթի և բովանդակության վրա :

Ինքնասպանության հասցնելու սուբյեկտ կարող է հանդիսանալ 16 տարին լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձը :

<<Ինքնասպանության հակելու >> հասկացությունը օրենսդրի կողմից իրավական կարգավորում է ստացել , քանի որ ՀՀ-ում միայն 2007-2012թթ. ընթացքում արձանագրվել է տասից ավելի ինքնասպանության դեպքեր , որում կան բավարար հիմքեր ենթադրելու , որ դրանք եղել են տարբեր միջոցներով տվյալ անձանց մասնավորապես դեռահասների մեջ այդ քայլին դիմելու վճռականություն հարուցելու հետևանք , հետևաբար պատահական չէ , որ տվյալ արարքը օրենսդրի կողմից սահմանվել է ինքնուրույն հանցակազմով :

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հատուկ մասի 111-րդ հոդվածի համաձայն օրենսդիրը սահմանում է Ինքնասպանության հակելու սահմանումը , ըստ որի , հորդորելու , խաբեության կամ այլ միջոցով անձի մոտ ինքնասպանություն կատարելու վճռականություն հարուցելը , եթե անձն ինքնասպանությամբ կյանքին վերջ է տվել կամ ինքնասպանության փորձ է կատարել՝ պատժվում է ազատազրկմամբ երեք տարի ժամկետով :

Ինքնասպանության հակելու սուբյեկտ է հանդիսանում 16 տարի լրացած յուրաքանչյուր մեղսունակ ֆիզիկական անձ , սուբյեկտիվ կողմը պարզ է՝ դրսևորվում է միայն դիտավորությամբ : Օբյեկտ է հանդիսանում մարդու կյանքին անվտանգությունն ապահովվող հասարակական հարաբերությունները , իսկ տուժող կարող է հանդիսանալ յուրաքանչյուր մարդ : Օբյեկտիվ կողմը տրամաբանական է , որ այն բնութագրվում է միայն ակտիվ գործողություններով ,որտեղ , իհարկե պետք է առկա լինի պատճառահետևանքային կապը , իսկ այդ պատճառները նշված են հոդվածի դսպոզիցիայում՝ 1.հորդորել ,2. խաբել կամ 3.այլ միջոցներով անձի մոտ ինքնասպանություն կատարելու վճռականություն հարուցել :

Նախ հասկանանք թե օրենսդիրը ինքնասպանության ՀԱԿԵԼ ասելով ինչ է հասկանում՝ կատարել այնպիսի գործողություն , որը տուժողի մոտ կառաջացնի ինքնասպանության վճռականություն :

Հորդորել ասելով հասկացվում է տուժողին համոզիչ խոսքերով կամ տրամադրելով , հոժարեցնելով և այլ ձևերով անձի մոտ ինքնասպանություն կատարելու վճռականություն հարուցելը : Խաբեություն բառը ենթադրվում է հասկանալ այպես . դիտավորությամբ սուտ խոսքով թյուրիմացության՝ մոլորության մեջ գցելով , սուտ ասելու (ճշմարտությունը դիտավորությամբ թաքցնելու) միջոցով անձի մոտ ինքնասպանություն կատարելու վճռականություն հարուցումը : Եվ երրորդ պատճառը , որի հետևանքով հնարավոր է անձի մոտ ինքնասպանության վճռականություն հարուցել դա այլ միջոցոցներն են , իսկ այլ միջոց

ասելով կարելի է հասկանալ , բոլոր այն արարքները , որի հետևանքով անձի մոտ կառաջանա ինքնասպանության վճռականություն : Բնարկե <<այլ միջոցներ>>-ի մեջ չենք կարող հասկանալ սպառնալիքը , դաժան վերաբերմունքը կամ անձնական արժանապատվությանը պարբերաբար նվաստացումը , քանի որ այն որակվում է 110-րդ հոդվածով :

Այսպիսով , եթե հետևությունն անենք վերոգրյալից և տանենք համեմատություն ինքնասպանության հասցնելու և ինքնասպանության հակելու միջև , ապա կանենք մի պարզ ու շատ կարևոր եզրակացություն , որ ինքնասպանությունը ավելի հանրորեն վտանգավոր արարք է քան ինքնասպանությունն հակելը , ուստի իմ կարծիքով սխալ է թե՛ ինքնասպանության հասցնելու և թե՛ ինքնասպանության հակելու սանկցիան նախատեսել առավելագույնը 3 տարի ազատազրկում :

Նախ օրենսդիրը հասկանալով , որ ինքնասպանություն հասցնելը և ինքնասպանություն հակելը տարբեր հասկացություններ են դա վկայում է այն փաստը , որ ՀՀ քրեական օրենսգրքում այդ արարքները մեկ հոդվածում չեն նախատեսվում . 110-րդ ինքնասպանություն հասցնել և 111-րդ հոդված ինքնասպանություն հակել առանձին հոդվածներ , բայց նախատեսում է միևնույն քրեական պատասխանատվությունը , բացի դրանից , ինչպես գիտենք Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդվածների հաջորդականությունը համակարգված է ըստ հանրային վտանգավորության այտեղից պարզ է դառնում , որ օրենսդիրը գիտակցում է , որ ինքնասպանություն հասցնելը ավելի մեծ հանրային վտանգավորություն ունի , քան ինքնասպանություն հակելը : Ինքնասպանություն հակելու դեպքում , եթե սուբյեկտիվ կողմը դրսևորվել է ուղղակի դիտավորությամբ , ապա խոսք չի կարող գնալ 110-րդ հոդվածի մասին , արաքը որակվում է 104-րդ հոդված , անկախ այն բանից , որ արարքը չի կատարել ուղղակիորեն միջնորդավորված (տես՝ էջ 4-ում) քանի որ ինքնասպանության հասնցելու հոդվածի դիսպոզիցիայում հստակ նշվում է , թե արարքը ինչ սուբյեկտիվ կողմերով կարող է արտահայտվել այն է՝ անուղղակի դիտավորությամբ և անզգուշությամբ : Սահմանելով 110-րդ ինքնասպանություն հասցնելու և 111-րդ հոդված ինքնասպանություն հակելու յուրքանաչյուր եղանակի նշանակությունը կարելի է եզրակացություն անել , որ ինքնասպանություն հասցնելու դեպքում անձնական արժանապատվությունը պետք է լինի պարբերաբար (սխտեմատիկաբար) , իսկ այդ սխտեմատիկությունը իր մեջ ներառում է երեք և ավելի անգամ , իսկ ինքնասպանության հակելու՝ դեպքում նշված չէ նման բան : Այսինքն , ինչ է սա նշանակում , օրինակ , եթե տուժողի անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացում է կատարվել ասենք զրպարտությամբ կամ վիրավորանքով , ապա տուժողը մինչև ինքնասպանության գնալը հոգեբանական լուրջ ապրումներ է ունենում , սարսափելի հոգեվիճակում է գտնվում , իսկ թե մարդու հոգեկանը ինչպես է խանգարվում , որ անձը գնում է նման քայլի , կարծում եմ մեկնաբանության կարիք չունի , և այստեղ հարց չի կարող գնալ այն մասին , թե ինքնասպանության քայլին են գնում միայն հոգեկան խաթարման վիճակում հայտնված մարդը , քանի որ կլինիկական հոգեբանները ապացուցեցին , որ սուիցիդը չի համարվում հոգեկան հիվանդություն և այն կարող է կատարել ինչպես հոգեկան հիվանդը , այնպես էլ հոգեպես լիովին առողջ անձը , ուստի լիովին առողջ անձին վիրավորել և այնպես , որ նա ոչ միայն հոգական լուրջ ապրումներ ունենա այլ դրա հետևանքով գնալ ինքնասպանության կարծում եմ , որ համեմատելով ինքնասպանության հակելու հետ բավականին մեծ տարբերություն է տալիս , ուստի քրեական պատասխանատվությունը չպետք է միևնույնը լինի : Բնարկե , հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության են ենթարկում ոչ թե վրեժ լուծելու կամ նրան տանջելու այլ ուղղելու , բայց բերենք մեկ այլ հարցադրում : Համեմատելով այս երկու հոդվածները ու հասկանալով յուրաքանչյուրի եղանակները առանձին-առանձին հարց է առաջանում , իսկ այն դեպքում , եթե հանրորեն վտանգավոր արարքը հորդորելու , խաբեության կամ ինքնասպանության վճռականություն հարուցելու այլ միջոցոցների այսինքն ինքնասպանության հակելու եղանակների հետ մեկտեղ դիմում է նաև սպառնալիքի , դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությանը պարբերաբար նվաստացումով (ինքնասպանություն հասցնելու եղանակները) , ապա տվյալ

դեպքում արարքը պետք է որակվի, որքան էլ, որ զարմանալի լինի, միայն 110-րդ հոդվածով : Այսինքն հանցանք կատարած անձը կատարի ինքնասպանության հակելու որևէ մի եղանակ 110-րդ հոդված , գումարած դրան ինքնասպանության հասցնելու եղանակներից մեկը՝ 111-րդ հոդված , ապա կենթարկվի պատասխանատվության 110-րդ հոդվածով՝ ընդամենը երեք տարի ժամկետով :

Քրեական պատասխանատվության վերաբերյալ ուսումնասիրություն կատարելով, այլ պետությունների քրեական օրենսգիրքը օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Քրեական օրենսգրքում ինքնասպանության հասցնելու սահմանումը լինելով նույնը, ինչպես մեր քրեական օրենսգրքում, սակայն քրեական պատասխանատվությունը եթե ՀՀ-ում նախատեսվում է երեք տարի ազատազրկում, ապա ՌԴ-ում պատժվում է ազատազրկմամբ, առավելագույնը հինգ տարի ժամկետով, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով, առավելագույնը յոթ տարի ժամկետով կամ առանց դրա, կամ ազատազրկմամբ, երկուսից վեց տարի ժամկետով, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, տարի կամ առանց դրա կամ ասենք Ուկրաինայում նախատեսվում է՝ հինգ տարի ազատազրկում :

Այսպիսով քննարկելով և մանրամասն ներկայացնելով ՀՀ քրեական օրենսգրքի ինքնասպանության հասցնելու և ինքնասպանության հակելու հոդվածների մեկնաբանությունը գալիս ենք մի պարզ և հստակ եզրակացության, որ ինքնասպանության հասցնելը առավել հանրային վտանգավորություն ունի, քան ինքնասպանության հակելը և իմ կարծիքով 110-րդ և 111-րդ հոդվածների քրեական պատասխանատվությունը ճիշտ կլինի, որ համաժեք չդիտվի :

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք հատուկ մաս (ԵՐԵՎԱՆ 2012)
2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ԵՐԵՎԱՆ 2017)
3. Комментарий уголовного кодекса РФ 2003
4. <http://stykrf.ru/110> (Уголовный кодекс РФ 2018)
5. <https://rospravosudie.com/law/%D0%A1%D1%82%D0%B0%D1%82%D1%8C%D1%8F%20%D0%A3%D0%9A%D0%A0%D0%A4>

ՀՏԴ94(479.243:55)

ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Աննա Գասպարյան
ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետ
քաղաքաքաղաքագիտություն 4-րդ կուրս
Էլ. հասցե՝ anngasp97@mail.ru

Բանալի բառեր՝ Արցախյան հակամարտություն, կարգավորման գործընթաց, տարածաշրջանային քաղաքականություն, միջնորդական նախաձեռնություն, արտատարածաշրջանային ուժային կենտրոններ, ռազմական գործողություններ, քաղաքական ու տնտեսական լծակներ, հիմնախնդրի խաղաղ կարգավորում:

Ключевые слова: Нагорно-карабахский конфликт, процесс урегулирования, региональная политика, инициатива посредничества, нерегionalные силовые центры, военные действия, политические и экономические рычаги, мирное урегулирование конфликта.

Keywords: The Nagorno-Karabakh conflict, settlement process, regional policy, the mediation initiative, the non-regional power centers, military actions, political and economic levers, peaceful settlement of the conflict.

Ամփոփում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը Հարավային Կովկասում ունի իր լուրջ և որոշիչ դերակատարությունը, բնականաբար նաև ներգրավված է տարածաշրջանում առկա կոնֆլիկտների մեջ և շահագրգռված է դրանց լուծմամբ, ուստի կարևոր է նաև ԻԻՀ-ի պաշտոնական դիրքորոշման վերլուծությունն ու արժևորումը Արցախյան հակամարտության կարգավորման և միջնորդական նախաձեռնողականության մեջ: Այս հոդվածում ներկայացված է Իրանի Իսլամական Հանրապետության պաշտոնական դիրքորոշումը Արցախյան հակամարտության նկատմամբ, նրա միջնորդական առաքելության փորձերը և Իրան-Ադրբեջան հարաբերությունների որոշակի վերլուծությունը Արցախյան հիմնախնդրի կտրվածքով:

Анна Гаспарян
АрГУ, факультет истории
И Права, политология 4-ый курс
Эл. адрес: anngasp97@mail.ru

ПОЗИЦИЯ ИРАНА ПО НАГОРНО-КАРАБАХСКОМУ КОНФЛИКТУ В ПОСЛЕДНИЙ ПЕРИОД

Резюме

Учитывая тот факт, что Исламская Республика Иран имеет свою серьезную и решающую роль на Южном Кавказе, она также вовлечена в региональных конфликтах и заинтересована в их решении, поэтому важно проанализировать и оценить официальную позицию ИРИ в урегулировании нагорно-карабахского конфликта и в инициативах посредничества. В этой статье описывается официальная позиция Исламской Республики Иран в последний период конфликта в Арцахе (Нагорном-Карабахе), его попытки посредничества и конкретный анализ ирано-азербайджанских отношений по арцахскому (карабахскому) вопросу.

Anna Gasparyan
ASU, The Faculty of History and Law, Political science 4th year
E-mail: anngasp97@mail.ru

IRAN'S POSITION ON THE NAGORNO-KARABAKH(ARTSAKH) CONFLICT IN THE RECENT PERIOD

Summary

Taking into account the fact that the Islamic Republic of Iran has a serious and decisive role in the South Caucasus, it is also involved in regional conflicts and is interested in solving them, so it is important to analyze and assess the official position of the Islamic Republic of Iran in the settlement of the Nagorno-Karabakh conflict and in mediation initiatives. This article describes the official position of the Islamic Republic of Iran in the last period of Artsakh (Nagorno-Karabakh) conflict, its attempts at mediation and a concrete analysis of Iranian-Azerbaijani relations on the Artsakh (Nagorno-Karabakh) issue.

Իրանն ընկած է Ասիական մայրցամաքի հարավ-արևմտյան մասում և զբաղեցնում է Իրանական բարձրավանդակի ընդարձակ տարածքի 2/3 մասը, կիզիչ Միջագետքից մինչև Կոպետ-Դադի կատարները տարածվելով համարյա 1400 կմ, և Արաքսից մինչև Պակիստանի սահմանակից Բելուջիստան՝ մոտ 2250 կմ: Տարածքը կազմում է 1,648,195 կմ², որով նա զբաղեցնում է մեծությամբ 18-րդ տեղն աշխարհում: Բնակչության թիվը 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 80.853 900 մարդ, որով նա զբաղեցնում է 17-րդ տեղն աշխարհում: Իրանը ունի 9 հարևան պետություն՝ ցամաքով սահմանակից է՝ Հայաստանին, Թուրքիային, Ադրբեջանական Հանրապետությանը, Թուրքմենստանին, Աֆղանստանին, Պակիստանին, Իրաքին, իսկ ծովային հատվածով Օմանին և Արաբական Միացյալ Էմիրություններին: Ներկայիս նախագահն է Հասան Ռոհանին: Հոգևոր առաջնորդն է այաթոլլա Ալի Խամենեի:

Իրանի Իսլամական Հանրապետությունը Հարավային Կովկասի նորանկախ հանրապետությունների հետ իր միջպետական հարաբերությունների զարգացման հիմքում դնում է կրոնական, էթնո-մշակութային, աշխարհաքաղաքական և այլ կողմնորոշ-շիշերով: ԻԻՀ արտաքին քաղաքականության անդրկովկասյան ռազմավարության հիմնական խնդիրը եղել և մնում է տարածաշրջանային շրջափակումից դուրս գալու ձգտումը: Ընդ որում՝ կարևոր է նշել, որ ներկայումս Իրանի քաղաքական, մասամբ նաև մտավորական էլիտայի կողմից Ադրբեջանի Հանրապետությունն ընկալվում է որպես մի երկիր, որը իսլամական մի շարք երկրների՝ Իրաքի, Մաուդյան Արաբիայի, Պարսից ծոցի միապետությունների, Աֆղանստանի և Թուրքիայի հետ համատեղ կազմում է իսլամական պետությունների մի շղթա, որը որոշակիորեն նպաստում է Իրանի մեկուսացման հաղթահարմանը:¹ Ներկայումս ԻԻՀ կողմից ԱՀ-ի նկատմամբ իրականացվող քաղաքական ռազմավարությունն աներկբայորեն վկայում է, որ չնայած մի շարք բարդությունների և խոչընդոտների՝ Թեհրանը եռանդուն ջանքեր է գործադրում իր ազդեցությունը, ավելին՝ քաղաքական ներկայությունն ԱՀ-ում ամրապնդելու համար:²

Արցախյան հիմնախնդիրը տարածաշրջանի ամենաբարդ հակամարտություններից է: Վերջինս վաղուց դուրս է եկել երկկողմ և տարածաշրջանային մակարդակից՝ իր վրա սևեռելով տարածաշրջանային ու միջազգային ուժային կենտրոնների ուշադրությունը: Հենց այս հանգամանքը, ինչպես նաև տարածաշրջանում վերջիններիս շահերի բախումն ավելի է բարդացնում հիմնախնդրի կարգավորումը՝ ժամանակի ընթացքում ավելի աղոտ դարձնելով դրանում խաղաղ կարգավորման ձևաչափ գտնելու հեռանկարները: Մրան գումարվում է նաև Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությունն ու էներգոդրարների՝ ռազմական արդյունաբերության վրա ծախսելու փաստը: Չնայած այս ամենին՝ բանակցող կողմերը դեռևս ամբողջությամբ չեն սպառել հիմնախնդիրը խաղաղ ճանապարհով կարգավորելու հեռանկարը, իրացված չեն բոլոր հնարավորությունները: Պաշտոնական Թեհրանը

¹ Шевелев В., Внешняя политика современного Ирана: Геополитические интересы на Кавказе и юге России. 22.05.2004, <http://kavkazonline.ru>

² Բայբուրդյան Վ., Իրան- Ադրբեջան. Հարևաններ՝ թե աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախտանքներ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ. Հ. XXII, Ե., 2003, էջ 35

մահմեդական այն քիչ երկրների թվին է պատկանում, որը կառուցողական չեզոք դիրքորոշում ունի Արցախյան հակամարտության հարցում և հարկ եղած դեպքում քննադատում է Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությունը: Հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացում ներգրավվածություն ունենալու ցանկություն պաշտոնական Թեհրանը հայտնել է դեռևս արցախյան պատերազմի տարիներին: Սակայն, պայմանավորված Արևմուտքի հետ ունեցած քաղաքական խնդիրների հետ, Իրանը հնարավորություն չի ունեցել մեծացնել իր դերակատարությունը տարածաշրջանում, այդ թվում՝ Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում: Լինելով էներգոռեսուրսներ արտահանող պետություն՝ Իրանի համար կարևորվում է տարածաշրջանում խաղաղության պահպանումը: Իրանը ձգտում է հավասարապես հարաբերություններ ունենալ պաշտոնական Բաքվի ու Երևանի հետ: Հայաստանն Իրանի համար այն քիչ երկրներից է, որի հետ վերջինս չունի քաղաքական բնույթի հակասություններ: Ադրբեջանը Իրանի համար կարևորվում է որպես շիա մահմեդական պետություն:

Մյուս կողմից էլ, Իրանում ապրում են ավելի քան 10 միլիոն էթնիկ ադրբեջանցիներ: Այս փաստը հաճախ ստիպում է պաշտոնական Թեհրանին դիվանագիտական մակարդակով ավելի մեծ ուշադրություն արժանացնել Ադրբեջանի հետ հարաբերություններին: 1992թ Իրանը փորձեց միջնորդություն իրականացնել Արցախյան հիմնախնդրում: Դա պայմանավորված էր ինչպես իր հյուսիսում անկայունության մթնոլորտի վերացման պահանջով, այնպես էլ՝ Իրանում ապրող ադրբեջանցիների պահանջները բավա-բարելու հրամայականով: 1992թ. Ռազմական գործողություններում հայկական կողմի հաջողություններից հետո Թավրիզում և այլ ադրբեջանաբնակ քաղաքներում սկսեցին տարածվել թուրքիկներ, որոնցով կոչ էր արվում կովել Ադրբեջանի համար:¹ Հետևելով այդ կոչերին, իրանաբնակ ադրբեջանցիները մեկնում էին Ադրբեջան և գնում էին պատերազմել հայերի դեմ: Փաստորեն, Արցախյան հիմնախնդրում միջնորդական առաքելություն իրականացնելիս Իրանի գերխնդիրն էր առաջին հերթին ապահովել անվտանգությունը սահմանի երկայնքով, իսկ հետո՝ իր ներկայությունը Անդրկովկասում: Հիմնախնդրում միջնորդելիս Իրանը հնարավորություն ուներ նաև իրացնելու աշխարհաքաղաքական ավելի լայն շահեր: Նախ, դրանով փորձ էր արվում կասեցնել թուրքական գործոնի ուժեղացումը տարածաշրջանում հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1992թ. հունվարին Ադրբեջանը ռազմավարական բնույթի պայմանագիր էր ստորագրել Թուրքիայի հետ: Մյուս կողմից էլ, արդիական էր դարձել Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցը, իսկ տարածաշրջանում ամրապնդվելը նրան լրացուցիչ խաղաքարտեր կտար այս հարցում: Իրանի հյուսիսային սահմաններում իրադրության անընդհատ փոփոխման պայմաններում, Իրանը չէր կարող մնալ որպես դիտորդ, քանի որ վտանգվում էին նրա անմիջական շահերը: Արցախյան հիմնախնդրի շուրջ Իրանի և Ռուսաստանի շահերը որոշ չափով համընկնում էին: Առաջին հերթին դա վերաբերվում է անդրկովկասյան տարածաշրջանում արևմտյան ու թուրքական ազդեցության տարածմանը խոչընդոտելուն ու ռազմական գործողությունների կանխարգելմանը: Ի սկզբանե Իրանի դիրքորոշումը հիմնված էր սահմանների անձեռնմխելիության սկզբունքի վրա: Այսինքն պահանջները, որոնք հիմնված էին պատմական փաստերի վրա, ըստ որոշ իրանցի պաշտոնյաների ծանրակշիռ չէին համարվում: Նրանց կարծիքով նմանատիպ պահանջներն ու փաստարկները կարող են բերել անվերջանալի հակամարտությունների ամբողջ տարածաշրջանով մեկ: Այն ժամանակ Իրանում Հայաստանի դեսպան Վ. Բայբուրդյանի խոսքերով Իրանի դիվանագետները միայն հաստատում էին սահմանների անձեռնմխելիության սկզբունքը՝ մերժելով պատմա-կան ու իրավական պահանջները. ի վերջո՝ դա բերեց նրան, որ իրավիճակը ավելի բարդացավ: Հասկանալով ու տեսնելով դա՝ Իրանը փոխեց իր դիրքորոշումը և ձևակերպեց այն հետևյալ կերպ. **«Իրանը կողմնակից է դարաբաղյան հիմնահարցի արագ, արդար և կողմերին բավարարող լուծմանը»:**

¹ Բալայան Ս., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ., Երևան, 2004, էջ 38

1992թ.փետրվարի 28-ին Իրանի արտգործնախարար Ա.Վելայեթին ժամանեց Երևան, իսկ այնուհետև՝ Բաքու: Մարտի 20-ին Երևան ժամանեց Իրանի փոխարտգործ-նախարար Մ. Վալեզին, ով ներկայացրեց, որ արդեն նախատեսվում էր կրակի դադարեցումից անմիջապես հետո դիտորդների, այդ թվում՝ իրանական ներկայացուցիչների տեղակայում հակամարտության գոտում: Իրանն առաջարկում էր կնքել զինադադար մեկ շաբաթով, իրականացնել ապաշրջափակում, փոխանակել գերիներին, իսկ այնուհետև՝ սկսել բանակցություններ Իրանի ու Ռուսաստանի մասնակցությամբ:¹ Սակայն հայկական կողմի համար անընդունելի էր բանակցություններում Արցախի կարգավիճակի վերաբերյալ իրանական առաջարկը: Վերջինս առաջարկում էր, որ Արցախը հանդես գա դիտորդի կարգավիճակով՝ այնտեղ ապրող ադրբեջանական համայնքի հետ միասին: ² Մայիսի 8-ին Իրանի նախագահ Աքբար Հաշեմի Ռաֆսանջանին, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար, մեջլիսի ղեկավար Յադուր Մեհմեդովը Իրանում Ռուսաստանի դեսպանի ներկայությամբ Թեհրանում ստորագրեցին համատեղ հայտարարություն: Հայտարարությունում կողմերն իրենց կամքն ու պատրաստակամությունն էին հայտնում հիմնախնդրի խաղաղ կարգավորման վերաբերյալ, նախատեսվում էր միջազգային, այդ թվում՝ ԵԱՀԽ դիտորդների տեղակայում հակամարտության գոտում:³ Չնայած այս հայտարարությունը հակամարտության կարգավորման վերաբերյալ որևէ կոնկրետ արդյունք չէր, այն սկսված բա-նակցային գործընթացի առաջին դրական տեղաշարժերից էր: Սակայն այս գործընթացը դատապարտված էր ձախողման: Հայտարարության ստորագրման օրը համընկավ հայկական ուժերի կողմից Շուշիի ազատագրման օրվա հետ: Մյուս կողմից էլ, մայիսին Ադրբեջանում նախագահ դարձավ Ա.Էլչիբեյը, ով պրոթուրքական քաղաքականության կողմնակից էր և շեշտը դրել էր ռազմական ճանապարհով հակամարտության կարգավորման վրա: Ադրբեջանի քաղաքական ղեկավարներից շատերը բացահայտ մեղադրանքներ էին հնչեցնում Թեհրանի հասցեին՝ նրան մեղադրելով տարածքների կորստի և հայկական կողմին օգնելու մեջ: Իրանի միջնորդական նախաձեռնությունը պայմանավորված էր առաջին հերթին իր անվտանգությունն ապահովելու և ամբողջ Անդրկովկասյան տարածաշրջանով մեկ իր ազդեցության վերադարձման ձգտումով, որը իմիջայլոց Իրանի համար ունի կենսական կարևոր նշանակություն: Իրանի աշխարհագրական շահերի տեսանկյունից ձեռնադրել էր Ադրբեջանի հաղթանակը, սակայն Հայաստանի հաղթանակն էլ կլինեք Իրանի համար անցանկալի, որովհետև երկու պետությունների հզորանալու դեպքում էլ Իրանը ռազմավարական առումով նոր մարտահրավեր կստանար: Հատկապես դա վերաբերում է Ադրբեջանին, հաշվի առնելով ներքին գործոնը:

Իրանի միջնորդական առաքելության հաջող ավարտը ձեռնադրել էր տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժային կենտրոններին: Ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ ԱՄՆ-ն չէին ցանկանում տարածաշրջանում Իրանի դերակատարության բարձրացումը: Պենտագոնը ուղղակի ճնշումներ էր գործադրում պաշտոնական Երևանի և Բաքվի վրա, որպեսզի նրանք հրաժարվեն Իրանի մատուցած ծառայություններից: Տարածա-շրջանում ԱՄՆ-ի հակաիրանական քաղաքականության վառ վկայությունն է նախկին ԽՍՀՄ երկրների հետ ԱՄՆ ռազմավարության մշակող Ստրոուք Տելբոտի՝ Անդրկովկասի երկրների մասին 1998թ. Կոնգրեսում հնչեցրած ելույթը. <<Մենք շարունակում ենք տարա-ծառայանի երկրներին հետ պահել Իրանի հետ սերտ կապեր զարգացնելուց: Ավելին, մենք թույլ չենք տա

¹ Բեգիջանյան Է., Իրանա-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Երևան, 2001, էջ 54

² Балаян Т., Карабахский конфликт: перемирие на долгосрочную перспективу, << Центральная Азия и Кавказ >> №5 (29), Швеция, 2004

³ Kazimirov V., Peace to Karabakh, Moscow, 2014, pp. 463-464

տարածաշրջանի որևէ երկրի այնտեղ քաղաքական կամ տնտեսական հեգեմոն դիրքեր զբաղեցնել: Մենք կշարունակենք աշխատել Կովկասի բոլոր երկրների հետ, որպեսզի կանխենք Իրանի ազդեցության աճը տարածաշրջանում»:¹

Պատերազմական գործողությունների ընթացքում Իրանի վերջին արձագանքը հիմնախնդրի առնչությամբ եղել է 1993թ. հուլիսին, երբ հայկական ուժերի կողմից ազա-տագրվեց Ակնան: Պաշտոնական Թեհրանը մեղադրեց հայկական կողմին նվաճողա-կան քաղաքականության մեջ: Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Քամենեին պաշտոնական այցով մեկնեց Բաքու, որտեղ իր ելույթում մեղադրեց հայերին մահմեդականներին ճնշելու քաղաքականության մեջ:²

Սա եղել է Իրանի կողմից Արցախի և Հայաստանի հասցեին հնչած վերջին կոշտ արտահայտությունը, թեպետ իրանական դիվանագիտությունը շարունակում է գործածության մեջ թողնել միջազգայնորեն ընդունված սահմանների անխաթար պահպանման վերաբերյալ իր բանաձևը:³ Չնայած պաշտոնական մեղադրանքներին, նույն Ալի Քամենեին մեծ ջանքեր էր գործադրել Իսլամական Կոնֆերանսի գազաթնաժողովներում, որպեսզի Արցախյան հիմնախնդիրը Ադրբեջանի ու Թուրքիայի ակտիվ ջանքերով չընդունվի որպես կրոնական հակամարտություն: 2016թ. ապրիլին Արցախի և Ադրբեջանի շփման գծում ռազմական լայնամասշտաբ գործողությունների ընթացքում Իսլամական Կոնֆերանսի հերթական գազաթնաժողովում այն բանից հետո, երբ Թուրքիան ու Ադրբեջանը սկսեցին խոսել հայերի կողմից ադրբեջանական տա-րածքների << գրավման >> մասին, Իրանի նախագահ Հասան Ռոհանին իր ելույթում նշեց, որ յուրաքանչյուր իսլամական պետություն իր ներքին կամ հարևանների հետ ունեցած խնդիրները չպետք է դարձնի Իսլամական Կոնֆերանսի գազաթնաժողովների քննարկման առարկա:

Եվս մի հետաքրքիր փաստ. 2011թ. պաշտոնական Թեհրանը հրաժարվեց միջանցք տրամադրել ադրբեջանական զինուժին իր տարածքով՝ Արաքս գետի երկայնքով, զորաշարժ կատարել դեպի Ֆիզուլի, Ջեբրայիլ և Ջանգելան: Ինչպես հաղորդում է ադրբեջանական << Զոօ>> թերթը, այդ բանակցությունները տեղի են ունեցել 2010թ. աշնանը Բաքվում և իրանական կողմի մեղավորությամբ այն անհաջողություն կրեց: Ռազմական միջանցք տրամադրելու փոխարեն ադրբեջանական կողմը երաշ-խավորում է Իրանին լրիվ չեզոքություն պահպանել Իրանի դեմ Արևմուտքի հետ պատերազմի դեպքում: ⁴

2015թ. ամռանը <<միջուկային համաձայնագրի>> ստորագրումից և ընթացիկ տարվա հունվարից Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցների չեղարկման գործընթացի մեկնարկից հետո Իրանն ինտենսիվորեն զարգացնում է հարաբերությունները Հայաստանի ու Ադրբեջանի հետ՝ չմոռանալով ժամանակ առ ժամանակ հիշեցնել Արցախյան հիմնախնդրում իր միջնորդական անհրաժեշտության մասին: 2016թ. ապ-րիլի սկզբին արցախա-ադրբեջանական շփման գծում ռազմական գործողությունների ակտիվացման պայմաններում պաշտոնական Թեհրանի առաջարկները սկսեցին ավելի առարկայական տեսք ստանալ՝ կոնկրետ միջնորդական ծառայությունների առաջարկների տեսքով: Թեհրանը Մոսկվայի հետ բանակցություններում նույնպես շեշտադրումներ է անում տարածաշրջանում իր մեծ նշանակության վրա՝ փորձելով հասկացնել, որ առանց նրա մասնակցության հիմնախնդրի կարգավորումն ավելի քիչ հնարավորություններ ունի: Միննույն ժամանակ, Թեհրանին ձեռնտու է հայկական զինված ուժերի կողմից Իրանին

¹ Томас де Ваал, Грузия и ее дальние соседи. Государственность и безопасность : Грузия после <<революции роз>>, Лондон 2005. Стр. 381

² Зверев А., Спорные границы на Кавказе. 1988-1994, Москва. 1996. стр. 15

³ Բայբուրդյան Վ., Իրան-Ադրբեջան հարևաններ թե աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական ախոյաններ, << Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ>>, հ. XXII, Երևան, 2003, էջ 17

⁴ Баку пытался убедить Иран предоставить коридор для атаки на Карабах, но безуспешно <http://www.panarmenian.net/rus/news/59293/>

սահմանակից տարածքների նկատմամբ վերահսկողության պահպանումը, քանի որ դրանք յուրահատուկ բուժերի դեր կարող են կատարել Ադրբեջանի ու Իրանի հյուսիսի ադրբեջանաբնակ բնակավայրերի համար: Պաշտոնական Բաքուն էլ Իրանին չի ընդունում որպես ցանկալի միջնորդ վերջինիս մեղադրելով հայերին օգնելու և իսլամական համերաշխության գաղափարներից հրաժարվելու մեջ: Պաշտոնական Երևանը դեմ չէ իրանական միջնորդությանը, մինչդեռ այն ունի իր վտանգները ևս. արդյոք Իրանի հիմնական նպատակը չէ պահպանել ուժերի հավասարակշռությունը և հայ-ադրբեջանական հակամարտության երկարակեցությունը դրանով իսկ որևէ հեռանկար չթողնելով Ադրբեջանի համար զբաղվելու Իրանական Ադրբեջանի խնդրով: Մտահոգիչ է նաև 2016թ. հունիս ամսին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հայտարարությունն այն մասին, որ իր երկիրը զենք է գնում ոչ միայն Ռուսաստանից, Իսրայելից, Թուրքիայից, Բելառուսից, այլ նաև Իրանից:¹ Ամեն դեպքում պաշտոնական Երևանը պարտավոր էր բացատրություն ստանալ Թեհրանից: Ճիշտ է, միջազգային պատժամիջոցների չեղարկումը լավ հնարավորություններ է ընձեռել Իրանին առավել ակտիվ ներգրավվելու Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման միջնորդական բանակցություններում, սակայն կան բազմաթիվ խոչընդոտներ՝ կապված Արևմուտքի դիրքորոշման և տարածաշրջանում գերիշխանության համար Թուրքիայի և Ռուսաստանի միջև մրցակցության հետ:

Ի մի բերելով ստեղծված իրավիճակը, պարզ է դառնում, որ Արցախյան հակամարտության մեջ ներգրավվելու Իրանի փորձերը դեռևս որևէ էական հաջողության չեն հասել՝ պայմանավորված տարածաշրջանում առկա այլ ուժային կենտրոնների առկայությամբ և վարած քաղաքականությամբ, որը հակասում է Իրանի միջնորդական նախաձեռնություններին: Ամեն դեպքում Իրանի Իսլամական Հանրապետությունը զգույշ քաղաքականություն է վարում Արցախյան հիմնախնդրի կարգավորման հարցում՝ փորձելով պահպանել հավասարակշռությունը Հայաստանի և Ադրբեջանի հետ հարաբերություններում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բայբուրդյան Վ., Իրան- Ադրբեջան. Հարևաններ թե աշխարհաքաղաքական ու աշխարհատեսական ախտյաններ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ. Հ. XXII, Ե., 2003, էջ 35
2. Բալայան Ս., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994թթ., Երևան, 2004, էջ 38
3. Բեգիջանյան Է., Իրանա-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Երևան, 2001, էջ 54
4. Шевелев В., Внешняя политика современного Ирана: Геополитические интересы на Кавказе и юге России. 22.05.2004, <http://kavkazonline.ru>
5. Балаян Т., Карабахский конфликт: перемирие на долгосрочную перспективу, << Центральная Азия и Кавказ >> №5 (29), Швеция, 2004
6. Томас де Ваал, Грузия и ее дальние соседи. Государственность и безопасность : Грузия после <<революции роз>>, Лондон 2005. Стр. 381
7. Зверев А., Спорные границы на Кавказе. 1988-1994, Москва. 1996. стр. 15
8. Kazimirov V., Peace to Karabakh, Moscow, 2014, pp. 463-464
9. **Баку пытался убедить Иран предоставить коридор для атаки на Карабах, но безуспешно** <http://www.panarmenian.net/rus/news/59293/>
10. Сенсационное заявление Ильхама Алиева об Иране <http://vestikavkaza.ru/analytics/Sensatsionnoe-zayavlenie-Ilkhama-Alieva-ob-Irane.html>
Вестник Кавказа

¹ Сенсационное заявление Ильхама Алиева об Иране

<http://vestikavkaza.ru/analytics/Sensatsionnoe-zayavlenie-Ilkhama-Alieva-ob-Irane.html>

Вестник Кавказа

ՀՏԴ94(37)

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ (ՖԻՆԼԱՆԴԻԱ,
ԱՍԻԱԿԱՆ «ՎԱԳՐԵՐ» - ԱՐՑԱԽ)

Տիգրան Գաբրիելյան
Պատմության և իրավագիտության ֆակուլտետ
2-րդ կուրս Էլ. փոստ՝ mtigran96.97@gmail.com
Ղեկավար՝ փիլիսոփայության և քաղաքագիտության
ամբիոնի դասախոս Արթուրյան Ալվարդ

Բանալի բառեր՝ կրթություն, աղքատություն, բռնություն, բարեփոխում, ապագա, պետականաշինություն, զարգացում:

Ключевые слова: образование, бедность, насилие, реформа, будущее, государственное строительство, развитие.

Key words: education, poverty, violence, reformation, future, state building, development.

Ամփոփում

Կրթության դերը պետականաշինության գործում հսկայական է: Դա փոքր պետությունների միակ հաղթաթուղթն է արտաքին և ներքին անկայուն վտանգավոր իրավիճակներից խուսափելու համար: Արցախի հետագա զարգացման համար այն ունի վճռորոշ և կենսական դերակատարություն:

Тигран Габриелян
Факультет Истории и
Юриспруденции 2 Курс
Эл. почта - mtigran96.97@gmail.com

РОЛЬ ОБРАЗОВАНИИ В ГОСУДАРСТВЕННОМ СТРОИТЕЛЬСТВЕ(ФИНЛЯНДИЯ,АЗИАТСКИЕ <<ТИГРЫ>>-АРЦАХ)

Резюме

В государственном строительстве образование играет огромную роль. Для маленьких государств это единственный козырь против внешних и внутренних нестабильных ситуаций. Для дальнейшего развития Арцаха образование играет решающую и насущную роль.

Tigran Gabrielyan
Faculty of History and Law 2th year
E. mail - mtigran96.97@gmail.com

THE ROLE OF EDUCATION IN PUBLIC CONSTRUCTION (FINLAND, ASIAN <<TIGERS>> -ARTSAKH)

Summary

The role of education in the problem of state building is huge. This is the only trump of little countries to avoid the external and internal unstable dangerous situations. It has decisive and vital role for the future development of Artsakh.

Տգիտությունը մահացու հասարակական հիվանդություն է: Այն չբուժելու դեպքում բարդանում է և առաջացնում աղքատություն, բռնության աճ, տնտեսական ծանր վնասներ և այլն: Տգիտության պատճառով թե՛ համաշխարհային տնտեսությունը և թե՛ առանձին պետություններ կրում են հսկայական տնտեսական և մարդկային կորուստներ: Global peace index-ի տվյալներով 2017թ. համաշխարհային տնտեսության վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են բռնության հետ, կազմում են 13,6 տրլն. դոլար կամ համաշխարհային ՀՆԱ-ի 13,3 տոկոսը: Եթե բոլոր պետությունները 50 տոկոսով կրճատեն ռազմական բյուջեն,

ապա ավելացած միջոցներով կարող են փակել զարգացող պետությունների պետական պարտքերը, և մնացած միջոցներով ֆինանսավորել համամարդկային զարգացման ՄԱԿ-ի մի շարք ծրագրեր: Միայն Ռուսաստանի կրած վնասները, կապված բռնության հետ, հասնում է 354 մլրդ. դոլարի: Իսկ ինչի՞ հետևանք է բռնությունը: Իհարկե տգիտության: Տգետ մարդիկ պոտենցիալ բռնության ուժ կիրառողներ են և մեծ հավանականությամբ որպես հետևանք պատճառում են տնտեսական և մարդկային վնասներ: ՄԱԿ-ի տվյալներով աշխարհում մոտ 263 մլն. երեխա գրկված է դպրոց հաճախելու հնարավորությունից՝ այսինքն ամեն հինգերորդ երեխա չունի որևէ կրթություն: Այս ցուցանիշը վերջին տաս տարում անփոփոխ է մնացել: Այս տաս տարվա ընթացքում միջազգային հանրությունը չկարողացավ որևէ արդյունավետ քայլ կատարել վիճակը բարելավելու համար: Տգիտությամբ պայմանավորված բռնության դեպքեր են տեղի ունենում ամբողջ աշխարհում, ընդ որում պետական մակարդակի վրա ևս: Այսպես՝ Բահրեյնի քաղաքացի Նաբիլ Ռաջաբը դատապարտվեց հինգ տարվա ազատազրկման, միայն այն բանի համար, որ իր Թվիթերյան էջում գրել է Բահրեյնյան բանտերում կատարվող կտտանքների մասին: Պաղեստինյան 17-ամյա աղջկան մեղադրանք են առաջադրել միանգամից տասներկու կետերով՝ իսրայելցի զինվորին ապտակելու համար: Մալվադորում երիտասարդ կնոջը դատապարտել են երեք տարվա ազատազրկման՝ երեխան մահացած ծնվելու պատճառով:

Մշակութային, կրթական հետադիմության պատճառով այդ դեպքերը միանշանակ կշարունակվեն մինչև արդյունավետ քայլեր չձեռնարկվի: Արդի աշխարհի համամոլորակային խնդիրների մեծամասնությունը կարելի է լուծել միայն բնակչության կրթական մակարդակը բարձրացնելով: Նորաստեղծ և անկայուն պետության համար ինչպիսին Արցախն է, որակյալ կրթությունն ունի ուղղակի կենսական նշանակության: Չունենալով հարուստ բնական պաշարներ, մենք ունենք անսպառ մարդկային ռեսուրս, որը ճիշտ, գրագետ, օգտագործելու դեպքում զարգացումը և կայունացումը անխուսափելի կդառնա: Համաշխարհային պրակտիկայում բարեբախտաբար կան պետություններ, որոնք միայն մարդկային ռեսուրսի հաշվին կարողացան հաջողության հասնել և <<երրորդ աշխարհ>>-ից հասնել <<առաջին աշխարհ>>-ի:

Պետք է օրինակ վերցնենք Ֆինլանդիայից, Սինգապուրից, Հոնկոնգից, Հվ.Կորեայից, Թայվանից, որոնք բազմիցս ապացուցել են, որ կրթված, գրագետ հասարակություն և ղեկավարներ ունենալով կարելի է <<սարեր շրջել>>: Մալայզիայից անկախանալուց հետո Սինգապուրը ծայրաստիճան ծանր վիճակում էր: Մովորական շինարարական ավազը, խմելու ջուրը և մի շարք այլ կենսական նշանակություն ունեցող ապրանքներ ներկրվում էին: Հվ.Կորեան 1950-1953թթ. պատերազմից հետո լրիվ քայքայված էր, Հոնկոնգը մինչև 1997թ. բրիտանական գաղութ էր, Թայվանը կիսանկախ պետություն էր, որը հակամարտություն ուներ մայրցամաքային Չինաստանի հետ: Ֆինլանդիան Երկրորդ աշխարհահամարտից հետո էլի ծանր պայմաններում էր: Իսկ հիմա պատկերը լրիվ այլ է: Այդ երկրներում հիմք դրվեց մի այնպիսի կրթական համակարգի, որը հասարակությանը տալիս է պատասխանատու, կրեատիվ մտածելակերպով մարդկանց: Օրինակ, ֆիննական կրթությունն աչքի է ընկնում իր պրակտիկությամբ: Ֆիննական ուսուցիչների խոսքն է. <<Կրթությունը պետք է պատրաստի կամ կյանքին, կամ քննության: Մենք ընտրում ենք առաջինը>>: Ֆիննական դպրոցներում աշակերտներին տալիս են միայն այն գիտելիքները, որոնք կյանքում կարող են կիրառել: Ասիական <<վագրերում>> մեծ ուշադրություն են տալիս կարգապահության պահպանմանը և աստիճանահարգությանը: Հվ.Կորեայում այնքան մեծ կարևորություն են տալիս ԲՈՒՀ ընդունվելուն, որ ավարտական դասարանների աշակերտները ընդունելության քննությունից կտրվելու պատճառով հաճախ ինքնասպանության են դիմում: Հվ.Կորեայում ընդունելության քննությունների ժամանակահատվածը անվանում են քննական <<դժոխք>>: Քննական <<դժոխքի>> օրերին նույնիսկ ՋԼՄ-ները հորդորում են աղջիկներին սուր հոտով օծանելիք չօգտագործեն, ինչպես նաև չհագնեն բարձրակրունկ կոշիկներ, քանի որ սուր օծանելիքի հոտը և բարձրակրունկ կոշիկների ձայնը կարող են շեղել քննության պատրաստվողների ուշադրությունը: 2001թ. Հվ.Կորեայում տեղի ունեցած կրթական բարեփոխումների ընթացքում ԿԳՆ լիազորությունները էլ ավելի մեծացան, իսկ ԿԳՆ նախարարը հասցվեց

փոխվարչապետի աստիճանի: Մինգապուրում հիմնվելով Ամերիկայում կատարված <<Երկվորյակների փորձ>>-ի վրա, որտեղ ապացուցված էր, որ երեխայի անձի հատկանիշների 80 տոկոսը փոխանցվում է ժառանգաբար ծնողներից, իսկ մնացած 20 տոկոսը ձևավորվում է կյանքի ընթացքում, հետևաբար նրանք հորդորում էին կրթական որևէ մակարդակ ունեցող տղամարդկանց ամուսնանալ նույն կրթական մակարդակ ունեցող կանանց հետ: Հետևաբար, եթե ծնողներն ունեն բարձրագույն կրթություն, ապա 80 տոկոս հավանականությամբ նրանց երեխան այն նույնպես կունենա:

Ինչպես կարող ենք նկատել այս պետություններում վաղուց արդեն ձևավորվել է, այսպես ասած, կրթական մշակույթ, որը մենք չունենք: ԽՄ փլուզումից հետո և մինչ հիմա Արցախը գտնվում է կրթական վակուումի պայմաններում: Ուսուցիչների և դասախոսների մեծամասնությունը մի կրթության կրողներ են, որն հիմա չկա, իսկ աշակերտները դրա հաջորդ սերնդի ներկայացուցիչներ են, չեն տեսել Խորհրդային Միությունը և, հետևաբար, նրանք պետք է կրթական հարցում նոր մոտեցում ստանան՝ ավելի ժամանակակից և նորարարական: Ուսումնասիրելով Արցախի կրթական համակարգը կգտնենք մի շարք թերացումներ:

1. Կրթական մշակույթի ձևավորման միտումների բացակայություն:

2. Ավելորդ բյուրոկրատիզմ:

3. Պրագմատիզմի բացակայություն կրթական գրեթե բոլոր օղակներում:

Մրանք այն թերություններն են որոնք վերացնելով կոնենք նոր կրթական համակարգի հիմնաքարը: Կրթական մշակույթի չձևավորման հիմնական պատճառը կրթության հանդեպ անվստահությունն ու անտարբերությունն է հասարակության կողմից: Իրավիճակը շտկելու համար քայլեր է պետք ձեռնարկել կրթական համակարգի հեղինակությունը բարձրացնելու համար: Կրթության բոլոր օղակներում պետք է հիմնական ուժը ներդնել կրթության հանդեպ հարգանքի և վստահության մթնոլորտի ձևավորման համար: Ուսուցիչների և դասախոսների միակ աշխատանքը պիտի լինի պրակտիկ գիտելիքների տրամադրումը աշակերտներին առանց որևէ բյուրոկրատիզմի: Կրթական համակարգի նոր փուլ մտնելը պետք է դառնա Արցախի կտրուկ զարգացման սկիզբը: Առաջին հերթին պետք է իրականացնել արտաքին աշխարհից Արցախ ուղեղների ներկրման քաղաքականություն: Որպեսզի մենք ապագայում լինենք հաղթողի դերում, ապա այդ ապագան պետք է ստեղծվի այսօր և այստեղ: Քանի որ աշխարհը գնում է գլոբալիզացիայի ճանապարհով ԱՀ-ն պետք է դառնա այդ գլոբալ աշխարհի մի մասնիկը և ստեղծի մի հասարակություն, որը բաց կլինի աշխարհի բոլոր տաղանդավոր մարդկանց համար և այդ մարդիկ կլինեն ԱՀ-ի զարգացման գրավականը: Ազգային գաղափարախոսությունը, ազգային ավանդույթները արտացոլում են հին հասարակարգի հատկանիշները և ներկայումս այդպիսի փակ հասարակարգ ունեցող հասարակությունները ցածր զարգացվածություն և մրցունակություն ունեն: Այսպես, օրինակ, Մինգապուրում թեկուզ բազմազգ պետության լինելուն ազգային ոչ մի խնդիր չկա, քանի որ մարդկանց գիտակցության մեջ ընդհանուր Մինգապուրի շահերը վեր են առանձին ազգերի շահերից և ամբողջ այդ համակարգը դրված է այդ նպատակին հասնելու համար: Հավատացե՛ք, ընդհանուր մարդկության ապագան չի կարող լինել մասնատված առանձին պետությունների տեսքով: ԱՀ-ի նոր կրթական համակարգի հիմնական շեշտը պետք է դրվի առաջին հերթին մարդասիրության և հանդուրժողականության սկզբունքների վրա: Այդ սկզբունքների վրա ստեղծված հասարակության մեջ չի կարող լինել ազգային որևէ խնդիր: Ազգային կամ կրոնական թշնամանքից խուսափելու համար տարվելու է ոչ թե մուլտիկուլտուրիզմի այլ միաձուլման քաղաքականություն՝ Ամերիկյան մոդելով: Տարբեր տեղերից ժամանած և տարբեր մենտալիտետներով մարդկանց համար պետք է լինի այնպիսի մի գաղափարախոսություն, որը պետք է միավորի այդ մարդկանց մեկ նպատակի շուրջ և ստեղծի միասնական համակարգ: Տարբեր ազգությունների ներգրավվածությունը ԱՀ-ի քաղաքական կյանքին կփոխի ներքին հասարակական կլիման և պարտադիր կերպով նաև հասարակական գիտակցությունը: Պետք է հասկանանք, որ սա երկարատև պրոցես է և այդպիսի հասարակություն կառուցելու համար առաջին հերթին պետք է կատարվեն կրթական լուրջ ռեֆորմներ: Մարդասիրության և հանդուրժողականության սկզբունքները

ներդնելուց հետո կրթական համակարգի հաջորդ շեշտը պիտի դրվի SS ոլորտի վրա: Յունեսկոյի տվյալներով ներկայիս առաջին դասարանի աշակերտների 65 տոկոսը ապագայում կունենան այնպիսի մասնագիտություններ, որոնք ներկայումս գոյություն չունեն: Մշտապես փոփոխվող աշխարհում պետք է կարողանանք ժամանակին արձագանքել և հետևել տեղի ունեցող փոփոխություններին:

Այսպիսով, պետականաշինության համար կրթությունը ունի առանցքային նշանակություն և արդիական, մշտապես ձևափոխումների պատրաստ ապագայամետ կրթական համակարգը պետության կենսունակության երաշխիքն է:

ՀՏՂ323.1(479.243)

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրինա Գաբրիելյան
ԱրՊՀ, պատմության և իրավագիտության ֆակուլտետ, 4-րդ կուրս
Էլ. հասցե՝ arina.irina97@mail.ru
Գիտական ղեկավար՝ Փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս ՝
Գեղամ Ստեփանյան

Բանալի բառեր՝ Ղարաբաղյան շարժում, ազգային հարց, կոլեկտիվ վարքագիծ, սոցիալական շարժում, սոցիալական անհանգստություն, զանգվածային վրդովմունք, շարժման ձևավորում, շարժման ինստիտուցիոնալացում, ռեսուրսների մոբիլիզացիա, ինքնակազմակերպում:

Ключевые слова: Карабахское движение, национальный вопрос, коллективное поведение, социальное движение, социальное волнение, массовое возмущение, формирование движения, институционализация движения, мобилизация ресурсов, самоорганизация.

Key words: Karabakh Movement, national issue, collective behavior, social movement, social disturbance, mass indignation, mobilization of resources, self-organization, institutionalization of movement.

Ամփոփում

Հոդվածում ներկայացվել են Ղարաբաղյան շարժման սկզբնավորման և հետագա ծավալման կազմակերպական առանձնահատկությունները: Համապատասխան մասնագիտական գրականության և հեղինակի կողմից շարժման ակտիվիստներից վերցված հարցազրույցների հիման վրա փորձ է արվել շարժումը վերլուծել որպես սոցիալական շարժում՝ ուշադրություն դարձնելով մարդկային, կազմակերպական և այլ ռեսուրսների մոբիլիզացիայի հարցում արցախահայության ազգային ազատագրական շարժման առանձնահատկություններին:

Ирина Габриелян
АрГУ, факультет истории и права, 4-ый курс
Эл. адрес: arina.irina97@mail.ru

ОРГАНИЗАЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ АРЦАХСКОГО ДВИЖЕНИЯ

Резюме

В данной статье представлены организационные особенности начала и дальнейшего развития карабахского движения. Основываясь на соответствующей профессиональной литературе и интервью с активистами движения, сделанных автором, была сделана попытка проанализировать движение как социальное движение, сосредоточившись на особенностях национально-освободительного движения арцахских армян в мобилизации людских, организационных и других ресурсов.

Irina Gabrielyan
ASU, The Faculty of History and Law, 4th year
Email: arina.irina97@mail.ru

THE ORGANIZATIONAL PECULIARITIES OF ARTSAKH MOVEMENT

Summary

The article presents the organizational peculiarities of the initiation of Karabakh/Artsakh movement and its further development. Based on the relevant literature and interviews carried out by the author with movement activists, an attempt has been made to analyse Karabakh Movement as a social movement paying attention to the peculiarities of the national liberation movement of Artsakh Armenians concerning the mobilization of human, organizational and other resources.

Սոցիալական շարժումները բնորոշվում են որպես մի շարք անհատների, խմբերի կամ կազմակերպությունների միջև ոչ ֆորմալ փոխազդեցությունների ցանց, որոնք մասնակցում են քաղաքական կամ մշակութային հակամարտությանը՝ կոլեկտիվ ինքնության հիման վրա: Սոցիոլոգիայում սոցիալական շարժումների ֆենոմենը սերտ կապված է սոցիալական փոփոխությունների խնդրի հետ: Դրա համար սոցիալական շարժումները բնորոշվում են որպես մարդկանց զանգվածային կազմակերպված գործունեություն, որն ուղղված է հասարակության մեջ փոփոխությունների աջակցմանը կամ էլ դրանց դեմ պայքարին: Մի շարք մասնագետներ սոցիալական շարժումները կապում են կոլեկտիվ վարքագծի առավել կարևոր տիպերի հետ, քանզի նրանք առանձնանում են անդամների գիտակցված կազմակերպմամբ և հաճախ են տևական ազդեցություն ունենում հասարակության կյանքի վրա:¹

20-րդ դարավերջի հայության ազգային ազատագրական պայքարը Արցախում իր կազմակերպական բնույթով և զարգացումներով համապատասխանում է սոցիալական շարժումների տեսական սահմանմանը՝ իհարկե ունենալով որոշակի առանձնահատկություններ:

Ինչպես ցանկացած սոցիալական շարժում, որն անցնում է զարգացման մի քանի փուլերով, այն է՝ սոցիալական անհանգստություն, զանգվածային վրդովմունք, շարժման ձևավորում և շարժման ինստիտուցիոնալացում, այնպես էլ Ղարաբաղյան շարժումը ձևավորվել ու զարգացել է Արցախը Ադրբեջանի վերահսկողության տակ դրվելուց հետո: 1921թ. Լեռնային Ղարաբաղը բռնակցվել է Ադրբեջանին, իսկ 1923թ. հուլիսի 7-ին Ադրբեջանական ԽՍՀ Կենտրոնական գործադիր հեղափոխական կոմիտեի որոշմամբ կազմավորվել է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը՝ Ադրբեջանական ԽՍՀ կազմում:² Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի գոյության 70 տարիների ընթացքում Խորհրդային Ադրբեջանի կողմից վարվող քաղաքականությունը, որն արտահայտվել է թե՛ արցախահայության ազգային արժանապատվության դեմ խտրական վերաբերմունքով, թե՛ տնտեսական զարգացումը արհեստականորեն դանդաղեցնելու քայլերով, սոցիալական անհանգստություն են ձևավորել տեղի բնակչության շրջանում՝ զանգվածային վրդովմունք հարուցելով ադրբեջանական իշխանությունների նկատմամբ: Այս անհանգստությունն ու վրդովմունքը թերևս առաջին անգամ ակնառու կերպով արտահայտվել են Լեռնային Ղարաբաղի մի խումբ մտավորականների 1965 թվականին ԽՄԿԿ կենտկոմի նախագահություն՝ Լ.Ի Բրեժնևին, Ա.Ն. Կոսիգինին, Ա.Ի. Միկոյանին ուղղված նամակում, որում նամակը ստորագրող 13 մտավորականներ ԼՂԻՄ ժողովրդի անունից կենտրոնի ուշադրությանն էին ներկայացնում մարզի զարգացման գործում ԱդրԽՍՀ իշխանությունների անգործության փաստեր և պահանջում, լսելով ղարաբաղցի հայերի խնդրանքը, մարզը վերադարձնել Հայաստանին:³

Թեև գրականության մեջ հասարակական շարժումների առաջացումը դիտարկվում է ոչ այնքան որպես ինքնաբերական կոլեկտիվ վարքի ձև, այլ որպես բանական կոլեկտիվ գործողության տիպ, որը ծրագրվում, կազմակերպվում, իրականացվում է հետևողականորեն, այնուամենայնիվ ղարաբաղյան շարժման պարագայում և՛ տարերայնության և՛ կազմակերպված ու ծրագրված վարքագծի դրսևորումներ առկա են: Այսպես՝ շարժման ակտիվ մասնակիցները փաստում են, որ շարժումը կոլեկտիվ գիտակցության արդյունք էր, դա ինքնակազմակերպում էր ժողովրդի կողմից, ժողովուրդը գիտակցել է իր ուժը և ինքն իրեն

¹ Забродин В.Ю., Социология. Экзаменационные ответы для студентов вузов. Издательство: Петербург, 2009, стр. 34

<https://studfiles.net/preview/1707471/page:34/>

² Լեռնային Ղարաբաղը խորհրդային տարիներին (1920-1990), ՀՀ ԱԳՆ կայք <http://mfa.am/hy/artsakh-issue/>

³ Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ., Հայության պայքարը ԼՂԻՄ-ը խորհրդային Հայաստանի հետ միավորելու

համար. փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2011

օգնել այդ օրհասական պահին:¹ Սակայն մյուս կողմից նախապատրաստական աշխատանքները, որ տարվել են դեռևս մինչև 1988 թվականի փետրվարի 13-ի առաջին բազմահազարանոց ցույցը, վկայում են ժողովրդի կանոնակարգված գործողությունների մասին: Սկզբնական շրջանում արցախահայությունը գործում էր ընդհատակյա: Ընդհատակյա գործունեությունն Արցախում միշտ կար. յուրաքանչյուր սերնդում առանձին մարդիկ հավաքվում և քննարկում էին արցախյան և հայկական խնդիրները: Մինչև 1980-ականներին շարժման ձևավորումը Արցախում ընդհատակյա գործում էին մոտ 150 մարդ:² Նրանք պատրաստվում էին գալիք ցույցերին, թռուցիկներ էին բաժանում, զբաղվում էին մարդկանց հետ տարվող աշխատանքով, բերում էին խտրականության փաստեր և հանդես էին գալիս ազգային արժանապատվության պաշտպանության դիրքերից: 1987 թվականին՝ մինչև դարաբաղյան շարժման հանրահավաքային փուլի ձևավորումը, Արցախի տարբեր բնակավայրերում իրականացվում էին ստորագրահավաքներ՝ դրանք ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին ուղարկելու համար: Ամռանն ու աշնանն անց է կացվել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու համար ոչ պաշտոնական հանրաքվե, և հավաքվել է ավելի քան 80.000 ստորագրություն: Արդյունքները Մոսկվա ուղարկվեցին նույն թվականի նոյեմբերին:³ Ավելին՝ Արցախի հայությունը մինչև 1988 թ-ի փետրվարը մի քանի պատվիրակություն է ուղարկել Մոսկվա՝ ԼՂԻՄ-ը Ադրբեյջանի ԽՍՀ-ի կազմից հանելու և այն Հայաստանի ԽՍՀ-ին միավորելու խնդրանքով: Հարկ է նշել նաև, որ շարժման լատենտային շրջանում արցախահայերը կապ էին պահպանում Հայաստանում ընդհատակյա գործունեություն վարող նույն գաղափարները դավանող մարդկանց՝ Իգոր Մուրադյանի, Սուրեն Այվազյանի, դերասան Վաչե Սարուխանյանի և այլոց հետ:⁴

Սոցիալական շարժումների տեսաբանները պնդում են, որ ոչ դժգոհության աստիճանը, ոչ կառուցվածքային լարվածությունը, ոչ հեղափոխական գաղափարախոսությունները չեն կարող երաշխավորել սոցիալական շարժումների առաջացումը կամ դրանց հաջողությունը: Վերջիններս առաջանում են կոնկրետ իրավիճակների և հնարավորությունների ժամանակ, իսկ հաջողության հասնելու և շարժման նպատակները իրագործելու համար կարևորագույն գործոն է հանդիսանում, թե որքանով է հաջողվում շարժման անդամներին «ռեսուրսների մոբիլիզացիա» իրականացնել: Ընդ որում ռեսուրսների տակ հասկացվում են մարդիկ, ֆինանսներ, տարածք, ժամանակ, տեղեկատվություն, հասարակական և անձնական կապեր, հաղորդակցման միջոցներ, մշակութային կապիտալ, տեխնիկական աջակցության տարբեր տեսակներ, շարժման մասնակիցների կրթամակարդակը և շատ այլ հնարավորություններ:

Ասվածը դիտարկելով Ղարաբաղյան շարժման համատեքստում՝ հարկ է նշել, որ Արցախյան ազգային ազատագրական շարժումը մասնավորապես առանձնանում է մարդկային ռեսուրսների մոբիլիզացիայի առումով: Արդեն 1988թ. Ստեփանակերտում ցույցեր կազմակերպելու համար նախնական աշխատանք տանելով՝ շարժման ակտիվ մասնակիցներին հարց առաջադրվեց, թե ինչքան մարդ նրանք կարող են դուրս բերել փողոցներ: Քաղաքներից ու գյուղերից արցախցիներին ոտքի կանգնեցնելու ու փողոցներ դուրս բերելու համար անհրաժեշտ էին մեծ կազմակերպական ու տեխնիկական աշխատանք, լուրջ ջանքեր: Սակայն, ինչպես մեր կողմից հարցազրույցին մասնակցած առաջամարտիկներն են նշում, առանձնահատուկ ջանքեր չէին պահանջվում մարդկանց հրապարակ հանելու համար, քանզի դոմինանտ ուժը հայրենասիրությունն էր ու ժողովրդի

¹ Հարցազրույց Համլետ Գրիգորյանի, Արզիկ Մխիթարյանի և Գրիգորի Աֆանասյանի հետ

² Карапетян А., В основе успеха арцахского движения лежала готовность умереть, журнал “Анив”, статья № 6 (39), 19.03.2012

<http://qps.ru/kITNd>

³ Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000թթ., Գիրք Գ, 1985-2000, Ստեփանակերտ, 2007, էջ 19-20

⁴ Հարցազրույց Համլետ Գրիգորյանի, Արզիկ Մխիթարյանի և Գրիգորի Աֆանասյանի հետ

համախմբվածությունը:¹ Այնուամենայնիվ միավորող խմբեր կային, որոնք առաջացել են իրարից անկախ և գործում էին ինքնուրույն: 1987թ-ին հաջողվեց նրանց միավորել մեկ միասնության մեջ, քանի որ գաղափարը պարզ և ակնհայտ էր՝ անհրաժեշտ էր միավորվել, որպեսզի հնարավոր լիներ դիմադրել ադրբեջանական և խորհրդային իշխանությունների անխուսափելի պատասխան գործողություններին: Մինչև ժամանակ զարգացումների վերաբերյալ հանրության իրազեկվածությունը և դրանցում նրանց մասնակցությունը ապահովելու համար բավականին արդյունավետ աշխատանքներ էին տարվում մարզի տարբեր աշխատանքային կոլեկտիվներում: Այսպես՝ 1988 թ. սկզբին Արցախի գրեթե բոլոր խոշոր գործարաններում (ըստ մտքի հեղինակի՝ բացի Ստեփանակերտի Կոնդեսատորների գործարանից, որտեղ ժողով հրավիրվել է 1988թ. փետրվարի 12-ին), ժողովներ էին կազմակերպվել ու Հայաստանի հետ Արցախի միավորման վերաբերյալ որոշումներ ընդունվել:² Նմանատիպ ժողովներ կազմակերպվում էին նաև կրթական, մշակութային հաստատություններում: Շարժման մարդկային ռեսուրսների շարքում որպես առաջին շարժիչ ուժը հանդես են եկել երիտասարդության ներկայացուցիչները: Այդ ժամանակաշրջանում ձևավորված նոր սերնդի համար արդեն անթույլատրելի էին անարդարությունն ու անընդհատ ճնշումները, նա պատրաստ էր պայքարել մինչև վերջ: Եվ 1988թ. փետրվարի 13-ին Ստեփանակերտի Մանկավարժական ինստիտուտի ուսանողները դասախոսների հետ միասին ցույց կազմակերպեցին և երթով շարժվեցին դեպի Ստեփանակերտի Լենինի (ներկայիս Վերածննդի) հրապարակը, որտեղ գտնվում էր Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարզկոմի շենքը: Սա առաջին որոշիչ ցույցն էր, քայլը, որի ժամանակ և որից հետո ժողովրդի բազմությունը միացավ ու շարժումը ստացավ համաժողովրդական բնույթ:

Ինչ վերաբերում է ֆինանսական, տեղեկատվության, տեխնիկական և այլ բնույթի ռեսուրսներին, ապա շարժման ակտիվիստները համակարծիք են, որ հիմնականում Արցախի ժողովուրդը, գյուղացիներն էին լուծում հրապարակում գտնվող մարդկանց կարիքները թե՛ սննդի ապահովման, թե՛ այլ հարցերում: Միավորիչ ուժը ինքնապահպանման և ինքնասպասարկման բնագոյն էր: Մարդիկ հերթափոխով էին աշխատում. մի մասը աշխատում էր, մնացածը՝ ցույցերին մասնակցում, և հակառակը, որպեսզի կարողանային և՛ գոյատևել, և՛ հրապարակը բաց չթողնել: Օգնություն եղավ, իհարկե, Հայաստանից և հայկական Սփյուռքից՝ թե՛ սննդով, թե՛ հագուստով, թե՛ ֆինանսական և մի շարք այլ առումներով: Երևանի հրապարակում, օրինակ, ժողովրդից հանգանակություն էր կատարվում ի նպաստ արցախահայության: Շարժման մասնակիցներից մեկը հիշում է Ջավախքից բերված վագոններով կարտոֆիլը³, մյուսը՝ Քրք Քրքքորյանի օգնությունը, Կարո Քահքեջյանի մարտական ոգին:⁴ Տեղեկատվությունը հիմնականում նամակների, հեռագրերի, մարդկանց, երբեմն էլ՝ թելային հեռախոսների միջոցով էր իրականացվում, ընդ որում՝ գաղտնի կերպով: Պետական ռեսուրսներ չէին տրամադրվում, քանզի ինքնին պարզ էր, որ պետությունը հանդես էր գալիս որպես հակադիր ուժ:

Շարժման առաջամարտիկների պնդմամբ կար, իհարկե, տարբեր ռեսուրսների պակասություն, սակայն ինչպես տեսության մեջ, այնպես էլ դարաբաղյան շարժման պարագայում ռեսուրսների տիպերից մեկի թերությունը փոխարացվում էր այլ ռեսուրսներով: Օրինակ՝ շարժման ֆինանսավորման պակասությունը կոմպենսացվում էր լիդերների ակտիվությամբ, մասնակցիների ներքին համերաշխությամբ:

Որպես շարժման ինքնուրույն ռեսուրս հանդես է գալիս շարժման կազմակերպական միջուկը, մարդկանց հատուկ խումբ, ովքեր ապահովում են հասարակական շարժման բանականությունը՝ դարձնելով այն ռացիոնալ կոլեկտիվ սուբյեկտ, որն ունի գործունեության

¹ Հարցազրույց Արզիկ Մխիթարյանի հետ

² Աշոտ Մարգարյան՝ Շարժումը սկսվեց տարեբայնորեն, «Շարժում 1988/25» | Մարտ 6, 2013

<http://www.mediamax.am/am/news/sharjum25/7020/>

³ Հարցազրույց Գրիգորի Աֆանասյանի հետ

⁴ Հարցազրույց Արզիկ Մխիթարյանի հետ

ծրագիր, ռազմավարություն և մարտավարություն: Շարժման արդյունավետ կազմակերպական միջուկի առկայությունը կրճատում է շարժման մասնակիցների ծախսերը, նպաստում է կողմնակիցների ընդգրկմանը շարժման մեջ և մեծացնում է շարժման հաջողության հնարավորությունները:¹ Մինևս ժամանակ հենց կազմակերպական միջուկն է, որ նպաստում է սոցիալական շարժման վերջին՝ ինստիտուցիոնալացման փուլի զարգացմանը: Ղարաբաղյան շարժման նոր փուլի առաջացման սկզբնական շրջանում մարդկանց հոծ բազմությունը առանձին խմբերի էր բաժանված: Այնուամենայնիվ հանրահավաքների կազմակերպմանը զուգընթաց շարժումը հետզհետե անցնում էր ինստիտուցիոնալացման փուլ: 1988թ. Սուգայիթում հայ բնակչության նկատմամբ իրագործված ոճրագործությունը ավելի մեծ ուժով դրդեց արցախահայությանը՝ անցնելու վճռական քայլերի: Սուգայիթից հետո ստեղծված անորոշության դեմն առնելու և շարժման հետագա քայլերը ուրվագծելու համար անհրաժեշտ էր Արցախում ստեղծել մի կազմակերպություն, որն ուղղորդելու էր ժողովրդի գործողությունները: Մինչ այդ Հայաստանում ծավալվող հանրահավաքները ղեկավարելու համար արդեն ստեղծված էր «Ղարաբաղ» կոմիտեն: Եվ 1988թ. մարտի սկզբին, որպես «Ղարաբաղ» կոմիտեին համագործակցող, Արցախում ստեղծվեց «Կռունկ» հասարակական-քաղաքական կազմակերպությունը (կոմիտեն):² Ընդ որում հետաքրքիր փաստ է այն, որ կոմիտեի 55 անդամները ընտրվել են ժողովրդի անմիջական մասնակցությամբ և նրանց որոշմամբ: Իսկ կազմակերպության հիմնադիր ժողովում անդամների կազմից ընտրվեց 11 հոգուց բաղկացած խորհուրդը:³ Կռունկի գրասենյակը գտնվում էր «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրության շենքում: Թեև այդ մարմինը կարճ գոյություն ունեցավ, ընդամենը մի քանի ամիս, սակայն մեծ դեր խաղաց շարժման ինստիտուցիոնալիզացիայի և համաժողովրդական բնույթ տալու գործում: 1988 թվականի հուլիսի 29-ին «Կռունկ»-ը տրոհվեց և ստեղծվեցին «Տնօրենների խորհուրդ» ու «Միացում» կազմակերպությունները⁴, որոնց անդամները մինչև Արցախի Հանրապետության հռչակումը և Ադրբեջանի կողմից հրահրված պատերազմի սկիզբը և դրանից հետո տարբեր կարգավիճակներում հանդես էին գալիս Արցախյան ազգային ազատագրական շարժման առաջնորդների դերում:

Այսպիսով՝ վերլուծելով Ղարաբաղյան շարժման՝ որպես սոցիալական շարժման կազմակերպական զարգացումները գալիս ենք այն եզրակացության, որ այն անցել է սոցիալական շարժումների համար գրականության մեջ սահմանվող բոլոր փուլերով: 1921 թ. Արցախի բռնկումը Ադրբեջանին հիմք է հանդիսացել արցախահայության շրջանում սոցիալական անհանգստության ձևավորման համար, հետագա տարիների ընթացքում ԱդրբՄՄՀ կողմից իրականացվող խտրական քաղաքականությունը նպաստել է Արցախում ադրբեջանական իշխանությունների նկատմամբ զանգվածային վրդովմունքի առաջացման համար: 1980-ականների կեսերից ԽՍՀՄ վերակառուցման քաղաքականությունը Արցախի հայության համար հնարավորություններ է ստեղծել շարժման նոր փուլի առաջացման և հետագա ինստիտուցիոնալացման համար: Այս գործընթացներում թե՛ շարժման կազմակերպական միջուկի, թե՛ ժողովրդի համախմբվածության միջոցով իրականացվել է անհրաժեշտ ռեսուրսների հավաքագրում, ինչի արդյունքում ազատության համար Արցախի հայության պայքարը հասել է հաջողության:

Օգտագործված գրականության ցանկ

¹ Костюшев В.В., Социология общественных движений. Учебная программа по истории и социологии общественных движений, Санкт-Петербург, 2009, стр. 34
<http://qps.ru/yqoJk>

² Աբրահամյան Հ., Հայ ժողովրդի պատմություն (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, Զանգակ-97, 2004, էջ 189

³ Բաղդյան Վ., Հորիզոն, Ստեփանակերտ, 2011

⁴ Նույն տեղում

1. Արրահամյան Հ., Հայ ժողովրդի պատմություն (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, Զանգակ-97, 2004, 208 էջ
2. Արրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000թթ., Գիրք Գ, 1985-2000, Ստեփանակերտ, 2007, 744 էջ
3. Աշոտ Սարգսյան՝ Շարժումը սկսվեց տարերայնորեն, «Շարժում 1988/25» | Մարտ 6, 2013
<http://www.mediamax.am/am/news/sharjum25/7020/>
4. Բաղրյան Վ., Հորիզոն, Ստեփանակերտ, 2011
5. Լեոնային Ղարաբաղը խորհրդային տարիներին (1920-1990), ՀՀ ԱԳՆ կայք
<http://mfa.am/hy/artsakh-issue/>
6. Խաչատրյան Կ., Արրահամյան Հ., Հայության պայքարը ԼՂԻՄ-ը խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար. փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2011, 174 էջ
7. Виханский О.С., Стратегическое управление: Учебник - 2-е изд., перераб. и доп. М. Издательство: «Гардарика», Москва, 1998. 296 стр.
<http://qps.ru/9JyPS>
8. Желтов В.В., Желтое М.В., Политическая социология: Учеб. пособие для вузов— 2-е изд., доп. и испр. — М.: Академический Проект, 2009. 668 стр.
<https://studfiles.net/preview/5360771/>
9. Забродин В.Ю., Социология. Экзаменационные ответы для студентов вузов. Издательство: Петербург, 2009, 160 стр.
<https://studfiles.net/preview/1707471/page:34/>
10. Казаринова Д.Б., Теория коллективных действий: политические импликации. Опубликовано в Вестнике РУДН, серия- Политология, №3, 2011. —С. 71-78
<http://qps.ru/5hKQD>
11. Карапетян А., В основе успеха арцахского движения лежала готовность умереть, журнал “Анив”, статья № 6 (39), 19.03.2012
<http://qps.ru/kITNd>
12. Костюшев В.В., Социология общественных движений. Учебная программа по истории и социологии общественных движений, Санкт-Петербург, 2009, 53 стр.
<http://qps.ru/yqoJk>
13. Павлова Т.В., Социальные движения как фактор трансформации институциональной среды: проблемы теории, Полис. Политические исследования, 2008, стр. 113 – 124
https://www.civisbook.ru/files/File/Pavlova_5_08.pdf
14. Шульц Э. Э., Теория социальных движений: проблемы теории и практики. Журнал: Вестник Северного (Арктического) федерального университета, 2014, стр. 23-30
<http://qps.ru/KjsVy>

ՀՏՂ327.5

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ**

Արմեն Զալալյան
ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետ
Իրավագիտություն 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ իր. գ.թ. դոցենտ Ռիտա Առուստամյան

Բանալի բառեր՝ Գյուղատեղի, դամբարան, մշակութային շերտ, քաղաքատեղի

Ключевые слова: Деревня, мавзолей, культурный слой, город – селение

Key words: The village, Mausoleum, cultural layer, city

Ամփոփում

Բացարձակ ճշմարտություն է այն, որ մշակութային արժեքների ոչնչացումը երբեք չի կարելի համեմատել ֆիզիկական ոչնչացման կամ մի ամբողջ խմբի բնաջնջման հետ, սակայն պատմությունը ցույց է տալիս, որ մեկն առանց մյուսի երկար գոյատևել չեն կարող: Խմբի մշակութային ժառանգության լիակատար ոչնչացումը կհանգեցնի տվյալ խմբի անհետացմանը մարդկության համընդհանուր հիշողությունից, ինչպես և նրա կենսագործունեության բոլոր հետքերի վերացմանը:

Армен Джалалян

УНИЧТОЖЕНИЕ КУЛЬТУРНЫХ ЦЕННОСТЕЙ КАК ЧАСТЬ ГЕНОЦИДА

Резюме

То, что нельзя сравнивать уничтожение культурных ценностей с физическим уничтожением или истреблением целой группы, является непреложной истиной. Однако, история доказывает, что одно не может долго существовать без другого. Полное уничтожение культурного наследия группы приведет к исчезновению группы из памяти человечества, а также всех следов ее жизнедеятельности.

Armen Jalalyan

DESTRUCTION OF CULTURAL VALUES AS PART OF THE GENOCIDE

Summary

The fact that it is impossible to compare the destruction of cultural values with physical destruction or the extermination of an entire group is indisputable. However, history proves that one can not exist without another for a long time. The complete destruction of the cultural heritage of the group will lead to the disappearance of the group from the memory of mankind, as well as evanescence of all traces of its life activity.

Մշակութային ցեղասպանությունը կամ «էթնոցիդը» էթնիկական, ազգային, կրոնական կամ այլ խմբի մշակույթի կանխամտածված ոչնչացումն է և պարտադիր չէ, որ այն ներառի նաև խմբի ֆիզիկական ոչնչացումը: Ցանկացած խմբի գոյությունը կարող է հարցականի տակ դրվել, եթե այն զրկվում է իր մշակույթից, անգամ խմբի ֆիզիկական գոյության դեմ որևէ սպառնալիքի բացակայության պարագայում: Ինչպես իրավագիտորեն նշում է անգլիացի հետազոտող Պամելա դե Կոնդապան, նյութական մշակույթի համակարգված և դիտաորյալ ոչնչացումը գալիս է վկայելու, որ տվյալ էթնիկ խումբը նման մշակութային զտման մաս է կազմում:

Դեռևս 1944 թ. քրեական և միջազգային իրավունքի մասնագետ Ռաֆայել Լեմկինը, շրջանառության մեջ դնելով «ցեղասպանություն» տերմինը, այն ազգային, հոգևոր մշակույթի ոչնչացում:

Հիմք ընդունելով Լեմկինի վերոհիշյալ տեսությունը՝ ՄԱԿ-ում 1948թ. պատրաստվեց «ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան, որի նախնական տարբերակում ընդգրկվեցին նաև մշակութային

ցեղասպանությանը բնորոշ հինգ սահմանումներ, որոնցից մեկը նվիրված է հուշարձաններին.

5). Պատմական ու կրոնական հուշարձանների սիստեմատիկ ոչնչացումը կամ դրանց օգտագործումն այլ նպատակով, պատմական, գեղարվեստական, կրոնական արժեք ունեցող փաստաթղթերի կամ կրոնական ծեսերում օգտագործվող առարկաների ոչնչացումը և տարալուծումը: Մշակութային ցեղասպանությանը բնորոշ և դատապարտվող վերոհիշյալ սահմանումները թեպետ կոնվենցիայի վերջնական տարբերակում տեղ չգտան, սակայն ժամանակակից միջազգային իրավունքում հաստատագրվեցին որպես միջազգային իրավական պարտավորություններ, որոնք վերաբերվում են մշակութային ժառանգության պահպանմանն ու դրանց ոչնչացման համար պատասխանատվության ենթարկվելուն:

1981 թ. Սան Խոսեում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված հռչակագրում, մասնավորապես նշվում է. «Էթնոցիդը էթնիկ խմբին իր սեփական մշակույթի, լեզվի օգտագործման, զարգացման ու փոխանցման խմբային և անհատական իրավունքների մերժումն է... Մենք հայտարարում ենք, որ էթնոցիդը, այսինքն մշակութային ցեղասպանությունը միջազգային իրավունքի խախտում է և համարժեք է ցեղասպանությանը, որը դատապարտվում է Միացյալ ազգերի «Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» 1948 թ. կոնվենցիայով»: հայկական մշակութային արժեքների կանխամտածված և հետևողական ոչնչացումն Ադրբեջանի կողմից լիովին համապատասխանում է մշակութային ցեղասպանություն բնորոշմանը: Հայկական մշակույթի ոչնչացմանն ուղղված վերջինիս գործողությունները եղել և մնում են նույնքան ծրագրված, որքան հայ ազգաբնակչության դեմ իրագործված ցեղասպանությունը:

Բնաջնջելով ժողովրդին՝ ոչնչացնել նրա մշակույթին առնչվող ցանկացած փաստ, ինչը կհանգեցնի տվյալ խմբի անհետացմանը մարդկության համընդհանուր հիշողությունից, իսկ մշակութային ցեղասպանություն իրագործողների համար տվյալ խմբի գոյության ժխտումը կամ մերժումը առավել քան դյուրին կդառնա :

Զուգահեռաբար հսկողություն սահմանել հայերի պատմությանն ու մշակույթին վերաբերող ուսումնասիրությունների նկատմամբ արգելք հանդիսացող հայկական պատմական բնակավայրերում պեղումների կազմակերպությունը, և վերջապես, հայկական մշակութային արժեքների յուրացումը Ադրբեջանի պատմության յուրովի ու հակազդիտական վերաշարադրման կամ խեղաթյուրման միջոցով: Մշակութային ցեղասպանություն իրագործողների համար առաջին հերթին թիրախ են դառնում մշակութային հուշարձանները, որոնք ունենալով տարածքային տեղադրություն և խորհրդանշելով կոնկրետ էթնիկ կամ դավանական պատկանելիություն՝ միաժամանակ կատարում են յուրօրինակ ցուցիչների գործառություն՝ տվյալ տարածքի պատկանելիության հարցում, առաջ բերելով մտավորականության հակառակորդ կամ մրցակցող էթնոդավանական հանրության մոտ: Արդյունքում այն կարող է դրսևորվել չեզոքացման ծայրահեղ ձևով, այն է՝ տվյալ մշակույթի մաս կազմող հուշարձանի լիակատար ոչնչացմամբ:

Բազմաթիվ փաստեր վկայում են, որ թե՛ Ադրբեջանի հայաբնակ վայրերում, և թե՛ վերջինիս բռնակցված հայկական պատմական գրեթե բոլոր բնակավայրերում, հայերի կոտորածներն ուղեկցվել են հայկական մշակութային արժեքների, մասնավորապես պատմաճարտարապետական հուշարձանների զանգվածային ոչնչացմամբ:

1980-ական թվականներից հայկական պատմաճարտարապետական հուշարձանների ոչնչացման գործում Ադրբեջանի քաղաքականության բնորոշ կողմերից դարձավ նաև «վերանորոգչական» աշխատանքների միջոցով վանքերի ու եկեղեցիների ճարտարապետության այլափոխումը, որի արդյունքում հուշարձանը թեև կանգուն էր մնում, սակայն կորցնում էր իր ինքնությունը՝ ճարտարապետական ոճը, պատկանելիությունն ու իրական նշանակությունը: Այսպես, Գանձակ քաղաքի XVII դարի Մբ. Սարգիս եկեղեցին վերանորոգման անվան տակ արտաքուստ երեսպատվեց աղյուսով՝ կորցնելով հայկական ճարտարապետական ոճը, միևնույն ժամանակ՝ սրբավայրի իր նշանակությունը կիրառելով որպես ժողովուրդների բարեկամության պալատ: Հուշարձանների ինքնության ոչնչացման այս մեխանիզմը գործի դրվեց, ոչ միայն վերանորոգչական աշխատանքների ընթացքում, այլև

եկեղեցիների ու վանքերի վիմագիր արձանագրությունների, սրբապատկերների ուղղակի ջնջումով: Հայկական մշակութային հուշարձանների հաջորդ մեխանիզմը դեռևս կանգուն մնացած եկեղեցիների ու վանքերի վերածումն է կենցաղային ու հասարակական ամենատարբեր շինությունների՝ գույք, մարագներ, զինապահեստներ և այլն, որն իրագործվել է աղբբեջանական իշխանությունների բացահայտ խրախուսմամբ ու գործողությունների հստակ ցուցումներով: Դեռևս 1960-ական թթ. Աղբբեջանական ԽՍՀ գյուղնախարարությունը ցուցումներ է տվել կոլտնտեսությունների նախագահներին, որը հայկական հուշարձանները կարող են վերափոխվել և օգտագործվել որպես փարախներ ու պահեստներ: Հուշարձանի ոչնչացման այս եղանակն իր մեջ ներառում է բազմաթիվ օրինակներ. 1991 թ. Շուշիի մեղրեցոց եկեղեցին վերածվեց ամառային կինոթատրոնի, Կանաչ ժամը՝ հանքային ջրերի պահի, Ղազանչեցոցը՝ զինապահեստի ու Արցախյան պատերազմի ընթացքում աղբբեջանցիները պահեստավորել էին «գրադի» հրթիռներ և այլն: Նման գործողությունների միջոցով մասնավորապես, սրբավայրի պղծումով, աղբբեջանական կողմն ավելորդ անգամ դրսևորում է իր ատելությունը նպատակ ունենալով հնարավորինս նսեմացնել հակառակորդի եթնիկ հանրության հայերի դավանական զգացումները: Ատելության դրսևորումների մասին խոսելիս ուշագրավ է 1966 թ. «Ստրիտտել» թերթում հրապարակված աղբբեջանցի ճարտարապետ Կ. Սաիդովի կոչը՝ Շուշիում հրաշքով փրկված հայկական հուշարձաններն ու գերեզմանները այրելու մասին, քանզի նրա խոսքերով «մեռածները կերան ապրողներին»: Արդեն վաղուց Աղբբեջանի մշակութային քաղաքականության հստակ դիրքորոշումներից է նաև մշակութային արժեքների, տվյալ դեպքում հայկական պատմաճարտարապետական հուշարձանների յուրացումը՝ պատմության խեղաթյուրման կամ այլափոխման միջոցով. Ուստի, որքան շատ է հուշարձանների թիվը, այնքան դժվար է դառնում պատմության վերաշարադրումը: Աղբբեջանի գիտությունների ակադեմիան, 1960- ականների վերջին և 1970-ականների սկզբին, հանդես եկավ հակագիտական հայտարարություններով, ըստ որի ԼՂ-ի տարածաշրջանում գտնվող քրիստոնեական հուշարձանները, ոչ թե հայերի, այլ մուսուլման աղբբեջանցիների նյութական մշակույթի արժեքներն են, որոնց նախնիները եղել են դեռևս IX դարից վերցված կովկասյան Ալբանիա (Աղվանքի) պետության բնակիչները, որոնք դավանել են քրիստոնեություն: Այս տեսության հիմնաքարը դրեց հայերի կեղծարար Զիա Բունիաթովը՝ իր «Աղբբեջանը VII-IX դդ.-ում» ուսումնասիրությամբ, որի վերնագիրն ինքն վկայում է վերջինիս հակագիտական մոտեցման մասին «Աղվանական» տեսությունը հետագայում լայն տարածում ստացավ աղբբեջանցի գիտնականների շրջանում, որոնցից շատերը հաճախ իրենք էին խճճվում իրենց կեղծարարություններում: Այս կերպ արցախի տարածքի շուրջ 200 հուշարձաններ հայտարարվեցին աղվանական-աղբբեջանական, այդ թվում և Խաթրավանքը, Դադիվանքը, Գանձասարը և IV-XIII դդ. այլ հուշարձաններ, որոնք ընդգրկվեցին Աղբբեջանի խորհրդային կառավարության կողմից հաստատված հուշարձանների պաշտոնական ցուցակներում:

Բացարձակ անպարտելիության մթնոլորտում հայկական մշակութային հուշարձաններն աղբբեջանցի բազմաթիվ հանցավոր տարրերի՝ գանձերի որոնումների համար դարձան գողության յուրօրինակ օբյեկտներ, որի ընթացքում բազմադարյան հուշարձանները (Խունիսավանքը, Հակոբավանք, Երիցմանկանց վանք, Դադիվանք) ավերվում էին աշխատանքային ամենատարբեր գործիքների (բահեր, քլունգներ և այլն) օգնությամբ: Մեր օրերում մշակութային ժառանգության դեմ ոտնձգությունները կրում են շարունակական բնույթ: Բոսնիայում մահմեդական, ուղղափառ հոգևոր հաստատությունների և այլ մշակութային կենտրոնների դեմ իրականացված ոտնձգությունները, Նախիջևանում Հին Զուղայի հայկական գերեզմանոցի պետական մակարդակով իրագործված ոչնչացումը, Բուդդայի արձանի պայթեցումը թալիբների կողմից և այլ գործողություններ վկայում են այն մասին, որ մշակութային ցեղասպանությունները դեռ կիրառելի են և հանդիսանում են անպատժելիության արդյունք: Հատկանշական է, որ վերջին շրջանում արդեն առավել քան հրատապ է դարձել միջազգային նոր կոնվենցիա ընդունելու

խնդիրը, որով մշակութային արժեքների ոչնչացումը պետք է դիտվի որպես մարդկության դեմ հանցագործություն:

Ցեղասպանությունը որևէ էթնիկ. Ռասսայական կամ կրոնական խմբի ոչ միայն ֆիզիկական բնաջնջումն է. այլև նրա մշակութային ժառանգության (հոգևոր և նյութական արժեքների ամբողջություն) ոչնչացումը, քանի որ էթնոս կամ ժողովուրդ հասկացությունն առավել ամբողջական իմաստ և նկարագիր է ստանում իր ստեղծած մշակութային արժեքներով: Յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգությունն ուղղված ցանկացած ոտնձգություն արտահայտվել է նաև համամարդկային մշակութային ժառանգությանը, քանզի ցանկացած մշակույթ համաշխարհային քաղաքակրթական բաղկացուցիչ մաս է հանդիսանում: Ցանկացած խմբի գոյությունը կարող է հարցականի տակ դրվել, եթե այն զրկվում է իր մշակույթից, անգամ խմբի ֆիզիկական գոյության դեմ որևէ սպառնալիքի բացակայության պարագայում: Ինչպես իրավացիորեն նշում է անգլիացի հետազոտող Պամելա դե Կոնդապան, նյութական մշակույթի համակարգված և դիտավորյալ ոչնչացումը գալիս է վկայելու, որ տվյալ էթնիկ խումբը նման մշակութային գտման մաս է կազմում:

Դեռևս 1994 թ. քրեական և միջազգային իրավունքի մասնագետ Ռաֆայել Լեմկինը, շրջանառության մեջ դնելով «Ցեղասպանություն» տերմինը, իր «Առանցքի տերությունների կառավարումը օկուպացված Եվրոպայում» աշխատության մեջ համադրելով հունարեն *genos* (ռասսա կամ ցեղախումբ) և լատիներեն *cide* (սպանել) բառերը, կազմել է «գենոցիտ» եզրը, այն սահմանելով ոչ միայն որպես էթնիկ կամ կրոնական խմբի ֆիզիկական բնաջնջում այլև նրա ազգային, հոգևոր մշակույթի ոչնչացում: Մշակութային արժեքների կանխամտածված ոչնչացումը որակելով որպես հանցագործություն՝ Լեմկինը պնդում է, որ խմբի կյանքի հիմքի (գենոֆոնդ) ոչնչացման ջանքերն իրենց մեջ ներառում են քաղաքական և սոցիալական մշակույթի, լեզվի, ազգային ինքնության անկում: Հատկանշական է, որ Լեմկինը մինչ «գենոցիդ» եզրի առաջադրումը և դրա բնորոշումը, հանդես եկավ նաև միջազգային օրենսդրական մի քանի նախագծերով «Բարբարոսության» և «վանդալիզմի» դատապարտման համար: «Բարբարոսությունը» սահմանվում էր հետևյալ կերպ. «ազգային, կրոնական, ռասայական և սոցիալական ընդհանրության ոչնչացում», իսկ վանդալիզմը՝ «ընդհանրությունների ուրույն հանճարի դրսևորում հանդիսացող մշակույթի և արվեստի աշխատանքների ոչնչացում»: Լեմկինը պնդում է, որ թե «վանդալիզմը» և թե «Բարբարոսությունը» դիտարկվեն որպես միջազգային հանցագործություններ:

Անվանի ցեղասպանագետ Երուսաղեմի Հոլոքոսթի և ցեղասպանության ուսումնասիրության ինստիտուտի տնօրեն Իսրայել Չարնիի կարծիքով մշակութային ցեղասպանությունը կամ այլ խմբի մշակույթի կանխամտածված ոչնչացումն է և պարտադիր չէ, որ այն ներառի նաև խմբի ֆիզիկական ոչնչացումը:

Հիմք ընդունելով Լեմկինի վերոհիշյալ աշխատությունը՝ ՄԱԿ-ում 1948 թ. պատրաստվեց «Ցեղասպանություն հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան, որի նախնական տարբերակում ընդգրկվեցին ֆիզիկական, կենսաբանական և մշակութային ցեղասպանություն ձևակերպումները: Նախագծում վերջինիս վերաբերող սահմանումներն էին.

- ✓ Խմբի երեխաների բռնի տեղափոխումն այլ խմբեր:
- ✓ Այն մարդկանց բռնի և սիստեմատիկ արտաքսումը, ովքեր ներկայացնում են

տվյալ մշակութային խումբը:

- ✓ Մայրենի լեզվի օգտագործման արգելումը նույնիսկ նեղ շրջանակներում:
- ✓ Մայրենի լեզվի լույս տեսած գրքերի կամ կրոնական աշխատությունների սիստեմատիկ ոչնչացումը և վերահրատարակելու արգելքը:

✓ Պատմական և կրոնական հուշարձանների սիստեմատիկ ոչնչացումը կամ դրանց օգտագործումն այլ նպատակներով, պատմական, գեղարվեստական, կրոնական արժեք ունեցող փաստաթղթերի կամ կրոնական ծեսերում օգտագործվող առարկաների ոչնչացումը և տարրալուծումը:

Մշակութային ցեղասպանությունը բնորոշ և դատապարտող վերոհիշյալ սահմանումները թեպետ կոնվենցիայի վերջնական տարբերակում տեղ չգտան, սակայն

Ժամանակակից միջազգային իրավունքում պարտավորությունները, որոնք վերաբերվում են մշակութային ժառանգության պահպանմանն ու դրանց ոչնչացման համար պատասխանատվության ենթարկելուն: Բացարձակ ճշմարտություն է այն, որ մշակութային արժեքների ոչնչացումը երբեք չի կարելի համեմատել ֆիզիկական ոչնչացման, կամ մի ամբողջ խմբի բնաջնջման հետ, սակայն պատմությունը ցույց է տալիս, որ մեկն առանց մյուսի երկար գոյատևել չեն կարող: Խմբի մշակութային ժառանգության լիակատար ոչնչացումը կհանգեցնի տվյալ խմբի անհետացմանը մարդկության համընդհանուր հիշողությունից, ինչպես և նրա կենսագործունեության բոլոր հետքերի վերացմանը:

Մեր օրերում մշակութային ժառանգության դեմ ոտնձգությունները կրում են շարունակական բնույթ՝ ուղեկցելով նորանոր ցեղասպանական գործողություններով կամ պատերազմի ժամանակ կիրառվող ուղղափառ հոգևոր հաստատությունների և այլ մշակութային կենտրոնների դեմ իրականացված ոտնձգությունները, Բուդդայի արձանի պայթեցումը թալիբների կողմից, ինչպես նաև Նախիջևանում Հին Ջուղայի հայկական գերեզմանոցի պետական մակարդակով իրագործված բարբարոսական ոչնչացումը վկայում են այն մասին, որ մշակութային ցեղասպանությունները դեռ կիրառվել են և շատ հաճախ ուղղորդվում են կոնկրետ պետության իշխանությունների կողմից: Այս կամ այն խմբի մշակութային արժեքների ոչնչացման շարունակելիությունը, անժխտելիորեն հաղիսանում է մշակութային ցեղասպանություն իրագործողների անպատժելիության արդյունք: Հայկական մշակութային ժառանգության հետևողական ոչնչացումը Օսմանյան կայսրության, ապա նաև Թուրքիայի հանրապետության տարածքում, որը լիովին համապատասխանում է մշակութային ցեղասպանություն բնորոշմանը և հայերի դեմ իրագործած ցեղասպանության բաղկացուցիչ մաս է կազմում, հենց այդ անպատժելիության դասական օրինակն է հանդիսանում:

Թուրքական կառավարությունը, թեև պաշտոնապես հավատարիմ է մնում ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանությանը վերաբերող միջազգային պայմանագրերին, այնուհանդերձ, կանխամտածված կերպով շարունակում է իր տարածքի, դեռևս կանգուն կամ կիսավեր հայկական հուշարձանների ոչնչացումը: Արկանգասի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր Սեմյուել Թոթենը, խոսելով հայերի դեմ իրագործված ցեղասպանության մասին, պնդում է, որ հայկական մշակութային հուշարձանների նկատմամբ իրագործված վանդալիզմը հանդիսանում է ցեղասպանության ակտ:

Ժամանակակից ակադեմիական գրականության մեջ «Էթնոցիդ» եզրն առավել հաճախ օգտագործվում է ավելի նեղ իմաստով, բնորոշելով մշակութային ցեղասպանությունը:

Այսպիսի իմաստով այն բնութագրվում է Սան Խոսեում 1981 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված հռչակագրում, որում մասնատրապես նշվում է «Էթնոցիդը դա էթնիկ խմբին իր սեփական մշակույթի, լեզվի օգտագործման ու զարգացման և փոխանցման խմբային և անհատական իրավունքների մերժումն է... Մենք հայտարարում ենք, որ Էթնոցիդը, այսինքն մշակութային ցեղասպանությունը միջազգային իրավունքի խախտում է և համարժեք է ցեղասպանությանը, որը դատապարտվում է Միացյալ ազգերի «Ցեղասպանության հանցագործության կանխմանը և դրա համար պատժի մասին» 1948թ. կոնվենցիայով»:

Այսպիսով, մշակութային ցեղասպանությունը, որպես կանոն, խմբի ոչնչացման ցեղասպանող ծրագրի մասն է կազմում՝ ձգտելով ժխտել խմբի յուրաքանչյուր մարդկային կյանքի գոյությունը և այն ենթադրությունը. թե մշակութային ցեղասպանությունը տարբերվում է ֆիզիկական բռնություն ենթադրող ցեղասպանությունից իրականում թյուրիմացություն է, քանզի մշակութային ցեղասպանությունը ցանկացած ցեղասպանական գործողության բաղկացուցիչ և կարևոր մասն է:

ՀՏԴ007.5(681.5)

ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐՂՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ալյոնա Վանյան, Մերի Խաչատրյան
ԱրՊՀ, Բնագիտական ֆակուլտետ մագիստրանտ
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
մագիստրանտ-1 կուրս
Գիտական ղեկավար մ.գ.թ.դոցենտ Վ. Վ. Առստամյան
Email- alyona.vanyan@mail.ru,
meri-xachatryan-1996@mail.ru

Բանալի բառեր. համակարգ, ավտոմատացում, ծրագրային ապահովում, գործակալություն, կառավարում, սպասարկման մակարդակ, արդյունավետություն, տեղեկատվական տեխնոլոգիա, ինֆորմացիա, ծրագրավորման լեզու.

Ключевые слова. система, автоматизация, программное обеспечение, агенство, управления, уровень обслуживания, эффективность, информационная технология, информация, язык программирования

Key words. system, automation, software, agency, management, service level, efficiency, information technology, information, programming language

Ամփոփում

Մրցակցային շուկայում առաջատար տեղ զբաղեցնելու համար ժամանակակից գործակալությունների ամենակարևոր հիմնախնդիրներից է հանդիսանում սպասարկման մակարդակի բարելավումը: Աշխատանքի ընթացքում կուտակվում է տվյալների մեծ չափաբաժին, ինչի արդյունավետ օգտագործումից էլ մեծ հաշվով կախված է սպասարկման մակարդակը: Սույն հոդվածը նպատակ ունի ներկայացնելու ավտոմատացված համակարգի պարզագույն օրինակ, ինչը թույլ է տալիս ինֆորմացիայի կենտրոնացված պահպանում ու նրա հետ տարբեր գործողությունների իրականացման հարմարավետություն՝ ժամանակի համեմատական կրճատմամբ:

Алёна Ванян, Мери Хачатрян – АрГУ, магистрос

ТРЕБОВАНИЕ АВТОМАТИЧЕСКИХ СИСТЕМ В АГЕНСТВАХ

Резюме

Повышение уровня обслуживания является одной из важнейших проблем современных агентств, чтобы занимать лидирующие позиции на конкурентном рынке. Во время рабочего процесса накапливается большая часть данных, и именно от эффективности ее использования зависит уровень обслуживания. Целью этой статьи является представление упрощенного примера автоматизированной системы, которая позволяет централизованное хранение информации и удобство выполнения различных действий с сравнительно сокращением времени.

Alyona Vanyan, Meri Xachatryan – ASU, master

REQUIREMENT OF AUTOMATIC SYSTEMS IN AGENCIES

Summary

Increasing the level of service is one of the most important problems of modern agencies in order to occupy a leading position in a competitive market. During the work process, most of the data

is accumulated, and it is the effectiveness of its use that determines the level of service. The purpose of this article is to provide a simplified example of an automated system that allows centralized storage of information and the convenience of performing various actions with a relatively shortened time.

Ժամանակակից պայմաններում գործակալության արդյունավետ կառավարումն անհնար է առանց համակարգչային տեխնոլոգիաների օգտագործման: Ինտեգրացված տեղեկատվական համակարգի օգտագործումը, որը կբավարարի գործակալության պահանջներին (մասշտաբին, բիզնեսի ուղղվածությանն ու յուրահատկություններին), թույլ կտա նվազագույնի հասցնել ծախսերը և բարձրացնել գործակալության կառավարման արդյունավետությունը:

Որպես օրինակ ուսումնասիրենք զբոսաշրջային գործակալության աշխատանքը, որի հիմնական խնդիրն է հասնել որակյալ սպասարկման՝ նպատակ ունենալով գրավել նոր հաճախորդների ու ստանալ մաքսիմալ շահույթ:

Տուրիստական գործակալության աշխատանքը ներառում է մի շարք գործողությունների իրականացման ամբողջություն, որոնք <<ձեռքով>> կատարելու դեպքում ժամանակի մեծ կորուստ են պահանջում: Այդ գործողությունների մեջ են մտնում նոր հաճախորդների, տուրերի կամ գործընկերների հետ համագործակցության մասին համապատասխան տեղեկատվության գրանցումը, մրցակցային տուրերի փնտրումը, տուրերի արժեքների հաշվարկը, հաճախորդների դիմումների վերլուծական աշխատանքները և այլն:

Գործակալության աշխատանքի ընթացքում կուտակվում է մեծաքանակ տեղեկատվություն ընդհանուր աշխատանքի վերաբերյալ: Իսկ ինֆորմացիայի հետ ամենատարբեր աշխատանքների կատարման համար առաջին հերթին անհրաժեշտ է գտնել ու ունենալ հենց անհրաժեշտ տեղեկատվությունը: Փաստաթղթային տարբերակով աշխատելու դեպքում այս գործընթացի իրականացումը կպահանջի մեծ ջանքեր, հավելյալ ժամանակի կորուստ: Բացի այդ, գործակալության ամեն մի աշխատակից, սովորաբար, տիրապետում է կոնկրետ իր անմիջական աշխատանքի հետ կապված ինֆորմացիային: Այս դեպքում առաջ են գալիս որոշ բարդություններ՝ կապված ինֆորմացիայի հասանելիության ու վերադասի կողմից վերահսկման հետ:

Գործակալության աշխատանքի ավտոմատացման համար մշակված ծրագրային ապահովումը թույլ կտա կենտրոնացնել ամբողջ աշխատանքային ինֆորմացիան ու հասանելի դարձնել այն տվյալ աշխատակիցների համար:

Բացի այդ, ամբողջ տեղեկատվությունը պարունակող մեծաքանակ փաստաթղթերի ստեղծման ու պահպանման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները հնարավոր կլինի ծախսել առավել նպատակահարմար ուղղությամբ ու ստանալ հավելյալ շահույթ:

Ավտոմատացված համակարգը թույլ կտա քիչ ժամանակ ծախսել փնտրելու շրջայցի և նրա պատվերի մասին համապատասխան ինֆորմացիա, իսկ համակարգի շրջանակներում ստեղծված տվյալների հենքը գործակալության աշխատակիցներին հնարավորություն կտա կատարել ստացված դիմումների, ինչպես նաև գործակալության ծառայություններից օգտված հաճախորդների թողած մեկնաբանությունների վերլուծություն:

Ավտոմատացված համակարգի ներդրման մասին որոշումը գործակալության կողմից ընդունվում է՝ նպատակ ունենալով.

- ավտոմատացնել իրականացվող աշխատանքի կազմակերպումը,
- նվազեցնել աշխատողների ծանրաբեռնվածության աստիճանը,
- բարձրացնել գործակալության սպասարկման մակարդակը,
- կրճատել ներքին փաստաթղթաշրջանառությունը,
- նվազագույնի հասցնել ինֆորմացիայի հետ աշխատանքի ընթացքում սխալվելու հավանականությունը՝ շնորհիվ համակարգում տվյալների մուտքագրման որոշակի ստուգումների ու հուշումների մշակված ընթացակարգի,

- առավել հարմար դարձնել ինֆորմացիայի հետ տարբեր գործողությունների իրականացումը, մասնավորապես՝ նոր տվյալների լրացման, ապա դրանց հետ կատարվող վերլուծական աշխատանքների կատարման ժամանակ,
- կրճատել նոր դիմումների ընդունման ժամանակը՝ շնորհիվ համակարգի մեջ տվյալների մուտքագրման համար մշակված ֆունկցիոնալության,
- բարձրացնել գործընկերների ու հաճախորդների հետ աշխատանքի արդյունավետությունը:

Դիտարկենք ավտոմատացված համակարգի մշակման գործընթացը:

Առաջին հերթին անհրաժեշտ է, որպեսզի համակարգը պարունակի տվյալ գործակալության աշխատանքային բնույթին համապատասխան տվյալների հենք, ինչի ճիշտ ստեղծումը հիմունքային ու շատ կարևոր դեր է խաղում համակարգի ընդհանուր աշխատանքի կազմակերպման գործում, քանզի տվյալների հենքն է հանդիսանում գործակալության աշխատանքային տեղեկատվության պահպանման միջոց՝ հետագայում այդ ինֆորմացիայի հետ աշխատելու հնարավորությամբ:

Ունենալով ճիշտ ստեղծված տվյալների հենք՝ հաջորդ քայլը կլինի համապատասխան տեղեկատվությունների լրացման համար նախատեսված էջերի ստեղծումը: Մա հնարավորություն կընձեռնի գործակալության աշխատողին հարմար տարբերակով պահպանել նոր ընդունվող տեղեկատվությունը, հետագայում դրանց հետ տարբեր գործողությունների՝ փոփոխելու, ընտրելու կամ ջնջելու հնարավորությամբ: Այստեղ շատ կարևոր է, որպեսզի էջերի ստեղծման ժամանակ հաշվի առնվեն գործակալության աշխատանքի ընթացքում պահպանվելու անհրաժեշտություն ունեցող ամբողջ տեղեկատվության պահպանման հնարավորությունը. էջերը պետք է պարունակեն նշված տվյալների պահպանման համար անհրաժեշտ բոլոր դաշտերը:

Ֆորմաների կազմման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել որոշակի դրույթներ, այդ թվում՝

- տվյալների պահպանման հարմարավետություն. աշխատողից չպետք է առանձնակի ջանքեր պահանջվեն տեղեկատվությունների լրացման համար:
- անհրաժեշտ է մշակել լրացվող տվյալների մուտքագրման ու մշակման ճշտությունն ստուգող ներկառուցված համակարգ՝ այսինքն լրացվող տվյալների համապատասխանությունը որոշակի չափանիշների (օրինակ՝ վավեր էլեկտրոնային հասցեի կամ հեռախոսահամարի լրացում, պարտադիր համարվող դաշտերի պարտադիր լրացում): Միայն արձանագրելու դեպքում համակարգի կողմից հուշում է տրվում օգտագործողին՝ համապատասխան հաղորդագրության տեսքով:
- պետք է բացառել տվյալների կրկնակի ներմուծումը:
- տվյալները պետք է մուտքագրվեն և փոփոխվեն միայն լիազորված անձանց կողմից: Տվյալների չարտոնված մուտքագրումը կանխելու համար կարող են կիրառվել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ բանալիները, անձնական ծածկագրերը: Տվյալներ մուտքագրելու և փոփոխելու, այդ թվում՝ անձնական ծածկագրերը փոփոխելու լիազորություն տալու, զրկելու և փոփոխելու համար պետք է սահմանվի համապատասխան ընթացակարգ: Ցանկալի է կիրառել այնպիսի համակարգեր, որոնք արձանագրում են չարտոնված անձանց կողմից համակարգ մուտք գործելու փորձերը:
- համակարգը պետք է արձանագրի տվյալներ մուտքագրող օպերատորների ինքնությունը, ինչպես նաև լրացման ժամանակը. տվյալների հենքում լրացվող տվյալների հետ մեկտեղ պահպանելով ինֆորմացիա այն մասին, թե երբ և ում կողմից է այն լրացվել:

Ունենալով արդեն իսկ գործող ֆունկցիոնալություն, որն հնարավորություն է տալիս կապ հաստատել տվյալների հենքի հետ՝ այնտեղ պահպանելով համապատասխան ինֆորմացիա՝ փոփոխելու, ընտրելու կամ ջնջելու հնարավորությամբ, անհրաժեշտ է որոշակի դիզայներական աշխատանք կատարել՝ էջին տալով հաճելի ու հարմար տեսք:

Նախքան ծրագրային ապահովման օգտագործումն պետք է մանրամասնորեն թեստավորվի և երաշխավորվի, որ այդ համակարգով կարելի է հասնել ցանկալի արդյունքների՝ վստահ լինելով ինֆորմացիայի ամբողջականության պահպանման հարցում:

Ամփոփելով հասկանում ենք, որ ավտոմատացված համակարգը պետք է առավելագույնս աջակցի գործակալության աշխատանքի ավտոմատացմանը, միևնույն ժամանակ ապահովելով տեղեկատվության անվնաս ու ամբողջական պահպանումն՝ առանց ավելորդ կրկնությունների: Աշխատանքի արդյունքը պետք է լինի ընդհանուր գործակալության աշխատանքի արդյունավետության ու սպասարկման մակարդակի բարձրացում՝ շնորհիվ ժամանակի ու սխալվելու հավանականության կրճատման: Այն նաև պետք է ապահովի ինֆորմացիայի հասանելիության հետ կապված գործակալության հետ համաձայնեցված ընթացակարգը:

Դիտարկենք մեր կողմից ստեղծված ավտոմատացված համակարգը, որը կոնկրետ գործակալության պահանջներին համապատասխան կատարելագործելու դեպքում կարող է օգտագործվել տվյալ գործակալության կողմից:

Համակարգի մշակման համար ունիվերսալ միջոց է հանդիսանում HTML+CSS+PHP+MySQL ծրագրավորման լեզուների միավորումը: Այն կարող է օգտագործվել ամենատարբեր մակարդակների վեր էջերի ստեղծման համար՝ սկսած տեղեկատվական ստատիկ էջերից մինչև դինամիկ վեբ էջեր:

Ավտոմատացված համակարգում օգտատերերի գրանցման համար մշակված է գրանցման համակարգ (նկար 1), որը հնարավորություն է տալիս գրանցել նոր օգտատերերի, ապա մուտք գործել համակարգ արդեն իսկ ստեղծված օգտատիրոջ տվյալներով՝ լրացնելով համապատասխան օգտագործողի անունն ու գաղտնաբառը (նկար 2):

Նկար 1. Գրանցման համակարգ

Նկար 2. Մուտքի պատուհան

Մուտք գործելուց հետո օգտատերին հնարավորություն է ընձեռնվում ընտրել հետևյալ գործողություններից որևէ մեկի իրականացումը (նկար 3)。

- Գրանցել նոր հաճախորդ (նկար 4),
- Գրանցել նոր շրջայց (նկար 5),
- Դիտարկել գոյություն ունեցող հաճախորդների մասին ինֆորմացիա՝ դրանք փոփոխելու կամ ջնջելու հնարավորությամբ (նկար 6),
- Դիտարկել գոյություն ունեցող տուրերի մասին ինֆորմացիա՝ դրանք փոփոխելու կամ ջնջելու հնարավորությամբ (նկար 7),
- Ստանալ սահմանված կարգով վերլուծական տվյալներով կառուցված հաշվետվություններ:

Նկար 3. Մուտք գործած օգտատիրոջ հնարավորությունները

Հաճախորդի տվյալների գրանցում * Պարտադիր դաշտեր

1 Անուն

2 Ազգանուն

3 Հայրանուն

4 Սեռ

☐ Սրական ☐ Իգական

5 Երկիր

Ընտրել երկիր

6 Էլ. փոստ

7 Հեռախոսահամար (+374-97-00-00-00)

8 Ծննդյան տարեթիվ (օր/ամիս/տարի)

DD . MM . YYYY

Հաստատել

Չեղարկել

[Վերադառնալ նախորդ էջ](#)
[Հույս զայլ համակարգից](#)

© 2018. Չորսաշրջային գործակալության ավտոմատացված համակարգ:

Նկար 4. Նոր հաճախորդի գրանցում

Նոր շրջայցի գրանցում * Պարտադիր դաշտեր

- 1 Թեմա / Նկարագրություն**
- 2 Մեկնարկի վայր**
- 3 Ընդգրկված վայրեր**
- 4 Ժամկետ**
 Մեկնարկի օր * Մեկնարկի ժամ Վերադարձի օր * Վերադարձի ժամ
 DD.MM.YYYY --:-- DD.MM.YYYY --:--
- 5 Զբոսավարի առկայություն**
☐ Այո ☐ Ոչ
- 6 Հյուրանոց(ներ)**
- 7 Մեքենայի մակնիշ**
- 8 Ընդհանուր արժեք (ՀՀ դրամ)**
- 9 Մեկ անձի համար արժեք (ՀՀ դրամ)**
- 10 Մասնակիցների առավելագույն քանակ**
- 11 Պատասխանատու անձ**

[Վերադառնալ նախորդ էջ](#)
[Դուրս գալ համակարգից](#)

© 2018. Զբոսաշրջային գործակալության ավտոմատացված համակարգ:

Նկար 5. Նոր շրջայցի գրանցում

Գրանցված հաճախորդներ

Անուն	Ազգանուն	Հայրանուն	Սեռ	Երկիր	Էլ. փոստ	Չեանդաստիվ	Գնախոստացում	Գնախոստացման ամսաթիվ	Գնախոստացման գրանցված է	Շրջափոխ թիվ
Alyona	Vanyan	Robert	Իգական	Արցախ	alyona.vanyan@mail.ru	9700000	1996-07-09	2018-04-10 01:10:05		
Արմենուհի	Գրիգորյան	Իսահակ	Իգական	Ամերիկա	armenuhi.armenian@yandex.ru	+37411020412	1977-12-12	2017-05-03 00:21:52	Այցելություն Գառնի ու Քեղարդ	
Արմենուհի	Գրիգորյան	Իսահակ	Իգական	Ամերիկա	armenuhi.armenian@yandex.ru	+37411020412	1977-12-12	2017-05-03 00:21:52	Այցելություն Գառնի ու Քեղարդ	
Տիգրան	Սահակյան	Արմեն	Արական	Հայաստան	tigran.sahakyan@yandex.ru	+37477040506	1993-05-01	2017-05-03 00:20:53	Այցելություն Գառնի ու Քեղարդ	
Տիգրան	Սահակյան	Արմեն	Արական	Հայաստան	tigran.sahakyan@yandex.ru	+37477040506	1993-05-01	2017-05-03 00:20:53	Արցախի պատմամշակութային վայրերի այցելության նպատակով եռօրյա շրջայց	
Պողոս	Պետրոսյան	Պողոս	Արական	Ռուսաստան	poxos.petrosyan@mail.ru	+37488010204	1987-04-02	2017-05-03 00:19:59	Այցելություն Գառնի ու Քեղարդ	
Պողոս	Պետրոսյան	Պողոս	Արական	Ռուսաստան	poxos.petrosyan@mail.ru	+37488010204	1987-04-02	2017-05-03 00:19:59	Այցելություն Գառնի ու Քեղարդ	
Պողոս	Պետրոսյան	Պողոս	Արական	Ռուսաստան	poxos.petrosyan@mail.ru	+37488010204	1987-04-02	2017-05-03 00:19:59	Արցախի պատմամշակութային վայրերի այցելության նպատակով եռօրյա շրջայց	
Վարդան	Բաղդյան	Իվիչ	Արական	Արցախ	vardan.bagryan@mail.ru	+37497110203	1996-04-02	2017-05-03 00:17:51	Այցելություն Գառնի ու Քեղարդ	
Վարդան	Բաղդյան	Իվիչ	Արական	Արցախ	vardan.bagryan@mail.ru	+37497110203	1996-04-02	2017-05-03 00:17:51	Արցախի պատմամշակութային վայրերի այցելության նպատակով եռօրյա շրջայց	
Վարդան	Բաղդյան	Իվիչ	Արական	Արցախ	vardan.bagryan@mail.ru	+37497110203	1996-04-02	2017-05-03 00:17:51	Ճանապարհորդություն ընկալի Արևմտյան Հայաստան	
Իրինա	Չաօբյան	Վադիկ	Իգական	Արցախ	irina.zaobryan@mail.ru	+37497160010	1996-03-01	2017-05-03 00:17:10	Ճանապարհորդություն ընկալի Արևմտյան Հայաստան	
Մերի	Խաչատրյան	Սերգեյ	Իգական	Արցախ	meri.xachatryan@mail.ru	+37497509396	1996-03-01	2017-05-03 00:15:39	Արցախի պատմամշակութային վայրերի այցելության նպատակով եռօրյա շրջայց	
Մերի	Խաչատրյան	Սերգեյ	Իգական	Արցախ	meri.xachatryan@mail.ru	+37497509396	1996-03-01	2017-05-03 00:15:39	Ճանապարհորդություն ընկալի Արևմտյան Հայաստան	
Ալյոնա	Վանյան	Ռոբերտ	Իգական	Արցախ	alyona.vanyan@mail.ru	+37497224294	0196-07-09	2017-05-03 00:14:29	Ճանապարհորդություն ընկալի Արևմտյան Հայաստան	


Փոփոխել / Ջնջել

Վերադառնալ Լախուր է

Պոստ ցայ համակարգից

© 2018. Չրուսաշրջային գործակալության ավտոմատացված համակարգ:

Նկար 6. Գրանցված հաճախորդներ



Գրանցված շրջայցեր

Թեմա / Նկարագրություն	Մեկնարկի վայր	Ընդգրկված վայրեր	Մեկնարկի օր	Վերադարձի օր	Չրուսաշրջային ապագայություն	Չրուսաշրջային ապագայություն	Մեքենայի մակնիշ	Ուղևորության արժեք (ՀՀ դրամ)	Մեքենայի հավելյալ արժեք (ՀՀ դրամ)	Մասնակիցների առավելագույն քանակ	Պատասխանատու անձ	Շրջափոխ թիվ	Մասնակիցներ
Ճանապարհորդություն ընկալի Արևմտյան Հայաստան	ք. Երևան	Կարս, ՄԱԿ, Վան, Մուշ, Էջրամ, Բայազետ	2017-05-29	2017-05-29	Այո	Վանի հյուրանոց, Բայազետի հյուրանոց	Սպիտակ	1275000	85000	15	Չաօբյան Վահան	2017-05-03 00:33:10	Ալյոնա Վանյան Ռոբերտ
Ճանապարհորդություն ընկալի Արևմտյան Հայաստան	ք. Երևան	Կարս, ՄԱԿ, Վան, Մուշ, Էջրամ, Բայազետ	2017-05-29	2017-05-29	Այո	Վանի հյուրանոց, Բայազետի հյուրանոց	Սպիտակ	1275000	85000	15	Չարոբյան Վահան	2017-05-03 00:33:10	Իրինա Չարոբյան Վարդան
Ճանապարհորդություն ընկալի Արևմտյան Հայաստան	ք. Երևան	Կարս, ՄԱԿ, Վան, Մուշ, Էջրամ, Բայազետ	2017-05-29	2017-05-29	Այո	Վանի հյուրանոց, Բայազետի հյուրանոց	Սպիտակ	1275000	85000	15	Չարոբյան Վահան	2017-05-03 00:33:10	Մերի Խաչատրյան Սերգեյ
Ճանապարհորդություն ընկալի Արևմտյան Հայաստան	ք. Երևան	Կարս, ՄԱԿ, Վան, Մուշ, Էջրամ, Բայազետ	2017-05-29	2017-05-29	Այո	Վանի հյուրանոց, Բայազետի հյուրանոց	Սպիտակ	1275000	85000	15	Չարոբյան Վահան	2017-05-03 00:33:10	Վարդան Բաղդյան Իվիչ
Այցելություն Գառնի ու Քեղարդ	ք. Ստեփանավան	Գառնի, Քեղարդ	2017-05-28	2017-05-28	Այո	Գառնիի հյուրանոց	Մեղրեյ	300000	10000	30	Պողոս Պողոսյան Պետրոս	2017-05-03 00:30:00	Արմենուհի Գրիգորյան Իսահակ
Այցելություն Գառնի ու Քեղարդ	ք. Ստեփանավան	Գառնի, Քեղարդ	2017-05-28	2017-05-28	Այո	Գառնիի հյուրանոց	Մեղրեյ	300000	10000	30	Պողոս Պողոսյան Պետրոս	2017-05-03 00:30:00	Պողոս Պետրոսյան Պետրոս
Այցելություն Գառնի ու Քեղարդ	ք. Ստեփանավան	Գառնի, Քեղարդ	2017-05-28	2017-05-28	Այո	Գառնիի հյուրանոց	Մեղրեյ	300000	10000	30	Պողոս Պողոսյան Պետրոս	2017-05-03 00:30:00	Վարդան Բաղդյան Իվիչ
Այցելություն Գառնի ու Քեղարդ	ք. Ստեփանավան	Գառնի, Քեղարդ	2017-05-28	2017-05-28	Այո	Գառնիի հյուրանոց	Մեղրեյ	300000	10000	30	Պողոս Պողոսյան Պետրոս	2017-05-03 00:30:00	Սերգեյ Խաչատրյան Պետրոս
Արցախի պատմամշակութային վայրերի այցելության նպատակով եռօրյա շրջայց	ք. Ստեփանավան	Ճ. Երևան, Վ. Վան, Տ. Տավուշ, Ս. Սյունիք, Բ. Բայազետ	2017-05-27	2017-05-30	Այո	Ալյան պալատ, Տիգրանի բաղնիք	Սպիտակ	300000	25000	12	Պողոս Պողոսյան Պետրոս	2017-05-03 00:28:08	Պողոս Պետրոսյան Պետրոս
Արցախի պատմամշակութային վայրերի այցելության նպատակով եռօրյա շրջայց	ք. Ստեփանավան	Ճ. Երևան, Վ. Վան, Տ. Տավուշ, Ս. Սյունիք, Բ. Բայազետ	2017-05-27	2017-05-30	Այո	Ալյան պալատ, Տիգրանի բաղնիք	Սպիտակ	300000	25000	12	Պողոս Պողոսյան Պետրոս	2017-05-03 00:28:08	Վարդան Բաղդյան Իվիչ
Արցախի պատմամշակութային վայրերի այցելության նպատակով եռօրյա շրջայց	ք. Ստեփանավան	Ճ. Երևան, Վ. Վան, Տ. Տավուշ, Ս. Սյունիք, Բ. Բայազետ	2017-05-27	2017-05-30	Այո	Ալյան պալատ, Տիգրանի բաղնիք	Սպիտակ	300000	25000	12	Պողոս Պողոսյան Պետրոս	2017-05-03 00:28:08	Վարդան Բաղդյան Իվիչ
Արցախի պատմամշակութային վայրերի այցելության նպատակով եռօրյա շրջայց	ք. Ստեփանավան	Ճ. Երևան, Վ. Վան, Տ. Տավուշ, Ս. Սյունիք, Բ. Բայազետ	2017-05-27	2017-05-30	Այո	Ալյան պալատ, Տիգրանի բաղնիք	Սպիտակ	300000	25000	12	Պողոս Պողոսյան Պետրոս	2017-05-03 00:28:08	Վարդան Բաղդյան Իվիչ

Փոփոխել / Ջնջել

Վերադառնալ Լախուր է

Պոստ ցայ համակարգից

© 2018. Չրուսաշրջային գործակալության ավտոմատացված համակարգ:

Նկար 7. Գրանցված շրջայցեր

Ընտրելով վերը նշվածներից որևէ մեկը՝ բացվում է նոր էջ՝ ըստ համապատասխան գործողության: Էջերից յուրաքանչյուրը նաև հնարավորություն է տալիս օգտատերին դադարեցնել աշխատանքը և դուրս գալ համակարգից:

Տվյալ աշխատանքի շրջանակներում մշակված համակարգը թույլ կտա տուրիստական գործակալությանը հասնել առավել մեծ հաջողությունների, քանզի նրա արդյունավետ օգտագործումը հնարավորություն է ընձեռնում ավտոմատացնել ներքին աշխատանքային գործընթացը, ընդհանրացնել ինֆորմացիայի հասանելիության չափանիշները, թեթևացնել աշխատողների ծանրաբեռնվածությունը, վերացնել սխալներն ու արագացնել աշխատանքի տեմպը, բարձրացնել հաճախորդների նկատմամբ սպասարկման մակարդակը:

Այսպիսով, ավտոմատացված համակարգի օգտագործմամբ հաջող աշխատանքի հիմքը տեղեկատուների և դասակարգիչների լրացումն է: Համակարգի հարմար ֆունկցիոնալության օգտագործմամբ հնարավոր է դառնում մաքսիմալ արագությամբ և ճշտությամբ (շնորհիվ վերահսկման ու հուշումների մշակված համակարգի) լրացնել դիմումը, ձևակերպել շրջայցը, կատարել վճարումները կամ ստանալ վիճակագրական տվյալներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Автоматизированные информационные технологии в экономике: учебник / под ред. проф. Титоренко Г.А. - М.: Компьютер, ЮНИТИ, 2008.
2. Вендров А.М. Проектирование программного обеспечения экономических информационных систем. - М.: Финансы и статистика, 2010.
3. Калянов Г.Н. CASE - технологии. Консалтинг при автоматизации бизнес процессов. - М.: Горячая линия - Телеком, 2014.
4. Маклаков С.В. BPWin и ERWin. CASE - средства разработки информационных систем. - М.: ДИАЛОГ - МИФИ, 2010.
5. Պողոսյան Ա. <<Ինտերնետ մարքեթինգի համառոտ ձեռնարկ. Համակարգ, հետազոտություն և կիրառում>>, Երևան, 2009.
6. Պողոսյան Ա.<< Էլեկտրոնային կոմերցիա>>; Հեղինակային հրատարակչություն, 2005.

ՀՏԴ004.42(519.85)

ՄԵԿ ՓՈՓՈԽԱԿԱՆԻ ՖՈՒՆԿՑԻԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ MATHCAD
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Անժելիկա Սաղյան
ԱրՊՀ, Բնագիտական ֆակուլտետ
Ի/ԿՄ-մագիստրատուրա 1-ին կուրս
anjelika.saghyan@mail.ru
Գիտական դեկավար ֆ.մ.գ.թ.դոցենտ Գ.Հ.Սահակյան

Բանալիքառեր. Մաթեմատիկա, համակարգիչ, Mathcad, մոնոտոնություն, կենտություն, պարբերականություն, ծրագիր, ֆունկցիա, միջակայք, զոգավորություն, սահմանափակություն:
Ключевые слова: Математика, компьютер, Mathcad, монотонность, нечетный, периодичность, программа, функция, диапазон, вогнутость, узорность.
Keywords: Macematics, computer, Mathcad, monotony, obsession, periodicity, program, function, range, ggles, limited.

Анжелика Сагиян-АрГУ,
Научный руководитель Г.Г. Саакян

ИССЛЕДОВАНИЕ ФУНКЦИИ ОДНОЙ ПЕРЕМЕННОЙ В СИСТЕМЕ MATHCAD

Резюме

Во время работы исследовалось поведение одной переменной в конечном диапазоне в среде MathCad.

Anjelika Saghyan-ASU,
Scientific adviser G.H.Sahakyan

ONE VARIABLE FUNCTION IN THE MATHCAD SYSTEM

Summary

During the work, the behavior of one variable in the final range in the MathCad environment was investigated.

Մաթեմատիկական խնդիրների լուծումը հանդիսանում է համակարգիչի կիրառման հիմնական բնագավառներից մեկը: Այդ նպատակների համար մինչև այդ պահանջվում էր ծրագրավորման լեզուների իմացությունը, իսկ մաթեմատիկական փաթեթների հանդես գալուց հետո օգտագործողի աշխատանքը թեթևացել է:

MathCAD Professional փաթեթը այսօր հանդիսանում է ժամանակակից միջոց զանազան մաթեմատիկական և տեխնիկական հաշվարկների կատարման համար: MathCAD-ը ծրագրերի ուսումնասիրություն է, որը կենտրոնացած է պատրաստման ինտերակտիվ փաստաթղթերի հետ, հաշվարկների և տեսողական նվազակցությամբ տարբերվում է հեշտ օգտագործմամբ և կիրառման համագործակցությամբ:

Ներկայացնենք թվային ֆունկցիաների վարքը բնութագրող որոշ հատկություններ՝ մոնոտոնություն, սահմանափակություն, զոգավորություն, կենտություն և պարբերականություն:

Մոնոտոն ֆունկցիաներ

Սահմանում 1: $f(x)$ ֆունկցիան կոչվում է աճող (նվազող) X բազմության վրա, եթե ցանկացած $x_1, x_2 \in X$ թվերի համար $x_1 < x_2$ անհավասարությունից հետևում է, որ $f(x_1) < f(x_2)$ ($f(x_1) < f(x_2)$):

Սահմանում 2: $f(x)$ ֆունկցիան կոչվում է չաճող (չնվազող) X բազմության վրա, եթե ցանկացած $x_1, x_2 \in X$ թվերի համար $x_1 < x_2$ անհավասարությունից հետևում է, որ $f(x_1) \geq f(x_2)$ ($f(x_1) \leq f(x_2)$):

Աճող, նվազող, չաճող, չնվազող ֆունկցիաներն անվանում են մոնոտոն ֆունկցիաներ:

Մաթեմատիկական անալիզում հանդիպող ֆունկցիաների համար սովորաբար հնարավոր է լինում որոշման տիրույթը տրոհել վերջավոր կամ անվերջ բազմությամբ միջակայքերի, որոնցից յուրաքանչյուրում ֆունկցիան մոնոտոն է:

Սահմանափակ և անսահմանափակ ֆունկցիաներ

Սահմանում 1: $f(x)$ ֆունկցիան կոչվում է վերնից (ներքևից) սահմանափակ, եթե գոյություն ունի այնպիսի $M(m)$ թիվ, որ ցանկացած $x \in D(f)$ թվի համար

$$f(x) \leq M \quad (f(x) \geq m):$$

Սահմանում 2: $f(x)$ ֆունկցիան կոչվում է սահմանափակ, եթե այն սահմանափակ է և՛ վերնից, և՛ ներքևից:

Պարզ է, որ $f(x)$ ֆունկցիան սահմանափակ է այն և միայն այն դեպքում, եթե գոյություն ունի այնպիսի $K > 0$ թիվ, որ ցանկացած $x \in D(f)$ թվի համար $|f(x)| \leq K$:

Սահմանում 3: $f(x)$ ֆունկցիան կոչվում է

ա) անսահմանափակ վերնից, եթե $\forall M \in \mathbb{R} \exists x_0 \in D(f) (f(x_0) > M)$,

բ) անսահմանափակ ներքևից, եթե $\forall m \in \mathbb{R} \exists x_0 \in D(f) (f(x_0) < m)$,

գ) անսահմանափակ, եթե $\forall k > 0 \exists x_0 \in D(f) (|f(x_0)| > k)$:

Զույգ և կենտ ֆունկցիաներ

Զույգության և կենտության հատկությունները վերաբերում են այն ֆունկցիաներին, որոնց որոշման տիրույթը համաչափ է 0-ի նկատմամբ, այսինքն՝ $\forall x \in D(f) \Rightarrow -x \in D(f)$:

Սահմանում 1: $f(x)$ ֆունկցիան կոչվում է զույգ (կենտ), եթե նրա $D(f)$ որոշման տիրույթը համաչափ է 0-ի նկատմամբ և

$$\forall x \in D(f) (f(-x) = f(x)) (\forall x \in D(f) (f(-x) = -f(x))):$$

Պարբերական ֆունկցիաներ


Սահմանում 1: $f(x)$ ֆունկցիան կոչվում է պարբերական, եթե գոյություն ունի զրոյից տարբեր այնպիսի T թիվ, որ $x \in D(f)$ պայմանից հետևում է, որ $x \pm T \in D(f)$ և $f(x + T) = f(x)$: T թվին անվանում են $f(x)$ ֆունկցիայի պարբերություն:

$f(x)$ պարբերական ֆունկցիայի փոքրագույն դրական պարբերությունն անվանում են այդ ֆունկցիայի հիմնական պարբերություն: Այդ դեպքում ասում են, որ $f(x)$ ֆունկցիան T – պարբերական է:

MathCad ծրագրում երկչափանի գրաֆիկ կառուցելու համար անհրաժեշտ է.

1. Սահմանել ֆունկցիան
2. Սեղմել  կոճակի վրա
3. Լրացնել Էկրանին պատկերված ստանդարտում բջիջները, ձախից նշելով նրանց մեջ ֆունկցիան և ներքևում արգումենտը:
4. Սեղմել մկնիկի ստեղնը գրաֆիկի տիրույթից դուրս
5. Անհրաժեշտության դեպքում կարող ենք հաշվել նաև ածանցյալը


Օրինակ 1: շետագոտել $f(t) := \sin\left(\frac{t}{10}\right)$: ֆունկցիան $[2\pi; 3\pi]$ միջակայքում



1. Ֆունկցիայի արժեքների տիրույթը՝ $E(f) \in [0,996; 0,999]$

2. $\max$ -ի կետ չունի, $f(\min) = 0,994$, $t_{\min} = 0$:
3. $f \uparrow [0,994; +\infty)$
4. Գոգավոր է
5. Ասիմպտոտներ չունի
6. $f'(t) = \sin\left(\frac{1}{t}\right) - \frac{\cos\left(\frac{1}{t}\right)}{t}$

Օրինակ 2: Հետազոտել $f(t) := \frac{t^2}{t+1}$ ֆունկցիան տրված $[0,2]$ միջակայքում.



1. Ֆունկցիայի արժեքների տիրույթը՝ $E(f) \in [0; 10]$
2. $\max$ -ի կետ չունի, $f(\min) = 0$, $t_{\min} = 0$:
3. $f \uparrow [0; +\infty]$ աճող ֆունկցիա է:
4. Ուռուցիկ է
5. Ասիմպտոտներ չունի
6. $f(0) = 0$
7. $f'(t) = \frac{e^t}{t+1} + \frac{t \cdot e^t}{t+1} - \frac{t \cdot e^t}{(t+1)^2}$

Այսպիսով, աշխատանքում ուսումնասիրվել է վերջավոր միջակայքում մեկ փոփոխականի ֆունկցիայի հետազոտման մեթոդները MathCad միջավայրում:

Ուսումնասիրության արդյունքում մենք եկանք այն եզրակացության, որ տիրապետելով MathCad-ին հնարավորություն ունենք ավելի սեղմ ժամկետներում ստանալ մեզ հուզող հետազոտության արդյունքները ցանկացած միջակայքի կետի համար, ի տարբերություն ֆունկցիայի հետազոտման անալիտիկ եղանակի բավականին ծավալուն աշխատանքի:

Օգտագործված գրականության ցանկը

1. Մ.Գ. Պետրոսյան: Բարձրագույն մաթեմատիկա: Ստեփանակերտ, 2010:
2. Գ.Հ. Սահակյան: MathCad 2000. Երևան, 2004 :
3. <https://ru.wikipedia.org/wiki/Mathcad>
4. <tps://almiraberberyan.wordpress.com>

ՀՏԴ 004.42(519.85)

**ՏԵԼԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՖԱՅԼԵՐԻ
ԿՈԴԱՎՈՐՄԱՆ և ԱՊԱԿՈԴԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ**

Դիանա Իսրայելյան
ԱրՊՀ, Բնագիտական ֆակուլտետ
Կառ. տեղ. համակարգեր
4-րդ կուրս israelyan.diana@mail.ru
Գիտական ղեկավար մ.գ.թ.դոցենտ Վ.Վ. Արուստամյան

Բանալի բառեր. տեղեկատվություն, կոդավորում, ապահովում, ինտերնետ, գաղտնագրության համակարգեր, կրիպտոգրաֆիա, ալգորիթմ, ծրագրավորում, C# ծրագրավորման լեզու, օբյեկտային – կողմնորոշված ծրագրավորում:

Ключевые слова: информация, кодирование, декодирование, интернет, криптографические системы, криптография, алгоритм, программирование, язык программирования C #, объектно-ориентированное программирование.

Key words: information, coding, decoding, internet, cryptography systems, cryptography, algorithm, programming, C # programming language, object oriented programming.

ЗАЩИТА ИНФОРМАЦИИ ПУТЕМ ШИФРОВАНИЯ И ДЕШИФРОВАНИЯ ФАЙЛОВ

Диана Израелян-АрГУ,
Научный руководитель В.В. Арустамян

Резюме

Во время работы была создана программа, которая предоставляет передать информацию без потери и безопасным путем, используя методы шифрования и дешифрования.

PROTECTING INFORMATION BY ENCRYPTING AND DECRYPTING FILES

Diana Israelyan-ASU,
Scientific adviser V.V. Arustamyan

Summary

During the work, a program was created that enables the delivery of information online without loss and security, using encryption and decoding methods.

Հասարակության զարգացման ժամանակակից փուլը բնութագրվում է տեղեկատվական ոլորտի աճող դերակատարմամբ: Տեղեկատվական ոլորտն իրենից ներկայացնում է տեղեկատվություն հավաքող, ձևավորող, տարածող և օգտագործող սուբյեկտների, տեղեկատվության և տեղեկատվական ենթահամակարգերի ամբողջություն, ինչպես նաև այդ գործընթացների ընթացքում առաջացող հասարակական հարաբերությունների կարգավորման համակարգ:

Ներկա ժամանակներում տեղեկատվությունը փոխվում է շատ մեծ արագությամբ: Մարդիկ առօրյա կյանքում օգտագործում են մեծ ծավալներով տեղեկատվություն, որոնց մեծ մասը պահվում է էլեկտրոնային ձևով: Տեղեկատվությունն արագ ձևով փոխանցելու համար մարդիկ օգտագործում են համացանցը:

Հաճախ փոխանցվող տեղեկատվությունը շատ գաղտնի է լինում և այն պետք է հասանելի լինի միայն ուղարկողին և ստացողին, օրինակ բանկային հաշիվների կամ երկրի անվտանգությանը վերաբերվող տեղեկատվության դեպքում: Ինտերնետով նման տեղեկատվությունը բաց տեքստով փոխանցելիս այն կարող է ընկնել խափնիչների ձեռքը և բազում խնդիրների պատճառ դառնալ: Նման իրավիճակներից խուսափելու համար օգտվում են տվյալների կոդավորումից և ապահովումից, այսինքն ուղարկողն որևէ ալգորիթմով կոդավորում է տեքստը և կոդավորված տեքստով ուղարկում ցանցով: Կոդավորված տեքստն

խակերների կամ անցանկալի մարդկանց ձեռքում հայտնվելիս նրանք չիմանալով գաղտնագրման ալգորիթմը չեն կարողանա վերծանել տեքստը և տիրապետել ստացած տեղեկատվությանը: Քանի որ ստացողին հայտնի է գաղտնագրման ալգորիթմը կամ էլ վերծանման եղանակը, նա հեշտությամբ կարողանում է ապակոդավորել ստացված տեքստը և օգտագործել ստացված տեղեկատվությունը:

Գաղտնագրությունը գիտություն է ինֆորմացիայի գաղտնիության ապահովման (այսինքն, չեն կարող կարդալ այլոք) և իսկությունը, լրիվությունը ստուգելու և ապահովելու, նաև հեղինակներին պարգևելու ու հաստատելու մասին:

Կրիպտոգրաֆիան հնագույն գիտություններից է, նրա պատմությունը հաշվվում է մոտավորապես մի քանի հազար տարի: Ի սկզբանե, կրիպտոգրաֆիան ուսումնասիրում էր ինֆորմացիայի գաղտնագրման եղանակները, որոնք կատարվում էին հետևյալ կերպ. սկզբնական բաց տեքստը նախապես ընտրված բանալու միջոցով կոդավորվում է, այլ անձանց համար անհասկանալի ինֆորմացիայի, և այդպես փոխանցվում: Այնուհետև, հասնելով հասցեատիրոջը, այն ապակոդավորվում է: Այսինքն, այդ փոփոխությունները, որ կատարվել էին նախնական տեքստում վերադառնալի էին:

Գաղտնագրությունն ուսումնասիրում է տվյալների գաղտնագրման մեթոդներն ու ալգորիթմները, որոնք նախատեսված են այն բանի համար, որ այդ տվյալները դարձնեն ոչ պիտանի կողմնակի անձի համար [1, էջ 3]:

Գաղտնագրության համակարգի իմաստն այն է, որ գաղտնի տեղեկատվությունը քողարկվի այնպես, որ այն անմատչելի լինի ոչ իրավասու անձանց: Անկախ այն բանից, պահպանված է տեղեկատվությունը համակարգչի մեջ, թե հաղորդվում է համացանցով, նրա գաղտնագրման փաստը չի պաշտպանում ոչ իրավասու անձանց ներթափանցումից, այլ միայն երաշխավորում է այն, որ նրանք չեն կարող հասկանալ տեղեկատվության բովանդակությունը:

Գաղտնավերլուծությունը գիտություն է գաղտնագրված հաղարդագրության ելակետային տեքստը բացելու մասին: Գաղտնահամակարգերը լինում են համաչափ և անհամաչափ: Գաղտնագրային համակարգը կոչվում է սովորական կամ համաչափ, եթե վերծանման բանալին կարելի է հեշտությամբ դուրս բերել գաղտնագրման բանալուց: Համաչափ համակարգերից շատերի համար այդ երկու բանալիները նույնական են, այդ պատճառով էլ դրանք հաճախ կոչվում են մեկ կամ գաղտնի բանալիով համակարգեր:

Համաչափ գաղտնահամակարգերի առավելություններն են բարձր արագագործությունն ու պարզությունը: Դրանց հիմնական թերությունն այն է, որ բանալին պետք է հայտնի լինի և՛ ուղարկողին, և՛ ստացողին: Անհամաչափ գաղտնահամակարգերի առավելությունն անհրաժեշտ բանալիների քանակը կրճատելն է: Անհամաչափ ալգորիթմները կարող են իրականացվել բանալու ցանկացած երկարության դեպքում: Որքան երկար է բանալին, այնքան բարձր է համակարգի գաղտնակայունությունը, բայց մեծանում են գաղտնագրման և վերծանման ժամանակը:

Անհամաչափ համակարգերի էական թերությունը զգալի հաշվողական հզորության պահանջն է. այդպիսի ալգորիթմները բազմակի անգամ դանդաղ են համաչափներից: Հաճախ ինչպես համաչափ, այնպես էլ անհամաչափ ալգորիթմների թերությունների բացառման համար օգտագործում են դրանց համատեղման տեխնոլոգիաները, որոնք կոչվում են համակցված համակարգեր [1, էջ 10]:

Աշխատանքի կատարման համար օգտագործել են C# օբյեկտային – կոդմոնորշված ծրագրավորման լեզուն, ստեղծելով Windows Presentation Foundation (WPF) տիպի ծրագիր:

Ծրագրի ընդհանուր տեսքն հետևյալ է.

Գլխավոր պատուհան

Ընտրված ֆայլը

Պահպանել ֆայլը

Ընտրել Կոդավորել Ապակոդավորել

Օգտագործողը «Ընտրել» կոճակը սեղմելիս բացվում է երկխոսության պատուհան, որտեղից նա ընտրում է այն ֆայլը, որն անհրաժեշտ է կոդավորել կամ ապակոդավորել: Այնուհետև բացվում է պատուհան, որի միջոցով օգտագործողն ընտրում է թե համակարգչում որտեղ պահպանի կոդավորված կամ ապակոդավորված ֆայլը: Այս ամենից հետո ըստ անհրաժեշտության սեղմում է «Կոդավորել» կամ «Ապակոդավորել» կոճակներից որևէ մեկը: Դրանից հետո օգտագործողն ստանում է համապատասխան հաղորդագրություն գործողությունը հաջող է կատարվել, թե՛ ոչ:

Ծրագրում ֆայլերի կոդավորման և ապակոդավորման համար օգտագործվում է անհամաչափ գաղտնագրային համակարգը, որի դեպքում կոդավորման և ապակոդավորման բանալիները տարբեր են: Տվյալ համակարգի կիրառությունն ավելի ապահով է և անվտանգ:

Ֆայլերը կոդավորելու համար օգտագործում ենք հետևյալ մեթոդը.

```
private void EncryptFile(string inputFile, string outputFile)
{
    try
    {
        string password = @"myKey123"; // Your Key Here (1)
        UnicodeEncoding UE = new UnicodeEncoding();(2)
        byte[] key = UE.GetBytes(password);(3)
        string cryptFile = outputFile;
        FileStream fsCrypt = new FileStream(cryptFile, FileMode.Create);(4)
        RijndaelManaged RMCrypto = new RijndaelManaged(); (5)
        CryptoStream cs = new CryptoStream(fsCrypt,
            RMCrypto.CreateEncryptor(key, key),
            CryptoStreamMode.Write);(6)
        FileStream fsIn = new FileStream(inputFile, FileMode.Open);(7)
        int data;
        while ((data = fsIn.ReadByte()) != -1)
        cs.WriteByte((byte)data);
        fsIn.Close();
        cs.Close();
        fsCrypt.Close();
        MessageBox.Show("File encrypted");
    }
    catch
    {
        MessageBox.Show("Encryption failed!", "Error");
    }
}
```

(1) տողում տողային տիպի password փոփոխականին վերագրում ենք կոդավորման համար գաղտնաբառ:

(2) տողում ստեղծում ենք UnicodeEncoding դասի օբյեկտ: UnicodeEncoding դասը ներկայացնում է UTF-16 ֆորմատի Unicode սիմվոլների կոդավորում:

(3) տողում `UE.GetBytes(password)` ֆունկցիան կանչելով կոդավորում ենք գաղտնաբառը և ստանում գաղտնագրման բանալին բայթերի զանգվածի տեսքով:

(4) տողում `FileStream` դասի օբյեկտ ստեղծելով մեր նշած տեղում և տրված անվանումով ստեղծվում է ֆայլ, որում պահվելու է մուտքային ֆայլի պարունակությունը կոդավորված տարբերակով:

(5) տողում ստեղծվում է `RijndaelManaged` դասի օբյեկտ, համաձայն որի կոդավորման համար օգտագործվելու է `Rijndael` սիմետրիկ կոդավորման ալգորիթմը: `Rijndael` ալգորիթմը ստեղծվել է 1998 թվականին Վինսենտ Ռեյմենի և Յոհան Դաիմենի կողմից: Բլոկի երկարությունը 128 բայթ է, իսկ բանալու երկարությունը կարող է լինել 128, 192 կամ 256 բայթ:

(6) տողում ստեղծվում է `CryptoStream` տիպի հոսք, `CryptoStream` դասի կոնստրուկտորի միջոցով, նշելով որ կոդավորումն իրականացվի `Rijndael` ալգորիթմով մեր կողմից նշված գաղտնաբառի միջոցով ստացված բանալիով:

(7) տողում ստեղծում ենք `FileStream` տիպի հոսք այն ֆայլի պարունակությամբ, որը անհրաժեշտ է կոդավորել:

(8) `while` ցիկլի միջոցով կարդում ենք մեր ֆայլի պարունակությունը և կոդավորում:

Ապակոդավորման համար կատարում ենք նույն գործողությունները, բացառությամբ `RMCrypto.CreateEncryptor(key, key)` մեթոդի փոխարեն օգտագործելով `RMCrypto.CreateDecryptor(key, key)` մեթոդը: Ստորև ներկայացվում է ֆայլերը ապակոդավորելու համար օգտագործող մեթոդը.

```
private void DecryptFile(string inputFile, string outputFile)
{
    string password = @"myKey123"; // Your Key Here
    UnicodeEncoding UE = new UnicodeEncoding();
    byte[] key = UE.GetBytes(password);
    FileStream fsCrypt = new FileStream(inputFile, FileMode.Open);
    RijndaelManaged RMCrypto = new RijndaelManaged();
    CryptoStream cs = new CryptoStream(fsCrypt,
        RMCrypto.CreateDecryptor(key, key),
        CryptoStreamMode.Read);
    FileStream fsOut = new FileStream(outputFile, FileMode.Create);
    int data;
    while ((data = cs.ReadByte()) != -1)
    fsOut.WriteByte((byte)data);
    fsOut.Close();
    cs.Close();
    fsCrypt.Close();
    MessageBox.Show("decrypt success");
}
```

Այսպիսով, աշխատանքի կատարման ընթացքում ստեղծվել է ծրագիր, որը հնարավորություն է տալիս ապահովել տեղեկատվության առաքումը համացանցով առանց կորստի և անվտանգ ձևով, օգտագործելով կոդավորման և ապակոդավորման մեթոդները:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Տեղեկատվության պաշտպանության գաղտնագրային մեթոդներ» Գ. Մարգարով, Վ. Մարկարով, Երևան 2007թ., 108 էջ
2. «Книга шифров. Тайная история шифров и их расшифровки» С. Сингх, Аст, Астрель, 2006. 447 с.

ՀՏԴ 004.42(519.85)

**ԳԾԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԼՈՒԾՄԱՆ ԳԱՌԻՄԻ
ՄԵԹՈԴԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄԸ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ**

Լիանա Մեսրոպյան
ԱրՊՀ, mesropyan_liana@mail.ru,
Հասնիկ Հայրապետյան
ԱրՊՀ, elkipalki9@mail.ru

Գիտական ղեկավար՝ ասիստենտ Ա.Ս. Մնացականյան

Բանալի բառեր. Գաուսի միակի բաժանման մեթոդ, եռանկյան տեսք, n անհայտով n զծային հավասարումների համակարգ, միակի բաժանման աղյուսակ, ուղիղ քայլ:

Ключевые слова: Метод Гаусса единственного деления, треугольный вид, система линейных алгебраических n уравнений с n переменными, таблица единственного деления, прямой ход.

Key words: Gauss single division method, triangle view, system of n linear algebraic equations with n variables, table of the single division, straight path .

**Лиана Месропян- Асмик Айрапетян- АрГУ,
РЕАЛИЗАЦИЯ РЕШЕНИЯ СЛАУ МЕТОДОМ ГАУССА ВОЗМОЖНОСТЯМИ
ПРОГРАММИРОВАНИЯ**

Резюме

В статье приводится описание метода Гаусса решения системы линейных уравнений и схемы единственного деления. Исходя из повтора определенных шагов, которые осуществляются для каждой части таблицы по интервалам изменения индексов, составлены алгоритмы решения в виде блок-схемы и программа на языке C#. Работа программы проверена на числовых примерах. Например при значении $n=3, 4, 5$.

Статья может быть полезной в учебном процессе для школьников, а также для студентов вузов соответствующих специальностей.

**Liana Mesropyan- Hasmik Hayrapetyan- ASU,
IMPLEMENTATION OF THE SOLUTION OF A SYSTEM OF LINEAR EQUATIONS BY THE
GAUSS METHOD WITH PROGRAMMING CAPABILITIES**

Summary

The article describes the Gauss method of solving a system of linear equations and a scheme of single division. Proceeding from the repetition of certain steps that are carried out for each part of the table by intervals of changing indices, algorithms for solving in the form of a block diagram and a program in C # are compiled. The work of the program is tested on numerical examples. For example, with the value $n = 3, 4, 5$.

The article can be useful in the educational process for schoolchildren, as well as for university students of relevant specialties.

Գաուսի միակի բաժանման մեթոդի դեպքում, եռանկյան տեսքի բերելիս, պարտադիր պայման է դրվում, որ բոլոր համակարգերում գլխավոր տարրերը պետք է հավասար չլինեն 0-ի, հակառակ դեպքում այս մեթոդը կիրառելի չէ [1-2]:

Գլխավոր տարրեր ասելով հասկանում ենք սկզբնական և յուրաքանչյուր նոր համակարգի 1-ին սյան 1-ին տողի տարրերը $(a_{11}, a_{22}^{(1)}, a_{33}^{(2)}, \dots, a_{nn}^{n-1})$: Պարզվում է, որ այս մեթոդով n անհայտով n զծային հավասարումների համակարգի լուծման ժամանակ, հերթական համակարգերում գործակիցները որոշվում են որոշակի կանոններով, որը նպաստում է խնդրի լուծման ավտոմատի նկարագրմանը:

Դիցուք տրված է n անհայտով n գծային հավասարումների համակարգը՝

$$\begin{cases} a_{11}x_1 + a_{12}x_2 + a_{13}x_3 + \dots + a_{1n}x_n = a_{1n+1} \\ a_{21}x_1 + a_{22}x_2 + a_{23}x_3 + \dots + a_{2n}x_n = a_{2n+1} \\ a_{31}x_1 + a_{32}x_2 + a_{33}x_3 + \dots + a_{3n}x_n = a_{3n+1} \\ \dots \\ a_{n1}x_1 + a_{n2}x_2 + a_{n3}x_3 + \dots + a_{nn}x_n = a_{nn+1} \end{cases} \quad (1)$$

Ինչպես արդեն նշեցինք, ենթադրվում է, որ $a_{11} \neq 0$: Առաջին տողի բոլոր անդամները բաժանելով a_{11} -ի վրա ստանում ենք՝

$$x_1 + b_{12}x_2 + b_{13}x_3 + \dots + b_{1n}x_n = b_{1n+1}, \text{ որտեղ } b_{1j} = \frac{a_{1j}}{a_{11}}, j = \overline{2, n+1} \quad (2)$$

Այնուհետև այս հավասարումը բազմապատկելով a_{21} -ով և հանելով (1) համակարգի 2-րդ հավասարումը կարտաքսենք x_1 -ը (1) համակարգի 2-րդ հավասարումից: Նույն կերպ վարվելով (1) համակարգի 3-րդ հավասարման հետ, (2)-ը բազմապատկելով a_{31} -ով և հանելով 3-րդ հավասարումը կարտաքսենք x_1 -ը: Այսպես շարունակելով, ի վերջո (1)-ից ստանում ենք նոր համակարգ, որի տողերի և սյուների քանակը մեկով պակաս է լինում: Ստացված 2-րդ համակարգի տարրերը ըստ վերը նշվածի ստացվում է հետևյալ կերպ.

$$a_{ij}^1 = a_{ij} - a_{i1} * b_{1i} \quad (i, j \geq 2)$$

Այսպիսով ստացված հավասարումների համակարգերի նկատմամբ, կիրառելով

$$b_{ij}^m = \frac{a_{ij}^{m-1}}{a_{ii}^{m-1}} \text{ և } a_{ij}^m = a_{ij}^{m-1} - a_{im}^{m-1} * b_{mj}^{m-1}$$

գործողությունները (ըստ A_i աղյուսակի տվյալ բաժնի ինդեքսների փոփոխման միջակայքերի), ստանում ենք մեկ անհայտով մեկ հավասարում (տես միակի բաժանման աղյուսակը):

Այսպիսով $A_i = \overline{1, n}$ աղյուսակների առաջին տողի բոլոր տարրերը բաժանելով առաջին տարրի վրա ստացվում են b_{ij}^m տարրերը, իսկ յուրաքանչյուր նոր a_{ij}^m ստացվում է նախորդ աղյուսակում իր կերպարից հանած պրոյեկցիաների արտադրյալը (կերպարի տողի առաջին և վերջին տարրերը):

Այս քայլին անվանում են ուղիղ քայլ: Փոփոխականների արժեքները գտնելու համար լուծում ենք 1-ով սկսվող հավասարումները ներքևից-վերև, փոփոխականների ստացված նոր արժեքները հաջորդաբար տեղադրելով (տես միակի բաժանման աղյուսակը).


Միակի բաժանման աղյուսակ

		$x_1 \ x_2 \ x_3 \ \dots \ x_n$		
A_1		$a_{11} a_{12} a_{13} \ \dots \ a_{1n}$ $a_{21} a_{22} a_{23} \ \dots \ a_{2n}$ $a_{31} a_{32} a_{33} \ \dots \ a_{3n}$ $\dots \dots \dots$ $a_{n1} a_{n2} a_{n3} \ \dots \ a_{nn}$	a_{1n+1} a_{2n+1} a_{3n+1} $\dots$ a_{nn+1}	
	$a_{11} \neq 0$	$b_{12} b_{13} \ \dots \ b_{1n}$	b_{1n+1}	$i = 1, j = \overline{2, n+1}$
A_2		$a_{22}^1 a_{23}^1 \ \dots \ a_{2n}^1$ $a_{32}^1 a_{33}^1 \ \dots \ a_{3n}^1$ $\dots \dots \dots$ $a_{n2}^1 a_{n3}^1 \ \dots \ a_{nn}^1$	a_{2n+1}^1 a_{3n+1}^1 $\dots$ a_{nn+1}^1	$k = \overline{2, n}, u = \overline{2, n+1}$
	$a_{22}^1 \neq 0$	$1 \ b_{23}^1 b_{24}^1 \ \dots \ b_{2n}^1$	b_{2n+1}^1	$i = 2, j = \overline{3, n+1}$
A_3		$a_{33}^2 \ \dots \ a_{3n}^2$ $\dots$ $a_{n3}^2 \ \dots \ a_{nn}^2$	a_{3n+1}^2 $\dots$ a_{nn+1}^2	$k = \overline{3, n}, u = \overline{3, n+1}$
	$a_{33}^2 \neq 0$	$1 \ \dots \ b_{34}^2 \ \dots \ b_{3n}^2$	b_{3n+1}^2	$i = 3, j = \overline{4, n+1}$
...	...	...	...	...
A_{n-1}		$1 \ b_{n-1n}^{n-2}$	b_{n-1n+1}^{n-2}	$i = n-1, j = \overline{n, n+1}$
A_n	$a_{nn}^{n-1} \neq 0$	a_{nn}^{n-1}	a_{nn+1}^{n-1}	$k=n, u=\overline{n, n+1}$
		1	b_{nn+1}^{n-1}	$i=n, j=n+1$
		1 1 1 		

x_n -ից շարժվում ենք մինչև իր տողում գտնվող $\langle\langle 1 \rangle\rangle$ -ը, որից հետո բարձրանում վերև մինչև հանդիպենք հաջորդ $\langle\langle 1 \rangle\rangle$ -ը և հաշվում $x_n = b_{nn}^{n-1} : x_{n-1}$ -ը հաշվելու համար նույն կերպ կազմում ենք $x_{n-1} = b_{n-1n+1}^{n-2} - b_{n-1n}^{n-2} \cdot x_n$ հավասարումը և տեղադրելով x_n -ի արժեքը ստանում x_{n-1} -ը: Նման կերպ վարվելով ստանում ենք՝

$$x_1 = b_{1n+1} - \sum_{k=2}^n b_{1k} x_k :$$

Այս քայլին անվանում են հակադարձ քայլ: Հեշտ է տեսնել, որ ինչպես ուղիղ, այնպես էլ հակադարձ քայլերի գործողությունները և փոփոխականների ստացված արժեքների



Միակի բաժանման մեթոդի ալգորիթմում նկարագրված են զանգվածները (մուտքագրման բլոկ), որից հետո մուտքագրվում են գործակիցները և ազատ անդամներ՝ կրկնակի ցիկլի օգտագործմամբ:

Միակի բաժանման մեթոդի ալգորիթմը կառուցված է հնարավորին պարզեցված տեսքով, պահպանելով մեթոդում կիրառվող քայլերի հստակ նկարագրությունը: C# ծրագրում հիմնականում օգտվել ենք ցիկլի և ճյուղավորման օպերատորներից [3]: Ծրագրում (3-րդ տող) $n=4$, որը պետք է փոփոխել ըստ տրված համակարգի: Նկատի ունենալով հետագա ստուգման աշխատանքը, կատարել ենք վերջում $D_{ij} = a_{ij}$:

Ծրագիրը մտնելուց բացվում է հետևյալ պատուհանը:

Պատուհանի վրա տեսնում ենք:

	A	B	X
0.00	0.00	0.00	0.00
0.00	0.00	0.00	0.00
0.00	0.00	0.00	0.00

Պատուհանում ներմուծում ենք գծային հավասարումների համակարգում մասնակցող գործակիցների արժեքները: “Լուծել” կոճակը սեղմելուց աշխատեցվում է ծրագիրը ու հաշվվում են փնտրվող x -երի արժեքները: Արժեքները գրանցվում են համապատասխան վանդակների մեջ: Ծրագիրը իրականացնելուց հետո կունենա հետևյալ տեսքը:

Գաուսի մեթոդ

Գափը: 3 Լուծել

	A	B	X
1	1	1	6
2	1	2	10
1	5	3	20

Գաուսի միակի բաժանման մեթոդում, եթե որևէ տողի գլխավոր տարրը հավասար է 0-ի, ապա մեթոդը կիրառելի չէ, չնայած նրան, որ կարող է ունենալ լուծում: Բացի այդ, եթե համակարգի որոշիչը $\neq 0$ և հաշվման ընթացքում հանդիպում է բավականաչափ փոքր գլխավոր տարր համեմատած այդ տողի մյուս տարրերին, ապա այդ իրադրությունը բացասականորեն է անդրադառնալու սխալանքի կլորացման արդյունքի ճշտության վրա:

Այսպիսով՝ հոդվածում բերվում է գծային հավասարումների համակարգի լուծումը Գաուսի մեթոդով և միակի բաժանման սխեման: Ելնելով կոնկրետ քայլերի կրկնությունից, որոնք կատարվում են աղյուսակի յուրաքանչյուր մասում ինդեքսների փոփոխման միջակայքերով, կազմված են բոլոր սխեմայով ալգորիթմներ և ծրագիր C# լեզվով: Ծրագրի աշխատանքը ստուգված է թվային օրինակների վրա: Օրինակ $n=3, 4, 5$ արժեքների դեպքում:

Հոդվածը կարող է օգտակար լինել կրթական գործընթացում, ինչպես նաև համապատասխան մասնագիտությամբ ուսանողների համար:

ՀՏԴ 004.42(519.83)

«ՏԱՍՆՀԻՆԳ ԳԼՈՒԽԿՈՏՐՈՒԿ» ԽԱՂԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԻ
ՄՇԱԿՈՒՄԸ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Նաստասյա Ավետիսյան
ԱրՊՀ, Բնագիտական ֆակուլտետ
Կառ.տեղ.համակարգեր- 4-րդ կուրս
nastasya.avetisyan@gmail.com

Գիտական ղեկավար մ.գ.թ.դոցենտ Վ.Վ. Առստամյան

Բանալի բառեր. համակարգչային խաղ, «տասնհինգ» զուխկոտրուկ խաղ, պատահական թվեր, c# ծրագրավորման լեզու, օբյեկտ-կողմնորոշված ծրագրավորում:

Ключевые слова: компьютерная игра, «пятнашки» игра-головоломка, случайные числа, язык программирования c#, объектно-ориентированное программирование.

Key words: computer game, 15 puzzle game, random numbers, c# programming language, object-oriented programming.

Настасья Аветисян-АрГУ

РАЗРАБОТКА АЛГОРИТМА ГОЛОВОЛОМКИ «ПЯТНАШКИ» С ПОМОЩЬЮ СРЕДСТВ
ПРОГРАММИРОВАНИЯ

Резюме

Не секрет, что компьютерные игры занимают приоритетное место в развлекательной сфере человека 21-го века. Изучив создание алгоритмов компьютерных игр, пришла к выводу, что разработка таких алгоритмов помогает получить глубокое знание в изучении языка программирования и объектно-ориентированного программирования. В ходе изучения алгоритма головоломки «пятнашки», была разработана программа, которая позволяет Вам играть в головоломку «пятнашки» любого размера.

Nastasya Avetisyan-ASU

DEVELOPMENT OF ALGORITHM 15 PUZZLE WITH USING PROGRAMMING

Summary

It is no secret that computer games occupy a priority place in the entertainment sphere of the 21st century man. Having studied creation of algorithms of computer games, I came to a conclusion that development of such algorithms helps to gain deep knowledge in studying of language of programming and object-oriented programming. During the study of the puzzle algorithm "tag", was developed a program that allows you to play "15 puzzle" of any size.

Մշակվող ծրագրային արտադրանքների բոլոր տեսակների շարքում առկա է համակարգչային ծրագրերի հատուկ դաս, որը կոչվում է համակարգչային խաղեր:

Համակարգչային խաղը՝ համակարգչային ծրագիր կամ համակարգչային ծրագրի մի մաս է, որը ծառայում է խաղի գործընթացը կազմակերպելու, խաղի մեջ գործընկերների հետ հաղորդակցվելու կամ ինքն իրեն որպես գործընկեր հանդես գալու:

Համակարգչային խաղերը ներառվում են ժամանցային, ոչ թե արտադրողական, հաշվապահական հաշվառման և այլ ոլորտներին: Կան փորձեր առանձնացնել համակարգչային խաղերը, որպես արվեստի առանձին ոլորտ, թատրոնի, ֆիլմերի և այլնի հետ միասին:

Համակարգչային խաղերը որոշում են իրենց ֆունկցիոնալ հավաքածուի առանձնահատկություններով, գործողությունների ակտիվներով և ինտերֆեյսով:

Առաջին պարագային համակարգչային և վիդեո խաղերը մշակվել են 1950-ական և 1960-ական թվականներին: Առաջին համակարգչային խաղն էր հրթիռի աշխատանքի սիմուլյատորը, որը ստեղծվել է 1942 թվականին Թոմաս Գոլդսմիթ Կրտսերը (անգլ. Thomas T. Goldsmith Jr.) և Իստլ Բեյ Մաննը (անգլ. Estle Ray Mann):

Ավելի ուշ, 1952 թ., Ա. Ս. Դուգլասը մշակել է «OXO» ծրագիրը («крестики-нолики» խաղը), որը Քեմբրիջի համալսարանում իր դոկտորական ատենախոսության մասն է կազմում։ Խաղը աշխատել է համալսարանի խոշոր համակարգչի վրա, որը հայտնի է որպես EDSAC (Electronic Delay Storage Automatic Calculator)։

Ներկայումս համակարգչային խաղերի մշակումը հանդիսանում է բազմամիլիոն գործառնություն, որի մեջ ներգրավված են մշակողների մի ամբողջ խումբ, ժամանակակից բարդ տեխնոլոգիական և նույնիսկ մարքեթինգային քայլեր։

Համակարգչային խաղերի առանձնահատկությունն այն է, որ խաղի ընթացքը որոշում է բարդ ալգորիթմների օգտագործմամբ, կախված օգտագործողի (խաղացողի) գործողություններից և հաճախ նման գործողությունները հնարավոր չէ կանխատեսել։ Հետևաբար, ալգորիթմը պետք է ապահովի հնարավորինս շատ տարբերակներ վերամշակել, ինչը մեծապես բարդացնում է նրանց։ Բացի այդ, հաշվի առնելով համակարգչային խաղերի զվարճալի բնույթը, դրանց ինտերֆեյսը պետք է ունենա ինտերակտիվ և բարդ գրաֆիկայի տարրեր։

Համակարգչային խաղերի մշակման միջոցով կարելի է խորացնել գիտելիքները ինչպես խաղի ալգորիթմի մշակման ժամանակ, այնպես էլ դինամիկ ինտերֆեյսի ստեղծման հմտությունների զարգացման, որը հանդիսանում տվյալ թեմայի արդիականությունը։

Ուսումնասիրման օբյեկտ է հանդիսանում **«տասնհինգ»** գլուխկոտրուկ խաղը։

Գլուխկոտրուկ խաղը իրենից ներկայացնում է քառակուսի արկղի մեջ գտնվող միանման կոճեր, որոնց վրա գրված են թվեր։ Տուփի կողմի երկարությունը կազմում է կոճերի կողմի երկարության քառապատիկը։ Քանի որ հավաքածույում առկա է տասնհինգ կոճեր, ապա քառակուսի արկղում մեկ դաշտը մնում է չզբաղեցված։ Գլուխկոտրուկ խաղի նպատակն է փոփոխելով կոճերի տեղը դասավորել նրանց աճման կարգով, նախընտրելով հնարավորինս քիչ շարժումներ կատարել։

Ուսումնասիրության նպատակն է կազմել ծրագիր, որտեղ մտցնելով արկղի կողմի երկարությունը, ստանալ պատահականորեն դասավորված կոճերը և նման դասավորվածության դեպքում գլուխկոտրուկ խաղը լուծում ունենա։

Դրա համար անհրաժեշտ է.

- որոշել արկղի կողմի երկարության փոքրագույն և մեծագույն չափերը,
- պատահականության սկզբունքով ստանալ կոճերի արժեքները և դասավորվածությունը արկղում,
- մշակել գլուխկոտրուկ խաղի ալգորիթմը։

Նաև ծրագիրը լրացուցիչ հնարավորություն կտա պահպանել հաղթողների տվյալները։


Ծրագիրը մշակելու ժամանակ կօգտագործվի C# ծրագրավորման լեզու, WPF տեխնոլոգիան և Microsoft .NET հարթակը։

Նշանակենք արկղի կողմի երկարությունը l ։ Իսկ կոճերի պատահական դասավորվածության դեպքերը h ։ Դատարկ կոճի տեղի պատահական լինելու դեպքում, նրանց դասավորվածության դեպքերը հավասար են $h = l^2!$ [1]։

Եթե արկղի կողմի երկարությունը հավասար է մեկի $l = 1$, ապա դասավորվածության դեպքերի քանակը հավասար է $h = 1^2! = 1$, իսկ $l = 2$, դեպքում կոճերի դասավորվածության դեպքերի քանակը հավասար է $h = 2^2! = 4! = 24$ ։ Հետևաբար արկղի կողմի փոքրագույն երկարությունը պետք է հավասար լինի երկուսի։

Իսկ արկղի կողմի մեծագույն երկարությունը չունի ինչ-որ սահմանափակում կոճերի դասավորվածության դեպքերի քանակից, այն միայն կսահմանափակվի ծրագրային ինտերֆեյսի օգտագործողի համար առավել հարմարավետ լինելու պատճառով։

Հաշվի առնելով կոճերի բարձրությունն ու երկարությունը ընդունենք արկղի կողմի մեծագույն արժեքը հավասար է քսան։



Նկար 1. Խաղի սկզբնական էջը

Ծրագիրը ստանալով արկղի կողմի երկարությունը կառուցում է երկչափ զանգված՝ թվային՝ `int`, տրամաբանական՝ `bool`, և կոճակային՝ `Button`:

Ցիկլերի միջոցով այդ երկչափ զանգվածներին տալիս ենք պատահական ամբողջաթվային արժեքներ: Որպեսզի կրկնվող արժեքներ չլինեն, օգտագործում ենք `Hashtable` տիպի ցուցակ: Պատահական թվերի ստացման համար օգտագործում ենք `Random` դասը, տալով նրան 0 -ից մինչև $l^2 + 1$ միջակայքը: Նաև հայտարարում ենք ամբողջաթիվ տիպի փոփոխականներ կոճակների սեղմելու քանակը և խաղի սկսման ու ավարտման ժամանակը գրանցելու համար երկու փոփոխական: Նկարագրած կոդը ունի հետևյալ տեսքը՝

```
for (int i = 0; i < count; ++i) {
    for (int j = 0; j < count; ++j) {
        do {
            number = random.Next(0, max + 1);
            if (!numberList.ContainsKey(number)){
                buttonNumberArray[i, j] = number;
                button = new Button();
                button.Content = number;
                button.Name = "_" + i + "_" + j;
                numberList.Add(number, number);
                if (boolArray[i, j] = i * count + j + 1 == number)
                    buttonArray[i, j].Background = Brushes.Green;
                if (number == 0) {
                    buttonArray[i, j].Visibility = Visibility.Hidden;
                    buttonArray[i, j].Background = Brushes.Red;
                    boolArray[i, j] = true;}
                break; }
        } while (true);
    }
}
```

Կոճակների արժեքների պատահական լրացումից հետո ստուգվում է, թե բոլոր կոճակների դիրքը ճիշտ է (այսինքն ճիշտ են դասավորված) և արդյոք այդ դասավորվածության դեպքում գլուխկոտրուկ խաղը լուծում չունի: Եթե այդ երկու պայմանները ճիշտ են, ապա նորից կանչում ենք վերը նկարագրված մեթոդը՝ կատարվում է ռեկուրսիվ կանչ:

Կոճակների պատահական դասավորվածության դեպքում գլուխկոտրուկ խաղի լուծման առկայության ստուգման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանի գույգ լինելը:

Գլուխկոտրուկ խաղի լուծում ունենալու պայմանը հետևյալն է՝ թող i արժեքով կոճակի դիրքը լինի մինչև (եթե հաշվենք ձախից աջ և վերնից ներքև) k կոճակը, որի արժեքը փոքր է i -ից: Ենթադրենք, որ $n_i = k$, եթե i կոճակից հետո i կոճակի արժեքից փոքր թիվ չկա, ապա $k = 0$: Նաև ներմուծենք e թիվը, որը հավասար է դատարկ բջջի շարքին (հաշվում ենք 1 -ից): Եթե

$$N = \sum_{i=1}^l n_i + e,$$

գումարը հանդիսանում է կենտ և գլուխկոտրուկը լուծում չունի [2, էջ 1381-1382]:

```

    Օրագրային կոդը ունի հետևյալ տեսքը՝
    int sum = 0;
    for (int i = 0; i < count; ++i) {
        for (int j = 0; j < count; ++j) {
            if (buttonNumberArray[i, j] == 0) {
                sum += 1 + i;
                continue; }
            for(int x = i; x < count; ++x) {
                for (int y = i==x ? j : 0; y < count; ++y) {
                    if (buttonNumberArray[i, j] > buttonNumberArray[x, y] &&
                        buttonNumberArray[x, y] != 0)
                        ++sum;
                } } }
    return sum % 2 == 0;

```

Պայմանները ստուգելուց հետո բացվում է գլուխկոտրուկ խաղը: Օրինակ, արկղի կողմի երկարությունը երեք լինելու դեպքում ունի հետևյալ տեսքը՝



Եթե կոճակի գույնը կանաչ է, ապա այն գտնվում է ճիշտ դիրքում:

Գլուխկոտրուկ խաղը սկսելուց հետո օգտագործողը պետք է սեղմի կոճակների վրա: Որպեսզի ցանկացած կոճակը սեղմելուց կարողանանք կատարել որևէ գործողություն, անհրաժեշտ է օգտագործել իրադարձությունները (event) [3, էջ 232-237]: Դրա համար կօգտագործենք c# ծրագրավորման լեզվի WPF տեխնոլոգիան և օբյեկտ-կոդմանրոշված ծրագրավորման հնարավորությունները: Բոլոր կոճակները տեղադրում ենք կոնտեյնների (Grid) մեջ և նրանց սեղմման վրա վերագրում իրադարձություն: Այն ունի հետևյալ ձևը՝

```
private void ButtonClick(object sender, RoutedEventArgs e)
```

Կոճակի սեղմման դեպքում կատարվում է իրադարձությունը: Իրադարձությունում ստանում ենք տվյալ կոճակի տողի և սյան կոորդինատը և ստուգվում է, արդյոք այդ տողում կամ սյունում առկա է դատարկ տեղ: Եթե դատարկ տեղը առկա է, ապա կատարվում է տեղափոխություն աջից ձախ, ձախից աջ, վերնից ներքև, ներքևից վերև՝ օգտագործելով պղպջակների մեթոդը: Դրանից հետո ստուգվում է կոճերի դասավորվածությունը: Եթե բոլոր կոճերի դիրքերը ճիշտ են, ապա խաղը ավարտվում է, ցույց է տալիս ժամանակը ու քայլերի քանակը և տալիս է հնարավորություն պահպանել արդյունները:

Քայլերի քանակը	65
Ժամանակը	12 րոպե 33 վայրկյան
Դուք հաղթել եք	
Անուն	
Պահպանել արդյունքը	

Նկար 3. Հաղթելու ժամանակ արդյունքների պահպանման ձևը

Արդյունքները համակարգչում գրանցելու համար օգտագործում ենք հաղթողի տվյալների համար նախատեսված դասը:

```
public class Winners {
    public string Name { get; set; }
    public int Time { get; set; }
    public int ClickCount { get; set; }
    public DateTime Date { get; set; }
    public string GameType { get; set; }
}
```

Բոլոր տվյալները պահվում է լոկալ՝ SQLite տվյալների հենքում, որի համար մշակված է գրանցման, փոփոխման և ստացման հարցումները SQL ծրագրավորման լեզվով:

Գաղտնիք չէ, որ համակարգչային խաղերը առաջնակարգ տեղ են զբաղեցնում 21-րդ դարի մարդկանց ժամանցի ոլորտում:

Այսպիսով, ուսումնասիրելով համակարգչային խաղերի ստեղծման ալգորիթմները, հանգեցի այն եզրակացությանը, որ այդպիսի ալգորիթմների մշակումը օգնում է խոր գիտելիքներ ձեռք բերել ուսումնասիրվող ծրագրավորման լեզվից և օբյեկտ-կողմնորոշման ծրագրավորումից: «Տասնհինգ» գլուխկոտրուկ խաղի ալգորիթմի համար մշակված ծրագրի միջոցով կարելի է /տալով ցանկացած չափ/ խաղալ «տասնհինգ» գլուխկոտրուկ խաղը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Slocum J. and Botermans J., Puzzles Old and New: How to Make and Solve Them. Seattle, WA: University of Washington Press, 1988.
2. E. Korf and Peter Schultze, Large-Scale Parallel Breadth-First Search Richard, Computer Science Department University of California, 2005, pp 1380-1385
3. Т. А. Павловская. С#. Программирование на языке высокого уровня. Учебник для вузов - СПб. Изд., Питер, 2007г.

ՀՏԴ 004.42(519.85)

**ՖԻԶԻԿԱՅԻ ՈՐՈՇ ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ
ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ**

Արմեն Ապրեսյան
ԱրՊՀ, Բնագիտական ֆակուլտետ-
Տեղեկատվական տեխնոլոգիաներ 2-րդ կուրս
armen_apresyan_97@mail.ru
Գիտական ղեկավար մ.գ.թ.դոցենտ Վ.Վ. Արստամյան

Բանալի բառեր. Միջառարկայական կապեր, ալգորիթմական մոտեցում, ֆիզիկա, տեխնոլոգիա, C++ ծրագրավորման լեզու, մաթեմատիկա, ինֆորմատիկա, խնդիրներ:

Ключевые слова: Междисциплинарные связи, алгоритмический подход, физика, технология, Язык программирования C ++, математика, Информатика, задачи.

Key words: Interdisciplinary relations, algorithmic approach, physics, technology, C ++ programming language, mathematics, Computer science, problem.

Армен Апресян
АрГУ,

Научный руководитель В.В. Арустамян

РЕАЛИЗАЦИЯ НЕКОТОРЫХ ЗАДАЧ ПО ФИЗИКЕ МЕТОДОМ ПРОГРАММИРОВАНИЯ

Резюме

В ходе работы была создана программа, которая обеспечивает решение задач по физике посредством программирования.

Armen Apresyan
ASU,

Scientific adviser V.V. Arustamyan

IMPLEMENTATION OF SOME PHYSICS TASKS PROGRAMMING TOOLS

Summary

In the course of the work, a program was created that provides the solution of physical problems through programming.

Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ:

Ինֆորմատիկայի օգտագործումը թույլ է տալիս զգալի չափով բարելավել ֆիզիկայի ուսուցման գործընթացը և բարձրացնել դրա արդյունավետությունը: Ալգորիթմական մոտեցմամբ ֆիզիկայի խնդիրների լուծումն ինքնին, նույնիսկ առանց համակարգիչների կիրառման, ունի մի շարք առավելություններ: Այն չի կարելի դիտել որպես սուկ մեխանիկական միջոց, քանի որ սովորողն այդ եղանակով խնդիրներ լուծելու համար պետք է ճանաչի խնդիրների այն դասը, որին պատկանում է տվյալ խնդիրը և ընտրի նրա լուծման համապատասխան ալգորիթմը: Միաժամանակ պետք է նշել, որ ֆիզիկայի ուսուցման մեջ խնդիրների լուծման ալգորիթմական մոտեցումը դեռևս չի գտել իր պատշաճ լայն կիրառությունը:

Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Միջառարկայական կապեր գոյություն ունեն հատկապես տեխնոլոգիա, մաթեմատիկա, երկրաչափություն, կերպարվեստ, ֆիզիկա առարկաների միջև: Այդ առարկաներից յուրաքանչյուրի ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ունակությունները և հմտությունները լայնորեն կիրառվում են մյուս առարկաների ուսուցման գործընթացում:

Խնդիր 1.

Հորիզոնի նկատմամբ ինչ անկյան տակ պետք է ուղղել թնդանոթի փողը, որպեսզի արձակված արկը դիպչի թնդանոթից հորիզոնական ուղղությամբ L հեռավորության և h բարձրությամբ գտնվող նպատակակետին: Արկի սկզբնական արագությունը v_0 է: Օղի դիմադրությունը անտեսել:

Տրված է՝

g
 L
 v_0
 h

— некоторые проблемы физики

инст α -?рументы программирования время работы была создана программа, которая предоставля

$$\begin{aligned} s &= v_0 t + \frac{gt^2}{2} \\ h &= v_0 t \sin \alpha - \frac{gt^2}{2} \\ L &= v_0 t \cos \alpha \\ t &= L / v_0 \cos \alpha \end{aligned}$$

$$h = v_0 \sin \alpha L / v_0 \cos \alpha - g L^2 / 2 v_0^2 \cos^2 \alpha = L \tan \alpha - g L^2 (1 + \tan^2 \alpha) / 2 v_0^2$$

$$\text{օգտագործել ենք, որ } 1 / \cos^2 \alpha = 1 + \tan^2 \alpha$$

$$h = L \tan \alpha - g L^2 / 2 v_0^2 - g L^2 \tan^2 \alpha / 2 v_0^2 \quad / * 2 v_0^2$$

$$g L^2 \tan^2 \alpha - 2 L v_0^2 \tan \alpha + (2 v_0^2 h + g L^2) = 0$$

$$\tan \alpha = (L v_0^2 \pm \sqrt{L^2 v_0^4 - g L^2 (2 v_0^2 h + g L^2)}) / g L^2 = (v_0^2 \pm \sqrt{v_0^4 - g (2 v_0^2 h + g L^2)}) / g L$$

$$\alpha = \arctg((v_0^2 \pm \sqrt{v_0^4 - g (2 v_0^2 h + g L^2)}) / g L)$$

C++ լեզվում տվյալ խնդիրը կարելի է լուծել հետևյալ եղանակով՝

```
#include <iostream>
#include <math.h>
using namespace std;
int main(){
    Double g,l,v,h,Alfa;
    cout<<"nermucel  g-n"<<endl;
    cin>>g;
    cout<<"nermucel  l-@"<<endl;
    cin>>l;
    cout<<"nermucel  v-n"<<endl;
    cin>>v;
    cout<<"nermucel  h-@"<<endl;
    cin>>h;
    Alfa=atan(1/g*l*(sqr(v)+sqr(sqr(v*v)-g*(2*v*v*h+g*l*l))));
    cout<<Alfa<<endl;
    return 0;
}
```


Ֆիզիկայում կատարված հայտնագործությունները ոչ միայն ընդարձակում են մեր գիտելիքները բնության մասին, այլև հաճախ կարևորագույն դեր են խաղում այլ գիտությունների զարգացման գործում: Օրինակ, քվանտային տեսության հայտնագործումը քիմիկոսներին թույլ տվեց ըմբռնել նյութի քիմիական կառուցվածքի և քիմիական ռեակցիաների մասին կուտակված փաստերի ողջ բազմազանությունը:



Պինդ մարմիններում ալիքների տարածման օրենքների ձևակերպումը երկրաբաններին հնարավորություն ընձեռեց Երկրի ընդերքը հետազոտելիս կիրառել երկրաշարժաբանության մեթոդները: Ֆիզիկոսների կողմից ստեղծված գազային հոսքերի տեսությունը բացառիկ կարևոր դեր է խաղում օդերևութաբանության և օվկիանոսագիտության մեջ:

ԱԷՀՄ-ներից օգտվելու համար սովորողը պետք է յուրացնի բազմաթիվ ծրագրավորման լեզուներից ունեցված մեկը (նախընտրելի են C++ կամ Turbopascal-ը): Վերջինը թույլ է տալիս ԱԷՀՄ-ի օգտագործմամբ իրագործել ողջ ալգորիթմական պրոցեսը՝ սկսած առաջադրանքի վերնագրից, տվյալների ներածումից և տվյալ լեզվի անհրաժեշտ օպերատորների օգտագործումից, ընդհուպ մինչև արդյունքի ստացումն ու վերլուծությունը:

Խնդիր 2.

Մարմինը թեք հարթությունով սահում է, ինչ բարձրությունից այն պետք է սահի որպեսզի անցնի <<մահվան օղակով>>:

Տրված է՝



A կետում $E_{lA} = mgH$

B կետում $E_{lB} = mv^2/2 + mg2R$

Ըստ էներգիայի պահպանման օրենքի

$E_{lA} = E_{lB}$

$mgH = mv^2/2 + mg2R$,

B կետում $N = 0$

$mg = ma$, $mg = mv^2/R$, $v^2 = gR$

$mgH = mgR/2 + mg2R$

$H = 2.5R$

C++ լեզվում տվյալ խնդրի լուծման եղանակն է՝

```
#include <iostream>
#include <math.h>
using namespace std;
int main(){
double R,H;
cout<<"nermucel R-@"<<endl;
cin>>R;
H=2.5*R;
cout<<H<<endl;
```

```
return 0;  
}
```

Տվյալ խնդրի լուծումով կապ ենք հաստատել ֆիզիկա, մաթեմատիկա և ինֆորմատիկա առարկաների միջև: Ծրագրավորման օգտագործումը թույլ է տալիս զգալի չափով բարելավել ֆիզիկայի ուսուցման գործընթացը և բարձրացնել դրա արդյունավետությունը: Այս առարկաներից յուրաքանչյուրի ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ունակությունները և հմտությունները լայնորեն կիրառվում են մյուս առարկաների ուսուցման գործընթացում:

Օգտագործված գրականության ցանկ

- 1) Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա»:
- 2) Գ.Վ. Գրիգորյան, Ս.Մ.Հովակիմյան, Է.Մ.Ղազարյան, Վ.Ա.Վարդանյան Ֆիզիկայի ընտրովի խնդիրների ժողովածու:
- 3) Պողոսյան Ս.Գ. Ալգորիթմական մտածողության ձևավորումը և ֆիզիկայի որոշ դասի խնդիրների լուծումը ԱԷՀՄ-ի օգտագործմամբ:

ՀՏԴ 004.9(519.85)

ՏԵԴԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հասմիկ Մանուկյան
Գայանե Ազիզբեկյան
ԱրՊՀ,

Բնագիտական ֆակուլտետ
Ի/ԿՄ-մագիստրատուրա 1-ին կուրս
hasmik-manukyan-95@mail.ru, gayane.azizbekyan95@mail.ru
Գիտական ղեկավար մ.գ.թ. դոցենտ Վ.Վ. Արստամյան

Բանալի բառեր. տեղեկատվական տեխնոլոգիա, բանկ, ավտոմատացում, համակարգ, կառավարում, հաշիվ, ֆինանսներ, հաճախորդ, բանկոմատ, պլաստիկ քարտեր:

Ключевые слова: информационные технологии, банк, автоматизация, система, менеджмент, счет, финансы, клиент, банкомат, пластиковые карты.

Key words: Information technology, bank, automation, system, management, score, finance, client, ATM, plastic cards.

Асмик Манукян, Гаяне Азизбекян-АрГУ,

Научный руководитель В.В. Арустамян

РОЛЬ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В БАНКОВСКОЙ СИСТЕМЕ

Резюме

В результате анализа выяснилось, что главной задачей любой крупной финансовой организации является быстрый беспрепятственный информационный поток. Банк прежде всего финансовая организация, созданная для получения доходов, поэтому банк исходя из своих интересов должен модернизировать процесс финансовых вложений. Основываясь на мировые практические данные можно сказать, что 17% от годовых расходов банки выделяют на компьютеризацию.

Hasmik Manukyan, Gayane Azizbekyan-ASU,

Scientific adviser V.V. Arustamyan

THE ROLE OF INFORMATION TECHNOLOGY IN THE BANKING SYSTEM

Summary

Bank itself is a financial organization cut for bringing in an income, that's why it should spend some money on its modernization proceeding from its interests. Based on the world practice data one can say that about 12 percent of annual banking expenses are allocated to computerization.


Բանկային գործը մարդկային գործունեության այնպիսի ոլորտներից է, որտեղ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն իրեն առավել արդյունավետ է դրսևորում: Առաջին անգամ բանկերում համակարգիչներ սկսեցին կիրառվել ԱՄՆ-ում 1950-ական թվականների վերջերին: 1959 թ. Bank of America-ի բաժանմունքներից մեկում սկսեց աշխատել չեկերի մշակման և ընթացիկ հաշիվների վարման աշխարհում առաջին ամբողջական ավտոմատացված համակարգը: Մակայն այս առաջին փորձերը հաջողություն չունեցան: Պատճառն այն էր, որ այն ժամանակվա համակարգիչների գները և դրանց արտադրողականությունը ձեռնտու չէին բանկերին: 1980-ական թթ. տեղի է ունենում կտրուկ շրջադարձ: Առաջ են գալիս միկրոպրոցեսորները: Համակարգիչները դառնում են ավելի էժան, կոմպակտ և հուսալի: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մեջ բանկերը տեսնում են տեխնիկական միջոցների, որոնք նպաստում են ծախսերի կրճատմանը, որոշումների ընդունման օպերատիվության և սպասարկման որակի բարձրացմանը: Ծախսերի առավել խոշոր հոդվածներն են՝ բանկային աշխատողների աշխատավարձը և փաստաթղթերի մշակման ծախսերը: Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը բանկին

թույլ է տալիս կրճատել անձնակազմը, պակասեցնել շենքեր և շինությունների վարձավճարները:

Արցախում գործում են Հայաստանյան բանկերի 32 մասնաճյուղեր: Այստեղ մասնաճյուղեր ունեն 17 առևտրային բանկերից 7-ը:

Մասնաճյուղերի ամենամեծ ցանցը, բնականաբար, ունի Արցախբանկը՝ 16 մասնաճյուղ: Հայբիզնեսբանկը Արցախում ունի 7 մասնաճյուղ, Արդշինբանկը՝ 3:


նկ.1 Արցախում գործող բանկերի




«Արցախբանկ» ՓԲԸ կազմավորվել է 1996թ.: Այն ՀՀ ռեզիդենտ բանկ է, որի առաքելությունն է՝ իր սպասարկման տարածաշրջանում նպաստել ներդրումների կայուն աճին՝ փոքր և միջին բիզնեսի կայացմանն ու զարգացմանը, աջակցել սոցիալական և տնտեսական արդյունավետ ծրագրերի իրականացմանը, տրամադրել անհրաժեշտ վարկային և բանկային այլ ծառայությունների փաթեթ՝ բավարարելով հաճախորդների պահանջունքները բարձրորակ բանկային ծառայությունների նկատմամբ և նպաստելով ԱՀ և ՀՀ բնակչության բարեկեցության բարձրացմանը:

Արցախի բանկային համակարգի հաճախորդների թիվը 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել են 99611 անձ, որից ֆիզիկական անձինք՝ 94884, իրավաբանական անձինք՝ 4727: Նրանց հաշիվների քանակը կազմել է 170963, որից ֆիզիկական անձանց հաշիվները՝ 190514, իրավաբանական անձանց հաշիվները՝ 10449:

նկ.2 ԱՀ բանկային համակարգում հաճախորդների քանակը



նկ.3 ԱՀ բանկային համակարգում հաճախորդների հաշիվների քանակը



- ընդհանուր հաշիվների քանակը
- փրավաբանական անձանց հաշիվներ
- ֆիզիկական անձանց հաշիվներ

Այսօր բանկային աշխատողները և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի մասնագետները ավտոմատացված տեղեկատվական տեխնոլոգիաներ հասկացության մեջ դնում են երկու իմաստ: Շատ հաճախ այս հասկացությունը կապում են բանկային պրակտիկայում ցանկացած համակարգերի ներդրման հետ, որոնք.

- կատարում են անալիտիկ հաշվարկներ, կազմում են հաշվետվություններ
- հավաքում և պահպանում են տեղեկատվությունը
- ավտոմատ կերպով գումարները գրանցում են ֆիզիկական և իրավաբանական անձանց հաշիվների վրա, կատարում են փոխանցումներ, հաշվարկում են տոկոսներ ու դիվիդենդներ և այլն
- վարում են գործավարությունը
- թեթևացնում են բանկային աշխատողների աշխատանքը
- ստեղծում են նոր տիպի ծառայություններ (բանկոմատներ, ծառայություններ, ինտերնետով և այլն):

Տեղեկատվական տեխնոլոգիական համակարգ հասկացությունը անխզելիորեն կապված է կառավարում հասկացության հետ: Այդ պատճառով, խոսելով դրանց մասին, պետք է հասկանանք, որ խոսքը վերաբերվում է մարդու անմիջական մասնակցությամբ արտադրական գործընթացի կառավարման համակարգերի մասին: Բոլոր վերը նշված համակարգերը, կարելի է ասել, վերաբերում են տեխնոլոգիական գործընթացների կառավարման ավտոմատացված համակարգերի դասին: Այդպիսի տեխնոլոգիական գործընթացի օրինակ կարող են հանդիսանալ հաշվապահական գրանցումները: Այս համակարգերից մի քանիսն աշխատում են ավտոմատ, առանց մարդու մասնակցության: Բանկային գործում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության երկրորդ և այսօր ավելի կարևոր իմաստ՝ բանկի կառավարման ավտոմատացված համակարգերի ներդրումն է: Այս դեպքում բանկը դիտարկվում է ոչ թե որպես կազմակերպական կառուցվածք, այլ որպես արտադրություն, բանկային գործունեություն:

Ինչպես և ցանկացած բարդ համակարգ, որը գործում է բարդ միջավայրում, բանկը մշակում է իր նպատակներին համապատասխանող վարքագիծ, այնուհետև անընդհատ կարգավորում է այն՝ կախված արդյունքներից և գործունեության պայմանների փոփոխությունից: Կառավարումը կատարվում է հաջողությամբ, եթե կարգավորվում է աշխատանքի ամբողջ ցիկլը:

Ակնհայտ է, որ այն տեղեկատվական տեխնոլոգիական համակարգը, որը կանգնած է կառավարման խնդիրների մակարդակի վրա, նման է բանկին և ոչ թե դրա առանձին հատվածին: Այն հանդիսանում է բանկի ինֆորմացիոն հիմքը և արտացոլում է նրա գործունեության բոլոր գոյություն ունեցող տարրերը: Տեղեկատվական տեխնոլոգիական

համակարգը պետք է պահպանի հաշվառման գործառնությունները: Հաշվառումն ընկած է կառավարման հիմքում:

Բանկային գործում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների համար կարելի է առանձնացնել հետևյալ ուղղությունները՝

- ներբանկային տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- արտաքին միջավայրի սուբյեկտների հետ գործարքներ:

Բոլոր բանկային ավտոմատացված տեղեկատվական տեխնոլոգիաները գործում են հետևյալ երեք բաղադրիչների հիման վրա՝

- սարքավորումներ,
- կապի և հեռահաղորդակցության միջոցներ,
- ծրագրային ապահովում:

Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների հիմքում դրվում է ցանցային կառուցվածքը, անձնական համակարգիչների լայն օգտագործումը և դրանց բազայի վրա մասնագիտացված և փողկապակցված ավտոմատացված աշխատատեղի ձևավորումը:

SS-ի կառուցվածքի և դրան համապատասխան սարքավորումների, ծրագրային ապահովման և հեռահաղորդակցության միջոցների ընտրության ռազմավարությունը պետք է հիմնվի հետևյալ գործոնների վրա.

- բանկի չափերը (ակտիվներ, հաշիվների քանակը, մասնաճյուղերի քանակը և այլն)
- հիմնական գործունեության ուղղությունները
- հաճախորդները (կազմակերպություններ, քաղաքացիներ)
- գովազդային ռազմավարությունը
- մասնագիտացումը. առևտրային / ինվեստիցիոն/ ունիվերսալ
- ուղղվածությունը ներքին և/կամ արտաքին շուկաները
- տեղեկատվական տեխնոլոգիաների առկա հնարավորությունները բանկում և այլն:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները թույլ են տալիս կոորդինացնել բանկերի բաժինների գործունեությունը, ընդլայնել միջբանկային կապերը, գործել մի շարք երկրների ֆինանսական շուկաներում: Բանկի տեղեկատվական և այլ տեխնոլոգիաների ավտոմատացումը ներառում է ռազմավարական խնդիրների լուծման վրա: Էլեկտրոնային տեխնիկայի և տեխնոլոգիայի ձեռքբերումները առաջարկեցին ծառայության նոր տեսակ՝ կանխիկ դրամական մասսայի դեկավարման ավտոմատացման համակարգը: Այս համակարգը տալիս է օպերացիոն տեղեկատվություն բոլոր բանկային հաշիվների չափի մասին, թույլ է տալիս կարգավորել և կանխատեսել դրամական միջոցների ուղղությունը, նվազեցնել կանխիկ դրամի հետ աշխատանքի դժվարությունը, անցնել ոչ թղթային տեխնոլոգիայի:

Ոչ թղթային տեխնոլոգիայի դրական կողմերն են.

- տվյալների ակնթարթային փոխանցում,
- պահպանման յուրօրինակություն,
- պահպանման բարելավում,
- փաստաթղթերի շրջանառության դժվարության կտրուկ նվազեցում:

Բանկային էլեկտրոնային ծառայությունների համակարգի առավել նշանակալի և կարևոր բաղադրիչներից են բանկումատները: Դրանք իրենցից ներկայացնում են բանկի տարածքում կամ որևէ այլ տեղ տեղադրված առանց մարդու մասնակցության աշխատող ավտոմատ սարքեր, որոնք կարող են կանխիկ փող տալ:

Պլաստիկ քարտը ընդհանրացնող տերմին է, որը վերաբերում է բոլոր տիպի քարտերին: Պլաստիկ քարտերը կարող են կրել ինչպես դեբետային, այնպես էլ կրեդիտային գործիքների հատկանիշներ:

Ինտերնետբանկ համակարգը հաճախորդին հնարավորություն է տալիս վճարել հաշիվները՝ հեռախոսի միջոցով: Այս համակարգում օգտագործողի օգուտը կայանում է նրանում, որ մեկ զանգի միջոցով նա կարող է կատարել մի քանի ֆինանսական գործարքներ:

Դժվար է պատկերացնել ավելի հարմար տեղ համակարգչային տեխնոլոգիայի ներդրման համար, քան ասենք բանկային գործը: Մեծամասամբ բոլոր խնդիրները, որոնք

առաջանում են բանկի աշխատանքի ընթացքում, բավականին հեշտությամբ ենթարկվում են ավտոմատացման: Տեղեկատվության զգալի հոսքերի արագ և անխափան մշակումը հանդիսանում է ցանկացած մեծ ֆինանսական կազմակերպության գլխավոր խնդիրներից մեկը: Բանկը նախ և առաջ ֆինանսական կազմակերպություն է, եկամուտներ ստանալու ակնկալիքով ստեղծված, դրա համար մոդեռնացման վրա բանկը պետք է զուգար ծախսի իր շահերից ելնելով: Համաշխարհային պրակտիկայի տվյալների վրա հիմնվելով կարելի է ասել, որ բանկերի տարեկան ծախսերի մոտ 17%-ը հատկացվում է համակարգչայնացմանը: Հետաքրքրությունը բանկային համակարգի համակարգչայնացմանը ոչ թե բուլետական շահեր ստանալու նպատակ է հետապնդում, այլ դրանով բանկերը լուծում են ստրատեգիական խնդիրներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հակոբ Հարությունյան: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը բանկային համակարգում: Երևան, 2003:
2. <http://www.banks.am/am/banks/Artsakhbank>
3. http://stat-nkr.am/files/publications/2017/doklad_2017_hunvar_dektember/3_Fin.pdf

ՀՏԴ 004.71(519.85)

ՄԻՋՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ՏԱՔՍԻՆԵՐԻ ԿԱՆԳԱՌ» ՄՈՂԵԼԻ ՄՇԱԿՈՒՄ

Մարինա Հակոբյան

Ռաֆայել Բաբայան

ԱրՊՀ, Բնագիտական ֆակուլտետ

Կառ.տեղ.համակարգեր

4-րդ կուրս marina.hakopian97@gmail.com

Գիտական ղեկավար մ.գ.թ.դոցենտ Վ.Վ. Առստամյան

Բանալի բառեր. մոդել, ավտոմատացում, իմիտացիոն մոդել, տեխնոլոգիա, արդյունավետություն, պատահականություն

Ключевые слова. модель, автоматизация, имитационная модель, технология, производительность, случайность

Key words. model, automation, imitation model, technology, productivity, randomness

Ամփոփում

Ժամանակակից աշխարհի արագընթաց կյանքում տնտեսական իրավիճակների և համակարգերի վերլուծության և միավորման համար անհրաժեշտություն է առաջացել կիրառել մաթեմատիկական մեթոդներ և տեղեկատվական տեխնոլոգիաներ: Ծրագրում պատահականության հիման վրա հաշվարկվել է ուղևորների և մեքենաների սպասման միջին ժամանակը: Իրականացված աշխատանքի արդյունքները կարելի է օգտագործել կանգառներում թե՛ մարդկանց, թե՛ մեքենաների ժամանակ խնայելու համար օպտիմիզացիոն աշխատանքների իրականացման համար:

Марина Акопян, Рафаэль Бабалян - АрГУ

ПРОЕКТИРОВАНИЕ МОДЕЛИ «СТОЯНКА МЕЖДУГОРОДНОГО МАРШРУТНОГО ТАКСИ»

Резюме

В быстро развивающемся темпе современного мира необходимо применять математические методы и информационные технологии для анализа и интеграции экономических ситуаций и систем. Среднее время, проведенное пассажирами и автомобилями, рассчитывалось на основе случайности. Результаты выполненной работы могут быть использованы для экономии времени ожидания людей и автомобилей на автобусной остановке для оптимизации работы стоянки.

Marina Hakopian, Rafael Babayan -ASU

DESIGNING A MODEL OF "LONG DISTANCE SHUTTLE TAXI"

Summary

In the rapidly developing pace of the modern world, it is necessary to apply mathematical methods and information technologies for the analysis and integration of economic situations and systems. The average time spent by passengers and cars was calculated on the basis of randomness. The results of the work performed can be used to save the waiting time for people and cars at a bus stop to optimize parking.

Ամենուր հանդիպում ենք տարաբնույթ խնդիրների, որոնք արտացոլում են շուկայական հարաբերությունների կարևորագույն օրենքներից մեկը՝ ինչպես գտնել լավագույն լուծում: Շուկայական հարաբերությունների պայմաններում բազմաթիվ հնարավոր տարբերակների մեջ հարկ է լինում փնտրել ամենալավը, որը և դրվում է բնական, տնտեսական ու տեխնիկական հնարավորությունների հիմքում: Դրա հետ կապված անհրաժեշտություն է առաջացել տնտեսական իրավիճակների և համակարգերի

վերլուծության ու միավորման համար կիրառել մաթեմատիկական մեթոդներ և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, լուծելով սահմանափակումներով բազմաթիվ էքստրեմալ խնդիրներ:

Փոխադարձ բացառման խնդիրը առաջանում է հետևյալ դեպքերում՝

- Բարդ բազմաֆունկցիոնալ ծրագրային միջոցների ստեղծման դեպքում,
- Տնտեսական (լոգիստիկ) գործընթացի տրամաբանության մոդելավորման դեպքում:

Ուսումնասիրվել է այդպիսի խնդրի փորձնական լուծումը C# ծրագրավորման միջավայրում <<Միջքաղաքային երթուղային տաքսիների կանգառ>> իմիտացիոն մոդելի օրինակի վրա:

Ունենք երթուղային տաքսիների կանգառ: Ժամանակի որոշակի ընդմիջումներով կանգառ են գալիս ուղևորները և մոտենում են տաքսի մեքենաները: Երթուղայինը մեկնում է, եթե մեքենա է նստել 10 ուղևոր: Եթե եկած ուղևորը չի հայտնաբերում կանգնած երթուղային, ապա նա հերթ է կանգնում: Երբ մեքենան է ժամանում դատարկ կանգառ (ոչ մի մարդ չկա), մեքենան սպասում է ուղևորների: Եթե երթուղային ժամանել է և կանգառում արդեն կանգնած է այլ մեքենա, որը ավելի վաղ է եկել, ապա նոր ժամանած մեքենան կանգնում է հերթում:

Մոդելի պարամետրերը ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1: Իմիտացիոն մոդելի պարամետրեր

Պարամետր	Միջին արժեքը (րոպե)
Մոդելավորման ժամանակ: 10 ժ	600,0
Ուղևորների ժամանման միջակայք	1,0
Երթուղիների ժամանման միջակայք	10,0

C# ծրագրավորման լեզվում որպես այս խնդրի լուծման եղանակ կօգտագործենք պատահական թվերի Random դասը: Random դասը պարունակում է պսևդոպատահական թվերի գեներատոր: Այս դասի յուրաքանչյուր էլեմենտ ունի որոշակի ներքին վիճակ, որը՝ Next (կամ NextDouble, կամ NextBytes) մեթոդի կանչման դեպքում մեթոդը օգտագործում է այդ վիճակը այն թվի վերադարձման համար, որը կլինի պատահական: Next մեթոդի հաջորդ կանչումից հետո այն կվերադարձնի այլ պատահական թիվ՝ տարբերվող նախորդից: Random դասը լրիվությամբ դետերմինացված է: Դա նշանակում է, որ եթե ստեղծենք Random դասի մի քանի էլեմենտ միանման սկզբնական վիճակով, որը տրվում է seed կոնստրուկտորի պարամետրի միջոցով, և յուրաքանչյուր էլեմենտի հանդեպ կիրառենք համապատասխան մեթոդները միանման հերթականությամբ և նույն պարամետրերով, ապա վերջում կստանանք միանման արդյունքներ:

Ծրագրի ընթացքում անհրաժեշտ է լինելու կանգառ հասած մարդկանց և մեքենաների քանակը: Դրա համար անհրաժեշտ է հայտարարել ստատիկ փոփոխականներ և սկզբնարժեքավորել դրանք զրո արժեքներով:

Քանի որ մեր ծրագիրը կոնսոլային է և ծրագրի ամբողջ մարմինը գրված է static void Main(string[] args) մեթոդում, ապա մեթոդից դուրս հայտարարված բոլոր փոփոխականները լինելու են ստատիկ:

```
static int busCount = 0, passengerCount = 0;
```

Ինչպես ներկայացված է աղյուսակում մարդիկ միջինը գալիս են մեկ րոպե ժամանակահատվածում, իսկ մեքենաները միջինը գալիս են տասը րոպե ժամանակահատվածում: Որպեսզի մոդելը նմանվի իրականի, մարդու և մեքենաների գալու ժամանակը ընտրենք պատահականորեն սահմանված միջակայքից: Մարդկանց համար միջակայքը սահմանեք միջին ժամանակ +- 25%՝ [45; 75], իսկ մեքենաների համար սահմանեք +- 10% [540; 660]: Մոդելի աշխատաքի ժամանակը մեծ կամ հավասար է 3600: Բոլոր մեծությունները արտահայտված են վարկյաններով: Քանի որ ծրագրում բոլոր գործողությունները կատարվում են միլիվարկյանների ընթացքում, և որպեսզի

աշխատանքային մոդելի ծրագրի իրականացմանը երկար չսպասենք, ներկայացնեք բոլոր ժամանակահատվածները միլիվարկայներով:

Միջակայքերից պատահական ժամանակահատվածը վերցնելու համար օգտագործում ենք Random դասը: Այն հայտարարում ենք հետևյալ ձևով՝

```
static Random randomTime = new Random() [1, էջ 45-48];
```

Մարդկանց և մեքենաների գալու պատահական ժամանակահատվածի, վերջին եկած մարդկանց և մեքենաների ժամանակները և դրանց բոլոր արժեքներ պահելու համար հայտարարենք հետևյալ փոփոխականները

```
static int busTimeRandom, passengerTimeRandom; // մարդկանց և մեքենաների
```

```
//գալու պատահական ժամանակահատված միլիվարկայներով
```

```
static double timeBus, timePassenger; // մարդկանց և մեքենաների գալու
```

```
//ժամանակահատված միլիվարկայներով
```

```
static DateTime StartTime, BusComeTime, PassengerComeTime; // մոդելի
```

```
//աշխատանքի, մարդկանց և մեքենաների սկզբնական ժամանակը
```

```
static List<double> busList = new List<double>(), passengerList = new List<double>();
```

```
//մարդկանց և մեքենաների գալու ժամանակահատվածների արժեքների
```

```
//ցուցակ՝ հաշվետվության համար
```

Ծրագրի իրականացման սկզբից վերցնում ենք պատահական ժամանակահատվածները և ֆիքսում ենք սկսման պահը:

```
busTimeRandom = randomTime.Next(5400, 6600);
```

```
passengerTimeRandom = randomTime.Next(450, 750);
```

```
StartTime = PassengerComeTime = BusComeTime = DateTime.Now;
```

Ծրագիրը պիտի իրականացվի այնքան, ինչքան հետևյալ պայմանը ճիշտ է: Դրա համար օգտագործում ենք while ցիկլը:

```
while (DateTime.Now.Subtract(StartTime).TotalMilliseconds < 360000)
```

Ցիկլի մեջ նույնպես կա ցիկլ, որի միջոցով սպասում ենք մարդու կամ մեքենայի գալը կանգառ:

Երբ կանգառ հասնում է մարդ կամ մեքենա, ապա նրան կանգնեցնում են հերթում: Երբ հերթում մեքենաների քանակը մեծ է զրոյից, իսկ մարդկանց քանակը իննից, ապա կանգառից հեռանում է մեքենա՝ տաս մարդկանց հետ:

```
--busCount;
```

```
passengerCount -= 10;
```

```
Console.WriteLine("Կանգառից հեռացան 10 մարդ");
```

Ժամանակի ավարտի դեպքում ստուգվում է արդյոք կանգառում մարդ և մեքենա կան: Եթե կանգառում կան և մարդ, և մեքենա, այդ դեպքում կանգառից հեռանում է մեքենան կանգառում մարդկանց հետ:

```
if (busCount > 0 && passengerCount > 0) {
```

```
int count = 10;
```

```
--busCount;
```

```
if (passengerCount < 10)
```

```
passengerCount -= count = passengerCount;
```

```
else
```

```
passengerCount -= 10;
```

```
Console.ForegroundColor = ConsoleColor.Green;
```

```
Console.WriteLine($"Կանգառից հեռացան {0} մարդ", count);
```

```
}
```

Աշխատանքի վերջում կատարվում է սպասման միջին արժեքի որոշում:

```
double sum = 0;
```

```
foreach (double time in passengerList)
```

```
sum += time;
```

```
Console.WriteLine("Մարդկանց քանակը " + passengerList.Count + "միջին ժամանակը " + (sum/
passengerList.Count));
sum = 0;
foreach (double time in busList)
    sum += time;
Console.WriteLine("meqenaneri qanaky" + busList.Count + "mijin jamanaky" + (sum /
busList.Count));
```

```
Kangar mard e ekel 550.404
Kangar mard e ekel 486.3474
Kangar mard e ekel 517.3734
Kangar mard e ekel 617.466
Kangar mard e ekel 468.4535
Kangar mard e ekel 634.4714
Kangar mard e ekel 703.044
Kangar mard e ekel 532.4148
Kangar mard e ekel 535.8922
Kangar mard e ekel 451.3435
Kangar mard e ekel 507.3792
Kangar mard e ekel 536.4085
Kangar ekel e meqena 6579.0234
Kangaric heracvel e 10 mard
```

Օգտագործված գրականության ցանկ

4. Т. А. Павловская. С#. Программирование на языке высокого уровня. Учебник для вузов - СПб. Изд., Питер, 2007г.
5. Джесс Либерти Программирование на С# - Символ-Плюс, 2008г.
6. А. А. Емельянов, Е. А. Власова, Р. В. Дума. Имитационное моделирование экономических процессов. Москва Изд., "Финансы и статистика" 2002

ՀՏԴ 004.43(519.85)

**ԱՄԵՆԱՄԵԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԱՆԱԴԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ
ՄԵԹՈԴՆԵՐԸ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԼԵԶՎՈՒՄ**

Անժելիկա Դավթյան
ԱրՊՀ, anzhie1998@gmail.com
Արուսյակ Ալավերդյան
ԱրՊՀ, arusalaverdyan47@gmail.com
Գիտական ղեկավար մ.գ.թ.դոցենտ Վ.Վ. Առստամյան

Բանալի բառեր. Ամենամեծ ընդհանուր բաժանարար (առբ), Էվկլիդեսի ալգորիթմ, փոխադարձաբար պարզ թվեր, c++ ծրագրավորման լեզու, օբյեկտ-կողմնորոշված ծրագրավորում:

Ключевые слова: Наибольший общий делитель (нод), алгоритм Эвклида, взаимно простые числа, язык программирования c++, объектно-ориентированное программирование.

Key words: Greatest common divisor (gcd), Euclid's algorithm, mutually prime numbers, C++ programming language, object-oriented programming.

Анжелика Давидян
Арусяк Алавердян
АрГУ

**НАХОЖДЕНИЕ НАИБОЛЬШЕГО ОБЩЕГО ДЕЛИТЕЛЯ НА ЯЗЫКЕ
ПРОГРАММИРОВАНИЯ**

Резюме

В этой статье мы изучили наибольший общий делитель (НОД). Сначала мы ввели понятие общего делителя нескольких целых чисел и привели примеры. Общий делитель нескольких целых чисел – это такое целое число, которое является делителем каждого из данных чисел. В ходе изучения этого метода и алгоритма Эвклида, была разработана программа, которая позволяет Вам находить наибольший общий делитель натуральных чисел.

Anzhelika Davidyan
Arusyak Alaverdyan
ASU

FINDING THE GREATEST COMMON DIVISOR IN A PROGRAMMING LANGUAGE

Summary

In this article we will study the greatest common divisor (GCD). First, we introduce the notion of a common divisor of several integers and give examples. The common divisor of several integers is an integer that is a divisor of each of these numbers. During the study of this method and the Euclidean algorithm, a program was developed that allows you to find the greatest common divisor of natural numbers.

Այս հոդվածում մենք կուսումնասիրենք ամենամեծ ընդհանուր բաժանարարը: Սկզբում մենք կներկայացնենք մի քանի ընդհանուր հասկացություններ բաժանարարի մասին և կբերենք օրինակներ: Դա հնարավորություն կտա մեզ ստանալ երկու թվերի ընդհանուր բաժանարարը: Վերջում կթվարկենք ամենամեծ ընդհանուր բաժանարարի հիմնական հատկությունները:

Ընդհանուր բաժանարարի սահմանումը տալու համար, նախ պարզենք, թե որն է ամբողջ թվերի բաժանարարը:

Երկու թվերի ընդհանուր բաժանարար հանդիսանում է այն ամբողջ թիվը, որը հանդիսանում է բաժանարար այդ թվերից յուրաքանչյուրի համար:

Ամենամեծ ընդհանուր բաժանարարը գտնելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները

- երկու թվերը վերլուծել պարզ արտադրիչների,
- դուրս գրել բոլոր պարզ թվերը, որոնք միաժամանակ կան երկու վերլուծություններում,

- դուրս գրած պարզ թվերից վերցնել ամենափչ անգամ պատահող թվերը,
- գրել ստացվածների արտադրյալը:

Գտնենք ԱՇԲ(20;27)-ը:

Երկու թվերը վերլուծենք պարզ արտադրիչների՝ $20 = 2 \cdot 2 \cdot 5$ $27 = 3 \cdot 3 \cdot 3$:

Այս թվերը 1-ից բացի ընդհանուր բաժանարարներ չունեն: Ուրեմն 1-ը միակ ընդհանուր բաժանարարն է:

Պատասխան՝ ԱՇԲ(20;27) = 1

Եթե երկու բնական թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը 1-ն է, ապա թվերը կոչվում են փոխադարձաբար պարզ թվեր:

20 և 27 թվերը փոխադարձաբար պարզ են: Եթե թիվը բաժանվում է երկու փոխադարձաբար պարզ թվերից յուրաքանչյուրի վրա, ապա այն բաժանվում է նաև նրանց արտադրյալի վրա:

Օրինակ.

540 թիվը բաժանվում է 20-ի, և 27-ի: Ուրեմն՝ 540-ը կբաժանվի նաև նրանց արտադրյալի վրա՝ $540 / (20 \cdot 27) = 540 / 540 = 1$:

Այժմ C++ ծրագրավորման լեզվում ներկայացնենք այս ամենապարզ մեթոդը, որը հայտնի է դեռ դպրոցից:


```
#include <iostream>
using namespace std;
int nod(int a,int b){
    int nod = 1L;
    if(a>b){
        int temp = a;
        a=b;
        b=temp;
    }
    while(a>1L && b>1L){
        for(int i=2;i<=a;++i){
            if(a%i==0 && b%i==0){
                nod*=i;
                a/=i;
                b/=i;
                break;
            }
            if(a%i==0){
                a/=i;
                break;
            }
            if(b%i==0){
                b/=i;
                break;
            }
        }
    }
    return nod;
}
int main()
{
    cout<<"nod = "<<nod(24,54);
    return 0;
}
```

Սկզբում գրում ենք ֆունկցիան(nod), որին կարող ենք փոխանցել int տիպի 2 արժեք: Ֆունկցիայի մեջ ստեղծում ենք nod=1L փոփոխականը(L=long տիպ): Եվ ստուգում ենք $a > b$ պայմանը, եթե այն ճիշտ է, նոր փոփոխականին վերագրում ենք a-ի արժեքը, b-ին՝ a, a-ին՝ b,

այսինքն փոխում ենք a և b արժեքների տեղերը՝ եթե $a > b$: Այնուհետև կատարվում է `while` ցիկլը, քանի դեռ a և b մեծ են 1-ից: `While`-ի մեջ նորից կատարվում է `for` ցիկլը ($i=2$ սկսած), որտեղ կատարվում է պայմանի ստուգում՝ a -ն և b -ն պետք է առանց մնացորդի բաժանվեն i -ի վրա: Եթե այդ պայմանը ճիշտ է, ապա `nod`-ը բազմապատկվում է այդ i թվով, իսկ a -ն և b -ն փոքրացնում ենք i անգամ, այնուհետև `break`: Հետո նորից ստուգվում է առանձին-առանձին a -ն և b -ն առանց մնացորդի բաժանվում են այդ նույն i -ի վրա, եթե այո, ապա a -ն և b -ն նորից i անգամ փոքրացնում ենք և հետո `break`: Վերջում վերադարձնում է `nod` փոփոխականի արժեքը: Եվ արդեն `int main()` ֆունկցիայի մեջ մենք կփոխանցենք արժեքները հետևյալ կերպ `nod(24,54)`:

Օրինակ՝

Եվ



արդյունքում կունենանք՝

Կան նաև այլ եղանակներ ծրագիրը գրելու: Դիտարկենք ևս մեկը.

```
#include <iostream>
using namespace std;
int main()
{
    int a=56,b=78;
    for(int i=a;i>0;--i){
        if(a%i==0 && b%i==0){
            cout<<"nod = "<<i;
            break;
        }
    }
    return 0;
}
```

Այս ծրագիրը կգրենք հենց `int main()` ֆունկցիայի մեջ: Կհայտարարենք 2 փոփոխական և կվերագրենք արժեքներ: Այնուհետև կգրենք ցիկլ, որտեղ $i = a$ և i -ն կփոքրացնենք 1-ով, քանի դեռ այն մեծ կլինի 0-ից, իսկ ցիկլի ներսում կատարում ենք պայմանի ստուգում, երբ a -ն և b -ն առանց մնացորդի բաժանվեն այդ i թվի վրա կկատարվի `break` և կտալի այդ i թիվը:

Էվկլիդեսի ալգորիթմ-Ամենամեծ ընդհանուր բաժանարարը գտնելու ալգորիթմը հայտնաբերվել է դեռևս հին հունական գիտնականների կողմից, և այդ ալգորիթմը հայտնի է «փոխադարձ հանում» անունով: Եվ թեկուզ այդ ալգորիթմը հայտնի էր Արիստոտելի ժամանակից, բայց այն կոչվում է Էվկլիդեսյան ալգորիթմ: Ստորև ներկայացված են Էվկլիդեսյան ալգորիթմի հատկություններն ու լուծման մեթոդները:

Այս ալգորիթմի գաղափարը հիմնված է հետևյալ սկզբունքի հիման վրա, եթե $a > b$, ապա

$$\text{ԱԼԲ}(a, b) = \text{ԱԼԲ}(a - b, b), \quad b = a :$$

կամ

$$\begin{aligned} \text{ԱԼԲ}(a, b) &= \text{ԱԼԲ}(b, a \% b), & \text{եթե} & \quad b \neq 0; \\ \text{ԱԼԲ}(a, 0) &= a \end{aligned}$$

Այլ կերպ ասած, երկու բնական թվերի ամենամեծ ընդհանուր բաժանարարը հավասար է նրանց դրական տարբերության (նրանց մոդուլին) և փոքրագույն արժեքին:

$$\text{ԱԼԲ}(a, a) = a$$

1. Եթե թվերը հավասար են ($a=b$), կարելի է վերցնել դրանցից մեկը, հակառակ դեպքում շարունակում ենք ալգորիթմի կատարումը,
 2. Փոխարինում ենք ամենամեծ թիվը՝ ամենամեծ և ամենափոքր թվերի տարբերությամբ,
 3. Վերադառնում ենք առաջին քայլին:
- Դիտարկենք հետևյալ օրինակը.

$a = 32, b = 24$

a	32	16	8	8
b	24	24	16	8

Ստացանք $\text{ԱԸԲ}(32,24) = \text{ԱԸԲ}(8,8) = 8$

Դիտարկենք Էվկլիդեսյան ալգորիթմով գրված ծրագիրը.

```
#include <iostream>
using namespace std;
int nod(int a,int b){
    if(a==b){
        return a;
    }
    if(a>b){
        int temp=a;
        a=b;
        b=temp;
    }
    return nod(a,b-a);
}
int main()
{
    cout<<"nod = "<<nod(24,12);
    return 0;
}
```


կամ

```
#include <iostream>
using namespace std;
int main()
{
    int a = 24;
    int b = 12;
    while (b!=0){
        int t=a;
        a=b;
        b=t%a;
    }
    cout<<"nod = "<<a;
    return 0;
}
```

Սկզբից գրում ենք ֆունկցիան(nod -ը), որին փոխանցում ենք ամբողջ տիպի 2 արժեք: Էվկլիդեսյան ալգորիթմով ծրագիրը գրելու համար կիրառենք ռեկուրսիա: Ծրագրավորման

ուրրտում ռեկուրսիա ասելով հասկանում ենք այն դեպքը, երբ ֆունկցիայի մարմնի մեջ կանչվում է հենց ինքը՝ ֆունկցիան:

Կատուգենք եթե $a=b$, ապա կվերադարձնի նրանցից մեկը, իսկ եթե $a>b$, կկատարի a և b արժեքների տեղերի տեղափոխում: Այնուհետև կվերադարձվի $\text{nod}(a, b-a)$, այսինքն նորից կկանչվի ֆունկցիան մինչև որ գտնի ամենամեծ ընդհանուր բաժանարարը:
Օրինակ՝ $\text{nod}(24,12)$



```

22
23 int main()
24 {
25     cout<<"nod = "<<nod(24,12);
26
27     return 0;
28 }
29

```

nod = 12

Սկզբից ստուգում է $24 = 12$, քանի որ այս պայմանը սխալ է, ստուգում է հաջորդ պայմանը, այսինքն՝ $24 > 12$ և քանի որ ճիշտ է a և b արժեքների տեղերը փոխում է և վերադարձնում $\text{nod}(12, 24-12) \Leftrightarrow \text{nod}(12,12) \Rightarrow 12$:

Օգտագործված գրականության ցանկ

1. <http://www.bymath.net/studyguide/ari/ari8.html>
2. <http://www.cleverstudents.ru/divisibility/nod.html>
3. «C++ հիմունքները» Ռ.Վարդանյան, Ս.Կարապետյան

ՀՏԴ 004 (519.85)

«SPSS» ՓԱԹԵԹ

Նուշիկ Ավետիսյան
Մանուշ Գաբրիելյան
ԱրՊՀ, Բնագիտական ֆակուլտետ,
Ինֆորմատիկա և համակարգչային գիտելիքներ մագ. 1-ին կուրս
Էլ. հասցե՝ nushik.avetisyan.96@bk.ru, հեռ.՝ 097-27-65-27
manush.gabrielyan.96@bk.ru, 097-22-55-67
Գիտական ղեկավար մ.գ.թ.դոցենտ Վ.Վ. Առստամյան

Բանալի բառեր. SPSS, վերլուծություն, մեթոդ, մոդել, անկետա, բջիջ, արժեք:

Ключевые слова. SPSS, анализ, метод, модель, анкета, ячейка, значение.

Key words. SPSS, analysis, method, model, questionnaire, cell, value.

Нужик Аветисян
Мануш Габриелян
АрГУ

ПАКЕТ "SPSS"

Резюме

Основу программы SPSS составляет SPSS Base (базовый модуль), предоставляющий разнообразные возможности доступа к данным и управления данными. Он содержит методы анализа, которые применяются чаще всего. SPSS Base включает все процедуры ввода, отбора и корректировки данных, а также большинство предлагаемых в SPSS статистических методов.

Nushik Avetisyan
Manush Gabrielyan
ASU

"SPSS" PACKAGE

Summary

The SPSS software is composed of SPSS Base, offering different types of access and control information. The following is a method of analysis, which are applied to the entire text. The SPSS Base includes all procedures, input and correction data, as well as recommended SPSS statistical methods.

Այսօր SPSS-ն վիճակագրական տեղեկատվության մշակման ամենատարածված ծրագիրն է: SPSS-ը Statistical Package of the Social Science –ի հապավումն է: Որից էլ կարելի է ենթադրել, որ այն տվյալների մշակման տարբեր ծրագրերի հավաքածու է: Այս ծրագրերը ավելի հեշտացնում են տեղեկատվության մուտքագրումը, թույլ են տալիս ճկունորեն փոխել տվյալների կառուցվածքը, օգտագործել ժամանակակից մշակման մեթոդները և ստանալ արդյունքներ հարմար և տեսողական ձևով: SPSS ծրագրի հիմքում ընկած է SPSS Base (բազային մոդուլ), որն ապահովում է մի շարք տվյալների հասանելիության և տվյալների կառավարման հնարավորություններ: Այն պարունակում է վերլուծության մեթոդներ, որոնք առավել հաճախ օգտագործվում են: SPSS բազան ներառում է տվյալների մուտքագրման, ընտրման և ուղղման բոլոր ընթացակարգերը, ինչպես նաև SPSS-ում ներկայացված վիճակագրական մեթոդների մեծ մասը: Պարզ վիճակագրական վերլուծության մեթոդների հետ միասին, ինչպիսիք են հաճախականության վերլուծությունը, վիճակագրական բնութագրերի հաշվարկը, համադրման աղյուսակները, կոորդինացիաները, պլանավորումը, այս մոդուլը ներառում է t- թեստեր և մեծ քանակությամբ այլ ոչ պարամետրային թեստեր, ինչպես նաև բարդ մեթոդներ, ինչպիսիք են բազմաչափական գծային ռեգրեսիան վերլուծությունը, խտրականությունը վերլուծություն, գործոնների վերլուծություն, կլաստերի

վերլուծություն, վերլուծության վերլուծություն, համապատասխանության վերլուծություն (հուսալիության վերլուծություն) և բազմաչափ չափումներ: Սոցիոլոգիական տվյալների հետ աշխատելիս կիրառվում են երկու հիմնական հասկացություններ՝ վերլուծության միավոր և փոփոխական: Վերլուծության միավորը նախաքննության օբյեկտի տարրական, մեկ միավորն է: Վերլուծության միավորը առավել հաճախ համապատասխանում է դիտարկման միավորին, սոցիոլոգիայում, որպես կանոն, այս միավորը առանձին պատասխանող է: Հետևաբար, վերլուծության միավորը դառնում է հարցաթերթում պարունակվող տեղեկատվությունը, որը հաճախ լրացնում է մեկ հարցվող:

Օրինակ, անհրաժեշտ է հարցումներ անցկացնել և պարզել ընտրողների նախընտրությունները նախընտրական շրջանում քաղաքական կուսակցությունների նկատմամբ:

Անկետա
Անկետայի համարը _____
1. «Որ կուսակցությանը կքվեարկեիք, եթե ընտրությունները անցկացվեին հաջորդ կիրակի օրը»
1. Ազատ Հայրենիք
2. Արցախի ժողովրդավարական կուսակցություն
3. Հայ Հեղափոխական Դաշնակցություն
2. Մեռ
1. Իզական
2. Արական
3. Նշել տարբեր _____
4. Որ շրջանում եք դուք ապրում _____

Եթե անցկացվում է 30 հարցվողների հետազոտություն, ապա այս դեպքում վերլուծության ստորաբաժանումները կլինեն բոլոր հարցման տվյալները՝ հարցվածների հետ լրացված 30 հարցաթերթի: Հարցաթերթը մեկ վերլուծության միավոր է: Վերլուծության յուրաքանչյուր միավորի փոփոխականները կլինեն հարցաթերթի հարցերը, փոփոխականների արժեքները՝ հարցվողների պատասխանները՝ հարցաթերթի հարցաթերթիկի ընտրանքները (եթե օգտագործվում են անվանական խտացում), թվային արժեքներ (օրինակ, պատասխանողի տարիքը) կամ նամակների արժեքները (տեքստային տեղեկություններ, օրինակ՝ բնակեցված տարածք):

Տվյալների վերամշակման համար նախ պետք է ստեղծվի կոդավորման աղյուսակը: Կոդային աղյուսակը սահմանում է հարցաթերթի առանձին հարցերի և տվյալների համակարգչային մշակման մեջ կիրառվող փոփոխականների միջև համապատասխանությունը:

Օրինակ՝ «Որ կուսակցությանը կքվեարկեիք, եթե ընտրությունները անցկացվեին հաջորդ կիրակի օրը » հարցաշարի հարցը, փոփոխական անունը var1 կամ party-ին կարող է համապատասխանել: SPSS-ի 13.0 տարբերակի մեջ փոփոխականի անունը պետք է մուտքագրվի լատիներեն տառերով, թվերով, առանց բացատների, մինչև 8 նիշ, փոփոխականները կարող են տարբեր արժեքներ ընդունել: Օրինակ՝ «Մեռ» փոփոխականը կարող է ունենալ երկու հնարավոր իմաստ՝ « կին» և «տղամարդ»: Կոդի աղյուսակը սահմանում է փոփոխականների անհատական արժեքներին համապատասխանող կոդերի համարները: Օրինակ, «կին» արժեքը կարող է համապատասխանի «1» թվին, իսկ «արական» արժեքը՝ «2»: Մեր հարցաշարի համար կարող ենք կազմել հետևյալ կոդավորման աղյուսակը: Այն տրվում է անկետայի ձևով՝

Number	Var1	Var2	age	terr
1	ՀՅԴ	Իզական	45	Մարտունի


2	Ազատ Հայրենիք	Արական	22	Մարտակերտ
3	ՀՅԴ	Արական	19	Ստեփանակերտ
4	ԱԺԿ	Իգական	42	Մարտունի
5	ԱԺԿ	Արական	34	Մարտունի
6	Ազատ Հայրենիք	Իգական	72	Շուշի
7	ԱԺԿ	Իգական	38	Մարտակերտ
8	Ազատ Հայրենիք	Իգական	56	Ստեփանակերտ
9	Ազատ Հայրենիք	Արական	61	Ստեփանակերտ
10	Ազատ Հայրենիք	Արական	77	Մարտակերտ

Վերոնշյալ աղյուսակը կոչվում է տվյալների մատրիցա: SPSS-ում Windows-ի համար մշակման համար նախատեսված տվյալները պետք է ներկայացվեն նմանատիպ ձևաչափով: Տվյալների մատրիցը բաղկացած է մի շարք շարքերից և սյունակներից: Տողերը և սյուները ձևավորվում են ուղղանկյուն սեղան: Այսպիսով, յուրաքանչյուր տող համապատասխանում է մեկ հարցաթերթիկին, և յուրաքանչյուր սյունակում մեկ փոփոխական: Քանի որ 10 հարցվողներ մասնակցել են մեր փոքր հարցմանը, ապա մատրիցը պարունակում է 10 տող: Յուրաքանչյուր տող ներառում է փոփոխական համարի չորս սյունակ (հարցաթերթի համարը), var1 (առաջին հարցն այն հարցաթերթի առաջին հարցն է, «Որ կուսակցությանը կքվեարկեիք, եթե ընտրությունները անցկացվեին հաջորդ կիրակի օրը»), var2 (սեռ), age (տարիք) և terr (բնակավայր):

Սկսենք տվյալների մուտքագրելով փոքր նմուշի վերլուծության համար: Ստեղծեք SPSS-ը Windows-ի համար, սեղմելով SPSS սեղմակը: Բացվում է SPSS-ի տվյալների խմբագիրը:

Տվյալների խմբագիրը SPSS-ի բազմաթիվ պատուհաններից մեկն է: Այստեղ կարող ենք մուտքագրել նոր տվյալներ կամ բեռնել առկա ֆայլերը տվյալների ֆայլերից, օգտագործելով ընտրացանկի հրահանգները File Open ... (Բացել ...)

Քանի որ ոչ մի տվյալների ֆայլ դեռ չի բեռնվել SPSS-ում, տվյալների խմբագրիչը «Untitled» (Անանուն) է: Սեղանի պատկերի վերևում տվյալների խմբագրում կա ցանկի սյուն և խորհրդանիշ վահանակ: Տվյալների խմբագիրն այնպիսի ծրագիր է, որը նման է աղյուսակի:



Աղյուսակաթերթը գործառնություն է, որը բաժանվում է տողերի և սյունակների, ինչը թույլ է տալիս հեշտությամբ և արդյունավետ կերպով մուտքագրել տվյալները: Աղյուսակի անհատական տողերը համապատասխանում են վերլուծության առանձին միավորներին: Օրինակ, հարցման տվյալների մշակման ժամանակ մեկ տողը պարունակում է մեկ հարցվողի տվյալները: Անհատական սյունները համապատասխանում են անհատական փոփոխականներին: Հարցաթերթի դիտարկման տվյալները մշակելիս մեկ փոփոխական պահում է առանձին հարցի պատասխանները: Մեղանի անհատական բջիջները պարունակում են փոփոխական արժեքներ յուրաքանչյուր անհատի դիտարկման համար, յուրաքանչյուր բջիջում փոփոխության մեկ արժեք է պահվում:


Յուրաքանչյուր վերամշակման ընթացակարգ ունի իր սեփական երկխոսության պատուհանը: Չնայած դրան, գրեթե բոլոր երկխոսության պատուհանները կառուցված են նույն սկզբունքով:

Ահա ընթացակարգի երկխոսության պատուհանի օրինակ է Frequencies՝

Վիճակագրական ընթացակարգերի երկխոսության պատուհանները պարունակում են հետևյալ բաղադրիչները.

1. Փոփոխականների ցանկի աղբյուրը՝ տվյալների ֆայլի բոլոր փոփոխականների ցանկը: Օրինակ, տվյալ ցուցանիշի մեջ առկա փոփոխականները առկա են փոփոխականների ցանկում:

Տարբերակները՝ հարցաթերթի քանակը (անուն), սեռ (var1), տարիքը (var2), կուսակցություն (var3): Մինչև յուրաքանչյուր փոփոխականի անունը պատկերն է, որի վրա կարող եք որոշել՝ արդյոք այս փոփոխականը թվային է թե տող: Ընտրված փոփոխականների ցանկը վերլուծության համար ընտրված տվյալների ֆայլի փոփոխականների ցանկն է: Ընտրված փոփոխականների ցանկը նաև կոչվում է թիրախ ցուցակ կամ փորձարկման փոփոխականների ցանկ: Այս ցանկն ունի փոփոխական (ներ) և արժեք(ներ): Քանի որ մենք դեռ չենք ընտրում փոփոխականներ, այս ցուցակը դատարկ է:



Հրամանի կոճակները կոճակներ են, որոնք սեղմելով որոշակի գործողություններ են կատարվում: Այս երկխոսության դաշտում կան OK, Paste, Reset, Cancel և Help կոճակներ, ինչպես նաև կոճակներ, որոնք բացում են օժանդակ երկխոսության պատուհաններ՝ Statistics..., Charts... և Format...: Տվյալների վերլուծության արդյունքները ցուցադրվում են Output պատուհանում: Դիտարկման պատուհանը բաժանված է երկու մասի: Եզրակացության կառուցվածքը դրսևորվում է ձախ կողմում, իսկ փաստացի տվյալները դրսևորվում են աջ կողմում: Արդյունքների բաժնում ցուցադրվում են երկու աղյուսակներ և գրաֆիկներ: Ի տարբերություն

տվյալների ֆայլի (.sav), ելքային ֆայլը ունի .spo ընդլայնում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Крыштановский А.О. Анализ социологических данных с помощью пакета SPSS, 2006. – 281 с.
2. Бююль А., Цефель П. SPSS: искусство обработки информации. Анализ статистических данных и восстановление скрытых закономерностей, 2005. – 608 с.
3. <http://www.analitika.kz/images/spss-1.pdf>
4. <http://www.spss.ru/products/spss/index.htm>

ՀՏԴ 572

ՇՆՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՏԱՐԲԵՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Անուշ Դարիբյան
Արցախի պետական համալսարան
Կենսաբանություն 3-րդ կուրս
anush.garibyan.98@mail.ru

Բանալի բառեր. շնչառություն, թոքեր, սիստոլա, դիաստոլա, անոթազարկ, բարձր լեռնային գոտի, ցածր լեռնային գոտի, թթվածնաքաղց:

Ключевые слова: дыхание, легкие, систола, диастола, пульс, высокогорная зона, низменная зона, гипоксия.

Key words: breath, lungs, systole, diastole, humpback, high mautain zone, low mautain zone, hypoxia

Ամփոփում

Տվյալ աշխատանքում քննարկվում են շնչառության գործընթացը և նրա առանձնահատկությունները տարբեր պայմաններում: Նկատվել է, որ բարձր լեռնային շրջաններում (օրինակ, քաղաք Շուշի) նվազում է զարկերակային ճնշումը, արագանում է անոթազարկը և շնչառական շարժումների հաճախությունը: Նշված պարամետրերը փոխվում են բնակավայրի՝ ծովի մակարդակից բարձրության նվազմանը զուգահեռ, ինչը կարելի է նկատել Ստեփանակերտ քաղաքի և Արցախի՝ Մարտունու շրջանի Գիշի գյուղի բնակիչների մոտ:

Ануш Гарибян
Арцахский Государственный Университет
Биология 3-ий курс
anush.garibyan.98@mail.ru

Резюме

В данной работе обсуждаются особенности дыхания в различных условиях: в частности при высоком и низком атмосферном давлении. Было замечено, что у жителей высокогорных районов (например, г. Шуши) понижается артериальное давление, учащается пульс и частота дыхательных движений. Данные параметры изменяются с уменьшением высоты над уровнем моря места проживания людей, что можно заметить у жителей г. Степанакерта и с. Гиши Мартунинского района Арцаха.

Anoush Garibyan
Artsakh State University
Biology 3rd year
anush.garibyan.98@mail.ru

Sammary

In this issue are considering breath peculiarities in different conditions: in particular on high and low atmosphere pressure. It was noticed, that inhabitants of highmountinous regions (for example, c. Shushi) falls the altery pressure, pulse and breath frequency. This parameters change with lowing the high of the settlement, which may notice at inhabitants of c. Stepanakert and v. Gishi Martuni ragion.

Ներածություն: Մարդու կյանքի առաջին և վերջին գործողությունը շնչառությունն է: Շնչառությունը, դա կենդանի օրգանիզմի և միջավայրի միջև տեղի ունեցող գազափոխանակությունն է: Նորմալ կենսագործունեության համար մարմնին անհրաժեշտ է էներգիա: Սննդանյութերից էներգիայի ստացումն ընթանում է թթվածնի կլանմամբ և ածխաթթու գազի անջատմամբ: Քանի որ օրգանիզմում չկա թթվածնի պաշար և առանց որի բջիջները մահանում են, ապա անհրաժեշտ է թթվածնի անընդհատ մուտք դեպի օրգանիզմ: Մյուս կողմից ածխաթթու գազը պետք է հեռացվի մարմնից, քանի որ նրա զգալի

քանակության կուտակումը վտանգավոր է կյանքի համար: Օդից թթվածնի կլանումը և ածխաթթու գազի արտազատումը իրագործվում է շնչառական համակարգի միջոցով: Շնչառական համակարգը կազմում են շնչուղիները (քթի խոռոչ, քթմպան, ըմպան, կոկորդ, շնչափող, բրոնխներ) և թոքերը: Շնչուղիներով օդը հասնում է թոքեր, որտեղ իրականանում է գազափոխանակությունը: Երկիր մոլորակի վրա, կապված գիտատեխնիկական առաջընթացի հետ, 20-21-րդ դարերը բնորոշվում են արդյունաբերական արտադրության բուռն զարգացմամբ ու դրա հետ կապված էկոլոգիական ճգնաժամերով: Այսօր պայմանավորված այդ առաջընթացով և դրա հետևանքով ծագող ճգնաժամերով բավականին արդիական են դարձել շնչառական համակարգի հիվանդությունները:

Գրական ակնարկ: Շնչառությունը գործընթացների ամբողջություն է, որն ապահովում է թթվածնի մուտքը օրգանիզմ, օգտագործում օրգանական նյութերի օքսիդացման համար և ածխաթթու գազի հեռացումը շրջապատող միջավայր: Շնչառության գործընթացում թոքերը հիմնականում իրականացնում է գազափոխանակության ֆունկցիան: Թոքերի գործառական միավորը թոքաողկույզն է (ացինուս), որի ընդհանուր քանակը մարդու մոտ 300 000 է: Ներշնչումը և նրան հաջորդող արտաշնչումը կազմում են շնչառական բոլորաշրջանը, որը տևում է 4-6 վրկ, ընդ որում՝ ներշնչումը կատարվում է ավելի արագ, քան արտաշնչումը: Ֆիզիոլոգիական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում կատարում է 14-16 շնչառական շարժում, ձին՝ 10-15, խոզը՝ 5-18, կովը՝ 10-30: Մկանային աշխատանքը, հուզմունքը, շրջապատի ջերմաստիճանի բարձրացումն ու մարսողությունն արագացնում և հաճախացնում են շնչառությունը: Ներշնչելիս օդի մուտքը դեպի թոքեր և դուրս գալն արտաշնչման դեպքում տեղի է ունենում կրծքավանդակի ու թոքերի ծավալի պարբերաբար լայնացման և նեղացման, ինչպես նաև թոքամզային խոռոչի ու ներթոքային ճնշումների փոփոխությունների շնորհիվ: Տարբերում են շնչառության կրծքային (կողային) և որովայնային (ստոծանիական) տեսակներ, որոնք կախված են տարիքից, սեռից, աշխատանքից, հագուստից: Կանանց մոտ հիմնականում կրծքային շնչառություն է, իսկ տղամարդկանց մոտ՝ որովայնային: Մակայն ֆիզիկական աշխատանքով զբաղվող կանանց մոտ ևս ձևավորվում է որովայնային շնչառություն: Թոքային օդափոխության մեծությունը որոշվում է շնչառության խորությամբ և շնչառական շարժումների հաճախությամբ: Օդի ծավալը թոքերում և շնչառական ուղիներում կախված է մարդու և նրա շնչառական համակարգի անհատական բնութագրից, թոքային հյուսվածքի հատկությունից, թոքաբջջերի մակերեսային լարվածությունից և շնչառական մկանների զարգացվածությունից: Շնչառությունը տարբեր պայմաններում փոխվում է, օրինակ շարժումների խորությունն ու հաճախությունը փոքրանում են հանգստի և մեծանում՝ ֆիզիկական ծանրաբեռնվածության դեպքում: Ֆիզիկական լարված աշխատանքի դեպքում Օ2-ի օգտագործումը և CO2-ի արտազատումը մեծանում է մոտ 15-20 անգամ: Հանգիստ պայմաններում մարդը րոպեում օգտագործում է 250 մլ Օ2, իսկ մկանային աշխատանքի դեպքում՝ 4 լ: Նման մեծ քանակով թթվածնի փոխադրումը հյուսվածքներ հնարավոր է թոքերի օդափոխման ուժեղացման, սրտի կծկումների հաճախության և սիստոլային արտամղման մեծացման շնորհիվ: Բարձրություններում, որտեղ ցածր է մթնոլորտային ճնշումը և դրա հետևանքով՝ Օ2-ի մասնական ճնշումը ներշնչվող օդում, առաջանում են շնչառության խորը փոփոխություններ: Մթնոլորտային ցածր ճնշման պայմաններում արտաքին շնչառության ռեակցիան որոշվում է թթվածնաքաղցի զարգացման արագությամբ և տևողությամբ, ինչպես նաև թթվածնի օգտագործման աստիճանով: Մինչև 2 կմ բարձրության վրա շնչառությունն էապես չի փոխվում, հեմոգլոբինի՝ թթվածնով հագեցվածությունը բավարար է, աշխատունակությունն ու ինքնազգացողությունն նորմալ: 3 կմ բարձրության վրա 90%-ով ապահովում է հեմոգլոբինի հագեցումը թթվածնով: 4 կմ բարձրության վրա թթվածնի պակասը ևս փոխհատուցվում է՝ չնայած սրտի հաճախությունը և շնչառական ծավալը մեծանում են: Հետագայում PO2-ի արտահայտված իջեցման հետևանքով զարգանում է թթվածնաքաղց: Արդյունքում շնչառական կենտրոնի դրդելիությունը, հետևապես թոքերի օդափոխումը նվազում է, և թթվածնաքաղցը դառնում է արտահայտված, և 4-5 կմ բարձրության վրա զարգանում է բարձրության հիվանդություն: Դիտվում են ֆիզիկական և մտավոր աշխատունակության

նվազում, հոգնելիություն, անտարբերություն, գլխացավ, գլխապտույտ, սրտի կծկումների հաճախության և արյան ճնշման նվազում: 7 կմ բարձրության վրա կարող է նկատվել գիտակցության կորուստ, կյանքին վտանգ է սպառնում շնչառության և արյան շրջանառության խանգարումը: 20 կմ բարձրության վրա O2-ի քանակը ներշնչվող օդում իջնում է զրոյի: Բարձրություններում երկարատև մնալու դեպքում (լեռների մշտական բնակիչների մոտ) առաջանում է կլիմայահարմարում (ակլիմատիզացիա) թթվածնի մասնական ցածր ճնշման նկատմամբ: Այս դեպքում տեղի է ունենում ֆիզիոլոգիական մեխանիզմների հարմարում թթվածնաքաղցի նկատմամբ: Իսկ մթնոլորտային բարձր ճնշման պայմաններում հայտնվում են ջրասույզները, կեսոներում, հանքահոդերում աշխատողները: Ջրում յուրաքանչյուր 10 մ խորասուզվելիս մթնոլորտային ճնշումը մեկ մթնոլորտով ավելանում է: Մթնոլորտային բարձր ճնշման պայմաններում մեծանում է գազերի մասնական ճնշումը և արյան մեջ դրանց լուծելիությունը: Այս պայմաններում շնչառությունն ապահովելու համար անհրաժեշտ է ներշնչվող օդում փոքրացնել O2-ի քանակը, քանի որ նրա ավելցուկը կարող է առաջացնել թթվածնային թունավորում: Բացի այդ, ազոտի մասնական ճնշման մեծացումը ներշնչվող գազային խառնուրդում թունավոր է ԿՆՀ-ի համար: Ուստի խորություններում աշխատելիս պետք է օգտագործել հելիումի և թթվածնի խառնուրդ: Հելիումն արյան մեջ դժվար է լուծվում և օծոված է փոքր խտությամբ, քան ազոտը, որը փոքրացնում է դիմադրությունը շնչառության նկատմամբ և արագ դիֆուզվում հյուսվածքներից: Մեծ վտանգ է ներկայացնում խորություններից ջրի մակերես արագ բարձրանալը, հատկապես ազոտ պարունակող գազային խառնուրդ ներշնչելու դեպքում, քանի որ կարող է զարգանալ կեսոնային հիվանդություն: Այս դեպքում արյան և հյուսվածքներում մեծ ծավալով լուծված գազերը չեն հասնում օրգանիզմից հեռանալ և առաջացնում են բշտիկներ, որոնք կարող են խցանել փոքր անոթները (գազային էմբոլիա): Հատկապես տուժում է ԿՆՀ-ն, խանգարվում է արյան շրջանառությունը, լսողությունը, տեսողությունը, մկաններում ի հայտ է գալիս ցավ, առաջանում են փսխում, հևոց, գիտակցության կորուստ:


Ուսումնասիրման օբյեկտներն ու մեթոդները: Որպես ուսումնասիրության օբյեկտ են հանդիսացել Գիշի գյուղի (ծ. մ. 600 – 650 մ բարձր), Ստեփանակերտի (ծ. մ. 750 – 850 մ բարձր) և Շուշիի (ծ. մ. 750 – 850 մ բարձր), 17 մինչև 20 տարեկան աշակերտները և ուսանողները: Ուսումնասիրության մեթոդներն են՝ դիտարկման միջոցով անոթազարկի որոշում 1 րոպեում, շնչառական շարժումների քանակը՝ 1 րոպեում և ճնշաչափի միջոցով սիստոլային և դիաստոլային ճնշման որոշում: Փորձնական մասը մենք կատարել ենք 3 բնակավայրերում՝ Գիշի, Ստեփանակերտ, Շուշի, ըստ ծովի մակարդակի հանդեպ ունեցած բարձրությունների աճի: Փորձերի ժամանակ ստուգվել են 17 մինչև 20 տարեկանների ճնշումը, շնչառությունը և անոթազարկը: Նյութերի կենսաչափական վերամշակումը իրականացվել է կենսաբանության մեջ ընդունված մեթոդներով [Лакин, 1990]: Տեղանքի բարձրությունը որոշվել է Magellan GPS-315-ի էլեկտրոնավիզացիոն սարքի օգնությամբ:

Արդյունքներ և նրանց քննարկումը: Ուսումնասիրությունների ժամանակ մենք դիտարկել ենք դպրոցական տարիքի երեխաների և ուսանողների շնչառական շարժումները և անոթազարկի հաճախությունը 1 րոպեում, ճնշաչափի միջոցով չափել նրանց սիստոլիկ և դիաստոլիկ ճնշումները:

Բնակավայր (բարձրությունը ծովի մակարդակից)	Հետազոտվ ողների քանակ	Միջին տարիք	Սիստոլիկ ճնշում	Դիաստոլիկ ճնշում	Շնչառակա ն շարժում 1րոպեում	Անոթազա րկ 1րոպեում
Գիշի, 600-650	10	17,2	110±2,1	70±1,8	19,6	75

Ստեփանակերտ, 750-850	10	19,2	105±1,1	69±1.2	17,6	70,2
Շուշի, 1300-1500	10	18,7	93±2,3	63±0,8	20,4	79,8

Ինչպես երևում է նկարից և աղյուսակից՝ ծովի մակարդակից ունեցած բարձրությունների աճի հետ պայմանավորված, փոփոխվում են մարդկանց զարկերակային ճնշումը, անոթազարկը, շնչառական շարժումները: Այսպես օրինակ, եթե Գիշիում սիստոլիկ ճնշումը 110 է, դիաստոլիկը՝ 70, իսկ 1 րոպեում անոթազարկը՝ 75, շնչառական շարժումները՝ 19.6, ապա Ստեփանակերտում համապատասխանաբար՝ 105, 69, 70.2, 17.6, իսկ Շուշիում՝ 93, 63, 79.8, 20.4: Այսինքն մենք ինչքան բարձրանում ենք, այնքան իջնում է մեր զարկերակային ճնշումը, արագանում է անոթազարկը և շնչառական շարժումների հաճախությունը:



1 – Սիստոլիկ ճնշում, 2 – Դիաստոլիկ ճնշում,
3 – Շնչառական շարժում, 4 – Անոթազարկ

Եզրակացություն: Շնչառական համակարգը և նրա գործունեությունը՝ շնչառությունը, կենդանի օրգանիզմի ամենակարևոր, ամենաբարդ ֆունկցիաներից մեկը իրականացնող համակարգերից է: Շնչառության միջոցով մեր օրգանիզմը ստանում է էներգիա: Այն իրականանում է ներշնչման և արտաշնչման միջոցով: Շնչառական համակարգի գլխավոր օրգանը թոքերն են: Կան թոքերի օդափոխության և տարողության մի շարք ծավալներ՝ շնչառական ծավալ, ներշնչման պահուստային ծավալ, արտաշնչման պահուստային ծավալ, մնացորդային ծավալ, թոքերի կենսական տարողություն: Մարդու շնչառության հաճախությունը և ծավալը կախված է մարմնի թթվածնի պահանջից: Չափահաս մարդը հանգիստ վիճակում մեկ ներշնչման ընթացքում ներշնչում է մոտավորապես 500 մլ օդ: Շնչառության հաճախությունը սովորաբար կազմում է՝ չափահաս մարդկանց և ութ տարեկանից բարձր երեխաների մոտ՝ 14-18 շնչառական շարժում, 1-8 տարեկան երեխաների մոտ՝ 20-25 շնչառական շարժում, ծծկեր երեխաների մոտ՝ 40-60 շնչառական շարժում: Այս ցուցանիշները փոխվում են կախված մարդու ֆիզիկական, հոգեկան վիճակից, գտնվելու տեղանքից, տարիքից, սեռից և այլն: Մեր հետազոտությունների ժամանակ մենք համոզվել ենք, որ կախված տեղանքի բարձրությունից մարդու մոտ փոխվում է զարկերակային ճնշումը, շնչառական շարժումների հաճախությունը և անոթազարկը: 3

բնակավայրերից, որտեղ կատարվել են փորձերը, ծովի մակարդակից ամենացածրը Գիշինե: Նկատվել է, որ այստեղ համեմատ Ստեփանակերտի և Շուշիի, որոնք ավելի բարձր են, մարդկանց սիստոլիկ և դիաստոլիկ ճնշումը բարձր է: Ստեփանակերտում և հատկապես Շուշիում սիստոլիկ և դիաստոլիկ ճնշումը գնալով իջնում է, իսկ շնչառական շարժումների հաճախությունը և անոթազարկը համեմատաբար արագանում է: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ բարձրությունների աճին զուգահեռ շնչառությունը խորանում է, ուժեղանում է թոքերի օդափոխությունը, արագանում է շնչառական շարժումների հաճախությունը և անոթազարկը: Այս փոփոխությունները պայմանավորված են բարձրություններում թթվածնի նվազմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս.Մ. Մինասյան, Մ.Ի. Աղամյան, Ն.Վ. Սարգսյան Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա, 2007, 607 էջ
2. Դ.Ն. Խուրավերդյան, Վ. Բ. Ֆանարջյան Մարդու ֆիզիոլոգիայի հիմունքներ, 1998, 719 էջ
3. Лакин Г. Ф. Биометрия. // М., В. шк., 1990, 352 с.
4. http://molbiol.sci.am/council042/sources/siranush_sex.m.pdf
5. Уэст Дж. Физиология дыхания. Основы // М.: Мир, 1998. — 202 с.
6. Юшкова О. Основы физиологии человека // М., 2004, стр. 246.
7. Махаон, 2007.-304с., ил- (Энциклопедический путеводитель)
8. М. С. Гиляпов, А. А. Баев, Г.Г. Винберг, Г.А. Заварзин, А.В. Иванов, С.Е. Северин, А.В. Смолин, В. Е. Соколов, Л. П. Татаринов, А. Л. Тахтаджян, А. В Яблоков Биологический Энциклопедический словарь, 1986, 863 с.
9. https://ru.wikipedia.org/wiki/%D0%A4%D0%B8%D0%B7%D0%B8%D0%BE%D0%BB%D0%BE%D0%B3%D0%B8%D1%8F_%D0%B4%D1%8B%D1%85%D0%B0%D0%BD%D0%B8%D1%8F
10. <https://hy.wikipedia.org/wiki/%D5%87%D5%B6%D5%B9%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6>
11. <https://meriyanosyan.wordpress.com/2016/11/30/%D5%B7%D5%B6%D5%B9%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3/>
12. <http://www.medpractic.com/arm/605/1415/%D4%B8%D5%B6%D5%A4%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D6%80%20%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%20%D5%B4%D5%A1%D6%80%D5%B4%D5%B6%D5%AB%20%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6/article.more.html>

ՀՏԴ55(479.243)

**ԱՀ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արթուր Աբրահամյան
ԱրՊՀ Բնագիտական ֆակուլտետ, աշխարհագրության
ամբիոն, մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանող
Գիտական ղեկավար՝ աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Ա. Վ. Գրիգորյան
Էլ. հասցե՝ artur.abrahamyan.1122@mail.ru

Բանալի բառեր՝ բնակչության տեղաբաշխում, բարձրության գոտիներ, մարդահամար, բնակավայր, առկա բնակչություն, տնային տնտեսություն, կայուն զարգացում: **Ключевые слова:** распределение населения, зоны возвышения, перепись, населенный пункт, текущее население, домашнее хозяйство, устойчивое развитие.

Key words: population distribution, elevation zones, census, locality, current population, household, sustainable development.

Ամփոփում

Աշխատանքում քննարկվում են ԱՀ Մարտունու շրջանի ներկայիս բնակավայրերի, ինչպես նաև բնակչության տեղաբաշխման, շարժընթացի արդի վիճակին վերաբերող հարցեր: Ներկայացվում են բնակավայրերի և բնակչության բաշխվածության փոփոխություններն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության: Առանձնահատուկ կարևորություն է ստանում բնակչությամբ փոքր բնակավայրերին՝ այդ համատեքստում ներկայացնելով մի շարք առաջարկություններ ու ծրագրային մոտեցումներ, որոնք հետագայում կարող են նպաստել տարածքային կայուն զարգացման, կարգավորման գործընթացներին:

Артур Абрамян
АрГУ, факультет естественных наук, маг. 1-ый курс
Науч. Рук.: к.г.н., доц. Григорян А. В.
Ел-почта: artur.abrahamyan.1122@mail.ru

**ОСОБЕННОСТИ РАСПРЕДЕЛЕНИЯ НАСЕЛЕНИЯ И НАСЕЛЕННЫХ ПУНКТОВ В
МАРТУНИНСКОМ РАЙОНЕ**

Резюме

В работе обсуждаются вопросы которые касаются текущих поселениям Мартунинского района, а также распределение населения и их динамике. Представляются изменения в распределении населения и населенных пунктов по мере повышения от уровня моря. Наибольшее внимание уделяется маленьким населенным пунктам, и в этом контексте представляются некоторые предложения и программные подходы, которые могут содействовать региональному устойчивому развитию.

Arthur Abrahamyan
ASU the faculty of natural sciences, master's degree 1nd year
Supervisor: PhD Grigoryan A. V.
e-mail: artur.abrahamyan.1122@mail.ru

**FEATURES OF DISTRIBUTION OF POPULATION AND HUMAN SETTLEMENTS IN
THE MARTUNI REGION**

Summary

The paper discusses the issues which relate to the current settlements of the Martuni region as well as the distribution of the population and their dynamics. Presented changes in the distribution of population and human settlements as the increase of sea levels. The greatest attention is paid to small

towns, and in this context some suggestions and programmatic approaches which can contribute to regional sustainable development.

ԱՀ հասարակական կյանքում տեղի ունեցած քաղաքական ու սոցիալ-տնտեսական տեղաշարժերը փոփոխության են ենթարկում բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման պատկերը: Այդ տեղաշարժերն ու փոփոխությունները հանրապետության յուրաքանչյուր շրջանում ընթանում են տարբեր ինտենսիվությամբ: Արդյունքում առաջանում են բնակչության բաշխվածության զգալի տարբերություններ ինչպես տարածքի բացարձակ բարձրության ավելացմանն զուգընթաց, այնպես էլ բնական և սոցիալ-տնտեսական տարբեր պայմաններով բնութագրվող տարածքների միջև: Բնակչության բաշխվածությամբ իրարից տարբերվող շրջանների սոցիալական զարգացման յուրահատկությունները պայմանավորել են դրանցից յուրաքանչյուրին բնորոշ հիմնախնդիրների առաջացումը: Ուստի անհրաժեշտություն է շրջանային մակարդակով ուսումնասիրել բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման բնորոշ գծերը, պարզել յուրաքանչյուր բնակեցված արեալի բնորոշ զարգացման միտումներն ու հիմնախնդիրները և գտնել այդ հիմնախնդիրների լուծման արդյունավետ ուղիներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի իրականացնել տարբերակված և արդյունավետ շրջանային քաղաքականություն: Ուստի խնդրի կարևորությունը կքննարկենք բնակչության թվաքանակով ԱՀ վարչատարածքային միավորներից ամենամեծի՝ Մարտունու շրջանի օրինակով: Ստացված արդյունքները կարելի է օգտագործել ինչպես կառավարության համապատասխան ծրագրերի կազմման, այնպես էլ Մարտունու շրջանի տարածքային կառավարման և զարգացման հիմնահարցերի մշակման ու կարգավորման գործում:

ԱՀ այդ թվում և Մարտունու շրջանի բնակչության տեղաբաշխումն ընթացել է բնական, սոցիալ-տնտեսական, պատմական, ռազմական և մի շարք այլ գործոնների ազդեցությամբ: Արդյունքում տարածքի բնակեցման և յուրացման արեալներն ընտրվել են այնտեղ, որտեղ ավելի նպաստավոր են եղել կյանքի ու աշխատանքի համատեղության պայմանները: Ուստի ժամանակի ընթացքում ըստ բնակեցման արեալների բնակչության խտության ցուցանիշները ենթարկվել են մեծ տարբերությունների: Շրջանի տարածքում ամենացածրադիր բնակավայրը Մարտունու համայնքի մեջ մտնող Կաքավաձոր բնակավայրն է (275 մ), իսկ ամենաբարձրադիրը՝ Զարդանաշենը (1150 մ): Ուստի մշտական բնակեցման գոտին ընդգրկում է 275-1150 մ բարձրությունները:


Մարտունու շրջանի բնակչության և բնակավայրերի հիմնական մասը կենտրոնացված են նախալեռնային հարթություններում, գետահովիտներում, լեռնային գոգավորություններում: Շրջանը զբաղեցնում է 951.16 կմ² տարածք: Դրանից գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում են 60398.6 հա¹: Ուստի շրջանի բնակչության խտությունն ըստ գյուղատնտեսական հողահանդակների մակերեսի (Խ_{գհ}) կլինի 36 մարդ/կմ², ֆիզիկական խտությունը՝ (Խ_ֆ)՝ 22 մարդ/կմ², իսկ բնակչության խտությունն ըստ վարելահողերի զբաղված տարածության (Խ_վ)՝ շուրջ 140 մարդ/կմ²: Վերջին ցուցանիշը ցույց է տալիս շրջանի բնակեցվածության ավելի իրական պատկերը: Շրջանում, որպես օրինաչափություն, բնակչության բարձր խտության շրջաններում բարձր է նաև գյուղական բնակավայրերի խտությունը, իսկ ծայրամասային և լեռնային արեալներում՝ ցածր:

Մարտունու շրջանի արևելյան սահմանամերձ զգալի տարածքներ հակառակորդի կողմից հնարավոր խոցման գոտում գտնվելու պատճառով դուրս են մնում բնակեցումից և գյուղատնտեսական օգտագործումից: Արտասահմանյան փորձագետների կարծիքով՝ վտանգավոր համարվող նման տարածքների բնակչության հոգեկան կայունությունը բազմակողմանիորեն որոշում է բնակչության խտության կրիտիկական մակարդակը: Եթե այդ մակարդակը պահպանվում է, ապա առաջ է գալիս պաշտպանվածության, շրջանի ապագայի հանդեպ վստահության զգացողություն: Հակառակ պարագայում գերակշռում են կենտրոնախույս գործընթացները, և սկսվում է իրավիճակի հետագա վատթարացումից

¹ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները թվերով՝ 2010-2016թթ. (վիճակագրական ժողովածու): Ստեփանակերտ, 2017թ., -էջ 181:

զգուշացող բնակչության զանգվածային, չվերահսկվող արտահոսք: Բայցևայնպես, Մարտունու շրջանն ԱՀ սահմանամերձ շրջաններից միակն է, որտեղ բնակչության խտության կրիտիկական մակարդակը պահպանվում է:

Շրջանի Վազգենաշեն, Նոր Շեն, Աշան, Բերդաշեն, Եմիշճան, Սպիտակաշեն, Գիշի, Մարտունի, Խնուշինակ, Ճարտար համայնքները գտնվում են ռիսկային խոցման առաջին գոտում¹: Նշված համայնքներում բնակվում է ամբողջ շրջանի բնակչության շուրջ 62%-ը, իսկ մյուս 23 համայնքները գտնվում են ռիսկային 2-րդ գոտում, որտեղ բնակվում է շրջանի բնակչության ավելի քան 38%-ը:



Շրջանի բնակավայրերի բնակչության թվաքանակների 2005 և 2015թթ.-ի տարբերությունը դրական է միայն շրջանի 5 բնակավայրերում, իսկ այն առավել սուր դրսևորում ունի Բերդաշեն, Սոս և Հերիեր բնակավայրերում, որը պայմանավորված է հիմնականում բնակչությամբ արտագաղթով:

Շրջանում ըստ գերակշռող մարդաքանակի՝ բնակավայրերի տարբեր խմբերի միջև բնակչության բաշխման տարբերությունը բավականին մեծ է: Բնակավայրերից 1000-ից ավելի բնակչություն ունեն Գիշի, Բերդաշեն և Թաղավարդ գյուղական համայնքները, իսկ Մարտունի և Ճարտար քաղաքների բնակչությունն անցնում է 4000-ից: Նշված բնակավայրերում բնակվում է ամբողջ շրջանի բնակչության շուրջ 56%-ը: Մինչև 500 մ բարձրության գոտու միջին մարդաշատությունը կազմում է 1318 մարդ, 500-800 մ գոտունը՝ 864 մարդ, 800-1150 մ գոտունը՝ 297 մարդ:

¹ Սուլյան Ս., Լեոնային Ղարաբաղի Հանրապետության տարաբնակեցման արդի համակարգի ձևավորման նախադրյալներն ու զարգացման հիմնախնդիրները (Ատենախոսական սեղմագիր): Երևան, 2013թ.,-էջ 11:

ԱՀ բնակչության և բնակավայրերի բաշխումն ըստ բարձրության գոտիների

Բարձրության գոտիները	Բարձրության գոտու տարածքը (%)	Բնակավայրերի քանակը						Բնակչության թվաքանակը						Բնակչության և խտությունը (մարդ/կմ ²)	
		Ընդամենը		Քաղաքային		Գյուղական		Ընդամենը (հազար)		Քաղաքային		Գյուղական		Սնկող բնակչություն	Գյուղական բնակչություն
		Թիվը	%	Թիվը	%	Թիվը	%	Թիվը	%	Թիվը	%	Թիվը	%		
Մինչև 600 մ	65.7 *	6	15.8	1	50	5	13.9	5.8	27.7	4	52.8	1.1	9	9	2
601-800մ	14.6 *	13	34.2	1	50	12	33.3	10.1	48	4	47.2	5.9	48.8	72	42
801-1000 մ	10.3 *	13	34.2	-	-	13	36.1	4.2	20	-	-	4.2	34.7	43	43
1001-ից բարձր	9.4*	6	15.8	-	-	6	16.7	0.9	4.3	-	-	0.9	7.5	10	10
Ընդ.	100	38	100	2	100	36	100	21	100	8.9	100	12.1	100	22	13

*-Թվերը ենթակա են հետագա ճշգրտման:

Ներկայացվող աղյուսակից պարզորոշ երևում է, որ շրջանի բնակչության 27.7%-ն է բնակվում մինչև 600 մ, 48%-ը՝ 600-801 մ, 20%-ը՝ 801-1000, 4.3%-ը՝ 1000-ից ավելի բարձրություններում:

Բնակչության խտության ավելացում է նկատվում Խոնաշենի, Ամարասի, Վարանդայի գետահովտներում: Այստեղի ոռոգելի հողերում խաղողագործության զարգացումը պայմանավորել են բնակչության կենտրոնացումը և խոշոր բնակավայրերի ստեղծումը (Ճարտար, Գիշի, Խնուշինակ, Սոս, Հերիեր, Քերթ, Շեխեր):

Սոցիալ-տնտեսական և բնաաշխարհագրական գործոնների ազդեցությամբ 1920-ական թթ.-ին ստեղծվել է Կարմիր Շուկա բնակավայրը, որի բնակիչների մեծամասնությունը գաղթել են մասնավորապես՝ դրա հարևանությամբ գտնվող Մավաս, Բլբլաք, Միստորաշեն գյուղերից: Արդյունքը եղել է այն, որ պատմականորեն բնակեցված վերոհիշյալ գյուղերը լրիվությամբ դատարկվել են:

Բնակչության տեղաբաշխման պատկերը շրջանի ծայրամասային և լեռնային բնակավայրերում հուսադրող չէ, քանի որ 63-ից բարձր տարիքային խմբի գերակշռությունը ցայտուն է արտահայտված: Ծայրամասային տարածքների բնակավայրերը կիսադարակ են:

Նույնիսկ կարելի է ասել, որ որոշ բնակավայրերում նման իրավիճակի պահպանման դեպքում դրանք կհայտնվեն վերացման վտանգի տակ: Սովորաբար դա կախված է շրջանի տարածքի անհամաչափ զարգացումից, տարաբնակեցման համակարգում թերի ընդգրկվածությունից: Այնուամենայնիվ շրջանի տարածքին առավելապես բնորոշ են գետահովտային և ավազանային տիպի տարաբնակեցումը, այսինքն՝ գետերի ջրհավաք ավազաններում ստեղծվում է բնակավայրերի որոշակի ամբողջություն, սպասարկման միասնական համակարգ՝ տրանսպորտային և այլ ենթակառուցվածքների ընդհանրությամբ և միջբնակավայրային սոցիալ-տնտեսական կապերով¹:

Շրջանի Ննգի, Աշան, Հերհեր, Թաղավարդ բնակավայրերի բնակեցված զգալի տարածքում արտահայտված են սողանքային երևույթները, որոնք հանդիսանալով որպես բնական գործոններ, պայմավորում են հիմնականում բնակավայրի դիրքի փոփոխություն, բնակչության անհամաչափ տեղաբաշխման սրություն, բնակչության գաղթ այլ բնակավայրեր կամ պարզապես՝ արտագաղթ:

Այսպիսով՝ վերլուծության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ.

Մարտունու շրջանի բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման առանձնահատկությունները կարելի է միավորել պատմական, բնական, սոցիալ-տնտեսական և ռազմական խմբերի մեջ:

Շրջանի բնակավայրերի և բնակչության տեղաբաշխման՝ բնակեցման արելաի զարգացման վրա անմիջական և միջնորդավորված ազդեցություն են թողնում մակերևույթի առանձնահատկությունները, ջրային և հողային ռեսուրսների անհավասարաչափ բաշխումը, մի շարք բնակավայրերում սողանքային երևույթների արտահայտվածությունը, հակառակորդի կողմից տարածքի հնարավոր խոցելիության աստիճանը և բազմաթիվ այլ բնաաշխարհագրական ու քաղաքական գործոններ:

Շրջանի ծայրամասային տարածքների բնակավայրերի և բնակչության տեղաբաշխման, դրանցում ժողովրդագրական գործընթացների թեմաներով խոսակցությունները շատ են, սակայն չկա տեսանելի որևէ արդյունք: Մինչդեռ հանրահայտ ճշմարտություն է, որ մարդկային ռեսուրսների պահպանման ու մեծացման, դրա հավասարաչափ բաշխվածությամբ է ապահովվում պետության անվտանգությունը, ուստի կառավարող մարմինների ուշադրության կենտրոնում պետք է լինեն շրջանի ժողովրդագրական պատկերի բարելավմանն ուղղված ծրագրերն ու իրականացման ժամանակացույցերը:

Շրջանի տարածքին առավելապես բնորոշ են գետահովտային և ավազանային տիպի տարաբնակեցումը:

Ծայրամասային բնակավայրերի տնտեսական ու մշակութային զարգացումը, հաղորդակցության բարվոք ուղիների ցանցի կառուցումը, հանգստի ու ժամանցի արդիական վայրերի կազմակերպումն ու առաջին հերթին՝ տնտեսական ու կենցաղմշակութային հավասար պայմանների ստեղծումը կնպաստեն տարածքային համաչափ զարգացմանը:

Ամփոփելով աշխատաքն, առաջարկում ենք.

Օգտագործել վերաբնակեցման ծրագրերը շրջանի Մամնա, Կավահան, Խերխան, Ծովատեղ, Զարդանաշեն, Ավդուդ, Հացի, Քաջավան, Կաքավաձոր բնակավայրերում:

Անհրաժեշտ է մշակել ու կազմել շրջանի բնակավայրերի կայուն զարգացման ծրագրեր, որտեղ աջակցվելու անհրաժեշտություն է ներառել փոքր գյուղական բնակավայրերը, որոնք առավելապես զգայուն են սոցիալ-տնտեսական գործոնների նկատմամբ:

¹ Պոտոսյան Ա. Հ., Հայաստանի Հանրապետության, որպես լեռնային երկրի գյուղական տարաբնակեցման աշխարհագրական հետազոտության հիմնահարցերը (աշխարհագրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր): Երևան, 2015թ., էջ 27:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ա., ԼՂՀ քաղաքային բնակավայրերի ժողովրդագրական գործընթացների վերլուծությունը (20-րդ դարի վերջից մինչև 2015թ.), Գիտական ընթերցումներ Պրակ 1: Ստեփանակերտ, 2016թ.,-169 էջ:
2. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս: Գլխ. Խմբ. Վարդանյան Մ.: Երևան, 2009թ., -95 էջ:
3. ԼՂՀ 2015թ.-ի մարդահամարի ցուցանիշները: Ստեփանակերտ, 2016թ.,-268 էջ:
4. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության շրջանները թվերով՝ 2010-2016թթ. (վիճակագրական ժողովածու): Ստեփանակերտ, 2017թ.,-196 էջ:
5. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2008-2014թթ.: Ստեփանակերտ, 2015թ.,-337 էջ:
6. Խոջաբեկյան Վ. Ե., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը (19-20-րդ դարերում և 21-րդ դարի շեմին): Երևան, 2002թ.,-527 էջ:
7. Մալխասյան Մ., Պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ (Գիտական հոդվածների ժողովածու): Երևան, 2015թ.,-248 էջ:
8. Մանասյան Մ. Գ., Բնակչության աշխարհագրություն: Երևան, 2011թ., - 296 էջ:
9. Մանասյան Մ., Հասարակական-աշխարհագրական հետազոտությունների մեթոդներ (ուսումնական ձեռնարկ): Երևան, 2008թ.,-260 էջ:
10. Մանասյան Մ., Սուլջյան Ս., Լեոնային Ղարաբաղի Հանրապետության տարաբնակեցման արդի խնդիրներն ու կատարելագործման ուղիները: Կրթությունը գիտությունը Արցախում 3-4: 2007թ.,-165 էջ:
11. Մելքումյան Ս., Լեոնային Ղարաբաղ (Պատմատնտեսագիտական ուսումնագիր): Երևան, 1990թ.,-303 էջ:
12. Մելքումյան Ս., Հայաստանի Հանրապետության և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն: Երևան, 2014թ.,-551 էջ:
13. Մկրտչյան Շ. Մ., Արցախ: Երևան, 1991թ.,-103 էջ:
14. Պոտոսյան Ա. Հ., Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը: Երևան, 2013թ.,-413 էջ:
15. Պոտոսյան Ա. Հ., Հայաստանի Հանրապետության, որպես լեոնային երկրի գյուղական տարաբնակեցման աշխարհագրական հետազոտության հիմնահարցերը (աշխարհագրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր): Երևան, 2015թ.,-47 էջ:
16. Պոտոսյան Ա., Գրիգորյան Ա., Լեոնային Ղարաբաղի գյուղական բնակավայրերի սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրները, ԱրՊՀ Գիտական տեղեկագիր (Բնագիտական): Ստեփանակերտ, 2016թ.,-148 էջ:
17. Սուլջյան Ս., Լեոնային Ղարաբաղի Հանրապետության տարաբնակեցման արդի համակարգի ձևավորման նախադրյալներն ու զարգացման հիմնախնդիրները (աշխարհագրական գիտությունների թեկնածուի հայցման ատենախոսության սեղմագիր): Երևան, 2013թ.,-23 էջ:
18. www.stat-nkr.am

ՀՏԴ332(479.243)

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԸ**

Ալեքսեյ Մակյան
ԱրՊՀ Բնագիտական ֆակուլտետ, աշխարհագրության
ամբիոն, 4-րդ կուրսի ուսանող
Գիտական դեկավար՝ աշխ. գիտ. թեկնածու,
դոցենտ՝ Ա. Վ. Գրիգորյան
Էլ. փոստ՝ makyan.aleksey@mail.ru

Բանալի բառեր՝ տնտեսական անվտանգություն, պետություն, տնտեսական սպառնալիքներ, միջազգային շուկա, արտահանման ծավալներ, ներդրումների ծավալներ, էներգետիկա, գյուղատնտեսություն, արդյունաբերություն:

Ключевые слова: экономическая безопасность, государство, экономические угрозы, международный рынок, объемы экспорта, объем инвестиций, энергетика, сельское хозяйство, промышленность.

Key words: economic security, state, economic threats, international market, export volumes, investment size, energetics, agriculture, industry.

Ամփոփում

Ժամանակակից աշխարհում պետությունների ազգային անվտանգության, անկախության և ինքնիշխանության գրավականներն են ոչ միայն հզոր բանակը և մեծ ռազմական ներուժը, այլև կայացած ու ճիշտ ուղղությամբ զարգացող տնտեսությունը: ԱՀ-ն նույնպես զերծ չէ տնտեսական տարատեսակ սպառնալիքներից: Ուսումնասիրելով տնտեսական արտաքին և ներքին վտանգները, գնահատելով դրանց ազդեցության սահմանները, կարելի է մշակել միջոցառումների համակարգ, որը կնպաստի ԱՀ-ի տնտեսական անվտանգության բարձրացմանը կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում:

Алексей Макян
АрГУ, факультет естественных наук, 4-ый курс
Науч. рук.: к.г.н., доц. Григорян А. В.
Ел-почта: makyan.aleksey@mail.ru

**ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ АРЦАХСКОЙ РЕСПУБЛИКИ И ПЕРСПЕКТИВНЫЕ
ШАГИ К ЕГО УЛУЧШЕНИЮ**

Резюме

В современном мире гарантом национального суверенитета и независимости государств являются не только мощная армия с большим военным потенциалом, но и развитая экономика. АР также не свободна от различных экономических угроз, изучая внутренние и внешние экономические угрозы, оценивая пределы их влияния, можно разработать систему мероприятий, которые будут способствовать повышению экономической безопасности страны в краткосрочной и долгосрочной перспективе.

Aleksey Makyan
ASU the faculty of natural sciences, 4th course
Supervisor: PhD Grigoryan A. V.
e-mail: makyan.aleksey@mail.ru

ECONOMIC SECURITY OF ARTSAKH REPUBLIC AND FUTURE STEPS TO IMPROVE ITS

Summary

In modern world guarantees of national sovereignty and independence of states are not only a powerful army with great military potential, but also a developed economy. Republic of Artsakh is also not free from various economic threats, studying internal and external economic threats, assessing the

limits of their influence, can develop a system of activities, which will contribute to improving the country's economic security in the short and long term.

Տնտեսական անվտանգությունը ցանկացած պետության կայունության և հզորացման անհրաժեշտ պայմանն է՝ նրա ինքնիշխանության գրավականը: Հաշվի առնելով ժամանակակից աշխարհում գլոբալացման տեմպերը, տնտեսապես զարգացած ու նոր զարգացող երկրների համագործակցության արդյունքում, նկատելի ձեռքբերումների հետ մեկտեղ կարող են ծագել նաև ներքին և արտաքին այնպիսի սպառնալիքներ, որոնք վտանգավոր են թույլ տնտեսություն ունեցող երկրների համար: Այն առավել կարևոր է Արցախի Հանրապետության համար, քանի որ բացի քաղաքական առումով անբարենպաստ պայմաններից՝ բնական ռեսուրսների սակավ լինելը, տնտեսության բազմատիվ անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը և այլ մի շարք հանգամանքներ մեր երկիրը դարձնում են տնտեսական առումով բավական հեշտ խոցելի: Աշխատանքի հիմնական նպատակն է ուսումնասիրել տնտեսական անվտանգության էությունը և գնահատել դրա դերը ազգային անվտանգության համակարգում, բացահայտել տնտեսական անվտանգության արտաքին և ներքին սպառնալիքները, գնահատել դրանց ազդեցության ձևերը և սահմանները ԱՀ տնտեսության վրա, առաջարկել հանրապետության տնտեսական անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված հեռանկարային քայլեր: Ուսումնասիրությունների հիման վրա ստացված վերլուծությունները և դրանցից բխող առաջարկությունները կարող են կիրառվել ԱՀ կառավարության կողմից որպես լրացում գոյություն ունեցող տնտեսական քաղաքականությանը, կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում:

Դեռևս տասնչորսերորդ դարում հայ մեծանուն փիլիսոփա Գրիգոր Տաթևացին տնտեսությունը համեմատել է մարդու օրգանիզմի հետ, հորդորելով այն նույնքան խնամքով զերծ պահել արտաքին և ներքին վտանգներից:

Երկրի պետական անվտանգության և պաշտպանունակության ապահովումը զարգացման բոլոր ժամանակներում մեծապես կախված է եղել զարգացած և կայուն տնտեսություն ունենալուց: Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, երբ երկրները պատերազմներում պարտություն են կրել զարգացած տնտեսություն չունենալու պատճառով: Այսօր պատմություն են դարձել այն ժամանակները, երբ ռազմականը, եթե ոչ միակ, ապա ամենավճռորոշ ուժն էր երկրի անվտանգության ապահովման, ազդեցության նոր ոլորտներ ձեռք բերելու կամ եղածը պահպանելու գործում: Այժմ երկրների համար հիմնական զենք են դառնում տնտեսության կառավարման տնտեսական մեթոդները: Շատ երկրներ, չունենալով մրցունակ գիտատեխնիկական ներուժ, ամբողջությամբ կախվածության մեջ են զարգացած երկրների տեխնիկայից և տեխնոլոգիաներից, միջազգային ֆինանսական կառույցներից, տնտեսությունները դարձել են մրցակցության կարևորագույն ասպարեզներ¹:

Աշխարհի տարբեր երկրներում և տարածաշրջաններում ՏԱ-ը դիտարկվում է տարբեր ասպեկտներում, իր կարևորությամբ մնալով տվյալ պետության ներքին և արտաքին քաղաքականության մշակման կարևորագույն նախապայմաններից մեկը: Արևմուտքի արդյունաբերական զարգացած երկրներում տնտեսական անվտանգություն հասկացությունը, որպես կարևորագույն առարկայական չափանիշ ենթադրում է համաշխարհային շուկայում ազգային տնտեսության և դրա ճյուղերի մրցունակության բարձրացում: ԱՄՆ-ի տնտեսական անվտանգության ժամանակակից հայեցակարգը ձևաորվում է այն գաղափարի վրա, որ ինչքան միջազգային գործերում նվազում է ռազմավարական գործոնների նշանակությունը, այնքան առաջնային է դառնում երկրի տնտեսական հզորությունը և դրա դերը աշխարհի տնտեսական համակարգում: Չինաստանում ազգային տնտեսական անվտանգությունը դիտվում է որպես պետական անվտանգության ընդհանուր համակարգի մի մաս, իսկ Ճապոնիայում «տնտեսական անվտանգություն» հասկացությունը չի առանձնացվում որպես ինքնուրույն, այլ դիտվում է

¹ Մարկոյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ. Երևան 2005թ., - էջ 3:

որպես ավելի լայն հասկացության՝ «կոմպլեքսային ազգային անվտանգության» կարևոր բաղկացուցիչ մաս: Այսպիսով կարելի է պնդել, որ իրական անկախության լավագույն դրսևորումներից մեկը տնտեսական անկախությունն է:

ԱՀ-ն հանդիսանալով դեռևս միջազգային հանրության կողմից չճանաչված պետություն ունի ինչպես այլ պետություններին բնորոշ տնտեսական խնդիրներ, այնպես էլ քաղաքական կարգավիճակի հետ կապված մի շարք այլ սպառնալիքներ, որոնք առավել ակնհայտ են դառնում միջազգային հարաբերությունների ոլորտում: Ընդհանուր առմամբ ԱՀ-ի տնտեսական անվտանգության սպառնալիքները կարելի է բաժանել երկու խոշոր խմբի՝ արտաքին և ներքին:

Արտաքին սպառնալիքներից կարելի է նշել.

- Պատերազմական իրադրությունը
- Տնտեսական շրջափակումը
- Միջազգային շուկայում հանդես գալու խիստ սահմանափակ հնարադրությունները
- Քաղաքական կարգավիճակի հետ կապված ներդրումների քիչ քանակությունը

Պատերազմը ծայրաստիճան բացասական ազդեցություն է ունենում տնտեսության վրա: Այն կարող է լինել ուղղակի և անուղղակի: Միայն 2016թ-ի ապրիլյան քառորյա պատերազմից ԱՀ տնտեսության կրած ուղղակի վնասը կազմեց 400-500 մլն դրամ: Մինչդեռ անուղղակի վնասն անհամեմատ ավելի մեծ էր, քանի որ այն իր ազդեցությունն ունեցավ հետագա ներդրումների, զբոսաշրջության զարգացման և այլ տնտեսական առումով կարևոր հարցերի վրա:

Տնտեսական շրջափակումը միջոցառումների համակարգ է, որով խոչնդոտում է պետության արտաքին տնտեսական, քաղաքական կապերին՝ նրան որոշակի գործողություններից զերծ պահելու կամ որոշակի գործողություններ հարկադրելու նպատակով: Այն նաև նպատակ ունի խափանել պետության արտաքին-առևտրական, ֆինանսական, վարկային, տնտեսական այլ կապերը:

	Արտահանում	Ներմուծում
Ընդամենը	81 106,3	256 859,2
Կենդանական ծագման արտադրանք	6031,9	7546,3
Բուսական ծագման արտադրանք	13944,9	16600,4
Հանքահումքային մթերքներ	35524,5	43315,1

Արցախի Հանրապետության արտահանումը, ներմուծումն ըստ ապրանքախմբերի (2016թ.)
(հազ. ԱՄՆ դոլար)¹ [Աղյուսակ 1]

Միջազգային շուկայում ԱՀ-ն ելնելով մի շարք պատճառներից, հանդես է գալիս բավականին համեստ: Արտահանման ծավալի 83%-ը և ներմուծման ծավալի 90%-ը բաժին է ընկնում ՀՀ-ին: Պետք է նկատել նաև, որ ըստ ապրանքատեսակների և ըստ երկրների գրեթե բոլոր դեպքերում արտահանման ծավալները գերակշռում են ներմուծման ծավալներին:

¹ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2010-2016 թ. էջ-281:

Արցախի Հանրապետության արտահանումը, ներմուծումն ըստ երկրների (2016թ.)
(հազ. ԱՄՆ դոլար)¹ [Աղյուսակ 2]

	Արտահանում	Ներմուծում
Ընդամենը	81 106,3	256 859,2
Հայաստանի Հանրապետություն	67 955,4	232 232,5
Միացիալ Թագավորություն	11 715,9	15 185,6
Ռուսաստանի Դաշնություն	1 173	3 561,9
Իրան	42,7	1 967,1
ԱՄՆ	185	168,5
Գերմանիա	32,6	21,5

Ցանկացած տնտեսական, քաղաքական, ռազմական առումով անկայուն իրավիճակը վանում է ներդրողներին, քանի որ այն վտանգի տակ է դնում ներդրումների դիմաց ակնկալվող շահույթը: ԱՀ-ն ունենալով քաղաքական և ռազմական առումով խնդիրներ, արտասահմանյան ներդրողների համար հանդիսանում է ռիսկային երկիր:

Ներքին սպառնալիքները սերտորեն փոխկապակցված են արտաքին սպառնալիքների հետ, և կարևորություն տալ դրանցից որևէ մեկին՝ խելամիտ չէ: Այնուամենայնիվ պետք է գիտակցել, որ ներքին սպառնալիքների դեմ պայքարի անհրաժեշտությունն ավելի հրատապ է, և այն ունի կենսական նշանակություն:

Տնտեսական անվտանգության համար ներքին սպառնալիքներ կարող են հանդիսանալ մի շարք գործոններ, թվենք դրանցից մի քանիսը.

- Պարենային ապահովվածության ոչ բարձր մակարդակը
- Աղքատության բարձր մակարդակը
- Էներգետիկ կախվածությունը
- Արդյունաբերության ոլորտում ապրանքատեսակների սահմանափակ լինելը
- Տնտեսության տարբեր ճյուղերում մենաշնորհի բարձր տեսակարար կշիռը
- Արտադրության արդյունավետության բարձրացման խթանիչ շարժառիթների բացակայությունը²
- Գյուղատնտեսության ինտենսիվացման ցածր տեմպերը
- Արդյունաբերության զարգացման համար ենթակառուցվածքների բացակայությունը
- Տնտեսությունը կարգավորելու համար օրենսդրական լծակների անբավարար լինելը կամ բացակայությունը

Անհատի կենսաապահովման առումով կարևոր տեղ է հատկացվում պարենային անվտանգությանը: Այն իրենից ներկայացնում է անհատի նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ և որակյալ սննդի ապահովումը կամ դրա մատչելիությունը: Մյուս

¹ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2010-2016թ. էջ-285:

² Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. Մեթոդաբանություն և արդյունքներ: Երևան, 2005թ., -էջ 135:

կողմից, պարենային անվտանգության ապահովումը ենթադրում է ոչ միայն անհատի, այլ ձեռնարկության, հասարակության և պետության կողմից ակնկալվող որոշակի միջոցառումների իրականացում: Նման փոխկապակցված գործոնների կարևորության գիտակցումն էլ հենց պայմանավորում է պարենային անվտանգության հիմնախնդիրների վերլուծությունը տնտեսական անվտանգության համատեքստում¹:

Աղքատությունը տնտեսության վրա բացասաբար ազդող առաջնային գործոններից է, այն առաջին հերթին սպառնում է տնտեսությանը աշխատուժի կորստով: Աղքատությունը հանդիսանում է արտագաղթի հիմնական և կարևորագույն գործոններից:

Բնակչության կենսամակարդակի հիմնական սոցիալ տնտեսական հատկանիշները (2016թ.)²

[Աղյուսակ 3]

Բնակչության դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով	1 109 300 դր.
Տնտեսությունում աշխատողների միջին ամսեկան անվանական աշխատավարձը	152 707 դր.
Ամսական կենսաթոշակի միջին չափը	43 015 դր.
Աշխատավարձի նվազագույն չափը (2014թ.-ի հոկտեմբեր ասվա դրությամբ)	50 000 դր.

Հանրապետությունում տնտեսական անվտանգության ապահովման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ինչպես ներքին այնպես էլ արտաքին մարտահրավերներին համարժեք արձագանքելու կարողությամբ: Երկրում ազգային-տնտեսական անվտանգության խնդիրների լուծման համար տնտեսական անվտանգության ապահովման պետական ռազմավարությունը պետք է հիմնված լինի երկրի տնտեսական և սոցիալական զարգացման երկարաժամկետ ու կարճաժամկետ կանխատեսումների վրա: Միաժամանակ, անհրաժեշտ է ստեղծել տնտեսության պետական կարգավորման այնպիսի համակարգ, որը թույլ կտա ոչ մեծ ռեսուրսների օգտագործմամբ կարգավորել տնտեսական գործընթացները հնարավորինս բարձր արդյունավետությամբ, չեզոքացնել երկրի անվտանգությանն ուղղված տնտեսական սպառնալիքներն ու նոր մարտահրավերները, ապահովելով տնտեսության անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության գլխավոր բաղադրիչ:

Տնտեսական անվտանգությունը տնտեսության այնպիսի վիճակ է, որն ապահովում է երկրի առաջադիմական զարգացման բավարար մակարդակ՝ արտաքին և ներքին սպառնալիքներից ու բացասական ազդեցություններից իր տնտեսական շահերի պաշտպանության ու անկախության ապահովման նպատակով:

Տնտեսական անվտանգության սպառնալիքներն իրենցից ներկայացնում են մի շարք պայմանների և գործոնների համախումբ, որոնք խոչընդոտում են երկրի տնտեսական շահերի իրականացմանը՝ առաջացնելով տնտեսությանը վնաս պատճառելու հնարավորություն:

ԱՀ-ի տնտեսական անվտանգության ապահովման հեռանկարային քայլեր կարելի է համարել

- Տնտեսական անվտանգության հայեցակարգի համապատասխանեցումն արդի մարտահրավերներին,
- Հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացումը

¹ Մանասերյան Թ., Տնտեսական անվտանգություն. ռազմավարական ուրվագծեր: Երևան, 2014թ., էջ-65:

² Լեոնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2010-2016թ., էջ-75:

- Գիտատար և վերամշակման բարձր մակարդակ ունեցող արտադրությունների զարգացումը
- Ներդրումների բարձրացմանը միտված ռազմավարության մշակումը
- Պետության կողմից ձեռնարկությունների զարգացման համար հավասար պայմանների ստեղծումը
- Գիտության զարգացմանը խթանող քայլերի ընդլայնումը
- Զբոսաշրջության զարգացման համար առավել նպաստավոր պայմանների ստեղծումը
- Ներքին ներդրումների խթանմանը միտված քաղաքականության մշակումը
- Ազատ տնտեսական գոտիների ձևավորում
- Բնակչության տնտեսական գործունեությունը խթանող օրենսդրորոն արտոնյալ պայմանների ստեղծում
- Պարենային անվտանգության բարձրացում և աղքատության մակարդակի նվազեցում
- Գյուղատնտեսության ոլորտում մի շարք բարեփոխումների իրականացում՝ նորագույն տեխնոլոգիաների ներդրում, պետական աջակցության ավելացում և այլն

Ընդհանուր առմամբ սոցիալական արդարությունը պահանջում է, որ պետությունն աջակցի նրանց, ովքեր օբյեկտիվ պատճառներով ի վիճակի չեն լուծել իրենց սոցիալական բարեկեցության խնդիրները: Բսկ սոցիալական արդարությունը կայուն հասարակության՝ հետևաբար նաև տնտեսական անվտանգության գլխավոր գրավականներից է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավետիսյան Կ., Ազգային անվտանգության տնտեսական սպառնալիքները և դրանց հաղթահարման ուղիները Հայաստանի Հանրապետությունում: Երևան, 2017թ.,- 22 էջ:
2. Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. Մեթոդաբանություն և արդյունքներ: Երևան, 2005թ.,-248 էջ:
3. Մանասեթյան Թ., Տնտեսական անվտանգություն. ռազմավարական ուրվագծեր: Երևան, 2014թ.,-836 էջ:
4. Մելքունյան Ս., Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն: Երևան, 2014թ.,-551 էջ:
5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2010-2016թթ: Ստեփանակերտ, 2017թ.,-314 էջ:
6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2008-2014թթ., Ստեփանակերտ, 2015թ.,-337 էջ:
7. <http://stat-nkr.am/>
8. <http://gov.nkr.am>

ՀՏԴ597.2:591.4

ՁԿՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱՑԻԱՆ

Արցախի պետական համալսարան,
կենսաբանություն 3-րդ կուրս
Արփինե Յարամիջյան
գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Մինասյան Հ.Ջ

Բանալի բառեր՝ ձկներ, էլեկտրական օրգաններ, սյունակ, թիթեղ, պարպումներ, լիցքաթափումներ, գեներատոր, լոքո, էլեկտրական կատվածուկ, էլեկտրական օձածուկ:

Ключевые слова: рыба, электрические органы, колонна, олово, разряд, напряжение, генератор, сома, электрическая щука, электрический угорь.

Key words: fish, electric organs, column, tin, discharge, voltage, generator, catfish, electric pike, electric eel.

Ամփոփում

Էլեկտրական օրգանները առաջացել են էվոլյուցիայի ընթացքում մկանների ձևափոխությունից և կազմված են մեծ քանակությամբ բջիջներից, որոնք, հաջորդաբար դասավորվելով, կազմում են սյունակներ, որտեղ հարևան բջիջները իրարից բաժանվում են շարակցահյուսվածքային պատնեշով և կազմում են, այդպես կոչված, էլեկտրական թիթեղ: Էլեկտրական օրգանների աշխատանքը պայմանավորված է սյունակներում բջիջների քանակից, նրանց լիցքաթափման լարումից և զուգահեռ կանգնած սյունակների լիցքաթափման ուժգնությունից:

Резюме

Электрические органы эволюционировали во время эволюции мышцы и состоят из большого количества клеток, которые расположены последовательно для образования колонок, где соседние клетки разделены совместным барьером и образуют так называемую электрическую пластину. Работа электрических органов обусловлена количеством ячеек в столбцах, их разрядным напряжением и величиной параллельных колонок.

Summary

The electrical organs evolved during the evolution of the muscle and consisted of a large number of cells that are arranged sequentially to form columns where adjacent cells are separated by a joint barrier and form a so-called electric plate. The work of electrical organs is due to the number of cells in the columns, their discharge voltage and the magnitude of the parallel columns.

Կենսաբանները վերծանել են գենետիկական բազան, որի հիման վրա կառուցվում են ձկների էլեկտրական օրգանները: Էլեկտրական օրգանները շատ բարդ կազմավորում են, բայց այնուամենայնիվ մի քանի անգամ հայտնվել են զուգահեռաբար էվոլյուցիայի ընթացքում, մկանները վերածելով բիոմարտոկոցների: Ջարմանալի է, որ այս էվոլյուցիային մասնակցած գեների հավաքածուները նման էին ձկան բոլոր ուսումնասիրված խմբերին: Ներկայումս հայտնի է ձկների 5 խումբ, որոնք ձեռք են բերել հատուկ էլեկտրական օրգաններ: Դրանց են պատկանում էլեկտրական սուները, էլեկտրական օձածուկը, էլեկտրական կատվածուկն, մորմիդները և աստղաբաշխը՝ ձկների մոտ 500 տեսակ: Էլեկտրական օրգանների կառուցվածքը, բոլոր ձկների մոտ ունի միատեսակ սխեմա : Ամեն մի օրգանը կազմված է մեծ քանակությամբ բջիջներից, որոնք հաջորդաբար տեղադրվելով օրգանի ամբողջ երկարությամբ կազմում են սյունակներ, իսկ այդպիսի սյունակների զուգահեռ շարքերը որոշում են նրա լայնությունը: Ամեն մի բջիջ բաժանված է հարևան բջիջներից շարակցահյուսվածքային պատնեշով և պարունակում է այդպես կոչված էլեկտրական թիթեղ, որի երկու կողմերը կախում են ժելեանման զանգվածի հետ, իսկ մի կողմից՝ վերջնային նյարդային ապարատի հետ: Սրանք էլեկտրոդների բջիջներն են, որոնք դասված են հավաք: Յուրաքանչյուր էլեկտրոդի մոտիկանում է նյարդային վերջույթ, բայց

միակողմանի: Նյարդային վերջույթը վերածվում է լայն սինապսի, որի գրգռումը փոխանցվում է բջիջի մակերեսի զգալի չափին: Այսպիսով, բջիջը լիցքավորվում է մի կողմից: Իոնային անցուղիները կենտրոնացած են էլեկտրոցիտի թիթեղի մյուս կողմի վրա այնպես, որ այդ կողմում կուտակվում են լիցքավորված մասնիկներ: Էլեկտրոցիտների թիթեղները կարգավորվում են իրենց բևեռներում՝ միկոդում սինապսաներով, մյուս կողմից, բազմաթիվ իոնային անցուղիներով: [5]

Ստացվում է կարգավորված բևեռայնությամբ միացված բջիջների մարտկոց, այդ պատճառով նրանց հոսանքները գումարվում են: Արդյունքում, նյարդային ազդանշանի անցման ժամանակ էլեկտրական օրգանը արտադրում է որոշակի մեծության լիցքաթափում, որը որոշվում է մարտկոցի սեփականատիրոջ տեսակների առանձնահատկություններով և անմիջական կյանքի խնդիրներով: Անկասկած հաստատված է, որ էլեկտրոցիտները ստացվել են մկանային բջիջներից, որոնք մեծացել են չափսերով, կարգավորվել են փոխադարձ տեղադրվածությամբ, նյարդավորմամբ և սպիտակուցային կծկողական ապարատի այս կամ այն մասը կորցնելով, ազատվել են կծկման անհրաժեշտությունից:

Այնուամենայնիվ, տարբեր ձևերի մոտ էլեկտրական օրգանները տարբեր են, տարբերվում են մարմնի վրա տեղադրման առանձնահատկություններով և բջիջների կառուցվածքով, նյարդավորման առանձնահատկություններով, այնպես որ ընդհանուր նախնիների մասին խոսք չկա: Հասկանալի է՝ էլեկտրական օրգան կարող է առաջանալ ցանկացած կմախքային մկանից, այն մասում, որը համապատասխանում է ձկան կարիքին: Ուստի էլեկտրական օրգանները հանդիսանում են բարդ օրգանի զուգահեռ առաջացման հրաշալի օրինակ: Զուգահեռ էվոլյուցիայի որոշ հարցեր քննարկելիս կարելի է ենթադրել, որ էլեկտրական օրգանները, առկա են, որոշ պալեոգոյան բրածո ձկների և ստեգոցեֆալների մոտ, հնարավոր է, որ նրանք ներկա են ժամանակակից պոլիպտերոսների մոտ:

Էլեկտրական ակտիվությամբ օժտված ձկների մասին հետազոտությունների արդիականության փաստն ապացուցում են վերջին տարիներին կատարած բազմաթիվ փորձերը, որոնք ներկայացնում են, որ տարբեր ձկների էլեկտրական օրգանները կազմակերպվել են գենային մակարդակի վրա և պարզաբանել է այդ հանգամանքների զուգահեռ ձևավորումը: Այդ նպատակով մասնագետները սեկվենացման մեթոդի միջոցով հետազոտել են էլեկտրական օձաձկան (*Electrophorus electricus*) գենոմը, իսկ հետո հավաքել են էլեկտրական օրգաններում, երիկամներում, սրտում, գլխուղեղում և ողնուղեղում, մկաններում էկսպրեսացվող գեների մասին տվյալները: Այդ հյուսվածքներում ինչպես պարզվել է աշխատում է մոտ 29000 գեն, որոնցից 22000-ը վերաբերվում է սպիտակուց կոդավորող գեներին: Այդ ընդհանուր հավաքածուից առանձնացրել են այն գեները որոնք հատկապես ինտենսիվ են էկսպրեսացվում էլեկտրական օրգաններում և հակառակը: Համեմատած կմախքային մկանների և սրտի հետ, նրանց ներկայությունը այնտեղ բացարձակ աննկատելի է: Ընդամենը հավաքվեց այդպիսի 397 գեն:[2]

Ֆիզիոլոգների և մորֆոլոգների ուշադրությունը վաղուց գրավել են ձկների էլեկտրական օրգանները, որոնց լիցքաթափումների միջոցով պաշտպանվում են տրոպիկական երկրների որոշ ձկներ (Бабыхин 1876, Rosenberg 1928): *Gymnotus electricus* Հարավ Ամերիկյան էլեկտրական օձաձուկը ընդունակ է գեներացնել 800-900 Վ լարում, *Mormyrus* նիլյան շնաձուկը և *Malopterurus electricus* լոքոն՝ լիցքաթափման մեծությունը կազմում է 200-350 Վ, իսկ *Torpedo marmorata* միջերկրածովյան սկատը արտադրում է 30-50 Վ:

Էլեկտրական հոսանքը այդ ձկների մոտ արտադրվում է հատուկ օրգանների կողմից, որոնք տեղադրվում են մարմնի մաշկի տակ և ստանում են հզոր իներվացիա:[3] Ամեն մի բջիջ աշխատում է իբրև պոտենցիալ տարրական գեներատոր (աղբյուր) հասկանալի է, որ սյունյակում հաջորդաբար միացած բջիջների քանակից կախված է լինելու լիցքաթափման լարումը, իսկ զուգահեռ կանգնած սյունյակների քանակությունից՝ լիցքաթափության ուժգնությունը: Եվ իսկապես սյունյակում բջիջների առավելագույն մեծ քանակությունը (մոտ 6000) սյունյակների համեմատական քաղաքականության դեպքում (20-50) կարելի է հայտնաբերել լիցքաթափման առավելագույն բարձր լարում տվող էլեկտրական օձաձկան

զլխավոր օրգանում: Ծովային էլեկտրական կատվածկան ամեն մի սյունյակ կազմված է մոտավորապես 400 բջիջներից, բայց օրգանը պարունակում է մոտ 500 զուգահեռ սյունյակ, ապահովելով ցածր լարման դեպքում հոսանքի բարձր ուժ, ինչը կապված է ըստ երևույթի ծովային ջրի մեծ էլեկտրահաղորդականության հետ:

Սյունյակների ուղվածությունից կախված է շրջակա ջրում հոսանքի ուժային դաշտի կոնֆիգուրացիան: Էլեկտրական օձաձկան մոտ նրանք տեղադրված են մարմնի երկայնքով, իսկ կատվածկների մոտ՝ լայնակի: Լիցքաթափման հոսանքի բևեռայնությունը որոշվում է, թե նյարդերը էլեկտրական բջիջներին, որ կողմից են միանում, քանի որ հենց նյարդավորվող մասն է լիցքաթափվում և այդ ժամանակ դառնում էլեկտրաբացասական:

Գրգռման եղանակից կախված (ռեֆլեկտորային, ոչ ուղիղ, ուղիղ) գործման հոսանքի ընթացքի ձևը և բնույթը տարբեր են: Ամբողջ օրգանի մոտ այն տեղի է ունենում ավելի դանդաղ քան առանձին սյունյակներում:

Բնական պայմաններում էլեկտրական օրգանների բոլոր բջիջների լիցքաթափման սինխրոնությունը ապահովվում է նրանով, որ նրանք ստանում են նյարդային իմպուլսների զարկը գրգռման մեկ կենտրոնական օջախից, իսկ *Malopterurus* էլեկտրական լոքոյի մոտ բոլոր բջիջները նյարդավորվում են մեկ նեյրոնի հսկա աքսոնի բազմաթիվ ճյուղերով:[1]

Լիցքաթափող էլեկտրական օրգանը կորցնում է իր գրգռականությունը: Ռեֆլեկտոր շրջանը տևում է ազդման հոսանքի ընթացքի ամբողջ ժամանակահատվածում և փոխվում է գերգրգռականության ֆազայով (Fuji, 1914): Դա ստեղծում է բարենպաստ պայմաններ էլեկտրական օրգանի «ինքնագրգռման» համար 100-200/վրկ ռիթմով ամեն մի լիցքաթափումից հետո: Ամեն մի բջջի կողմից առաջացած էլեկտրաշարժիչ ուժը կարելի է որոշել լիցքաթափման ընդհանուր լարումը բաժանելով սյունյակում բջիջների թվի վրա: Սյդպես օրինակ Բարդոն-Սանդերսոնը և Գոտչը (Burdon- Sanderson, Gotch, 1889) ստանալով *Raja* կատվածկան 80 բջիջներով սյունյակ պարունակող էլեկտրական օրգանի պրեպարատից 1.8 լիցքի լարումը, որոշել են բջջի ազդման պոտենցիալի մեծությունը (20մվ): Սյդպես է որոշվել, որ *Torpedo* կատվածկան էլեկտրական օրգանի բջջի գրգռման պոտենցիալը կազմում է 80 մվ, իսկ *Gymnotus* օձաձկան մոտ՝ 100 մվ: Միկրոէլեկտրոդների միջոցով ուղիղ չափումները ցույց տվեցին, որ *Electrophorus* օձաձկան էլեկտրական օրգանի առանձին բջջում զարգացող գործողության պոտենցիալը հասնում է 150 մվ (Keynes, Martins-Ferreira, 1953):

Էլեկտրաշարժիչ ուժը գեներացվում է նրա յուրաքանչյուր էլեկտրական թիթեղի մեջ: Զկների մեծամասնության մոտ էլեկտրական թիթեղները առաջանում են ձևափոխված մկաններից, իրենց յուրահատուկ նյարդամկանային կառուցվածքով և նրանց հաշվի են առնում, որպես նախկինում հիպերտրոֆիայի ենթարկված ռեդուկցված մկանային սուբստրատով (Schaefer, 1942) շարժողական թիթեղներ:

Նյարդը կտրելուց հետո ամբողջ օրգանը վերականգնվում է, ինչպես նյարդավորվող մկանի շարժողական թիթեղները, և վերջացնում է լիցքաթափվել նույնիսկ էլեկտրական օրգանի խրոնակսիայի ուղիղ գրգռիչների դեպքում (Auger, Fessard, 1938), *Torpedo* կատվածկան մոտ կազմում է 0,5 մվրկ, բայց կուրարե թույնով նյարդը մշակելուց հետո խրոնակսիան մնում է անփոփոխ, իսկ օրգանինը աճում է մինչև 10,0 մվրկ, այսինքն բացահայտվել է նյարդամկանային հետերոքրոնիզմի նման երևույթ: Էլեկտրական օրգանի նմանությունը նեյրոշարժիչ ապարատի հետ ամրապնդվում է նաև նրանով, որ օրինակ էլեկտրական օձաձկան մոտ այն նյարդավորվում է, ինչպես կմախքային մկանները՝ ողնուղեղի գորշ նյութի առջևի եղջուրներից: Էլեկտրական թիթեղների հոսանքի արտադրությունը կատարվում է բջիջների էլեկտրոգենեզի ընդհանուր կանոններով: Քանի որ նյարդային վերջույթները գտնվում են թիթեղի մի կողմի վրա, ապա հենց այդ կողմն է գրգռվում եկող իմպուլսներից և դառնում էլեկտրոբացասական մյուսի նկատմամբ:[6]

Կեյնսի և Մարտինեզ-Ֆեռեյրի (Keynes, Martins-Ferreira, 1953) միկրոէլեկտրոդների հետազոտությունը, որը կատարվում էր օձաձկան (*Electrophorus electricus*) մեկուսացված էլեկտրական թիթեղի վրա ցույց տվեցին, որ նյարդային և ոչ նյարդային կողմերի միջև, ինչպես նրանցից յուրաքանչյուրի կողմերի միջև, պոտենցիալների նկատելի տարբերություն չկա: Սակայն միկրոէլեկտրոդներից մեկի ներմուծումը թիթեղի մեջ հայտնաբերում է 80-90 մվ

հանգստի հոսանք: Բայց եթե մեկ էլեկտրոդ տեղադրված է նյարդավորված կողմում, իսկ մյուսը ընկղմված է թիթեղի նյութի մեջ կամ գտնվում է ոչ նյարդավորված մասում, ապա գրանցվում է մոտավոր 140 մվ գրգռման հոսանք: Առաջին դեպքում այն որպես հանգստի հոսանքի բացասական տատանում վերջինս արագ բերում է գրոյի և շարունակում է գրոյական մակարդակում, ցույց տալով, որ թիթեղի գրգռման մակերեսը դառնում է ավելի բացասական, քան նրա ներքին մասերը: Երկրորդ դեպքում գրգռման հոսանքը առաջանում է հենց գրոյական մակարդակից: Նկատելի է, որ երկու դեպքում նրա ձևը և մեծությունը գործնականում համընկնում են, եթե չհաշվենք ոչ նյարդավորված թիթեղի մակերեսի լարման անկումը:

Այստեղից հետևում է, որ պոտենցիալների տարբերությունը առաջանում է հենց բջջի ժելեանման զանգվածի և այն թիթեղի մակերեսի շերտի միջև, որտեղ նյարդային վերջույթները ճյուղավորվում են:

Վաղուց ուշադրությունը ուղված էր նրան, որ էլեկտրական օրգանները պարունակում են մեծ քանակությամբ կալիում, ժամանակակից հայացքներով այն ունի մեծ դեր, կոնցենտրիկ գալվանական շղթաների գոյացման մեջ: Եթե հավասարեցնենք այդ կալիումի գրադիենտի մեծությունը միջավայրի կոնցենտրացիայի հետ լվացվող թիթեղի նյարդային մասը, ապա հանգստի և գրգռման պոտենցիալները կտրուկ ընկնում են: Na իոնների ներմուծման դերը էլեկտրական թիթեղի գրգռված մաս, գործողության հոսանքի զարգացման համար ներկայացվում է ռինգերյան լուծույթի փոխարինումը առանց նատրիումի միջավայրի փոքրերով: Սակայն էլեկտրական թիթեղի նյարդերից զուրկ մասը, հանգստի և գրգռման պոտենցիալների վրա էական ազդեցություն չի թողնում: Դրանով հաստատվում է, որ էլեկտրական հոսանքի գեներատորները, որոնք առաջանում են էլեկտրաքիմիական գրադիենտների գոյացման ճանապարհով, համարվում են բազմաթիվ թաղանթային էլեմենտների նյարդային մակերևույթները, որոնցից առաջանում է էլեկտրական օրգանի բարձրավոլտային մարտկոցը:[4]

Օգտագործված գրականության ցանկ

1. **Барон В.Д.** Электрогенераторные системы рыб: эволюция и механизмы адаптации. М., 1982, III с.
2. Жизнь животных, под редакцией проф. Т.С.Расса, издание 2-ое, том 4-ий, Москва, <<Просвещение>> 1983, 575с, ст 51-52, 290-291
3. **Клещенко Е.** Электрическое чувство // «Химия и жизнь». — 2011. — № 9.
4. **Коган А.Б.** Электрофизиология. издательство<<Высшая школа>> Москва 1969
5. <http://ours-nature.ru/lib/b/book/3291524953/8>
6. <http://www.mkuzak.am/wp-content/uploads/Dzknabanutiun-Uxix.pdf>
7. https://ru.wikipedia.org/wiki/Электрические_органы

ՀՏԴ33

ՊԼԱՆԵՏԱՐԻՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ալեքսեյ Մակյան

*ԱրՊՀ Բնագիտական ֆակուլտետ, աշխարհագրության
ամբիոն, 4-րդ կուրսի ուսանող*

Արթուր Աբրահամյան

*ԱրՊՀ Բնագիտական ֆակուլտետ, աշխարհագրություն
ամբիոն, մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանող*

Գիտական ղեկավար՝ դասախոս՝ Ռ. Մարգարյան

Էլ. հասցե՝ makyan.aleksey@mail.ru

Էլ. հասցե՝ artur.abrahamyan.1122@mail.ru

Բանալի բառեր՝ պլանետարիում, կիսագնդաձև էկրան, օպտիկամեխանիկական պրոյեկտոր, երկնային ոլորտ, տեխնոլոգիական դարաշրջան, գիտահանրամատչելի ֆիլմեր, գիտագործնական սեմինարներ, բնագիտական առարկաների առաջընթաց:

Ключевые слова: планетарий, полусферический экран, оптико-механический проектор, небесная сфера, технологическая эра, научно-популярные фильмы, научно-практические семинары, прогресс естественных наук.

Keywords: planetarium, hemispherical screen, optical-mechanical projector, celestial sphere, technological era, non-fiction films, scientific and practical seminars, progress of natural sciences.

Ամփոփում

Պլանետարիումը լինելով արդի ժամանակների ուսուցման էմպիրիկ մակարդակի բարձրացման կարևորագույն գիտագործնական, գիտաճանաչողական համալիրներից, ունի համակողմանի ուսումնասիրման կարիք: Աշխատանքում քննարկվում են պլանետարիումների ստեղծման առաջին քայլերը, դրանց ժամանակակից տիպերը, օգտագործման բնագավառները, ինչպես նաև կապը տնտեսության տարբեր ոլորտների հետ: Առաջարկվում է Արցախի Հանրապետության կառավարական ծրագրերում ընդգրկել պլանետարիումի ստեղծման անհրաժեշտությունը, որը կհամալրի գիտակրթական ժամանակակից բազան:

Алексей Макия

АрГУ, факультет естественных наук, 4-ый курс

Артур Абрамян

АрГУ, факультет естественных наук, маг. 1-ый курс

Науч. рук.: преподаватель Р. Саркисян

Ел-почта: makyan.aleksey@mail.ru

Ел-почта: artur.abrahamyan.1122@mail.ru

ПЛАНЕТАРИЙ И НЕОБХОДИМОСТЬ ЕГО СОЗДАНИЯ В АРЦАХСКОЙ РЕСПУБЛИКЕ

Резюме

В настоящее время планетарий является важнейшим познавательным комплексом для повышения эмпирического уровня науки, и нуждается в всестороннем изучении. В работе обсуждаются первые шаги по созданию планетария, их современные типы, области использования, а также связь с различными секторами экономики. Предлагается включить план в государственные программы Республики Арцах, которая дополнит современную научно-образовательную базу.

Aleksey Makyan

ASU the faculty of natural sciences, 4th course

Arthur Abrahamyan

ASU the faculty of natural sciences, master's degree 1st year

Supervisor: teacher Sargsyan R.

e-mail: makyan.aleksey@mail.ru

e-mail: artur.abrahamyan.1122@mail.ru

Summary

In today's days, the planetarium is the most important cognitive complex for increasing the empirical level of science, and needs a comprehensive study. The work discusses the first steps to create a planetarium, their modern types, areas of use, and communication with various sectors of the economy. It is proposed to include the plan in the state programs of the Republic of Artsakh, which will complement the modern scientific and educational base.

Գիտատեխնիկական զարգացման ժամանակակից փուլում ուսումնական հնարավորությունները սահմանափակել միայն ավանդական միջոցներով խելամիտ չէ: Կրթության, գիտության որակն ու արդյունավետությունը բարձրացնելու համար գոյություն ունեն տեխնիկապես հագեցած մի շարք հաստատություններ, որոնցից է նաև պլանետարիումը: Պլանետարիումը կոչված է հիմնականում օժանդակելու կրթական, գիտական գործընթացներին: Յուրաքանչյուր ոք գտնվելով պլանետարիումի ներսում, հայտնվում է իրադարձությունների կիզակետում և իր անմիջական մասնակցությունն է ունենում տեսաֆիլմում ներկայացվող նյութին: Այստեղ ներկայացվում են զանազան բովանդակությամբ ֆիլմեր, որոնք առաջարկում են ճամբորդել անցյալ, ապա վերադառնալ ներկա և ուսումնասիրել գիտության տարբեր բնագավառներին վերաբերող մարդկային պատկերացումները:

Աստղային երկինքը հիացրել է անգամ քարանձավում ապրող մարդկանց: Բայց ողջ պատմության ընթացքում մարդկությունը չի կարողացել պատկերացնել աշխարհին այնպես, ինչպիսին այն իրականում է: Գիտության և տեխնոլոգիաների արագընթաց զարգացման շնորհիվ, տիեզերքի գաղտնիքների բացահայտման ճանապարհին, մենք առաջ ենք անցել մեր նախորդներից, սակայն մենք էլ դեռևս շատ հեռու ենք այդ ճանապարհի ավարտից:

Պլանետարիումը գիտաճանաչողական տեսաթման հաստատություն է՝ զմբեթային թատրոն, որտեղ կիսագնդաձև էկրանի վրա օպտիկամեխանիկական պրոյեկտորի և թվային տեխնոլոգիաների միջոցով ցուցադրվում են երկնային ոլորտը՝ աստղերի, մոլորակների, արբանյակների, երկնաքարերի հետ, ինչպես նաև արևի և լուսնի խավարումները, լուսնի համայնապատկերը, Մարսը, Վեներան և մյուս մոլորակները: Երկնային ոլորտի ցուցադրումն ուղեկցվում է աստղագիտության, տիեզերագնացության և երկրային գիտությունների դասախոսություններով: Պլանետարիումի մասին դանիացի պրոֆեսոր Ստրյոմգենը գրեց. «Երբևէ չի ստեղծվել այնպիսի գիտական գրականություն, որն իր արդյունավետությամբ հավասար լինի դրան: Այն կարող է գործել ինչպես դպրոցը, թատրոնը և կինոնկարը միաժամանակ, որտեղ դպրոցական դասարանը դիտում է բեմադրությունը, իսկ դերասանները հանդիսանում են երկնային մարմինները»:

Գաղափար ստեղծել մի սարք, որը կցուցադրի աստղային երկինքը և մոլորակները, ծագել է անտիկ աշխարհում: Նմանատիպ գործիք ստեղծվել է Արքիմեդի կողմից և նկարագրվել է «Երկնային ոլորտի ստեղծման մասին» աշխատությունում: Յավոք ոչ սարքը, ոչ աշխատությունը չի պահպանվել: Անտիկ աշխարհին փոխարինեց միջնադարը, որին քաղաքական տեսակետից հատուկ էր ֆեոդալական մասնատվածությունը, տնտեսական առումով՝ փակ բնատնտեսությունն ու տնտեսական ավելի նեղ շահերը, իսկ գաղափարական առումով՝ քրիստոնեական աստվածաբանությունը, որը գիտությունը դարձրել էր կրոնի ծառան¹:

Առաջին անգամ պլանետարիումի ստեղծման առաջարկով հանդես եկավ Մյունխենի Գերմանական թանգարանի հիմնադիր-տնօրեն Օսկար Միլլերը 1919թ.-ին: Միայն 4 տարի անց՝ 1923թ.-ին նրա նախագծին համապատասխան առաջին պրոյեկտորային

¹Թ. Խ. Հակոբյան, Աշխարհագրության համառոտ պատմություն: Երևան, 1967թ., էջ 57:

սարքավորումները ստեղծվեցին Յենայում, որոնք նախատեսված էին որոշակի աշխարհագրական լայնության համար: 1925թ.-ի մայիսի 7-ին նույն թանգարանում արդեն գոյություն ունեցող սարքավորման հիման վրա բացվեց պլանետարիումը: Դա նախատեսված էր 180 դիտողի համար: Գմբեթի տրամագիծը 15 մետր է: Իր ամբողջ գոյության ընթացքում այցելել են պլանետարիում ավելի քան 8.3 մլն մարդ: Այժմ այն աշխարհում ամենահին պլանետարիումն է:

ԽՍՀՄ-ում առաջին պլանետարիումը բացվել է 1929թ.-ին Մոսկվայում: Այն նախատեսված է 356 մարդու համար ու դրա գմբեթի տրամագիծը 25 մետր է: Այն աշխարհում 13-րդ պլանետարիումն է և 3-րդը՝ ոչ Գերմանիայում: Այժմ դրա գլխավոր դահլիճը հանդիսանում է Եվրոպայում ամենամեծը՝ զբաղեցնելով 1000 մ² տարածք:

Արևմտյան կիսագնդի առաջին պլանետարիումը «ԱՂԼԵՐ»-ը, հայտնվել է 1930թ.-ին ԱՄՆ-ի Չիկագո քաղաքում, որը կառուցվել է 1930թ.-ին՝ խոշոր ձեռնարկատեր Մաքս Ադլերի կողմից:

Ներկայումս աշխարհի ամենախոշոր պլանետարիումը գտնվում է Ճապոնիայի Նագոյա քաղաքում, որի գմբեթի տրամագիծը կազմում է 35 մ: Այն իր չափերի շնորհիվ զբաղեցվել է Գինեսի ռեկորդների գրքում: Այս պահին աշխարհում բազմաթիվ պլանետարիումներ կան, որոնք բաղկացած են օպտիկամեխանիկական սարքից և թվային նախագծման համակարգից: Դրանք կարելի է միավորել 3 խմբում.

Անշարժ գմբեթներով պլանետարիումներ: Օգտագործում են մետաղային կոնստրուկցիաներ, ամրացնելով գոգավոր թերթերը, որոնք ձևավորում են կիսագնդաձև մակերևույթ: Գոգավոր թերթերն օգտագործում են նաև օդափոխման նպատակներով, ինչպես նաև գմբեթից դուրս ձայնի աղբյուրների տեղադրման համար:

Վակուումային գմբեթներով պլանետարիումներ: Այստեղ էկրանն իդեալական կիսագնդի ձև է ընդունում գմբեթի արտաքին շերտի և ներքին շերտի միջև վակուում ստեղծելու շնորհիվ:

Փշովի գմբեթներով պլանետարիումներ: Այս տեխնոլոգիայի առանձնահատկությունն այն է, որ օդը մղվում է հերմետիկ և պլաստիկ կառուցվածքի ներսը, որն ընդունում է ցանկալի ձևն այն պատճառով, քանի որ ստացված գմբեթի նեսում ճնշումն ավելի մեծ է, քան մթնոլորտայինը: Գմբեթը կարելի է օգտագործել ինձպես փողոցում, այպես էլ սենյակային պայմաններում: Նշված խմբերից առավել շատ տարածված են անշարժ գմբեթով պլանետարիումները:

Ժամանակակից պլանետարիումներում օգտագործվող թվային տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս շրջանցել մինչ այդ գոյություն ունեցող սահմանափակումները: Նորարար տեխնոլոգիական լուծումները բարելավվում են թվային պատկերները: Արտադրվում են թվային պրոյեկտորներ, որոնք ունեն ավելի մեծ հուսալիություն և ավելի փոքր ինքնարժեք: Այժմ գմբեթի վրա գտնվող պատկերների որակը չի զիջում ժամանակակից կինոթատրոններին: Շնորհիվ արդի ծրագրային ապահովման, հնարավոր է օգտագործել մինչև 64 պրոյեկտորներ, որոնք կարելի է կառավարել մեկ սերվերից:

Պլանետարիումները հնարավորություն են ընձեռում դիտել ուսուցողական տեսանյութեր, այնպիսին, որոնք դիտողներին թույլ են տալիս սեփական աչքերով տեսնել, զգալ, լսել այն, ինչը պատմում են գրքերը: Այդտեղ ներկայացվող տեսաֆիլմերը նման են վիրտուալ իրականությանը, միայն այն տարբերությամբ, որ այստեղ դիտողի դերում հանդես են գալիս մի խումբ մարդիկ: Տեսաֆիլմերը նվիրված են աշխարհագրությանը, աստղագիտությանը, ֆիզիկային, քիմիային, կենսաբանությանը և գիտության այլ ճյուղերի:

Գիտատեխնիկական առաջընթացի հետ կապված, գնալով աշխարհում աճում է հետաքրքրությունը համաժողովների, գիտագործնական սեմինարների, ինչպես նաև ցուցահանդեսների և տոնավաճառների նկատմամբ: Արտադրության բնագավառի աշխատողները, գարծարարները, գիտնականները մասնակցում են աշխարհի տարբեր

երկրներում կազմակերպվող ֆորումների, որտեղ ստանում են թարմ տեղեկություններ, շփվում կոլեգաների հետ, մտքեր փոխանակում, բանակցություններ վարում¹: Այդպիսի համաժողովներ, ինչու չէ նաև ցուցահանդեսներ կարելի է կազմակերպել նաև պլանետարիում գիտակրթական, գիտաճանաչողական համալիրում:

Ներկայացնելով պլանետարիումի առանձնահատկությունները, եկանք այն եզրակացություններին, որ դրանք ունեն բավականին մեծ գիտագործնական, գիտաճանաչողական նշանակություն: Պլանետարիումն ունի մի շարք դրական կողմեր, որոնցից են.

- Գրքերում նկարագրվող օբյեկտներն ու երևույթները տարածականորեն ըմբռնելու հնարավորություն:
- Աստղաֆիզիկական երևույթների փարձարկման համար նախատեսված սարքավորումների առկայություն:
- 360° տեսաֆիլմերի ցուցադրման հնարավորություն:
- Կառույցներում թանգարանային արժեքներ ունեցող առարկաների ցուցադրում:
- Դպրոցականների մոտ բնագիտական առարկաների ավելի հեշտ ընկալում:

Պլանետարիումը բավականին մեծ ազդեցություն կարող է թողնել յուրաքանչյուր երկրի գիտաճանաչողական զբոսաշրջության զարգացման գործում, ապահովելով, զբոսաշրջության ոլորտի գործնական համատեղումը տնտեսության բոլոր բնագավառների հետ, ուստի հանրապետության զբոսաշրջային ինդուստրիայի զարգացման, գիտակրթական համակարգի համալրման և այլ բնագավառների համար անհրաժեշտություն է կառավարական ծրագրերում ընդգրկել պլանետարիումի ստեղծման ծրագրի առաջնահերթությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀակոբյանԹ. Խ., Աշխարհագրության համառոտ պատմություն: Երևան, 1967թ., 386 էջ:
2. Հարությունյան Շ., Զբոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն, Երևան: 2004թ.,- 160 է:
3. Дараев М.М. Наблюдения звездного неба, 1991г. 243 ст.
4. www.planetarium-moscow.ru
5. www.planetarium.one

¹Շ. Հարությունյան, Զբոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն: Երևան, 2004թ.,- 81 էջ:

ՀՏՆ373(54)

**ՔԻՄԻԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՆ՝ Ի ՆՊԱՍՏ ՔԻՄԻԱ ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՆՐԵՊ
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՅՄԱՆ**

*Շուշաննա Վարդանյան
Արտաշես Արիստակեյան
1-Երևանի պետական համալսարան.
Քիմիայի ֆակուլտետ,(ԲՖ), Քիմիա բաժին 2-րդ կուրս ԵՊՀ ԲՖ
2-Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան,
Քիմիա- կենսա- և բնապահպանական տեխնոլոգիաների ամբիոն,
ասպիրանտ 2-րդ կուրս
Գիտ. Ղեկավար՝ ք.գ.թ. Դուրգարյան Ն. Ա.
shushanna99@mail.ru
+37455221654*

Բանալի բառեր՝ օլիմպիադա, քիմիա, ուսանողական օլիմպիադա, առարկայական օլիմպիադա :

Key words: Olympiad, Chemistry, Student Olympiad, Subject Olympiad.

Ключевые слова : Олимпиада, химия, студенческая олимпиада, предметная олимпиада.

Ամփոփում՝

Օլիմպիադաները ունեն խթանող ուժ տվյալ առարկայի հանդեպ հետաքրքրության մեծացման, ինչը առիթ հանդիսացավ կազմակերպելու ուսանողական օլիմպիադա քիմիա առարկայից: Այն ուսանողության կողմից ստացել է դրական արձագանք ինչը երևում է կատարված հարցումների արդյունքներից և նախատեսվում է նման միջոցառումները դարձնել շարունակական:

**THE OLYMPIAD OF CHEMISTRY AS A CONTRIBUTING FACTOR IN PROMOTION THE
INTEREST IN CHEMISTRY**

Summary

Scientific Olympiads have stimulating importance in terms of promoting the interest to those subjects, which originally played a key role to organize Student Olympiad in Chemistry. It has already gained a positive feedback from students and it is reflected in the opinion surveys held afterwards. Thus, we plan to organize such student olympiads continuously.

ОЛИМПИАДА ПО ХИМИИ КАК ФАКТОР ПОВЫШЕНИЯ ИНТЕРЕСА К ПРЕДМЕТУ

Резюме

Научные олимпиады имеют стимулирующую важность с точки зрения повышения интереса к тем предметам по которым они проводятся, что и изначально играл ключевую роль в организации студенческой олимпиады по химии. Олимпиада уже получила положительные отзывы от студентов, и это отражено в опросах общественного мнения, проведенных впоследствии. Таким образом, мы планируем постоянно организовывать такие студенческие олимпиады.

Առարկայական օլիմպիադան մրցույթ է դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան սովորողների միջև, որի մասնակիցներից պահանջվում է ներկայացնել համապատասխան գիտելիքներ և հմտություններ մեկ կամ մի քանի ուսումնասիրվող բնագավառներում: Օլիմպիադաները հիմնականում ուղեկցվում են բացման արարողությամբ և հանդիսավոր փակմամբ՝ արդյունքների ամփոփմամբ և լավագույնների պարգևատրմամբ:

Հաճախ օլիմպիադան կազմված է լինում մի քանի փուլերից, օրինակ, հանձնում են առաջադրանքները և անհրաժեշտ օժանդակ նյութերը: Օլիմպիադայի մասնակիցների առաջադրանքների կատարման աշխատանքներն ավարտելուց հետո կատարվում է

աշխատանքների վերլուծություն և արդյունքների ամփոփում: Մրցանակակիրները սովորաբար ստանում են դիպլոմներ և տարաբնույթ պարգևներ կամ պարգապես անցնում են հաջորդ փուլ:

Օլիմպիադան ուսանողին կամ աշակերտին տալիս է մի շարք դրական հնարավորություններ: Օլիմպիադայի մասնակիցները ինտենսիվ են պատրաստվում դրան, ինչը նպաստում է ուսումնական և լրացուցիչ նյութի յուրացմանը: Օլիմպիադային մասնակցելը կարող է առավելություն լինել բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդների համար, հատկապես, եթե նրանք զբաղեցրել են մրցանակային տեղեր: Հիմնականում հանրապետական և միջազգային օլիմպիադաների մասնակիցների համար իրականացվում է նաև մշակութային ծրագրեր. էքսկուրսիաներ, մասնակցություն տարբեր համերգների կամ ցուցահանդեսների, որոնք նպաստում են մասնակիցների միջև կապերի ստեղծման:

Հաշվի առնելով Հայաստանում առկա համեմատական ծանր իրավիճակը <<Քիմիա>> առարկայի հանդեպ և օլիմպիադաների տված օգուտները՝ մենք որոշեցինք անց կացնել օլիմպիադա հետևյալ անունով. <<Հայկական քիմիական ուսանողական օլիմպիադա>>, որը տեղի ունեցավ 2017 թ.-ի դեկտեմբերի 11-13-ը ԵՊՀ-ում: Այն կազմակերպել էինք ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության ջանքերով: Եռօրյա օլիմպիադային մասնակցելու հրավեր էինք ուղարկել Հայաստանի Հանրապետության 5 բուհեր՝ ՀՊՄՀ, ԵՊԲՀ, ՀԱՊՀ, ՀԱԱՀ, ՀՌՀ, ԵՀՀ: Հրավերն ուներ հետևյալ տեսքը՝

Հարգելի ուսանողներ,

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպում է քիմիական ուսանողական օլիմպիադա, որը կանցկացվի ա.թ. դեկտեմբերի 11-13-ը: <<Հայկական քիմիական ուսանողական օլիմպիադան>> առաջին ուսանողական քիմիական օլիմպիադան է Հայաստանում: Այն միջհամալսարանական է, այս օլիմպիադային կարող են մասնակցել բոլորայն բուհերի ուսանողները, որտեղ որպես մասնագիտական առարկա դասավանդվում է <<Քիմիա>>: Օլիմպիադայի մասնակցությունը թիմային է, ընդ որում յուրաքանչյուր բուհից կարող են մասնակցել մի քանի թիմեր: Օլիմպիադան անց է կացվելու երեք փուլով՝

1.տեսական հարցեր

2.գեկուցումներ՝ նախապես առաջադրված թեմաներով

3.գործնական փուլ


Օլիմպիադայի մասնակից թիմերում անդամների թիվը կարող է տատանվել 4-6 անդամի սահմաններում:

Հայտերն ընդունվում են մինչև դեկտեմբերի 7-ը:

Հրավերները ուղարկվել են պաշտոնական հրավերների, սոցիալական կայքերով հաղորդագրությունների միջոցով 2017թ.-ի դեկտեմբերի 3-ին: Բացի պաշտոնական հրավերներից տեղադրվել են հայտարարություններ և հայտերի լրացման պաշտոնական հղում, որը տարածվել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ի և Young Chemists Association NGO-ի Facebook-յան էջերի միջոցով 2017թ.-ի նոյեմբերի 26-ից: Հայտարարության տարածման և հրավերների շնորհիվ լրացվել է օլիմպիադայի մասնակցության յոթ հայտ, որոնցից օլիմպիադային մասնակցել է վեցը, դրանք են՝ Երևանի պետական համալսարանի Քիմիայի ֆակուլտետը ներկայացնող <<GeNiUS>> և <<Ալքիմիկներ>> թիմերը, նույն համալսարանի Ֆարմացիայի ինստիտուտը ներկայացնող <<Ածխաջրիկներ>>, Հայկական պետական մանկավարժական համալսարանի՝ <<Սերոտոնին>>, Գորիսի պետական համալսարանի և Հայ-ժուսական (Սլավոնական) համալսարանի թիմերը:

Ի սկզբանե նախատեսված էր, որ առաջին փուլին կմասնակցեն բոլոր թիմերը և երկրորդ փուլ կանցնեն միայն լավագույն երեքը, սակայն, քանի որ սա առաջին օլիմպիադան էր, մասնակից թիմերը քիչ էին, առաջին և երկրորդ փուլին մասնակցեցին բոլոր թիմերը, սակայն երրորդ փուլ անցան միայն առաջին երեք թիմերը, ըստ համապատասխան վաստակած միավորների:

Առաջին փուլում մասնակիցներին տրվեցին 30 հարց պարունակող առաջադրանքների թերթերը: Հարցերը կազմելիս ընտրվել էին այնպիսի առաջադրանքներ, որոնք կպարզեին մասնակիցների՝ քիմիայից ունեցած ընդհանուր գիտելիքները (օրինակ՝ Ո՞րն է ամենալավ էլեկտրահաղորդիչ մետաղը, Ո՞ր նյութի լուծույթով են սպիտակեցնում խամրած նկարները): Առաջադրանքների մեջ հիմնական հարցերը քիմիական միացությունների կիրառական նշանակության մասին էին, ինչպես նաև կային տրամաբանական հարցեր և փոխարկումների շղթաներ օրգանական քիմիայից (օրինակ՝ Մարդու մարմնում ո՞ր տարրի ատոմներն են գերակշռում, CH_4 $\text{CH}_3\text{-C(O)-C}_2\text{H}_5$) : Առաջին փուլի ավարտից հետո բոլոր թիմերի մասնակիցները ստացան օլիմպիադայի մասնակցության հավաստագրեր (նկար 1):



Նկար 1. Օլիմպիադայի մասնակցության հավաստագրի նմուշ

Երկրորդ փուլը՝ զեկուցումների փուլը, նպատակ ուներ ստուգելու մասնակիցների՝ լսարանի առջև որևէ թեմա ներկայացնելու, զեկուցելու հմտությունները, ինչպես նաև ուղղված էր կարճ ժամանակում հետազոտական աշխատանք կատարելու հմտությունների բացահայտմանը : Զեկուցումների փուլում առաջադրված թեմաներն ունեին խորագիր, այն է՝ «Հայաստան՝ երբեմնի քիմիական հսկան»։ Դրանք նվիրված էին անցյալում Հայաստանում գործող քիմիական արտադրություններին, որոնցից ոչ բոլորն են այսօր գործում իրենց ամբողջ թափով կամ ընդհանրապես չեն գործում: Այդ թեմաներն են՝

1. բութադիենային կաուչուկի արտադրություն
2. իզոպրենային կաուչուկի արտադրություն
3. պոլիվինիլացետիլենի արտադրություն
4. պղնձամոլիբդենային արդյունաբերություն
5. թուջ-պողպատի արտադրություն
6. պարարտանյութերի արտադրություն
7. ազոտական թթվի արտադրություն
8. ծծմբական թթվի արտադրություն:

Մասնակից թիմերից պահանջվում էր նախապես ընտրել առաջադրված թեմաներից երեքը, պատրաստվել դրանց և ապա առաջին փուլի վերջում վիճակահանությամբ որոշվելու էր, թե որ թեման կզեկուցեն: Թիմերը նախապես եկան համաձայնության, թե որ թեմաներն են ցանկանում զեկուցել: Զեկուցումների համար նախատեսված էր 7 րոպե, որից հետո լսարանից զեկուցողին տրվում էին հարցեր: Երկրորդ փուլի վերջում պատվոգրով և մասնագիտական գրքերով պարգևատրվեց լավագույն զեկույց ներկայացնող մասնակիցը:

Երրորդ՝ գործնական փուլին մասնակցեցին ըստ առաջին և եկրորդ փուլերի լավագույն արդյունքները ցուցաբերած երեք թիմերը: Թիմերից յուրաքանչյուրին տրվել էր նույն առաջադրանքը. Որոշել թե առաջադրված նյութերից յուրաքանչյուրը որ համարի անոթում է գտնվում: Առաջադրված նյութերը սպիտակ աղեր էին՝ $AlCl_3$, $Ca_3(PO_4)_2$, Na_3PO_4 , KNO_3 , $(NH_4)_2SO_4$: Այս փուլում գնահատվում էր մասնակիցների՝ որպես քիմիկոսի անալիտիկ մտածողությունը, աշխատանքում օգտագործվող հմտություններն ու արագությունը: Երրորդ փուլի ավարտից հետո պատվոգրով և մասնագիտական գրքերով պարգևատրվեց լավագույն փորձարարը: Օլիմպիադայի ավարտից հետո հաղթող թիմի մասնակիցները պարգևատրվեցին դիպլոմներով և մասնագիտական գրքերով: Դիպլոմներ ստացան համապատասխան երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրած թիմերի մասնակիցները (Նկար 2):




Նկար 2. Օլիմպիադայի մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցների դիպլոմներն ու մասնագիտական գրքերը

Օլիմպիադայի ավարտից հետո՝ փետրվարի 23-ին, ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի ՌԻԳԸ-ի կողմից կատարվեց հարցում <<Ձեր կարծիքը <<Հայկական քիմիական ուսանողական օլիմպիադա>>-ի մասին>> վերնագրով: Ստորև ներկայացված են հարցման արդյունքները (նկ 3, նկ 4, նկ 5, նկ 6, նկ 7, նկ 8)

Մասնակցե՞լ եք օլիմպիադային


25 ոտետոտ



նկ 3. Հարցում գաղափարի դուր գալու վերաբերյալ

Արդյո՞ք ձեզ դուր եկավ գաղափարը


25 օրհանգստի արդյունքներ



Նկ 4. Հարցում մասնակցության վերաբերյալ

Եթե մասնակցել եք, ի՞նչ կարծիքի եք տեսական փուլի հարցերի մասին


10 օրհանգստի արդյունքներ



Նկ 5. Հարցում տեսական փուլի հարցերի վերաբերյալ

Եթե մասնակցել եք, ի՞նչ կարծիքի եք գեկուցումների փուլի մասին

10 օրհանգստի արդյունքներ



Նկ 6. Հարցում գեկուցումների փուլի վերաբերյալ

Եթե մասնակցել եք, ի՞նչ կարծիքի եք գործնական փուլի աշխատանքների մասին

3 ОТВЕТА

Everything was interesting and full of new knowledge

Շատ հետաքրքիր էր և պահանջում էր զգոնություն

Նկ7. Հարցում գործնական փուլի վերաբերյալ

Ի՞նչ առաջարկներ ունեք

4 ОТВЕТА

Կուզեի նման միջոցառումներ շատ կազմակերպվի

Нету

Ես կառաջարկեի արդարությունը մի քիչ շատ լիներ:

Կցանկանալի մյուս անգամներին մասնակից թիմերը ավելի տեղեկացված լինեին օլիմպիադայի թեմաներին, որպեսզի ավելի լավ պատրաստված լինեն:

Նկ8. Հարցում առաջարկների վերաբերյալ

Եզրակացություն

- Օլիմպիադա անցկացնելու գաղափարը պսակվեց հաջողությամբ, քանի որ հարցվածների զգալի տոկոսը դրական էին արձագանքել:
- Օլիմպիադայի անցկացման ֆորմատն էլ (փուլերը) ըստ հարցվածների բավարարում էր միջոցառման հետաքրքիր լինելուն:
- Օլիմպիադան նպաստում է քիմիա առարկայի նկատմամբ հետաքրքրվածության մեծացմանը:
- Հաշվի են առնվել բոլոր առաջարկները հաջորդ օլիմպիադան էլ ավելի լավ կազմակերպելու համար և էլ ավելի մոտենալու գործատու (բիզնես միջավայր)-ուսանող կապի ստեղծմանը, քանի որ նման օլիմպիադայի միջոցով հնարավոր է բացահայտել ապագա բանիմաց մասնագետներին:

Օգտագործված գրականության ցանկ

- Свиридюк Г. А. Всероссийская студенческая олимпиада по математике // УМН. — 1995. — Т. 50, № 3 (303). — С. 189—190.
- Ю. Брук И. К. Кикоин и олимпиады. Из истории школьных олимпиад в СССР // Заметки по еврейской истории. — 2008. — № 3(94).
- Решетова М. Д., Чуранов С. С. Из истории Менделеевских олимпиад // Современные тенденции развития химического образования: работа с одаренными школьниками / Под общей ред. академика В. В. Лунина. — М.: Изд-во Моск. ун-та, 2007. — С. 137-145. — ISBN 978-5-211-05438-7.
- <http://www.chem.msu.ru/rus/olimpiad/mosgor.html>

ՀՏԴ339

**ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԸ և ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Վարդուհի Կիրակոսյան

ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ
տնտեսագիտության տեսություն 4-րդ կուրս

Էլ. հասցե՝ kir.vard@mail.ru

Գիտական ղեկավար՝ Իշխանյան Ի.Հ.

Տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ

Բանալի բառեր՝ գլոբալացում, վերազգայնացում, վերազգային կորպորացիաներ, վերազգային տնտեսություն, միջազգային կորպորացիաներ, ազգային և արտասահմանյան միաձուլումների և կլանումների, հորիզոնական, ուղղահայաց և կոնգլոմերատային միաձուլումներ, ագրեսիվ և «բարեկամական» կլանումներ:

Ключевые слова: глобализация, транснационализация, транснациональные корпорации, наднациональная экономика, международные корпорации, национальные и международные слияния и поглощения, горизонтальные, вертикальные и конгломератные слияния, агрессивное и «дружеское» поглощение.

Key words: globalization, transnationalization, transnational corporations, superanational economy, international corporations, national and international mergers and acquisitions, horizontal, vertical and conglomerate mergers, aggressive and "friendly" acquisitions.

Ամփոփում

Օտարերկրյա ուղղակի ներդրումների արագ աճը, աշխատանքի տեխնոլոգիական բաժանման դուրս գալը ընկերությունների, արդյունաբերության և ազգային սահմաններից ուղեկցվում է տարբեր երկրներում և տարբեր մայրցամաքներում մասնաձյուղեր ունեցող հսկա միջազգային հետազոտական և արտադրական համալիրների ձևավորմամբ: Վերազգային կորպորացիաները համաշխարհային տնտեսությունը դարձնում են միջազգային արտադրություն, ապահովելով գիտական-տեխնիկական առաջընթացի արագացում բոլոր ոլորտներում՝ արտադրանքի տեխնիկական մակարդակ և որակ, արտադրության արդյունավետություն, կառավարման ձևերի բարելավում, ձեռնարկության կառավարում: Ժամանակակից վերազգային կորպորացիաների զարգացումը և աճը մեծ ազդեցություն ունեն համաշխարհային տնտեսության վրա, ինչպես նաև առանձին երկրների զարգացման վրա: Վերազգային ընկերությունները համարվում են երկրների մրցակցային դաշտի ձևավորման և միջազգային շուկաներում իրենց մրցակցային առավելությունների կատարման հիմնական գործոնները: Հոդվածում քննարկվում են համաշխարհային տնտեսության վրա ՎԱԿ-երի ձևավորման, դրանց դերի և ազդեցության արդիական խնդիրները, դրական և բացասական կողմերը, ինչպես նաև գլոբալիզացիայի համատեքստում ՎԱԿ-երի զարգացման հեռանկարները:

Вардуй Кираскосян

студентка 4 курса экономического факультета Аргу
по специальности “Экономическая теория”

Эл. адрес: kir.vard@mail.ru

Научный руководитель Ишханян И.О.

доцент кафедры экономической теории и управления, к.э.н.

**ТРАНСНАЦИОНАЛЬНЫЕ КОРПОРАЦИИ И ИХ ВЛИЯНИЕ НА МИРОВУЮ
ЭКОНОМИКУ В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ Резюме**

Быстрый рост прямых иностранных инвестиций, выход технологического разделения труда за пределы фирм, отраслей и национальных границ сопровождается появлением гигантских международных научно-производственных комплексов с филиалами в разных странах и на разных континентах. Транснациональные корпорации превращают мировую экономику в международное производство, обеспечивая ускорение научно-технического прогресса во всех его направлениях - технический уровень и качество продукции, эффективность производства, совершенствование форм менеджмента, управления предприятиями. Развитие и увеличение числа современных транснациональных корпораций оказывают большое влияние на мировую экономику в целом, так и на развитие отдельно взятых стран. Транснациональные компании считаются основными факторами формирования конкурентоспособности стран и реализации их конкурентных преимуществ на международных рынках. В статье рассматриваются актуальные проблемы формирования, роли и влияния ТНК на мировую экономику, положительные и отрицательные аспекты, а также перспективы развития ТНК в условиях глобализации.

Varduhi Kirakosyan ASU, faculty of economics

Theory of economics 4th year

E-mail: kir.vard@mail

Scientific director: Ishkhanyan I.H.

Associate professor of the Department of the Theory of Economics and Management, c.e.s.

TRANSNATIONAL CORPORATIONS AND THEIR IMPACT ON THE WORLD ECONOMY IN THE CONTEXT OF GLOBALIZATION

Summary

The rapid growth of foreign direct investment, the emergence of a technological division of labor beyond firms, industries and national boundaries is accompanied by the emergence of giant international research and production complexes with branches in different countries and on different continents. Transnational corporations turn the world economy into an international production, ensuring the acceleration of scientific and technical progress in all its areas - technical level and quality of products, production efficiency, improvement of management forms, enterprise management. The development and increase in the number of modern transnational corporations have a big impact on the world economy as a whole, and of course on the development of individual countries. Transnational companies are considered to be the main factors in shaping the competitiveness of countries and realizing their competitive advantages in international markets. The article discusses topical problems of formation, role and influence of TNCs on the world economy, positive and negative aspects, as well as prospects for the development of TNCs in the context of globalization.

Գլոբալացումը դարձել է միջազգային տնտեսության կարևորագույն առանձնահատկություններից մեկը: Գլոբալացման բնորոշիչ հատկությունը միջազգային հոսքերն են՝ հիմնականում կապիտալի և տեղեկատվության հոսքերը, որոնք շրջանառվում են վերազգային կորպորացիաների միջև:

Վերազգային տնտեսությունը ձևավորվեց 20 դ. երկրորդ կեսին և այժմ դրա նշանակությունը միջազգային տնտեսական, քաղաքական և հասարակական ոլորտներում միայն աճում է: ՎԱԿ-երի գործունեության հետևանքները մեծ ազդեցություն են թողնում աշխարհի բոլոր տնտեսությունների վրա:

Միջազգային կորպորացիաները մի կողմից հանդիսանում են արագ զարգացող միջազգային տնտեսությունների տնտեսական հարաբերությունների արդյունք, մյուս կողմից էլ՝ դրանց վրա ազդելու ուժեղ գործիք: Ակտիվ ներգործելով միջազգային տնտեսական հարաբերությունների վրա վերազգային կորպորացիաները ձևավորում են նոր

հարաբերություններ: ՎԱԿ-երի ազդեցությունն առանձին երկրների տնտեսությունների վրա անընդհատ ուժեղանում է: Դա հատկապես վերաբերում է զարգացող երկրներին: Հիմնականում ՎԱԿ-երն այդ երկրներ են տեղափոխում աշխատատար, էներգատար և նյութատար, ինչպես նաև էկոլոգիապես վնասակար արդյունաբերությունները: Չնայած նրան, որ որոշ զարգացող երկրներ հումքային ճյուղերում իրականացրեցին ՎԱԿ-երի ակտիվների ազգայնացում, այնուամենայնիվ, խոշոր արտադրական կորպորացիաները շարունակում են պահպանել գերակա դիրք հանքահումային ռեսուրսների համաշխարհային արտադրության և առևտրի մեջ:

Վերազգայնացումն, անկասկած, համարվում է ժամանակակից համաշխարհային տնտեսության կարևորագույն միտումներից մեկը: Տնտեսապես այն պայմանավորված է կապիտալի շարժով հարաբերական ավելցուկ ունեցող երկրներից դեպի կապիտալի պակաս ունեցող երկրներ, որտեղ՝ կապիտալի արտահոսքի հնարավորությամբ և անհրաժեշտությամբ պայմանավորված, ավելցուկային են համարվում արտադրության մյուս գործոնները (աշխատանքը, հողը, օգտակար հանածոները), և որոնք կապիտալի անբավարար քանակի պատճառով չեն կարող ռացիոնալ օգտագործվել վերարտադրական գործընթացներում:

Վերազգայնացման արդյունքը վերազգային կորպորացիաների (ՎԱԿ) ձևավորումն է: Միջազգային կորպորացիան՝ խոշոր ընկերության կազմակերպական ձև է, որը ուղղակի ներդրումներ է կատարում աշխարհի տարբեր երկրներում:

ՄԱԿ-ի կողմից մշակված օրենսգրքին համապատասխան ընկերությունը համարվում է վերազգային կորպորացիա, եթե՝

✓ երկու և ավելի երկրներում ունի դուստր ստորաբաժանումներ՝ անկախ դրանց իրավաբանական ձևից և գործունեության ոլորտից,

✓ ունի որոշումների ընդունման այնպիսի համակարգ, որը հնարավորություն է ընձեռում իրականացնել համաձայնեցված քաղաքականություն և ընդհանուր ռազմավարություն մեկ կամ մի քանի կենտրոններից,

✓ դուստր ընկերությունները միմյանց հետ կապված սեփականության հարաբերությունների միջոցով կամ այլ ուղիով, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը կարողանա նշանակալի ազդեցություն ունենա այլ ընկերությունների գործունեության վրա և, մասնավորապես, ունենա տեղեկատվություն, ռեսուրսների հասանելիություն և պատասխանատվություն կրի այլ ընկերությունների հետ¹:

ՎԱԿ-երի արդյունավետ գործունեության հիմնական գործոն է հանդիսանում ապրանքների և ծառայությունների միջազգային արտադրությունը, որն իրենից ներկայացնում է ՎԱԿ-երի մայր կազմակերպության և արտասահմանյան ֆիլիալների թողարկված արտադրանքը արտադրության ինտերնացիոնալացման բազայի հիման վրա²:

Այլ երկրների ազգային տնտեսությունների մեջ վերազգային կորպորացիաների ներթափանցման առանձնահատուկ հատկանիշը լայնածավալ վերազգային միավորումների և արտասահմանյան ընկերությունների կլանման վերջին տարիներին նկատվող միտումն է³:

ՎԱԿ-երի խոշորացման միտումը կապված է, առաջին հերթին, միաձուլումների և կլանումների հետ: Ներկայումս զարգացած երկրների տնտեսության յուրաքանչյուր ճյուղում գերակշիռ դիրք են գրավում 2-3 գերհսկաներ, որոնք միմյանց հետ մրցակցում են բոլոր երկրների շուկաներում:

Միաձուլումը ենթադրում է 2 հավասարազոր ֆիրմաների միավորում, իսկ կլանումը՝

¹ Долгов С.И., Транснациональные корпорации и прямые иностранные инвестиции как основа глобализации // Глобализация экономики: новое слово или новое явление? – М. 1998, стр. 25

² Հովհաննիսյան Ա., Ալվերդյան Ռ.. Արտաքին տնտեսական կապերի հիմունքներ: Ուս. ձեռնարկ.- Եր.: ԵրՃՇՊՀ հրատ., 2007.- 119 էջ

³ Мовсесян А., Либман А., Современные тенденции в развитии и управлении ТНК // «Проблемы теории и практики управления», 2004, №1, стр.34.

մի ֆիրմայի կողմից մեկ այլ ֆիրմայի գնում, որի արդյունքում առաջին ֆիրման դառնում է առավել խոշոր, իսկ երկրորդը դադարում է գործել: Միաձուլումների և կլանումների գլխավոր նպատակը սիներգիան է, այսինքն առավելությունը համատեղ գործունեությունից:

Ըստ ընկերությունների «ազգային պատկանելության»՝ միաձուլումները և կլանումները առանձնանում են **ազգային և արտասահմանյան** միաձուլումների և կլանումների: Առանձնացնում են նաև կլանումների **ազդեցիկ և «բարեկամական»** տեսակներ: Միաձուլումների տեսակներ են՝ **հորիզոնական, ուղղահայաց և կոնգլոմերատային**, կապված տարբեր կամ միևնույն ճյուղեր ունեցող ընկերությունների միաձուլման հետ:

Ընդունող երկրի տարածքում ամբողջովին օտարերկրյա ընկերության ստեղծումը մասնագետներն անվանում են ուղղակի էքսպանսիա, ինչն իրականացվում է ընդունող երկրում մասնաճյուղերի և դուստր ընկերությունների ստեղծման միջոցով¹: Այսպիսով, ՎԱԿ-երն այլ երկիր են տեղափոխում արտադրության և ապրանքի ստեղծման բուն տեխնոլոգիական գործընթացը:

Ազգային տնտեսությունների մեջ օտարերկրյա կապիտալի ներթափանցման հիմնական լծակներն են ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումներն են: Ներկայումս ՎԱԿ-երը, հանդես գալով որպես ժամանակակից համաշխարհային տնտեսության և ՄՏՀ անբաժանելի սուբյեկտ և արտադրական միջուկ, դարձել են կապիտալի համատարած ընդլայնման ակտիվ առաջատար: Օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) արտահանման մեջ գերակշիռ դերը պատկանում է ԱՄՆ-ին, Ճապոնիային, Չինաստանին, այնուհետև ԵՄ երկրներին² (Հավելված 1-2.):

Այսպիսով, երկիրը, ունենալով զարգացած արտադրական և սոցիալական ենթակառուցվածքներ, էժան և որակյալ աշխատուժ, բարենպաստ գործարար և ներդրումային միջավայր և հանդիսանալով տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիոն խմբավորման անդամ, կարող է օտարերկրյա ներդրողի համար լինել հենց այն երկիրը, որում այդ ներդրողը ցանկանում է իրականացնել ներդրումներ և դրա միջոցով էլ ներթափանցել տվյալ տարածաշրջան:

ՎԱԿ-երն այսօր իրենցից ներկայացնում են մոտ 82 հազար հիմնական (մայր) ընկերություններ, որոնք ունեն ավելի քան 820 հազար մասնաճյուղեր: 2012թ. տվյալներով ՎԱԿ-երի տեսակարար կշիռը տեղակայված է ԱՄՆ-ում (18%), Մեծ Բրիտանիայում (15%), Ֆրանսիայում (15%), Գերմանիայում (13%), և Ճապոնիայում (9%): Այլ երկրներին բաժին է ընկնում ՎԱԿ-երի 30%: Հետագա վերլուծություննում տեսանելի կլինի, թե ինչպես են իրավիճակը վերջի 3 տարիներին:

ՎԱԿ-երն իրենց գործունեությունը ծավալում են տարբեր ոլորտներում³ (Գծապատկեր 1.): ՎԱԿ-երի գերակշիռ մասը մասնագիտանում է ծառայությունների ոլորտում⁴:


¹ Семгина Г.Ю., Транснациональные процессы: XXI век/ Г.Ю Семгина. Институт сравнительной политологии РАН, Национальный общественно-научный фонд. М.: Современная экономика и право, 2004, стр. 132.

² www.unctad.org/fdistatistics

³ www.ft.com/ft500

⁴ Доклад о мировых инвестициях, 2015 год: Реформирование управления международными инвестициями.-Организация Объединенных Наций, Нью-Йорк и Женева, 2015. стр 9-10.

Գծապատկեր 1. ՎԱԿ-երի գործունեության հիմնական ոլորտներն



Չնայած նրան, որ ՎԱԿ-երը բավականին երիտասարդ երևույթ են՝ դրանց գործունեությունը՝ ունենալով մեծ ազդեցություն համաշխարհային տնտեսությունում, գտնվում է տնտեսական կազմակերպությունների և տարբեր կառույցների ուշադրության կենտրոնում: Աշխարհի ՎԱԿ-երի մասին տեղեկություններ, հրապարակումներ, ցուցակագրումներ են իրականացվում տարբեր ֆինանսա-տնտեսական ամսագրերի, հրատարակչությունների և միջազգային կառույցների կողմից:

Ըստ UNCTAD-ի, ՎԱԿ-երի թիվը 1960 թվականին կազմում էր միայն 10000: Ընդամենը 20 տարվա ընթացքում (1990 -2010թթ.) դրանց թիվը 35000-ից դարձել է 82000: Անշեղորեն աճում էր նաև մասնաձյուղերի և դուստր ընկերությունների թիվը՝ նույն ժամանակահատվածում այն աճել է 150000-ից մինչև 800000: Մինչև ժամանակ առաջատար և զարգացած տնտեսություններ ունեցող երկրների տարածքում հիմնված վերագրային կորպորացիաների թիվը կայունորեն նվազում է: Մասնավորապես դրա պատճառներից էր զարգացող երկրներում նորաստեղծ կորպորացիաների թվի աճը:

Աշխարհի արտոնագրերի և լիցենզիաների վերահսկողության 80% բաժին է ընկնում հենց վերագրային կորպորացիաներին: Նրանք իրականացնում են խոշոր ներդրումներ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական մշակումներում:

Այսօրվա միտումներից է նաև այն, որ համաշխարհային շուկայում առաջատար են համարվում միանշանակ ԱՄՆ կորպորացիաները: Դրա մասին վկայում է, օրինակ, Fortune ամսագիրը, որն ամեն տարի կազմում է FT Global 500՝ աշխարհի 500 խոշորագույն կազմակերպությունների ցուցակ: Այստեղ հիմնական չափանիշն է հանդիսանում ՎԱԿ-երի եկամուտները: Ըստ նրա աշխարհի 500 խոշորագույն կորպորացիաները կուտակեցին \$27.7 տրիլիոն եկամուտ, \$1.5 տրիլիոն՝ շահույթ: 500 ՎԱԿ-երում զբաղվածների թիվը կազմում է 67 մլն մարդ: Աղյուսակ 1-ում ներկայացված են ցուցակի առաջատարները 2016 թ.-ի դրությամբ: Աղյուսակ 1. Առաջատար ՎԱԿ-եր՝ ըստ Fortune ամսագրի (2016թ.)

№	Կորպորացիաներ	Եկամուտներ
1	<u>Walmart</u>	\$485,873
2	<u>State Grid</u>	\$315,199
3	Sinopec Group	\$267,518
4	<u>China National Petroleum</u>	\$262,573
5	Toyota Motor	\$254,694
№	Կորպորացիաներ	Եկամուտներ
6	Volkswagen	\$240,264
7	Royal Dutch Shell	\$240,033
8	Berkshire Hathaway	\$223,604
9	Apple	\$215,689
10	Exxon Mobil	\$205,004

500 դիտարկվող կազմակերպությունները գտնվում են աշխարհի տարբեր երկրներում: Առաջատար տասնյակում են՝ ԱՄՆ-ն (132), Չինաստանը (109), Ճապոնիան (51), Գերմանիան (29), Ֆրանսիան (29), Մեծ Բրիտանիան (21), Հարավային Կորեան (15), Նիդերլանդները (15), Շվեյցարիան (13) և Կանադան (11)¹:

Վերոնշյալը վկայում է, որ այսօր Միացյալ Նահանգները իսկապես անվիճելի առաջատարն են իրենց տարածքում հիմնված խոշոր ընկերությունների թվաքանակով և եկամտաբերությամբ: Եվ այդ առաջատարությունը շարունակվում է տասնամյակներ: 1960-ական թվականներին, համաշխարհային օտարերկրյա ուղղակի ներդրումների 66.3% -ը կազմել է Միացյալ Նահանգներում հիմնված ընկերությունները: Սակայն համաշխարհային շուկայում ամերիկյան կորպորացիաների զգալի ազդեցությունը մեծ դժգոհություն էր առաջացրել մի շարք եվրոպական երկրներում, որոնք բացասաբար էին դիտարկում ԱՄՆ կորպորացիաների էքսպանսիան²:


ԱՄՆ-ից ուղղակի ներդրումների կրճատման, միջազգային առևտրի ազատականացման և երկրների միջև տնտեսական խոչընդոտների կրճատման արդյունքում այլ երկրները նույնպես ստացան հնարավորություն դուրս գալ համաշխարհային շուկա, կատարեն ուղղակի ներդրումներ, բացեն մասնաճյուղեր: Ամերիկյան ընկերությունները դեռևս առաջատարներ էին, սակայն նրանց առաջատարությունը այլևս անվերապահ չէր:

Global 500-ի կամակերպությունների մեծամասնության գործունեության ոլորտներից առանձնացել են հատկապես բանկային և ֆինանսական ծառայությունները, նավթի և գազի արդյունաբերությունը, դեղագործության և քիմիական արդյունաբերությունը, տեխնոլոգիաները, ծրագրային ապահովումները և համակարգչային ծառայությունները, ավտոմեքենաշինությունը, զանգվածային լրատվական միջոցները, ընդհանուր մանրածախ վաճառքը և այլ տեսակի ծառայություններ: Գծապատկեր 2-ում կարելի է տեսնել դրանց տոկոսային հարաբերակցությունը:

¹ www.fortune.com/global500

² The economics of multinational enterprise.- Hood N., Zoung S. London; N.Y.: Longman, 1979, 57p.

Գծապատկեր 2. Խոշորագույն կորպորացիաների բաշխվածությունը ըստ ոլորտների, 2016թ.




Forbes ամսագրի կողմից յուրաքանչյուր տարի կազմվող ցուցակը (Forbes Global 2000) տպագրվում է 2003 թվականից և դրա առանցքային ցուցանիշներն են ձեռնարկության շուկայական արժեքը, զուտ շահույթը, հասույթի և ակտիվների մեծությունը: 2016 թ. 2000 ՎԱԿ-երի համախառն ցուցանիշներն են՝ \$2,4 տրլն. շահույթ, հասույթը կազմեց \$35 տրլն., ակտիվների համախառն մեծությունը կազմում է \$163 տրլն., իսկ կապիտալիզացման համախառն մեծությունը՝ \$44 տրլն: Ցուցակի ՎԱԿ-երը տեղակայված են աշխարհի 63 երկրների սահմաններում, ընդ որում ԱՄՆ-ին բաժին են ընկնում 565 ընկերություն, Չինաստանին (ներառյալ Հոնգ Կոնգը)՝ 263, Հապոնիային՝ 229: 2017թ. առաջատարներն են չինական և ամերիկյան կորպորացիաները: 10-յակը կարողացավ հատել միայն Հապոնական Toyota-ն: Առաջի երեք տեղերը զբաղեցնում են խոշոր չինական բանկերը՝ Industrial & Commercial Bank Of China, China Construction Bank և: Չինաստանի տնտեսության դանդաղեցման հետևանքով Agriculture Bank of China-ն իր 3-րդ տեղը զիջեց, հայտնվելով 6-րդ հորիզոնականին, իսկ Bank of China-ն տեղափոխվեց 6-րդ հորիզոնականից 8-րդը: Դա հնարավորություն տվեց Berkshire Hathaway ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությանը և JP Morgan Chase բանկին զբաղեցնել 3-րդ և 4-րդ տեղերը: 5-րդ և 7-րդ հորիզոնականները զբաղեցրել են ամերիկյան Wells Fargo և Bank of America բանկերը: Ցանկը եզրափակում են Apple և Toyota Motor կորպորացիաները¹ (Հավելված 3.):

Այժմ դիտարկենք խոշոր ՎԱԿ-երը ըստ դրանց տեղակայվածությանը: Forbes ամսագրի համաձայն 2016 թ. 2000 խոշորագույն ՎԱԿ-երը գտնվում են աշխարհի 61 երկրներում: Դրանց գերակշռող մասը պատկանում է ԱՄՆ-ին, Չինաստանին, Հապոնիային, Միացյալ Թագավորությանը և Հարավային Կորեային:

¹ www.forbes.com/global2000/list

Գծապատկեր 3. Հնգյակի ՎԱԿ-երի տեսակարար կշիռը



Ըստ մայրցամաքներում տեղակայվածության Ասիային բաժին է հասել ՎԱԿ-երի ընդհանուր թվի 40%, Հյուսիսային Ամերիկային՝ 32%, Եվրոպային՝ 22%, Հարավային Ամերիկային, Օվկյանիային և Աֆրիկային՝ համապատասխանաբար 3, 2 և 1 %-եր:


Աղյուսակ 2. ՎԱԿ-երի տեղակայվածությունը ըստ մայրցամաքների

Մայրցամաք	Ընկերությունների քանակ	Հասույթ (մլրդ)	Շահույթ (մլրդ)	Ակտիվներ (մլրդ)	Շուկայական արժեք (մլրդ)
Ասիա	794	13346.061	55243.44	1016.883	13549.427
Հյուսիսային Ամերիկա	638	12835.446	44368.26	1109.178	21129.388
Եվրոպա	451	11063.383	54868.71	644.619	11293.892
Հարավային Ամերիկա	63	1063.718	3331.248	54.821	890.251
Օվկյանիա	34	529.227	3796.8	65.566	896.2
Աֆրիկա	21	133.802	637.3	19.829	315
Ընդամենը	2001	38971.637	162245.8	2910.896	48074.158

2016 թ.-ի ընդհանուր մասնակից 61 երկրից հնգյակը կարողացավ պահպանել նախկին առաջատար դիրքերը (Հավելված 4.): Ընդհանրացված տեսքով ՎԱԿ-երի համախառն ցուցանիշներն են՝ հասույթի մեծություն՝ \$ 35.16 տրլն, շահույթի մեծություն՝ \$ 2.41 տրլն, շուկայական արժեք՝ \$ 44.45 տրլն, ակտիվների մեծություն՝ \$ 161.61 տրլն:

Համաշխարհային տնտեսության կարևոր միտումներից է աճի տեմպերի կտրուկ դադարեցումը: Կարելի է վիճել, թե որքան խորն է այն, բայց այդ փաստը ինքնին անվիճելի է: Անհրաժեշտություն է ծագում մտածել այն մասին, թե որքանով հետխորհրդային երկրների տնտեսական զարգացումը նոր պայմաններում հնարավոր: Եվրասիական երկրների տնտեսության կառուցվածքը ստեղծում է հետևյալ իրավիճակը՝ պահպանելով հետխորհրդային երկրների տնտեսական զարգացման առկա մոդելները, հետխորհրդային տարածքում տնտեսական աճի տեմպերը մշտապես կիջնեն համաշխարհային միջին մակարդակից: Դրա հետ կամ պետք է համակերպվել, կամ էլ փոխել զրգացման մոդելը:

Գծապատկեր 4. Հնգյակի ՎԱԿ-երի տոկոսային բաշխվածությունը, 2016թ.



Մոտ ապագայում դժվար կլինի ռեսուրսներ ձեռք բերել Եվրասիայում ցանկացած արդիականացման կարևոր ծրագրերի իրականացման համար: Եթե Չինաստանում տնտեսական աճի կրճատումը և իր ֆինանսական շուկաների փլուզումը իրականություն դառնան, ապա Եվրասիայի երկրները պետք է պատրաստ լինեն ֆինանսական ռեսուրսների կայուն պակասի պայմաններում զարգանալուն: Տնտեսական աճի արագացման համար մենք ստիպված կլինենք հիմնականում օգտագործել այն ռեսուրսները, որոնք առկա են Եվրասիայում, իր տարբեր երկրներում և արդյունաբերություններում: Գիտակցելով միաժամանակ, որ զարգացման համար ռեսուրսները միայն ազգային շրջանակում գրեթե սպառված են և անհրաժեշտ է այլընտրանքային հնարավորություններ փնտրել: Դրա լուծումներից մեկն է **Եվրասիայի կորպորացումը**:

Այն խոշոր վերազգային կորպորատիվ ընկերությունների ստեղծումն է, ոլորտային կամ տրանս-ոլորտային հիմունքներով՝ ինչը տնտեսական ինտեգրման գործընթացների բնական շարունակությունն է միջպետական մակարդակով կայուն զարգացման դժվարության հետ:

Եվրասիան կարող է և պետք է դառնա խոշոր կորպորացիաների տեղակայման վայր, որը կկարողանա ազդել համաշխարհային մակրոտնտեսական միջավայրի վրա: Իհարկե, «Եվրասիական կորպորատիվ տարածության» ձևավորումը պետք է տեղի ունենա շուկայական հիմունքներով և շուկայական պայմաններում գործողությունների համար:

Իհարկե, մի շարք ոլորտներում մրցակցությունը Եվրասիայի երկրների միջև այնպիսին է, որ երկար ժամանակ անհնար կլինի միասնական կորպորատիվ կառույցներ ստեղծել: Հնարավոր չի լինի նաև, կորպորացումը այնպիսի ոլորտներում, որոնք քաղաքականապես զգայուն են համարվում:

Սակայն կարելի է նշել մի շարք ոլորտություններ, որոնք նպատակահարմար կլինեն Եվրասիական երկրների միասնական գործունեության համար: Դրանցից են.

1) **Վերին սահմանների ածխաջրածինների քիմիա**՝ հաշվի առնելով նավթային շուկայում միտումները ԵՏՄ պետությունների մեծ մասի խնդիրներից մեկը ածխաջրածինների օգտագործման զգալի ընդլայնումն է: Միասնական տնտեսական գոտու շրջանակներում առաջնահերթությունը պետք է մնա հավասարակշռված գնի և որակի հարաբերակցությունը: Այս խնդրի լուծման գործիքն է խոշոր նավթաքիմիական կորպորացիայի ստեղծումը և լայնամասշտաբ հետազոտական և մարկետինգային գործունեության իրականացումն է:

2) **Բազմատեսակ ագրոքիմիա**՝ համաշխարհային շուկայում մրցակցության խորացումը հանգեցնում է համաժողովրդական ագրոքիմիական կորպորացիայի ստեղծմանը, առաջին հերթին՝ համաշխարհային գյուղատնտեսական շուկայում մրցակցության խորացման հիման վրա: Խորհրդային տեխնոլոգիական ժառանգությունը դադարում է լինել արդի: Այս դեպքում ցանկալի կլինեն, արդյունավետ և էկոլոգիապես մաքուր ագրոքիմիայի համար նոր ստանդարտներ ձևավորման գործընթացը:

Իհարկե, տնտեսության այս մեկ կամ երկու մասնաճյուղերն Եվրասիայում ավելի լայն կորպորատիվ շինարարության ընդամենը առաջին քայլերն են: Հատկապես հաշվի առնելով, որ Եվրասիական կորպորատիվ կազմակերպությունները կձևավորվեն ոչ եկամտաբեր և նշանակալի ոլորտներում: Սակայն այս ոլորտներում նոր կորպորատիվ նախագծերի իրականացումը հնարավորություն կտա մշակել դրանց համար ճիշտ մեխանիզմներն ու հասկանալ հնարավոր ռիսկերը:

Կորպորացումը անխուսափելիորեն պահանջում է համագործակցության կտրուկ աճ նաև ֆինանսական և ներդրումային ոլորտում: Այն ներառում է հնարավոր ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունից մեր տնտեսական տարածքի պաշտպանությանն ուղղված տեխնոլոգիական միջոցառումների իրականացումը:

Այլ կերպ ասած, պետք է հնարավոր լինի սահմանափակել համաշխարհային շուկաների ազդեցությունը ներքին ֆինանսական պայմաններում, ինչպես իրենց երկրներում, այնպես էլ ամբողջ Եվրասիայում:

Օգտագործված գրականության ցանկ


1. Հովհաննիսյան Ա., Ալավերդյան Ռ.. Արտաքին տնտեսական կապերի հիմունքներ: Ուս. ձեռնարկ.- Եր.: ԵրՃՇՊՀ հրատ., 2007.- 119 էջ:
2. Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ., Նազարյան Գ., Միջազգային տնտեսական հարաբերություններ. - Եր., ԱՌՏ. 2012. 98 էջ:
3. Доклад о мировых инвестициях, 2015 год: Реформирование управления международными инвестициями. - Организация Объединенных Наций, Нью-Йорк и Женева, 2015. 63 с.
4. Долгов С.И., Транснациональные корпорации и прямые иностранные инвестиции как основа глобализации // Глобализация экономики: новое слово или новое явление? – М. 1998, 379 с.
5. Мовсесян А., Либман А., Современные тенденции в развитии и управлении ТНК // «Проблемы теории и практики управления», 2004, №1, 315 с.
6. Семгина Г.Ю., Транснациональные процессы: XXI век/ Г.Ю Семгина. Институт сравнительной политологии РАН, Национальный общественно-научный фонд. М.: Современная экономика и право, 2004, 344 с.
7. The economics of multinational enterprise. Hood N., Zoung S. London; N.Y.: Longman, 1979, 432 p.
8. www.forbes.com/global2000/list
9. www.fortune.com/global500
10. www.ft.com/ft500
11. www.unctad.org/fdistatistics

Հավելվածներ

Հավելված 1. ՕՈԻՆ արտահանող 20 խոշոր երկրներ (2014-2015թթ.)

Դիրքը		Երկիր	ՕՈԻՆ արտահոսք, մլրդ. Դոլար	
2015	2014		2015	2016
1	1	ԱՄՆ	299	303
2	5	Չինաստան	183	128
3	3	Նիդերլանդներ	174	138
4	4	Ճապոնիա	145	129
5	9	Կանադա	66	67
6	8	Հունկոնգ	62	72
7	12	Ֆրանսիա	57	44
8	2	Իռլանդիա	45	166
9	11	Իսպանիա	42	44
10	7	Գերմանիա	35	93
11	10	Լյուքսեմբուրգ	32	50
12	6	Շվեյցարիա	31	104
13	17	Հարավային Կորեա	27	24
14	15	Ռուսաստանի Դաշնություն	27	27
15	13	Սինգապուր	24	31
16	21	Շվեդիա	23	15
17	18	Իտալիա	23	20
18	186	Ֆինլանդիա	23	-16
19	14	Բելգիա	18	30
20	22	Թայվան	18	15

Հավելված 2. ՕՈԻՆ արտահանող 20 խշոր երկրներ (2014-2016թթ.)



Հավելված 3. 2016թ. Forbes Global 2000 առաջատար տասնյակ

	ՎԱԿ	Երկիր	Հասույթ (մլրդ)	Շահույթ (մլրդ)	Ակտիվներ (մլրդ)	Շուկայական արժեք (մլրդ)
1	Industrial & Commercial Bank Of China	Չինաստան	\$151.4	\$42	\$3473.2	\$229.8
2	China Construction Bank	Չինաստան	\$134.2	\$35	\$3016.6	\$200.5
3	Berkshire Hathaway	ԱՄՆ	\$222.9	\$24.1	\$620.9	\$409.9
4	JPMorgan Chase	ԱՄՆ	\$102.5	\$24.2	\$2513	\$306.6
5	Wells Fargo	ԱՄՆ	\$97.6	\$21.9	\$1943.4	\$274.4
6	Agricultural Bank of China	Չինաստան	\$115.7	\$27.8	\$2816	\$149.2
7	Bank of America	ԱՄՆ	\$92.2	\$16.6	\$2196.8	\$231.9
8	Bank of China	Չինաստան	\$113.1	\$24.9	\$2611.5	\$141.3
9	Apple	ԱՄՆ	\$217.5	\$45.2	\$331.1	\$752
10	Toyota Motor	Ճապոնիա	\$249.9	\$17.1	\$412.5	\$171.9

Երկիր	Ընկերություն- ների քանակ	Հասույթ (մլրդ)	Շահույթ (մլրդ)	Ակտիվներ (մլրդ)	Շուկայա- կան արժեք (մլրդ)
ԱՄՆ	586	11548.994	889	39277.9	19651.455
Չինաստան	249	4581.78	471.412	28261.689	5015.574
Ճապոնիա	219	3940.533	186.301	17638	3058.177
Միացյալ Թագավորություն	92	1789.889	88.651	12364.8	2186.5
Հարավային Կորեա	67	1257.2	60.504	3448.5	736.492
Ընդամենը	1213	23118.396	1695.385	100990.898	30648.198

Հավելված 4. Առաջատար հնգյակ՝ ըստ ՎԱԿ-երի քանակի, 2016թ

ՀՏՂ331(479.243)

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՀ-ՈՒՄ

Եվգենյա Համբարձումյան
Արցախի Պետական Համալսարան
Գիտական ղեկավար՝ Ռ.Յ. Մանգասարյան
Էլ. ասցե: evgeniaa_96@mail.ru

Բանալի բառեր՝ սոցիալական աջակցություն, օգնություն, համակարգ, նպաստ, նպաստառու, կենսաթոշակ, կենսաթոշակառու, բարեգործություն, ապահովություն:

Ключевые слова: социальная поддержка, помощь, система, пособия, пенсионер, пенсия, бенефициар, благотворительность, безопасность .

Keywords: social support, helping, system, benefit, beneficiary, retirement, pensioner, charity, security.

Ամփոփում

Հոդվածում դիտարկվել են սոցիալական աջակցության, պետական նպաստների և կենսաթոշակային համակարգի առանձնահատկությունները ԱՀ-ում, հիմնական ցուցանիշները, կատարվել է ԱՀ վիճակագրական տվյալների ընդհանրացում և վերլուծություն, որի ընթացքում կիրառվել են համեմատական և վիճակագրական վերլուծությունների մեթոդներ:

Евгения Амбарцумян
Арцахский Государственный Университет
Научный руководитель Р.Я. Мангасарян
е-почта: evgeniaa_96@mail.ru

ОСОБЕННОСТИ СИСТЕМЫ СОЦИАЛЬНОЙ ПОДДЕРЖКИ В РА

Резюме

В статье рассмотрены особенности социальной помощи, государственных пособий и пенсионной системы в стране, основные показатели, обобщение и анализ статистических данных Арцахской республики, и в ходе которых использовались методы сравнительного и статистического анализа.

Evgenia Hambardzumyan
Artsakh State University
Scientific director R. Y. Mangasaryan
e-mail: evgeniaa_96@mail.ru

THE FEATURES OF THE SOCIAL SUPPORT SYSTEM IN RA

Summary

The article deals with the features of social support, state benefits and pension system in the country, key indicators, generalization and analysis of the statistics of the Artsakh Republic, during which comparative and statistical methods of analysis were used.

Շուկայական տնտեսության անցման փուլում ԱՀ առջև ծառացած մարտահրավերները մեծաթիվ են ու ավելի բարդ՝ պայմանավորված աշխարհագրական, տարածաշրջանային, սոցիալական և տնտեսական հիմնախնդիրներով, որոնք բավականին դժվար լուծելի են տնտեսական զարգացման ձևավորված հետագծի պահպանման դեպքում: ԱՀ-ն իր անկախությունը ստեղծել է իրավիճակներից բխող այնպիսի հիմնախնդիրների լուծման ճանապարհով, ինչպիսիք էին պատերազմի հետևանքով քայքայված տնտեսության վերականգմանն ուղղված բազմաթիվ ծրագրերի մշակումը, մրցակցային միջավայրի բարելավմամբ, ինչպես նաև արդյունաբերական քաղաքականության արդյունավետ իրականացումը: Այս տեսանկյունից կարևորվում է սոցիալական քաղաքականության իրականացումը, մասնավորապես սոցիալական աջակցության համակարգը, որը պետք է

նպաստի առաջ եկող սոցիալական հիմնախնդիրների լուծման միջոցով հասարակության անդամների կենսապայմանների և ապրելակերպի օպտիմալ զարգացմանը:

Ընդհանուր առմամբ սոցիալական պաշտպանության համակարգը ԱՀ-ում բաժանվում է երկու մասի՝ սոցիալական ապահովագրություն և սոցիալական օգնություն: Սոցիալական պաշտպանությունը ԱՀ-ում իրականացվում է ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության կողմից, որը պատասխանատվություն է կրում աշխատանքի և սոցիալական պաշտպանության համակարգի բոլոր ճյուղերի (բացի առողջապահության) քաղաքականության մշակման և իրականացման համար: Ներկա դրությամբ ԱՀ-ում իրականացվել են մի շարք ՊՄԳ (պետության և մասնավոր հատվածի միջև համագործակցություն) ծրագրեր՝ մասնավորապես էներգետիկայի, հեռահաղորդակցության, տրանսպորտի, քաղաքաշինության և այլ ոլորտներում: Վերոնշյալ մոդելներից կիրառվել են կոնցեսիայի (հեռահաղորդակցության ոլորտում), նոր շինարարություն նախատեսող ծրագրեր, կառավարման ու վարձակալության պայմանագրեր և այլն:

Ինչ վերաբերում է սոցիալական օգնությանը, ապա այն ըստ էության նպատակաուղղված է անհավասարության նվազեցմանը և աղքատության կանխմանը: Սոցիալական աջակցություն ստանալու իրավունք ունեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ԱՀ քաղաքացիները, ԱՀ կացության համապատասխան կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, ինչպես նաև Արցախի հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք: Որպես կանոն, սոցիալական օգնության համակարգը խնամակալության, փոխօգնության ինստիտուտ է՝ այստեղից բխող պետական ուղղակի կառավարման յուրահատկություններով: Դրանցից մեկը մարդասիրական օգնությունն է: Ներկայացնենք ԱՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալներն ըստ երկրների: Աղյուսակ 1 / [1]

Աղյուսակ 1 ԱՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալներն ըստ երկրների


	Արժեքը. հազ. դրամ		Տեսակարար կշիռը. %	
	2016թ. հունվար դեկտեմբեր	2017թ. հունվար դեկտեմբեր	2016թ. հունվար դեկտեմբեր	2017թ. հունվար
Ընդամենը	493441.4	194688.2	100.0	100.0
<i>առ թվում՝</i>				
ՌԴ	258132.6	83501.1	52.3	42.9
ՀՀ	144834.8	65747.8	29.4	33.8
Գերմանիա	7586.7	17031.4	1.5	8.7
ԱՄԷ	-	16853.7	-	8.7
Ֆրանսիա	-	5596.8	-	2.9
ԱՄՆ	77558.8	4137.6	15.7	2.1
Չինաստան	-	1819.8	-	0.9
Շվեյցարիա	4008.7	-	0.8	-
Նիդերլանդներ	1319.8	-	0.3	-

ՀՀ-ում և ԱՀ-ում մարդասիրական օգնության բաշխումը կազմակերպվել է <<Փարոս>> համակարգի շրջանակներում, որը տեղեկատվական հզոր հիմք ունեւ յուրաքանչյուր հայ ընտանիքի վերաբերյալ:

Սոցիալական օգնության իրացման մյուս ձևը ընտանեկան նպաստների ծրագիրն է: ԱՀ-ում 2009թ. վերանայվել է **պետական նպաստների համակարգը**: Սահմանվել են պետական նպաստի բազային չափեր և դրանց բազմապատիկ գործակիցներ: Տարբերակված ավելի արտոնյալ մոտեցում է ցուցաբերվել Քաջաթաղի և Շահումյանի շրջանների բնակիչների նկատմամբ: Ընդլայնվել և առավել մատչելի է դարձվել պետական նպաստներից օգտվողների

շրջանակը: 2009թ-ից պետական նպաստ է նշանակվում նաև այն անձանց, ում ծնողներից գոնե մեկն ունի ԱՀ մշտական հաշվառում: Ըստ ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության ամփոփ տեղեկատվության 2018թ. հունվարի 1-ի դրությամբ նպաստառու երեխաների ընդհանուր թիվը կազմել է 18899 և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 0.5 տոկոսով: Մեկ երեխայի հաշվով ամսական նպաստի միջին չափը կազմել է 11706 դրամ՝ նախորդ տարվա հունվարի 1-ի 11726 դրամի դիմաց: Գծանկար 1-ում ներկայացված են 2010թ.-2017թ. ԱՀ նպաստառու ընտանիքների քանակի և մեկ ընտանիքի ամսական նպաստի չափի փոփոխությունները: /Գծապատկեր 1/ [2]

Գծապատկեր 1.ԱՀ նպաստառու ընտանիքների քանակի և մեկ ընտանիքի ամսական նպաստի չափի փոփոխությունները



Եթե փորձենք համեմատության մեջ դնել ԱՀ-ում 1-ին երեխայի ծնունդի համար տրվող նպաստի չափը այլ զարգացած և զարգացող երկրների համապատասխան ցուցանիշի հետ, ապա կտեսնենք, որ դրանք բավականին տարբեր են, ընդ որում ԱՀ և ՀՀ զիջում են: /Աղյուսակ 2 / [3]

Աղյուսակ 2 1-ին երեխայի ծնունդի համար տրվող նպաստի չափը տարբեր երկրներում

Պետությունը	1-ին երեխայի ծնունդի համար տրվող նպաստի չափը, հազար դրամ
1. Գերմանիա	110768
2. Լեհաստան	72240
3. Մեծ Բրիտանիա	63210
4. Ֆինլանդիա	57117
5. ՌԴ	20659
6. Ֆրանսիա	---72240 (2-րդ երեխայի դեպքում)
7. Հնդկաստան	---48060 (Մինչև երեխայի ծնունդը)
8. ՀՀ	12394
9. ԱՀ	11706

Սոցիալական օգնության դրսևորման ևս մի ձև է բարեգործական գործունեությունը: 1998թ. սկզբին Հայաստանում կար մոտ 30 կազմակերպություն, որոնք զբաղվում էին բարեգործությամբ, որոնք իրենց գործունեությունն էին ծավալում նաև Արցախի հանրապետությունում: Հետպատերազմյան շրջանում և հատկապես վերջին տարիներին

բարեգործությունը նոր թափ է ստացել Արցախում, ինչը ողջունելի է և արժանի համապատասխան գնահատանքի: Կարևորելով բարեգործության դերը ավերածություններից վերականգնվող մեր հանրապետությունում, ԱՀ իշխանությունները որդեգրել են բարեգործության իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները կարգավորելուն պատասխան ակտիվ քաղաքականություն իրականացնելու սկզբունք:

Արցախում բարեգործական բնագավառի համակարգման և բարեգործության կարգավորման իրավական հիմքերը սահմանելու անհրաժեշտությունից ելնելով էլ 2007թ. հուլիսի 21-ին ընդունվեց «Բարեգործության մասին» ԱՀ օրենքը: ԱՀ վարչապետի որոշմամբ հաստատվել է ԱՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կազմը: Յուրաքանչյուր տարվա արդյունքներով հանձնաժողովը հանդես է գալիս հաշվետվությամբ, որը իր գործունեության ընթացքում համագործակցում է ինչպես ԱՀ պետական մարմինների, այնպես էլ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և տարբեր պետություններում մշտական ներկայացուցիչների հետ: Ընդ որում, նախարարության համապատասխան ստորաբաժանման միջոցով բարերարներին և բարեգործական կազմակերպություններին ներկայացնելու նպատակով 2008թ. առաջին անգամ մշակվել է սոցիալական ոլորտի եռալեզու 11 բարեգործական ծրագիր: 2016թ.-ի ընթացքում բարեգործական են որակվել մոտ 100 ծրագրեր: Ըստ բնագավառների բարեգործական ծրագրերը ունեն հետևյալ տեսքը/Աղյուսակ 3/[4]


2016թ. ԱՀ բարեգործական ծրագրերի բաժինները	
Ճանապարհաշինություն	32.9 %
Մշակույթ	13.2 %
Կրթություն	9.0 %
Սպորտ	2.1 %
Գյուղատնտեսություն	0.8 %
Առողջապահություն	0.7 %

Հայկական մի քանի ավանդական բարեգործական հիմնադրամներ մեծ ընդգրկման բարեգործություն են իրականացնում ՀՀ և ԱՀ տարածքում, որը բխում է այդ հիմնադրամների ընդհանուր ռազմավարությունից և ծրագրերից (օրինակ Հայ օգնության հիմնադրամը): ԱՀ-ում բավականին մեծ գործունեություն է ծավալել նաև «Տաշիր» բարեգործական հիմնադրամը, որի միջոցներով Ստեփանակերտի կենտրոնում սկսվել են արդի չափանիշներին համապատասխան մշակույթի կենտրոնի նոր շենքի կառուցման աշխատանքները:

Հաջորդ ուղղությունը սոցիալական ապահովագրությունն է, որը բնակչության սոցիալական աջակցության և սոցիալական պաշտպանության հիմնական ձևերից մեկն է: Հանրապետությունում գործող աոցիալական ապահովագրության ամենաձավալուն ոլորտը պետական կենսաթոշակների համակարգն է: Ըստ ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության ամփոփ տեղեկատվության, 2017թ. տարեվերջին կենսաթոշակառուների թվաքանակը կազմել է 31340 մարդ, որոնցից աշխատանքային և սոցիալական կենսաթոշակառուների թվաքանակը կազմել է 23073, զինշատայության հետ կապված կենսաթոշակառուների թվաքանակը՝ 8267 մարդ: Կենսաթոշակառուներին նշանակված կենսաթոշակի միջին չափը կազմել է 42939 դրամ: ԱՀ-ում սահմանված է 2 տեսակի կենսաթոշակ՝ աշխատանքային (տարիքային, երկարամյա ծառայության, հաշմանդամության) և սոցիալական (ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում): ԱՀ-ում ՀՀ -ի օրինակով 2008թ.-ի հունվարից սկսել է ներդրվել անհատական հաշվառման համակարգ, որով հանրապետության յուրաքանչյուր ապահովագրված քաղաքացու համար բացվում է նրա ստաժի, աշխատավարձի և կատարած հատկացումների մասին հաշիվ: Ներկայացնենք 2010թ.-2017թ. ԱՀ կենսաթոշակառուների

թվաքանակի և կենսաթոշակի միջին ամսական չափի փոփոխությունները: /Գծապատկեր 2/[5]

Գծապատկեր 2 2010թ.-2017թ. ԱՀ կենսաթոշակառուների թվաքանակի և կենսաթոշակի միջին ամսական չափի փոփոխությունները



Եթե փորձենք համեմատության մեջ դնել ԱՀ-ում կենսաթոշակի միջին ամսական չափը զարգացած և զարգացող երկրների համապատասխան ցուցանիշի հետ, ապա կտեսնենք, որ դրանք իրարից բավականին շատ հեռու են: /Աղյուսակ 4/ [6]

Աղյուսակ 4

ԱՀ-ում կենսաթոշակի միջին ամսական չափը տարբեր երկրներում

Պետությունը	Կենսաթոշակի միջին ամսական չափը, հազար դրամ
1. ՄեծԲրիտանիա	971000
2. ԱՄՆ	738250
3. Ֆրանսիա	602000
4. Գերմանիա	582000
5. ՌԴ	97100
6. Չինաստան	72825
7. ԱՀ	42939
8. Վրաստան	19420

Հանրապետության սոցիալական ապահովության համակարգում վերջերս իրականացվել են բարեփոխումներ կապված տեղեկատվական տեխնոլոգիաների հետ: Այդ միջոցը սոցիալական ապահովության քարտերի համակարգն է, որի կիրառմամբ ակնկալվում է.

1. պարզեցնել կենսաթոշակներ ենթաստիճանալու համար դիմելու ձևը,
2. արագ, առանց քաշքշուկի ստուգել տարբեր սոցիալական հատուցումների համար տրվող դիմումներում նշված տեղեկատվությունը,
3. աշխատողների համար գրանցել ստաժը, աշխատավարձը, կատարած սոցվճարները՝ կենսաթոշակի չափը հետագայում դրանցով հաշվելու համար:

Նաատեսվում է, որ առաջիկա տարում ԱՀ-ում անցում կկատարվի պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի: Ըստ օրենքի, 2019 թվականից համակարգն Արցախում դառնալու է պարտադիր 1974 թվականի հունվարի 1-ից ծնված անձանց համար: Այդ համակարգի հիմնական էությունն է ապահովել ավելի բարձր կենսաթոշակներ

կենսաթոշակների աղբյուրների բազմազանության հաշվին՝ ոչ միայն պետական բյուջեից թոշակ վճարելով, այլև համապատասխան եկամուտների և հիմնադրամների վճարումների շնորհիվ: [7]

Եզրակացություններ և առաջարկություններ՝

1. ԱՀ-ում սոցիալական աջակցության ծրագրերը ունեն ռազմավարական կարևոր նշանակություն երկրի տնտեսական զարգացման տեսանկյունից, քանի որ մեծապես ազդում են բնակչության բարձր կենսամակարդակի ապահովման վրա: Այն նաև հանդիսանում է երկրում տնտեսության զարգացման, զբաղվածության ապահովման և բնակչության ընդհանուր կենսամակարդակը պայմանավորող կարևորագույն ոլորտներից մեկը:

2. ԱՀ-ում կենսաթոշակային համակարգը որոշ բարեփոխումների կարիք ունի: Օրինակ առաջարկում ենք որպեսզի նվազագույն կենսաթոշակի չափը գոնե հավասար լինի ապրուստի նվազագույնին:

3. Անհրաժեշտ է հնարավորինս շատացնել բարեգործական ծրագրերի իրականացումը ԱՀ-ում, քանի որ ինչպես տեսնում ենք բավականին շատ խնդիրներ լուծվում են հենց բարեգործական ծրագրերի միջոցով:

Գրականություն

[1]- www.stat-nkr.am

[2]- www.stat-nkr.am

[3]- www.posobie-expert.ru

[4]- www.mss.nkr.am

[5]- www.stat-nkr.am

[6]- www.the-village.ru

[7]- www.artsakhpress.am

ՀՏԴ33(479.243)

**ՓՄՁ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ՄԱԿԱՐԴԱԿԸ
ԱՀ-ՈՒՄ**

Լիդա Միրզոյան

ԱրՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ,

Ֆինանսներ 4-րդ կուրս

Էլ. հասցե: mirzoyan.lida.lm@mail.ru

Գիտական ղեկավար՝ Եվ. Հայրիյան, տ.գ.թ., դոցենտ

Բանալի բառեր՝ փոքր և միջին ձեռնարկատիրություն, պետական աջակցություն, ՓՄՁ-երին տրվող վարկեր, ՓՄՁ սուբյեկտների թիվ, շուկայում ապրանքների առաջմղում

Ключевые слова: малое и среднее предпринимательство, государственная поддержка, кредиты для МСП, количество МСП, продвижение товара на рынке

Keywords: small and medium entrepreneurship, economic development, promotion of goods on the market, credits for SME, quantity of SME

Ամփոփում

Հոդվածում դիտարկվել է փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության մեխանիզմների ձևավորված մակարդակը, գնահատվել ՓՄՁ պետական աջակցության ծրագրերի արդյունավետությունը վերջին յոթ տարիների ընթացքում, ուսումնասիրվել է ՓՄՁ ոլորտի մասնակցությունը ՀՆԱ-ի մեջ, վեր են հանվել այս ոլորտում առկա հիմնախնդիրները:

Лида Мирзоян

УРОВЕНЬ ПОДДЕРЖКИ МАЛОГО И СРЕДНЕГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В РА

Резюме

В статье рассмотрен уровень поддержки малого и среднего предпринимательства в РА, оценена эффективность программ государственной поддержки малого и среднего предпринимательства за последние семь лет, исследовано участие малого и среднего предпринимательства в формировании ВВП, раскрыты проблемы, которые существуют в сфере МСП.

Lida Mirzoyan


THE LEVEL OF SUPPORT OF SMALL AND MEDIUM ENTREPRENEURSHIP

Summary

The article examined the level of support of small and medium entrepreneurship in Republic of Artsakh, evaluated the efficiency of the program of government support for small and medium entrepreneurship in last seven years, investigated participation of SME in creation of GDP, and found key issues in sphere of SME.

Յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման գործում մեծ դեր և նշանակություն ունի փոքր և միջին ձեռնարկատիրությունը: ՓՄՁ-երը հանդիսանում են հիմնական աշխատատեղ ստեղծողները և զգալի մասնաբաժին ունեն ՀՆԱ-ում, ուստի մեր երկրում բավականին մեծ ուշադրություն է դարձվում այս ոլորտի զարգացմանը: Անկախության հռչակումից ի վեր, պետությունը քայլեր է ձեռնարկում ՓՄՁ աջակցության մեխանիզմների ձևավորման և ոլորտի իրավական կարգավորման ուղղությամբ: Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության նպատակը ԱՀ սոցիալ-տնտեսական և տարածքային կայուն զարգացումն է: Այս ոլորտում կարևորագույն ձեռքբերում է համարվում այնպիսի կառույցների ստեղծումը, ինչպիսիք են՝ Արցախի ներդրումային հիմնադրամը և Գյուլի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը:[1]ԱՀ-ի փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության ծրագիրը իր մեջ ընդգրկում է հետևյալ ծրագրերը.


• **ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագիր**- այն հնարավորություն է տալիս ֆինանսական ռեսուրսները ավելի մատչելի դարձնել ՓՄՁ սուբյեկտների համար : Շահառուին տրվող վարկի առավելագույն տոկոսադրույքը 18%-է: Հիմնադրամը սուբսիդավորում է վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքի և ՓՄՁ սուբյեկտի կողմից սեփական միջոցների հաշվին վճարվող 8 տոկոսային կետի տարբերության չափով: Վարկի առավելագույն ժամկետը 5 տարի է:[2] 2017թ. Հիմնադրամի ֆինանսական կոմիտեն հաստատել է 103 վարկային հայտ: Դրանց հիման վրա տրամադրվել է 2,9 մլրդ. դրամի երաշխավորագիր: 2016թ. համեմատ տրամադրված երաշխավորագրերի գումարը աճել է մոտ 3 անգամ: 2011-2016թթ. ծրագրի շրջանակներում տրամադրվող երաշխավորագրերի գումարը հիմնականում ուներ նվազման միտում:



Գծապատկեր 1. 2011-2017թթ. տրամադրված երաշխավորագրերի գումարը

2011թ.-ի համեմատ 2017թ. ֆինանսական կոմիտեի կողմից հաստատված հայտերի թիվը նվազել է 30,4%-ով, իսկ տրամադրված երաշխավորագրերի գումարը 39,6%-ով: 2016թ. տրամադրված երաշխավորագրերի կեսից ավելին՝ 52,2%-ը տրվել է առևտրի ոլորտին, ընդամենը 1%-ը գյուղատնտեսությանը:


2017թ. Հիմնադրամի գործակալ բանկերի հետ ՓՄՁ սուբյեկտների կողմից ստորագրվել է 75 վարկային պայմանագիր: Ընդհանուր առմամբ, 2017թ. տրամադրվել է 2,5 մլրդ. դրամի վարկ: 2016թ. համեմատությամբ գործակալ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկի գումարը աճել է ավելի քան 2 անգամ կամ 128%-ով: 2011-2016թթ. ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկի գումարները ունեցել են նվազման միտում:



Գծապատկեր 2. 2011-2017թթ. Հիմնադրամի գործակալ բանկերի կողմից ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերը

2015թ. ֆինանսական աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների վարկավորման գումարների կտրուկ կրճատումը պայմանավորված էր բանկերի կողմից վարկավորման գործընթացի կասեցմամբ: 2016թ. չնայած ապրիլյան պատերազմի հասցրած կորուստներին, տեղի է ունեցել վարկավորման գումարների աճ՝ մոտ 2 անգամ:

2011թ.-ի համեմատ 2017թ. Հիմնադրամի գործակալ բանկերի հետ ՓՄՁ սուբյեկտների կողմից ստորագրված վարկային պայմանագրերի թիվը նվազել է 26%-ով, իսկ տրամադրված վարկի գումարը 28,6%-ով: 2016թ. տրամադրված վարկերի բաշխվածությունը ըստ ոլորտների արտահայտում է գծապատկեր 3-ը: [3]



Գծապատկեր 3. 2016թ. Հիմնադրամի գործակալ բանկերի կողմից տրամադրված վարկերի բաշխվածությունը ըստ տնտեսության ճյուղերի


Ինչպես երևում է գծագրից, վարկերի կեսից ավելին տրվել է առևտրի ոլորտին, իսկ գյուղատնտեսությանը տրամադրված վարկերը կազմել են ընդհանուր վարկի գումարի ընդամենը 2%-ը: 2014-2016թթ. շինարարության ոլորտին վարկեր չեն տրվել: Ինչ վերաբերվում է գյուղատնտեսությանը, ապա 2011թ. գյուղատնտեսության ոլորտին տրամադրված վարկերը կազմել են 2,6մլն. դրամ: 2012-2015թթ. այս ոլորտում վարկավորում

չի իրականացվել: 2016թ. ծրագրի շրջանակներում տրամադրված վարկային միջոցներից 17.1 մլն.-ը ուղղվել է գյուղատնտեսության ոլորտին:

2017թ. Հիմնադրամը ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանն է ուղղել 265,1 մլն. դրամ: 2016թ. համեմատ այս թիվը նվազել է 5,9%-ով: 2011-2017թթ. ընկած ժամանակահատվածում վարկի տոկոսադրույքի սուբսիդավորմանն ուղղված միջոցները նվազել են: 2011թ.-ի համեմատ 2017թ. այս թիվը նվազել է 62,7%-ով:


2012-2014թթ. վարկերը տրվում էին ՀՀ դրամով և \$-ով: 2015թ.-ից դրանք սկսեցին տրվել նաև եվրոյով: Իսկ արդեն 2016թ. ֆինանսավորված հայտերի մեծ մասը եվրոյով էր և կազմում էր ընդհանուր գումարի 43%-ը:

• **ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի կամ մատուցվող ծառայության շուկայում առաջնության աջակցության ծրագիր**-այս ծրագիրը նպատակ է հետապնդում բարձրացնել ՓՄՁ սուբյեկտների կողմից ստեղծվող արտադրանքի մրցունակությունը և ավելացնել արտահանման ծավալները: 2017թ. այս ծրագրից օգտվել է 174 ՓՄՁ սուբյեկտ: 2016թ. համեմատ 2017թ. ծրագրի իրականացմանն ուղղված միջոցների աննախադեպ աճ է գրանցվել: 2016թ. ծրագրի իրականացմանն ուղղվել էր 14,2 մլն. դրամ, իսկ 2017թ.՝ 45 մլն. դրամ: Այսինքն, 1 տարվա ընթացքում այս թիվը աճել է շուրջ 3 անգամ: Ծրագրից օգտվողների թիվը աճել է մոտ 5 անգամ: 2011թ. համեմատ ծրագրին ուղղված գումարները աճել են 2 անգամ:



Գծապատկեր 4. 2011-2017թթ. ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի շուկայում առաջնությանն ուղղվող միջոցներ

• **ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագիր**-այս ծրագիրը հնարավորություն է տալիս լուծել կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում առկա հիմնախնդիրները, ապահովում է ՓՄՁ սուբյեկտներին անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը: Ծրագրի իրականացման համար 2017թ. ծախսվել է 22 մլն. դրամ, մինչդեռ 2008-2011թթ. ծրագրի շրջանակներում ընդհանուր ծախսվել էր 14 մլն. դրամ: [4] 2016թ. այս ծրագրի իրականացմանն ուղղվել էր 12,4 մլն. դրամ: Այսինքն, 1 տարվա ընթացքում ծրագրի իրականացման համար ծախսված գումարը աճել է շուրջ 77%-ով: 2011թ. համեմատ այն աճել է մոտ 2 անգամ: Սա խոսում է այն մասին, որ ներկայումս, առավել մեծ տեղ է հատկացվում ՓՄՁ սուբյեկտներին անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն տալուն:



Գծապատկեր 5. 2011-2017թթ. ՓՄՁ սուբյեկտներին տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ուղղված միջոցներ

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտին աջակցող հաջորդ կառույցը ԱՀ գյուղի և գյուղատնտեսության հիմնադրամն է։ Այն իր գործունեությամբ նպաստում է շրջանների համաչափ զարգացմանը, գյուղական վայրերում աղքատության կրճատմանը և գյուղատնտեսական հողերի լրիվ օգտագործմանը։ ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերն ուղղված են հողագործության, անասնապահության, գյուղատնտեսական մթերքների մթերման, պահպանման, վերամշակման և իրացման ենթակառուցվածքների զարգացմանը, մատուցվող մեքենայացված գյուղատնտեսական ծառայությունների արդյունավետության բարձրացմանը։

Հողագործության զարգացմանն ուղղված ծրագիրը իր մեջ ներառում է՝ աշնանացան մշակաբույսերի արտադրության խթանմանն ուղղված աջակցության ծրագիրը, գարնանացան մշակաբույսերի արտադրության խթանմանն ուղղված աջակցության ծրագիրը, այգեգործության խթանմանն ուղղված աջակցության ծրագիրը և բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրության խթանմանն ուղղված աջակցության ծրագիրը։

Հողագործության զարգացմանն ուղղված աջակցության ծրագրի շրջանակներում 2017թ. տրամադրված փոխառությունների 55% ուղղվել է գարնանացան մշակաբույսերի արտադրության խթանմանը, 23%-ը՝ այգեգործության խթանմանը, 14%-ը՝ աշնանացան մշակաբույսերի արտադրության խթանմանը, 9%-ը՝ բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրության խթանմանը։ Փոխառությունների 32%-ը բաժին է ընկնում Ասկերանի շրջանին, 1%-ը՝ Ստեփանակերտին։ Շահումյանի շրջանին նշված ծրագրի շրջանակներում 2017թ. փոխառություններ չեն տրամադրվել։ Այս ծրագրի շրջանակներում 2017թ. Հիմնադրամը իրականացրել է 5.124.863.5 հազ. դրամի աջակցություն, որը 2015թ. համեմատ աճել է 51,2%-ով։

Անասնապահության զարգացմանն ուղղված աջակցության ծրագիրը իր մեջ ներառում է խոշոր, մանր եղջերավոր անասնապահության, թռչնաբուծության, մեղվաբուծության, խոզաբուծության զարգացման ծրագրերը։ 2017թ. այս ծրագրի շրջանակներում տրված փոխառությունների 64%-ը ուղղվել է խոշոր եղջերավոր անասնապահության զարգացման ծրագրին, 18%-ը՝ մանր եղջերավոր անասնապահության զարգացման ծրագրին, 11% խոզաբուծության զարգացման ծրագրին, 5%-ը՝ մեղվաբուծության զարգացման ծրագրին, 3%-ը՝ թռչնաբուծության զարգացման աջակցության ծրագրին։ 2015-2017թթ. նշված ծրագրից օգտվել են հիմնականում ֆիզիկական անձինք։ 2017թ. այս ծրագրի շրջանակներում Հիմնադրամը իրականացրել է 1.024.219.1 հազ. դրամի աջակցություն, որը 2015թ. համեմատ աճել է 5,5%-ով։

Մատուցվող մեքենայացված գյուղատնտեսական ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագիրը իր մեջ ներառում է անհրաժեշտ գյուղատնտեսական մեքենայացված ծառայությունների մատուցման ապահովման և

մատուցվող գյուղատնտեսական մեքենայացված ծառայությունների որակական չափանիշների ապահովման աջակցությանն ուղղված ծրագրերը: Նշված ծրագրի շրջանակներում տրամադրված փոխառությունների 53%-ը բաժին է ընկնում մատուցվող գյուղատնտեսական մեքենայացված ծառայությունների որակական չափանիշների ապահովման աջակցությանն ուղղված ծրագրին: 2017թ. այս ծրագրի շրջանակներում հիմնադրամը իրականացրել է 576.642.8 հազ. դրամի աջակցությունը: 2015թ. համեմատ այս թիվը նվազել է 1,5 անգամ:

Գյուղատնտեսական մթերքների մթերման, պահպանման, վերամշակման և իրացման ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում իրականացվել է 8.182.512.400 դրամի աջակցություն, 2015թ. 490մլն.-ի փոխարեն:[5]

Ուսումնասիրելով գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի հաշվետվությունները, կարող ենք տեսնել, որ դրանք առանձնացված տեղեկատվություն չեն պարունակում ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերված աջակցության մասին, ուստի հստակ իմանալ դրանց թիվը հնարավոր չէ: Իր գործունեության 9 տարիների ընթացքում Հիմնադրամը փոխառություններ է տրամադրել 37357 ֆիզիկական և 92 իրավաբանական անձանց: Ֆիզիկական անձանց շարքին են դասվում և՛ ԱԶ-երը, և՛ այն քաղաքացիները, որ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն են իրականացնում, սակայն չեն հանդիսանում ԱԶ-եր: 2017թ. հողագործության զարգացմանն ուղղված աջակցության ծրագրից օգտվել է 137 ֆիզիկական անձ, անասնապահության զարգացմանն ուղղված աջակցության ծրագրից՝ 37, մատուցվող գյուղատնտեսական մեքենայացված ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված աջակցության ծրագրից՝ 81, գյուղատնտեսական մթերքների մթերման, պահպանման, վերամշակման և իրացման ենթակառուցվածքների զարգացման ծրագրից 8 ֆիզիկական անձ: Այս թվերը վկայում են այն մասին, որ մեր երկրում ամեն ինչ արվում է, որպեսզի յուրաքանչյուրը սեփական գործունեություն ծավալելու հնարավորություն ունենա և դրանով իսկ նպաստի տնտեսության զարգացմանը: Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի ծրագրերից օգտվող ՓՄՁ սուբյեկտների թվաքանակի մասին որոշակի պատկերացում կարող ենք կազմել, ուսումնասիրելով այդ ծրագրերից օգտվող իրավաբանական անձանց թիվը: Այսպես, հողագործության զարգացմանն ուղղված ծրագրից օգտված իրավաբանական անձանց թիվը 2015-2017թթ. գրեթե չի փոխվել: 2017թ. ծրագրից օգտվել է 9 իրավաբանական անձ: Նրանցից 2-ը օգտվել են աշնանացան մշակաբույսերի արտադրության խթանմանն ուղղված աջակցության ծրագրից, 2-ը՝ զարնանացան մշակաբույսերի արտադրության, 2-ը՝ այգեգործության խթանմանն ուղղված ծրագրից, իսկ 3-ը՝ բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրության խթանմանն ուղղված ծրագրից: Անասնապահության զարգացմանն ուղղված աջակցության ծրագրից 2015-2017թթ. օգտվել են հիմնականում ֆիզիկական անձինք: 2015-2017թթ. մատուցվող մեքենայացված գյուղատնտեսական ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրից օգտված իրավաբանական անձանց թիվ գրեթե չի փոխվել: 2017թ. ծրագրից օգտվել է 7 իրավաբանական անձ, որից 4-ը՝ մատուցվող գյուղատնտեսական մեքենայացված ծառայությունների որակական չափանիշների ապահովման աջակցությանն ուղղված ծրագրից, 3-ը՝ գյուղատնտեսական մեքենայացված ծառայությունների մատուցման ապահովման ծրագրից:

2017թ. ԳԳԱՀ-ից փոխառությունների տեսքով աջակցություն է ստացել մոտ 30 իրավաբանական անձ: Սա կազմում է 2008-2017թթ. փոխառություն ստացած իրավաբանական անձանց 30%-ը: 2016թ. տվյալներով ԱՀ-ում գործում է 3749 ՓՄՁ սուբյեկտ, որի 76%-ը (2852) անհատ ձեռնարկատերեր են: ՓՄՁ-երը կազմում են ԱՀ-ում գործող ձեռնարկությունների շուրջ 98%-ը: Սակայն, սա փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության մեխանիզմների արդյունավետության գնահատման չափանիշ չի կարող հանդիսանալ: Կարևոր ցուցանիշ է հանդիսանում ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ ոլորտի մասնակցությունը: Միջինում այս թիվը տատանվում է 35-40 %-ի շրջանակներում: Սա վատ ցուցանիշ չէ, սակայն եթե համեմատենք զարգացած երկրների հետ, կտեսնենք, որ այդ երկրներում ՓՄՁ-ի

մասնակցությունը ՀՆԱ-ի ստեղծմանը կազմում է 60-70%: Ուստի, պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ, այս ցուցանիշը մեր երկրում ևս այդ մակարդակին հասցնելու համար:

Այսպիսով, ԱՀ-ում ՓՄՁ պետական աջակցությունը իրականացվում է 2 կառույցների միջոցով: ԱՆՀ-ի կողմից տրամադրվող երաշխավորագրերի մեծ մասը տրվում է առևտրի ոլորտին, ինչը բացատրվում է նրանով, որ դիմորդների մեծ մասը իրենց գործունեությունը ծավալում են հենց այս ոլորտում: Վարկավորման չափերը փոքր են գյուղատնտեսության ոլորտում, ինչը կապված է գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի ստեղծման հետ: Վերջինս իրականացնում է գյուղատնտեսության զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր: Ընդհանուր առմամբ, 2011-2016թթ. ընկած ժամանակահատվածում, երաշխավորագրերի և ֆինանսավորված հայտերի գումարները, ինչպես նաև Հիմնադրամի կողմից ՓՄՁ աջակցությանն ուղղվող միջոցները նվազել են: Սա պայմանավորված էր նրանով, որ 2007թ. Հիմնադրամի ստեղծումը նոր հնարավորություններ ստեղծեց ՓՄՁ սուբյեկտների համար և քանի որ ՓՄՁ զարգացման ծրագրերը նոր ու հետաքրքիր էին վերջիններիս համար, գործունեության առաջին տարիներին դիմորդների թիվը ավելի մեծ էր: Սակայն, 2017թ. իրավիճակը կարծես թե բարելավվել է: Հատկապես մեծ ուշադրություն է սկսել դարձվել ՓՄՁ սուբյեկտների կողմից արտադրվող ապրանքների շուկայում առաջնորդմանը, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցությանը: Կարծում եմ, առաջիկայում էլ ավելի շատ միջոցներ պետք է ուղղել այս ծրագրերի իրականացմանը, քանի որ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման գործում կարևոր գործոն է հանդիսանում ՓՄՁ սուբյեկտների իրազեկված լինելը:

Օգտագործված գրականության ցանկ

1. <<ՓՄՁ պետական աջակցության ծրագիր>>, 2016թ.
2. www.aif.am
3. <<ԱՆՀ-ի գործունեության հաշվետվություն>>, 2016թ.
4. <<ԱՆՀ-ի գործունեության հաշվետվություն>>, 2011թ.
5. <<ԳԳԱՀ-ի գործունեության հաշվետվություն>>, 2017թ.
6. <<ԳԳԱՀ-ի գործունեության հաշվետվություն>>, 2016թ.

ՀՏԴ332(479.243)

**ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Նինա Բալայան

Շուշիի տեխնոլոգիական համալսարան,
1-ին կուրս, մագիստրատուրա, balayan96@mail.ru, (097)33-08-38
Գիտական ղեկավար՝ Հայկ Սարգսյան տ.գ.դ., պրոֆեսոր

Բանալի բառեր: *թվային տնտեսություն, թվային օրակարգ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տեխնիկական հմտություններ:*

Ключевые слова: *цифровая экономика, цифровая повестка, информационные технологии, технические навыки*

Key words: *digital economy, digital agenda, information technology, technical skills.*

Ամփոփում

Հոդվածում դիտարկվում է թվայնացման դերն ու ազդեցությունը տնտեսության կայուն զարգացման հարցում: Վեր են լուծվել զարգացած և զարգացող երկրներում ՏՏ ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ կազմում, առանձին ուսումնասիրվել են ՀՀ և ԱՀ ՏՏ ոլորտի մրցակցային առավելությունները, արտահանման ուղղությունները, ոլորտում ձեռնարկված առաջադեմ քայլերն ու թվայնացման զարգացմանը խոչընդոտող գործոնները, քննարկվել է Արցախում ոլորտի զարգացման համար առկա պոտենցիալն ու նախադրյալները:

Нина Балаян

ШТУ, Факультет Экономики и управления,
магистратура 1-ый курс,
e-почта: balayan96@mail.ru

Научный руководитель: Айк Саркисян, д.э.н., профессор

**РОЛЬ И НЕОБХОДИМОСТЬ ЦИФРОВИЗАЦИИ В УСТОЙЧИВОМ РАЗВИТИИ
ЭКОНОМИКИ АРЦАХСКОЙ РЕСПУБЛИКИ**

Резюме

В статье рассматривается роль и влияние оцифровки на устойчивое экономическое развитие. Были обсуждены конкурентные преимущества армянских и арцахских ИТ-областей, направления экспорта, продвинутые шаги на местах и факторы, препятствующие развитию цифровой обработки, а также обсуждались потенциал и предпосылки для развития этой сферы в Арцахе.

Nina Balayan

ShTU, Faculty of Economics and Management,
Master degree 1st year, e-mail: balayan96@mail.ru

**THE ROLE AND NECESSITY OF DIGITALIZATION IN SUSTAINABLE ECONOMIC
DEVELOPMENT OF THE REPUBLIC OF ARTSAKH**

Summary

The article considers the role and impact of digitalization on sustainable economic development. In the article were discussed competitive advantages of the Armenian and Artsakhian IT fields, export directions, advanced steps taken in the field and the factors hindering the development of digitalization and the potential and prerequisites for the development of this field in Artsakh.

Թվային տնտեսություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն... Թերևս սրանք վերջին տարիներին ամենահաճախ օգտագործվող արտահայտություններից են: Հիրավի, բարձր տեխնոլոգիաները տնտեսական հաջողության գրավականն են և առաջընթացի իրական երաշխիքը: Այսօր կյանքը և տեղեկատվական տեխնոլոգիաներն այլևս անքակտելի համադրություն են: Օր օրի ավելի է կարևորվում

թվային տեխնոլոգիաների ձևավորած հարմարավետ կենցաղն ու աշխատանքը: Լինի բանկային և ֆինանսական ոլորտ, փոքր և միջին ձեռնարկություն, զբոսաշրջություն, թե դեղագործական ոլորտ՝ անհնար է չնկատել տեղեկատվական տեխնոլոգիաների իրական արժեքը: Դա մի երևույթ է, որն անհրաժեշտ է գործել հասարակության բոլոր ոլորտներ և փոխել ամբողջ աշխարհը. որից անմասն չի մնացել աշխարհի ոչ մի տարածաշրջան և որի սաղմերն առկա են նաև Արցախում:

Առհասարակ թվային տնտեսությունը թվային տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսությունն է, որտեղ որպես արտադրության առանցքային գործոն հանդես են գալիս տեղեկատվական տեխնոլոգիաները: Այն ձևը, որով մարդիկ հաղորդակցվում ու հարաբերվում են միմյանց, տեղեկատվության և աշխարհի հետ, փոխվում է տեխնոլոգիայի համադրման արդյունքում, իսկ տեխնոլոգիան միայն գործիք է, որն օգնում է մեզ լուծել բազում բարդ խնդիրներ, իսկ մեծածավալ տվյալները հնարավորություն են տալիս նաև կայացնել որոշումներ¹: Սա չորրորդ ինդուստրիալ հեղափոխությունն է, որն արագացնում է տնտեսության առաջընթացը՝ անտեսելով ժամանակն ու տարածությունը: Զարգացող թվային տնտեսությունը մեծ պոտենցիալ ունի ստեղծելու գիտական հետազոտություններ և նվաճումներ, նոր աշխատատեղերի հնարավորություն, տնտեսական աճ և նպաստելու մարդկանց կյանքի որակի բարելավմանը: Այդ փոփոխությունները զգալի են կյանքի ամենատարբեր ոլորտներում: Համաշխարհային մակարդակով աստիճանաբար առավել մեծ դերակատարում է ստանձնում տեղեկատվությունը՝ ներկայիս ամենաարժեքավոր տնտեսական ռեսուրսը, որն օգնում է անհատներին և ընկերություններին ստեղծել հարստություն գիտելիքով և ցանցային մարդու ինտելեկտով, այսինքն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կամ թվային տնտեսության հետ մեկտեղ առաջնային տեղում է նաև գիտելիքամետ հասարակությունը, քանի որ այն, ինչ այսօր կոչվում է գիտություն, վաղը դառնում է տեխնիկա²: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը նորարարական գործողություն է այն իմաստով, որ էապես փոխում է կազմակերպություններում իրականացվող տարաբնույթ գործունեության ողջ բովանդակությունը: Այսինքն՝ ՏՀՏ ոլորտը հանդիսանում է այն ուղղությունը, որը կարող է էական տեղաշարժեր առաջ բերել և՛ տնտեսությունում, և՛ բիզնես միջավայրում, և՛ մշակույթում: Դիտարկենք զարգացած և զարգացող երկրներում ՏՏ ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ կազմում: BCG ընկերության տվյալներով՝ ՏՏ մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ զարգացած երկրներում կազմում է միջինում 5.5%, իսկ զարգացող երկրներում՝ 4.9%:


ՏՏ ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ կազմում G20 երկրներում 2016թ.-ին, %	
Մեծ Բրիտանիա	12,4
Հվ. Կորեա	8
Չինաստան	6,9
ԵՄ	5,7
Հնդկաստան	5,6
Ճապոնիա	5,6
ԱՄՆ	5,4

¹ <https://acoya.org//> Armenian Center of Young Analysts

² <https://168.am/2017/10/25/861021.html>

Մեքսիկա	4,2
Գերմանիա	4
Սաուդյան Արաբիա	3,8
Ավստրալիա	3,7
Կանադա	3,6
Իտալիա	3,5
Ֆրանսիա	3,4
Արգենտինա	3,3
ՌԴ	2,8
Հարավաֆրիկյան հանրապետություն	2,5
Բրազիլիա	2,4
Թուրքիա	2,3
Ինդոնեզիա	1,5

SS մասնաբաժինը ՀՆԱ կազմում զարգացող երկրներում 2016թ., %



ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը տնտեսության ամենաարագ զարգացող ճյուղերից է: Եվ սա պատահական չէ, քանի որ Հայաստանն ունի համապատասխան ինտելեկտուալ ռեսուրսներ՝ SS ոլորտը տնտեսության առաջատար ուղղություններից մեկը դարձնելու համար:

Այսօր ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը համարվում է գերակա ճյուղ՝ 2017թ-ին SS ոլորտը ավելի քան 20% աճ է գրանցել, շրջանառությունը կազմել է ավելի քան 612.7 մլն ԱՄՆ դոլար, ակտիվ գործող ընկերությունների թվաքանակը հասել է շուրջ 650-ի (իսկ նորաստեղծների հետ միասին՝ 800), որոնց գրեթե 80%-ը տեղակայված է Երևանում, իսկ 69%-ը կազմում են տեղական ընկերությունները, ընդ որում, ռեկորդային ցուցանիշ արձանագրվել է 2017թ.-ին. ակտիվ գործող ընկերությունների քանակն ավելացել է 110-ով: Միայն 2015-2017 թվականներին ավելի քան 600 նոր ընկերություն է հիմնադրվել: Նույն ժամանակահատվածում ՏՀՏ ոլորտի աշխատատեղերի թիվն աճել է մոտ 2700-ով: Այնուամենայնիվ, մարզային զարգացման ծրագրերի շրջանակներում կրթական և գործարար

¹ <http://www.panarmenian.net/arm/details/208351/>

ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ գործող ընկերությունների թիվը տարեցտարի աճում է ՀՀ այլ մարզերում, հատկապես Շիրակի և Լոռու մարզերում: Վերջին տարում ոլորտում գրանցված ամենակարևոր ձեռքբերումներից են եղել Գյումրիում և Վանաձորում տեխնոլոգիական կենտրոնների, նաև Երևանում ISTC ինովացիոն նոր կենտրոնի բացումը¹: Նախատեսվում է նաև Կապանում բացել տեխնոլոգիական կենտրոն: 2016-17 թվականների ընթացքում շարունակվել են նաև ինտերնետ ծառայությունների ծածկույթի հետ կապված դրական միտումները, ինչի արդյունքում ինտերնետ կապից օգտվողների թիվը անցել է 2.2 մլն-ից՝ ապահովելով ծածկույթի 70% ցուցանիշ:

SS ոլորտի մրցակցային կարևոր առավելություններից մեկը ոլորտի աշխատուժն է. 2017 թվականին ոլորտում ներգրավված է եղել 15.350 մասնագետ՝ ընդհանուր զբաղվածների 1.9%-ը: Ներդրողների համար գրավիչ է նաև մեր մասնագետների բարձր արտադրողականությունը և աշխատուժի մատչելիությունը: Հաշվարկվել է, որ այս մրցունակ մասնագետները տարեկան մինչև 49,700 ԱՄՆ դոլարի արտադրողականություն են ապահովում իրենց ընկերությունների համար²:

Ինչպես յուրաքանչյուր ոլորտում, այնպես էլ SS-ում, զարգացման համար հատկանշական դեր են խաղում ներդրումները: Անդամ երկրների ինտեգրումը կարող է փոխշահավետ լինել և՛ ընկերությունների, և՛ պետության համար: Ընդ որում, հարկ է ընդգծել SS ոլորտում Հայաստանի՝ տարածաշրջանի մյուս երկրների նկատմամբ ունեցած այնպիսի լուրջ մրցակցային առավելությունների մասին, ինչպիսիք են³.

- տեղեկատվության, ճարտարագիտության, ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառում միջազգային չափանիշներին համապատասխան աշխատանքների իրականացման կարողություն,
- համագործակցության մեծ փորձ,
- տեխնիկական հմտություններով և օտար լեզվի իմացությամբ բարձրակարգ մասնագետների առկայություն,
- գործառնական ցածր ծախսեր և էժան աշխատուժ, ոլորտի կայուն զարգացում,
- ԲՈՒՀ-ական ծրագրեր SS ոլորտի շրջանակներում,
- ուժեղ և բարգավաճող Սփյուռքի ներկայություն Եվրոպայում և Ամերիկայում,
- միջազգային չափանիշներին համապատասխանող իրավական դաշտ:

Ներկայումս ՀՀ համար հատկապես վճռորոշ է ԵԱՀԿ անդամ երկրների հետ համատեղ ստորագրված համաձայնագիրը միասնական թվային օրակարգի վերաբերյալ, որն արդյունավետ մեխանիզմ է միասնական թվային տարածքի ձևավորման և գործարկման առումով և լրացուցիչ հնարավորություն է ՀՀ թվային տնտեսության զարգացման հարցում: Այդ նպատակով 2017թ-ին ստեղծվել է «Թվային Հայաստան» հիմնադրամը, որի նպատակն է կառավարման բոլոր ոլորտներում ժամանակակից տեխնոլոգիական հենքի վրա ձևավորել միասնական թվայնացված միջավայր, ապագայամետ և ստեղծարար աշխատուժ⁴: Այս համատեքստում կարևոր է նաև համաձայնություն ձեռք բերել ԵԱՀԿ երկրների թվային տնտեսական ստանդարտների և Չինաստանի միջև, թվային հարթակների վրա ապրանքների, ծառայությունների և կապիտալի տարանցիկ իրացման համար. հատկապես հիմա, երբ չինական ընկերությունները բավականին հետաքրքրված են ՀՀ SS ոլորտով:

¹ Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, ք. Երևան, 2018թ., էջ 16


² <http://b4b.am/archives/news/%D5%B0%AF>

³ <http://armef.com/hy/news/meknabanutyun/hayastani-tt-volorti-masin-ashxarhy-giti/>

⁴ Հայաստանի թվային փոխակերպման օրակարգ 2018-2030թթ. շրջանակային փաստաթուղթ, ք. Երևան, 2018թ., էջ 39


Հարկ է նշել, որ ՀՀ-ի անդամակցությունը ԵԱՏՄ-ին խթան է հանդիսացել նաև արտահանման ուղղությունների բաշխվածության փոփոխության համար, մասնավորապես, Հայաստանն ընդլայնել է ասիական երկրների հետ համագործակցության շրջանակը և արտահանման աշխարհագրությունը դարձել է ավելի համասեռ: Արտահանումների առավելագույն մասը՝ մոտ 36,4%-ը, ուղղվում է ԱՄՆ և Կանադա, 28,4%-ը՝ Եվրոպա, իսկ 15,4%-ը՝ Ռուսաստան ու ԱՊՀ երկրներ: Այլ երկրների շարքում հայկական ծառայությունների նկատմամբ ամենամեծ պահանջարկը ներկայացնում են ասիական երկրները և Ավստրալիան:

SS ոլորտի արտահանման ուղղությունները 2017թ.-ին, %




Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հարահոսում հատկապես չափազանց կարևոր է ձևավորել այնպիսի այլընտրանք, որն ամբողջությամբ արտացոլի Արցախի Հանրապետության իրական նկարագիրն ու նրա առջև կանգնած մարտահրավերները: *Չունենալով բնական պաշարներ, գազ և այլն՝ ներկայումս մեր ամենամեծ ներուժը մարդկային ռեսուրսն է, և SS-ն այն ոլորտն է, որտեղ ամենաարդյունավետ ձևով այդ պոտենցիալը կարող է իրացվել:*

Արցախի SS ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ կազմում 2012-2016թթ.,%




SS և հեռահաղորդակցության ոլորտների շրջանառությունը Արցախում, հազ. դրամ




Արցախում SS ոլորտի մեծությունը դեռևս փոքր է ՀՆԱ կազմում՝ մոտ 0.1%, տարեկան շրջանառությունը կազմում է մոտ 241 մլն դրամ, ոլորտում ընդգրկված է 10 կազմակերպություն, իսկ ներգրավված մասնագետները կազմում են ընդհանուր զբաղվածների 1.05%-ը:

ՏՀՏ ոլորտում զբաղվածների թիվն Արցախում, մարդ



ՏՀՏ ոլորտի ընկերությունների թիվն Արցախում, հատ



Բիարկե, թվարկված ցուցանիշներն այդքան էլ տպավորիչ չեն, այնուամենայնիվ, Արցախն ունի լուրջ պոտենցիալ և հեռանկարներ ոլորտում առաջընթաց ապահովելու հարցում, քանի որ առկա են համապատասխան ինտելեկտուալ ռեսուրսներ, որոնց ռացիոնալ կիրառումը հնարավորություն կտա ՏՀՏ ոլորտին ստանձնել հզոր դերակատարում տնտեսության զարգացման գործում: Նման օբյեկտիվ անհրաժեշտությունից ելնելով է Արցախում բացվել «ՄեդիաՏՈՆ» գործակալությունը՝ նոր հայացքներով ու խոստումնալից հեռանկարներով: «ՄեդիաՏՈՆ» գործակալության հիմնական ուղղություններն են՝ արցախյան տեղեկատվական դաշտի կայացումը և Արցախի ներկայացումը արտաքին հարթակներում: Իր նպատակները գործակալությունն իրագործում է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով՝ կիրառելով համացանցային և հեռուստատեսային պլատֆորմներ: Գործակալության մեջ առանձնակի կարևորություն ունի ինքնատիպ ինտերնետ-հեռուստատեսությունը՝ «Արցախթայմս» ինտերնետային կայքով, որի նպատակն է համաշխարհային մեդիաքարտեզում Արցախի տեղն ու դերը ամրագրելը, Արցախի ներքին կյանքն ու նրան առնչվող իրադարձությունները լուսաբանելը, տեղեկատվական դաշտի նոր միավոր ստեղծելը: Արցախում SS ոլորտի զարգացմանն ուղղված նպատակային քայլերից է նաև տարածաշրջանային նշանակության «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի ստեղծումը, որը նախատեսում է կրթական նոր մոդելներ, մոտեցումներ, դասավանդման նոր մեթոդաբանություն ու գաղափարախոսություն, ազգային հենքի վրա կրթական բարձրագույն ձեռքբերումների փորձարկման ու մշակման նոր հիմքեր՝ ի նպաստ գիտելիքահենք թվային տնտեսության մրցունակության բարձրացման:

Հատկապես վճռորոշ դեր ունի «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի» հիմնադրումը, որն ապահովում է SS ոլորտում բիզնեսի զարգացման համար բարենպաստ պայմաններ և փորձում նպաստել ԱՀ տնտեսության զարգացմանն ու

բարգավաճմանը՝ սատարելով սկսնակ տեխնոլոգիական ընկերություններին: Այն նպատակ ունի տարածաշրջանում ապահովել լավագույն պայմաններ բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում պահանջված կադրերի պատրաստման ու վերապատրաստման ծրագրերի իրականացման համար: Կենտրոնում արդեն իսկ իրենց գործունեությունն են ծավալում Սիներջի Ինթերնեշնլ Սիսթեմզ, Լոկատոր, Թեքնոլոջի ընդ Սայն Դայնամիքս, Վիքիքլաբ և Մեդիատոն կազմակերպությունները: Հատկանշական են «Մինոփսիս Արմենիա», «Ինստիգեյթ Սիսթեմս» և «Սիներջի Սիսթեմս» արցախյան ընկերությունների հիմնադրման օրինակները, ինչպես նաև Ստեփանակերտում բացված «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը: Վերոնշյալներից «Սիներջի Ինթերնեշնլ Սիսթեմզ»-ի Ստեփանակերտի մասնաճյուղը մասնակցել է այնպիսի նախագծերի մշակման, որոնց պատվիրատուներն էին Իրաքի, Մալդիվների, Եմենի, Լեսոտոյի, Պակիստանի, Տանզանիայի, Տաջիկստանի, Թաիլանդի, Բանգլադեշի և մի շարք այլ պետությունների կառավարությունները:

Այսօր հայկական SS ընկերությունները կարող են առաջարկել միջազգային բարձր ստանդարտներին համապատասխանող որակյալ արտադրանք ու ծառայություններ, սակայն պետք չէ մոռանալ, որ ոլորտում առկա են խնդիրներ SS ոլորտի մասնագետներ պատրաստելու և արտաքին շուկաներ դուրս գալու հարցում, իսկ խոչընդոտող հիմնական գործոններն են միջազգային գործարար հանրության կողմից հայկական SS ոլորտի մասին ոչ լիարժեք իրազեկվածությունը, հիմնական SS շուկաներից հեռու գտնվելը, ինչպես նաև լեզվական արգելքը: Ուստի կարևոր է կառավարության կողմից խրախուսման քաղաքականությունը և աջակցման ծրագրերի իրականացումը:

Այսպիսով, լինելով աղքատ բնական ռեսուրսներով՝ մենք դատապարտված ենք մեր տնտեսական ապագան կապել հենց այս ոլորտի հետ. չէ՞ որ թվայնացումը չի հարցնում, թե որքանով ենք մենք պատրաստ գլոբալ փոփոխություններին. այն ուղղակի փոխում է աշխարհը՝ դրանով իսկ տալով ավտոմատացված նոր իրականության մեկնարկը և ազդարարելով թվայնացված հնարավորությունների սկիզբը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի թվային փոխակերպման օրակարգ 2018-2030թթ. շրջանակային փաստաթուղթ, ք. Երևան, 2018թ.,
2. Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, ք. Երևան, 2018թ.,
1. www.168.am,
2. www.b4b.am,
3. www.acoya.org,
4. www.armef.com,
5. www.panarmenian.net:

ՀՏԴ 336.7

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԴԵՊՈԶԻՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Անգելինա Դանիելյան
ԱրՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ,
Ֆինանսներ 4-րդ կուրս,
Էլ. հասցե: danielyangelina7@gmail.com
Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ն.Հ. Ավանեսյան

Բանալի բառեր՝ բանկային հատված, դեպոզիտային գործառնություններ, ռեսուրսային բազա, ավանդների մեծություն, ավանդային քաղաքականություն, մարքեթինգային ծրագիր:

Ключевые слова: банковский сектор, депозитные операции, ресурсная база, сумма вклада, депозитная политика, маркетинговая программа.

Keywords: banking sector, deposit operations, resource base, deposit amount, deposit policy, marketing program.

Ամփոփում

Հոդվածում ներկայացվում է ԱՀ տարածքում գործող առևտրային բանկերի դեպոզիտային գործառնությունների վերլուծությունը, դրանց դինամիկան և բացահայտվում է ԱՀ տարածքում գործող առևտրային բանկերի դեպոզիտային գործառնությունների զարգացման հեռանկարները: Այդ նպատակով հոդվածում կատարվել են մի շարք ցուցանիշների վերլուծություններ՝ այնպիսին, ինչպիսիք են առևտրային բանկերի դեպոզիտները, ցպահանջ և ժամկետային ավանդների տեսակարար կշիռները ընդհանուրի մեջ և բանկերի առաջարկած առավել շահավետ ավանդների տեսակները:

Ангелина Даниелян
АрГУ, Экономический факультет, Финансы, 4-ый курс,
е-почта: danielyangelina7@gmail.com

АНАЛИЗ ДЕПОЗИТНЫХ ОПЕРАЦИЙ КОММЕРЧЕСКИХ БАНКОВ

Резюме

В статье анализируются депозитные операции коммерческих банков, действующих на территории Арцахской Республики, их динамика, а также раскрываются перспективы развития депозитных операций коммерческих банков, действующих на территории Арцахской Республики. С этой целью в статье анализируется ряд показателей, таких как депозиты коммерческих банков, депозиты до востребования и срочные вклады, а также наиболее выгодные типы вкладов, предлагаемых банками.

Angelina Danielyan
ASU, Faculty of Economics, Finance 4th year,
E-mail: Address: danielyangelina7@gmail.com
Scientific adviser, Candidate of Historical Sciences, Associate Professor N.H. Avanesyan

ANALYSIS OF COMMERCIAL BANKS' DEPOSIT OPERATIONS

Summary

The article analyzes the deposit operations of commercial banks operating in the territory of the Republic of Artsakh, their dynamics, and reveals prospects for the development of deposit operations of commercial banks operating in the territory of the Republic of Artsakh. For this purpose, the article analyzes a number of indicators such as deposits of commercial banks, demand deposits and time deposits, and the most profitable types of deposits offered by banks.

Ներածություն:

Այսօրվա շուկայական տնտեսության պայմաններում բանկային համակարգը մեծ ազդեցություն ունի տնտեսության բոլոր հատվածների զարգացման վրա: Բացի դրանից, բանկերի առաջնային խնդիրներից է խոշոր դրամական միջոցներ ներդնելու հնարավորությունների ստեղծումը: Ընդհանուր առմամբ տնտեսության վիճակը պայմանավորված է բանկային հատվածում տիրող իրավիճակից: Առևտրային բանկերի հիմնական գործառնություններից մեկը հանդիսանում է ֆիզիկական և իրավաբանական անձանց ֆինանսական միջոցների ներգրավումը ավանդների տեսքով, այդ փոխառու միջոցների տեղաշարժումը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց բանկային հաշիվների բացումն ու վարումն է: Այս գործառնությունների իրականացման մեջ հատուկ դեր են խաղում դեպոզիտային գործառնությունները: Դրանց դերն ու նշանակությունը կայանում է նրանում, որ բանկի ռեսուրսների ճնշող մեծամասնությունը ձևավորվում է ոչ թե իր սեփական, այլ փոխառու միջոցների հաշվին: Հետևաբար, դեպոզիտային գործառնությունների կազմակերպման արդյունավետությունից է կախված բանկի ոչ միայն ֆինանսական, այլև տնտեսական իրավիճակը:

Աշխատանքի ուսումնասիրության համար հիմք են ծառայել մի շարք տնտեսագետների թողարկած գրքերը, հոդվածները, տարբեր կայքերի նյութերը, ԼՂՀ ԱՎԾ հրապարակած հաշվետվությունները:

ԱՀ առևտրային բանկերի դեպոզիտային գործառնությունների վերլուծություն

Արցախի տարածքում գործում են 8 բանկ, որոնցից յուրաքանչյուրը ընդունում է ավանդներ ֆիզիկական անձանցից ՀՀ դրամով և արտարժույթով՝ ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ: Բանկերի կողմից ավանդների ընդունման գործընթացը կարգավորվում է ՀՀ և ԱՀ գործող օրենսդրությամբ, ՀՀ ԿԲ որոշումներով, բանկերի կառավարման մարմինների որոշումներով, բանկերի կանոնադրությամբ և այլ ներքին իրավական ակտերով:

Մեր երկրում առևտրային բանկերին վստահելու գործում օգնում են երկու հանգամանք.

- Բանկերի գործունեությունը վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից
- Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, գործում է ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը:

Աղյուսակ 1. Ավանդների քանակը բանկային համակարգում 2008-2016թթ. կտրվածքով:

Աղյուսակ 1-ում ներկայացված է ավանդների քանակը բանկային համակարգում 2008-2016թթ կտրվածքով: Ավանդների ընդհանուր գումարը տարեցտարի աճել է: 2008թ. ավանդները կազմել

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ավանդների գումարը	23589,7	29055,6	34453	41182,9	49307,4	55902,1	58619,1	51340,2	74534,7
Այդ թվում՝ ցպահանջ	3538,4	5188,8	7338,4	11201,7	7839,8	11012,7	11254,8	11470,6	15875,8
Ժամկետային	18399,9	20861,9	24737,2	26604,1	37621,5	40808,5	42381,6	44410,3	53515,9
Նպատակային	1415,3	2004,8	2377,2	3376,9	3845,9	4080,8	4982,6	5459,2	5142,8

ավանդների քանակը աճել է, հասնելով 29055,6 մլն դրամի, որտեղ ժամկետային և ցպահանջ ավանդների հարաբերակցությունը գրեթե չի փոխվել: 2011թ. ներգրավված ավանդները կազմել են 41182.9 մլն դրամ, 2010թ. համեմատ աճել է 10.5 տոկոսով: Ավանդների 64.6 տոկոսը կազմել են բանկերի ժամկետային ավանդները, 27.2 տոկոսը՝ ցպահանջ ավանդները, 8.2 տոկոսը՝ նպատակային ավանդները:

2012թ. ներգրավված ավանդները կազմել են 49307.4 մլն դրամ, 2011թ. համեմատ աճել են 28.2 տոկոսով: Ավանդների 76.3 տոկոսը կազմել են բանկերի ժամկետային ավանդները, 15.9 տոկոսը՝ ցպահանջ ավանդները, 7.8 տոկոսը՝ նպատակային ավանդները:

2013թ. դրությամբ ներգրավված ավանդները կազմել են 55902.1 մլն դրամ, 2012թ. համեմատ աճելով 20.2 տոկոսով: Ավանդների ընդհանուր ծավալում 73.0 տոկոսը կազմել են բանկերի ժամկետային ավանդները, 19.7 տոկոսը՝ ցպահանջ ավանդները, 7.3 տոկոսը՝ նպատակային ավանդները:

2014թ. դրությամբ բանկերում կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդները կազմել են 58619.1 մլն դրամ, 2013թ. համեմատ աճելով 4.5 տոկոսով: Ավանդների ընդհանուր ծավալում 72.3 տոկոսը կազմել են բանկերի ժամկետային ավանդները, 19.2 տոկոսը՝ ցպահանջ ավանդները, 8.5 տոկոսը՝ նպատակային ավանդները:

2015թ. բանկերում կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդները կազմել են 61340.2 մլն դրամ, 2014թ. համեմատ աճելով 7.2 տոկոսով, իսկ նախորդ: Ավանդների ընդհանուր ծավալում 72.4 տոկոսը կազմել են բանկերի ժամկետային ավանդները, 18.7 տոկոսը՝ ցպահանջ ավանդները, 8.9 տոկոսը՝ նպատակային ավանդները:

2016թ. ներգրավված ավանդները կազմել են 74534.7 մլն դրամ, 2015թ. համեմատ աճելով 30.2 տոկոսով: Ավանդների ընդհանուր ծավալում 71.8 տոկոսը կազմել են բանկերի ժամկետային ավանդները, 21.3 տոկոսը՝ ցպահանջ ավանդները, 6.9 տոկոսը՝ նպատակային ավանդները:

ԱՀ ԱՎԾ նախագահի խոսքերով՝ 2017թ. ներգրավված ավանդները կազմել են 97589.5 մլն դրամ և 2016թ. նկատմամբ աճել են 25.1 տոկոսով: Ավանդների ընդհանուր ծավալում 77.7 տոկոսը կազմել են բանկերի ժամկետային ավանդները, 16.3 տոկոսը՝ ցպահանջ ավանդները, 6.0 տոկոսը՝ նպատակային ավանդները:

2018թ. մարտի 1-ի դրությամբ բանկերում կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդները կազմել են 101431.1 մլն դրամ և 2017թ. մարտի 1-ի համեմատությամբ աճել են 31.6 տոկոսով, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 1.0 տոկոսով: Ավանդների ընդհանուր ծավալում 77.2 տոկոսը կազմել են բանկերի ժամկետային ավանդները, 16.5 տոկոսը՝ ցպահանջ ավանդները, 6.3 տոկոսը՝ նպատակային ավանդները:

Գծապատկեր 1. 2008 – 2016թթ բանկային համակարգում ներդրված ավանդների դինամիկան
Վերլուծվել են ԱՀ բանկերում դրամային դեպոզիտների ամենաշահավետ տոկոսադրույքները: Շուկայի ուսումնասիրության համար հաշվի են առնվել ֆիզիկական անձանց ժամկետային դրամային ավանդները՝ 1 տարի տեղաբաշխման ժամկետով և ամենաբարձր տոկոսադրույքով: Միաժամանակ հաշվի են առնվել ավանդի գումարը, տոկոսադրույքների վճարման ժամանակացույցն ու ավանդի համալրման հնարավորությունը: Բանկերի կողմից անցկացվող ակցիաների կամ այլ հատուկ առաջարկների շրջանակում առաջարկվող դեպոզիտային պրոդուկտները ևս դիտարկվել են :

Դրամային ավանդների ամենագրավիչ տոկոսադրույքներ ունեցող բանկերի խմբում ներառվել են Հայֆինեսբանկը, Յունիբանկը և Ամերիաբանկը:

Ինչպես ցույց տվեց ավանդների շուկայի վերլուծությունը, դրամային դեպոզիտների առավելագույն տոկոսադրույքն այսօր կազմում է տարեկան 12,25%: Արցախում ավանդատուներին նման տոկոսադրույք է առաջարկում Հայֆինեսբանկը «Շահավետ» ժամկետային ավանդի շրջանակում:

Աղյուսակ 2. Բանկերի դրամային ավանդների վարկանիշը

Բանկեր/Ավանդ	Տոկոսադրույք %, տարեկան	Նվազագույն գումար AMD	Համալրո ւմ	Տոկոսների վճարում
Հայֆինեսբանկ Շահավետ	12.25	30.000	այո	Ժամկետի վերջում/ամսական
Յունիբանկ "AMD/RUR"	11.6	500.000	ոչ	Ժամկետի վերջում
Ամերիաբանկ "Ամերիա"	11.1	50.000	ոչ	ամսական

Արդշինբանկ Ստանդարտ	1	Լինչն 10.000.000	ըչ	Ժամկետի վերջում
Գոնվերս Բանկ Պրոգրես	10.5	50.000	ըչ	Ժամկետի վերջում
Արցախբանկ Ժամկետային ավանդներ	10.5	50.000	ըչ	Ժամկետի վերջում
Արարատբանկ Ժամկետային	10	-	ըչ	ըստ պայմանագրի
Հայեկոնոմբանկ Ժամկետային ավանդ	10	-	այո	Ժամկետի վերջում

Առևտրային բանկերի ավանդային գործառնությունների զարգացման ուղիները

Մեր երկրում առևտրային բանկերի կողմից բնակչության խնայողությունների ներգրավումը ունի բազմաթիվ խոչընդոտներ: Ներգրավման հիմնական խոչընդոտը հանդիսանում է բնակչության եկամուտների ցածր մակարդակը և դրանց մեծ տարբերակումը: Ինչ վերաբերում է առևտրային բանկերին, ապա բնակչության խնայողությունները կայուն ավանդների վերափոխման համար անհրաժեշտ է բարձրացնել ներգրավված ռեսուրսների նկատմամբ վերահսկողությունը, վարել հավասարակշռված ավանդային քաղաքականություն, գտնել խնայողությունների ներգրավման նպատակով, բնակչությանը հետաքրքրելու միջոցներ: Բանկերի ռեսուրսային բազայի կարևորագույն ցուցանիշներից մեկը բանկի տոկոսադրույքային քաղաքականությունն է: Այս քաղաքականության արդյունավետությունը ներառում է երկու պայման: Առաջին, որ ավանդների տոկոսադրույքները (ժամկետային եւ ցպահանջ) պետք է լինեն գրավիչ պոտենցիալ ներդրողների համար և երկրորդը, պետք չէ կտրուկ բարձրացնել տոկոսային մարժայի ստորին սահմանը բանկի ակտիվային եւ պասիվային գործառնությունների միջև: Բանկային ծառայությունների շուկայում մրցակցությունն առավել ակտիվ է, հատկապես ֆիզիկական անձանց ավանդների համար: Բանկային գործառնությունների որակապես նոր փուլի զարգացման որոշիչ պայմաններից մեկը տնտեսության իրական հատվածում կայուն միջնաժամկետ և երկարաժամկետ ռեսուրսային բազայի ստեղծումն է: Այս ռազմավարական խնդիրը լուծելու առանցքային գործոնը տնային տնտեսությունների ավանդների աճն է: Բանկերում ներդրված ավանդների աճի նախադրյալներն են

- բնակչության իրական եկամուտների ավելացում
- «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի դրույթների իրականացում
- ամբողջ բանկային հատվածի կայունության ամրապնդում
- պարտատերերի եւ ավանդատուների շահերի պաշտպանության իրավական հիմքերի մշակումը
- հաճախորդների եւ ավանդատուների վստահության բարձրացում
- բանկային գաղտնիքի, ինչպես նաև ավանդային գաղտնիքի պահպանում
- բանկային ծառայությունների կազմի ընդլայնում, պոտենցիալ ներդրողներին գրավելու նպատակով:

Բանկի ավանդային քաղաքականության բարելավման հիմնական ուղղություններն են.

- բանկի ավանդային, վարկային և այլ գործառնությունների փոխկապվածություն, դրա հուսալիության և ֆինանսական կայունության պահպանման համար
- ռեսուրսների դիվերսիֆիկացիա ռիսկի նվազեցման նպատակով
- ավանդային պորտֆելի սեզմենտացիա (հաճախորդների, ապրանքների, շուկաների)
- տարբերակված մոտեցում հաճախորդների տարբեր խմբերին
- բանկային ապրանքների և ծառայությունների մրցունակություն

- բարձր ռիսկերի պայմաններում ավանդային պորտֆելի կայուն եւ «վտանգավոր» ռեսուրսների օպտիմալ համադրության ապահովում
- միջոցների ներգրավման գնային և ոչ գնային մեթոդների օպտիմալ համադրություն
- բանկի կառուցվածքում մարքեթինգային բաժնի առանձնացում

Ավանդային գործառնությունների բարելավման միջոցներից, կարող է լինել անհատական մոտեցումը ավանդատուներին, դրանց տարբերակումը կատեգորիաների, ծառայությունների որակի բարելավումը, հաճախորդներին հատուկ արտոնությունների տրամադրումը, ըստ բանկի հայեցողության, բանկային ավանդի ապահովագրական և ավանդատուների շահերը պաշտպանելու համակարգի ստեղծումը, ինչը, ըստ էության, կմեծացնի բանկերի հուսալիությունը և կնպաստի դեպոզիտային միջոցների ավելացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

- [1] Ասատրյան Բ., Բանկային գործ, <<Սարվարդ Հրատ>> 2004, էջ 166, 167
- [2] Բադանյան Լ., Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, Երևան 2007, էջ 417
- [3] ԼՂՀ ԱՎԾ հրապարակած հաշվետվություններ
- [4] <http://stat-nkr.am>
- [5] www.cbr.ru
- [6] Вайн С. Оптимизация ресурсов современного банка / С. Вайн. М. Альпина Паблишер, 2013. 194 с.
- [7] М.П.Владимировна, А.И.Козлов, Деньги, Кредит, Банки, Москва 2006, стр. 107, 108

ՀՏՂ339.1(479.243)

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԱՀ-ՈՒՄ

Դիանա Գրիգորյան
ԱրՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ,
Ֆինանսներ IV-րդ կուրս,
Էլ. հասցե: dianka-1996@mail.ru
Գիտական ղեկավար՝ ս.գ.թ., ավագ դասախոս Մ.Վ. Մկրտչյան

Բանալի բառեր: մրցակցային հարաբերություն, տնտեսական մրցակցություն, մրցակցային միջավայր, կատարյալ մրցակցություն, ոչ կատարյալ մրցակցություն, մենաշնորհային մրցակցություն, մոնոպոլիա, օլիգոպոլիա, գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով

Ключевые слова: конкурентные отношения, экономическая конкуренция, конкурентная среда, совершенная конкуренция, не совершенная конкуренция, монополия, монополия, олигополия, доминирующие субъекты хозяйствования, государственная комиссия регулирующая общественные услуги и экономическую конкуренцию.

Keywords: competitive relations, economic competition, competitive environment, perfect competition, non-perfect competition, monopoly competition, monopoly, oligopoly, dominant business entities, state commission regulating public services and economic competition.

Ամփոփում

Հոդվածում ներկայացվել է մրցակցության դերն ու նշանակությունը շուկայական տնտեսությունում, դիտարկվել է մրցակցությունը որպես շուկայի տարր և տնտեսության շարժիչ ուժ, մրցակցային հարաբերությունների կարգավորման արդի հիմնախնդիրները, վեր է լուծվել Արցախի Հանրապետությունում գերիշխող և մենաշնորհ դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը, ինչպես նաև վերլուծության է ենթարկվել մի շարք ապրանքային շուկաների վերջին տարիների ուսումնասիրության արդյունքները:

Резюме

В статье выявлены роль и значение конкуренции в рыночной экономике. Конкуренция рассматривается как элемент рынка и движущая сила экономики, рассматриваются текущие проблемы регулирования конкурентных отношений, проанализирована деятельность доминирующих хозяйствующих субъектов и монополий в Республике Арцах, а так же приведены результаты исследований ряда товарных рынков.

Summary

The article presents the role and importance of competition in a market economy, competition is considered as an element of the market and as a driving force of the economy, current problems of regulating competitive relations are considered, The activity of the dominant economic entities and monopolies in the Republic of Artsakh has been analyzed, as well as the results of research into a number of commodity markets for the last few years.

«Մրցակցություն» հասկացությունը ծագել է լատիներեն «concurrentia» բառից, որը թարգմանաբար նշանակում է պայքար, մրցավազք:¹Տնտեսական կյանքի զարգացման ներկա ժամանակահատվածում տնտեսվարող սուբյեկտների միջև մրցակցային ազատ և արդար հարաբերությունների ձևավորումը յուրաքանչյուր պետության կարևոր գերիխնդիրներից է: Ազատ շուկայական հարաբերություններն անհնար է պատկերացնել առանց տնտեսվարող

¹Стиглер Дж. Совершенная конкуренция: исторический ракурс. 1999, стр.300

սուբյեկտների միջև մրցակցության: Մուր մրցակցությունը ստիպում է գործարարներին փորձել արտադրել առավել որակով արտադրանք առավել ցածր գնով, ինչը հանգեցնում է տեխնոլոգիական առաջընթացին, ապրանքների բաշխման ուղիների օպտիմալիզացման: Մրցակցային պայքարը երբեմն ձեռք է բերում այնպիսի ձևեր, որոնք վնաս են հասցնում և՛ տնտեսությանը, և՛ սպառողներին: Մրցակցային պայքարի այդպիսի արգելված ձև է նաև հակամրցակցային համաձայնությունների կայացումը: Մրցակցության կարգավորումը հանգում է հետևյալ հիմնական ուղղություններին՝ բացառել շուկայի մասնակիցներից մեկի կողմից իր գերիշխող դիրքի չարաշահումը և բացառել շուկայի մասնակիցների միջև այնպիսի համաձայնությունները, որոնք կսահմանափակեն ազատ առևտուրը կամ ծառայությունների մատուցումը: Այս հիմնական ուղղությունների ներքո էլ սահմանվել են մրցակցության կարգավորման հիմնախնդիրները:

Մի շարք հեղինակներ մեկաբանել են մրցակցությունը հետևյալ կերպ. Տնտեսական մրցակցությունը, որպես տնտեսագիտական հասկացություն, արտահայտում է այն արտադրատնտեսական հարաբերությունները, որոնք կապված են հաջողության հասնելու, տնտեսական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և մրցակիցներին կատմամբ շուկայում շահավետ դիրք գրավելու հետ:¹ Մրցակցությունը դիտարկել են որպես պայքար առանձին իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջև, ովքեր շահագրգռված են միևնույն նպատակին հասնելու գործում:² Հենց մրցակցությունն է հարկադրում արտադրողներին իջեցնել ծախսերը, բարձրացնել որակը, խթանում է կիրառել տարբեր տեխնիկական կատարելագործումներ, տեխնոլոգիական նորություններ, ստեղծել նոր արտադրանք և դրանք ներդնել կյանքում: Մրցակցությունը թելադրում է գնորդներին խնայողաբար ծախսել իրենց դրամական միջոցները և ձեռք բերել այնպիսի ապրանքներ և այն քանակով, որոնք ավելի մեծ տնտեսական արդյունավետություն են ապահովում:³ Եթե ձեռնարկատերը չի դիմանում մրցակցությանը, ապա վնաս է կրում, որը որոշակի պայմաններում բերում է սնանկացման, կապիտալի ու գույքի կորստին, նույնիսկ ինքնասպանության: Շուկայական մրցակցությունը տնտեսության զարգացմանը նպաստող հզոր ուժ է: Մրցակցությունը որպես տնտեսագիտական հասկացություն, արտացոլում է տարբեր մակարդակի տնտեսվարող սուբյեկտների միջև տնտեսական հարաբերությունները: Մրցակցությունը կարող է գոյություն ունենալ շուկայական որոշակի իրավիճակի պայմաններում, որը բնութագրվում է հետևյալ չափ որոշիչներով. ֆիրմաների քանակը, շուկա մուտքի (ելքի) ազատությունը, ապրանքների դիֆերենցիացիան, շուկայական գների նկատմամբ վերահսկողությանը ֆիրմաների մասնակցությունը և շուկայում տնտեսվարող սուբյեկտների ունեցած տեսակարար կշիռները:

Մրցակցության էությունը ամբողջական ձևով է բացահայտվում դրագործառնությունների միջոցով:⁴ Դրանցից են.

➤ Կարգավորիչ գործառնությո: Առաջարկի և պահանջարկի միջև հաշվեկշռվածությունը պահպանվում է հավասարակշռված գների սահմանման միջոցով՝ արժեքի օրենքին համապատասխան:

➤ Խթանիչ գործառնությո: Մրցակցությունը խթանում է տնտեսական աճը և բարձրացնում տնտեսության արդյունավետությունը՝ ստիպելով արտադրողներին ընդլայնել և կատարելագործել արտադրությունը, աշխատանքի արտադրողականության աճի հաշվին իջեցնել արտադրության ծախսերի մակարդակը, տեսականու ընդլայնման և արտադրանքի

¹Ս. Հ. Արշակյան, «Տնտեսական մրցակցության համակարգը շուկայական էկոնոմիկայում», Երևան 1997, էջ 58

² Азоев Г.Л., Челенков А.П. Конкурентные преимущества фирмы.-М.: ОАО Типография. «НОВОСТИ», 2000

, стр.13

³Կ. Ներսիսյան, «Մրցակցությունը և մենաշնորհը», Երևան, 2009, էջ 5

⁴Մ. Վ. Միքայելյան «Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը», 2005թ.

որակի բարձրացման հաշվին բարձրացնել թողարկվող արտադրանքի մրցունակությունը և այլն: Մրցակցությունը նպաստում է նաև բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

➤ Վերահսկիչ գործառույթ: Մրցակցությունը սահմանափակում է և թույլ չի տալիս առանձին խոշոր միավորումների ներկար ժամանակով շուկայում ունենալ գերի շխանություն:

➤ Առողջացման գործառույթ: Մրցակցությունը շուկայից անխնա դուրս է մղում այն սուբյեկտներին, որոնքի վիճակի չեն կազմակերպել ու մրցունակ ապրանքների արդյունավետ արտադրություն:

➤ Հակամենաշնորհային գործառույթ. Կանխարգելվում է շուկայական չափից ավելի իշխանության ձևավորումը, հաղթահարվում է դրա չարաշահումը:

Մրցակցային հարաբերությունները կարգավորվում են հետևյալ խնդիրներով.

➤ ընդհանրացնել և հստակեցնել մրցակցային հարաբերությունների գիտատեսական հիմքերը, տալ սահմանումը և բացահայտել դրա տնտեսական էությունը, ներկայացնել գործառույթների դերակատարությունն ու կարևորությունը,

➤ բացահայտել մրցակցային հարաբերությունների դերը շուկայական տնտեսության պայմաններում, դիտարկել ստանդարտացումը՝ որպես մրցունակության ապահովման և պետական կարգավորման կարևորագույն գործիք,

➤ գնահատել Արցախի Հանրապետության տնտեսական ոլորտում մրցակցությունը, բացահայտել գերիշխող դիրք ունեցող կազմակերպություններն ու ուսումնասիրել չարաշահումները:


Մրցակցությունը դրսևորվում է բազմաթիվ տեսակներով: Այսպես, սկզբունքային է բարեխիղճ և անբարեխիղճ մրցակցության տարանջատումը: Մրցակցության վերը քննարկված գործառույթների լիարժեք իրականացումը հնարավոր է միայն բարեխիղճ մրցակցության պայմաններում: Եվ հակառակը՝ անբարեխիղճ մրցակցությունը էապես կրճատում է մրցակցության բարերար ազդեցությունը և նենգափոխում նրա բուն իմաստը:¹ Առանձնացվում է մրցակցության երկու հիմնական տիպ՝ կատարյալ և ոչ կատարյալ մրցակցություն, որի դրսևորման հիմնական ձևերն են մենաշնորհը (մոնոպոլիան), օլիգոպոլիան և մենաշնորհային մրցակցությունը:²

Տնտեսական մրցակցության պաշտպանությունն իրենից ներկայացնում է բարեխիղճ մրցակցության ձևավորմանը, ինչպես նաև անբարեխիղճ մրցակցության կանխմանն ուղղված պետության գործունեության համապատասխան ուղղություն, ընդորոշում պետության այդ պարտականությանը համապատասխանում է գործարարների՝ մրցակցային բարեխիղճ պայքարին մասնակցելու իրավունքը, որը հանդիսանում է նրանց իրավական կարգավիճակի կարևորագույն և անքակտելի հատկանիշը: Ապրանքային շուկաների ուսումնասիրությանն պատկան է վերլուծել շուկաներում տիրող մրցակցային իրավիճակը և բացահայտել օրենքով չթույլատրված գործողությունները՝ հակամրցակցային համաձայնությունները, գերիշխող դիրքի չարաշահումները, արգելված համակենտրոնացումները, անբարեխիղճ մրցակցությունը: Հանձնաժողովը տնտեսական մրցակցությունը դիտելով որպես շուկայական հարաբերությունները խթանող և կարգավորող ուժ ու ներկայիս համաշխարհային ճգնաժամային իրավիճակից դուրս գալու կարևորագույն միջոց՝ այդ բնագավառում իրականացրել է աշխատանքներ՝ ուղղված մրցակցային միջավայրի հետազոտությանը, գնային քաղաքականությանը, գերիշխող դիրքի և հակամրցակցային գործողությունների բացահայտմանը: Ձգտելով բարեխիղճ մրցակցային պայմանների ստեղծմանը և ամրապնդմանը ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը իրականացրել է ուսումնասիրություն «Առաջնեկ» և «Արցախկաթ» ՓԲ ընկերություններում, որի արդյունքում պարզվել է, որ նշված ընկերությունների կողմից արտադրվող և իրացվող կաթնամթերքի բոլոր արտադրատեսակների վրա արտադրության և պահպանման ժամկետները մականշվում է


¹ԼՂՀ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքը, ընդունված 2006 թվականի ապրիլի 9-ին

²Կիրակոսյան Գ. Ե., Խլղաթյան Ի.Ե., «Տնտեսագիտության տեսություն», Երևան, 2009, էջ 284

գնապիտակների միջոցով, որի վրա նշվում է արտադրության և պահպանման օրերը երկնիշ թվերով, օրինակ՝ «23-27»: Նշվածը մոլորեցնում է, կամ կարող է մոլորեցնել հասարակությանը սննդամթերքի արտադրության և պահպանման ժամկետների մասով: Այս կապակցությամբ «Արցախ կաթ» և «Առաջնեկ» ՓԲ ընկերությունների նկատմամբ օրենքի խախտման համար հարուցվել է վարչական վարույթ և տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 300 հազարական ՀՀ դրամի չափով: «Բենզին» ապրանքային շուկայի 2010 թվականի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի որոշմամբ շուկայում գերիշխող դիրք ունեցող են համարվել «Պետրոլ սերվիս» (35.5 %) փակբաժնետիրական և «Ֆլեշ-պլյուս» (30.5 %) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (միասին զբաղեցրել են շուկայի 66 տոկոսը): 2016 թվականի տվյալների համաձայն, շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինը կազմել է 62.3 տոկոս, 2010 թվականի համեմատ նվազելով 3.7 տոկոսային կետով:¹




Շուկայում գործող տնտեսավարող սուբյեկտների քանակը մնացել է անփոփոխ՝ 16 տնտեսավարող սուբյեկտ՝ բոլորը ներկրողներ: Իրացման ծավալը 2016 թվականին կազմել է 5906,9 տոննա որը 2010 թվականի համեմատ նվազել է՝ 3728.3 տոննայով կամ 38.7 տոկոսով: «Բենզին» ապրանքային շուկայի իրացման ծավալի նշված նվազումը պայմանավորված է ուսումնասիրվող ժամանակահատվածում բենզինի գների աճով և սեղմված գազի՝ որպես այլընտրանքային վառելիք՝ օգտագործումով: Որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել նաև գերիշխող դիրք ունեցող ընկերությունների իրացման մասնաբաժիններում: Այսպես՝ «Ֆլեշ-պլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ամրապնդել է շուկայում իր դիրքը՝ իրացման ծավալի մասնաբաժինը ավելացնելով 11.5 տոկոսային կետ ով ի հակառակ «Պետրոլ սերվիս» փակ բաժնետիրական ընկերությանը, որի մասնաբաժինը նվազել է 15 տոկոսային կետով: Չնայած նշված փոփոխություններին, միասին զբաղեցնելով «Բենզին» ապրանքային շուկայի իրացման ծավալի 62.3 տոկոսը, ընկերությունները պահպանել են իրենց գերիշխող դիրքերը:




«Դիզելային վառելիք» ապրանքային շուկայի 2010 թվականի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի որոշմամբ շուկայում գերիշխող դիրք ունեցող են համարվել «Ֆլեշ-պլյուս» (42.6 տոկոս) սահմանափակ պատասխանատվությամբ և «Պետրոլ սերվիս» (31.6 տոկոս) փակբաժնետիրական ընկերությունները (միասին զբաղեցրել են շուկայի 74.2 տոկոսը): 2016 թվականի տվյալների հիման վրա իրականացրած վերլուծությունը ցույց է տալիս, որ շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների իրացման ծավալի մասնաբաժինը կազմել է 51 տոկոս, 2010 թվականի համեմատ նվազելով 23.2 տոկոսային կետով:

¹www.kargavorum.am



Շուկայի իրացման ծավալը 2016 թվականին կազմել է 5789.7 տոննա, որը 2010 թվականի համեմատ նվազել է՝ 2596.3 տոննա կամ 30.9 տոկոս: «Դիզելային վառելիք» ապրանքային շուկայի իրացման ծավալի նշված նվազումը պայմանավորված է ուսումնասիրվող ժամանակահատվածում գների աճով և դիզելային վառելիքով աշխատող ավտոմեքենաների պահանջարկի նվազումով: Շուկայում գործող տնտեսավարող սուբյեկտների քանակը նվազել է՝ 2010 թվականի 31 տնտեսավարող սուբյեկտի փոխարեն 2016 թվականին կազմելով 18 տնտեսավարող սուբյեկտ, որոնք բոլորը նույնպես ներկրողներ են: Չնայած գերիշխող դիրք ունեցող «Ֆլեշ-պյուս» ՍՊԸ մասնաբաժինը նվազել է 7.4 տոկոսային կետով, իսկ «Պետրոլ սերվիս» ՓԲԸ-ը՝ 15.8 տոկոսային կետով, ընկերությունները միասին զբաղեցնելով «Բենզին» ապրանքային շուկայի իրացման ծավալի 51 տոկոսը պահպանել են գերիշխող դիրքերը:



2018 թվականի սկզբից Արցախում թանկացել են բենզինն ու դիզելային վառելիքը: Մասնավորապես «Պրեմիում» տեսակի բենզինը 450 դրամից դարձել է 470 դրամ, «Ռեգուլար» տեսակինը՝ 430-450 դր., իսկ դիզ.վառելիքի գինը 400 դրամից հասել է 460 դրամի: Նշված թանկացումները պայմանավորված են ակցիզային հարկի դրույքաչափերի փոփոխությամբ: Նաև դիզ.վառելիքի վաճառքն սկսել է հարկվել ԱԱՀ-ով ինչն էլ հանգեցրել է դիզ.վառելիքի 60 դրամով թանկացմանը: Մաքսատուրքերի դրույքաչափերի փոփոխությամբ պայմանավորված առաջիկայում հնարավոր է նաև այլ ապրանքատեսակների թանկացում. կան ապրանքներ, որոնք ներկրվում են ոչ ԵՏՄ անդամ երկրներից: Դա լինելու դեպքում պետք է ասել, որ դրանք էական չեն լինի, քանի որ այդ դրույքաչափերը փոխվել են 1-4 տոկոսով և չեն տարածվի բոլոր ապրանքատեսակների վրա, հիմնականում՝ սպառման ապրանքատեսակներից դրանք կլինեն՝ կարագ, կաթնամթերք, հավի միս, ձեթ և այլն: Հանձնաժողովի գործունեության արդյունքում 2007-2017թթ. յուրաքանչյուր տարի բյուջե է մուտքագրվել տարեկան միջինը 348-ական միլիոն դրամ, իսկ սկսած 2017 թվականից 900 միլիոն դրամ: 10 տարիների ընթացքում մոտ 4 միլիարդ դրամ պետական բյուջե է մուտք եղել, իսկ սույն թվականից սկսած մուտքերը կկազմեն տարեկան մոտ 1 միլիարդ դրամի չափով:

2018թ. հուլիսի 1-ից «Ղարաբաղ Տելեկոմ»-ը կնվազեցնի սակագները:¹

Եզրակացություն

1. Այսպիսով եզրակացնում ենք, որ յուրաքանչյուր պետություն պետք է եթե ոչ ամբողջապես, ապա գոնե ինչ-որ չափով վերացնի իր երկրում մենաշնորհների տիրապետությունը՝ նպաստելով մրցակցությանը: Պետության կողմից իրականացվող հակամենաշնորհային կարգավորումն էլ պետք է լինի խելամիտ և ղեկավարվի գործի

¹www.artsakhpres.am

էությամբ: Հետևաբար՝ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության արդյունավետությունը պետք է դրսևորվի ոչ միայն տնտեսավարող սուբյեկտների և պետական իշխանության մարմինների փոխգործակցության մեջ, այլև տնտեսության ապրանքային և ֆինանսական առանձին շուկաներում մրցակցային միջավայրի զարգացման և կատարելագործման մեջ:

2. Մրցակցությունն է հարկադրում արտադրողներին իջեցնել ծախսերը, բարձրացնել որակը, խթանում է կիրառել տարբեր տեխնիկական կատարելագործումներ, ստեղծել նոր արտադրանք և դրան քննարկել կյանքում: Մրցակցությունը թելադրում է գնորդներին խնայողաբար ծախսել իրենց դրամական միջոցները:

3. Ստեփանակերտ քաղաքի համեմատ միևնույն ապրանքների միջին հավելագինը Հայաստանում կազմել է 5,41%, Մարտունիում՝ 4,03 %, Մարտակերտում՝ 4,0%, Շուշիում՝ 3,86 %, Ասկերանում՝ 2,65 %, Բերձորում՝ 0,68%: Առավել ցածր գներ են արձանագրվել Բերձորում, իսկ ամենաբարձրը՝ Հայրությունում:

4. Առաջարկում եմ կենտրոնացվածության բարձր մակարդակ ունեցող շուկաներում այնպիսի մեխանիզմների ներդրում, որոնք կգսպեն խոշոր ընկերությունների առաջացումը և նրանց համար հետագա խոշորացումը կդարձնեն ոչ գրավիչ: Կենտրոնացվածության նվազման նպատակով առաջարկում եմ խոշոր ընկերությունների, ինչպես նաև առևտրական ցանցերի համար հարկման լրացուցիչ մեխանիզմների ներդրում: Անհրաժեշտ է սահմանել լրացուցիչ վճար, ինչպես որոշակի մակերեսից ավել տարածք զբաղեցնող առևտրի օբյեկտի նկատմամբ, այնպես էլ առևտրային ցանցերի համար՝ կախված առևտրային ցանցում ընդգրկված առևտրի օբյեկտների քանակից:

Օգտագործված գրականության ցանկ

1. ԼՂՀ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքը, ընդունված 2006 թվականի ապրիլի 9-ին
2. ԼՂՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր 2018-2020թթ.
3. «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2012 թվականի փետրվարի 8-ին
4. Աղաջանյան Հ. Տնտեսագիտության տեսություն, Երևան, 2009, 184 էջ
5. Արշակյան Ա. Հ. Տնտեսական մրցակցության համակարգը շուկայական էկոնոմիկայում, Երևան 1997, 160 էջ
6. Թամազյան Արթուր Ձեռնարկատիրություն, մրցակցություն և ռիսկ, Երևան, 2014, 150 էջ
7. Կիրակոսյան Գ.Ե., Խլղաթյան Ի.Ե. Տնտեսագիտության տեսություն, Երևան, 2009, 384 էջ
8. Հովսեփյան Վ., Եղիազարյան Մ. Ազգային տնտեսություն, Երևան, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ, 2014, 161 էջ
9. Ղուշյան Հ.Բ., Տիգրանյան Ի.Տ., Հարությունյան Ա.Գ. Ազգային էկոնոմիկայի հիմունքներ, Երևան, Տնտեսագետ, 2009, 101 էջ
10. Մարկոսյան Ա. Մկրտումյան Մ. «Բնական մենաշնորհների պետական կարգավորումը», Երևան, 2002, 150 էջ
11. Մելքումյան Ս. Մրցակցություն և կարգավորում, Երևան, «Տնտեսագետ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ, 2014, 61 էջ
12. Միքայելյան Մ. Անբարեխիղճ մրցակցությունը և դրա կարգավորման մարտահրավերները, Երևան, 2014, 52 էջ
13. Միքայելյան Մ.Վ Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման հիմնահարցերը, 2005թ., 136 էջ
14. Ներսիսյան Կ. Մրցակցությունը և մենաշնորհը, Երևան, 2009, 34 էջ
15. Азоев Г.Л., Челенков А.П. Конкурентные преимущества фирмы.-М.: ОАО Типография. «НОВОСТИ», 2000, 51 стр.
16. www.artsakhpress.am
17. www.kargavorum.am

ՀՏՆ339.3(479.)

ՓՈՔԻ ԲԻԶՆԵՍԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Անահիտ Մխիթարյան
Արցախի պետական համալսարան,
Տնտեսագիտության ֆակուլտետ,
ֆինանսներ 3-րդ կուրս
տ.գ.թ., դոցենտ Ռ. Յա. Մանգասարյան
Էլ. փոստ՝ anahit_mm@rambler.ru

Բանալի բառեր՝ Փոքր ձեռնարկատիրություն, պետական աջակցություն, տնտեսության զարգացում, երաշխիքների տրամադրում, տնտեսական աճ, խորհրդատվական օգնություն, ներդրում:

Ամփոփում

ՓՁ ոլորտի խնդիրների լուծումը և աջակցությունը հիմնականում իրականացվում է կառավարության կողմից, և իրականացվող և աջակցվող ծրագրերն էլ ուսումնասիրության առարկա են: Արված են առաջարկություններ ՓՁ կայուն զարգացման համար:

Анаит Мхитарян

ПОДДЕРЖКА МАЛОГО БИЗНЕСА В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

Резюме

Решение и поддержка вопросов сферы МП в основном зависят от правительства, а программы, осуществляемые и поддерживаемые ими, являются предметом исследования. В статье также сделаны предложения по устойчивому развитию МП.

Anahit Mkhitaryan

SUPPORT OF SMALL BUSINESS IN THE REPUBLIC OF ARTSAKH

Summary

The decision and support of the SB sector problems depends largely on the government, and the agendas accomplished and supported are the subject of this research. Are suggested ways to the stable development of SB.

«Բրիտանացիների նշանաբանը - բիզնես՝ անկախ ամեն ինչից», - ասել է անգլիայի վարչապետ Ունստոն Լեոնարդ Սպենսեր Չերչիլը, ՓՁ-ն «ամեն օր և ամեն ժամ ծնում է կապիտալիզմ»-այս նշանաբանով խորհրդային տարիներին խեղդվեց ՓՁ-ն Արցախում:

Ժամանակակից աշխարհում զարգացած երկրների փորձն ապացուցում է, որ ՓՁ-ն շուկայական տնտեսության «հիմնանստառի արմատներն է»¹: Արցախի Հանրապետության (այսուհետև՝ ԱՀ) հետագա զարգացումը, անցումային կարգավիճակից վերհանումը հնարավոր չէ առանց ՓՁ ոլորտի, քանի որ այն տնտեսական և սոցիալական զարգացման բեռը քաշող հիմնական ուժն է: Այսօր ԱՀ տարածքում գործում են, առկա են խոշոր, միջին և փոքր բիզնեսներ, ինչպես նաև իրականացվում է անձնական և ընտանեկան աշխատանքի վրա հիմնված ձեռնարկատիրական գործունեություն: ՓՁ չափերը կախված են գործունեության ոլորտներից, նրանց տեխնոլոգիական յուրահատկություններից: Եթե ժամանակակից տնտեսությանը բնորոշ է տարբեր մասշտաբների արտադրությունների համադրությունը ՓՁ-ում, ապա ԱՀ-ում այս առումով ՓՁ-ն սաղմնային վիճակում կարելի է համարել: ՓՁ աճն ավելի ակնհայտ է հատկապես այն ոլորտներում, ուր չեն պահանջվում մեծ ներդրումներ, թանկարժեք ու շատ սարքավորումներ, շատ աշխատակիցներ: Հատկապես

¹ Виленский А.В., Почему не востребован малый бизнес в России// Бизнес для всех 2007, №2, стр. 19.

տեսակարար մեծ կշիռ են կազմում սպառողական ապրանքների արտադրությունը և ծառայությունների մատուցում, իսկ համաշխարհային առումով ՓՁ ոլորտում մեծ տեղ ունեցող գիտատար փոքր ձեռնարկատիրությունը ԱՀ-ում աննշան տեղ ունի: ՓՁ արդյունավետ գործունեությունը բնորոշվում է խոշոր ձեռնարկատիրության նկատմամբ մի շարք առավելություններով՝ տեղական շուկաների նկատմամբ մոտ դիրք և սպառողների պահանջարկին հարմարավելու ունակություն, արտադրանքի թողարկում փոքր չափաբաժիններով, ինչը շահավետ չէ մեծ ձեռնարկություններին, կառավարման լրացուցիչ, երբեմն ավելորդ օղակների բացառում:

ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ հանդիպում է ՓՁ հետևյալ սահմանումը. «Մեփականության ցանկացած ձևի փոքր ձեռնարկությունը, որն ամենից առաջ բնորոշվում է աշխատակիցների սահմանափակ քանակով, և երկրի, շրջանի սահմաններում զբաղեցնում է փոքր տեղ տնտեսության կոնկրետ ոլորտում»¹: Համաշխարհային բանկի տվյալներով, չափորոշիչների ընդհանուր թիվը, որոնց բնորոշմամբ ձեռնարկությունը դասվում է ՓՁ սուբյեկտների դասին, գերազանցում է 50-ը², սակայն հիմնական չափորոշիչները վերևում թվարկվածներն են համարվում:

ՓՁ ունի մի շարք առավելություններ. շուկայի պահանջներին արագ հարմարվելը, ներքին շուկայի ամբողջական համալրում, համեմատաբար ոչ մեծ ներդրումների անհրաժեշտություն³, հեշտ ղեկավարում, արդյունավետ մենեջմենտ, հակամոնոպոլ քաղաքականության արդյունավետ ուղղորդում լինելը, գործազրկության խնդրի լուծման պետական քաղաքականության դրույթ լինելու փաստը, միջին խավի ձևավորման հիմնական լծակ լինելու հանգամանքը, անհատների գաղափարների իրագործման հասանելի միջոց, հասարակության մեջ սոցիալական լարվածության թուլացման լծակ⁴:

Իհարկե, ՓՁ ունի նաև թերություններ, ինչպես օրինակ՝ ռիսկի ավելի մեծ գործոն, խոշոր ընկերություններից կախվածություն, տնտեսական պայմանների փոփոխություններից աննախադեպ կախվածություն, անվստահություն համատեղ ձեռնարկատիրության ծավալման համար պայմանագրերի կնքման պարագայում:

Ի տարբերություն խոշոր երկրների կամ արդեն զարգացած տնտեսություններով պետությունների, որոնց համար ՓՁ չի կարող լինել տնտեսության հիմնասյուն, Արցախի Հանրապետության պարագայում հենց ՓՁ-ն է ձևավորում տնտեսության ընդհանրական տեսքը, չնայած պետական եկամուտների՝ հարկման առումով մեծապես զիջում է խոշոր բիզնեսի ներկայացուցիչներին: Այսինքն, Արցախում բնակվող հասարակ քաղաքացին տնտեսություն ասելով ավելի հասկանում է իրենց շենքի տակ գտնվող խանութը կամ գյուղի կանանց թեկուզ սեզոնային աշխատանքով ապահովող գյուղատնտեսին, քան թե «ՎԱԼԼԵՔՍ» խմբի ընկերությունը ԱՀ-ում: Հետպատերազմյան տարիներին ոլորտում առաջացած վակուումը ՓՁ հետագա կայացման համար բավականին դժվարություններ առաջացրեց, սակայն 1990-ականների վերջին արդեն ակնհայտ էին պետության մոտեցումները ոլորտում իրավական կարգավորման հստակության, պետական աջակցության նախանշման առումով:

Փոքր ձեռնարկատիրությունը միջինի հետ միասին նշանակալի դեր է խաղում երկրի համախառն ներքին արդյունքի (այսուհետ՝ ՀՆԱ) ձևավորման և նոր աշխատատեղերի ստեղծման գործում: ՀՆԱ-ի մեջ ՓՁ ոլորտի մասնակցության 2013 թվականի ցուցանիշը կազմում է 34.4%՝ 2012 թվականի արձանագրված 33.6%-ի դիմաց: Միայն 2013 թվականի ընթացքում գործող ՓՁ սուբյեկտների թվաքանակը ավելացել է 54-ով:

¹Макконнелл К.Р., Брю С.Л. Экономикс. Принципы, проблемы и политика, Москва, 2009, стр. 205.

²<http://www.worldbank.org/en/news/feature/2016/06/20/entrepreneurs-and-small-businesses-spur-economic-growth-and-create-jobs>.

³Юркова Т.И., Юркос С.В., Экономика предприятий, Москва, 2008, стр. 152.

⁴Горфенкель В.Я., Швандар В.А. Экономика предприятия: Учебник для вузов, Москва, 2007, стр. 603.

2001 թվականին մինչ այդ գործող իրավական ակտերի հիման վրա ոլորտի հիմնական կարգավորումները տրվում են «Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության մասին» ԱՀ օրենքով¹, որի նպատակն է սահմանել փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների չափորոշիչները, պետական աջակցության հիմնական ուղղությունները և այդ ոլորտում պետական քաղաքականության իրականացման սկզբունքները: Օրենքն այս գործում է առայսօր և հստակ սահմանում է ԱՀ տարածքում ՓՁ սուբյեկտների չափորոշիչները.

ա) գեր փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցական թվաքանակը չի գերազանցում հինգ մարդը.

բ) փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում՝

- արդյունաբերության և նյութական արտադրության այլ ճյուղերում - 50.

- շինարարության և էներգետիկայի բնագավառում - 25.

- գիտության և կրթության բնագավառում - 25.

- տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառում - 15 մարդը:

Պարտադրված պատերազմի, տնտեսական շրջափակման, պետության չճանաչվածության հանգամանքներում փոքր բիզնեսի կայացման համար ակնհայտ էր պետական աջակցության անհրաժեշտությունը, որի նախադրյալները ևս ամրագրվեցին օրենքով.

- իրավական բարենպաստ դաշտի ձևավորումը, ֆինանսական և ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը, աջակցող ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը նպաստելը.

- տեղեկատվական և խորհրդատվական օգնությունը, արտաքին տնտեսական գործունեության խթանումը.

- նորարարական գործունեության և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությունը.

- վիճակագրական հաշվետվությունների² և հաշվապահական հաշվառման պարզեցված համակարգերի ստեղծումը, պետական գնումների իրականացման գործընթացում աջակցությունը:

ՓՁ-ի պետական աջակցությունն իրականացվում է տարեկան ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր)³, որը մշակվում է ԱՀ կառավարությունը գործող օրենքով սահմանված հիմնական ուղղություններին համապատասխան՝ ելնելով տվյալ ժամանակահատվածում զարգացման գերակայություններից, ներառյալ ՓՁ-ի ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծումը: Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նշվում է պետական բյուջեում առանձին տողով, և բյուջեի նախագծի հետ ներկայացվում է ԱՀ Ազգային ժողովի հաստատմանը: Ծրագիրն իրականացվում է Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով: Ծրագրի կատարման հաշվետվությունը ներկայացվում է տվյալ տարվա պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության հետ:

2016 թվականի Ծրագիրը ադրբեջանական ապրիլյան ռազմական արկածախնդրության առաջացրած հետևանքների և նոր առաջնահերթությունների պատճառով վերջնակետին չի հասցվել: ՓՁ ոլորտին պետական աջակցության վերաբերյալ համապարփակ պատկերացումներ ստանալու համար անդրադառնանք նախորդ տարիների Ծրագրերին: Ծրագրի իրավական հիմքերի, սկզբունքների, նպատակների, ակնկալվող արդյունքների հետ մանրամասնվում է աջակցությունն իրագործելու միջոցառումների համակարգը, որը ամենակարևորն է ՓՁ կայացման և հետագա ծավալման համար: Այսպես՝ ՓՁ զարգացմանը պետական աջակցության հետևյալ հիմնական ուղղությունները.

¹ <http://arlexis.am>.

² http://stat-nkr.am/files/publications/2015/biznes_registr.pdf, <http://www.stat-nkr.am/hy/2010-11-24-11-24-22/510--2014>.

³ <http://minfin-nkr.am/index.php?section=resources/index&type=3&subtype=75>- տեստաքերտարիների Ծրագրեր

ա) **ՓՁ սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում** – փոքր, ինչպես նաև միջին ձեռնարկատիրության զարգացմանը պետական աջակցության ծրագրերը հիմնականում իրականացնում են Արցախի ներդրումային հիմնադրամը (այսուհետ՝ ԱՆՀ) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը (այսուհետ՝ ԳԳԱՀ): Պարբերաբար կազմակերպվում են քննարկումներ և հանդիպումներ գործող ՓՁ սուբյեկտների հետ, հատկապես ԱՀ շրջաններում՝ նրանց գործունեությանը խոչընդոտող հիմնախնդիրների հստակեցման և իրականացվող ծրագրերը դրանց լուծմանն ուղղելու նպատակով:

բ) **ՓՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն** – ՓՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցության ցուցաբերման շրջանակներում շարունակվում է ՓՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցության, առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, վարկային երաշխավորությունների տրամադրման, կապիտալի ֆինանսավորման և արտադրական հզորությունների վերազինմանն աջակցության ծրագրերի իրականացումը: Աջակցության այս ձևը մասնավորապես ընդգրկում է.

- ❖ ՓՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցություն, առևտրային բանկերի կողմից ՓՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում,

- ❖ ՓՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում,

- ❖ ՓՁ սուբյեկտների կապիտալի ֆինանսավորում, ՓՁ սուբյեկտների արտադրական հզորությունների վերազինմանն աջակցություն¹:

գ) **ՓՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն** – ՓՁ սուբյեկտների մոտ նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության ծրագրի շրջանակում իրականացվում են միջազգային առաջատար փորձի, նորարարությունների, նոր տեխնոլոգիաների և արտադրատեսակների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, համակարգում և տրամադրում ՓՁ սուբյեկտներին, ՓՁ սուբյեկտների համակարգչային հագեցվածության մակարդակի ուսումնասիրում, նրանց մոտ համակարգչային տեխնիկայի, համակարգչային ծրագրերի ներդրմանն ու համացանցին միացմանն աջակցության ցուցաբերում:

դ) **ՓՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) արտահանմանն ու շուկաներում առաջ մղմանն աջակցություն** – արտահանման ներուժունեցող ՓՁ սուբյեկտներին աջակցություն է ցուցաբերվում արտահանում սկսելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորման, արտահանման գործունեության զարգացման և ընդլայնման ուղղությամբ, տրամադրվում են տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն արտաքին շուկաներ մուտք գործելու համար անհրաժեշտ փորձարկումների անցկացման, թույլտվությունների, սերտիֆիկատների ձեռքբերման և համապատասխան այլ փաստաթղթերի պատրաստման հարցերում: Շարունակվում է աջակցությունը ՓՁ սուբյեկտներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում կազմակերպվող ցուցահանդեսներին մասնակցության ապահովման համար:

ե) **ՓՁ սուբյեկտներին ուսուցողական, գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն**

- ՓՁ սուբյեկտներին ուսուցողական աջակցություն՝ գործարար հմտությունների զարգացման և գործարար գիտելիքների մակարդակի բարձրացման նպատակով համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով ՓՁ սուբյեկտների համար կազմակերպվում են մասնագիտական ուսուցման և վերապատրաստման դասընթացներ:

¹<http://minfin-nkr.am/uploadfiles/1418901093.pdf>

• ՓՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն – սկսնակ և գործող ՓՁ սուբյեկտներին ցուցաբերվում է գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն՝ տնտեսավարող սուբյեկտների պետական գրանցման, գործընկերների որոնման ու նրանց հետ գործարար կապերի հաստատման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, մտավոր սեփականության պաշտպանության, ստանդարտացման, համապատասխանության հավաստման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, ձեռնարկության տնտեսական գործունեության վերլուծության, շուկայական հետազոտությունների իրականացման, կառավարման և շուկայավարման, հաշվապահական հաշվառման, հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների կազմման¹ ու ներկայացման, նորարարությունների կիրառման և ժամանակակից տեխնոլոգիաների առևտրայնացման, իրավաբանական, հարկային ու մաքսային ձևակերպումների և այլ կարևոր ուղղություններով՝ ըստ ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի:

Բացի պետությունից և տարեկան Ծրագրից ՓՁ աջակցության պետական մոտեցումները ամրագրվում են նաև ծախսերի եռամյա ծրագրերում՝ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր (ՄԺՄԾ)²:

Պետական աջակցությունը պետական, բյուջետային ծրագրերով չի սահմանափակվում. գործում են նաև արտաբյուջետային տարբեր ծրագրեր ու հիմնադրամներ, որոնց աջակցությունն իր շոշափելի ազդեցությունն ունի ՓՁ ոլորտի կայացման համար: Որպես օրինակ կարող ենք բերել Լիբանանի Արցախֆոնդ հիմնադրամի ծրագրերը՝ Քաշաթաղի շրջանում գյուղտեխնիկայի տրամադրում, անտոկոս վարկերի տրամադրում, Թյուֆենկյան հիմնադրամի որոշ ծրագրեր: ԱՀ փոքր բիզնեսի ներկայացուցիչների շրջանում մեծ համբավ ունի Արեգակ միկրովարկային ծրագիրը, հիմնադրված 1997թ.-ին Միավորված Մեթոդիստների Օգնության Կոմիտեն (UMCOR)³:

ՓՁ շնորհիվ առաջացած փոքր սեփականատերերը ձևավորում են, այսպես կոչված, միջին խավը, որը ինքնուրույն ապահովում է իր բարեկեցությունը, բարվոք կենսամակարդակը և հանդիսանում սոցիալ-տնտեսական բարեփոխումների հիմքը, քաղաքական կայունության երաշխավորն ու հասարակության ժողովրդավարական զարգացման շարժիչ ուժը⁴. Ճիշտ ուղղորդվող ՓՁ-ն զգալի լուծում է գործազրկության խնդիրը⁵: ՓՁ-ն ապահովում է անհրաժեշտ ձկնությունը շուկայական տնտեսության պայմաններում, լրացնում անհրաժեշտ ծառայությունների և ապրանքների պահանջարկի պակասը:

Ընդհանուր առմամբ 2016թ. Արցախի ներդրումային հիմնադրամի ծրագրի կողմից աջակցություն տրամադրվեց մոտ 35 ՓՄՁ սուբյեկտի, իսկ միջոցառումների համար իրականացված ծախսը կազմել է 14.2 մլն դրամ: Ներկայումս փոքր բիզնեսի զարգացմանը հատկացվում է նշանակալից ուշադրություն իշխանության բոլոր մակարդակներում:

2016թ. ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն ցուցաբերվեց ամենատարբեր ուղղություններով: Վերոնշյալ ծրագրի շրջանակներում միջոցառումների համար իրականացված ծախսը կազմել է 12.4 մլն դրամ:

Արցախի Հանրապետությունում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր, նաև միջին ձեռնարկատիրության զարգացումը

¹<https://www.tax.nk.am/index.php?name=static&id=176>.

²[http://minfin-](http://minfin-kr.am/index.php?section=search/view&id=91&p=1&search=միջնաժամկետ&type=resources)

<kr.am/index.php?section=search/view&id=91&p=1&search=միջնաժամկետ&type=resources>.

³<http://www.aregak.am/index.cfm?objectid=895DF198-FB05-72D6-4F02C92337449923>.

⁴ Горфанкель В.Я., Поляк Г.Б., Швандар В.А., Предпринимательство: учебник для вузов, Москва, 2008, стр. 483-484

⁵ Колганов М.В., Особенности предпринимательства в переходной экономике// Экономист, 2007, N 2, стр. 11.

կոչված է նպաստելու երկրի տնտեսական աճի կայունությանը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն:

Կարևորելով ՓԶ դերը երկրի տնտեսության զարգացման, զվաղվածության մակարդակի բարձրացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում՝ Արցախի Հանրապետության կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓԶ ոլորտի պետական աջակցության և զարգացման ուղղությամբ համապատասխան ծրագրերի իրականացմանը:

Պետական աջակցությունը ՓԶ ոլորտին դրված է իրավական հիմքերի վրա՝ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի տեսքով: Պետական բյուջեի, Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հետ զուգահեռ ԱՀ կառավարության կողմից (Ֆինանսների նախարարության նախագծմամբ) ներկայացվող փոքր և միջին բիզնեսի աջակցության ծրագիրն ամենափնտրյալ կարգավորիչ, ուղղորդող փաստաթղթերից է¹: Պետական աջակցությունը դրսևորվում է ֆինանսական և ներդրումային աջակցության երաշխիքների տրամադրմամբ, ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը նպաստելով, տեղեկատվական և խորհրդատվական օգնությամբ, արտաքին տնտեսական գործունեության խթանմամբ, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությամբ:

Նշենք, որ պետական, բյուջետային, նաև արտաբյուջետային ծրագրերից գատ ԱՀ իշխանությունների դրականապես կանխակալ վերաբերմունքը ՓԶ ոլորտի հանդեպ արտահայտվում է նաև պետության ղեկավարության անձնական վերաբերմունքով՝ առանձին փոքր ձեռնարկատերերին խրախուսելով (օրինակ՝ ԼՂՀ Վարչապետն Ասկերանի շրջանի Ուղտասար համայնքում գյուղատնտես-փոքր ձեռնարկատիրոջը գյուղտեխնիկա է նվիրել)²:

¹<http://gov.nkr.am/hy/prime-minister-decrees>.

²<http://www.artsakh.tv/am/news/or>.

ՀՏԴ336.7(479.243)

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԻՐՆԵՐԸ ԱՆ -ՈՒՄ

Ալինե Հարությունյան

Արցախի պետական համալսարան

Էլ. հասցե: harutunian.aline@mail.ru

Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դեգենտ Ն.Հ. Ավանեսյան

Հիմնաբաներ՝ Վարկ, բանկային հատված, վարկերի կազմը, վարկային ներդրումներ, ՀՆԱ-ի դինամիկա, վարկային ներդրումներ / ՀՆԱ հարաբերակցություն, տնտեսության ճյուղեր:

Ключевые слова: Кредит, банковский сектор, кредитные вложения, динамика ВВП, отношение кредитных вложений к ВВП, отрасли экономики.

Key words: Credit, banking sector, credit investments, the dynamics of GDP, the ratio of capital to GDP, the branches of economy.

Ամփոփում

Վարկը հանդիսանում է ժամանակակից տնտեսության հիմքը, տնտեսության զարգացման անբաժանելի մասը: Վարկի դերը բնութագրվում է տնտեսության, պետության և բնակչության համար դրա օգտագործման արդյունքներով: Արդի ժամանակաշրջանում ԱՀ տարածքում գործող առևտրային բանկերի վարկերը, ապահովելով կազմակերպությունների տնտեսական գործունեությունը, նպաստում են նրանց զարգացմանը՝ ավելացնելով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալները: Պետք է ընդունել, որ վերջին 15 տարիների ընթացքում դիտվել է բանկերի կողմից ԱՀ տնտեսության վարկավորման նկատելի աճ: Այս հոդվածում վերլուծության է ենթարկվել ԱՀ տնտեսության վարկային ներդրումների դինամիկան և հիմնավորվել է, որ ներդրումների աճը հիմնականում պայմանավորված է պետական լայնամասշտաբ սոցիալ-տնտեսական ծրագրերում առևտրային բանկերի ներգրավմամբ: Այնուամենայնիվ բանկային հատվածը չի բավարարում տնտեսության՝ վարկային ռեսուրսների նկատմամբ ունեցած կարիքները:

Алине Арутюнян

Арцахский государственный университет

e-почта: harutunian.aline@mail.ru

Научный руководитель: к.э.н., доцент Н.Г Аванесян

ПРОБЛЕМЫ КРЕДИТОВАНИЯ В НКР

Резюме

Кредит выступает опорой современной экономики, неотъемлемым элементом экономического развития. Роль кредита характеризуется результатами его применения для экономики, государства и населения. В настоящее время кредиты коммерческих банков действующих на территории НКР, обеспечивая хозяйственную деятельность предприятий, содействуют их развитию, увеличению объемов производства продукции, работ, услуг. Следует признать, что за 15 лет наблюдается заметное расширение кредитования банками в экономику НКР. В данной статье проанализирована динамика кредитных вложений в экономику НКР и обосновано, что рост вложений в основном обусловлен с содействием и участием коммерческих банков НКР в социально экономических программах правительства НКР. Но все же банковский сектор не удовлетворяет потребностям экономики в кредитных ресурсах.

Aline Harutunian

Arthakh State University

e-mail: harutunian.aline@mail.ru

Scientific director: Doctor of Economic Sciences, Docent N. Avanesyan

ISSUES OF CREDITING IN ARTSAKH REPUBLIC

Summary

The loan acts pillar of the modern economy, an integral part of economic developments.

The role of credit is characterized by the results of its application to the economy, the state and the population. Currently bank loans of commercial banks, operating in the territory of the NKR providing economic activities of enterprises, promote their development, increase production of products, works and services. We must admit that a marked increase of banking loans have been observed in the NKR economy for 15 years. This article analyzes the dynamics of the credit investments of the economy of the NKR and substantiates that the growth of investments was mainly due to the assistance and participation of commercial banks of the NKR in the social and economic programs of the NKR government.. However the banking sector does not meet the economy's needs for credit resources.

Վարկը շուկայական տնտեսության անցման փուլում փոխառուական կապիտալի շարժն է: Վարկը հանդիսանում է ժամանակակից տնտեսության հիմքը, տնտեսության զարգացման անբաժանելի մասը: Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսության զարգացման գործում ծանրակշիռ դերակատարում ունի բանկային համակարգը: Ներկայումս ԱՀ բանկային համակարգը գտնվում է դինամիկ զարգացման փուլում: Այս փուլում մեծ կարևորություն է ստացել բանկային վարկը:

ԱՀ տարածքում գործող բանկերը ՀՀ միասնական բանկային համակարգի մասն են կազմում և ենթարկվում են այն նույն օրենքներին և նորմատիվ իրավական ակտերին, որոնք տարածվում են ՀՀ բանկերի գործունեության վրա: 2018թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ բանկային համակարգում գործող 17 բանկերից միայն 8-ն է ներկայացված ԱՀ տարածքում: Այստեղ գործում են գրանցված ՀՀ առևտրային բանկերի 541 մասնաճյուղերից 32-ը, կամ ընդհանուր թվի 5.9 տոկոսը գտնվում են ԱՀ տարածքում, ինչը ըստ էության վատ ցուցանիշ չէ՝ հաշվի առնելով ԱՀ և ՀՀ բնակչության թվերի հարաբերությունը:¹

Վերջին տարիներին ԱՀ Կառավարությունը տնտեսական քաղաքականությունը փորձում է իրականացնել ոչ թե տնտեսական աճի, այլ տնտեսական զարգացման հայեցակարգի հիման վրա, որի հաջող ելքն էլ կրնա լինել տնտեսական աճով:

Տնտեսական աճը երկրի տնտեսության զարգացման ամփոփ բնութագրիչն է: Տնտեսական աճ ապահովող տնտեսությունն ավելի մեծ հնարավորություններ ունի նոր սոցիալական ծրագրեր իրականացնելու, աղքատության և շրջակա միջավայրի խնդիրները լուծելու ուղղությամբ: Այն գնահատվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) շարժով:

Աղյուսակ 1-ի տվյալների համաձայն՝ 2017թ. ՀՆԱ-ն , արտահայտված շուկայական գներով , նախորդ տարվա համեմատ ավելացել է 15,6 տոկոսով, իսկ ՀՆԱ-ի աճի տեմպը ավելացել է 6,4 տոկոսով, ինչը նշանակում է, որ ռեսուրսներն արդյունավետ են օգտագործվել և տնտեսական զարգացումը արագանում է:


Աղյուսակ 1: ՀՆԱ-ի դինամիկան 2010-2017թթ.

Հ/Հ	Ցուցանիշ	Զափի միավորը	Ցուցանիշի մեծությունը ըստ տարիների							
			2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	
1	Համախառն ներքին արդյունքը շուկայական գներով	Մլն ՀՀ դրամ	118187,2	135498,5	150015,7	168563,6	188840,3	209345,7	229651,6	272070,8
2	ՀՆԱ-ի աճի տեմպը	%	105,5	109,1	109,9	109,3	108,9	109,1	109,2	115,6

¹ www.b4b.am

3	Տնտեսական աճի տեմպը		5,5	9,1	9,9	9,3	8,9	9,1	9,2	15,6
---	---------------------	--	-----	-----	-----	-----	-----	-----	-----	------


Ներկայումս ԱՀ-ում ներդրված է բանկային ծառայությունների այդ թվում՝ նաև վարկավորման բավականին լայն համակարգ: Հարկ է նշել, որ վերջին տարիներին, ընդհանուր առմամբ, դիտվում է առևտրային բանկերի վարկերի կազմի աճի միտում (Գծապատկեր 1): Վերլուծելով 2012-2017 թթ. -ի ԱՀ տարածքում գործող առևտրային բանկերի վարկային ներդրումները այդ ժամանակաշրջանում վարկային ներդրումները աճել մոտ 88,8 տոկոսով, չնայած համաշխարհային տնտեսությունում տիրող անբարենպաստ իրավիճակին, որն էլ իր հերթին իր ազդեցությունն է ունեցել ԱՀ տնտեսության վրա¹:



Գծապատկեր 1: ԱՀ տարածքում գործող առևտրային բանկերի վարկերի կազմի դինամիկա 2012-2016թթ.

Կարևորվում է առևտրային բանկերի վարկեր կազմի վերլուծությունը 2012-2017թթ.-ին, քանի որ այդ ժամանակաշրջանը տնտեսության համար բարդ շրջան էր: Պետք է նշել, որ 2015թ.-ին տնտեսությունում վարկային ներդրումների նվազումը պայմանավորված էր ճգնաժամային երևույթներով, որոնք սկսվել էին նկատվել 2014 թ.-ի կեսերին և վատթարացել էին 2015թ.-ին, ինչի հետ կապված առևտրային բանկերը ստիպված էին սահմանափակել վարկավորումը: Այդ ընթացքում բանկերում նախատեսվում էին պոտենցիալ վարկառուների նկատմամբ պահանջների խստացում՝ մասնավորապես նրանց կարողությունները կատարելու իրենց վրա դրված պարտավորությունները ճգնաժամային պայմաններում:

Այսպես 2012թ.-ի համեմատությամբ 2017թ.-ին ԱՀ բանկային համակարգի վարկերի ծավալները աճել են մոտ 88,8 տոկոսով՝ 79425,8 մլն դրամից հասնելով 150025,7 մլն դրամի (Գծապատկեր 3): 2016 թ.-ին վարկերի 0,3 տոկոսը կազմել են բանկերի ժամկետանց վարկերը իսկ երկարաձված վարկերը կազմել են ընդհանուր վարկերի 0,2 տոկոսը, ինչն էլ մեր տնտեսության համար վատ ցուցանիշ է:




¹ www.statnkr.am

Գծապատկեր 3: ԱՀ առևտրային բանկերի վարկերի կազմի 2012-2017թթ. վերլուծություն

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՀ-ում վերջին տարներին նկատվում է տարադրամով տրամադրված վարկերի տեսակարար կշռի աճի միտում (Գծապատկեր 4):


2017թ. արտարժույթով տրամադրված վարկային ներդրումների ծավալը կազմել է 87593,2 մլն դրամ կամ ընդամենը վարկային ներդրումների 58,3 տոկոսը: Արտարժույթով վարկավորման ծավալները 2016թ-ի նկատմամբ աճել են 10939,3 մլն դրամով կամ 14,2 տոկոսով: ԱՀ բանկային համակարգում տարադրամով տրամադրվող վարկերի տեսակարար կշռի ավելացումը պայմանավորված է արտարժութային ռիսկի կարգավորման անհրաժեշտությամբ:



Գծապատկեր 4: Առևտրային բանկերի վարկերը ըստ արժույթի տեսակների (մլն դրամ)

ԱՀ տարածքում գործող բանկերը հիմնականում ներգրավված են ԱՀ կառավարության բոլոր տարածքային ներդրումային ծրագրերին, ինչպես դրանց զարգացման, այնպես էլ իրականացման ժամանակ:

Ավելի հստակ առևտրային բանկերի վարկերի ճյուղային կառուցվածքի զարգացման դինամիկան ներկայացված է Գծապատկեր 5-ում:



Գծապատկեր 5: Առևտրային բանկերի վարկերի ճյուղային կառուցվածքը (տոկոսներով)

2017թ.-ի դրությամբ արդյունաբերությունում իրականացված վարկավորումը կազմել է 12702,9 մլն դրամ (2016թ. համեմատ նվազել է մոտ 2 անգամ, ինչը պայմանավորված է Ներդրումային հիմնադրամի կողմից սուբսիդավորված վարկերով), գյուղատնտեսությունում՝ 1212,5 մլն դրամ, շինարարությունում՝ 3017,6 մլն դրամ, առևտրում՝ 1856,9 մլն դրամ և այլ ճյուղերում՝ 131235,8 մլն դրամ:

2013-2017թթ. ընկած ժամանակահատվածում վարկային ներդրումները ըստ գյուղատնտեսության, շինարարության և առևտրի ճյուղերի նվազել են համապատասխանաբար 2,5 անգամ, 1,1 անգամ և 3,5 անգամ:

¹ www.statnkr.am

ԱՀ տարածքում գործող առևտրային բանկերը ներգրավված են հանրապետության զարգացման տնտեսական ծրագրերի մեջ: Պետք է նշել, որ ԱՀ տարբեր սոցիալ-տնտեսական ոլորտների զարգացումը խթանելու և սկսնակ տնտեսավարող սուբյեկտներին աջակցություն ցուցաբերելու նպատակով 2007թ. նոյեմբերի 1-ին՝ ԱՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 451 որոշմամբ, ստեղծվել է Արցախի ներդրումային հիմնադրամը: Հիմնադրամն իրականացնում է ԱՀ-ում ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված պետական աջակցության ամենամյա ծրագրերը, ինչպես նաև հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցության ապահովման գործընթացը:

Ներդրումային հիմնադրամի ծրագրի շրջանակներում վարկերի կառուցվածքը տրամադրված առևտրային բանկերի կողմից ՓՄՁ սուբյեկտներին վերջին 5 տարվա ընթացքում (Աղ.1) դիտվում է ըստ տնտեսության ճյուղերի վարկային ներդրումների նվազեցում:


Աղյուսակ 1: Ծրագրի շրջանակներում տրամադրված երաշխավորագրերի բաշխվածությունն ըստ տնտեսության ճյուղերի 2011-2016թթ¹.

	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Արդյունաբերություն	1356,6	890,6	730,1	624,4	557,7	584,5
Ծառայություններ	1681,0	729,8	893,8	396,8	56,0	151,9
Առևտուր	467,1	431,3	497,9	651,0	328,4	330,1
Շինարարություն	203,8	143,9	40,8			
Գյուղատնտեսություն						17,1

ԱՀ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման և ԱՀ-ում բնակարանաշինության զարգացման նպատակով Հիմնադրամը 2008 թվականից իրականացնում է բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարան ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցության ապահովման ծրագիրը: Հիմնադրամը շարունակել է բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարան ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցության ծրագրի իրականացումը, մասնավորապես հիփոթեքային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ուղղությամբ, որի դեպքում Հիմնադրամի կողմից սուբսիդավորվել է հիփոթեքային վարկերի տարեկան տոկոսադրույքների մինչև 6 տոկոսային կետը, ինչի շնորհիվ ապահովվել է առևտրային բանկերի կողմից տրամադրվող հիփոթեքային վարկերի մատչելիությունը ԱՀ քաղաքացիների համար:

Առավել հստակ պատկերացնելու համար ուսումնասիրենք Հիմնադրամի հետ համագործակցող բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից հիփոթեքային վարկերի տրամադրման դինամիկան 2013-2016թթ-ին :

¹ aif.am, 2011-2015թթ. ֆինանսական հաշվետվություններ



Գծապատկեր 6: Հիփոթեքային վարկերի տրամադրումն ըստ հիմնադրամի հետ համագործակցող բանկերի և վարկային կազմակերպությունների, 2013-2016թթ.


2015թ. ֆինանսավորված վարկերի քանակների ու գումարների կտրուկ նվազումը պայմանավորված է համագործակցող բանկերի կողմից, մասնավորապես՝ Արցախյան ՓԲԸ-ի, վարկավորման գործընթացի ժամանակավոր դադարեցմամբ:

Ընդհանուր առմամբ, ծրագրի գործարկման ինը տարիների ընթացքում Հիմնադրամի գործընկեր բանկերի կողմից 2275 ընտանիքների տրամադրվել է ավելի քան 17.7 մլրդ դրամի վարկ, ֆինանսական աջակցությունից օգտվել է 8760 քաղաքացի:

Պետական քաղաքականության առումով կարևոր ձեռքբերում էր ԱՀ Գյուղատնտեսական ստեղծումը: Այն ստեղծվել է 2006թ.-ի հունվարի 26-ին ԱՀ Կառավարության կողմից, սակայն նրա լայնամասշտաբ միջոցառումները վերսկսվել են 2007թ.-ի վերջին՝ նոր տեմպ հաղորդելով գյուղատնտեսության աճին: Հիմնադրամի գործունեության շրջանակներում ԱՀ տարածքում գործող առևտրային բանկերի միջոցով տրամադրվում են վարկեր: Համաձայն Հիմնադրամի 2017թ.-ի հաշվետվության Հիմնադրամի կողմից բանկերի միջոցով տրվող վարկերի տոկոսների մասնակի սուբսիդավորումը կրճատվել է 1 տոկոսով 2016թ.-ի համեմատ:


ԱՀ տնտեսության զարգացման գործում մեծ դեր են խաղացել առևտրային բանկերը, որոնք գործում են ԱՀ տարածքում:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրելով բանկերի վարկային ներդրումները կարևորում ենք ուսումնասիրել Բանկային համակարգի վարկեր/ ՀՆԱ ցուցանիշը: Ըստ այդ ցուցանիշի ԱՀ տնտեսությունում վերջին տարիներին նկատվում է բանկային վարկավորման զգալի աճ (Գծապատկեր 7):



Գծապատկեր 7: Բանկային համակարգի վարկեր/ՀՆԱ հարաբերակցության դինամիկան 2012-2017թթ., %

Ոսումնասիրվող ժամանակաշրջանում Բանկային համակարգի վարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին 2015թ.-ի (52%) համեմատ 2017թ. աճել է 3,1 տոկոսով կազմելով 55,1 %¹:



Այսպես, ներքոհիշյալ աղբյուրի համաձայն, ֆինանսական հատվածի կողմից ներքին վարկավորման հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 2016 թվականի դրությամբ կազմել է . Հայաստան-54 տոկոս, Բելառուս-47.4 տոկոս, Ղազախստան-43.6 տոկոս, Ադրբեջան-38.9 տոկոս, Ռկրաինա-78.8 տոկոս Զարգացած երկրներում այդ ցուցանիշը զգալի բարձր է (150-300% սահմաններում):Այդպիսի թվային տարբերությունները վկայում են ԱՀ տարածքում գործող բանկերի կողմից տնտեսության աճի ֆինանսավորման համար ոչ բավարար վարկային պոտենցիալի օգտագործման մասին, որն էլ հենց համարվում է յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսության զարգացման գործոն:

¹ www.statnkr.am

ՀՏԴ338(479.243)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՀ-ՈՒՄ

Մերի Զաքարյան

Արցախի պետական համալսարան

Էլ. հասցե: merizakarian@rambler.ru

Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ռ.Յա. Մանգասարյան

Բանալի բառեր: տնտեսական զարգացում, ՀՆԱ, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, տնտեսական աճ, ինդեքս, հավելված, ՓՄՁ

Ключевые слова: экономическое развитие, ВВП, сельское хозяйство, промышленность, экономический рост, индекс, прирост, МСП

Keywords: economic development, GDP, agriculture, industry, economic growth, index, growth, SME

Ամփոփում

Հոդվածում դիտարկվել են ԱՀ-ում վերջին 10 տարվա կտրվածքով տնտեսական աճի ձեռքբերված տեմպերը, ներկայացվել են ՀՆԱ-ի աճը պայմանավորող հիմնական բաղկացուցիչները, վերլուծվել են ԱՀ տնտեսության զարգացման համար ռազմավարական նշանակություն ունեցող որոշ ճյուղերի ցուցանիշները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել մարդկային կապիտալի զարգացմանը և ՓՄՁ-ի դերի բացահայտմանը ԱՀ տնտեսական կայուն զարգացման գործում:

Мери Захарян

Арцахский государственный университет

е-почта: merizakarian@rambler.ru

Научный руководитель - к.э.н., доцент Р.Я. Мангасарян

**АНАЛИЗ ОСНОВНЫХ ПОКАЗАТЕЛЕЙ, ХАРАКТЕРИЗУЮЩИХ
ЭКОНОМИЧЕСКОЕ РАЗВИТИЕ РА**

Резюме

В статье рассмотрены достигнутые темпы экономического роста РА за последние 10 лет, представлены основные составляющие роста ВВП, проанализированы показатели некоторых отраслей, имеющих стратегическое значение для развития экономики РА, а также затронуты вопросы развития человеческого потенциала и представлена роль МСП в обеспечении стабильного экономического развития в РА.

Meri Zakaryan

Artsakh state university

е-mail: merizakarian@rambler.ru

Scientific Head- Candidate of Economic Sciences, Docent R.Ya.Mangasaryan


**ANALYSIS OF THE MAIN INDICATORS CHARACTERIZING THE ECONOMIC
DEVELOPMENT OF THE RA**

Summary

The article considers the achieved rates of economic growth of the RA over the past 10 years, presents the main components of GDP growth, analyzes the indicators of some sectors of strategic importance for the development of the RA economy, as well as the issues of human development and the role of SME in ensuring stable economic development in the RA.

Տնտեսական կյանքի զլոբալիզացման և պոստինդուստրիալ տնտեսական համակարգին անցում կատարելու գործընթացում <<տնտեսական աճ>> ֆենոմենը էական փոփոխությունների է ենթարկվում: Որոշիչ նշանակություն են ձեռք բերում աճի ոչ թեքանակական, այլ որակական պարամետրերը: Հենց նրանք են այն հիմնական գործոնները, որոնք ապահովում են ազգային զարգացումը և ազգային մրցունակությունը զլոբալիզացվող աշխարհում:

ԱՀ-ում տնտեսական զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունն ունի ինչպես գործնական, այնպես էլ գիտական նշանակություն, մանավանդ որ միջազգայնորեն չճանաչված հանրապետությունում այդ ուղղությամբ ձեռնարկվում են կարևոր միջոցառումներ: Հարցը էական է նաև հանրապետությունում տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՀ-ում վերջին 10 տարիների ընթացքում ապահովվել է կայուն տնտեսական աճ, որի միջին տարեկան ցուցանիշը կազմել է մոտ 10.4% /զձապատկեր 1/:




Գձապատկեր 1. ՀՀ-ի փոփոխությունը 10 տարվա կտրվածքով [7]

2018թ. հունվարի դրությամբ 1 շնչին ընկնող ՀՀ-ն ԱՀ-ում կազմել է 1 855.9 հազար ՀՀ դրամ կամ 3 844.7 ԱՄՆ դոլար, որը մոտ 3 անգամ գերազանցում է 2008թ.-ի մակարդակը (623.1 հազար ՀՀ դրամ):


2017թ. ՀՀ-ն նախորդ տարվա նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 15.6%-ով՝ անվանական արտահայտությամբ կազմելով 272 070.8 մլն ՀՀ դրամ: ՀՀ-ի նշված աճի 11.7% ապահովվել է արդյունաբերության, 3.7%՝ առևտրի և ծառայությունների, 0.9%՝ գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության և միայն 0.1%՝ շինարարության հաշվին: ՀՀ-ի կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է հասնում <<Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովագրություն>> ոլորտին՝ կազմելով 25.1%, ինչը նվազել է 2016թ. համեմատ 4.3%-ով: Նվազել է նաև շինարարության մասաբաժինը՝ 11.5%-ից հասնելով 9.8%-ի: Կտրուկ աճ է նկատվել <<Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում>> ճյուղում՝ 5.5%-ից հասնելով 14.2%-ի: Եվ չնայած նրան, որ ԱՀ-ն ագրարային երկիր է, գյուղատնտեսության մասնաբաժինը կրճատվել է 0.9%-ով՝ 13.2%-ից մինչև 12.3%-ի [7]: 2018-2020թթ. միջնաժամկետ կանխատեսումներով տնտեսական աճը ծրագրավորվել է 8 % [6]:

Ազգային տնտեսության զարգացման, տնտեսական աճի ապահովման առաջատար օղակն են ներդրումային ռեսուրսները, որոնց քանակական աճը դրական ազդեցություն է ունենում հասարակական արտադրության ծավալի և զբաղվածության, տնտեսության մեջ կառուցվածքային փոփոխությունների, նրա ճյուղերի և ոլորտների զարգացման վրա: Սակայն ԱՀ-ում 2016թ.-ին ոչ ֆինանսական ակտիվներում կատարված ներդրումների աճը նախորդ տարվա համեմատ կրճատվել է մոտ 42%-ով, ինչը իր արձագանքն է գտել հիմնական ոլորտների հավելաճի տեմպերի վրա, ինչպես նաև ՀՀ-ի իրական աճի վրա: Ներդրումների հիմնական մասը ուղղվում է արդյունաբերության ոլորտ՝ 60.06% 2016թ.-ին՝ 2015թ.-ին 39.42% փոխարեն, սակայն քանակական արտահայտությամբ տվյալ ոլորտին ուղղվող ներդրումների քանակը վերջին 3 տարվա կտրածքով կրճատվել է մոտ 1.5 անգամ: Երկրորդ տեղում է շինարարության ոլորտը, այնուհետև տրանսպորտը և կապը, գյուղատնտեսությունը /զձապատկեր 2/:



Գծապատկեր 2. Ոչ ֆինանսական ակտիվներում կատարված ներդրումների բաշխվածությունը ըստ տնտեսության ճյուղերի, 2016թ. [7]

2017թ. վարկային ներդրումների ասպարեզում իրավիճակը հետևյալն է. վարկերի հիմնական մասը ուղղվել է այլ ճյուղերին (87.5% կամ 131 235.8 մլն դրամ), արդյունաբերությունում իրականացված վարկավորումը կազմել է 8.5%, որը, սակայն, 2016թ. համեմատ նվազել է 47.3%-ով՝ կազմելով 12 702.9մլն դրամ, առևտրի ոլորտում՝ 1.2%՝ 2016թ.-ի համեմատ նվազելով 43%-ով, շինարարությունում՝ 2%՝ աճելով 63.3%-ով և կազմելով 3 017.6մլն դրամ, իսկ գյուղատնտեսությունում՝ 0.8%՝ աճելով 21.4%-ով /գծապատկեր 3/:




Գծապատկեր 3. Վարկային ներդրումների բաշխվածությունը ըստ տնտեսության ճյուղերի, 2017թ. [7]

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 4-ից, թե՛ ուղղվող ներդրումների, թե՛ տրամադրվող վարկերի միայն չնչին մասն է ուղղվում գյուղատնտեսության զարգացմանը, ինչը անընդունելի է զարգացման ագրարային ուղղվածություն ունեցող երկրների համար, ինչպիսինն է նաև ԱՀ:

Գծապատկեր 4. Գյուղատնտեսության վարկավորումը և ուղղվող ներդրումների մասնաբաժինը [7]

2013-2017թթ. արդյունաբերության ճյուղում միջինում գրանցվել է 18.84% իրական աճ, որին հիմնականում նպաստել է սննդի արդյունաբերությունը, որի զարգացումն էլ կապված է տեղական գյուղատնտեսական մթերքների վերամշակման հետ /գծապատկեր 5/:




Գծապատկեր 5. Արդյունաբերության ծավալի դինամիկան [7]

Սննդի արդյունաբերությունը 2013-2017թթ. իրական արտահայտությամբ ցուցաբերել է 1.9% միջին տարեկան աճ: 2017թ.-ին արդյունաբերական արտադրանքի ծավալի (97 490.3 մլն դրամ) 54.8% աճը ապահովվել է <<Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում>> և <<Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում>> ճյուղերի հաշվին, որոնց աճը կազմել է 160% և 36.2% համապատասխանաբար: Մշակող արդյունաբերությունը 2017թ. աճել է 3.2%-ով՝ նախորդ տարվա 8.5%-ի փոխարեն: 2013-2017թթ. այն ապահովել է 1.56% միջին տարեկան աճ: Հանքագործական արդյունաբերությունը 2013-2017թթ. իրական արտահայտությամբ միջին տարեկան կտրվածքով աճել է 48.5%-ով: <<Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում>> ճյուղի համար 2013-2017թթ. զարգացման տարիներ էին՝ կառավարության կողմից վարվող էներգետիկ քաղաքականության շնորհիվ, որը միջին տարեկան կտրվածքով ապահովել է 14.4% աճ: Ոլորտի զարգացման համար շարունակվում են փոքր ՀէԿ-ի կառուցման և շահագործման, այլընտրանքային էներգիայի աղբյուրների

կիրառման ընդլայնման աշխատանքները: Հանրապետությունում ներկա դրությամբ գործում է 17 ՀԷԿ, որոնցից ամենախոշորը Սարսանգ ՀԷԿ-ն է՝ 50 ՄՎտ դրվածքային հզորությամբ, իսկ մնացած 16 փոքր ՀԷԿ-ը՝ մոտ 60 ՆՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ [3]: 2018-2020թթ. իրական աճը կանխատեսվել է համապատասխանաբար 15%, 9%, 9% [6]:

Գյուղատնտեսության միջին տարեկան աճը 2013-2017թթ. կազմել է 7.1%: Սակայն տվյալ հատվածում իրական աճի ցուցանիշը անկայուն վարքագիծ է դրսևորել՝ պայմանավորված բուսաբուծության արտադրանքի ծավալի տատանումներով: Այսպես, չնայած անասնաբուծության արտադրանքի 37.6% իրական աճի՝ 2014թ. գրանցվել է գյուղատնտեսական արտադրանքի -4.3% իրական աճ, քանի որ բուսաբուծության արտադրանքի իրական աճը կազմել է -24.2%: Իսկ 2012թ. գյուղատնտեսական արտադրանքի իրական աճը կազմել է 23.9%, որը ապահովվել է բուսաբուծության և անասնաբուծության արտադրանքների համապատասխանաբար 32.8% և 9.0% իրական աճով: 2013-2017թթ. բուսաբուծության արտադրանքը միջինում ապահովել է 3.8% աճ, որը անկայուն էր, իսկ անասնաբուծության արտադրանքը ապահովել է կայուն աճ՝ միջինում 15.2% իրական աճ /գծապատկեր 6/:



Գծապատկեր 6. Գյուղատնտեսական համախառն արտադրանքի, բուսաբուծության և անասնապահության համախառն արտադրանքի հավելաճի տեմպերը [5]

2017թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը փաստացի գներով կազմել է 76.2 մլրդ դրամ, որը 2016թ. համեմատ համադրելի գներով աճել է 7.8%-ով, որը ապահովվել է բուսաբուծության արտադրանքի 8.4%, իսկ անասնաբուծության արտադրանքի՝ 7.2% իրական աճով: Գյուղատնտեսական նշանակության հողերի (1 141.7 հազար հա) մոտ 64.5% բաժին է ընկնում արոտավայրերին, իսկ ցանքատարածությունների մոտ 90% բաժին է հասնում հացահատիկին և հատիկալնդեղենին: 2017թ. նվազել է ԽԵԱ գլխաքանակը՝ 4.8%-ով: 2018-2020թթ. կանխատեսվում է 10.3% տարեկան աճ, որը կապահովվի կառավարության կողմից նախատեսվող միջոցառումների իրականացումը [6]:

Շինարարության ծավալը վերջին 5 տարիների կտրվածքով միջինում աճել է 4.7%-ով: 2017թ. ԱՀ-ում իրականացվել է 47.1 մլրդ դրամի շինարարություն, ինչը 2016թ. համեմատ ապահովել է 1.2%-ի իրական աճ և որի 88.7% կազմել են շինմունտաժային աշխատանքները: 2018-2020թթ. կանխատեսվում է միջինում 4.3% աճ [7]:

2013-2017թթ. արտաքին առևտրաշրջանառությունը միջինում աճել է 6%-ով, ընդ որում՝ ներմուծումը աճել է 0.4%-ով, իսկ արտահանումը՝ 26.3%-ով: Ներմուծման մեջ ամենամեծ բաժինը՝ 17.4%, հասնում է հանքահումքային մթերքներին: Արտահանման մեջ նրանք կազմում են 66.8%: Առևտրային հաշվեկշիռը նշված ժամանակում բացասական էր, իսկ 2017թ. բացասական հաշվեկշիռը նվազել է 25.3%-ով: 2018-2020թթ. կանխատեսվում է արտաքին

առևտրաշրջանառության ծավալների աճ՝ միջինում 6.8%-ով, արտահանման դեպքում՝ 8% աճ, իսկ ներմուծման՝ 6,3% աճ [6]:

Ժամանակակից տնտեսությունում կայուն տնտեսական աճի ձեռքբերումը նաև մարդկային կապիտալի զարգացման ապահովման հիմքն է: Մարդկանց որոշակի շերտերի կողմից երկրի լքումը և <<օտար ավերում>> աշխատանք փնտրելը կասեցնելու նպատակով անհրաժեշտ է բարձրացնել կյանքի որակը, բարելավել կյանքի մակարդակը, ընդլայնել անհատների ազատությունները, ավելացնել նրանց իրավունքների և հնարավորությունների շրջանակը, բարձրացնել սոցիալական արդարությունը և այլն: Մարդկային կապիտալի զարգացման կոնցեպցիայի հիմնական ռազմավարական գործիք է Մարդկային զարգացման համաթիվը, որը մշակվել է 1990թ.: Ինդեքսի նպատակն է հասարակական զարգացումը գնահատել ոչ թե միայն ազգային եկամտից ելնելով, այլ նաև հաշվի առնելով կրթության, առողջապահության ոլորտի ձեռքբերումները: Առաջատար են Նորվեգիան, Ավստրալիան, Շվեյցարիան: ՀՀ-ն 2015թ. բարելավել է իր դիրքերը՝ 87-րդից դառնալով 85-րդը (0.733) [4]: Կատարված հաշվարկների արդյունքում պարզել ենք, որ ԱՀ-ում ինդեքսը կազմում է 0.69, ինչով պայմանավորված ԱՀ դասվում է ինդեքսի միջին ցուցանիշ ունեցող երկրների շարքին՝ մոտավորապես զբաղեցնելով 106-րդ տեղը 2015թ. տվյալներով: Փաստորեն, ԱՀ-ում կան բոլոր հնարավորությունները մարդկային ներուժի իրացման համար: Նշենք նաև, որ 2017թ. պետության կողմից կատարվող ծախսերի մեջ կրթությանը ուղղվող ծախսերի մասնաբաժինը կազմում է 15.2%, իսկ ամենամեծ բաժինը հասնում է սոցիալական պաշտպանությանը՝ 22.4% [7]:

Համաշխարհային փորձը ապացուցում է, որ առանց ՓՄՁ-ի անհնար է տնտեսության ներդաշնակ զարգացումը, քանի որ այն ապահովում է տնտեսական աճի բարձր տեմպեր, ՀՆԱ-ի որակի և կառուցվածքի մինչև 40-50%: Զարգացած երկրներում ձեռնարկատիրական կառույցների մոտ 70% բաժին է ընկնում փոքր բիզնեսին, իսկ ՀՆԱ-ի և ազգային եկամտի գերակշիռ մասը ստեղծվում է խոշոր ընկերությունների կողմից: Հարկ է նշել Թայվանի փորձը, որտեղ ՓՄՁ-ին բաժին է ընկնում ՀՆԱ-ի 45% և զբաղվածության 78%, ինչը տնտեսության զարգացման մեջ նշված ոլորտին տալիս է որոշիչ դեր [2]: ԱՀ-ում ՓՄՁ-ի բաժինը բոլոր ձեռնարկությունների մեջ կազմում է մոտ 98.4% [7]: Հենց այս ցուցանիշն է ներկայացնում ՓՄՁ-ի զարգացման դինամիկան, բայց միևնույն ժամանակ ոչ միշտ է արտացոլում ձեռնարկատիրական ակտիվության իրական վիճակը, քանի որ փաստացի գրանցված ձեռնարկությունների մեծ մասը չի իրականացնում իրական գործունեություն: Վերջին 2 տարվա ընթացքում ԱՀ-ում ՓՄՁ-ի քանակը նվազել է 278-ով, սակայն ՀՆԱ-ում նրանց մասնաբաժինը միջինում տատանվել է 33-34% շրջանակներում՝ 2016թ. կազմելով 38.5%:

ԱՀ-ում ՓՄՁ սուբյեկտների չափորոշիչները և պետական աջակցության հիմնական ուղղությունները սահմանվում են «ՓՄՁ պետական աջակցության մասին» ԱՀ օրենքով, որով ամրագրված է, որ ՓՄՁ ոլորտի զարգացումն ապահովելու նպատակով մշակվում են ամենամյա տարեկան ծրագրեր [1], որոնց իրականացնողները հանդիսանում են Արցախի ներդրումային հիմնադրամը /ԱՆՀ/ և Գյուլի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը /ԳԳԱՀ/: Նշված հիմնադրամների կողմից իրականացվում են տարբեր տիպի միջոցառումներ և ծրագրեր ՓՄՁ-ի զարգացման, ապագայում կայացման և խոշոր բիզնեսի համար արժանի մրցակից դառնալու համար:

Այսպիսով, չնայած համաշխարհային տնտեսության մի շարք բացասական երևույթների, բարդ աշխարհաքաղաքական իրավիճակի՝ ԱՀ տնտեսությունը կարողանում է ապահովել տնտեսական աճի դրական դինամիկա՝ հասնելով նույնիսկ երկնիշ աճի տեմպի: Երկրում իրականացվող ծրագրերը և միջոցառումները ուղղվում են տարբեր բնագավառների և ոլորտների զարգացմանը՝ ապահովելով ներդրումային բարենպաստ պայմաններ և ստեղծելով հարկային համապատասխան դաշտ գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Հաշվի առնելով վերը շարադրվածը և ի հայտ բերելով որոշ հիմնախնդիրներ՝ փորձենք ամփոփել և ներկայացնել առաջարկություններ տնտեսության հետագա զարգացումը ապահովելու համար.

- կարևորելով տնտեսական զարգացման անհրաժեշտությունը ազգային անվտանգության ապահովման գործում՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տնտեսական աճի ոչ թե քանակական, այլ որակական պարամետրերի վրա,
- հաշվի առնելով ՀՆԱ-ի երկնիշ հավելաճի ձեռք բերման գործում արդյունաբերության, մասնավորապես՝ հանքագործական արդյունաբերության դերը՝ կարևորում ենք նոր հանքավայրերի հետազոտման և շահագործման աշխատանքների իրականացումը,
- փաստելով տնտեսական աճի բարձր տեմպերի վրա ներդրումային ռեսուրսների ունեցած մեծ ազդեցությունը՝ անհրաժեշտություն է առաջանում ԱՀ-ում շարունակել ներդրումային բարենպաստ պայմանների, մասնավորապես՝ հարկային արտոնյալ դաշտի ձևավորումը,
- կարևորելով գյուղատնտեսության թե՛ էքստենսիվ, թե՛ ինտենսիվ աճը՝ անհրաժեշտ է շարունակել հողերի ոռոգման (կաթիլային) և նշված ուղղությամբ նոր տեխնոլոգիաների ներդրման աշխատանքները,
- կարծում ենք, որ գյուղատնտեսության զարգացման խնդիրների լուծումը Արցախի շրջանների և գյուղական վայրերի զարգացման գործում կարող է դառնալ երիտասարդության գործունեության մասնակցության ապահովման նախապայման, ինչն էլ իր հերթին կնպաստի ներքին միգրացիայի կանխմանը,
- հաշվի առնելով մարդկային կապիտալի անփոխարինելի և կարևոր դերը տնտեսության զարգացման և տնտեսական աճի ձեռք բերման գործում՝ պետք է մեծ ուշադրություն դարձնել պետական բյուջեից կրթությանը և գիտությանը հատկացվող գումարներին և գործունե կապ ստեղծել իրական հատվածի և կրթության ոլորտի միջև,
- փորձը ցույց է տալիս, որ ՓՄՁ-ի զարգացումը մեծ դեր է խաղում երկրի տնտեսական զարգացման ապահովման գործում, ուստի կարևորվում է ԱՀ-ում ոլորտի զարգացմանը ուղղված համապատասխան ծրագրերի մշակումը և իրականացումը, ինչը արտոնյալ պայմաններ կստեղծի ոլորտի զարգացման և հետագա կայացման համար:

Օգտագործված գրականության ցանկ

- 1- «ՓՄՁ պետական աջակցության մասին» ԼՂՀ օրենք
- 2- Бирюков А. Развитие малого и среднего бизнеса - локомотив экономики (опыт Тайваня) // Вопросы экономики. - 2004. - № 9., стр.128
- 3- www.amei.am
- 4- www.gtmarket.ru
- 5- www.minagro.nkr.am
- 6- www.minfin.nkr.am
- 7- www.stat-nkr.am

ՀՏԴ336.7

**ԲԱՆԿԱՑԻՆ ՄԱՐԳԵԹԻՆԳԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Անուշ Ավետիսյան

ԱրՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ,

Ֆինանսներ IV-րդ կուրս,

Էլ. հասցե: anush333555@mail.ru

Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ն.Հ.Ավանեսյան

Բանալի բառեր՝ բանկային հատված, մարքեթինգ, բանկային ծառայությունների շուկա, հաճախորդներ, բանկային հաշիվներ, internet banking, mobile banking:

Ключевые слова: банковский сектор, маркетинг, рынок банковских услуг, клиенты, банковские счета, интернет-банкинг, мобильный банкинг.

Key words: banking, marketing, bank service market, customers, bank accounts, internet banking, mobile banking.

Ամփոփում

Հոդվածում ներկայացվում է բանկային մարքեթինգի ամփոփ բնութագիրը, դիտարկվում է բանկային ծառայությունների առանձնահատկությունները, *գարգացման* հեռանկարները: Այդ նպատակով հոդվածում կատարվել են մի շարք վերլուծություններ՝ այնպիսին, ինչպիսիք են առևտրային բանկերի հաճախորդները, բանկային հաշիվները, մարքեթինգային գործունեությունը և ծառայությունների զարգացումը:

Ануш Аветисян

АрГУ, Экономический факультет, Финансы, IV -ый курс,

е-почта: anush333555@mail.ru

Научный руководитель - к.э.н., доцент Н.Г.Аванесян

БАНКОВСКИЙ МАРКЕТИНГ: ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ

Резюме

В статье приводится общая характеристика банковского маркетинга, рассматриваются особенности, а также перспективы развития банковских услуг. С этой целью в статье проведен анализ ряда показателей, таких как: клиенты коммерческих банков, банковские счета, маркетинговая деятельность и развитие услуг банков.

Anoush Avetisyan

ASU, Faculty of Economics, Finance IV-rd year,

e-mail: anush333555@mail.ru

Scientific Head- Candidate of Economic Sciences, Docent N.H.Avanesyan

BANKING MARKETING: PROBLEMS AND PERSPECTIVES

Summary

This article represents the general characteristics of the banking marketing, observe the advantages of banking service and perspectives of the development. For that purpose in the article were done many analysis such us customers of the commercial banks, accounts of the bank, marketing activity and development of services.

Բանկերը հանդիսանում են ֆինանսական շուկայի առավել զարգացած և ունիվերսալ մասնակիցները, որոնք գտնվում են սուր մրցակցային պետական կարգավորման դաշտում: Սա է պատճառը, որ ֆինանսատնտեսական գործունեության մեջ մարքեթինգային մոտեցումը առաջին հերթին անհրաժեշտ է բանկերին՝ իրենց խնդիրների հաջող իրականացման համար:

Բանկային մարքեթինգը բանկային գործնելության կառավարման համակարգ է մարքեթինգի ընդհանուր գաղափարախոսության շրջանակներում¹։ Մարքեթինգը գտնվում է բանկի բոլոր ստորաբաժանումների աշխատանքի սրտում, ինչը նպաստում է շահութաբերության աճին և բանկային գործունեության ռիսկի նվազեցմանը։

Բանկային մարքեթինգի կարևոր խնդիրներն են՝ երկարաժամկետ ժամանակահատվածում բանկի մրցունակության և շահութաբերության բարձրացում, ծառայությունների արդյունավետ խթանում շուկայում, հաճախորդների բավարարվածություն՝ շուկայի մշտական ուսումնասիրության և բանկային ծառայությունների սպառողների վերլուծության հիման վրա։ Ժամանակակից բանկային մարքեթինգի հսկայական հնարավորությունների ուսումնասիրությունն ու օգտագործումը թույլ կտա բանկերին ապահովել ֆինանսական կայունություն և մրցունակություն։

Բանկային ոլորտում մարքեթինգի առանձնահատկությունները որոշվում են, առաջին հերթին, բանկային ծառայությունների առանձնահատկություններով։ Բանկային ծառայությունը պրոֆեսիոնալ ինտելեկտուալ արտադրանք է, որը ստեղծվել է շուկայական կարիքների մարքեթինգային հետազոտության հիման վրա՝ շուկայում իրացման եւ շահույթ ստանալու նպատակով։ Կարելի է պնդել, որ հաճախորդներին ներգրավելու և պահելու համար անհրաժեշտ է բանկային ծառայությունների ամբողջական փաթեթ։ Եվ դրա համար անհրաժեշտ է կազմակերպել մարքեթինգային ծառայություն, որը կգրավի բանկային արտադրանքի մշակմամբ և ներդրմամբ՝ օգտագործելով օտարերկրյա փորձը ծախսատար մեթոդից և սխալից խուսափելու համար²։

Այսպիսով վերոհիշյալի հիման վրա կարելի է պնդել, որ բանկային մարքեթինգի ուսումնասիրության հարցը ավելի քան արդիական է։

Հետազոտության **նպատակը է** ուսումնասիրել բանկային մարքեթինգի ոլորտը։ Նշված նպատակի իրագործումը հանգեցնում է հետևյալ **խնդիրների** ձևակերպմանն ու լուծմանը։

- Ուսումնասիրել բանկային ծառայությունները, պարզել նրանց զարգացման հեռանկարները

- Վերլուծել ԱՀ տարածքում գործող բանկային հաշիվները և հաճախորդներին Հետազոտության օբյեկտն է մարքեթինգային գործնելությունը, դրա էությունը և անհրաժեշտությունը, իսկ առարկան՝ բանկային ծառայությունների զարգացման դիտարկումը։

Աշխատանքի ուսումնասիրության համար հիմք են ծառայել մի շարք տնտեսագետների թողարկած գրքերը, հոդվածները, ԱՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակումները, ԱՀ-ում գործող օրենքները, ինչպես նաև գործող բանկերի պաշտոնական կայքերից նյութերը։

Բանկում մարքեթինգային գործնելությունը և ծառայությունների զարգացումը

Վերջին շրջանում գիտնականներն ու մասնագետները քննարկում են ֆինանսական, այդ թվում, բանկային ծառայությունների զարգացման հեռանկարները։ Կան բազմաթիվ վարկային կազմակերպություններ, հետևաբար նաև բավականին կոշտ մրցակցություն։ Եվ որպեսզի այս պայմաններում գործել ու շահույթ ստանալ անհրաժեշտ է ոչ միայն ապահովել որակյալ ծառայություն և շուկայում հաստատվել, այլ նաև կրեատիվ գործել՝ մշտապես առաջարկելով հաճախորդներին նոր բանկային ծառայություններ։

Դիտարկենք բանկային ծառայությունների զարգացման հիմնական պայմանները արդի էտապում՝

¹ Հայրապետյան Նաիրա ,Բանկային մարքեթինգ, Երևան 2003, էջ 7

² Уткин, Э.А. Банковский маркетинг / Э.А. Уткин. -М.: Инфра-М, 1995.

- Պահանջարկ: Բանկային շուկայում բանկային ծառայությունների լայն տեսականի գոյություն ունի, բայց ոչ բոլորն են բավարարում հաճախորդների պահանջները բարձր մակարդակով, ինչը պահանջում է բանկերին՝ բարելավել առկա բանկային ծառայությունների կամ սպառողների պահանջով ստեղծել նորանոր ապրանքներ:

- Մրցակցություն: Վերջերս բանկային ծառայությունների շուկայում շատ նոր բանկեր են հայտնվում, ինչը ստիպում է արդեն գոյություն ունեցողներին նոր ծառայություններ մտցնել՝ հնարավորինս շատ հաճախորդների ներգրավելու համար:

- Գիտական եւ տեխնոլոգիական առաջընթաց: Գիտական և տեխնիկական նախագծերի ներդրումը, նոր տեխնոլոգիաների և տվյալների բազայի ստեղծումը հանգեցնում են տեղեկատվական տեխնոլոգիաների և ինտերնետի դարաշրջանին, ինչը ստիպում է բանկերին անցնել հաճախորդների անձնական շփումից՝ ինտերնետով և այլ հաղորդակցման միջոցով ծառայությունների մատուցմանը:

- Մարքեթինգ: Բանկային ծառայությունների շուկայի զարգացման համար անհրաժեշտ է բանկերում բացել մարքեթինգային բաժիններ, որոնք պետք է դառնան բանկային ծառայությունների շուկայի կազմակերպման ուղեղային կենտրոն: Մարքեթինգի բաժինները պետք է զբաղվեն շուկայական հետազոտություններով, անցկացնեն հարցազրույցներ, հավաքեն և վերլուծեն քանակական ու բանավոր տեղեկություններ:

- Արտասահմանյան բանկային շուկայի զարգացման մակարդակը: Արտասահմանյան բանկերը ավելի զարգացած են նոր բանկային ծառայությունների ներդրման առումով, ինչը խթանում է մեր բանկային հատվածի զարգացմանը, նոր ծառայությունների ստեղծմանը:

Քննարկենք ԱՀ-ում բանկային ծառայությունների զարգացման հիմնական հեռանկարային ուղղությունները՝

ԱՀ-ի բանկային ծառայությունների շուկայի հաջող գործունեության համար կարևոր է որոշակի ոլորտներում կիրառել օտարերկրյա բանկերի փորձը՝ բանկային հաշիվների բացում և վարում, էլեկտրոնային հաշվարկների և վճարումների ստեղծում, հաճախորդների ֆինանսական խորհրդատվություն, ռիսկերի ապահովագրություն, բանկային ծառայությունների համար առավել բարենպաստ շուկայի հայտնաբերում եւ այլն: Կարևոր է ընդլայնել բանկային ծառայությունները, որոշելով բանկային շուկայի հատվածները՝ հատված-միևնույն կարիքներ և հատկանիշներ ունեցող սպառողների խումբ: Հետևաբար, համաշխարհային փորձի ուսումնասիրությունը և բանկային շուկայի սեգմենտացումը կօգնեն բացահայտել բանկային ծառայությունների պոտենցիալ սպառողների ընդհանուր զանգվածում համեմատաբար մեկուսացված հաճախորդներին՝ հաճախորդների նպատակային խմբերին, որոնց վրա պետք է կենտրոնացվեն բանկերի մարքեթինգային պայմանները:

Ներկայումս ԱՀ-ի բանկերը չպետք է ապավինեն միայն գոյություն ունեցող բանկային ապրանքների վրա, քանի որ ճաշակի, տեխնոլոգիայի եւ մրցակցության մշտական փոփոխություն գոյություն ունի: Հետևաբար, յուրաքանչյուր բանկ պետք է ունենա իր սեփական ծրագիր բանկային ծառայությունների նոր ձևերի ձևավորման համար:

Բանկային ծառայությունների զարգացման հեռանկարներից մեկը հեռահար բանկային սպասարկումն է (ՀԲՄ) այն իրենից ներկայացնում է համակարգ, որը հաճախորդներին հնարավորություն է տալիս իրականացնել բանկային գործառնություններ տարբեր հեռահաղորդակցության միջոցների օգնությամբ, առանց բանկային գրասենյակների այցելության:

Հաճախակիորեն օգտագործվում է նաև «home banking» տերմինը, որը սահմանվում է որպես բանկային գործառնությունների իրականացում տնային պայմաններում, հիմնված էլեկտրոնային տեխնիկայի կիրառման վրա: Սակայն «հեռահար բանկային սպասարկում» հասկացությունը ավելի լայն է և իր մեջ ներառում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց սպասարկում աշխարհի տարբեր կետերում, 24-ժամ, շաբաթական 7 օր, տարին 365 օր: ՀԲՄ համակարգը նպատակահարմար է դասակարգել ըստ

տեղեկատվական համակարգերի (ծրագրա-սարքային միջոցների) տեսակների, որոնք կիրառվում են բանկային գործառնությունների իրականացման մեջ:

ԱՀ-բանկինգը (PC-banking՝ ՀՕ-ԿլիենտԲանկ) իրականացվում է անհատական համակարգիչների միջոցով: Հաճախորդի անհատական համակարգչում տեղադրվում է ծրագիր, որի միջոցով բանկի և հաճախորդի միջև իրականացվում է փոխազդեցություն:

Ինտերնետ-բանկինգը՝ Առցանց բանկինգ (Internet-banking) օգնում է իրականացնել տարբեր բանկային գործառնություններ համացանցի միջոցով: Այստեղ կարևորվում է բանկի շուրջօրյա հասանելիությունը:

Mobile-banking-ի (SMS-banking, WAP-banking, GSM-banking) միջոցով բանկային հաշիվների կառավարումը իրականացվում է պլանշետներում, սմարթֆոններում կամ հասարակ հեռախոսներում համապատասխան բանկի հավելվածի կամ ծրագրի տեղադրման միջոցով:

Բանկոմատների միջոցով (ATM-banking) հաճախորդը որոշակիորեն կախված է տերմինալների և բանկոմատների տեղակայվածությունից: Որպես առավելություն կարելի է նշել, որ բանկոմատների օգտագործման դեպքում հաճախորդը գործ ունի կանխիկ դրամի հետ:¹

Բանկային հեռահար ծառայությունների առավելություններն են՝ օգտագործման հարմարավետություն; օպերատիվ վճարման համակարգ; մատչելիություն; ծառայությունների բազմազանություն՝ PC-banking, Internet-banking, mobile-banking, phone-banking, ATM-banking; բանկային գործառնությունների ճշգրտության մեծացում և հնարավոր սխալների թվի փոքրացում, բանկի գործառնական ռիսկերի նվազում; տեղեկատվությամբ հագեցվածություն:

Սակայն առավելությունների հետ մեկտեղ հեռահար սպասարկումն ունի նաև բազմաթիվ թերություններ ինչպես բանկերի, այնպես էլ հաճախորդների համար:

Առևտրային բանկերի համար համակարգի թերություններ են՝ հեռահար սպասարկման համակարգի ձեռքբերման/ստեղծման, ներդրման, աշխատողների ուսուցման ահռելի ծախսերը; համակարգի, բազմաթիվ հաճախորդների սպասարկման ժամանակ կապուղիների սպասարկման ծախսերը; ավելի շատ հաճախորդների ներգրավում կատարված ծախսերի փոխհատուցման նպատակով; հակերային հարձակումների բարձր ռիսկերի առկայություն:²

Հաճախորդների տեսանկյունից համակարգի թերություններ են՝ գործառնություններ իրականացնել համապատասխան սարքի առկայություն, որը հաճախ բավականին թանկարժեք է; համակարգի օգտագործման ընթացքում պարտադիր վճարների անխուսափելիություն; գրագիտության, համակարգչային հմտությունների տիրապետում; անվտանգության հետ կապված ռիսկերի առկայություն:

Սակայն, չնայած բոլոր բացասական կողմերին, բանկերը ձգտում են ակտիվորեն զարգացնել ՀԲՄ համակարգը, հաճախորդի համար ստեղծել առավել հարմարավետ պայմաններ, բարելավել և պարզեցնել սպասարկման համակարգերը, ներառելով յուրաքանչյուր գործառնության կատարման օրինակներ, նմուշներ: Հայաստանում Հայկական Ծրագրեր ընկերության կողմից մշակված ինտերնետ բանկինգ համակարգերն արդեն ներդրված են 10 բանկերում և օգտագործվում են ավելի քան 15000 անհատների և կազմակերպությունների կողմից:

ՀՕ ինտերնետ բանկինգ համակարգերն ինտեգրացված են Հայաստանում ամենատարածված ՀՕ հաշվապահական համակարգերի հետ: ՀՕ-ԻնտերնետԲանկ համակարգը հնարավորություն է ընձեռում ինտերնետ բանկինգի միջոցով արագ և անվտանգ կառավարել Ձեր ֆինանսները 24/7 ռեժիմով՝ ցանկացած պահի, ցանկացած վայրից: Դա թույլ է տալիս խնայել Ձեր ժամանակն ու ծախսերը՝ բանկ այցելելու և հերթերում սպասելու փոխարեն:

¹ Демчев И.А.Воронин Б.Б Розничный банковский бизнес: бизнес-энциклопедия

² Маркова В.Д. Маркетинг услуг. — М.: Финансы и статистика

ՀԾ-Կլիենտաբանական համակարգը բանկային հաշիվների հեռահար ղեկավարման համակարգ է: Այն հնարավորություն է տալիս սեփական աշխատատեղից հեշտ և արագ ստեղծել ու բանկ ուղարկել բազմաթիվ փաստաթղթեր: Համակարգը նախատեսված է կազմակերպությունների համար և թույլ է տալիս աշխատել մի քանի բանկերի հետ միաժամանակ:

Աղյուսակ 1. ՀԾ-ԻնտերնետԲանկը և ՀԾ-Կլիենտաբանական ՀՀ բանկերում

ՀԾ-ԻնտերնետԲանկ	ՀԾ-Կլիենտաբանական
• Ամերիաբանկ ՓԲԸ • Արարատբանկ ԲԲԸ • Արմավիսբանկ ՓԲԸ • Բիբլոս Բանկ Արմենիա ՓԲԸ • Կոնվերս Բանկ ՓԲԸ • Հայբիզնեսբանկ ՓԲԸ • ԷվոկաԲանկ ՍՊԸ	• Ամերիաբանկ ՓԲԸ • Արարատբանկ ԲԲԸ • Արմավիսբանկ ՓԲԸ • Կոնվերս Բանկ ՓԲԸ • Հայբիզնեսբանկ ՓԲԸ • ԷվոկաԲանկ ՍՊԸ

Այսպիսով, մրցունակության մակարդակի պահպանման եւ մարքեթինգային գործունեության բարելավման նպատակով առաջարկվում է ընդլայնել ծառայությունների շրջանակը՝ ներդրելով Ինտերնետ բանկինգ, mobile-banking, ինչպես նաև ակտիվորեն գովազդել բանկային ծառայությունները:


ԱՀ տարածքում գործող բանկերի հաճախորդների և բանկային հաշիվների վերլուծությունը.

ԱՀ-ում բանկային համակարգի հաճախորդների թիվը 2015թ. կազմել են 118280 անձ, որից ֆիզիկական անձինք՝ 112139, իրավաբանական անձինք՝ 6141: Նրանց հաշիվների քանակը կազմել է 178189, որից ֆիզիկական անձանց հաշիվները՝ 166078, իրավաբանական անձանց հաշիվները՝ 12111: 2016թ.հաճախորդների թիվը կազմել են 110904 անձ,որը 2015թ համեմատ նվազել է 7376-ով, ընդորում իրավաբանական անձինք՝ 677-ով,իսկ ֆիզիկական անձինք՝6699-ով: Իսկ նրանց հաշիվների քանակը կազմել է 196825,որը 2015թ համեմատ ավելացել է 18636,ընդորում ֆիզիկական անձանց հաշիվները աճել է 19469, իրավաբանական անձանց հաշիվները նվազել է 834-ով:2017թ. կազմել են 99611 անձ, որը 2016-ի համեմատ նվազել է 11293-ով,ընդորում ֆիզիկական անձինք նվազել են 10556-ով, իրավաբանական անձինք՝ 737: Նրանց հաշիվների քանակը կազմել է 170963, որը 2016թ համեմատ նվազել է 25862-ով, որից ֆիզիկական անձանց հաշիվները նվազել է 25033, իրավաբանական անձանց հաշիվները՝ 829-ով:¹

¹ <http://stat-nkr.am>

Աղյուսակ 2. Հաճախորդների և բանկային հաշիվների թիվը 2015-2017թ ԱՀ-ում

	2015	2016	2017
Ընդամենը հաճախորդներ	118280	110904	99611
Այդ թվում՝			
Իրավաբանական անձինք	6141	5464	4727
Ֆիզիկական անձինք	112139	105440	94884
Ընդամենը հաշիվներ	178189	196825	170963
Այդ թվում՝			
Իրավաբանական անձանց հաշիվներ	12111	11278	10449
Ֆիզիկական անձանց հաշիվներ	166078	185547	160514



Գծապատկեր 1. Բանկի հաճախորդների և բանկային հաշիվների դինամիկան 2015-2017թ ԱՀ-ում

Կարելի է եզրակացնել, որ բանկի մրցունակությունն ու շահութաբերությունը մեծացնելու համար անհրաժեշտ է ընդլայնել, զարգացնել ծառայությունների և նոր շուկաների շրջանակը; պարբերաբար իրականացնել մարքեթինգային հետազոտություններ՝ որոնք օգնում են հասկանալ հաճախորդների իրական կարիքներն ու պահանջմունքները; ինչպես նաև է ուսումնասիրել շուկան և սպառողների վարքը, փնտրել տրենդներ և նոր տեխնոլոգիաներ, փորձել կանխատեսել հաճախորդների պահվածքը և ցանկությունները:

Գրականություն

- [1] Հայրապետյան Նաիրա, Բանկային մարքեթինգ, Երևան 2003, էջ 7
- [2] Демчев И.А. Воронин Б.Б Розничный банковский бизнес: бизнес-энциклопедия
- [3] Маркова В.Д. Маркетинг услуг. М: Финансы и статистика, М., 1997
- [4] Уткин, Э.А. Банковский маркетинг / Э.А. Уткин. М: Инфра-М, 1995
- [5] <http://stat-nkr.am>

ՀՏԴ330.3

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երանունի Տեր-Մովսիսյան
Հովհ. Թումանյանի անվան
Վանաձորի պետական համալսարանի պատմաաշխարհագրական ֆակուլտետ
«Կառավարում» բաժնի 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ դասախոս Արինա Ստեփանյան

Բանալի բառեր՝ Ներդրումներ , օտարերկրյա ներդրում, ներդրումային միջավայր, օտարերկրյա ուղղակի ներդրում, ներդրումային քաղաքականություն, տնտեսություն, վիճակագրություն:

Օտարերկրյա ներդրումների դերը ցանկացած տնտեսության զարգացման գործում անհնար է թերագնահատել: Այն առավել ակնառու է զարգացող երկրների համար, որտեղ տնտեսության ֆինանսավորումը ներքին խնայողությունների հաշվին իրատեսական չէ: Դրանք հյուրընկալող երկրին տալիս են մի շարք առավելություններ: Օտարերկրյա ներդրումները հատկապես զարգացող երկրների համար ծառայում են արտաքին կապիտալի աղբյուր եւ արագացնում տնտեսության աճի տեմպերը: Բացի այդ, դրանք նպաստում են երկրում զբաղվածության աճին, գործարար մշակույթի «թարմացմանն» ու առողջ մրցակցային դաշտի ձևավորմանը: Իսկ զարգացած երկրներից եկած արտասահմանյան ներդրումներն իրենց հետ հյուրընկալող երկիր են բերում նոր մտեցումներ և տեխնոլոգիաներ:

Օտարերկրյա ներդրումների կարեւորությունը Հայաստանի համար հայտարարվում է կառավարության մակարդակով: Արտասահմանյան կապիտալով են «աշխատում» ռազմավարական նշանակության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են հեռահաղորդակցությունը, էներգետիկան, կոմունալ ծառայությունները, որոնց զարգացումը ներքին ռեսուրսների հաշվին անհամեմատ դանդաղ կընթանար:

Նախ, հասկանանք, թե ինչ են իրենցից ներկայացնում ներդրումները:

Ներդրումները շահույթ կամ սոցիալական արդյունք ստանալու նպատակով ձեռնարկատիրության ոլորտում կատարվող երկարաժամկետ ծախսերն են, որոնք կարող են իրագործվել ֆինանսական (փող, արժեթղթեր), գույքային (շինություններ, սարքավորումներ, մեքենաներ) եւ ինտելեկտուալ (արտոնագիր, լիցենզիա) եղամնակներով:

Ներդրել ,լայն առումով նշանակում է՝ «այսօր բաժանվել փողից՝ ապագայում ավելի մեծ գումար ստանալու համար»:

Ներդրումների սուբյեկտներ են իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, այդ թվում օտարերկրյա, ինչպես նաեւ պետություններ եւ միջազգային կազմակերպությունները: Ներդրումների օբյեկտներ են նոր գործարկվող, վերագինվող, վերակառուցվող եւ ընդլայնվող հիմնական միջոցները, արժեթղթերը, սեփականության այլ օբյեկտներ, գիտատեխնիկական արդյունքներ, ինտելեկտուալ սեփականության իրավունքները:

Տնտեսագիտության տեսությունում ներդրումները ներկայացվում են որպես տնտեսական աճի շարժիչ ուժ, իսկ շարունակական, կայուն և շոշափելի տնտեսական աճը հանդիսանում է սոցիալ-տնտեսական զարգացման անհրաժեշտ պայման:

Ըստ ֆինանսական ռեսուրսների նկատմամբ սեփականության ձևերի

- Մասնավոր
- Պետական
- Օտարերկրյա
- Համատեղ

Այս հոդվածում կանդրադառնամ հենց օտարերկրյա ներդրումներին:

ՀՀ-ի տարածքում օտարերկրյա ներդրումների իրականացման իրավական, տնտեսական ու կաամակերպական հիմքերը սահմանվում են «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքում: Սույն օրենքում սահմանվում է, որ օտարերկրյա ներդրում է համարվում գույքի ցանկացած տեսակ, այդ թվում ֆինանսական միջոցները եւ մտավոր արժեքները, որոնք օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով:

Օտարերկրյա ներդրող է հանդիսանում օտարերկրյա պետությունը, ցանկացած օտարերկրյա իրավաբանական անձ, օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մշտապես բնակվող ՀՀ-ի քաղաքացի, ինչպես նաեւ միջազգային կազմակերպություն, որն իր գտնվելու վայրի օրենսդրությանը համապատասխան ներդրում է կատարում Հայաստանի Հանրապետությունում:

Օտարերկրյա ներդրողները կարող են Հայաստանի Հանրապետության տարածքում ներդրումներ իրականացնել՝

- ա) արժույթային այլ արժեքներով, Հայաստանի Հանրապետության ազգային դրամով.
- բ) շարժական ու անշարժ գույքով (շինություններ, շենքեր, սարքավորումներ եւ նյութական այլ արժեքներ) եւ դրա հետ կապված գույքային ցանկացած իրավունքով.
- գ) բաժնետոմսերով, պարտատոմսերով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթերով.
- դ) դրամական պահանջների ձեռքով եւ պայմանագրային արժեք ունեցող պարտավորությունների կատարմամբ պահանջի իրավունքով.
- ե) արժեք ունեցող մտավոր սեփականության ցանկացած իրավունքով.
- զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ պայմանագրով նախատեսված տնտեսական գործունեության իրականացման իրավունքով, այդ թվում նաեւ բնական ռեսուրսների հետախուզման, արդյունահանման, մշակման կամ շահագործման իրավունքով.
- է) վճարովի ծառայություններով.
- ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ներդրումների ցանկացած տեսակներով:

Սահմանված տեսակների օտարերկրյա ներդրումների իրականացման արգելումը կամ սահմանափակումը կարող է կատարվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Օտարերկրյա ներդրողներն իրավունք ունեն ներդրումներ իրականացնել հետեւյալ ձեւերով.

- ա) օտարերկրյա ներդրողներին ամբողջությամբ պատկանող ձեռնարկությունների, ինչպես նաեւ օտարերկրյա իրավաբանական անձանց պատկանող բաժանմունքներ, մասնաճյուղեր եւ ներկայացուցչություններ ստեղծելու կամ գործող ձեռնարկությունները որպես սեփականություն ձեռք բերելու միջոցով.
- բ) Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասնակցությամբ նոր ձեռնարկություններ հիմնադրելու կամ գործող ձեռնարկություններում բաժնեմաս ձեռք բերելու միջոցով.
- գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում բաժնետոմսեր, պարտատոմսեր եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ արժեթղթեր ձեռք բերելու միջոցով.
- դ) ինքնուրույն կամ Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասնակցությամբ հոդօգտագործման իրավունք եւ Հայաստանի Հանրապետության տարածքում բնական ռեսուրսների օգտագործման կոնցեսիաներ ձեռք բերելու միջոցով.
- ե) գույքային այլ իրավունքներ ձեռք բերելու միջոցով.

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձեւերով, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ կնքված պայմանագրերի հիման վրա: Ամերիկյան փաստաբանների ասոցիացիայի գնահատմամբ՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը օտարերկրյա ներդրումների մասին ամենաառաջատար և ազատական օրենքն է, որ գոյություն ունի անցումային շրջանի տնտեսություններում»: Այսպիսի գնահատման հիմք են առաջին հերթին այն դրույթները, ըստ որոնց օրենքը՝

- երաշխավորում է հավասար վերաբերմունք օտարերկրյա և տեղական ներդրումներին,
- զգալիորեն սահմանափակում է պետության կողմից ունեցվածքի բռնագրավման հնարավորությունը,²
- պահանջում է լրիվ փոխհատուցում պետության կողմից ազգայնացման կամ բռնագրավման դեպքում,
- տալիս է օտարերկրյա ներդրումներ կատարելու հնարավորություններ տնտեսության տարբեր ոլորտներում և տարբեր ձևերով,²
- հինգ տարի ժամկետով պաշտպանում է ներդրումներն օրենսդրական անբարենպաստ փոփոխությունների դեպքում,
- տրամադրում է հայաստանյան և միջազգային դա- տարաններ դիմելու հնարավորություն՝ տնտեսա- կան վեճերը լուծելու նպատակով,
- տալիս է շահույթների և սեփականության լրիվ հայրենադարձման հնարավորություն,
- պաշտպանում է մտավոր սեփականությունը,²
- ապահովում է մի շարք այլ իրավունքներ և արտոնություններ, որոնք օտարերկրյա ներդրողները դիտում են որպես կարևոր, եթե ոչ հիմնական:

Ներդրումային քաղաքականության սկզբունքները

Նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի ներդրումային դաշտի գրավչությունը և խրախուսել ներդրումները՝ ՀՀ ներդրումային քաղաքականության սկզբունքները հետևյալն են.

- **Թափանցիկություն.** Հայաստանում ներդրումներին առնչվող օրենսդրական ակտերը և ներդրումային քաղաքականությանը վերաբերող դրույթներ պարունակող փաստաթղթերը մշակման փուլից սկսած թափանցիկ ու մատչելի ձևով հասանելի կլինեն հանրությանը: Իրավական ակտերի և քաղաքականության մշակման գործընթացում կներառվի մասնավոր հատվածը:
- **Առավել բարենպաստության ռեժիմ.** որևէ երկիր ներկայացնող ներդրողների կողմից ներդրումների իրականացման և ընդլայնման նկատմամբ ցուցաբերել նույն վերաբերմունքը, ինչ համանման իրավիճակում կցուցաբերվեր այլ երկրներ ներկայացնող ներդրողների պարագայում:
- **Ազգային ռեժիմ.** բացի ազգային օրենսդրությամբ սահմանված բացառություններից, ներդրումների գործարկման, ընդլայնման, իրականացման և պաշտպանության հարցում օտարերկրյա ներդրողների նկատմամբ կիրառել ոչ պակաս նպաստավոր վերաբերմունք, քան նույնանման իրավիճակներում գտնվող տեղացի ներդրողների հանդեպ:
- **Ներդրումային արտոնություններ.** սահմանվող արտոնությունների համակարգը համահունչ կլինի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներին՝ ապահովելով թափանցիկություն, արդյունավետ կառավարում և կանոնավոր մոնիթորինգ:
- **Գործունեությանը ներկայացվող պահանջներ.** չեն սահմանվի այնպիսի պահանջներ, որոնք խոչընդոտում կամ սահմանափակում են առևտրի և ներդրումների ընդլայնումը:
- **Օտարում և փոխհատուցում.** ներդրումներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն օտարվի, ազգայնացվի կամ օտարմանն ու ազգայնացմանը հավասարազոր

հետևանքներ ունեցող այլ գործողությունների չեն ենթարկվի, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է հանրային նպատակներով: Օտարումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ոչ խտրական հիմքերի վրա:


- **Հայրենադարձություն (ռեպատրիացիա) և փոխարկելիություն.** ապահովել օտարերկրյա ներդրումների հետ կապված միջոցների՝ շահույթների, դիվիդենդների, ռոյալթիների, վարկային վճարումների ու մարումների ազատ և անհապաղ փոխանցումը՝ ազատ փոխարկելի արտարժույթով:
- **Վեճերի լուծում.** պետության և ներդրողի կամ մասնավոր երկու ներդրողների միջև օտարերկրյա ներդրումների կապակցությամբ ծագող վեճերը լուծել խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ միջազգային պարտավորություններից բխող կամ երկու կողմերի համար ընդունելի արբիտրաժային երկու ընթացակարգերի միջոցով:
- **Անձնակազմի մուտքը և կեցությունը.** համապատասխան օրենքների և կանոնակարգերի շրջանակներում թույլատրել օտարերկրյա տեխնիկական և ղեկավար անձնակազմի ժամանակավոր մուտքն ու կեցությունը՝ օտարերկրյա ներդրումների հետ կապված աշխատանքներում ներգրավելու նպատակով:
- **Կրկնակի հարկման բացառում.** օտարերկրյա ներդրումների մասով կբացառվի կրկնակի հարկումը:

Բարեփոխումների միջոցով կվերացվեն օտարերկրյա ներդրումների ներգրավման ու պահպանման հիմնական արգելքները, որոնք ի հայտ են բերվել ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի՝ ներդրողների պատկերացումների մասին համատեղ իրականացրած հետազոտության և մասնավոր հատվածի հետ հարցազրույցների միջոցով: Դրանց թվին են դասվում.

- Օտարերկրյա ներդրումների վերաբերյալ համապարփակ ներդրումային ռազմավարության բացակայությունը, որը թույլ կտար ի հայտ բերել ազգային համեմատական առավելությունները, պարզել ներդրումների առաջնահերթ ոլորտները և առավելագույնի հասցնել և ներդրումային քաղաքականության, և ՕՈՒՆ լայն շրջանակներում ներգրավված տարբեր դերակատարների միջև փոխգործակցությունը:
- Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի մասով. դրանում արտացոլված չեն միջազգային տնտեսության նոր իրողությունները, մասնավորապես՝ կապված ներդրողների պաշտպանության երաշխիքների հետ:
- Տնտեսական գործունեությանն առնչվող օրենսդրության թափանցիկության անբավարարությունը և համապատասխան իրավական ակտերի հաճախակի փոփոխությունները, ինչպես նաև դրանց ոչ պատշաճ կիրարկումը պետական տարբեր գերատեսչությունների կողմից:
- Ներդրումային միջավայրի հետ կապված այլ արգելքներ, որոնք խոչընդոտում են ներդրողների վստահության ձևավորմանը, մասնավորապես՝ անհարկի և ծախսատար ստուգումներ, պայմանագրերի կատարման տևական գործընթացներ և այլն:
- Բարեփոխումների մշակման գործընթացում հաշվի են առնվել նաև միջազգային ճանաչված մի շարք հաշվետվություններում տեղ գտած եզրահանգումները:

Ինչ վերաբերում է ներդրումային միջավայրի ավելի լայն նկատառումներին, հարկ է նշել, որ բիզնես սկսելու, գործարկելու և այն ծավալելու հիմնական պայմանները հավասարապես կարևոր են օտարերկրյա և տեղացի ներդրողների համար և ազդում են երկուսի վրա էլ: Մրցունակության 2014-

2015թթ. համաշխարհային զեկույցը և Հայաստանի ձեռնարկությունների 2013թ. հետազոտությունը համակարծիք են այն հարցում, որ հարկային խնդիրները առանձնակի



մարտահրավեր են բիզնեսների համար (տես թիվ 12 և թիվ 13 գծապատկերները): Հարկային կանոնակարգերը, հարկային դրույքաչափերը և հարկային վարչարարությունը բարձր տեղ են զբաղեցնում այն գործոնների ցանկում, որոնք ֆիրմաների կողմից մատնանշվել են որպես խոչընդոտներ: Մեկ այլ էական խոչընդոտ է կոռուպցիան: Հարկային խնդիրները և կոռուպցիան կարևոր են ոչ միայն արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրման, այլ նաև ՕՈՆ բոլոր տարատեսակների համար:

Հայաստանում բիզնեսի իրականացման հիմնական խոչընդոտները`

1. Հարկային դրույքաչափեր

2. Հարկային վարչարարություն

3. Քաղաքական անկայունություն

4. Մաքսային և առևտրային կանոնակարգեր 5. Կոռուպցիա

6. Ֆինանսավորման մատչելիություն

7. Ոչ ֆորմալ հատվածի առկայություն


8. Հողատարածքների հասանելիություն

9. Պատշաճ կրթություն չունեցող աշխատուժ

10. Աշխատանքային

կանոնակարգեր

Գծապատկեր 13. Օտարերկրյա ֆիրմաների տոկոսը, որոնք գործոնը մատնանշել որպես զգալի խոչընդոտ



Հարցվածներին

խնդրվել է վերը թվարկված գործոններից ընտրել իրենց երկրում բիզնես իրականացնելուն խանգարող հինգ առավել խնդրահարույց գործոնները և գնահատել 1-ից (առավել խնդրահարույց) մինչև 5 (նվազ խնդրահարույց): Գծապատկերում բերված հորիզոնական գծերը ցույց են տալիս տրված գնահատականները` ըստ վարկանիշների:

Բիզնեսի իրականացմանը խանգարող այս խոչընդոտները հակադրվում են Doing Business 2015 հաշվետվությունում նշված եզրակացություններին: Հայաստանը համեմատաբար լավ արդյունք է արձանագրել 2017թ. Doing business հաշվետվությունում՝ 190 երկրների շարքում զբաղեցնելով 38-րդ տեղը՝ նախորդ տարվա 49-րդի փոխարեն: Բիզնեսի իրականացման դյուրինության տեսակետից Հայաստանը տարածաշրջանային միջին ցուցանիշի համեմատ նպաստավոր դիրքերում է, սակայն տարածաշրջանի այլ երկրներից հետ է մնում (գծապատկեր 14): Այն հատկապես լավ ցուցանիշ է արձանագրել բիզնես սկսելու հարցում՝ համաշխարհային վարկանիշում զբաղեցնելով տպավորիչ 4-րդ տեղը: 2010-ից 2017 թվականներին Հայաստանն իրականացրել է մի շարք բարեփոխումներ, որոնց արդյունքում բիզնես սկսելու համար 2 ընթացակարգ է պահանջվում, որոնց իրականացման համար պահանջվում է 3 օր և արժենում մեկ շնչի հաշվարկով՝ եկամտի 1 տոկոսը:

Օտարերկրյա ներդրումները Հայաստանում

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակում է օտարերկրյա ներդրումների վիճակագրությունը : Այս տվյալները ԱՎԾ-ն հրապարակում է տարեկան կտրվածքով և դրանք հիմնված են Կենտրոնական բանկի կողմից հաշվառվող վճարային հաշվեկշռի վրա

Օտարերկրյա ներդրումները 2014-2015 թվականներին

	Ֆինանսական պարտավորությունների գուտ՝ ստանձնում			Ֆինանսական ակտիվների գուտ՝ ձեռքբերում		
	2014թ.	2015թ.	Բացարձակ փոփոխությունը	2014թ.	2015թ.	Բացարձակ փոփոխությունը
Ընդամենը ներդրումներ²	612.9	811.8	198.8	427.0	-30.7	-457.7
Ուղղակի ներդրումներ	404.3	180.5	-223.8	16.0	10.7	-5.3
Պորտֆելային ներդրումներ	-40.1	261.6	301.7	3.1	3.1	0
Այլ ներդրումներ	248.7	369.7	120.9	407.9	-44.5	-452.4

Օտարերկրյա ներդրումները 2016-2017 թվականներին

	Ֆինանսական պարտավորությունների գուտ՝ ստանձնում			Ֆինանսական ակտիվների գուտ՝ ձեռքբերում		
	2016թ. հունվար-դեկտեմբեր ^ժ	2017թ. հունվար-դեկտեմբեր	Բացարձակ փոփոխությունը	2016թ. հունվար-դեկտեմբեր ^ժ	2017թ. հունվար-դեկտեմբեր	Բացարձակ փոփոխությունը
Ընդամենը ներդրումներ²	1 216.5	404.2	-812.3	779.8	-60.4	-840.2
Ուղղակի ներդրումներ	338.1	245.7	-92.4	66.2	22.3	-43.9
Պորտֆելային ներդրումներ	56.9	-56.8	-113.7	23.1	30.0	6.9
Այլ ներդրումներ	821.4	215.3	-606.1	239.7	-209.4	-449.1

Այսպես, ներդրումների ծավալը 2017 թվականի հունվար-դեկտեմբերին կազմել է 404.2 մլն դոլար՝ 2016 թվականի 1 մլրդ 216.5 մլն դոլարի դիմաց: Ընդամենը ներդրումների ծավալը նվազել է 812.3 մլն դոլարով կամ 3 անգամ:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները նվազել են 92.4 մլն դոլարով կամ 27.3%-ով՝ կազմելով 245.7 մլն դոլար: Նշենք, որ միջազգային համեմատություններում օտարերկրյա ուղղակի ներդրումներ ասելիս հենց այս ցուցանիշը նկատի ունեն: Օրինակ, Համաշխարհային բանկի տվյալների բազաներում այս թիվը կարող էր գտնել Foreign direct investment, net inflows (BoP, current US\$) ցուցանիշի տակ: Իսկ ՀՀ վճարային հաշվեկշռում այն ձևակերպված է որպես ֆինանսական պարտավորությունների գուտ ստանձնում:

Պորտֆելային ներդրումները նվազել են 113.7 մլն դոլարով և ներհոսքի թիվը բացասական է՝ -56.8 մլն դոլար:

Այլ ներդրումները նույնպես մի քանի անգամ նվազել են՝ 821.4 մլն դոլարից հասնելով 215.3 մլն դոլարի:

2017 թվականի հունվար-սեպտեմբերին ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված 472.1 մլն դոլար ՕՈՒՆ-ների կեսից ավելին՝ 243.7 մլն դոլար, բաժին է ընկնում Ռուսաստանին: Պաշտոնական վիճակագրությունը վկայում է, որ ռուսաստանյան ներդրումների մի զգալի մասը կատարվել է էլեկտրաէներգետիկայի ոլորտում:


Այս ցուցանիշի մեջ մեծ դեր է խաղում «Հայաստանի էլեկտրական ցանցերի» գործարքը: Ինչպես հիշում եք, Սամվել Կարապետյանն ի սկզբանե ՀԷՑ-ը գնեց կիպրական օֆշորում գրանցված «Լիորմանդ Հոլդինգ Լիմիթեդ» ընկերության միջոցով: Իսկ այս տարվա ապրիլին «Լիորմանդ Հոլդինգ Լիմիթեդը» ՀԷՑ-ի 69,99 տոկոս բաժնետոմսերը փոխանցեց «Տաշիր Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերությանը: Դեռ այն ժամանակ պարզ էր, որ այս գործարքի արդյունքում Կիպրոսից կատարվող ներդրումների զուտ ներհոսքը նվազելու է, Ռուսաստանից կատարվող ներդրումներինը՝ աճելու, ինչը և այսօր արտացոլված է:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների երկրորդ խոշոր աղբյուրը Ջերսին է: Այստեղից կատարվել է 122 մլն դոլարի ներդրում (ամբողջն ուղղակի ներդրումներ են): Տեղեկացնենք, որ Ջերսիից կատարված ներդրումները «Լիդիան» ընկերության կողմից Ամուլսարի ոսկու հանքավայրում կատարված ներդրումներն են: Ամուլսարի հանքի 2018 թվականին ավարտվող շինարարության արժեքը կազմելու է 370 միլիոն ԱՄՆ դոլար:

Ուղղակի ներդրումների ստացումների առումով երրորդ տեղում Գերմանիան է (22.3 մլն դոլար): 10 մլն դոլարից ավելի ուղղակի ներդրումներ են հոսել ևս 3 երկրներից՝ Ֆրանսիայից (18.8 մլն դոլար), Լիբանանից (15.6 մլն դոլար) և Կիպրոսից (13.9 մլն դոլար):

Հարևան երկրներից Իրանը կատարել է 200 հազար դոլարի ուղղակի ներդրումներ, իսկ Վրաստանից այս տարի ուղղակի ներդրումներ չեն ստացվել: Ներդրումները զրոյական են նաև ԵՄՏՄ՝ անդամ Բելառուսից և Ղազախստանից (Դրդըզստանի տվյալները հրա-

Նկար 1. ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումների գծով ստացումները 2017թ. հունվար-սեպտեմբերին, մլն դոլար



պարակված չեն):

Արդեն նշվեց, որ օտարերկրյա ներդրումների դերը ցանկացած տնտեսության զարգացման գործում անհնար է թերագնահատել, առավել եւս նրա դերը կարելի է գարգացող երկրների համար: Որպես ապացույց կարող ենք վերցնել Չինաստանի զարգացման պատմությունը՝ շնորհիվ օտարերկրյա ներդրումների:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները Չինաստանում

- **Չինաստանը հաջող ձեռով կարողացավ մոբիլիզացնել ՕՈՒՆ-ները**

Չինաստանը, իր երկրի ներդրումային հնարավորությունների, իր շուկայի հսկայական չափերի եւ տեղական աճող շուկաների շնորհիվ ստացավ զարգացող երկրներում կատարվող ՕՈՒՆ-ների մոտավորապես 20 տոկոսը վերջին 10 տարիների ընթացքում, եւ 2008 թվականին այդ ցուցանիշը կազմեց 100 միլիարդ դոլար: Վերջին 5 տարիների ընթացքում ՕՈՒՆ-ները կազմել են ՀՆԱ-ի 2.5 տոկոսը: Չնայած այս ցուցանիշը կարող է ցածր թվալ, սակայն այդ հանգամանքը բացատրվում է տնտեսության ընդհանուր ծավալով՝ Չինաստանը աշխարհի 2-րդ ամենախոշոր տնտեսությունը ունեցող երկիրն է՝ ՄՄՆ-ից հետո:

- **ՕՈԻՆ-ները կարևոր դերակատարում են ունեցել Չինաստանի տնտեսական զարգացման եւ հաջող արտահանման գործում**

Համաձայն Առևտրի նախարարության (the Ministry of Commerce) 'օտարերկրյա ներդրումների արդյունքում կառուցված ձեռնարկությունները ապահովում են Չինաստանի արտահանումների մոտավորապես կեսը, նրանք ապահովում են Չինաստանի արդյունաբերական արտադրանքի 30 տոկոսը եւ ձեւավորում են արտադրական շահույթի 22 տոկոսը՝ իրենց մեծ արտադրողականության շնորհիվ՝ աշխատեցնելով աշխատուժի 10 տոկոսին: Հենց այս ներդրումներն էլ աջակցել են Չինաստանին 1980-2010 թվականներին՝ պահպանելու ռեկորդային համարվող 10 տոկոս տնտեսական աճը:

- **ՕՈԻՆ-ների քաղաքականությունը Չինաստանում զարգացավ տնտեսական զարգացման եւ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման հետ միաժամանակ**

Աստիճանական եւ խելամիտ մոտեցումը կիրառվել էր ազատականացման ընթացքում: 1980-ական եւ 1990 -ական թվականների ընթացքում, երբ շուկայական ինստիտուտները լիովին զարգացած չէին, Չինաստանը որոշեց օտարերկրյա ներդրումների համար բացել ընտրված ափամերձ քաղաքները ու հատուկ տնտեսական գոտիները, արդյունաբերական պարկերը՝ հատուկ նպատակադրվածությամբ՝ օտարերկրյա ներդրումների արդյունքում խթանել արտահանման ուղղվածություն ունեցող արտադրությունների ստեղծմանը: Չինաստանը կատարեց վճռական փոփոխություններ՝ մուտք գործելով Համաշխարհային առևտրի կազմակերպություն, ինչի արդյունքում արդեն ՕՈԻՆ-ները կատարվում էին արդեն ծառայությունների ոլորտում: 2009 թվականին ծառայությունների ոլորտում կարտարված ՕՈԻՆ-ները 3 անգամ ավելի շատ էին, քան 2000 թվականին, իսկ մշակող արդյունաբերությունում ՕՈԻՆ-ները աճեցին 81 տոկոսով: Արդյունքները պարզապես արակարգ էին՝ հազարավոր վերազգային կազմակերպություններ ներդրումներ կատարեցին Չինաստանում: Վերջերս Միավորված ազգերի՝ առևտրի եւ զարգացման խորհրդի (United Nations Conference on Trade and Development.) համաշխարհային ներդրումային ընկալումներ (World Investment Perceptions) ցուցակի մեջ Չինաստանը զբաղեցրել է առաջին հորիզոնականը 15 թոփ ներդրումային երկրների մեջ:

Հեց այս օրինակն էլ վառ ապացույց է այն բանի, որ օտարերկրյա ներդրումների կարող են հանդիսանալ տնտեսության զարգացման կարևորագույն նախադրյալներից մեկը, ուստի ներդրումային ոլորտում անհրաժեշտ բարեփոխումներ կատարելու միջոցով էլ հնարավոր է զրավել ավելի մեծ քանակությամբ օտարերկրյա ներդրողների եւ զարգացնել տնտեսությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 1994թ. հուլիսին
2. «Ներդրումների բարեփոխումների քարտեզ» վերլուծական հաշվետվություն
3. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայք
4. Յու. Մ. Սուվարյան «Մենեջմենթ»
5. ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության կայք՝ <http://www.mineconomy.am/hy>
6. Ս. Ավետիսյան «Միջուկի ներդրումները Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ, զարգացման հեռանկարներ»
7. www.worldbank.org, www.managementstudyguide.com
8. Քաղվածք Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից՝ Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգին եւ հայեցակարգից բխող միջոցառումներին հավանություն տալու մասին
9. Т. Е. Кочергина «Мировая экономика»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1	Անուշ Աբգարյան	ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՏԱՑՈՒՄԸ ՍՈՎՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	4
2	Անուշ Ասրյան	ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ ԼԵՈՆ ՇԱՆԹԻ «ՕՇԻՆ ՊԱՅԼ» ՊԱՏՄԱԿԱՆ ԴՐԱՄԱՅՈՒՄ	8
3	Լուսինե Նազարեթյան	ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍՄԱՄԱՐՏԻՆ	12
4	Շուշան Ներսեյան	ԵՂԲԱՅՐ ՀԱՄԿԱՑՈՒՑԹԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	18
5	Անահիտ Հայրապետյան	ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՍՈՒՐԵՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ «ԱՌԱՎՈՏ ԼՈՒՍՈ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ	24
6	Վարդուհի Սահակյան	ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒՅԹԱՅԻՆ ՈՐ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	29
7	Լուսինե Գասպարյան	ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՉԻԿ ԴԱՇՏՈՆՑԻ «ՈՒՆՉՊԱՐՆԵՐԻ ԿԱՆՉԸ» ԵՐԿՈՒՄ	34

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՄԵԹՈԴԻԿԱ

8	Լիլիթ Բաքսեղյան	ԼԵԶՎԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ՝ 2-ՐԴ ԴԱՄԱՐԱՆԻ ՍՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ	39
9	Կարինե Խաչատրյան	ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՄԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ	44
10	Մարսետա Խաչատրյան	ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ	50
11	Եվա Հովհաննիսյան	ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԼԳՈՐԻԹՄԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	55

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

12	Մերի Սարգսյան	ԱԶՈՒԵՑԻՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ	61
13	Նոնա Գյուրջյան	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ և ԱՐՑԱԽԸ 1918-1920ԹԹ	66
14	Դավիթ Կոստանյան	ԱՄԱԼԱ-Ի ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ	72
15	Մարիաննա Ավանեսյան	ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՂԵՌՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ	78
16	Էլլադա Հայրապետյան	ԽԱՉՄԱԶԵՑԻՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ	83
17	Գայանե Բաբաջանյան	ՃԱՐՏԱՐՑԻՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ	87

18	Աննա Դեմիրխանյան	ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՍՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԽՆԴՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՍԲ	92
19	Լ.Է.Աթայան	НЕЗАВИСИМОСТЬ КУРДОВ	99
20	Մարիամ Միմոնյան	ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ և ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ	102
21	Ռ. Ամիրովա	ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	108
22	Կարապետ Գևորգյան	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ/ԼՂՀԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	114
23	Նուշիկ Տեր-Մովսիսյան	ԲԱՐՈՑԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ	119
24	Анаит Манвелян	МЕЖДУНАРОДНЫЙ ТЕРРОРИЗМ	126
25	Անուշ Միրզոյան	ԵՄ-Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ	130
26	Y. V. Airapetyan E. S. Mnatsakanyan	LEGAL REGULATION OF BETTING ACTIVITY	138
27	Վաչագան Դադայան	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	143
28	Լիանա Սահակյան	ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑՆԵԼ և ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԵԼ	148
29	Աննա Գասպարյան	ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻ ՆԿԱՏՄԱՍԲ	155
30	Տիգրան Գաբրիելյան	ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ (ՖԻՆԼԱՆԴԻԱ, ԱՍԻԱԿԱՆ «ՎԱԳՐԵՐ» - ԱՐՑԱԽ)	161
31	Իրինա Գաբրիելյան	ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	165
32	Արմեն Զալալյան	ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ	171

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

33	Այոնա Վանուան Մերի Խաչատրյան	ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	175
34	Անժելիկա Սադյան	ՄԵԿ ՓՈՓՈԽԱԿԱՆԻ ՖՈՒՆԿՑԻՍՑԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ MATHCAD ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	185
35	Դիանա Իսրայելյան	ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՖԱՅԼԵՐԻ	188

		ԿՈՂԱՎՈՐՄԱՆ և ԱՊԱԿՈՂԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ	
36	Լիանա Մեսրոպյան Հասմիկ Հայրապետյան	ԳԾԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԼՈՒԾՄԱՆ ԳԱՌԻՄԻ ՄԵԹՈԴԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄԸ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ	192
37	Նաստասյա Ավետիսյան	ՏԱՄՆՀԻՆԳ ԳԼՈՒԽԿՈՏՐՈՒԿ ԽԱՂԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ	198
38	Արմեն Ապրեսյան	ՖԻԶԻԿԱՅԻ ՈՐՈՇ ԴԱՄԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄԸ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ	203
39	Հասմիկ Մանուկյան Գայանե Ազիզբեկյան	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	207
40	Մարինա Հակոբյան Ռաֆայել Բաբայան	ՄԻՋՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ՏԱՔՄԻՆԵՐԻ ԿԱՆԳԱՌ՝ ՍՈՂԵԼԻ ՄՇԱԿՈՒՄ	212
41	Անժելիկա Դավթյան Արյուսակ Ալավերդյան	ԱՄԵՆԱՄԵԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԱՆԱՐԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԼԵԶՎՈՒՄ	216
42	Նուշիկ Ավետիսյան Գաբրիելյան Մանուշ	«SPSS» ՓԱԹԵԹ	221
43	Անուշ Ղարիբյան	ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ	225
44	Արթուր Աբրահամյան	ԱՀ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	230
45	Ալեքսեյ Մակյան	ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԸ	236
46	Արփինե Յարամիշյան	ԶԿՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱՅԻՆ	242
47	Ալեքսեյ Մակյան Արթուր Աբրահամյան	ՊԼԱՆԵՏԱՐԻՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	246
48	Շուշաննա Վարդանյան Արտաշես Արիստակեսյան	ՔԻՄԻԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՆ՝ Ի ՆՊԱՍՏ ՔԻՄԻԱ ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՆԴԵՊ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՑՄԱՆ	250

ՏՆՏԵՍԱԿԻՏՈՒԹՅՈՒՆ

49	Վարդուհի Կիրակոսյան	ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԸ և ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ	256
----	---------------------	---	-----

50	Եվգենյա Համբարձումյան	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՀ-ՈՒՄ	269
51	Լիդա Միրզոյան	ՓՄՁ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԱՀ-ՈՒՄ	275
52	Նինա Բալայան	ԹՎԱՅՆԱՅՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	281
53	Անգելինա Դանիելյան	ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԴԵՊՈԶԻՏԱՅԻՆ ԴՈՐՏԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	289
54	Դիանա Գրիգորյան	ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽԴԻՐՆԵՐԸ ԱՀ-ՈՒՄ	294
55	Անահիտ Մխիթարյան	ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	300
56	Ալինե Հարությունյան	ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽԴԻՐՆԵՐԸ ԱՀ -ՈՒՄ	306
57	Մերի Զաքարյան	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՀ-ՈՒՄ	313
58	Անուշ Ավետիսյան	ԲԱՆԿԱՅԻՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ՀԻՄՆԱԽԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ	320
59	Երանուհի Մովսիսյան	Տեր-ՕՏԱՐԵՐԿՐՑԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	326

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
(հոդվածների ժողովածու)

SCIENTIFIC READINGS
(collection of articles)

НАУЧНЫЕ ЧТЕНИЯ
(сборник статей)

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ 30-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԵՎԻՐՎԱԾ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Հանձնված է շարվածքի՝ 14.03.2018 թ.: Ստորագրված է տպագրության՝ 10.05.2018թ.
Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ; Ծավալը, 42.25 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100.
Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5

հեռ. (047) 94-04-91, ֆաքս (047) 97-12-14

E-mail: rector@asu.am

ԱրՂՀ հրատարակչություն՝ հեռ. (097) 34-01-86,

e-mail printery.asu@mail.ru

Основатель – Арцахский государственный университет г. Степанакерт, ул. Мхитара Гоша 5,

тел. (047) 94-04-91, факс (0479) 7-12-14

Издательство АргУ: тел. (097) 34-01-86

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert

Tel.: (047) 94-04-91, Fax: (0479) 7-12-14

ASU Publishing house: Tel. (097) 34-01-86